ISSN 1829-0833

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

A 96819 II

VI

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2009

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

գիտական խորհրդի որոշմամբ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Գրիգորյան Ս. (նախագահ), Խանզադյան Մ.,
Ղազարյան Ռ., Իսկանդարյան Գ., Փաշայան Ա.

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Կարախանյանի

Ժողովածուն ընդգրկում է 2009թ. հուլիսի 14-16 Երևանում՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում կազմակերպված Երիտասարդ արևելագետների միջազգային XXX գիտաժողովի նյութերը:

Գրքում ընդգրկված հոդվածները նվիրված են Մերձավոր, Միջին և Հեռավոր Արևելքի, Կովկասի երկրների ու ժողովուրդների պատմության, միջազգային հարաբերությունների և արևելյան մշակույթի, ինչպես նաև ցեղասպանության, իսլամագիտության արդիական մի շարք հիմնահարցերին և ներկա քաղաքական զարգացումներին:

Նախատեսված է արևելագետների, հայագետների, հետազոտողների, բուհերի ուսանողների, ասպիրանտների և ընթերցող լայն շրջանակների համար:

Ստորագրված է տպագրության՝ 23.12.2009թ.:
Չափսը՝ 60x84 1/32: Թուղթը օֆսեթ №1:
Տառատեսակը՝ «Times Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: 22 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
էլ. փոստ lusakn@rambler.ru

NATIONAL ACADEMY OF SCIENCES
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NEAR EAST

VI

HISTORY
POLITICS
CULTURE

YEREVAN – 2009

The book is recomended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences, Republic of Armenia

EDITORIAL BOARD

S. Grigoryan (Chairwoman), M. Khanzadyan
R. Ghazaryan, G. Iskandaryan, A. Pashayan

Computer Design: N. Karakhanyan

The book includes articles presented at the 30th International Conference of Young Orientalists (Yerevan, 14-16 July, 2009)

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա
ԱԻ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
ՀՑԹԻ – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
ԷՊԱԹ - Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ՔՀԻ – Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ
ՀՄճ - Հայոց Մարդասիրական ճեմարան, Կալկաթա, Հնդկաստան
ԵԳՀ - Երևանի Գլաձոր Համալսարան
ՌՀ(Ս)Հ – Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան
ՍՀ - Սոֆիայի Սր. Կլիմենտ համալսարան, Բուլղարիա

ABBREVIATIONS

NAS RA – National Academy of Sciences, Republic of Armenia
IOS – Institute of Oriental Studies, NAS RA
AGMI – Armenian Genocide Museum-Institute, NAS RA
EHAMR – Erebuni, Historico-Archeaological Museum-Reserve
YSU – Yerevan State University
IPR – Institute of Political Research
ACPA – Armenian College and Philantropic Academy, Kolkata, India
YGU - Yerevan Gladzor University
RA(S)U – Russian-Armenian (Slavonic) University
SU – Sofia St. Kliment University, Bulgaria

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԶՐՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ (ԱԻ)
«ՍՊԻՏԱԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆ ՄԻՋՈՑ 16

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՆՆԱ (ՀՑԹԻ)
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ 24

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՍԵՆ (ԱԻ)
ԲԱԴՐ ԱԼ-ԳԱՄԱԼԻ ԱԼ-ԱՐՄԱՆԻԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1074-1094 ԹԹ. 30

ԲԱԴԱԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ԷՊԱԹ)
ՏԱՐԻՆ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԴԻՑԱՐԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿԸ 36

ԲԱՋԻՆՅԱՆ ՍԱՐԻԵՏԱ (ԵՊՀ)
ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄՈՒԹԱՆԱԲԲԻԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 43

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐ (ԱԻ)
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ (ԻՀՊԿ) ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 47

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ (ԱԻ)
ԱՐԱԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1908-1909 ԹԹ.) 52

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ (ԱԻ)
ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 57

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ (ՄԻ)
2008-2009 ԹԹ. ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 64

ԴԱՎԹՅԱՆ ԱՇԽԵՆ (ԵՊՀ)
ՕՄԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՀԵՄԻ ՇՈՒՐՋ 72

ԻՎԱՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ (ՔՀԻ)
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 79

ԽԱՆՋԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԱԻ)
ԷԹՆՈԳԵՆԵԶԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ 86

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԱԻ)
ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ԸՍՏ «ԱՆԱԲԱՍԻՍ»-Ի 92

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԵՊՀ)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԲԱԽՆԱՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 100

ՀԱՅՐ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՀՄԾ)
ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԼՈՒՌ ՎԿԱՆ՝
ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑԻՆ 108

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ (ԱԻ)
ՉԻՆԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 115

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ (ԱԻ)
ՃԱՊՈՆԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆԱՎԹԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 124

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԱԻ)
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱԼԵՎԻՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ 133

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ (ՔՀԻ)
ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ 140

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԻ (ԵՊՀ)
ԿԵՆԴԱՆԱՈՏՔ ԿԱՀՈՒՅՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ (ՄԻՆՉԵՎ Ք.Ա. 6-ՐԴ ԴԱՐԸ) ... 147

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ (ՀՅԹԻ)
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (1915-1925ԹԹ.) ... 153

ՄԱՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)
ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԳՈՒԹ ՕԶԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ... 160

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԻԿ (ԵՊՀ)
ԳԼԽԱՀԱՐԿՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ... 168

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ԱԻ)
«ՆՅԱՐԴԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ» 1947 Թ. ... 175

ՄՈՆԹԱԶԵՐԻ ՕՍԻԴ (ԱԻ)
ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ... 182

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ (ԱԻ)
ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՎԱՌԻ (ԼՈՌԻ) ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑ- ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1918-1921 ԹԹ.) ... 188

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՆՆԱ (ԵՊՀ)
ՍԵԼԻՄ III-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՐՊԵՍ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՏԻՊ ... 195

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ (ԱԻ)
ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԳՈՐԾՈՆԸ 1907 Թ. ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ... 201

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՆԻ (ՀՅԹԻ)
ՔԱՓԸՔՈՒԼՈՒ ՋՈՐԱԲԱՆԱԿԻ ՄՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ... 211

ՉԱՎԻԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ (ԵՊՀ)
1982 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՑՔ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ... 217

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՍԵԴԱ (ՀՑԹԻ)
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ 224

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ (ԵՊՀ)
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ (Սրբոց Հակոբեանց միաբանություն) 231

ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱԻՐԱ (ԵՊՀ)
«ԽԱԼԻՖԱ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 240

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ (ԱԻ)
ՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ (1946-1970 ԹԹ.) 245

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՀԱԿԱԳՈՒՆԴԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (750-842 ԹԹ.) 251

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ (ԱԻ)
ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ (813-869 ԹԹ.) 258

ՏԵՐ-ՍԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ (ԱԻ)
ՔԵՄԱԼԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՓՈՒԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 265

ՔԱՐՏԱՇՅԱՆ ԱՆԱՀԻՏ (ԵՊՀ)
ԴԵՐՍԻՄԸ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ 272

ՔՈՉԱՐՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՀ)
ՀԱՅԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 7-8 ԴԴ. ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 278

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԻԼՎԱ (ԵՊՀ)
ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՌՈՒՄԻԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ («ՄԱՏՅԱՆ», «ՄԱՍՆԱՎԻ») ... 288

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ (ԵԳՀ)
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ, ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 295

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄՄԱ (ՌՀ(Ս)Հ)
ԹԵՔՎՈՂ / ՄՈՒ՛ՐԱԲ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՏԵՍԱԿՆԵՐԸ 300

ՀՄԱՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԱԻ)
ԽԵԹԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ . 307

ՍԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԵ (ԵՊՀ)
ԹԱՔՈՒՑՎԱԾ ԱՆՈՒՆԸ (ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ) ՈՐՊԵՍ *'IDMĀR*-Ի՝
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՔՈՒՑՄԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՊՔ 314

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ (ԵՊՀ)
ԲԱՅԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԻԿՆԵՐՈՎ ԻՐԱՑՎԱԾ
ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ՁԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱԿՏՈՒԱԼ
ԱՆԴԱՄԱՍՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ 321

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԹԱ (ԵՊՀ)
ՍՈՀՐԱԲ ՍԵՓԵՀՐՈՒ ՊՈԵԶԻԱՆ 327

ՅԱՆԿՈՎԱ ԱՆՏՈՆԻԱ (ԲՄՀ)
ՈՐՈՇՅԱԼԻ ԵՎ ԱՆՈՐՈՇԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՉԻՆԱՐԵՆՈՒՄ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆՈՒՄ 335

ՓԱՇԱՅԱՆ ԱՆԻ (ՌՀ(Ս)Հ)
ՌՈՒԴԱՔԻԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 343

CONTENTS

HISTORY

RUZANNA AZROYAN (IOS)
"WHITE REVOLUTION" AS PRACTICAL MEANS TO OVERCOME SOCIAL-POLITICAL AND ECONOMIC CRISIS 21

ANNA ALEKSANYAN (AGMI)
THE FOUNDATION OF THE TURKISH THEATRE AND THE FIRST ACTRESSES 29

ARSEN ARAKELYAN (IOS)
BADR AL-GAMALI AL-ARMANI'S REIGN IN EGYPT 1074-1094 33

MIQAYEL BADALYAN (EHAMR)
THE YEAR AND THE SUPREME TRIAD OF URARTIAN PANTHEON 41

MARIETA BAZINYAN (YSU)
THE THEORY OF AL- MUTANABBI FOR RESTORING THE POWER OF THE CALIPHAT 46

MHER BAGHDASARYAN (IOS)
THE CREATION OF THE ISLAMIC REVOLUTION GUARDS CORPS: ITS ROLE IN THE SYSTEM OF MILITARY FORCES OF IRAN 51

ARAM GASPARYAN (IOS)
THE ACTIVITIES OF ARAB MPs IN OTTOMAN PARLIAMENT (1908-1909) 55

SONA GRIGORYAN (IOS)
THE PROBLEMS OF THE INVESTIGATION OF THE HISTORY OF THE LAST EPOCH OF BIAYNILI - URARTU IN THE MODERN HISTORIOGRAPHY 61

GOR GEVORGYAN (IOS)
THE ISRAEL - PALESTINE HOSTILITIES IN 2008-2009.
EGYPT'S STANCE 69

ASHKHEN DAVTYAN (YSU)
SOME OBSERVATIONS ON THE FIRST OMAYYAD
SILVER COIN (DIRHEM) 77

VLADIMIR IVANOV (IPR)
ON THE PROBLEM OF ACTIVATION OF THE SOCIAL - POLITICAL LIFE OF GEORGIAN DIASPORA IN TURKEY.
GENERAL CONSIDERATIONS 83

MARIAM KHANZADYAN (IOS)
ON SOME ASPECTS OF ETHNOGENEZIS 90

HOVHANNES KHORIKYAN (IOS)
ON SOME PROBLEMS OF THE HISTORICAL GEOGRAPHY
OF SATRAPIC ARMENIA ACCORDING TO ANABASIS 98

MARIAM KIRAKOSYAN (YSU)
THE CARE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR ORPHANS
IN GEORGIA AND AZERBAIJAN 106

FATHER KHOREN HOVHANNISYAN
THE CHURCH OF HOLY NAZARETH: A SILENT WITNESS
TO THE HISTORICAL LEGACY OF THE ARMENIAN
COMMUNITY IN INDIA 113

AGHAVNI HARUTYUNYAN (IOS)
ON THE NUCLEAR COOPERATION
BETWEEN CHINA-IRAN 120

YEVA HARUTYUNYAN (IOS)
JAPANESE-IRANIAN RELATIONS DURING THE SECOND
OIL CRISIS 129

VARDAN HARUTYUNYAN (IOS)
ON THE PROBLEM OF ALEVIS IN TURKEY 138

LEVON HOVSEPYAN (IPR)
ON THE TENDENCIES OF THE DEVELOPMENT
OF THE RUSSIAN-TURKISH MILITARY-TECHNICAL
COOPERATION` 145

ANI MARGARYAN (YSU)
THE MANIFESTATIONS OF THE USAGE OF ANIMAL-LEGGED FURNITURE IN ARMENIAN HIGHLAND (BEFORE VI C. BC) 151

NARINE MARGARYAN (AGMI)
ARMENIAN DEPORTEES IN SYRIA AND ARAB'S STANCE TOWARD THEM (1915-1925) 158

LILIT MARIKYAN (YSU)
THE RELATIONS BETWEEN THE ARMY AND SOCIETY IN THE YEARS OF GOVERNMENT OF TURGUT OZAL 166

ANUSHIK MARTIROSYAN (YSU)
POLL - TAX IN OTTOMAN EMPIRE 173

CHRISTINE MELKONYAN (IOS)
THE WAR OF NERVES IN 1947 180

OMID MONTAZERI (IOS)
ON THE SITUATION OF CHRISTIANS IN SASSANID IRAN 186

BAGRAT MOVSESYAN (IOS)
THE ISSUE OF BORCHALU REGION (LORI) POSSESSION IN THE CONTEXT OF ARMENIAN-GEORGIAN AND GEORGIAN-AZERBAIJANI RELATIONS (1918-1921) 193

ANNA NALBANDYAN (YSU)
THE REFORMS OF SELIM III AS THE PROTOTYPE OF THE EUROPEIZATION OF THE OTTOMAN EMPIRE 199

NAZELY NAVASARDYAN (IOS)
THE FACTOR OF THE PERSIAN GULF IN THE CONTEXT OF ANGLO-RUSSIAN AGREEMENT OF 1907 209

ANI VOSKANYAN (AGMI)
THE SUB-UNITES OF THE KAPIKULU ARMY 215

PETROS CHAVIKYAN (YSU)
THE CONSTITUTION IN 1982 AND THE STABILITY OF THE TURKISH POLITICAL SYSTEM: A GENERAL EVALUATION 211

SEDA PARSAMYAN (AGMI)
THE ANNIHILATION OF THE CULTURAL HERITAGE AS AN INTERGAL PART OF GENOCIDE 228

VLADIMIR POGHOSYAN (YSU)
THE ARMENIAN PATRIARCHY OF JERUSALEM (The Saint Jakobs' Congregation) 238

NAIRA SAHAKYAN (YSU)
SOME QUESTIONS CONCERNING THE "KHALIFAH„ INSTITUTE 244

HAYK SAMSONYAN (IOS)
THE ARMENIAN MILITARY OFFICERS IN THE SYRIAN ARMY (1946-1970) 249

LILIT SARGSYAN (YSU)
THE IMPERATORIAL GUARDS AND THEIR ROLE IN THE DECLINE OF THE ABBASID CALIPHATE (750-842) 256

GRIGOR VARDANYAN (IOS)
THE MILITARY-POLITICAL POWER OF THE TURCIC GUARDS IN THE ABBASID CALIPHATE (813-869) 262

VAHRAM TER-MATEVOSYAN (IOS)
THE PROBLEMS OF METHODOLOGICAL AND PERIODICAL DIFFERENTIATION OF THE RESEARCH ON KEMALISM 271

ANAHIT KARTASHYAN (YSU)
DERSIM AND KEMALIST TURKEY 276

HAYK KOCHARYAN (YSU)
THE STATUS OF ARMENIANS IN THE CONTEXT OF ARAB ARMENIAN RELATIONS IN THE SEVENTH AND EIGHTH CENTURIES 285

PHILOLOGY

SILVA ALLAHVERDIAN (YSU)
ON THE PROBLEM OF REFLECTIONS OF HOLY SCRIPTURES IN THE POETRY OF MOLANA'S ("MASNAVI MANAVI") AND OF GRIGOR OF NAREK ("BOOK OF LAMENTATIONS") 293

HRAYR AGHABABYAN (YGU)
THE LOGICAL, LINGUAL AND PSYCHOLOGICAL LAYERS IN THE SYSTEM OF GRAMMATICAL GOVERNMENT 299

EMMA KHACHATRYAN (RA(S)U)
KINDS OF INFLECTING / MU'RAB LANGUAGE UNITS...304

HASMIK HMAYAKYAN (IOS)
HITTITE-ARMENIAN LINGUITIC PARALLELS..................311

MARINE MANUKYAN (YSU)
ISM MUDMAR "HIDDEN NAME" – THE SEMANTIC EQUIVALENT OF PERSONAL PRONOUNS AS A CASE OF OMISSION UNITS OF FORM...319

MARGARITA SARGSYAN (YSU)
THE PECULIARITIES OF ACTUAL, FORMAL AND SYNTACTIC SEGMENTATION WITH MODAL PARTICLES IN MODERN STANDART ARABIC...325

MARTA SIMONYAN (YSU)
THE POETRY OF SOHRAB SEPEHRI....................................333

ANTONIA TSANKOVA (SU, BULGARIA)
ON THE MEANS OF EXPRESSING DEFINITENESS-INDEFINITENESS IN CHINESE AND BULGARIAN 341

ANI PASHAYAN (RASU)
AN ATTEMPT OF A COMPARATIVE ANALYSIS OF SOME PECULIARITIES OF RUDAKI'S POETRY 349

ԱԶՐՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
(ԱԻ)

«ՍՊԻՏԱԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆ ՄԻՋՈՑ

«Սպիտակ հեղափոխության» շրջանակներում իրականացված բարեփոխումներին նախորդող ժամանակաշրջանում՝ XX դարի 60-ական թվականների սկզբին, Իրանը գտնվում էր հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամի մեջ, որն էլ իր արտացոլումը գտավ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Գյուղատնտեսական երկիր համարվող Իրանը չէր կարողանում իր ազգաբնակչությանը ապահովել անհրաժեշտ քանակի սննդամթերքով և ստիպված էր այլ երկրներից ներմուծել բուսական յուղ, միս, կաթ և այլն: Ճգնաժամ էր ապրում առանց այն էլ թույլ զարգացած արդյունաբերությունը: Իրանում արտադրվող ապրանքները չէին կարողանում մրցել ներմուծվող ապրանքների քանակի, ինչու չէ նաև որակի հետ: Չկարողանալով սեփական արտադրանքը յուրացնել սեփական երկրում՝ բազմաթիվ ձեռնարկություններ կամ փակվում, կամ սնանկանում էին: Իրանի ղեկավար օղակների ոչ հետամուտ քաղաքականության հետևանքով երկրի ֆինանսները նույնպես հայտնվեցին ծանր վիճակում, քանի որ նավթից ստացվող եկամուտների մեծ մասը ծախսվում էր ռազմական նպատակների համար և կազմում բյուջեի ծախսերի ավելի քան 50 %-ը[1]: Աճում էր նաև Իրանի արտաքին պարտքը, որը 1959-1963թթ. ընթացքում ավելացել էր ավելի քան 2 անգամ[2]:

Սոցալապես ծանր վիճակում էր գտնվում հատկապես գյուղական բնակչությունը, որի 95 %-ը, ընդ որում, անգրագետ էր[3]: Գործազրկությունը այնպիսի չափերի էր հասել, որ այն համարվում էր

երկրի համար կենսական նշանակություն ունեցող թիվ մեկ խնդիրը: Աշխատանք ունեցողները ևս գտնվում էին բավականին վատթար վիճակում: Աշխատավարձները հաճախ ուշացնում էին, իսկ սոցիալական ապահովագրության օրենքները առկա էին միայն թղթի վրա: Անմխիթար վիճակում էր գտնվում նաև առողջապահությունը: Թեհրանի համալսարանի սոցիալական խնդիրների Ինստիտուտի տվյալներով՝ 1959/60թթ. Իրանում կար ընդամենը 3355 բժիշկ, այսինքն՝ 1.5 բժիշկ 10 հազ. բնակչի համար[4]: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքը շահական վարչակարգն այժմ տեսնում էր կտրուկ փոփոխությունների՝ «բարեփոխումների» իրականացման մեջ: Շահը քաջ գիտակցում էր, որ, եթե համապատասխան «հեղափոխությունը» չիրականացվի «վերևից», ապա այն կիրականացվի «ներքևից»՝ քանզի հեղափոխության անհրաժեշտությունը արդեն ժամանակի պահանջ էր:

1962թ. շահ Մուհամմեդ Ռեզա Փեհլևիի նախաձեռնությամբ կազմվեց բարեփոխումների 6 օրինագիծ՝ 1) հողային բարեփոխումների, 2) անտառների ազգայնացման, 3) հողային բարեփոխումների ֆինանսավորման նպատակով պետական գործարանների և ձեռնարկությունների վաճառքի, 4) կանանց դրության բարելավման, 5) ձեռնարկությունների եկամուտներին աշխատավոր զանգվածի մասնակցության, 6) անգրագիտության դեմ պայքարի վերաբերյալ: 1963թ. հունվարի 26-ին անցկացված հանրաքվեի ժամանակ Իրանի ազգաբնակչության մեծ մասը կողմ արտահայտվեց բարեփոխումների իրականացմանը[5]: 1963թ. փետրվարի 27-ին Թեհրանում տեղի ունեցած տնտեսական կոնֆերանսի բացման ժամանակ շահը հայտարարեց, որ հաստատված օրինագծերը իրենցից ներկայացնում են «անարյուն սպիտակ հեղափոխություն» և որ ֆեոդալական համակարգը Իրանում արմատախիլ կլինի առաջիկա 30 տարվա ընթացքում[6]:

Հետագայում բարեփոխումների առաջին 6 օրինագծերին ավելացան ևս 6-ը՝ 1) «Առողջապահության կորպուսի» ստեղծման, 2) «Սեպահե թարվիջ» («Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման կորպուսի») ստեղծման, 3) «Խանեյե էնսաֆ»-ի («արդարադատության տան) ստեղծման, 4) ջրային աղբյուրների ազգայնացման, 5) ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով քաղաքի և գյուղերի վերակառուցման ծրագրի մշակման, 6) ադմինիստրատիվ բարեփոխումների (հիմնականում՝ պայքար

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

բյուրոկրատիայի դեմ) վերաբերյալ: Ավելի ուշ՝ մինչև 1975թ. բարեփոխումների ծրագրի 12 կետերին գումարվեց ևս 5 կետ՝ 1) «արդյունաբերական սեփականության զարգացման», 2) կաշառակերության դեմ պայքարի, 3) միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման, 4) մինչև 2 տարեկան երեխաների համար անվճար սննդի տրամադրման, 5) համընդհանուր սոցիալական ապահովագրության վերաբերյալ[7]: Բարեփոխումների ծրագիրը Իրանի պատմության մեջ մտավ «Սպիտակ հեղափոխություն» կամ ինչպես նաև հաճախ կոչում էին՝ «Շահի և ժողովրդի հեղափոխություն» անվամբ:

Բարեփոխումների ծրագրի մեջ առավել կարևորը հողային բարեփոխումներն էին: 1963թ. հունվարին ընդունվեց 1962թ. ընդունված հողային օրենքի «հավելում», որով սահմանվում էր կալվածատիրոջ մշակելի հողերի առավելագույն չափը՝ 500 հա, ինչպես նաև վտփոխվում էր պետության կողմից կալվածատիրոջից առգրավված ավելցուկ հողերի դիմաց վճարվելիք գումարի ժամկետները[8]: Հողային բարեփոխման վերաբերյալ օրենսդրությունը քայլ էր դեպի առաջ՝ գյուղերում ֆեոդալական մնացուկների սահմանափակման, ինչպես նաև կալվածատերերի և գյուղացիների միջև ավանդական փոխհարաբերությունների փոփոխման համար:

Ագրարային բարեփոխումների իրականացումը դժվարանում էր ոչ միայն կալվածատերերի և ծայրահեղ հոգևորականության ընդդիմության[9], այլ նաև ֆինանսավորման բացակայության հետևանքով: Ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով կառավարությունը ձեռնամուխ եղավ պետական գործարանների ու ձեռնարկությունների, բացառությամբ նավթային կազմակերպությունների, երկաթգծերի, ռազմական և մի շարք այլ գործարանների վաճառքի իրականացմանը: Պետք է նկատել, սակայն, որ պետական գործարանների ու ձեռնարկությունների վաճառքից ստացված գումարները չէին կարող ամբողջությամբ ծածկել ագրարային բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը: 1968թ. մարտի 21-ի դրությամբ հողային բարեփոխումների առաջին փուլը ընդգրկել էր 15.010 գյուղ, 790 ագարակ և 617 հազ. գյուղական ընտանիքներ, իսկ երկրորդ փուլը՝ 53.590 գյուղ և 18.836 ագարակ[10]: Գյուղացիների կյանքում հողային բարեփոխումները, իհարկե,

ներմուծեցին էական փոփոխություններ: Անկախ նրանից, որ հողային բարեփոխումները չէին կարող ամբողջությամբ վերացնել ֆեոդալական սնացուկները, ինչևէ, այն կոտրում էր սովորական հարյուրամյակների ընթացքում կենցաղային դարձած կարգերը:

1960-70-ական թթ. զգալի տեղաշարժեր տեղի ունեցան նաև երկրի արդյունաբերական և տնտեսական ոլորտներում և երկիրը մեծ քայլ կատարեց տնտեսական հետամնացությունը հաղթահարելու գործում: Ներքին համախառն արդյունքի աճը մեծ մասամբ պայմանավորված էր նավթից ստացվող եկամուտների հետ, և դրա շնորհիվ հնարավոր եղավ մեծ գումարներ ներդնել արդյունաբերության զարգացման մեջ: Բազմաթիվ գործարաններ վերակառուցվեցին, բացվեցին նորերը:

Երկրի տնտեսական հետամնացության հաղթահարման խնդիրը մեծապես կապված էր նաև զանգվածային անգրագիտության վերացման անհրաժեշտության և բնակչության մշակութային մակարդակի բարձրացման հետ, և արդյունաբերության զարգացման ու գյուղատնտեսության վերակառուցման արդյունքում աճեց միջին մասնագիտական կադրերի պահանջարկը: Իրանում առկա կրթական համակարգը ի վիճակի չէր ապահովել արմատական փոփոխություններ բնակչության գրագիտության մակարդակի բարձրացման համար և կառավարությունը ձեռնամուխ եղավ այսպես կոչված «Լուսավորության կորպուսների» ստեղծմանը: Վերջինիս ստեղծումը հետապնդում էր 2 նպատակ. լուծել անգրագիտության հարցը գյուղերում և միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներին ապահովել աշխատանքով[11]: Չնայած նրան, որ «Սպիտակ հեղափոխության» շրջանում անգրագիտության վերացման համար ձեռնարկված միջոցառումները մինչև վերջ չլուծեցին այդ կրթական խնդիրները, սակայն իրենցով նշանավորեցին դրական տեղաշարժեր բնակչության հասարակական և մշակութային կյանքում: 1966թ. քաղաքի բնակչության շրջանում 7 տարեկանից բարձր մարդկանց 50%-ն արդեն գրագետ էր, ընդ որում՝ 38.4%-ը կանայք էին[12], իսկ իսլամական հեղափոխության նախօրեին երկրի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 97 %-ը սովորում էր անվճար[13]:

Դրական տեղաշարժեր տեղի ունեցան նաև առողջապահության բնագավառում: Բժշկական տարրական սպասարկումից զրկված

գյուղերում այժմ ստեղծվեցին «Առողջապահության կորպուսներ», որոնք Լական դեր խաղացին բնակչության մահացության տոկոսը նվազեցնելու գործում: Առողջապահության նախարարության բյուջեն 1965-1972թթ. ընթացքում ավելացավ ավելի քան 2 անգամ՝ կազմելով 10664 մլն ռիալ[14]: 1963թ. գյուղերում սկսեցին գործել նաև «Արդարադատության տներ», որոնք կոչված էին լուծել բնակչության վեճերը: Սրանք կոչված էին փոխարինելու կալվածատերերի կողմից կազմակերպված ինքնակոչ՝ դատարաններին, որտեղ գործում էր կամայականության սկզբունքը: Գյուղական բնակչությանը սկսվեց ցուցաբերվել իրավաբանական օգնություն: Վերը նշված միջոցառումների հետևանքով որոշ չափով թուլացավ լարվածությունը գյուղական շրջաններում և տեղի ունեցավ ներքին քաղաքական որոշակի կայունացում:

Էական քայլեր կատարվեցին նաև երկրի սոցիալ-քաղաքական և հասարակական կյանք կանանց ներգրավելու ուղղությամբ: Կանայք ստացան ընտրական իրավունք և այժմ տղամարդկանց հետ հավասար կարող էին ընտրել և ընտրվել: 1967թ. ընդունվեց «Ընտանիքի պաշտպանության մասին» օրենքը, որով տղամարդկանց արգելվում էր առանց պատճառի կամայականորեն բաժանություն տալ կնոջը: 1974թ. վերը նշված օրենքում կատարվեցին փոփոխություններ՝ կապված երեխայի խնամակալության հետ[15]: Ճիշտ է, վերը նշված օրենքը իր փոփոխություններով հանդերձ ամբողջությամբ չհավասարեցրեց կանանց և տղամարդկանց իրավունքները, սակայն բարեփոխումների ընթացքում իրականացված փոփոխությունները մեծ քայլ էին Իրանում կնոջ դերի բարձրացման գործում:

Այսպիսով, շահական շրջանի բարեփոխումները ընդհանուր առմամբ ուղղված էին սոցիալ-հասարակական կյանքի ավանդական ինստիտուտների քայքայմանը, տնտեսության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, հատկապես 70-ական թ. երկրորդ կեսերից, երբ նավթից ստացված եկամուտների կտրուկ աճի արդյունքում Իրանը սկսեց գնել ոչ միայն բարձրորակ արտադրքանքներ, այլ նաև պատրաստի արդյունաբերական ձեռնարկություններ: Երկիր ներգրավելով օտարերկրյա ներդրումներ և մեծացնելով պետական սեկտորի՝ որպես երկրի խոշորագույն ձեռնարկատիրոջ ֆինանսական հնարավորությունները՝ Իրանը 70-

ական թ. վերածվեց համաշխարհային նոր տեխնոլոգիաների խոշորագույն պոլիգոնի: Երկրում սկսեց զարգանալ շինարարությունը. կառուցվում էին ճանապարհներ. երկաթգծեր, գործարաններ. բնակելի տներ, բարեկարգվում էին գյուղերը: Երկրում սկսվեց նկատվել սոցիալ-քաղաքական. տնտեսական կայունություն:

Սակայն պետք է նկատել. որ դրական տեղաշարժերի հետ մեկտեղ «Սպիտակ հեղափոխությունը ամբողջությամբ չպսակվեց հաջողությամբ. որի համար գոյություն ունեին ինչպես սուբյեկտիվ. այնպես էլ օբյեկտիվ պատճառներ: Սուբյեկտիվ պատճառներից մեկն այն էր. որ «Սպիտակ հեղափոխության» սկզբին շահին աջակցում էր ազգաբնակչության մեծ մասը. բարեփոխումների ընթացքը բարեհաջող էր և երկարատև հաջողությունների շարանը ստիպեց շահին կորցնել զգոնությունն ու իրականության զգացումը, որի մեջ նաև մեծ ներդրում ունեցավ շահի շրջապատը՝ բարձր պաշտոններ զբաղեցնող նրա մտերիմները, որոնք չափից շատ գովելով շահի ամեն մի քայլը՝ ավելի էին խորացնում շահի ինքնավստահության. մեծամտության և անթերի գործելու զգացումը:

«Սպիտակ հեղափոխության» անհաջողության կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ թերի կատարման օբյեկտիվ պատճառներից մեկն էլ հենց իրանական հասարակության քաղաքական զարգացվածության ցածր մակարդակն էր, շրջադարձային փոփոխությունների նկատմամբ անպատրաստվածությունը, ինչպես նաև ավելի քան 2500 տարվա պատմություն ունեցող իրանական ավանդույթները:

Բայց չնայած նրան, որ «Սպիտակ հեղափոխությունը» այդպես էլ ամբողջովին չիրագործվեց. միևնույնն է, այն իրենով նշանավորեց դրական ակնհայտ տեղաշարժեր երկրի սոցիալ-տնտեսական. հասարակական և քաղաքական կյանքում:

RUZANNA AZROYAN
(IOS)

"WHITE REVOLUTION" AS PRACTICAL MEANS TO OVERCOME SOCIAL-POLITICAL AND ECONOMIC CRISIS

Social-political and economic crisis during 1950-60 obliged Iran to seek emergency aid to go out from the critical situation. In 1963, therefore, the Shah took

the matter to the people in what he called a "Revolution from the Throne" or the "Revolution of the Shah and the People", which popularly came to be called the "White Revolution". During the "White Revolution" there was introduced a program of reforms which included a radical Land Reforms, designed to abolish Feudalism, nationalization of forests, pasturelands and all water resources, privatization of the government owned enterprises, manufacturing plants and factories, profit-sharing for industrial workers in private sector enterprises, changes in electoral law to give more representation, extending the right to vote to the women of Iran, foundation of the Literacy, Health, Reconstruction and Development Corps, Houses of Equity, promotion of urban and rural Modernization and Reconstruction, introduction of measures to ensure price stabilization and campaigned against unreasonable profiteering, fight against corruption within the bureaucracy, free and compulsory education and daily free meal for all children from kindergarten to eighth grade, free food for needy mothers, measures to proved for Social Security and National Insurance for all Iranians, and many other didactic and administrative reforms. The ultimate goal of the "White Revolution" was to promote public well-being and contentment and to raise the nation's living standards.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Алибейли Г. Д., Иран и сопредельные страны Востока 1946-1978, М., 1989, с. 23.
2. Иванов М. С., Иран в 60-70-х годах 20 века, М., 1977, с. 13-14.
3. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2005, էջ. 675, ինչպես նաև՝ Eilers W., Educational and Cultural Development in Iran during the Pahlavi Era, Iran under The Pahlavis, ed.by George Lenczowski, Stanford California, 1978, p. 313.
4. "Iran Almanac 1961", Tehran, 1962, p. 583.
5. Араваджян З. А., "Иран- власть, реформы, революции (XIX-XX вв.)", М., 1991, с. 70.
6. Иванов М. С., Иран в 60-70-х годах 20 века, М., 1977, с. 35.
7. Bashiri I., The Reforms of the Pahlavis, 2004, http://www.angelfire.com/rnb/bashiri/pahlavireforms/ PahlaviReforms.html, http://www.sarafrazan.net/the-father%20of%20white.htm
8. Lambton Ann K. S. The Persian Land Reform 1961-1966, Oxford, 1966, ինչպես նաև՝ Kristjanson B. H., The Agrarian-based Develepment, Washington, 1965, p. 2.
9. 1960-70-ական թթ. հողային բարեփոխումները հոգևորականությանը զրկել էին հսկայական չափերի հասնող վակուֆային կալվածքներից, բացի այդ 1978թ. կառավարությունը վերացրեց հոգևորականությանը հատկացվող դրամական նպաստը: Ավելին՝ շահը իմանալով շիիթական հոգորականության քաղաքական հավակնությունները՝ ձգտում էր իջեցնել պետության մեջ նրա ունեցած քաղաքական կշիռը, , մինչդեռ հոգևորականությունը ձգտում էր իր իրավասությունների մեջ ընգրկել Իրանի հասարակական կյանքի բոլոր

ընագավառները և իր ազդեցությունը տարածել ոչ միայն հավատացյալների, այլ նաև՝ երկրի պետական կառույցների վրա:

10 Iran Almanac and the Book of Facts. Tehran. 1970. 9-th edition. p. 522.
11. Исмаилов Л., Создание и деятельность "Корпуса просвещения" в Иране. Иран (сборник статей). М., 1971.
12. "Кейхан" 1967/1968". Тегеран. 1968.
13. 1977 Iran Yearbook, Tehran, 1977, p. 395.
14. Статистический ежегодник за 1972/1973, М., с. 387, 392.
15. Halliday F., Iran. Dictatorship and Development, London. 1979, p. 191-193: Bahramitash R., Revolution, Islamization and Women's employment in Iran. The Brown Journal of World Affairs, Volume IX. Issue 2. Brown University. USA. 2003, p. 231.

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՆՆԱ
(ՀՅԹԻ)

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ

Թուրքական թատրոնի սկզբնավորումը և առաջին հիսուն տարիների պատմությունը սերտորեն կապված է հայ գործիչների անվան հետ: Այս հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Օսմանյան կայսրություն թափանցող եվրոպական նորամուծությունների առաջին արձագանքողն ու կրողները հայերն ու հույներն էին: «Եթե նրանք ամբողջությամբ չէին պատկանում եվրոպական քաղաքակրթությանը, ապա շատ մոտ էին կանգնած նրան»,- գրում է Զիա Գյոքալփը՝ անդրադառնալով այս հարցին[1]: 1850-ական թվականներին արևմտահայության մշակութային կյանքում որոշակի աշխուժացում է նկատվում: Այնպիսի կարևոր հայաշատ կենտրոններում, ինչպիսին Կ.Պոլիսն ու Զմյուռնիան էին, ժամանակի պահանջներին համապատասխան զարթոնք էին ապրում դպրոցն ու մամուլը, գիտությունն ու գրականությունը: Բազմաթիվ հայ երիտասարդներ իրենց կրթությունը շարունակում էին Եվրոպայում և վերադառնում՝ իրենց հետ բերելով բազմաթիվ նորամուծություններ, որոնք դրական ազդեցություն էին գործում նաև հասարակության մեջ կանանց դիրքի բարելավման վրա: Այս կապակցությամբ ժամանակի արևմտահայ հասարակության ամենահայտնի կին գործիչներից Զապել Եսայանը[2] իր հոդվածներից մեկում գրում է. «Վենետիկէն վերադարձող ուսանողներ, որոնք հետզհետէ ընկերական կարեւոր դիրքերու հասան, հակառակ իրենց զանազան զբաղումներուն, վեհանձնօրէն իրենց մտքի պաշարէն բաժին հանեցին Պոլիս մնացող հասարակութեան, թէ՛ թարգմանութիւններով, թէ ինքնատիպ գործերով. լրագրութիւնն ալ մեծապէս նպաստեց մեր կիներուն մտաւոր մշակութեանը և հետզհետէ եւրոպական զարգացումին հետ մեր բարքերն ալ փոխուեցան ամէն տեսակէտով…»[3]: Այդ նորամուծությունների թվին էր պատկանում նաև թատրոնը, որը խանդավառությամբ է ընդունվել արևմտահայերի կողմից: Սկզբնական շրջանում թատերական ներկայացումները կազմակերպվում

էին մեծահարուստների տներում կամ դպրոցներում ու վարժարաններում: Այդ շրջանում կին դերասաններ չկային և «...կնոջ դերը յաճախ զանց կ՚առնուէին և եթէ շատ անգամ գործողութեան քալելը անկարելի իսկ նկատուէր՝ այս բացառիկ պարագային դեռատի պատանիներ էին, որ կը կատարէին կնոջ դերը»[4]: Սակայն ամեն ինչ փոխվում է, երբ 1856թ. ձևավորվում է առաջին պրոֆեսիոնալ թատերախումբը: Այս նախաձեռնությունը Սրապիոն Հեքիմյանինն էր, որի կազմած թատերական խումբը «անդրանիկ խումբն է թէ՛ թուրք թատրոնին, և թէ՛ հայ թատրոնին»[5]: Այս խումբը Բերայի Նաումի թատրոնում թուրքերենով բավական երկար ժամանակ ներկայացումներ էր խաղում առանց կին դերասանուհու: «Ստեփան Էքչյան թուրք և հայ թատրոնին պետքը միանգամայն կը լրացնէ յաջողելով հայ օրիորդ մը, որ յանձն առնէ ժամանակին, բարքերու այդ աններող շրջանին, կուրծք տալ զանազան չարախօսութեանց, որոնք բնականաբար պիտի յաջորդէին իր բեմին վրայ երևալու յանդգնութեանը»[6]: Խոսքը առաջին դերասանուհու՝ Օր. Ֆանինի (Ալավնի Խամսեան) մասին է, որն առաջին անգամ բեմ է դուրս եկել 1856թ՝ դառնալով հայ և թուրք թատրոնի առաջին կին դերասանը: Թատերասեր հասարակությունը շատ ջերմ է ընդունել կին դերասանի խաղը, որը նորույթ էր և դրա պակասը զգացվում էր վաղուց: Օր. Ֆանինին գործակից դարձավ նաև Օր. Աղավնի Գէորգեանը, որը նույն տարում սկսել է խաղալ Սրապիոն Հեքիմեանի կազմակերպած թատերական խմբի մեջ[7]: Սակայն Գ. Ստեփանյանը իր՝ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» աշխատության մեջ անդրադառնալով այս կանանց նշում է, «վերոհիշյալ կանայք՝ որպես սիրող մասնակցելով հանդերձ մի քանի ներկայացման, չեն կարող համարվել առաջին դերասանուհիներ»[8]: Նա առաջին պրոֆեսիոնալ դերասանուհի համարում է Արուսյակ Փափազյանին:

Արդեն 1859թ. Կ.Պոլսի Բերա թաղամասում Սրապիոն Հեքիմեանը, ոգևորվելով իր կազմած թատերական խմբի հաջողություններից, վարժարանական սրահներից թատրոնը փոխադրել է պրոֆեսիոնալ բեմ և ձևավորել առաջին արևմտահայ կանոնավոր թատրոնը՝ «Արևելյան թատրոնը»[9]: Չնայած իր ունեցած կարճատև կյանքին (1859-1863), Արևելյան թատրոնը մեծ հաջողություններ է ունեցել: Արևմտահայ և թուրքական բեմի լավագույն դերասաններն ու դերասանուհիները՝ Էքչեան, Ֆասուլեաճյան, Մնակյան, Պենկլյան, Թրյանց, Աճեմյան,

Արուսյակ Փափազյան, Մարիամ Ծաղիկյան և այլոք՝ որպես հմուտ դերասաններ կայացել են հենց այս թատրոնում[10]:

Արուսյակ Փափազյանը, որը գերազանց ավարտել էր Գում-Գափուի Ս. Լուսավորչեան վարժարանը և դասավանդել էր այնտեղ, մեծ հաջողություններ է ունեցել «Արևելյան թատրոնում»: «...կրնանք ըսել թէ մեր մեջ (խոսքը Կ.Պոլսի թատերասէր հասարակության մասին է. Ա.Ա) ոչ մէկ դերասանուհի իրեն չափ համակրանքի ու գուրգուրանքի արժանացած է...Արևելյան թատրոնի բեմի վրայ նա համբավի ու փառքի գագաթնակէտին հասավ»[11]: Արուսյակի մեծ համբավն էր, որ հետագայում ոգևորել և բեմ է հանել նորանոր տաղանդավոր դերասանուհիների, ինչպիսիք էին Եղսանուհի և Վերգինե Գարագաշյան քույրերը, Մարի Նվարդը, Պայծառ Ֆասուլյաճյանը, Թ. Հերանույշը, Թերեզա Չուհաճյանը և այլոք, որոնք դարձել են թուրքական բեմի պարծանքը:

Առաջին թատերախումբը, որը Օսմանյան կայսրությունում տվել է թուրքերեն կանոնավոր ներկայացումներ և ունեցել է «պրոֆեսիոնալ» դրոշմ, Հակոբ Վարդովյանի կամ ինչպես թուրքերն էին նրան անվանում՝ Գյուլու Հակոբի խումբն էր: Վարդովեանի դերը՝ որպես թուրք թատրոնի հիմնադրի, հստակ ձևակերպել է Սելիմ Նուզհեթ Քերչեքը, նշելով, որ թուրքերը նրան են պարտական իրենց թատրոնի ստեղծման համար[12]: Վարդովյանի փառքը ավելի ամուր հիմքերի վրա է դրվել 1869-70թթ. թատերաշրջանում, երբ սուլթանական կառավարությունը նրան շնորհել է Կ.Պոլսում հուշարարավ թատրոն ունենալու մենաշնորհը՝ տասը տարի ժամանակով: Հայտնի դերասանուհի Ազնիվ Հրաչյան իր հուշերում այդ կապակցությամբ գրում է. «Ամիսը ութ ներկայացում կուտայինք, չորսը թուրքերեն լեզվով, չորսը հայերեն, իսկ ռամազանին երեսուն գիշեր շարունակ կը ներկայացնեինք թուրքերեն»[13]:

Առաջին երեք թատերաշրջանում Վարդովյանը թուրքերեն ներկայացումները բեմադրում էր բացառապես հայ դերասան-դերասանուհիների մասնակցությամբ: Թուրք դերասաններ գոյություն չունեին, իսկ դերասանուհու մասին խոսք լինել չէր կարող: Ստեղծվում է թատրոնին կից մի հանձնաժողով, որը բաղկացած էր ժամանակի ամենանշանավոր թուրք մտավորականներից, որոնք փորձում էին միջամտել ու կառավարել Վարդովեանի գործունեությունը: Վերջիններիս առաջարկով նա փորձում է դասեր առնել Ահմեդ Նեջիբից, Իսմայիլ

Հազգրնին և Համդին. որոնք սակայն սահմանափակվում են երկրորդական դերեր կատարելով:

Վարդովյանի թատրոնը գործեց ուղիղ տասը տարի՝ մինչև 1879թ.: «Օսմանյան թատրոնի» կազմալուծման միակ պատճառը Աբդուլ Համիդի՝ թատրոնի շենքը մեկ օրում հիմնահատակ քանդելու հրամանն էր: Վերջինիս համար պատրվակ էր Ահմեդ Միդհատի «Չերքեզ Էոզդենները» ներկայացումը. որը սուլթանի չերքեզ թիկնապահների մեջ վեճի առիթ էր տվել: Պալատի ներքին խաղաղությունը վերականգնելու համար Աբդուլ Համիդը այլ միջոց չէր գտել. նա հրամայել էր քանդել թատրոնի շենքը և ցրել թատերախումբը[14]:

Վարդովյանի ռեժիսորներից Թ. Ֆասուլաճյանը նույն 1879թ. Պոլսում մնացած դերասաններից կազմել է թատերախումբ. մեկնել Բուրսա և շարունակել է մայրաքաղաքում ընդհատված թուրքական թատրոնի գործունեությունը: Բուրսայի թատրոնը փակվել է 1883թ.: Նույն տարվանից մոտ քառորդ դար թուրքական թատրոնի գործը ստանձնել է Մարտիրոս Մնակյանը՝ իր ղեկավարած «Օսմանյան դրամատիկ» թատերախմբով. որն իր ներկայացումները տվել է միայն թուրքերեն, քանի որ հայերեն ներկայացումներն արգելված էին մինչև 1908թ. օսմանյան սահմանադրության հռչակումը:

1908թ. հեղափոխությունից հետո Փարիզում կրթություն ստացած թուրք երիտասարդները ծրագրեր էին կազմում ազգային թատրոնի ստեղծման համար: Այդ երիտասարդներից մեկի՝ Բյուրհանեդդին բեյի անվան հետ է կապված թուրքական ազգային թատերախումբ ստեղծելու փորձերը: Նա ամեն ջանք գործադրում էր թուրքական թատրոնը հայկական տարրից ու ազդեցությունից ազատելու համար, սակայն թուրքերը չէին կարող առանց հայերի օգնության ունենալ ազգային թատրոն, քանի որ իսլամն արգելում էր կնոջ ներկայությունը բեմում, իսկ առանց դրա, ինչպես հետագայում նշում էր Աթաթուրքը, անհնար էր ստեղծել թուրքական ազգային թատրոն[15]: Թուրք թատերական գործիչները այս կարևոր հարցի լուծման համար դիմում են անգամ ծայրահեղ քայլի՝ փորձելով թատրոնի հետ կապել գնչուհիների. որոնք թրքախոս էին և կարող էին նպաստել հայերից ազատվելու գործին: Նրանք հավաքագրում են 30-40 գնչուհիներ, գրաճանաչ են դարձնում, սովորեցնում են բեմական արվեստը, սակայն անարդյունք. և հայ դերասանուհիները կրկին մնում են անփոխարինելի[16]:

1913-14թթ Կ.Պոլսի քաղաքապետն էր Ջեմիլ փաշան, որը կրթություն էր ստացել Եվրոպայում և բարձր էր գնահատում թատերական արվեստը: Նա անձամբ ճանաչելով այդ ժամանակ Փարիզում մեծ հռչակ վայելող «Օդեոն» թատրոնի տնօրեն Ա. Անտուանին, հրավիրում է Պոլիս, որպեսզի վերջինիս օգնությամբ ձևավորվի թուրքական ազգային թատրոնը: Անտուանը ուսումնասիրում է քաղաքում առկա բոլոր գործող թատերախմբերը, ծանոթանում դերասանների հետ և գալիս է այն եզրակացության, որ թուրքական ազգային թատրոնի հիմնումն առանց հայերի օժանդակության և մասնակցության անհնար է: Նրա ջանքելով 1914թ. հիմնադրվում է թուրքական ազգային թատրոնը՝ «Դար ու Բեդաին», որը գոյատևել է մինչև 1923թ., որից հետո նրա հիման վրա ստեղծվել է Թուրքական պետական ազգային թատրոնը: «Դար ու Բեդայի» առաջին դերասանուհի է նշանակվել Էլիզ Պինեմեճյանը, որը ամենաբարձր վարձատրվող դերասանուհին է եղել այդ թատրոնում: Այստեղ են խաղացել նաև Քնար Սևաճյանը, Ատրինե Դերձակյանը և ուրիշ հայ դերասանուհիներ: Երբ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, Անտուանը շտապ լքում է Կ.Պոլիսը:

Առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց Ցեղասպանությունը անհնար էին դարձնում թուրքական թատրոնում հայերի աշխատանքը, անգամ թուրքական թատրոնին այդքան մեծ ծառայություններ մատուցած Մ. Մնակյանին ազատում են «Դար ու Բեդայի» դրամատիկական բաժնի ղեկավարի և ռեժիսորի պարտականություններից: Մնակյանին հնարավոր եղավ փոխարինել Ըրտվան բեյով, սակայն դերասանուհիների հարցում հայերին թատրոնից վտարելու քաղաքականությունը կարող էր պարզապես թատրոնը փակման առաջ կանգնեցնել: Թերևս դա էր պատճառը, որ Հայոց Ցեղասպանության ողջ ընթացքում և անգամ 1915թ. ոչ մի դերասանուհի չի բռնագաղթվել: Էլիզ Պինեմեճյանը (Գովանի) թուրքական թատրոնում խաղացել է մինչև 1925թ., և մեկնել է Փարիզ, երբ թատրոնն ուներ իր առաջին թուրք դերասանուհիները:

Այսպիսով, թուրքական թատրոնի հիմնադրման և նրա առաջին հիսուն տարիների պատմությունը անքակտելիորեն կապված է հայ գործիչների անվան հետ: Եթե չլինեին արևմտահայ դերասանական խմբերը և հատկապես դերասանուհիները, ապա 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին չէր լինի թուրքական թատրոնը:

ANNA ALEKSANYAN
(AGMI)

THE FOUNDATION OF THE TURKISH THEATRE AND THE FIRST ACTRESSES

The origin and the history of the first fifty years of the Turkish theatre are closely connected with the names of the Armenian artists. This circumstance was conditioned by the fact that Armenians were first to respond to European innovations penetrating into the Ottoman Empire. First Turkish performances were staged by Armenians. Moreover. first professional theatre was founded by Armenians. The Turks made every effort to get rid of the influence of the Armenians in the Turkish theatre. However. it was impossible till 1925. since Armenian actresses were indispensable ones in the Turkish theatre.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Фадеева И. Л., От империи к национальному государству, М., 2001, с. 65.
2. Զապել Եսայանը (1878-1937թթ.) ակտիվ հասարակական գործիչ էր, մանկավարժ, հրապարակախոս և թարգմանիչ: Նա առաջին արևմտահայ կանանցից էր, ով իր հրապարակումներում բարձրացնում էր կնոջ էմանսիպացիային առնչվող հարցեր:
3. Եսայեան Զ., Սեր կիները, «Ծաղիկ», Զմյուռնիա, 1903, թիվ 13(552), էջ 150:
4. Անգեղեայ Ս., Հայ դերասանուհիները, «Ծաղիկ», Զմյուռնիա, 1903, թիվ 1(540), էջ 2:
5. Նույն տեղում, էջ 2: Տե՛ս նաև Հարությունյան Բ., XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, Եր., 1980, էջ 22-23; Սաեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Եր., 1962, էջ 79:
6. Անգեղեայ Ս., նշվ. աշխ, էջ 2:
7. Չոպանյան Ա., Մկրտիչ Պեշիկթաշլյան, Փարիզ, 1907, էջ 87:
8. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 1, էջ 175:
9. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 1, էջ 213-319; Շարասան, Թրքահայ բեմը և իր գործիչները, Կ. Պոլիս, 1914, էջ 8-10:
10. Շարասան, նշվ. աշխ., էջ 9:
11. Նույն տեղում, էջ 30:
12. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 51:
13. Ազնիվ Հրաչյա, Իմ հիշողությունններս, Փարիզ, 1909, էջ 68:
14. Ստեփանյան Գ., Թուրքական աղբյուրները՝ թուրք թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին, Եր., 1983, էջ 13:
15. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 80:
16. Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. 3, էջ 80:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՍԵՆ
(ԱԻ)

ԲԱԴՐ ԱԼ-ԳԱՄԱԼԻ ԱԼ-ԱՐՄԱՆԻԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1074-1094ԹԹ.

Ֆաթիմյան խալիֆայության 11-րդ դարի 70-ական թվականներից մինչև 12-րդ դարի 60-ական թվականների պատմությունը մի շարք պատմաբաններ անվանում են «հայկական շրջան», որը պայմանավորված է ուսումնասիրվող շրջանում խալիֆայության վեզիրի պաշտոնում հայերի շարունակաբար պաշտոնավարմամբ: Շուրջ մեկ հարյուրամյակ տևած այս շրջանում վեզիրի պաշտոնում նշանակվել են մի շարք հայորդիներ՝ այդ թվում և՛ մուսուլմաններ, և քրիստոնյաներ: Սույն հոդվածը ներառում է հայազգի իսլամադավան Բադր Ալ-Գամալիի կյանքի և Եգիպտոսում ծավալած գործունեության լուսաբանումը:

Ֆաթիմյան խալիֆա Ալ-Մուսթանսիրի (1036-1094թթ.) իշխանության ընթացքում երկիրը մեծապես գտնվում էր զինված ուժերի և թիկնապահ գնդերի իշխանության ներքո: Վերջիններս բաղկացած էին հիմնականում երեք էթնիկ խմբերի ներկայացուցիչներից՝ բերբերներ, սուդանցիներ, լավաթիներ (աֆրիկյան ցեղ)[1] և թուրքեր, որոնք խալիֆայությունը բաժանել էին յուրատեսակ ազդեցության գոտիների[2]: Նշված ապակենտրոն տարրերից հատկապես թուրքերի և լավաթիների միջև երկարամյա հակամարտությունը բերեց սոցիալ-տնտեսական ճգնաժամի[3]:

Ստեղծված պայմաններում խալիֆա Ալ-Մուսթանսիրը որոշում կայացրեց դիմել Աքքայի հայազգի կառավարիչ Բադր Ալ-Գամալիի օգնությանը՝ երկրում կենտրոնական իշխանության ազդեցության վերականգնման և ամրապնդման նպատակով[4]:

Հայազգի Աբու Նիջմ Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանին եղել է Դամասկոսի կառավարիչ Ջամալ Ալ-Դաուլա Բին Ամմարի մամլուքը[5].

որի անվան հետ է կապվում նրա Ալ-Գամալի[8] անունը՝: Գերութեան տարիներին ստանձնած բոլոր աշխատանքներում Բադրը ցուցաբերեց մեծ եռանդ և նվիրվածություն՝ նշանակվելով տարբեր պաշտոնների՝ ընդհուպ մինչև հիջրայի 455թ. (1063թ.) Դամասկոսի կառավարչի պաշտոնում հաստատվելը[*]: Դամասկոսի կառավարչի պաշտոնից հետո Բադրը տեղափոխվում է Աքքայի կառավարչի պաշտոնին, որտեղից էլ 1073թ խալիֆա Ալ-Մուսթանսիրը հրավիրում է նրան Եգիպտոս[9]: Բադր Ալ-Գամալին Կահիրե ժամանեց հիջրայի 466թ. (1074թ.)[10] և շատ կարճ ժամանակամիջոցում, ստեղծված անիշխանության պայմաններում, կարողացավ դառնալ երկրի փաստացի ղեկավարը: Եգիպտոս ժամանելուց անմիջապես հետո հայազգի զորավարը ձեռնամուխ եղավ իշխող ապակենտրոն տարրերից երկրի մաքրմանը՝ մեկ օրում բոլորին մահապատժի ենթարկելով[11]: Խնդրի լավագույն գիտակ Արշակ Ալպօյաճեանի կարծիքով արաբ պատմիչները ոչ միայն չեն քննադատել Բադր Ալ-Գամալիի կողմից իրագործված զանգվածային սպանությունները, այլև նշում են, որ իրականում այդ ճանապարհը միակն էր երկրում կենտրոնական իշխանության վերականգնման և սոցիալ-տնտեսական հետագա զարգացման համար[12]:

Ամենայն հավանականությամբ նշված իրադարձություններին է վերաբերում հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ առկա հետևյալ հիշատակությունը. «Սա (Ամիր Ճոշ)[13]՝ հայ զինվորներից բաղկացած զորագունդ հանեց Ախսիսի դեմ և պատերազմեց, որից հետո Եգիպտոսում տիրեց խաղաղությունը[14] »:

Այսպիսով, հիջրայի 466թ. ջումադ ալ-առուալ ամսի 28-ին (1074թ.) Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանին նշանակվեց Ֆաթիմյան խալիֆայության վազիր և վարեց այդ պաշտոնը մինչև հիջրայի 487թ. (1094թ.)[15]: Նա ստացավ «Զորքերի հրամանատար (Ամիր Ալ-Գույուշ), սրի և գրչի վազիր (Վազիր աս-սեյֆ ուա ալ-կալամ), գլխավոր դատավոր (կադի ալ-կուդդաթ) և հավատացյալների աղոթքների առաջնորդ (Հադի դաաթ ալ-մումինին)» տիտղոսները[16]: Բադր Ալ-Գամալիի հաջողությունների շարքում կարևորագույններից մեկը լավ կազմակերպված և կարգապահ զինված ուժերի ստեղծումն էր, որոնց միջուկի հիմնական բաղկացուցիչը հայկական զորագնդերն էին[17], որոնք գործնականում ապացուցել էին իրենց բարձր մարտունակությունը և նվիրվածությունը հայազգի վազիրին:

Ինչպես նշում է Ա. Ալպօյաճեանը, երկրում տարիներ շարունակ տիրող սովը, համաճարակները և անիշխանությունը նվազեցրել էին քաղաքի բնակչությունը: Բազմաթիվ տներ և կալվածքներ, մնալով առանց տերերի, գտնվում էին կիսավեր վիճակում, որոնք էլ Բադր Ալ-Ջամալին հանձնեց իր զինվորներին, որպեսզի վերջիններս կարողանան օգտվել անտեր կալվածքներից և Կահիրեում նոր տներ կառուցեն[18]: Անհրաժեշտ է նշել նաև, որ ոչ միայն առանց տերերի մնացած կալվածքները հանձնվեցին մեծամասամբ հայազգի զինվորներին, այլև սպանված պաշտոնյաների պաշտոնները[19]: Ռազմական բարեփոխումների շրջանակներում կատարված կարևորագույն գործողությունների շարքում Բադր Ալ-Գամալիի անվան հետ են կապվում Կահիրեի նոր պարսպի և երեք դարպասների (Բաբ Զուվեյլա (1092թ), Բաբ ան-Նասր և Բաբ ալ-Ֆութուհ (1087թ.) կառուցումը[20], որոնք, ի դեպ, կառուցել են Եդեսիայից ժամանած հայազգի երեք եղբայրներ[21]: Վազիր Բադրի կառավարման ընթացքում կառուցված պաշտպանական կառույցներից անհրաժեշտ է նշել Բաբ Զուվեյլայի առջև կառուցված «կայծքարի սահարանը», որի ողորկ մակերեսն անհաղթահարելի խոչընդոտ պետք է հանդիսանար հարձակման դեպքում՝ թույլ չտալ ձիերի մուտքը քաղաք[22]: Ըստ 15-րդ դարի արաբ պատմիչ Իբն Թաղրիբիրդիի՝ ազգությամբ հայ իսլամադավան վազիրը զբաղվել է նաև մզկիթաշինությամբ: Բադր Ալ-Գամալիի կառուցած մզկիթներից խոսվում է երկուսի մասին՝ Աքթարինի և Ալ-Գամալիի մասին, որոնցից վերջինը կառուցվել է 1085թ. Մուկադդամ լեռան վրա և կանգուն է մինչև օրս[23]:

Ինչ վերաբերում է այլադավան ազգաբնակչության նկատմամբ վազիրի վերաբերմունքին, 12-րդ դարի պատմիչ Աբու Սահլ Հայը գրում է «կը կառավարեր Եգիպտոսը շնորհիվ Սուլթանին, եւ բարեկամն էր ամեն քրիստոնեից, մեծամեծաց թէ ռամկաց[24]»:

Տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը ուղղված քաղաքականության դրսևորումներից է երեք տարով հողագործության ազատումը հարկերից, որը բերեց գյուղատնտեսության բարգավաճմանը[25]: Ամիր Ալ-Գույուշը, ի զարմանս Կահիրեի առևտրականների, ոչ միայն չխլեց նրանց ունեցվածքը, այլև փոխատվություն տվեց վերջիններիս՝ դրամատուն բացելու նպատակով[26]: Ընդհանուր առմամբ Բադր Ալ-Գամալիի իշխանության

տարիներին խալիֆայության պետական գանձարանի մուտքերը երկու միլիոն դինարից աճեցին մինչեւ երեք միլիոն դինար. ինչն էլ թույլ տվեց վեզիրին ֆինանսական մեծ ներդրումներ կատարել քաղաքի պաշտպանական կառույցների ավելացման համար[27]:

Բադրի վազիրության ողջ ընթացքում երկրի փաստացի կառավարումը իրականացնում էր վազիրը. ով առավել ազդեցիկ գործիչ էր. քան Ալ-Մուսթանսիր խալիֆան. ինչի մասին վկայում է «Ալլահը Ձեզ հաղթալ դարձրեց Բադրով» արտահայտությունը. որն ընդգրկված էր ‘Նուրանի պալատական ընթերցանության բացման տեքստում[28]:

Այսպիսով. Եգիպտոսում Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիի իշխանության գալով սկսեց ֆաթիմյան վազիրների հայկական շուրջ մեկ հարյուրամյակ տևած շրջանը (1074-1162թթ.)[29], որի գրեթե ողջ ընթացքում հայազգի վազիրները միանձնյա կառավարեցին երկիրը՝ իրենց անջնջելի հետքը թողնելով Ֆաթիմյան խալիֆայության պատմության մեջ:

ARSEN ARAKELYAN
(IOS)
BADR AL-GAMALI AL-ARMANI'S REIGN IN EGYPT 1074-1094

According to several historians the period of 1074-1162 was an "Armenian period" for Fatimid caliphate. as for about a hundred years the position of Vazir was held by both Muslim and Christian Armenians.

This article includes the history of life and reign of Badr Al-Gamali Al-Armani in Egypt.

During the rule of caliph Al-Mustansir Egypt was in chaos and struggles between the Sudanese and Turkish troops of the caliph. Long lasting internal war caused hunger and plagues. In 1073 a former slave of Armenian origin, governor of Acre Badr al-Gamali was called by caliph al-Mustansir to restore the order in Egypt. Badr al-Gamali arrived in Cairo in 1074 and sharply destroyed all the dissidents. After successfully completion of cleaning of the state from the aggressors and uniting it under his control. Badr Al-Gamali started the reanimation of the Economy.

Abu Nijm Badr al-Gamali has ruled the Fatimid Caliphate for 20 years and has been the actual leader of the state being the head of the secular government. commander-in-chief and Vazir, as well as the head of court.

Badr al-Gamali Al-Armani is the first Armenian vazir, who started the "Armenian period" of Fatimid caliphate history.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մըսրլեան Գ., Ականաւոր Հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947. էջ 23
2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. I, Եր., 2001, էջ 307:
3. The Encyclopaedia of Islam. Leiden, E.J.Brill 1986, p. 870
4. Իպն Խալլիքան, Վեֆայաթ էլ Աանան, (Գէորգ Մըսրլեանի թարգմանություն), Գահիրէ, 1935, էջ 148:
5. Մամլուք անվանվել են միջնադարյան Եգիպտոսում երիտասարդ ստրուկները, որոնք ընդունել են իսլամ, սովորել են արաբերեն և ծառայել են խալիֆայության զինված ուժերում: Էթնիկ տեսակետից մամլուքները հիմնականում թուրքերն էին և հյուսիսային Կովկասի տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ:
6. Ջիմ արաբերեն հարֆի եգիպտոսի բարբառով Գիմ հնչողության պատճառով Ալ-Ջամալի անունը դարձել է Ալ-Գամալի և բառավերջի ի տառը նշանակում է պատկանելություն՝ խորհրդանշելով Բադրի պատկանելությունը Ջամալ Ալ-Դաուլա Բին Ամմարիին:
7. Սուֆեան Յ., Եգիպտոսի հայ մեմլուքներն ու իշխանները ֆաթիմեան շրջանին, Գահիրէ, 1928, էջ 26:
8. محمد كرد علي، خطط الشام، الجزء الاول، دمشق ١٤٠٣هـ-١٩٨٣م، صفحة ٢٢٨
9. Ալպօյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը, Գահիրէ, 1960, էջ 19:
10. اتعاظ الحنفا، لتقي الدين احمد بن علي المقريزي، نشره و حققه و علق حواشيه و قدم له ووضع فهارسه الدكتور جمال الدين الشيال، دار الفكر العربي، ١٩٤٨، صفحة ٢٧١.
11. Թուրշյան Հ., 11-րդ եւ 12-րդ դարերի Եգիպտահայ գաղութի՝ պատմությունից, Արեւելագիտության ժողովածու, հ. II, Եր., 1964, էջ 306:
12. Ալպօյաճեան Ա., նշվ. աշխ., էջ19:
13. Ամիր Ճոշ կամ Միրգուշ անունները բխում են Ամիր Ալ-Գույուշ եզրից, որը թարգմանաբար նշանակում է զորքերի հրամանատար: Պատմագրությունը Ամիր Ալ-Գույուշ անվանում է հայազգի վազիր Բադր Ալ-Գամալի Ալ-Արմանիին:
    Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (Հ. Բարթիկյանի թարգմանություն), Եր., 1991, էջ 251:
15. محمد رفعت الامام، الارمان فى مصر، ١٩٩٥ صفحة ٥٠
16. Իպն Խալլիքան, Վաֆայաթ էլ Աանան (Գէորգ Մըսրլեանի թարգմանություն), Գահիրէ, 1935, էջ 29:
17. Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 308:
18. Ալպօյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 21:
19. Մըսրլիան Գ., նշվ. աշխ., էջ 25:
20. Семенова Л. А., Из фатимидского Египта, М., 1974, с. 69.

21. Զէյթլեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մեջ. Կանադա, 2004, էջ 33:
22. Միսրլեան Գ., նշվ. աշխ., էջ 32:
23. Նույն տեղում, էջ 36:
24. Ալպօյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 22:
25. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964, էջ 133:
26. Ալպօյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 20:
27. The Encyclopaedia of Islam, p. 870.
28. Սուֆեան Յ., նշվ. աշխ., էջ 32:
29. Զէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 34:

ԲԱԴԱԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
(ԷՊԱԹ)
ՏԱՐԻՆ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԴԻՑԱՐԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՌՅԱԿԸ

Ուրարտական հասարակությանը բնորոշ տիեզերընկալման եռամաս կառուցվածքին՝ Ուրարտուում երկրագործական տարին հավանաբար ունեցել է երեք եղանակ՝ կապված խաղողի էտման, խաղողուտի և խաղողի հավաքման ծեսերի հետ: Ձմեռը՝ որպես երկրագործական եղանակ, Վանի թագավորությունում, ըստ երևույթին, բացակայում էր և այն հավանաբար միջանկյալ եղանակ էր աշնանից գարուն անցման միջև՝ խորհրդանշելով երկրագործական տարվա և ընդհանրապես բնության մահը: Ուրարտուի դիցաբանի գերագույն եռյակի (Խալդի, Թեյշեբա, Շիվինի) հաջորդականությունը կարելի է համադրել համապատասխանաբար տարվա երեք եղանակների (ամառ, աշուն, գարուն) փուլերի հաջորդականությանը՝ դրանք զուգորդելով դյումեզիլյան հնդեվրոպական եռամաս գաղափարախոսության գործառույթների հետ (1.գերագույն իշխանություն՝ իր հմայական և իրավական առումներով, 2. ֆիզիկական ուժ՝ հատկապես ռազմական բնույթի, 3.պտղաբերություն՝ իր էրոտիկ և երկրագործական դրսևորումներով)[1]:

Հայկական ավանդության մեջ ժամանակը (Ժուկ-ժամանակ) անձնավորվում էր սարի վրա նստած ալեհեր ծերունու տեսքով, ում ձեռքերից գլորվող սև և սպիտակ կծիկները խորհրդանշում էին ժամանակի սկիզբը: Ժուկ-ժամսնակին կարող է համապատասխանել շումերաաքադական Էնկի-Էա-Հայա աստվածը, ով համարվում էր ցորենի, իմաստության ստեղծող, աստվածային օրենքների պահապան: Վերջինս համադրվում է «Իմաստուն ծերունու» նախատիպին: Ընդհանրապես ժամանակի սկիզբը մարմնավորող կերպարները հաճախ հանդիպում են ալեհեր ծերունու տեսքով: Հայայի ուսերից սկիզբ առնող Տիգրիս և Եփրատ գետերը (նրա ոտքերի միջնամասում նստած էր ցուլը) համադրելի են Ժուկ-ժամանակի սև և սպիտակ թելերի

հետ. որոնք համեմատելի են հայոց վիպաբանական տոհմածառի նախաամպրոպային կեյուպարի և նրանից ծնված երկվորյակների հետ՝ իրենց արական և իգական. դրական և բացասական կողմերով[2]: Վերը նշվածը համադրելի է նաև արևմտասեմական գերագույն Էլ աստծու՝ երկու օվկիանոսների և նրա կացարանի սյուժեի հետ: Էլ-Իլուն ևս երբեմն պատկերվում էր իմաստուն ծերունու տեսքով և կրում էր նաև «տարիների ծերուկ» և «տարիների հայր» տիտղոսները: Այս մոդելին համապատասխանում են Զրվան (Ժամանակ) - Ահուրամազդա - Ահրիման. Թեշուբ - Շերի – Խուռի (արևածագ և արևամուտ) նման կերպարները: Կարծում ենք. որ նախաամպրոպային աստծո կերպարին համապատասխանում է Հայկ նահապետի հայր Թորգոմը: Ժուկ-ժամանակի սև և սպիտակ թելերը կարող էին առնչվել տիեզերածին թելի հետ, որի միջոցով գործվել-արարվել էր աշխարհը: Առասպելաբանության մեջ ժամանակի սկզբնավորումը երբեմն առնչացվում է առաջին հյուսն՝ տիեզերաստեղծ սարդի հետ: Կարծիք կա, որ սարդ (տարի) հասկացությունը ևս կապված է եղել սարդի հետ: Հնդեվրոպական լեզուներում «հյուսել, գործել, արարել, սարքել» բառերի արմատներից մեկը *tek`s- ն է, որն առնչվում է ուրարտական ամպրոպային Թեշուբ - Թեյշեբայի անվան ստուգաբանության հետ, ով հաճախ պատկերվում էր ցուլի վրա կանգնած:

Նա ևս կարող էր նույնացվել ժամանակը սկզբնավորող իր՝ նախաամպրոպային, ցուլ-պապի կերպարի հետ[3]: Վերջինիս կերպարից սերված երկվորյակների միջև պայքարում հաղթում էր արական սկզբնավորումը խորհրդանշող լուսավոր միթրայական հերոսը՝ հիմք դնելով տիեզերական նոր ժամանակին, ինչը ուղեկցվում էր սրբազան ամուսնությամբ և դառնում տոն: Մեր կարծիքով այս գործողությունները տեղի էին ունենում ամռանը: Օրինակ Ահուրամազդան իր երկվորյակ եղբորը հաղթեց ամռանը: Հայկական իրականության մեջ այդպիսի ամառային տոն Նավասարդն էր՝ հայոց նոր տարին՝ ծոնված Արամազդ - Անահիտ (երբեմն Աստղիկ) զույգին: Նրանց է համապատասխանում Խալդի – Ուարուբանի զույգը, որոնց սրբազան ամուսնությունն էլ սկիզբ էր դնելու նոր տարվան: Օգոստոս ամսին է տեղի ունենում նաև խաղողօրհնեքի տոնը: Ուրարտացիները խաղողի հասնելու ժամանակ զոհ էին մատուցում Խալդի – Ուարուբանի զույգին: Խալդի անվան ստուգաբանություններից մեկը կապվում է ուրարտ. haluli – խաղող

բառի հետ. Խալդիի առասպելաբանական զուգահեռ Միթրան ծնվում էր խաղողի ողկույզի ծեռքին. Այստեղ Խալդին համադրելի է նաև նայիրական Սոսյակայի (ևս խաղողի ողկույզով) հետ: Նրանց, ինչպես նաև Խալդիի սիմվոլներից էր առյուծը, որի համաստեղությունը համապատասխանում է հուլիս – օգոստոս ամիսներին: Խալդին իր մեջ կրում էր Նոամսս գաղափարախոսության բոլոր երեք գործառույթները, և հատկապես առաջինը: Ինչպես Ահուրամազդան, Հայկը (*poti), Խալդին ևս տեր էր (euri): Նա նաև կրակի աստված էր. Բաբելոնում հուլիս – օգոստոս ամիսը՝ իր առյուծի կենդանակերպով, կոչվել է Կրակի ամիս: Խալդիի առաջին գործառույթին է համապատասխանում զրադաշտական երեք անմար կրակներից բարձրագույնը՝ Քրմական կրակը: Խալդին նաև հացահատիկի, գինեգործության աստված էր: Պատկերագրության մեջ Խալդին և Թեյշեբան երբեմն պատկերվում են համապատասխանաբար առյուծի և ցլի վրա՝ մի ծեռքին գինու գավաթ, մյուսին՝ հացահատիկի հասկ (իհարկե, կան և հնարավոր են նաև այլ մեկնաբանություններ): Հետաքրքիր է, որ Սանասարը, վիշապի դեմ կռվելիս, օգնության է կանչում «հացն ու գինին»: Որպես հացահատիկի աստված Խալդին խորհրդանշում էր տիեզերածին ցորենի ժամանակային աճն ու շարունակականությունը: Այստեղ նրա հետ համադրելի է միջագետքյան ցորենի աստված Դագանը, ով ամուսնանում է Շալու (տարի) աստվածուհու հետ, ինչը մեր կարծիքով ևս կապված էր սրբազան ամուսնության հետ: Նախասարդը սկզբնավորող Հայկ նահապետը նույնպես առնչվել է ցորենի հետ: Խալդին, ինչպես սկանդինավյան Օդինը, հավանաբար եղել է նաև Մոգ - աստված: Նրա անունը փորձել են ստուգաբանել «կախարդ» բառի հետ: Խալդիի անվան հետ կարող է առնչվել խեթական տեքստերում հանդիպող ^{LU}HAL (մարգարե) տիտղոսը: Մոգերը հաճախ անհետանում էին տիեզերական թեյի միջոցով: Խալդին նաև արքայական իշխանության հովանավորն էր: Նրա սիմվոլներից էր գեղարդը: Ըստ մի խեթական ծեսի՝ թագավորն ու թագուհին տաճարում խոնարհվում էին գեղարդի առջև: Խեթական արքայատան պաշտամունքային կենդանին առյուծն էր, որը նաև Խալդիի սիմվոլն էր[4]:

Ամառը խորհրդանշող Խալդիին պետք է հաջորդեր Թեյշեբան՝ խորհրդանշելով աշնան սկիզբը: Դա հավանաբար պետք է ուղեկցվեր վիշապի դեմ մարտով, սրբազան ամուսնությամբ և տարվա հաջորդ

փուլի ծնունդը խորհրդանշող ստնով: Թեյշեբան պատերազմի, կայծակի, քամու, պտղաբերության (պտղաբերություն կայծակի միջոցով) աստվածն էր: Միհիայում կայծակի գալը խորհրդանշում էր աշնանային նոր տարին: Նրա սիմվոլը ցուլն էր, որը կապված էր հողի հերկերու, այն է՝ աշնանացանի հետ. Նա նաև ցորենի աստված էր: Թեյշեբային են համապատասխանում Արամ նահապետը և Վահագնը: Սահմի ամսին (հոկտեմբեր-նոյեմբեր) տեղի էր ունենում տոն՝ նվիրված Վահագնին, որը ևս կարող էր համապատասխանել աշնանային նոր տարուն: Նույն ժամանակ զրադաշտական Իրանում նշվում էր կրակի տոնը: Թեյշեբային է համապատասխանում զրադաշտական երկրորդ՝ ռազմի անմար կրակը: Նա նաև կապված էր խաղողի հետ: Հունաստանում կար խաղողի հավաքման տոն՝ ի պատիվ Թեյշեբայի առասպելաբանական զուգահեռներից մեկի՝ Թեսևսի: Ինչպես արդեն նշել ենք՝ նրա անվան ստուգաբանություններից մեկը կապված է «արարելու, մանելու» հետ և Թեյշեբան ևս առնչվում էր տիեզերածին թելի հետ, որը նաև «քամի» էր[5]:

Թեյշեբային պետք է հաջորդեր Արևի աստված Շիվինիի (հայկական Արա Գեղեցիկ – Վահագն) ծնունդը (դեկտեմբերի վերջ), երբ տարին մեռնում էր, և իշխանությունը անցնում էր չար ուժերին: Արևի աստվածը, ինչպես Վահագնը, ցուրտ ձմռանը ուղևորվում էր անդրաշխարհ՝ վիշապին հաղթելու, նրանից տիեզերական կարգը խորհրդանշող սրբազան սերմը (*rta) խլելու, որպեսզի կրկին հարություն տար տարուն: Այս գործողությանը պետք է հաջորդեր սրբազան ամուսնությունը և տոնը՝ խորհրդանշելով տարվա գարնանային ծնունդը (գարնանահավասարի օր)[6]: Սրան է համապատասխանում ուրարտական Արևի աստծո (նրա տոնին էտում էին խաղողը) և հայոց Արեգ ամիսները: Արևի աստվածն ինքնին կրակ էր և հավանաբար նրան էր համապատասխանում զրադաշտական երրորդ՝ սրբազան Միհր (արև) կրակը՝ նվիրված հովիվներին և երկրագործներին: Արևով էր կապված տիեզերական թելը: Արևի աստծո հարությունն առնչվում էր նաև ցորենի հարության հետ: Գառան անվան ստուգաբանությունը որոշ լեզուներում կապված է հացահատիկի տարբեր տեսակների հետ: Ցուլը ևս առնչվում էր գարնան և արևի պաշտամունքի հետ[7]: Հավանաբար Արև աստծուց ծնված նախաամպրոպային կերպարի հերոսից սերված երկվորյակների (նման Արտավազդի և Փոքր Մհերի կերպարներին)

քախումից էլ պետք է կործանվեր աշխարհը՝ տարին: Տարին ավարտվում էր նաև վերջին հերոսի անպտղության պատճառով (Փոքր Մհեր): Փոքր Մհերը ժայռից դուրս էր գալիս ամեն տարի: Նավասարդ ամսվա նախօրեին դարբինները ամրացնում էին Արտավազդի շղթաները, որ նա չպոկի դրանք և դուրս չգա: Փոքր Մհերը ժայռից դուրս է գալու այն ժամանակ, երբ ցորենը և գարին դուրս գային իրենց չափից: Սա խորհրդանշում էր տիեզերական կարգի խախտում (*n-arto վիճակ): Աշխարհի կործանումը կապվում էր նաև տիեզերածին թելի կտրվելու հետ: Փոքր Մհեր - Արտավազդ տիպի հերոսների հակամարտությանը համապատասխանում է Լևիթան կենդանու գլխի և պոչի միացման սյուժեն, որի ժամանակ աշխարհը կկործանվի: Իրանում կար Նոր տարվա մի տոն, որը կոչվում էր Սիթրագան (Միթրայի կռիվ, Միթրայի ծեծ): Այդ տոնի ժամանակ պտուղներն էլ չէին կարող աճել, և աշխարհը կործանվում էր[8]:

Այսպիսով, Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակի հաջորդականությունը կարող էր համապատասխանել տարվա երեք եղանակների հաջորդականության հետ: Բոլոր երեք աստվածներն էլ ունեին մի շարք ընդհանրություններ՝ գինի, կրակ, ցորեն, տիեզերածին թել (տիեզերածին սուրստանցներ՝ կապված տիեզերական կարգի հետ), մենամարտ «վիշապի» հետ: Տարվա երեք եղանակները և Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը խորհրդանշում էին արարման երեք փուլերի հաջորդականության ընթացքը, որոնց մեջ իրադարձությունները պարբերաբար կրկնվում էին: Այստեղ եռաստվածությունը դիտվում էր միաստվածություն՝ եռաստվածային դրսևորումներով: Բնականաբար, լինելով պետության գերագույն աստված, Խալդին իր մեջ էր ներառել նաև մյուս երկու սատվածների գործառույթները: Նա արարիչ աստված էր, մարտիկ, արևի, պտղաբերության, մեռնող – հառնող, հավանաբար նաև անդրաշխարհի աստված: Խալդին Արև էր, իսկ Արևի պտույտը համարվում էր մեկ տարի: Սրան համադրելի է այն, որ Խալդին երբեմն պատկերվում էր պատանու, հասուն տղամարդու և ծերունու տեսքով, ինչը մեր կարծիքով կարող էր առնչվել նրա՝ տարվա երեք եղանակների հաջորդականության աճի եռաստվածային բնույթի հետ[9]:

MIQAYEL BADALYAN
(EHAMR)
THE YEAR AND THE SUPREME TRIAD OF URARTIAN PANTHEON

We think. that the sequance of the supreme trinity of the Urartian pantheon may be equal to the three seasons of a year (summer, autumn, spring). Winter is not regarded as a season. The Sun God. born in the beginning of winter. went to the neatherworld. defeated the dragon, brought back the universal seed and the year was reborn. sybolyzing the beginning of the spring.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմայակյան Ս., Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի խոամասնության մասին պատկերացումն Ուրարտուում, Եր., 1986, ՊԲՀ (1), էջ 130-132; Պետրոսյան Ա, Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006, էջ 5; Дюмезиль Ж., Верховные боги индоевропейцев, М, 1986, с. 29, 111.
2. Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997, էջ 33; Դալալյան Տ., «Վիպասանք» էպոսի առաջին «ճյուղը» և ամպրոպային դյուցազնատոհմի ծագումը (Շնորհ ի վերուստ. Առասպել, ծես և պատմություն), Եր., 2008, էջ 43-44:
3. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 443-444; Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Եր., 1997, էջ 53; Бойс М., Зороастрийцы: верования и обычаи. М., 1987, с. 84; Փիլիպոսյան Ա., Քամալյան Հ., Շումերա-աքքադական տիեզերաստեղծ Էնկի-Հայա աստծո և Հայոց ազգածին Հայկ նահապետի համադրության փորձ (ՀԺՄ IX, զեկույցների հիմնադրույթներ), Եր., 1997. էջ 67-68; Մովսիսյան Ա., Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Եր., 2000, էջ 37-38; www.gumer/ Элиаде М., Нити и марионетки; Բրուտյան Գ., Օրացույց հայոց, Էջմիածին, 1997, էջ 228; Топоров В., Паук, МНМ. том II, М., 1992, с. 295; Պետրոսյան Ա., Արամազդ, Եր., 2006, էջ 20-21; Diakonoff I., Evidence on the Ethnic Division of the Hurrians. Studies on Civilization and Culture oh the Hurrians. In Honor of E.R. Lacheman. Winona Lake, Indiana, 1981, p. 81-87. Шифман И., Культура древнего Угарита, М., 1987, с. 85.
4. Պետրոսյան Ա., Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ, Եր., 2006, ՊԲՀ (2), էջ 263-279; Герни О., Хетты, М., 1987, с. 138; Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 170-172; Փիլիպոսյան Ա., Քամալյան Հ., նշվ. աշխ., էջ 68; Петросян А., Армянский Мгер, западный Митра и урартский Халди (Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը), Եր., 2004, էջ 44-45; Есаян С., Искусство портретного изображения Урарту, Եր., 1982, ՊԲՀ (3), с. 177, рис. 2, с. 179. рис. 1; Бойс М., նշվ. աշխ., էջ 43, 45, 149-150; Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 508; Պետրոսյան Ա., Արամազդ. էջ 8, 55. www.gumer/ Элиаде М., Нитн...; Кальмейер П., Символ Халди.

Древний Восток. 3, Ер., 1983, с. 179-183: Պետրոսյան Ա., Հայկական հնագույն ... էջ 29. Իսրայելյան Հ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշբրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 61: Чернышева А., О некоторых терминах, обозначающих персонал Хеттского храма. Древняя Анатолия. М., 1985, с. 204-205; Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 34

5. Бойс М., նշվ. աշխ., էջ 90; Шифман И., նշվ. աշխ., էջ 86; Вардумян Г., Дохристианские культы армян (Հայ ազգագրություն և բանահյուսություն. 18), Ер., 1991, с. 116

6. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Եր., 1979, էջ 95-96; Бойс М., նշվ. աշխ., էջ 90. Дюмезиль Ж., նշվ. աշխ., էջ 72:

7. Հմայակյան Ս., նշվ. աշխ., էջ 130-132; Иванов В., Индоевропейские названия года. Календарно-хронологическая культура и проблема ее изучения, М., 2006, с. 64-70.

8. Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 14, 445-448, 456; www.gumer/ Элиаде М., Миф о вечном возвращении.

9. Grekyan Y., The will of Menua and the gods of Urartu. AJNES (I), Yerevan. 2006. p 157; Հմայակյան Ս., նշվ. աշխ., էջ 36:

ԲԱՋԻՆՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
(ԵՊՀ)

ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄՈՒԹԱՆԱԲԲԻԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Միշտ չէ, որ քամիները փչում են այնպես,
ինչպես ցանկանում են նավերը
ալ-Մութանաբբի

Արաբական խալիֆայության ստեղծումն ուղեկցվում էր նոր տարածքների գրավմամբ: Արաբների կողմից նվաճված տարածքներում իսլամի տարածումն այդ տարածքների բնակչության համար հիմք էր ստեղծում խալիֆայության կառավարման համակարգում ներգրավվելու համար: Ժամանակի ընթացքում նրանք սկսում են մեծ դեր խաղալ խալիֆայության կյանքում: Արաբական տարրը խալիֆայության կառավարման համակարգում գնալով մղվում էր երկրորդական պլան: Այս իրավիճակը հատկապես սուր բնույթ է ընդունում Աբբասյանների օրոք[1]:

Ստեղծված իրավիճակում, երբ խալիֆայության ապագան մշուշոտ էր, հայտնվեց մի մարդ, որն անուղղակի կերպով առաջարկեց խալիֆայության հզորության վերականգնման իր տեսությունը: Դա Աբու Տայյիբ բին ալ-Հուսեյն ալ-Ջաուֆին էր, նույն ինքը՝ պոետ ալ-Մութանաբբին:

Հասկանալ Մութանաբբիի առաջարկած գաղափարները առանց ծանոթ լինելու նրա կենսագրությանը անհնար է[2]: Մութանաբբիի աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր ունեցավ այն միջավայրը, որտեղ նա ապրեց կյանքի վաղ տարիները: Խոսքը Քուֆա քաղաքի մասին է: Այս ժամանակաշրջանում խալիֆայության քաղաքներն էթնիկական առումով նման էին խայտաբղետ կտավի: Իսկ Քուֆան արաբական քաղաքների մեջ առանձնանում էր էթնիկական համեմատաբար միատարրությամբ և պահպանողական հայացքներով:

Հետաքրքրական է, որ քաղաքի թաղամասերը կրում էին արաբական ցեղերի անվանումները. Քուֆայի արաբ բնակչության շրջանում դեռևս վառ էր ցեղային ինքնագիտակցությունը: Մութանաբբիի աշխարհայացքի ձևավորման մեջ իր հետքը թողեց նաև այն ժամանակահատվածը, որը նա անցկացրեց բեդվինների հետ: Չնայած, որ նա որաշակի հիասթափություն ապրեց, երբ գիտակցեց, որ բեդվինները ինչ-որ չափով հեռացել էին իրենց արմատներից:

Մութանաբբին ուներ հստակ քաղաքական դիրքորոշում: Նա Աբբասյաններին էր համարում խալիֆայության անկման պատասխանատուներ: Անգամ նրանց մասին ասել է.

«Ճիշտ չէ, որ Աբասը՝ ժառանգներ ունի, քանզի մայրը կապիկ չի ծնում»[4]:

Հայտնվելով Հալեպի էմիր Սայֆ ադ-Դաուլայի (944-967)[5] արքունիքում Մութանաբբին վերջնականապես ձևավորեց իր տեսությունը: Ըստ նրա արաբական խալիֆայության հզորությունը կարող է վերականգնել միայն այն ղեկավարը, որն ունի մաքուր արաբական ծագում: Նա գտնում էր, որ ժողովրդի հզորությունը նրա ղեկավարի մեջ է[7]: Մութանաբբիի տեսությունը հենվում էր երկու հիմնասյուների վրա. արաբական էթնոսի և իսլամի: Նրա գաղափարների հիմքում ընկած էր արաբա-մուսուլմանական գերիշխանության մոդելը: Նա գտնում էր, որ միայն Հալեպի էմիր Սայֆ ադ-Դաուլան կարող է իրագործել իր գաղափարները: Իրականում Սայֆ ադ-Դաուլան Մութանաբբիի տեսության մեջ հանդես է գալիս որպես իդեալական արաբ ղեկավարի հավաքական կերպար: Կարելի է միայն ենթադրել, թե ինչպես էր Մութանաբբին պատկերացնում գործնականում իր տեսության իրականացումը, քանի որ նա չի նշում դրա իրագործման ուղիները: Մութանաբբիի տեսությունը մոտ էր իդեալականին, բայց, ցավոք սրտի, բավականին հեռու իրագործելի դառնալուց: Հաջորդիվ կբերվեն մի շարք փաստարկներ, որոնցով փորձ կարվի հիմնավորել այս կարծիքը:

Նախ պետք է ընդունել, որ այդ ժամանակաշրջանում արաբները խալիֆայությունում էթնիկ փոքրամասնություն էին կազմում: Ոչ արաբ, բայց մուսուլման պաշտոնյաների թիվը բավականին մեծ էր: Բնական է, որ նրանք ինքնակամ չէին հրաժարվի իրենց պաշտոններից, իսկ բռնի ուժով նրանց ստիպել կնշանակեր երկրում սկսել քաղաքացիական պատերազմ: Սա բավականին արկածախնդիր նախաձեռնություն

կլիներ, ինչը նախ և առաջ Սայֆ ադ-Դաուլայից կպահանջեր իսկայական ֆինանսական միջոցներ, որպիսիք նրա տրամադրության տակ չկային: Իսկ, եթե փորձ արվեր դրանք ստանալ հարկերի ավելացման միջոցով, առավել հավանական է, որ բնակչությունը նրա դեմ կտրամադրվեր: Չպետք է մոռանալ, որ նմանատիպ «ներքին հեղափոխությունների» իրականացնելու համար անհրաժեշտ է համապատասխան հոգեբանական մթնոլորտ, որը, ցավոք սրտի, բացակայում էր խալիֆայությունում: Անգամ, եթե Սայֆ ադ-Դաուլային հաջողվեր հասնել խալիֆայությունում արաբական գերիշխանության հաստատմանը, միևնույն է, նրա դեմ երկար ժամանակ կշարունակվեր ընդդիմադիր շարժում, որն, անկասկած, երկրում անկայուն իրավիճակ կստեղծեր, ինչն էլ իր հերթին կարագացներ խալիֆայության փլուզման գործընթացը: Նույնիսկ, եթե որոշակի ժամանակահատվածով հաջողվեր կայունացնել քաղաքական իրավիճակը, միևնույն է բռնի ուժով ստեղծված, էթնիկական բազմազանությամբ աչքի ընկնող պետությունը, ինչպիսին հանդիսանում էր խալիֆայությունը, դատապարտված էր կործանման: Նմանատիպ օրինակները պատմության մեջ շատ են:

Ինչ վերաբերում է իսլամին, ապա այս պարագայում այն չէր կարող լինել միավորող գործոն: Իսլամը իր ստեղծման առաջին իսկ օրվանից երբեք միասնական կրոն չի եղել: Եթե նույնիսկ վերցնենք միայն շիաներին և սուննիներին, ապա կտեսնենք, որ նրանց մեջ անհաղթահարելի, արմատական գաղափարական տարաձայնություններ կան: Հաշվի առնելով այդ տարաձայնությունները անհնար է պատկերացնել նրանց միավորումը: Սակայն մի պահ փորձենք անտեսել իրականությունը և տեսականորեն պատկերացնենք, որ շիաները և սուննիները միավորվում են միասնական գաղափարների շուրջ: Այս միավորումը հնարավոր է երկու ճանապարհով: Առաջինը սուննիները ընդունում են շիաների առավելությունը, կամ ընդհակառակը: Երկրորդ հնարավոր տարբերակը իսլամում բոլոր մուսուլմաններին միավորող մի նոր ուղղության ստեղծումն է: Հաշվի առնելով շիիզմի և սուննիզմի գաղափարական հիմքերը և անցած պատմական ուղին այս երկու տարբերակներն էլ գրեթե անհնարին են:

Դուցե Մութանաբբին ինքն էլ գիտակցում էր իր «տեսության» անիրագործելի լինելը: Նրա արտահայտած որոշ մտքերից կարելի է

անմնատիպ ենթադրություններ անել: Օրինակ իր բանաստեղծություններից մեկում իրեն համեմատում է Կուրանում հիշատակվող առասպելական Սալեհ մարգարեի հետ[6]

Ինչպես տեսանք. Մութանաբբին առաջարկեց խալիֆայության հզորությունը վերականգնել՝ հենվելով արաբական էթնոսի և իսլամի վրա: Բայց բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով նրա տեսությունը գործնական կիրառություն չէր կարող ունենալ

MARIETA BAZINYAN

(YSU)

THE THEORY OF AL- MUTANABBI FOR RESTORING THE POWER OF THE CALIPHAT

The main goal of this article is to discover the principles of the supplied theory from the poet al- Mutanahbi for getting out from the chaotic state of the Caliphate, which appeared after Abhasids. al-Mutanahhi. who had an absolute arabic origin. was regretted seeing the chaotic state in the Caliphate in which he was evolved because of the governors not belonging to the arabic origin. His theory was close to the perfect, but unfortunately far from being realized.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Hitti Ph., A History of the Arabs London, 1946. p 301-306
2. Фильштинский И. М., История арабской литературы X-XVIII века, М., 1991, с. 26-86
3. Աբու ալ-Աբաս՝ Աբբասյանների դինաստիայի հիմնադիր:
4. Киктев М. С., Абу-т-Тайиб ал-Мутанабби (915-965) в средневековых арабских источниках. Литература Востока. М 1965, с. 40-53.
5. Hitti Ph, նշվ. աշխ., էջ 457:
6. Կուրան 7/71-77:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐ

(ԱԻ)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ (ԻՀՊԿ) ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1979 թվականի փետրվարին Իրանում տեղի ունեցած Իսլամական հեղափոխության հաղթանակի արդյունքում Իրանը դարձավ Իսլամական հանրապետություն: Միապետության տապալումից անմիջապես հետո տարրեր սոցիալական շերտեր ներկայացնող ղեկավար կենտրոնների միջև առաջացան գաղտնի կամ ակնհայտ հակամարտություններ: «Հեղափոխական կոմիտեները», «հեղափոխական տրիբունալները», փասդարների (պահապանների) խմբավորումները չէին ենթարկվում ժամանակավոր կառավարությանը, անտեսում էին նրա կարգադրությունները և նույնիսկ խառնվում էին նրա գործունեությանը[1]: Փաստորեն երկրում սկիզբ էր առել մի իրավիճակ, որի անտեսումը կարող էր հանգեցնել անկառավարելիության, որն էլ իր հերթին կբերեր հեղափոխության նպատակների ոչ ամբողջական իրականացման և ծրագրերի տապալման: Իմամ Խոմեյնին և նրա ղեկավարած իսլամական հեղափոխությունը հաղթանակեց հիմնականում իրանական ժողովրդի անձնազոհության շնորհիվ: Հեռանկարում համապատասխան ուժերի ստեղծումն էր, որոնց կարելի էր վստահել ձեռք բերված հաղթանակի պահպանումը: Առաջնային էր դառնում զինված ուժերի վերաձևավորման հարցը, որն անհրաժեշտ էր նոր հանրապետության հետագա զարգացման և կայունության համար: Իհարկե կար Իրանի զինված ուժերի համակարգը, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ բանակը Մոհամմադ Ռեզա շահի օրոք համարվում էր նրա հիմնական հենարանն ու պաշտպանը նոր սկիզբ առնող հեղափոխական շարժման դեմ, ինչպես նաև օգտվում էր գանձարանի հնարավորություններից: 1970-ական թվականների կեսերին երկրի զինված ուժերի նորագույն զինատեսակներով ու

զինտեխնիկայով սպառազինումը կլանում էր 5-6 մլրդ դոլար, որը աննախադեպ էր ժամանակի որևէ այլ երկրի զարգացման բնագավառում[2]: Անհրաժեշտ էր ստեղծել մեկ այլ ուժային կառույց, որն անվերապահորեն կծառայեր նոր վարչակարգին և անձնուրաց կերպով նվիրված կլիներ Իսլամական հանրապետությանն ու նրա գաղափարախոսությանը:

1979 թվականի մայիսին Իմամ Խոմեյնիի հանձնարարությամբ ստեղծվեց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս (ԻՀՊԿ), որին նախապես անդամակցեցին 10 հազար կամավորներ[3]: ԻՀՊԿ-ի կորիզը կազմեցին Իսլամական կոմիտեների զինված խմբավորումները, որոնց անվանում էին փասդար (պահապան), ինչպես նաև «Քասիջ» աշխարհազորի զորամասերը[4]: Հոգևորականության կողմն անցած բանակի հրամանատարական անձնակազմը անհանգստությամբ ընդունեց ԻՀՊԿ-ի ստեղծման փաստը[5], ընկալելով այն որպես իրենց նկատմամբ անվստահության դրսևորում, սակայն չկարողացավ ինչ-որ կերպ հակազդել: Նրանց հավաստիացրեցին, որ ԻՀՊԿ-ն չի խառնվի բանակի գործերին, քանի որ իրենց խնդիրները տարբեր բնույթի են. բանակը պետք է զբաղվի երկրի պետական սահմանների և տարածքային ամբողջականության պաշտպանությամբ, իսկ ԻՀՊԿ-ն՝ «հաստատուն կերպով կպաշտպանի իսլամական հեղափոխությունը թշնամիներից»[6]: Խոմեյնին էլ իր հերթին պահապանների կորպուսին արգելեց մասնակցել քաղաքական գործընթացներին[7], սակայն ժամանակի ընթացքում այդ անջրպետը թուլացավ և ԻՀՊԿ-ի ռազմական և տնտեսական զարգացումը նրան թույլ տվեց քաղաքական ազդեցության որոշակի լծակներ ձեռք բերել:

Ի դեմս Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի, իշխող հոգևորականությունն ունեցավ բանակից անկախ մի ուժ, որին կարելի էր վստահել՝ նորաստեղծ հանրապետության ներքին կայունությանն ու իսլամական գաղափարների զարգացմանն ու տարածմանը վտանգ սպառնալու դեպքում:

Համաձայն 1982թ. մայիսին հաստատված ԻՀՊԿ-ի կանոնադրության, նրա բարձրագույն հրամանատար էր հանդիսանում երկրի հոգևոր առաջնորդը[8]: Այնտեղ մասնավորապես նշված է, որ ԻՀՊԿ-ն նախատեսված է.

- Իրանում իսլամական հեղափոխության և նրա նվաճումների պաշտպանության
- Իրանի իսլամական հանրապետության սահմանայլյության շրջանակներում իսլամի իշխանության տարածման.
- Իսլամական գաղափարների իրականացման մշտական աջակցության
- Բանակի հետ համագործակցության միջոցով ԻԻՀ-ի պաշտպանության ներուժի հզորացման.
- «Բասիջ» աշխարհազորի կազմավորման և պատրաստման համար:

Ինչպես նաև կատարում է այնպիսի գործառույթներ. ինչպես տարերային աղետների ժամանակ փրկարարական աշխատանքների իրականացում, իրավապահ մարմիններին օգնության ցուցաբերում՝ պետական կառույցների և կրոնական ու քաղաքական գործիչների պաշտպանության դեպքում[9]:

Իրանի իսլամական հանրապետությունը դեռևս ամբողջովին չէր հաղթահարել հետհեղափոխական ճգնաժամը, երբ 1980թ. սեպտեմբերին սկսվեց Իրան-Իրաքյան պատերազմը: Ութամյա պատերազմն ակամայից փորձադաշտ դարձավ նորաստեղծ ԻՀՊԿ-ի համար: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը պատերազմի ընթացքում առավել ծանրակշիռ և նվիրված ուժն էր հոգևոր առաջնորդի համար: Կորպուսի հրամանատարությունը արագորեն աճող զորամիավորումներին, որոնք անվերջ համալրվում էին գաղափարապես պատրաստված մարտիկներով, անխնա կերպով ուղարկում էր ամենաթեժ կետերը: Հենց դա էլ կորպուսի պահապաններին դարձրեց հերոսներ և բարձրացրեց նրանց հեղինակությունը Իրանի հասարակության շրջանում: Իրան-Իրաքյան պատերազմի տարիներին ԻՀՊԿ-ն վերածվեց «իսկական» բանակի, որի կազմում հետագայում ընդգրկվեցին նաև երկրի ռազմաօդային ուժերը և նավատորմը[10]: Փաստորեն ԻՀՊԿ-ն արդարացրեց իր նշանակությունը: Հետագա 10 տարիների ընթացքում կորպուսի անձնակազմի թվաքանակը աճեց ավելի քան 50 անգամ և 90-ական թվականներին հասավ մոտ կես միլիոնի[11]:

Ներկայումս Իսլամական հեղավոխության պահապանների կորպուսը Իրանի իսլամական հանրապետության զինված ուժերի համակարգում զբաղեցնում է իր հաստատուն և անփոխարինելի տեղը:

ԻՀՊԿ-ի ներկա կառուցվածքն իր մեջ ներառում է ցամաքային զորքեր. ռազմաօդային և ռազմածովային ուժեր[12]: Հատկանշական մի փաստ. չնայած ԻՀՊԿ-ն համարվում է ԻԻՀ զինված ուժերի բաղկացուցիչ մաս. սակայն այնտեղ զինծառայողների հավաքագրումը կատարվում է ոչ թե պարտադիր զինապարտության օրենքի համաձայն, այլ կամավոր սկզբունքներով: Այդ կամավորականները հիմնականում «Բասիջ» աշխարհազորի ներկայացուցիչներ են, որոնք փաստացի գտնվում են ԻՀՊԿ-ի ղեկավարության տակ և բաժանվում են երեք խմբի՝ շարքային անդամներ, որոնք անցել են պարտադիր վերապատրաստման ծրագիր, ակտիվ անդամներ. որոնք շարունակում են ծառայությունը համապատասխան ծրագրով, և հատուկ մարտիկներ, որոնք հաշվառված են ԻՀՊԿ-ի պահեստազորում և մշտական կապի մեջ են գտնվում վերջինիս հետ՝ ստանալով ԻՀՊԿ-ի ծառայակցի վկայական[13]: Ստացվում է, որ ԻՀՊԿ-ի հրամանատարական կազմը սկզբում կամավորներից ընտրում, վերապատրաստում և կազմավորում է «Բասիջ» աշխարհազորը, իսկ հետո արդեն ընտրյալ կամավորներից լավագույններին անդամագրում է իր շարքերը: Արդյունքում ստեղծվում է մի ուժ, որը պատրաստ է աներկբա անձնազոհության՝ հանուն իսլամական պետության ներքին անվտանգության պահպանման: Իրանի իսլամական հանրապետության 30 մարզերն իրենց հերթին բաժանված են ԻՀՊԿ-ի 16 շրջանների[14]՝ այսպիսով ԻՀՊԿ-ին հնարավորություն տալով իր հսկողության տակ պահել ամբողջ երկրի տարածքը:

Իր գոյության 30 տարիների ընթացքում Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը վերածվել է մի հզոր կազմակերպության, որն ամբողջությամբ ենթարկվում է ներկայիս հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյին, և հաշվի առնելով Իրանում նրա գործունեության ծավալներն ու հնարավորությունները, կարելի է փաստել, որ ԻՀՊԿ-ն հիրավի հանդիսանում է Իսլամական հեղափոխության կարևոր ձեռքբերումներից մեկը:

MHER BAGHDASARYAN
(IOS)

THE CREATION OF THE ISLAMIC REVOLUTION GUARDS CORPS: ITS ROLE IN THE SYSTEM OF MILITARY FORCES OF IRAN

After Islamic revolution on May 1979 on the instructions of imam Khomeini has been organized the military body of the Islamic revolution guards corps in which authority ruling clergy gave the independent power apart from army. For 30 years of the existence the Islamic revolution guards corps it was transformed to the influential organization which entirely submits to spiritual leader Ali Hamenei and providing external and internal safety of the country.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Иранская революция 1978-1979, М., "Наука". Шестаков А. П. : Создание духовенством Корпуса стражей исламской революции как инструмента борьбы за безраздельное политическое господство, с. 163.
2. Բայբուրդյան Վ., «Իրանի Պատմություն», Եր., 2005, էջ 691:
3. Բայբուրդյան Վ., «Իրանն Այսօր», Եր., 1999, էջ 95:
4. Зарубежное военное овозрение N12, 1984, О. Чернета http://hist-battle.chat.ru/kcir.htm
5. Иранская революция 1978-1979, М., "Наука". А. П. Шестаков: Создание духовенством Корпуса стражей исламской революции как инструмента борьбы за безраздельное политическое господство, с. 165.
6. Նույն տեղում:
7. Журнал "Власть", N5 (808), Тридцать лет на страже. http://www.kommersant.ru/doc.aspx?DocsID=1112450&print=true
8. Зарубежное военное обозрение N12, 1984, Чернета О., http://hist-battle.chat.ru/kcir.htm
9. Главнокомандующий Корпуса стражей исламской революции Ирана о пересмотре роли корпуса. 20.05.2008.http://farsiiran.narod.ru/news/KSIRroul.htm
10. Журнал "Власть", N5 (808), Тридцать лет на страже. http://www.kommersant.ru/doc.aspx?DocsID=1112450&print=true
11. Բայբուրդյան Վ., նույն տեղում, էջ 95:
12. Նույն տեղում:
13. http://ru.wikipedia.org/wiki/Стражи_Исламской_Революции Военная и идеологическая подготовка в КСИР
14. http://ru.wikipedia.org/wiki/Стражи_Исламской_Революции Территориальная деятельность КСИР.

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ
(ԱԻ)
ԱՐԱԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (1908-1909 ԹԹ.)

1908թ. Ստամբուլ ժամանումից անմիջապես հետո արաբ պատգամավորները ձեռնամուխ եղան «արաբական ակումբի» կամ «արաբական դաշինքի» ստեղծմանը, որի գոյության մասին վկայում են մի շարք հետազոտողներ, ինչպես նաև Կ.Պոլսի ռուսական դեսպանատան դիվանագիտական գաղտնի խորհրդական Զինովևի հաղորդագրությունները՝ ուղղված Ցարական Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարին:

«Արաբական դաշինքը» սկզբնական շրջանում մտադիր չէր միանալու Օսմանյան խորհրդարանում ներկայացված կուսակցություններին և խորհրդարանական խմբավորումներին, որոնք էին օրինակ «Ահրարը» և «Մահմեդական ընկերություններ»:

Թեև արաբ պատգամավորների մեծամասնությունը ընտրվել էին կամ որպես «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության ներկայացուցիչներ, կամ էլ նրա անմիջական աջակցությամբ, խորհրդարանում արաբները մեծամասամբ ընգրկված չէին իթթիհադական ֆրակցիայի մեջ[1]:

Տեղեկությունները «արաբական դաշինքի» մասին շատ հակասական են: 1909թ. հունվարի 2-ին Մուհամմադ Քուրդ Ալիի «Ալ-մուքթաբիս» թերթը հայտնում էր, որ խորհրդարանի արաբ պատգամավորների հիմնած արաբական դաշինքը ստեղծված է «Իթթիհադ վե թերաքիին» աջակցելու համար, միևնույն ժամանակ Ա. Մանդելշտամը պնդում էր, որ արաբ պատգամավորները, կայսրության ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչների հետ համատեղ խորհրդարանում քննարկվող հարցերի մեծամասնության ժամանակ ունեին հակաիթթիհադական դիրքորոշում[2]:

«Արաբական դաշինքը» իրենից ներկայացնում էր բավական տարաբնույթ խմբավորում: Խորհրդարանի պատգամավոր էին ընտրվել.

ինչպես մենիշխանության հակառակորդներ (ինչպիսին էր օրինակ Աբդ ալ-Համիդ ալ-Զահրաուին), որոնք արաբներին հուզող բոլոր հարցերի լուծումը տեսնում էին միայն օսմանյան բոլոր ժողովուրդների միասնության մեջ՝ հույսեր կապելով «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության հետ[3], այնպես էլ նախկին սուլթանական վարչակարգի պաշտոնյաներ և խոշոր հողատերեր՝ Սայիդ Թալիբ փաշան, Ահմադ փաշան, Մուստաֆա ալ-Վաիզը և այլք:

Բայց և այնպես արաբ պատգամավորների շրջանում եղած քաղաքական հայացքների տարբերությանը, ամենևին էլ չէր նշանակում, որ վերջիններս չէին փնտրում գործունեության մի ընդհանուր գիծ, որը առաջին հերթին կնպաստեր արաբների իրավունքների պաշտպանությանը:

Խորհրդարանում «Իթթիհադ վե թերաքի» կուսակցության դիրքը ավելի ամրապնդելու նպատակով, երիտթուրք ղեկավարները փորձում էին արաբներին իրենց կողմը քաշել: Երիտթուրքերի կատարած առաջարկներին արաբները վճռականորեն մերժում էին և հատկապես զայրանում էին, երբ նրանց առաջարկում էին երդում տալ, որը պահանջվում էր բոլոր նրանցից, ովքեր մտնում էին կուսակցության շարքերը:

Արաբների համառությանը վերջ դնելու համար, երիտթուրքերը դիմեցին սպառնալիքների: Սակայն արաբ պատգամավորները իրենց հերթին հայտարարեցին, որ խորհրդարանի բացումից հետո նրանք առաջ կքաշեն մի օրինագիծ, որը կնախատեսեր պատժիչ միջոցներ կիրառել երիտթուրքական կոմիտեների նկատմամբ՝ որպես անօրինական խմբավորումների, որոնք ոտնձգություն էին կատարում իշխանական կառույցների գործառույթների վրա՝ երկիրը տանելով դեպի անարխիա[4]:

Երիտթուրքերի ջանքերը՝ համաձայնության գալու արաբ պատգամավորների հետ, այդպես էլ ոչ մի իրական արդյունք չտվեցին: Արաբներից միայն երկու հոգի համաձայնվեցին համագործակցել երիտթուրքական կոմիտեի հետ[5]:

Ինչպես նշում է ռուս դիվանագետ Զինովևը, արաբների և թուրքերի միջև առկա տարաձայնություններից բացի, արաբ պատգամավորները կասկածանքով էին վերաբերվում պրոանգլիական ուղղությանը, որին հետևում էին ինչպես իշխանությունները, այդպես էլ իթթիհադականները: Արաբ պատգամավորները նման դիրքորոշումը պայմանավորում էին

նրանով, որ արաբները Անգլիայի կողմից ենթարկվել են տարատեսակ վիրավորանքների և նվաստացումների[6]: Բացի այդ արաբ պատգամավորների որոշ մասը չէր վստահում Անգլիային, որի պատճառն էր վերջինիս անթաքույց մտադրությունը՝ Բաղդադի և Բասրայի վիլայեթներում տարածելու իր իշխանությունը:

«Արաբական դաշինքը» ի հակադրություն Անգլիայի նկրտումներին, առաջ քաշեց Բաղդադի և Բասրայի վիլայեթների ձևափոխման իր ծրագիրը, որում մասնավորապես ասվում էր.

Բաղդադի և Բասրայի վիլայեթները, ինչպես նաև Նեջդի սանջակը պետք է միավորվեն մեկ նահանգի մեջ, որի ղեկավարությունը պետք է ստանձներ գեներալ-նահանգապետը: Նահանգի ղեկավարությունը պետք է կազմակերպվեր կենտրոնացման հիմունքների վրա, և գեներալ-նահանգապետին կից պետք է կազմվեր նահանգային խորհուրդ:

Կրթության տարածման համար այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր, պետք էր հիմնվեին դպրոցներ: Արաբներին պետք է թույլ տրվեր հաճախել Թուրքիայում արդեն գոյություն ունեցող ծովային ուսումնարաններ:

Որպեսզի վերջ դրվի ցեղերի միջև վեճերին, ենթադրվում էր թուրքական կառավարության թույլտվությամբ վերջիններիս հատկացվեին հողատարածքներ, այնքան, որքան որ պետք էր նրանց բոլոր պահանջները բավարարելու համար[7]:

Նման ծրագրի իրականացումը, իհարկե, կհանդիպեր բազմաթիվ խոչընդոտների, սակայն արդեն իսկ այս գաղափարի առաջ քաշումը խորհրդարանում, չնայած այն հանգամանքին, որ այն կրում էր տեղային բնույթ, այնուամենայնիվ, վկայում էր, որ արաբների մոտ հասունանում էր միավորվելու միտումը:

Առաջին փորձությունը «արաբական դաշինքի» համար եղավ խորհրդարանի մանդատային հանձնաժողովի նիստը, որտեղ բարձրացվեց պատգամավորներ՝ Սայիդ Թալիբ ալ-Նաքիբ, Ահմադ փաշա ալ-Զուհեյր[8], Շաֆիկ բեյ Մուայյադ ալ-Ազմ և Յուսուֆ բեյ Շիտվանի[9] ընտրությունների անօրինականության հարցը: Սկզբնական շրջանում արաբ պատգամավորները աշխատում էին խույս տալ այս խնդրի քննարկումից, սակայն հետագայում «Արաբական դաշինքը» միահամուռ կերպով հանդես եկավ ի պաշտպանություն իրենց հայրենակիցների, որի հետևանքով վավերացվեց բոլոր չորսի պատգամավորական մանդատները:

Օսմանյան խորհրդարանի գործունեության առաջին տարում մի շարք խնդիրների քննարկման ընթացքում «Արաբական դաշինքը» ևս չարդարացրեց երիտթուրքերի սպասելիքները: Դա առավել ակնհայտ կերպով արտահայտվեց, երբ իթթիհադականների առաջարկով անվստահություն հայտնվեց մեծ վեզիր Քամիլ փաշայի կառավարությանը: Արաբները դարձյալ գրավեցին հակաիթթիհադական դիրքորոշում, որը, սակայն, արտահայտվեց ոչ բացահայտ. քվեարկության ժամանակ արաբ պատգամավորների գերակշիռ մասը՝ մոտ քառասուն հոգի, մնաց ձեռնպահ [1]:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ «Արաբական դաշինքը» Օսմանյան խորհրդարանի գործունեության սկզբում, թեև չկարողացավ անցկացնել արաբական ազգային ձգտումներն այս կամ այն կերպով արտահայտող որևէ օրինագիծ, սակայն արաբ պատգամավորները որոշ դեպքերում ընդգծված կերպով ցույց տվեցին, որ իրենք անվերապահորեն չեն հնազանդվի «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության բոլոր պահանջների կատարմանը:

Խորհրդարանում արաբ պատգամավորների ցուցաբերած դիրքորոշումը ինթթիհադականների նկատմամբ և նրանց մոտեցումների կտրուկ տարբերությունը ու տարակարծությունը, թերևս առաջին նախադրյալներն էին, հետագայում ոչ միայն խորհրդարանի ներսում, այլև նրանից դուրս արաբների և երիտթուրքերի միջև առկա լուրջ հակասությունների ի հայտ գալուն:

ARAM GASPARYAN
(IOS)
THE ACTIVITIES OF ARAB MPs IN OTTOMAN PARLIAMENT (1908-1909)

In 1908 after the opening of Parliament the Arab MPs formed "Arab alliance". It acted separately without joining any political party or group represented in Ottoman parliament. In the alliance there were gathered the representatives of progressive as well as conservative political forces.

During the first year "Arab alliance" tried not to have conflicts with Ittihadists. Although Arab MPs haven't accepted all the demands of Young Turks. During the discussions of several problems "Arab alliance" acted as an opposition force. This fact assisted to the beginning of serious future contradictions between Arabs and Young Turks inside as well as outside of Parliament.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Թաուֆիկ Բիրուի՝ մոտ քառասուն արաբ պատգամավոր «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության անդամ էին: դոքթոր թաուֆիկ բիրու, ալ-արաբ ուա ալ-թուրք ֆի ալ-ահդ ալ-օսմանի 1908-1914, Դամասկոս, 1991, էջ 135 (արաբերեն լեզվով):
2. Котлон Л., Становление национально-осободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, с. 180.
3. Նույն տեղում:
4. Депеша дипломатического тайного сонетника Зиноньева из Костантинополя Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, h. III, համար 281, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
5. Депеша дипломатического тайного советника Зиновьева из Костантнноподя Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, h. III, համար 284, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
6. Депеша дипломатического тайного сонетника Зиновьева из Костантинополя. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, h. III, համար 281, նշվ. արխիվ:
7. Սրա հետ մեկտեղ առաջարկ կար միավորել նաև Կարմիր ծովին հարակից արաբական շրջանները: Депеша дипломатического тайного советника Зиновьева из Костантинополя. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, h. III, համար 284, նշվ. արխիվ:
8. Բասրայից ընտրված պատգամավորներ: Մանրամասն տես՝ Գասպարյան Ա., Խորհրդարական ընտրությունները Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. XXIV, Եր., 2005, էջ 77:
9. Շաֆիկ ալ-Մուայադ՝ «Արաբա-Օսմանյան եղբայրություն» կուսակցության նախագահ. Դամասկոսից ընտրված պատգամավոր, որն ուներ սուլթանական արքունիքի լրտեսի համբավ: Յուսուֆ բեյ Շիտվան՝ Բենգազի պատգամավոր, կասկածվում էր քրեական հանցագործության մեջ, սակայն անապացույց: Депеша дипломатического тайного советника Зиновьева из Костантинополя. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքած արխիվային նյութեր, h. III, համար 286, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
10. Hajjar J., L'Europen les Destinens du Proche-Orient. La Natonalisme arabe, Syrien Entree la Jeune Turque et les Puissances (1908-1914), Damas, 1996, p. 165.
11. Feroz. A., The Young Turks. The Committee of Union and Progress' in Turkish Politics, 1908-1914, Oxf., 1969, p. 69-91

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ
(ԱԻ)

ԲԻԱՅՆԻԼԻ - ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ուրարտուի վերջին արքաների ժամանակագրության խնդիրը ուրարտագիտության մեջ քննարկվում է առ այսօր: Ի դեպ, այս խնդրին տարբեր կերպ են մոտեցել խորհրդային, արևմտյան և հետխորհրդային պատմագրության ներկայացուցիչները, տարբեր են արքաների տիրապետման համար առաջ քաշված ժամանակագրությունները, նրանց հաջորդականության խնդիրը, որի հետ նաև սերտորեն առնչվում է Ուրարտական կայսրության անկման հանգամանքները: Ըստ որում, ժամանակին ուրարտական տերության թուլացումն ու անկումը վերագրում են, օրինակ Ռուսա III Էրիմենայորդու գահակալությունից հետո, մինչդեռ հետագայում ուրարտական գահացանկում ավելացվեցին նոր արքաներ, այն է՝ Ք.ա. VII դարի վերջում և VI դարի սկզբում: Մյուս կողմից, արքաների ժամանակագրության խնդիրը պատմագրության մեջ պատկանում է ուրարտագիտության կնճռոտ և սակավ ուսումնասիրված հարցերի թվին:

Պատմագրության մեջ ի հայտ եկած նոր տվյալների առկայությամբ ուրարտագիտության մեջ արտահայտված տեսակետները Ք.ա. VII դարի ուրարտական արքաների հաջորդականության մասին առկա նյութի հիման վրա, մեր կարծիքով, վերանայման կարիք ունեն: Այսպես, Գ. Ղափանցյանը Ռուսա I-ից հետո հիշատակում է Արգիշտի II (714-680? թթ.), Ռուսա II (680-645թթ.), Սարդուրի III (կամ IV՞, 646-620թթ.) արքաներին: Նա Ուրարտուի վերջին արքա է համարում Ռուսա III Էրիմենայորդուն, որի համար կառավարման տարիներ համարում է Ք.ա. 605-585թթ., երբ Մարաստանը վերացնում է Ուրարտուի անկախ պետականությունը և գրավում նրա մայրաքաղաք Տուշպա-Վանը[1]:

Սակայն արքաների այս ցանկը այսօր վերը նշված արքաներով չի սահմանափակվում, քանի որ ուրարտագիտության մեջ հայտնաբերված

նոր սեպագիր աղբյուրները գիտությանը հաղորդել են նոր տվյալներ 1970-ական թթ. ուրարտագիտության մեջ Ուրարտուի վերջին այլքաներ սկսեցին համարվել նաև Սարդուրի IV և Ռուսա IV արքաները. որոնց մասին առավել մանրամասն կխոսենք ստորև:

Արժեքավոր է Ուրարտուի վերջին արքաների ժամանակագրության մասին Ն. Վ. Հարությունյանի արտահայտած տեսակետը. ըստ որի նա 1955թ. Կարմիր-բլուրից հայտնաբերված կավե սալիկի վրա ընթերցել է Ռուսա III համանուն որդի Ռուսա արքայի անունը. դրանով իսկ գիտությանը մատուցելով ուրարտական նոր արքային՝ Ռուսա IV-ին: Ելնելով դրանից՝ բացահայտվում է, որ Ուրարտուի պատմության վերջին շրջանի ժամանակագրության մեջ Սարդուրի III և Ռուսա III հաջորդել են նրանց ժառանգները՝ Սարդուրի IV և Ռուսա IV[2], և մեջբերում է Ուրարտուի պատմության վերջին շրջանի արքաների հետևյալ ժամանակագրությունը. Ռուսա Արգիշտորդի (Ռուսա II), Սարդուրի Ռուսայորդի (Սարդուրի III), Սարդուրի Սարդուրորդի (Սարդուրի IV), Էրիմենա Սարդուրորդի (*), Ռուսա Էրիմենայորդի (Ռուսա III), Ռուսա Ռուսայորդի (Ռուսա IV)[3]:

Ուրարտական պետականության անկման վերաբերյալ գոյություն ունի այն տեսակետը. որ Ք.ա. VII դարի կեսերից արդեն թուլացած պետությունը իր գոյությունը շարունակել է մինչև Ք.ա. 590-585թթ., երբ տեղի է ունենում պատերազմ Լիդիայի և Մարաստանի միջև, և որ Մարաստանն է վերացրել Ուրարտուի անկախ պետությունը կամ պատերազմը սկսելուց առաջ, կամ դրանից հետո[4]:

Ուրարտական արքաների ժամանակագրության այլ ցանկ է առաջարկում Ե. Գրեկյանը: Նա Ռուսա Արգիշտորդուց, այսինքն՝ Ռուսա II (Ք.ա. 680-650-ական թթ.) հետո Ուրարտուում տեսնում է հետևյալ գահակալներին՝ Էրիմենա, Ռուսա Էրիմենայորդի (Ռուսա III), Սարդուրի Ռուսայորդի (Սարդուրի III), որը կամ Ռուսա Էրիմենայորդու կամ էլ Ռուսա Արգիշտորդու որդին էր: Նա ասորեստանյան աղբյուրներում Ք.ա. 643թ. հիշատակվող Ուրարտուի վերջին գահակալն էր[5]: Միաժամանակ այն կարծիքն է արտահայտվում, որ Ռուսա Էրիմենայորդու կառավարման ժամանակ Վանի թագավորությունը բաժանվում է մի քանի ինքնուրույն մասերի, որոնցից ամեն մեկը ունենում են տարբեր ճակատագրեր[6]:

Հայագիտության մեջ արտահայտված տեսակետներից այլ է Ս. Հմայակյանի տեսակետը, որի համաձայն Ուրարտուն շարունակել է իր գոյությունը մինչև Ք.ա. 520-ական թվականներ և կորցրել իր անկախությունը Հայաստան արշաված ասքեմենյան բանակի ներխուժումից հետո: Նա առաջարկում է Ուրարտուի վերջին արքաների հետևյալ ժամանակագրությունը՝ Ռուսա II (685-650թթ.), Ռուսա և Սարդուրի (650-645թթ.), Սարդուրի III (645-620թթ.), խնամակալություն (620-600թթ.), Սարդուրի IV (600-580թթ.), Էրիմենա (580-555թթ.), Ռուսա III (555-545թթ.), խնամակալություն (545-525թթ.), Ռուսա IV (525թ.)[6]: Առաջարկվել է նաև այն տեսակետը, որ Ուրարտուի վերջին արքաները հայկական ծագում են ունեցել':

Տարբեր է մոտեցումը արևմտյան պատմագիտության մեջ: Այստեղ ընդունում են, որ Մարաստանը կարող էր կործանել Ուրարտական պետությունը, սակայն ոչ թե Ք.ա. 590-585թթ., այլ դեռևս ավելի վաղ՝ 640-629թթ. ընկած ժամանակահատվածում: Այս տեսակետը արտահատում է Ս. Քրոլը[7]:

Այս ենթադրությունը հաստատվեց նաև Բաստամում իրականացված հնագիտական աշխատանքները, համաձայն որոնց 20-րդ դարի 80-ական թվականներից ուրարտագիտության մեջ առաջարկվեց ուրարտական պետության անկման թվական համարել Ք.ա 650-640-ական թվականները[8]: Բաստամում իրականացրած պեղումները պարզաբանում են, որ արդեն Ք.ա. VII դարի կեսերին ավերվել էր ուրարտական թագավորության մի շատ կարևոր կենտրոն: Կարմիր-բլուրից, Թոփրակկալեից և Բաստամից հայտանաբերված ուրարտական տեքստերը, կնիքների արձանագրությունները չեն ակնարկում, որ գոյություն են ունեցել այլ իշխողներ: Վերևում հիշատակված գահակալները, ըստ Ս. Քրոլի, իրականում զուտ իշխաններ էին՝ LÚ.A.NIN-li պաշտոնով, և ավելի ճիշտ է այդ անձանց թվագրել Ռուսա II-ի ժամանակաշրջանով: Հնարավոր էր համարվում, որ ուրարտական կայսրությունը անկում է ապրել Ռուսա Արգիշտորդու իշխանության տարիներին կամ նրանից հետո[9]: Նա նաև փոփոխություն է կատարել ուրարտական արքաների ժամանակագրության մեջ, ըստ այդմ Ռուսա Էրիմենայորդու կառավարման շրջանը ետ է տանում Ռուսա Արգիշտորդուց հետո[10] և առաջարկում է ուրարտական արքաների հետևյալ ցանկը՝ Արգիշտի II, Ռուսա II, այնուհետև

ընտանիքի անդամներ LÚ.A.NIN-li պաշտոնում՝ Սարդուրի Ռուսայորդի, Ռուսա Ռուսայորդի, Էրիմենա, Սարդուրի Սար. Ռուսա Սարդուրորդի, այնուհետև ուրարտական թագավորական տան անդամների ցանկը շարունակում են՝ Ռուսա III և Սարդուրին: Նա գտնում է, որ Ք.ա. 609-608թթ. Բաբելոնյան ժամանակագրությունում հիշատակված Ուրարտուն հանդես է գալիս որպես աշխարհագրական տարածք, այլ ոչ թե թագավորություն[11]:

Ըստ ամենայնի, այլ կարծիքի է արևմտյան ուրարտագիտության մյուս ներկայացուցիչ՝ Մ. Սալվինին: Ըստ որում, կարևորվում է նրա կողմից 2002թ. Վանից ոչ հեռու գտնվող Գյովելեք գյուղում Ռուսա III արքայի արձանագրությամբ կոթողի հայտնաբերումը: 2007թ. Մ. Սալվինին Սավաջըք գյուղի մոտ (Վան քաղաքից արևելք) հայտնաբերում է մեկ այլ ամբողջական արձանագիր կոթող, որը լրացնում է Գյովելեքի տեղեկությունները և նոր մտորումների տեղիք տալիս: Հեղինակը նշում է, որ Սավաջըքի հուշարձանը ևս պատկանում է Ռուսա Էրիմենայորդուն (Ռուսա III), և այստեղ գործ ունենք ինչպես Գյովելեքի, այնպես էլ Քեշիշ-գյոլի հայտնի կոթող-վիմագրի կրկնօրինակի հետ: Նաև պարզվեց, որ այդ երկու վիմագրերը (Գյովելեք և Քեշիշ-գյոլ) պատկանում են միևնույն՝ ավելի քան 3,60 մ բարձրություն ունեցող կոթողի[12]: Հետևաբար, հեղինակը նշում է, որ այժմ ունենք երկու կոթող Քեշիշ-գյոլի տարածքում (1. Գյովելեք+Քեշիշ-գյոլ և 2. Սավաջըք, և երկուսն էլ պատկանում են Ռուսա Էրիմենայորդուն (Ռուսա III), այլ ոչ թե Ռուսա Արգիշտորդուն (Ռուսա II) կամ Ռուսա Սարդուրորդուն (Ռուսա I): Նորագույն տեղեկությունները հեղինակին ստիպում են որոշակի ճշգրտումներ մտցնել Ք.ա. VII ուրարտական պատմության արքաների ժամանակագրության հարցերում: Խոսքը վերաբերվում է Ռուսայի՝ Արգիշտիի որդու և Ռուսայի՝ Էրիմենայի որդու ժամանակագրության խնդրի նոր մեկնաբանմանը, ըստ որի Ռուսա Արգիշտարդին դառնում է Ռուսա III, իսկ Ռուսա Էրիմենայորդին՝ Ռուսա II: Եվ առաջարկում է ուրարտական արքաների հետևյալ ժամանակագրությունը. Ռուսա Սարդուրորդի (Ռուսա I), Արգիշտի Ռուսայորդի (Արգիշտի II), Ռուսա Արգիշտորդի (Ռուսա II), Ռուսա Էրիմենայորդի (Ռուսա III), Սարդուրի Ռուսայորդի, Սարդուրի Սարդուրորդի (Սարդուրի III)[13]:

Արդի մասնագիտական գրականության մեջ ամբողջացրած բոլոր տեսակետները վերջնական չեն և կարիք ունեն նոր բացահայտումների: Սակայն մեզ համար առավել համոզիչ է թվում Է. Գրեկյանի ուրարտական արքաների համար առաջ քաշված ցանկը. սակայն այն ևս կարող է փոփոխվել ուրարտական արխիվի հայտնաբերման դեպքում: Դժբախտաբար, առայժմ ուրարտական տեքստերի արխիվ չի հայտնաբերվել: Հուսով ենք, որ Վանա լճի արևելյան ափին գտնվող Այանիսի հնագիտական պեղումները կարող են մատուցել հարուստ նյութեր ընդհանրապես Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության, ժամանակագրության, բառապաշարի, պաշտամունքի և այդ թվում պատմության գահակալների՝ Լութիպրիի, Ուեդիպրիի, Էրիմենայի և Արամեի ուսումնասիրության համար:

SONA GRIGORYAN
(IOS)

THE PROBLEMS OF THE INVESTIGATION OF THE HISTORY OF THE LAST EPOCH OF BIAYNILI-URARTU IN THE MODERN HISTORIOGRAPHY

The question of how to date the reign times of the last kings of Urartu is discussed in Urartology even today. The scholars of Soviet and post-Soviet times and western scholars had different approaches to the question, each of them proposed different dates for the reign of each king, because the question of dating the reign periods of the late Urartian kings is closely connected with the question of the decline of the Urartian kingdom. So, G. Kapantsyan mentions after Rusa I the kings Argišti II, Rusa II and Sarduri II. He considers the last king of Urartu Erimena the son of Rusa II and proposes as dates of his reign 605-585 (B.C.), when the Medes put an end to the independent kingdom of Urartu. It is worth mentioning the point of view of N. Harutyunyan concerning the dating of the reign times of Urartian kings. In 1955 on a clay plate (Tontafel) he read in Karmir Blur the name of the king Rusa the son of Rusa III and thereby introduced into Urartology the name of a new king "Rusa IV". Another dating of the reign times of Urartian kings is proposed by E. Grekyan. After Rusa the son of Argišti he mentions the followin kings: Rusa the son of Erimena and Sarduri the son of Rusa. At the same time he expresses the opinion that in the reign of Rusa the son of Erimena the kingdom of Van is divided into different parts, each of which has its own

late. In Armenology one has expressed the opinion that the last kings of Urartu were of Armenian origin. The approach of western scholars is different. The western scholars accept that it is possible that the Medes destroyed Urartu. not between 590-585 (B.C.). but between 640-629. Such a point of view has S. Kroll. He has made changes in dating the reign times of the last Urartian kings. He puts the period of reign of Rusa the son of Erimena after that of Rusa the son of Argišti and proposes the following list of the Urartian kings: Argišti II. Rusa II. then family members holding the post LÚ.A.NIN-li. Sarduri the son of Rusa. Rusa the son of Rusa, Erimena. Sarduri Sar. then the list of the Urartian kings is continued by Rusa III and Sarduri. He expresses the point of view that Urartu. which is mentioned in the Babelonian chronicle in 609-608 (B.C.). is a geographical territory. but not a kingdom. It should be noted that all these points of view are not complete and perfect and new discoveries ought to be made. The list of Urartian kings by E. Grekyan seems to be more convincing for us, but it can be also changed. if a new Urartian archive is discovered.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմությունը. Եր., 1940, էջ 220-225: Նույն տեսակետն են արտահայտել նաև Ն. Ադոնցը և Ռ. Գրյուսեն՝ Ուրարտուի վերջին արքա համարելով Ռուսա III Էրիմենայորդուն, ով հավանաբար իշխել է Ք.ա. 610-585թթ.: Grousset R., Historie ancienne de l' Arméme, Paris, 1947, p. 62; Ադոնց Ն., Հայաստանի Պատմություն, Եր., 1972, էջ 180:
2. Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, № 277. 456, 459-460 – Арутюнян Н. В., Корпус урартских клонообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ер., 2001, №№ 430-432; 445-446. Անհրաժեշտ է նշել, որ արևմտյան պատմագրության մեջ մերժվում է Սարդուրի IV և Ռուսա IV գահակալության հնարավորությունը, և նրանք ուղղակի ընդունվում են որպես արքայազներ: Zimansky P., Xenophon and the Urartian Legacy, PALLAS, 43, Boston, 1995, p. 260, nt. 4; նույնի՝ An Urartian Ozymandias, Biblical Archaeologist, 58/2, 1995, 98f; Медведская И. Н., Конец Урарту: новые факты и гипотезы, Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровского, СПб, 1998, с. 62.
3. Aroutiounian N. V., Problème concernant la derniere période de l'historie d'Urartu, ACTA ANTIQUA, T. XXII, Budapest, 1974, p. 415-427; նույնի՝ Некоторые вопросы последнего периода истории Урарту, Древний Восток, 2, Ер., 1976, с. 98 и сл.; նույնի՝ К интерпритации надписи на глиняной булле Кармир-Блура, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1962, 3 (18), էջ 95-114; նույնի՝ Биайнили (Урарту). СПб., 2006, с. 253-261; ինչպես նաև Дьяконов И. М., Последние годы урартского государства, Вестник Древней Истории (այսուհետև՝ ВДИ). М., 1951. № 1. с. 29-39; նույնի՝ Урартские письма и документы. М.–Л., 1963, с. 28-29:

Նույնի՝ Малая Азия и Армения около 600г. до н.э и северные походы вавилонских царей, ВДИ. М., 1981, № 2. с. 34-64.

4. Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt. II2. 1931, Berlin. S. 686, 462; Пиотровский Б. Б. Ванское царство (Урарту). М., 1959, с. 116; Дьяконов И. М., 1951. Последние годы урартского государства. Ассиро-вавилонские источники по истории Урарту. (այսուհետև՝ АВИИУ). ВДИ. №№ 2-4. М., 1951. с. 34; Меликишвили Г. А., Древневосточные материалы по истории народов Закавказья: I. Наири-Урарту. Тбилиси. 1954. с. 319-321; Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 220-225; Арутюнян Н. В., Вопросы последнего периода истории Урарту. Древний Восток, 2, Ер., 1976, с. 112-114.

5. Հմայակյան Ս. Գ., Թեյշեբաինի արշավող բանակի երթուղին. Էրեբունի-Երևան, ՀԳՆՀ, Եր., 1998. էջ 10-12 (12-14):

6. Կարագյոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, Հ. I, Գիրք 1, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 50; Հմայակյան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 10-12 (12-14); Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Եր., 1998, էջ 72-83:

7. Luckenbill D. D., Ancient records of Assyria and Babylonia, II (այսուհետև՝ ARAB) II, Chicago, 1926-1927, « 834; Дьяконов И. М., АВИИУ, № 72 (X, 40-50), № 79; Գրեկյան Ե. Հ., Վանի թագավորության քաղաքական պատմությունը (տպագրության ընթացքում):

8. Գրեկյան Ե., Հ., նույն տեղում:

9. Kroll S., Keramik urartaischer Festungen in Iran, AMI, Erg. 2, Berlin, 1976, S. 175; Медведская И. Н., նշվ. աշխ., էջ 63:

10. Kroll S., Urartus Untergand in anderer Sicht, Istanbuler Mitteilungen, Bd. 34, 1984, S. 157-160.

11. Kroll S., նշվ. աշխ., էջ 165-168; M. Salvini, Geschichte und Kultur Urartäer, Darmstadt, 1995, S. 117.

12. Kroll S., նշվ. աշխ., էջ 163; Հմմտ. Дьяконов И. М., Урартские письма и документы, М.–Л., 1963, с. 28; նույնի՝ Киммерийцы и скифы на Древнем Востоке, РА, № 1, 1994, с. 114; Арутюнян Н. В., Некоторые вопросы последнего периода истории Урарту, Древний Восток, 2, Ер., 1976, с. 113-114.

13. Kroll S., նշվ. աշխ., էջ 166-169:

14. Salvini M., Argišti, Rusa, Erimena, Rusa und Die Löwenschwänze: Eine Urartäische Palastgeschichte Des VII. Jh. V. Chr., ARAMAZD, vol. II, Yerevan, 2007, p. 146; ինչպես նաև համեմատիր նույն հեղինակի ավելի վաղ հրատարակված աշխատությունում արտահայտված կարծիքի հետ: Տես Salvini M., Geschichte und Kultur Urartäer, Darmstadt, 1995, S. 109-121.

15. Salvini M., նույն տեղում, էջ 157-158; ինչպես նաև նույնի՝ Corpus Dei Testi Urartei, Vol. I, Roma, 2008, p. 9-10.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ
(ԱԻ)

2008-2009 ԹԹ. ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

2008թ. դեկտեմբերի 27 ին իսրայելական զինված ուժերը սկսեցին «Թափվող արճիճ»[1] ռազմական գործողությունը, որը միտված էր Գազայում պաղեստինյան «Համաս» շարժման ռազմաքաղաքական ենթակառույցների ոչնչացմանը և շարժման մարտիկների կողմից իսրայելական տարածքների ռմբակոծությունների կանխարգելմանը[2]: Հարկ է նշել, որ 2005թ. սեպտեմբերին Իսրայելը իրականացրեց «Վերջին պահապանը» գործողությունը, որի համաձայն Թել-Ավիվը Գազայի իսրայելական բնակավայրերից դուրս բերեց բնակիչներին և զինծառայողներին[3], ինչպես նաև ապամոնտաժեց այնտեղ և Հորդանան գետի Արևմտյան ափին տեղակայված իսրայելական ռազմական բոլոր շինությունները[4]: Այնուհետև, 2005թ. նոյեմբերին ստորագրված պաղեստինա-իսրայելական համաձայնագրի արդյունքում բացվեց նաև Եգիպտոս-Գազա սահմանին գտնվող Ռաֆահ անցակետը: Այս ամենի արդյունքում Թել-Ավիվը դադարեցնում էր Գազայում իսրայելական զինվորական վարչակազմի գործունեությունը՝ տրամադրելով Գազայի պաղեստինցիներին «ամբողջական ինքնուրույնություն»:

Ռազմական գործողությունների սկսվելու հաջորդ օրը Համասի ղեկավար Խալեդ Մաշալը կոչ արեց Հորդանան գետի Արևմտյան ափի բնակիչներին Իսրայելի դեմ սկսել երրորդ ինթիֆադան[5]՝ սատարելու համար Գազայում գտնվող իրենց պաղեստինցի եղբայրներին[6]:

«Թափվող արճիճ» ռազմական գործողությունները կրկին ի հայտ բերեցին միջարաբական հարաբերություններում առկա մրցակցությունը և Իսրայելի դեմ միասնական դիրքորոշում զբաղեցնելու անկարելիությունը: 2008թ. դեկտեմբերի 31-ին Կահիրեում անալյլունք ավարտվեց Արաբական պետությունների լիգայի անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ հանդիպումը[7]:

Օգտվելով ԱՄՆ-ի աջակցությունից և անտեսելով ՄԱԿ-ի, ինչպես նաև մյուս շահագրգիռ ուժերի պատերազմական գործողությունները դադարեցնելու կոչերը, 2009թ. հունվարի 3-ին իսրայելական զորքերը սկսեցին «Թափվող արճիճ» ռազմական գործողությունների երկրորդ «ցամաքային» փուլը*:

Իսրայելական ռազմական գործողությունները դադարեցնելու և զինադադար ստորագրելու նպատակով, ինչպես նաև միջպաղեստինյան բանակցություններ սկսելու ուղղությամբ ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալեց նաև Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը: Եգիպտոսը, սկսած 1990-ականների առաջին կեսից, դարձավ նաև արաբական այն գործուն ուժերից մեկը, որը նախագահ Մուբարաքի կառուցողական և հավասարակշռված քաղաքականության արդյունքում կարողացավ ստանձնել իսրայելա-պաղեստինյան հարաբերություններում տարածաշրջանի իրական միջնորդի դերը:

Իսրայելա-պաղեստինյան զինադադար ստորագրելու վերաբերյալ եգիպտական նախաձեռնությունը ստացավ «Մուբարաք-Սարկոզի[9]» խաղաղ նախաձեռնություն անվանումը:

Եգիպտա-ֆրանսիական խաղաղ նախաձեռնությունը բաղկացած էր հետևյալ մի քանի առանցքային կետերից.

1. Պատերազմող կողմերն անհապաղ դադարեցնում են կրակը: Այդ ժամանակահատվածում Եգիպտոսը նախապատրաստում է «նախաձեռնության երկրորդ» փուլը: Միևնույն ժամանակ թույլատրվում է հումանիտար բեռների վոխադրումը Գազա:
2. Մուբարաքի գլխավորությամբ Կաիրեում հրավիրվում է նիստ, որի ընթացքում ձեռք բերված իսրայելա-պաղեստինյան պայմանավորվածությունները չէին կարող միակողմանի ձևով խախտվել: Այս նույն հանդիպմանը քննարկվում է նաև Գազա-Եգիպտոս սահմանի եգիպտական զինված ուժերի կողմից հսկողության ուժեղացման հարցը:
3. Մուբարաքի նախաձեռնությամբ կազմակերպվում է պաղեստինյան բոլոր խմբավորումների ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ կքննարկվեն «նախաձեռնության» առանցքային հիմնադրույթները[10]:

2009թ. հունվարի 7-ին Իսրայելը և Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը ողջունեցին եգիպտա-ֆրանսիական խաղաղ նախաձեռնությունը, մինչդեռ «Համասը» հայտարարեց, որ իր

փորձագետները դեռ պետք է քննարկեն այն, որից հետո միայն կհստակեցվի իրենց դիրքորոշումը[11]:

Գազայում ստեղծված իրավիճակի շուրջ բանակցելու նպատակով 2009թ. հունվարի 7-ին Կահիրեում սկսվեցին եգիպտա-իսրայելական[12] և եգիպտա-պաղեստինյան[13] բանակցությունները[14]:

2009թ. հունվարի 17-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց թիվ 1864 բանաձևը Գազայի գոտում կրակը դադարեցնելու մասին[15]: Նույն օրը երեկոյան իսրայելական նախարարների գրասենյակը համարելով, որ իսրայելական զորքերը հիմնականում կատարել են իրենց առջև դրված խնդիրները, որոշում ընդունեց Գազայում կրակը դադարեցնելու մասին[16]: Մեկ օր անց, այդ մասին հայտարարեց նաև պաղեստինյան կողմը: Արդեն 2009թ. հունվարի 20-ի դրությամբ Գազայի գոտուց դուրս էին բերվել Ցախալի բոլոր ստորաբաժանումները[17]:

Երկու կողմերն էլ ստեղծեցին 5-ական «բանախոսության հանձնաժողով», որը պետք է իրականացնի ազգային հաշտեցման գործընթացը, և որի վերջնական արդյունքը կլինի «ազգային միասնության» կառավարության ստեղծումը[18]:

Իսրայելա-պաղեստինյան հերթական ռազմական բախումը կանխարգելելու, ինչպես նաև եգիպտական խաղաղ նախաձեռնության գործընթացը վերջնական արդյունքի հասցնելու նպատակով 2009թ. գարնանը Կահիրեն հրապարակեց պաղեստինյան հարցի կարգավորման համապարփակ նախագիծը, որի համաձայն[19].

1. Գազայի գոտում պետք է կազմավորվեր գործադիր կոմիտե, որում կներգրավվեն Գազայում գործող բոլոր խմբավորումները՝ ներառյալ «Իսլամական ջիհադը»: Տվյալ կոմիտեում տեղերի հիմնական մասը պետք է զբաղեցնեն «Համասի» և «Ֆաթհի» ներկայացուցիչները, որոնք գործադիր իշխանությունը կիրականացնեն մինչև 2010թ. հունվարը՝ Պաղեստինյան ինքնավարությունում նախագահական և օրենսդիր ժողովի ընտրությունները:
2. Նշված կոմիտեն անմիջականորեն պետք է ենթարկվի Պաղեստինյան ինքնավարության նախագահին:
3. «Համասը» և «Ֆաթհը» կնախաձեռնեն 2010թ. նախագահական ընտրությունների նախապատրաստական աշխատանքները և կճանաչեն ընտրությունների արդյունքները:

4. Դադարեցվում է Գազայում և Արևմտյան ափում «Համասի» և «Յաթեի» կողմնակիցների նկատմամբ երկուստեք հալածանքները:
5. «Յաթեի». «Համասի» ներկայացուցիչները. արաբական երկրների մասնակցությամբ. ինչպես նաև ՄԱԿ-ի հովանու ներքո պետք է համատեղ անվտանգության ուժեր կազմավորվեն. որոնց հիմնական նպատակը պետք է լինի Ինքնավարությունում անվտանգության ապահովումն և Իսրայելի հետ զինադադարի պայմանների կատարման վերահսկողությունը:
6. Իսրայելի հետ երկարաժամկետ զինադադարի ստորագրումը:
7. Իսրայելի հետ ռազմագերիների փոխանակման գործընթացի ապահովումը: Ենթադրվում էր, որ այն չի վերաբերվելու կալանքի տակ գտնվող պաղեստինյան ակնառու գործիչների ազատ արձակմանը:
8. Եգիպտոսն ազատ է արձակում իր տարածքում ձերբակալված «Համասի» ակտիվիստներին և դարձյալ թույլատրում է «Համասի» գործունեությունը իր տարածքում[20]:

Գոյություն ունեն նաև Օմար Սուլեյմանի առաջադրած գաղտնի կետը, համաձայն որի «Համասը» պետք է հրաժարվի եգիպտական տարածքով սպառազինություն տեղափոխելուց և այդ գործընթացի կատարմանը պետք է հետևի եգիպտական համապատասխան ուժերի հետ միասին[21]:

«Ձուլված արճիճ» ռազմական գործողության արդյունքում բյուրեղացավ հետևյալ իրողությունը.

1. պատերազմական գործողությունները ցույց տվեցին հերթական անգամ, որ պաղեստինա-իսրայելական հակամարտությունը կարգավորելու համար ռազմական ուժը այլընտրանք չէ: Չիրականացան իսրայելական փորձագետների բլից-հաղթանակի ակնկալիքները: Իսրայելը հավանաբար հաշվի չէր առել, որ «Համասի» համար Գազան կենսական գոյությունը պահպանելու խնդիր է, և հետևաբար «Համասը» կռվելու էր մինչև վերջ: Տարաձայնություններ կային նաև իսրայելական ղեկավարության շրջանում՝ մասնավորապես, Օլմերտը ձգտում էր ընդլայնել և խորացնել ռազմական գործողությունները, մինչդեռ Բարաքը և Լիվնին աշխատում էին որքան հնարավոր է շուտ զինադադար կնքել և սկսել բանակցային գործընթացը:

2. Եվրոպան և ԱՄՆ «ճանաչեցին» «Համասը»՝ որպես վերոնշյալ հակամարտության բանակցող կողմ. ինչին երկար ժամանակ է ձգտում այս կազմակերպությունը: Դրա վառ ապացույցն է Անգլիայի նախկին վարչապետ Թոնի Բլեյերի, ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջիմմի Քարթերի և Ֆրանսիայի տարբեր պաշտոնյաների հանդիպումները «Համասի» ներկայացուցիչների հետ. Արևմուտքը բաց գիտակցում է, որ արդեն մոտ ապագայում՝ 2010թ. հունվարի նախագահական և օրենսդիր ժողովի ընտրություններում, «Համասը» կարող է կրկնել 2006թ. հունվարին կայացած ընտրություններում իր հաղթանակը, որից հետո նրա հետ բանակցությունները արդեն կդառնան ծայրահեղ անհրաժեշտություն:

3. «Թափվող արճիճ» ռազմական գործողությունը ինչ որ առումով բարենպաստ պայմաններ ստեղծեց Սիրիայի համար՝ Գոլանի բարձունքները վերադարձնելու առումով: Այս ամենը ակնհայտ դարձավ, երբ Սիրիան տնային կալանքի տակ վերցրեց Դամասկոսում հաստատված «Համասի» ներկայացուցիչներից շատերին: Դամասկոսը հստակ ընդգծեց նաև «երկու պետություն - երկու ժողովուրդ» սկզբունքին իր հակատարմությունը, որի հետ համաձայն է նաև Վաշինգտոնը:

4. 2006թ. ընտրություններից հետո «Համասի» ամենակարևոր խնդիրը՝ «Ֆաթհին» հավասար միջազգային ճանաչում գտնելն էր, որն էլ նրան մեծ հաշվով հաջողվեց լուծել շնորհիվ «Թափվող արճիճ» ռազմական գործողության:

5. Իսրայելին հարկավոր էր ձեռք բերել հնարավորինս երկարաժամկետ զինադադար կամ խաղաղություն, որն էլ դատելով տվյալ զարգացումներից Թել-Ավիվը մեծ հաշվով ապահովեց իր համար:

6. Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքն իր կառուցողական դիրքորոշմամբ ավելի դյուրին դարձրեց պաղեստինա-իսրայելական զինադադարի ձեռքբերումը: Միևնույն ժամանակ Եգիպտոսը ևս մեկ անգամ ապացուցեց բոլոր շահագրգիռ կողմերին, որ Կահիրեն տարածաշրջանում արաբական այն բացառիկ ուժերից է, որը կարող է գործուն և իրական միջնորդի դերակատարություն ունենալ Իսրայելի հետ բանակցային գործընթացում:

GOR GEVORGYAN
(IOS)

THE ISRAEL - PALESTINE HOSTILITIES IN 2008-2009. EGYPT'S STANCE

The Israeli military operation "Cast Lead" in Gaza strip has led to another crisis in Palestine. The war revealed severe disagreements among Arab states as a result of which the Arab world was not able to take a unified position to condemn Israel.

Meanwhile the hostilities have contributed to the fortification of Egypt's political position in Arab world. Presidend Mubarak's constructive and balanced policy played an important role not only in thwarting the Israeli operation but also it facilitated inter - Palestinian dialogue between HAMAS and FATAH. Egypt's mediation efforts between several military-political centers of the region once raised its authority in international relations. The Israeli military operation caused dire complications for Gaza; more than hundred people were killed, several hundred were wounded, Gaza faced almost complete destruction of infrastructure. Preliminary estimations show that at least 1.5 billion USD should be spent on reconstruction efforts. Nevertheless the military operation in Gaza once again proved that there is no military solution for Palestine problem. All parties should make compromises for getting a durable solution of the conflict.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իսրայելական կողմը այդ գործողություններին պատրաստվել էր 1,5 տարի: Ռազմական գործողություններում ընդգրկված էին ընդհանուր առմամբ իսրայելցի 10.000 զինվորականներ: «Թափվող արճիճ» ռազմական գործողությունը պաշտոնապես տևեց 22 օր:
2. Համաձայն «Washington Post» օրաթերթի, Իսրայելի կողմից «Համասի» դեմ նախաձեռնած ռազմական գործողությունները քաղաքականապես հեռատես քայլ էր. երկրում սպասվող ընտրությունների նախօրեին նման քայլից կարող էին քաղաքական զգալի ձեռքբերումներ ունենալ Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը, վարչապետ Էհուդ Օլմերթը և արտաքին գործերի նախարար Ցիպի Լիվնին: Պաղեստինցիների հետ անհաջող բանակցությունները տվյալ պարագայում Բարաքին և Լիվնիին հնարավորություն կտային ստանալ Իսրայելի հրեա բնակչության դրական դիրքորոշումը: Տես The Washington Post, 29.12.2008.; Հարկ է նշել, որ իսրայելական ռազմական գործողությունները մեծ հաշվով ձեռնտու էին նաև «Համասին», մանավանդ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2009թ. հունվարին լրանում էր Սահմուդ Աբբասի նախագահական լիազորությունների ժամկետը: Zuhur Sh., Gaza, Israel, Hamas and the Lost Calm of Operation Cast Lead, Middle East Policy Council, Vol. XVI, Summer 2009 N 2, p. 12.

3. Գազայում իսրայելական բնակիչները տեղակայված էին Գուշ Քաթիվ բնակավայրում։ Իսրայելական այդ գործողությունը հաստատվել էր իսրայելական կառավարության և քնեսեթի կողմից։

4. Իսրայելական «Վերջին սյախսալսնր» գործողությունը, ըստ էության, 2003թ. ապրիլի 30-ին ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշի կողմից հրապարակված պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման «ճանապարհային քարտեզ» ծրագրի մի մասն էր։ Մանրամասն տես՝ В.П. Панкратьев. Палестино-израильский конфликт или куда недст "дорожная карта", www.vostokoved.ru

5. Cast Lead in the Foundry, December 31, 2009 www.merin.org

6. www.mignews.co.il ; Պաղեստինի ժողովուրդը արդեն վերապրել է երկու ինթիֆադա. առաջինը սկսվեց 1987թ. դեկտեմբերին և տևեց 6 տարի՝ մինչև 1993թ.: Երկրորդ ինթիֆադան սկսվեց 2000թ. սեպտեմբերին և ավարտվեց 2004թ. նոյեմբերին՝ Յասիր Արաֆաթի մահով, թեպետև պաշտոնապես ինթիֆադայի դադարեցման մասին հայտարարություն չէր արվել: Տես՝ www.rian.ru/analytics

7. Косач Г. Г., Лига арабских государств: положение в Газе и вокруг нее, www.iimes.ru Հանդիպմանը մասնակցում էին արաբական բոլոր պետությունները բացի Սոմալիից և Կոմորյան Կղզիներ Հանրապետությունից: ԱՊԼ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների այդ նիստը նախագահում էր Սաուդյան Արաբիան: Մասնակիցների միջև առկա տարաձայնությունների պատճառով ի չիք դարձավ Իսրայելին դատապարտող միասնական որոշման ընդունումը: Bahgat G., The Arab Peace Initiative: An Assessment, Middle East Council, Vol. XVI, Spring 2009, N 1, p 29.

8. www.rosbalt.ru , httn://korresnondent.net/world/702225

9. ԱՄՆ-ի վարչակազմը քննադատում էր Ֆրանսիայի ղեկավարությանը «Համասի» հետ շփումների համար: Հետաքրքիրն այն էր, որ «Համասի» ներկայացուցիչների հետ հանդիպել էր նաև ԱՄՆ նախկին նախագահ Ջիմմի Քարթերը, ինչպես նաև Անգլիայի նախկին վարչապետ Թոնի Բլեյերը: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա արտաքին գործերի նախարար Քուշները ընդգծում էր, որ իր պետությունը «Համասի» հետ հարաբերություններ չունի, դրանք ընդամենը առնչություններ են, որոնք անհրաժեշտ են տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար: Israeli's Strategic Incompetence in Gaza, www.inost.com

10. www.rosbalt.ru . httn://korrespondent.net/world/702225

11. Իսրայելական կողմը Կահիրեում ներկայացնում էր հատուկ բանագնաց Ամոս Գիլադը:

12. Խոսքը գնում է Գազայից ժամանած «Համասի» ներկայացուցիչների մասին: «Համասի» համար այդ բանակցություններին կարևոր էր «երկու պետություն երկու ժողովուրդների համար» մոտեցումը:

13. Give Up on the Two-State Solution? www.danielpipes.org ; Кирсанов Е., Хаммас в ожидании,

14. www. iimes.ru

15. Ամբողջական տեքստը տես www.un.org/SC/Resolution/2009/January17 Դեռ 2009թ. հունվարի 8-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց Գազայում կրակի դադարեցման մասին թիվ 1860 բանաձևը, որը ինչպես նախորդ բանաձևերը մնացին անկատար. Эпштейн Л А., Война в Газе и ее возможные негативные последствия для Израиля.

www.jimes.ru; Scener B.M.. Targeting Israelis via Internationale Law. Israel and its Enemies. Middle east Quarterly, Fall 2009. p. 44.

16 Իրականում մինչև հունվարի 21-ը դեռ երկուստեք շարունակվում էին տարբերայնորեն հրթիռահարումները:

17 Give Up on the Two-State Solution? www.danieppipes.org

18 Նախատեսվում է, որ այդ հանձնաժողովներում պետք է ընդգրկվեն պաղեստինյան քաղաքական, հասարակական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները հասարակության մեջ ներդաշնակություն ապահովելու նպատակով:

19 Кирсанов Е. Е., Новый план АРЕ по ближневосточному урегулированию. www.jimes.ru

20 Հարկ է նշել, որ Համասի գործունեությունը պաշտոնապես արգելված է Հորդանանում, Ավստրալիայում և Անգլիայում: That Surreal Gaza Reconstruction Conference, www.danielpipes.org: Косач Г. Г., Каирский этап палестино-палестинского диалога: контекст арабского мира, www.iimes.ru

21. Bahgat G., The Arab Peace Initiative: An Assessment, Middle East Council. Vol. XVI, Spring 2009. N 1. p 29; Meir A. B.. Negotiating an Israeli-Palestinian Breakthrough. Middle East Policy Council. Vol. XVI, Summer 2009, N 1, p. 23.

ԴԱՎԹՅԱՆ ԱՇԽԵՆ
(ԵՊՀ)

ՕՄԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՀԵՄԻ ՇՈՒՐՋ

Հիջրայի 75-76թթ.-ին (693-96թթ.) Աբդ Ալ-Մալիք խալիֆայի (685-705թթ.) կողմից մի շարք բարեփոխումների հետ մեկտեղ կատարվեց նաև դրամային ռեֆորմ: Մինչ այդ արաբներն օգտագործում էին բյուզանդական և սասանյան[1], իսկ հետո նաև արաբաբյուզանդական և արաբասասանյան դրամներ: Վերջիններս նույն բյուզանդական և սասանյան դրամներն էին, որոնց ավելացված էին իսլամի որոշ դրույթներ ու հիմնաքարային արտահայտություններ[2]:

Աբդ Ալ-Մալիքի դրամային բարեվտխման արդյունքում խալիֆայության շրջանառության մեջ դրվեցին զուտ արաբական, արաբատառ դրամներ. ինչը շատ կարևոր նշանակություն ունեցավ խալիֆայության ինքնուրույնության հաստատման համար: Բարեփոխումների հետևանքով խալիֆայության ամբողջ տարածքում հաստատվեց միասնական դրամական համակարգ. տարբեր պատկերներով երկլեզու դրամները վերացան: Սահմանվեց 3 մետաղադրամի թողարկում՝ ոսկի, արծաթ, պղինձ: Ոսկու կշռային չափը 4.25 գրամ էր և այն կոչվեց դինար: Արծաթը սահմանվեց 2.97 գրամ և կոչվեց դիրհեմ: Պղինձը, որը կայուն չափ չուներ և մեծ մասամբ հատվում էր 3-5 գրամ չավտով, կոչվում էր ֆիլս: Դրամների կենտրոնական մասում արձանագրվում էր Ղուրանից այաթներ, որի շուրջը դրոշմվում էին հատման վայրը կամ թիվը[3]:

Հիջ.77թ.-ին (696-97) Դամասկոսում հատվեց առաջին Օմայան ոսկին, որը, սակայն, Հայաստանում և հարակից տարածքներում չի հայտնաբերվել:

Ինչ վերաբերվում է առաջին Օմայան արծաթ դիրհեմին, ապա այն իրենից ներկայացնում է այս շրջանի ամենավիճելի խնդիրներից մեկը: Դրամի վրա նշված է بسم الله ضرب هذا الدرهم بارمنية في سنة ثمان وسبعين այսինքն «Հանուն Աստծո հատված է այս դրամը Արմինիայում 78թ.-ին[4]»:

1974թ.-ին Բաղդադի թանգարանի դրամագիտական բաժինը հրապարակեց վերոհիշյալ դրամը: Հաշվի առնելով դրամի եզակիությունն ու կարևորությունը, արաբ մասնագետները դրամը հրապարակելուց առաջ այն ուղարկել էին Լոնդոն՝ Բրիտանական թանգարան, հաստատելու դրամի իսկությունը: Այնուհետև Բաղդադի թանգարանի դրամագիտական բաժնի տնօրեն Մուհաբ Ալ-Բաքրին հրատարակեց «Արաբադրոշմ Օմայան դիրհեմ» վերնագրով գիրքը, որին հաջորդեց վերոհիշյալ թանգարանի տնօրեն Իսա Սալմայի՝ նույն դրամին վերաբերվող հոդվածը: Երկու գիտնականներն էլ պնդում են, որ դրամը հատվել է Դվինում, քանի որ հենց Դվինն է այն ժամանակ եղել Արմինիայի կենտրոնը թե՛ տնտեսական, թե՛ վարչական առումներով: Այսինքն أرمنية անվան տակ պետք է հասկանալ հենց Դվին دبيل այլ ոչ թե Արմինիայի որևէ այլ քաղաք: Ըստ Ալ-Բաքրիի՝ սույն դրամը եղել է խալիֆայության առաջին արծաթե դիրհեմի փորձնական թողարկումը[5]:

Ի տարբերություն արաբ մասնագետների՝ հայ դրամագետներ Պ. Սապպաղյանը և Ա. Զոհրաբյանը համաձայն չեն այս տեսակետին, վերջիններս կարծում են, որ դրամը հատվել է ոչ թե Դվինում, այլ՝ Դամասկոսում[6]: Զոհրաբյանը փաստարկների շարքում բերում է այս դրամի ոճային համապատասխանությունը դամասկոսյան թողարկումներին[7], իսկ Սապպաղյանը գտնում է, որ դրամի վրա նշված՝ Արմինիայում հատված լինելու հանգամանքը կարող էր ունենալ տնտեսական, հարկային կամ վարչական նկատառումներ[8]: Իրոք, անդրադառնալով 690-ական թվականների իրադարձություններին, պարզ է դառնում, որ Արմինիայում այդ տարիներին չափազանց խառնաշփոթ իրավիճակ էր տիրում:

Ներկայացնենք որոշ հանգուցային իրադարձություններ ըստ ժամանակագրական հերթականության.

692. Բյուզանդիայի Հուստինիանոս II (685-695թթ. և 705-711թթ.) կայսրը խախտեց արաբների հետ կնքած խաղաղության պայմանագիրը: Սահմանամերձ գոտի տեղահանված սլավոնական բնակչությունը ներկայիս Սևաստոպոլի ճակատամարտում անցան արաբների կողմը, որի հետևանքով վերջիններս որոշիչ հաղթանակ տարան: Այս հաղթանակը հեշտացրեց արաբների առաջընթացը դեպի Արմինիա[9]:

693. Արմինիայի, Ատրպատականի (արաբական աղբյուրներում՝ Ադարբայջան), Ջազիրայի կառավարիչ նշանակվեց

խալիֆայի եղբայր Մուհամմադ իբն Մարուանը: Նույն թվականին Հայոց իշխան դարձած Սմբատ Բագրատունին իր հպատակությունը հայտնեց արաբներին, որպեսզի խուսափի երկրում ավելորդ արյունահեղությունից:

695. Բյուզանդիայում ծագած ապստամբության հետևանքով տեղի ունեցավ իշխանափոխություն. Հուստինիանոս II-ի փոխարեն կայսր դարձավ Լեոնտիոսը (695-698թթ.): Վերջինս չկարողացավ արաբներին հակահարված հասցնել Արմինիայում, քանի որ զբաղված էր պատերազմական գործողություններով Հյուսիսային Աֆրիկայում: Մուհամմադ իբն Մարուանը, մտնելով Չորրորդ Հայք, բազմաթիվ գերիներ վերցրեց և ճանապարհ հարթեց Փոքր Ասիա մտնելու համար:

695-96. Յահյա իբն Ալ-Հաքամի գլխավորությամբ արաբները ամառային արշավանք կազմակերպեցին Մարջ Աշ-Շահմ բնակավայրը, որը գտնվում էր Մալաթիայի և Մասիսի միջև:

695-97. Թվականների ընթացքում արաբները շարունակեցին իրենց հարձակումները, երկու ճակատով՝ ծովով և ցամաքով[10]:

698. Բյուզանդիայի Տիբերիոս III (698-705թթ.) կայսրը զորք ուղարկեց Հայաստան և հրամայեց ձերբակալել Սմբատ Բագրատունուն, ով մեղադրվում էր Բյուզանդիայի դեմ դավաճանության մեջ: Պաիկ կոչվող ճահճուտներում տեղի ունեցավ ճակատամարտ, ուր հույները հաղթանակ տարան, սակայն Սմբատ Բագրատունին իր փոքրաթիվ զորքերով կարողացավ փախուստի դիմել[11]:

699. Հայաստանը հարձակումների է ենթարկվում երկու կողմից, իբն Մարուանը արշավանքների նոր ալիք սկսեց դեպի Արմինիա: Ըստ հայկական աղբյուրների՝ արաբները երկու տարի անընդուն պայքարում էին ամբողջ երկրում իրենց տիրապետությունը հաստատելու համար:

701. Այս տարին համարվում է արաբների կողմից Արմինիայի վերջնական գրավման տարի: Իբն Մարուանը իրեն հպատակեցրեց Արմինիայի ողջ տարածքը, ինչպես նաև Չորրորդ Հայքը[12]:

Արմինիայում Բյուզանդիայից և Արաբական խալիֆայությունից բացի իրենց արշավանքներով շարունակում էին նաև խազարական ցեղերը, որոնք

նպատակ ունեին անձն կերպ կանխել արաբական ուժերի հաստատումը Անդրկովկասում: Դործելով որպես Բյուզանդիայի դաշնակիցներ խազարները իրենց վրա էին վերցնում արաբների հարվածները, դրանով իսկ թույլ տալով բյուզանդացիներին, վերականգնել ուժերը պարտությունից հետո և պատրաստվել պատասխան հարվածի[13]:

Այս ամենին կարելի է ավելացնել նաև հայ նախարարների գլխավորած ապստամբությունը (703թ.), որը նույնպես խոսում է տվյալ ժամանակամիջոցում տարածաշրջանի անկայուն իրադրության առկայության մասին:

Ինչպես տեսանք, տարածաշրջանում բարդ իրավիճակ էր տիրում, ուստի դժվար է պատկերացնել, որ Աբդ Ալ-Մալիքի նման հեռատես քաղաքական գործիչը նպատակահարմար գտներ առաջին Օմայան դիրհեմը հատել դեռ ամբողջովին չենթարկեցված, անկայուն մի տարածաշրջանում, ինչպիսին Արմինիան էր:

Հիջրայի 78թ.-ից (697-98թթ.) հետո արծաթե դրամների հաջորդ թողարկումը կատարվել է 79թ.-ին, իսկ ارمنية արձանագրությամբ դրամ հատվել է միայն 81թ.-ին: Այս դրամների միջև կան որոշ ոճային տարբերություններ:

Հիջ.78թ.-ին թողարկված դրամի առաջամասում Կուրանի إخلاص (112) սուրան արձանագրված է 5 տողով, իսկ հիջ.81թ.-ին թողարկած դիրհեմի վրա՝ 4 տողով[14]:

հիջ.78թ.-ին թողարկված դիրհեմ	հիջ. 81թ.-ին թողարկված դիրհեմ
الله احد	الله احد الله
الله الصمد لم	الصمد لم
يلد و لم يولد	و لم يولد ولم يكن
ولم يكن له	له كفوا احد
كفوا احد	

Բացի այդ, հիջ. 78թ.-ին թողարկված դրամի միջին շրջանը տարանջատվում է կետերից կազմված շրջանակով, որը բնորոշ է դամասկոսյան թողարկումների ոճին, իսկ 81թ.-ի դրամի վրա այդ կետավոր շրջանակների փոխարեն առկա է գծավոր շրջանակ[15]:

Այսպես, հիջ. 78թ.-ին թողարկված դրամի վրա ارمنية նշելը հնարավոր է խալիֆայության կողմից օգտագործված քաղաքական քայլ էր: Ինչպես տեսանք ժամանակագրական աղյուսակից, 7-րդ դարի վերջին

տասնամյակում արաբներր անցել էին որոշիչ հարձակումների՝ տարեցտարի ամրապնդելով իրենց դիրքերն այս տարածաշրջանում, սակայն նրանց յուրաքանչյուր հարձակմանը հետևում էր Բյուզանդիայի հակահարվածը: Խալիֆայությանն անհրաժեշտ էր ռազմական զենքից բացի մեկ այլ միջոց, խթան, որը կամրապնդեր արաբների իշխանությունը: Խնդրո առարկա դրամի վրա Արմինիա նշելը կարող էր հենց այդ միջոցը հանդիսանալ, որով, թեև ձևականորեն, բայց հաստատվում էր Արմինիայի պատկանելությունը խալիֆայությանը: Այս զենքն ուղղված էր ոչ միայն Բյուզանդիայի և նրա դաշնակից խազարների, այլ նաև հայ նախարարների դեմ: Այն նպատակ ուներ վերջ դնելու տիրող անորոշ և խճճված իրավիճակին: Դրամը կարող էր ոչ միայն ապացույց լինել, որ Հայաստանն ընդգրկվել է խալիֆայության կազմում, այլև, որ մասնակցում է դրամային շրջանառությանը:

Մեր կարծիքով դրամը իրականում հատվել է Դամասկոսում՝ խալիֆայության կենտրոնական դրամահատարանում:

Արմինիայում դրամական հաջորդ թողարկման թիվը 81թ.-ն է (700-701թթ.), որը, ըստ պատմիչների, արաբական իշխանության վերջնական հաստատման թիվն է: Ընդ որում, 81թ.-ից հետո, մոտ 50 տարի (որոշ կարճ ընդհատումներով) շարունակվում է Արմինիայում դիրհեմ դրամների թողարկումը[16]:

Սույն նկատառումներով փորձ արվեց պարզաբանել, որ հիջ. 78թ.-ին հատված արծաթե դրամը, որի վրա նշված է أرمينية վարչատարածքային միավորի անվանումը, հատվել է ոչ թե Արմինիայի կենտրոն հանդիսացող Դվին քաղաքում, այլ խալիֆայության կենտրոնում՝ Դամասկոսում: Այս դրամը Աբդ Ալ-Մալիք խալիֆայի իրականացրած դրամային բարեփոխումից հետո թողարկված առաջին արծաթե դրամն է, որն անհեռատեսական կլիներ հատել Արմինիայում, ուր իրավիճակը շատ անկայուն էր, ինչն ակնհայտ է ժամանակագրական աղյուսակից: Մեր ներկայացրած դրամի՝ Դամասկոսում հատված լինելու օգտին կարող է խոսել նաև դրամի վրա առկա Ղուրանի إخلاص (112) սուրայի դասավորությունը, որը չի համընկնում Արմինիա անվանումը կրող այլ դրամների վրա արձանագրված նույն սուրայի դասավորությանը: Ոճային տարբերություններ կան նաև դրամների վրա առկա զարդանախշերի միջև: Քննարկվող դրամի զարդանախշերը կետաձև են, ինչը նույնպես համապատասխանում է դամասկոսյան ոճին:

Վերոգրյալից ելնելով. կարծում ենք. որ այս դրամը հատվել է Դամասկոսում կենտրոնական դրամահատարանում. իսկ դրամի վրա ارمنية նշելը զուտ քաղաքական նշանակության քայլ է՝ ցույց տալու համար. որ Արմինիա վարչատարածքային միավորն արդեն ենթարկեցված է խալիֆայության կողմից. և դա կարող էր ապացույց լինել նաև. որ Հայաստանն այդեն ընդգրկվել էր արաբախիսլամական պետության դրամաշրջանառության մեջ: Դրամը նաև նպատակ ուներ կայունություն հաստատել այդ բարդ տարածաշրջանում:

ASHKHEN DAVTYAN
(YSU)

SOME OBSERVATIONS ON THE FIRST OMAYYAD SILVER COIN (DIRHEM)

In 75-76 of Hijra (693-696 AD) in line with a number of reforms Abd al-Malik also realized the monetary reform. Before the mentioned period the Arabs used Arabic-Byzantian and Arabic-Sassanid coins. As a result of the monetary reform Arabic-lettered coins were circulated in the Caliphate which turned out to be a very important milestone for the arabicization the Caliphate administration. The previously used coins were not circulated any more. Three types of metal coins started to be produced: golden (dinar), silver (dirhem) and copper (fils). In the central part of the coins suras from Koran were inscribed surrounded by a note on the date and place of the production. In 77 Hijra (696-697 AD) the first Omayyad golden coin was struck however the latter was never found from Armenia or neighboring territories. As for the first Omayyad silver dirhem, it makes the most questionable point of the period. It has the following note بسم الله ضرب هذا الدرهم بارمنية في سنة ثمان وسبعين, which stands for *In the name of God this coin was struck in Arminia in the year 78*. In reference to the events of 690's AD it should be mentioned that the political situation in Arminia was quite complicated. The Byzantine Empire and Arabic Caliphate continuously struggled for settling their political power in Arminia with shifting success. Arminia was not fully occupied by Arabs. It is hard to believe that being a wise politician Abd al-Malik caliph would find reasonable to order the first silver dirhem of the caliph in Arminia, which was an unstable territory as not completely obeyed by the Caliphate. Thus, we consider mentioning the word Arminia on the coin of 78 H. had been a political action taken by the Caliphate. During the last decade of the 7th century. Arabs continuously invaded the area strengthening their influence. However, every success in this respect was followed by response actions by Byzantine Empire. The Caliphate needed a tool. a factor other than weapon that will assist strengthening Arabic

power. Mentioning the name of Arminia on the mentioned coin will make the required tool, which even fictive would confirm that Arminia belonged to the Caliphate. It aimed to put an end to the complicated and uncertain situation. It would not only approve that Arminia was included in the Caliphate but also participated in the monetary circulation. We believe the coin was struck in Damascus. Caliphate central mint.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նորաստեղծ Արաբական Խալիֆայության որոշ տարածքներ նախկինում գտնվում էին Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ, և այդ տարածքներում օգտագործվում էին համապատասխանաբար բյուզանդական և սասանյան դրամներ: Խալիֆայության ստեղծումից հետո մինչ զուտ արաբական, արաբստառ դրամների օգտագործումը շրջանառության մեջ մտան ադապտացիոն, երկլեզու մետաղադրամներ՝ արաբաբյուզանդական և արաբասասանյան :
2. Ջոերաբյան Ա., Հայաստանի դրամական տնտեսությունը 3-10-րդ դարերում, /թեկնածուական ատենախոսություն/ ՀՀ ԳԱԱ Ազգագրության և Հնագիտության ինստիտուտ, Եր., 2003, էջ 87:
3. Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում, Եր., 1983, էջ 135:
4. Սապպաղյան Պ., Դրամագիտական հարցեր, Բեյրութ, 1986, էջ 48:
5. Նույն տեղում:
6. Մինչ օրս դրամին սակավ անդրադարձներ են եղել և բավարար փաստերով ապացուցված չէ ո՛չ Դամասկոսում, ո՛չ էլ Դվինում հատված լինելու հանգամանքը:
7. Ջոերաբյան Ա., նշվ.աշխ., էջ 90:
8. Սապպաղյան Պ., նշվ.աշխ., էջ 49:
9. Արմինիա վարչատարածքային միավորը, որպես այդպիսին, ստեղծվել է Մուավիա 1 խալիֆայի (661-680թթ.) կարգադրությամբ, սակայն այն վերջնականապես կազմավորվել է Աբդ Ալ-Մալիք խալիֆայի օրոք, նրա եղբայր Մուհամմադ իբն Մրվանի կողմից Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վերջնական նվաճումից հետո: Արմինիա վարչատարածքային միավորը ընդունված էր բաժանել Ա. Արմինիայի (Աղվանք) և Բ. Արմինիայի (Վիրք), իսկ բուն Հայաստանը պահպանում էր իր նախկին պարսկական (Գ. Արմինիա) և բյուզանդական (Դ. Արմինիա) հատվածները: Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական խալիֆայության հյուսիսային փոխարքայությունը, Հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 165-166:
10. Тер-Гевондян А.., Армения и Арабский Халифат, Ер., 1977, с. 72-73.
11. Ղևոնդ Պատմություն, թարգ. ներած. և ծանոթ. Տեր-Ղևոնդյան Ա., Եր., 1982, էջ 29:
12. Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 74:
13. Артамонов А., История Хазар, Л., 1962, с. 202.
14. Սապպաղյան Պ., նշվ. աշխ., էջ 49:
15. Ջոերաբյան Ա., նշվ. աշխ., էջ 92:
16. Մուշեղյան Խ., նշվ.աշխ., էջ 140:

ԻՎԱՆՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ
(ՔՀԻ)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Մանրամասն չանդրադառնալով ժամանակակից Թուրքիայում բնակվող վրացիների էթնոգրաֆիայի հետ կապված խնդիրներին, ինչպես նաև նրանց պատմական անցյալին, նշենք միայն, որ վերջիններիս թիվը այնտեղ, և մասնակցությունը քաղաքական իրադարձություններին աճեց 19-րդ դարից, երբ տեղի ունեցավ նրանց արտագաղթի մի քանի խոշոր ալիք[1]: Սակայն, սկսած 1921թ., այն է՝ Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից և՝ վերջին արտագաղթի խոշոր ալիքից հետո, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների պատճառով, վրացական համայնքի դերը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում զգալիորեն նվազեց[2]: Վրացական համայնքի ներկայացուցիչները ներգրավված են եղել հիմնականում առևտրական և շինարարական ոլորտներում, և գրեթե այդքանով էլ սահմանափակվում էր նրանց դերը Թուրքիայի հասարակական կյանքում[3]: Բացի դրանից, հանրապետական Թուրքիայում ամրագրված միատարր թուրքական պետության հայեցակարգը սահմանափակում էր այլ էթնիկ փոքրամասնությունների ինքնագիտակցության զարգացման և դրսևորման գործնթացը: Այս առումով, բացառություն չէր կազմում նաև մշակութային ոլորտը, որը միանգամայն դիտվում էր որպես ազգային փոքրամասնությունների ինքնությունը պահպանող միջոց: Այսպես, օրինակ, Ահմեդ Օզքան Մելաշվիլիի կողմից 1977թ. հիմնադրված «Չվեներբուրի» ամսագիրը ունեցավ չափազանց կարճ կյանք, իսկ ինքը՝ հիմնադիրը, որոշ ժամանակ անց (1980թ.) դաժանաբար սպանվեց թուրք ազգայնականների կողմից[4]:

Վրացական համայնքի քաղաքական կշիռը, իսկ ավելի ստույգ, քաղաքական գործընթացներին, որպես հավաքական ուժ մասնակից

լինելը, սկսեց աստիճանաբար մեծանալ 1990-ական թվականներց. ինչը համընկավ համաշխարհային և տարածաշրջանային բուռն տեղաշարժերի հետ: Արդեն 1993թ. սկսեց վերահրատարակվել «Չվեներուրի» ամսագիրը, իսկ 1996թ Անկարայում հիմնադրվեց Է. Շևարդնաձեի անվան Բարեկամության և համերաշխության թուրք-վրացական հիմնադրամ: Միևնույն ժամանակ առաջարկվեց նաև հիմնել այդ հիմնադրամին կից գործող, Ստամբուլի Շիշլի թաղամասում. վրացական կաթոլիկ եկեղեցուն պատկանող տարածքում մշակութային կենտրոն: Վերջապես, երկար բանակցությունների արդյունքում որոշվեց ստեղծել միացյալ Թուրք-վրացական կրթության և մշակույթի հիմնադրամ: 2000թ. հունիսի 18, 39 հիմնադիրներից ընտրվեց 9 հոգուց բաղկացած ղեկավար մարմին, որի մեջ, ի դեպ, ընդգրկվեցին այնպիսի ազդեցիկ դեմքեր, ինչպիսիք էին Թուրքիայի նախկին պետնախարար՝ Ռաֆայդին Շահինը (որպես պատվավոր նախագահ)[5], հայտնի գործարար՝ Իսմեթ Աջարը (տնօրենների խորհրդի անդամ), Մեվլութ Արթվինլին (որպես գլխավոր տնօրեն)[6]: Հատկանշական է, որ տնօրինության կազմում ընդգրկվեց նաև մինչ այդ անջատ գործող Ստամբուլի կաթոլիկ վրացիների համայնքի ղեկավար Սիմոն Ջաջաձեն[7]: Հարկավոր է նշել, որ հիմնադրամի պաշտոնական բացմանը, որը տեղի է ունեցել 2000թ. նոյեմբերի 7-ին, ներկա էր նաև Թուրքիայի նախագահ Ա. Ն. Սեզերը[8]: Ինչ վերաբերվում է Թուրք-վրացական բարեկամության և համերաշխության հիմնադրամին, ապա այն սկսեց հետագայում ղեկավարել նախկինում բանակի գեներալ-լեյտենանտ Ալաատին Գյուվենը[9]: Այս երկու (իսկ իրականում մեկ) կառույցի ներկայացուցիչները ծավալեցին բավականին բուռն գործունեություն, որն արտահայտվեց մի շարք միջոցառումների մասնակցությամբ և կազմակերպմամբ, (Թուրքիայում «Չվեներուրի» վրացական մշակույթի օրերի ամենամյա տոնակատարությունների, վրացական սփյուռքի խնդիրներին նվիրված ֆորումների, միջազգային քաղաքագիտական գիտաժողովների կազմակերպում և այլն)[10]: Արդեն 2008թ. օգոստոսին, հարավ-օսական պատերազմի օրերին, վրացական համայնքի մի շարք ներկայացուցիչների կողմից կազմակերպվեց Ստամբուլի ռուսական հյուպատոսարանի առջև բողոքի ցույց: Իսկ «Չվեներուրի» ամսագրի խմբագիր Ֆ. Չիլօղլուն (Չիլաիշվիլի) իր հրապարակումներից մեկում հատուկ կոչով դիմեց Թուրքիայի հանրությանը, որպեսզի այն դատապարտի Ռուսաստանի ագրեսիան

Վրաստանի դեմ[11]. Ավելին. Վրաստանի սփյուռքի հարցերով նախարար Յուլոն Գագոշիձեն, անդրադառնալով հարավ-օսական պատերազմի ժամանակ Թուրքիայում բնակվող վրացիների արձագանքման հարցին՝ նշեց, որ «Թուրքիայի սփյուռքը ուղարկեց մեծ քանակի օգնություն: Իրենք ստեղծեցին հատուկ հիմնադրամ, որի հիմնադիրը դեռ ամենասկզբին օգոստոս ամսին, փոխանցեց օգնության հիմնադրամին 250 հազար եվրո-ի հասնող օգնության»[12]:

Ելնելով վերոշարադրյալից և հարավ-կովկասյան տարածաշրջանային իրողություններից՝ կարելի է ենթադրել, որ Թուրքիայում վրացական համայնքի քաղաքական կյանքի աշխուժացմանը և դրա հետ մեկ տեղ՝ ազգային ինքնության և ինքնագիտակցության գործընթացի զարգացմանը, նպաստեցին հետևյալ հիմնական գործոնները, որոնց հիմքում, մեծամասամբ, ընկած էր թուրքական ռազմավարական շահերի հաշվարկը.

1. ԽՍՀՄ-ի փլուզումը, նրա տարածքում նորանկախ պետությունների կազմավորումը հնարավորություն ընձեռեց բացել նախկինում փակ սահմանները, և այսպիսով, մնացած այլ գործընթացների հետ մեկտեղ. հանգեցրեց նաև տարբեր ազգերի և իրենց սփյուռքերի միջև հաղորդակցման հեշտացմանը կամ վերականգնմանը: Այսպես, օրինակ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տեղի ունեցած Վրաստանից Թուրքիա աշխատանքային միգրացիան «բնականոն» կերպով հանգեցրեց վրացիների տարբեր հատվածների միջև կապերի հաստատմանը և ընդլայնմանը[13]:

2. 1992-1993թթ. վրաց-աբխազական պատերազմը: Բանն այն է, որ այդ պատերազմի ընթացքում բավականին ակտիվ էին գործում հյուսիս-կովկասյան համայնքների ներկայացուցիչները, և այդ թվում՝ նաև աբխազները: Ըդսմին, հսկավրացական գործողությունների, կազմակերպված ցույցերի արդյունքում իրենց որոշ ժամանակահատվածում հաջողվեց հասնել բավականին շոշափելի արդյունքների, այն է՝ ձևավորել աբխազական լոբբի, ստեղծել հակավրացական տրամադրություններ, հավաքագրել կամավորներ և այլ: Դա սպառնում էր առաջացնել որոշակի անհավասարակշռություն Թուրքիայի կովկասյան քաղաքականության մեջ: Ինչպես փաստում է աբխազ հետազոտող Վ. Չիրիքբան՝ «Աբխազիայում տեղի ունեցած պատերազմի արդյունքներից մեկը եղավ այն, որ նա ալեկոծեց ոչ միայն

Թուրքիայի հյուսիս-կովկասյան համայնքները, այլ նաև մինչ այդ գրեթե աննկատ, սակայն բավականին պատկառելի մահմեդական վրացիների սփյուռքը, որը սկսեց եռանդուն կերպով աշխատել վրացական յոբբիի ստեղծման ուղղությամբ»[14]:

3. Թուրք-վրացական համագործակցություն հետագա ընդլայնումը և աշխարհաքաղաքական նորանոր զարգացումների և նախագծերի մեջ այդ երկրների միասնական ներգրավվածությունը: Սկսած 1990-ական թթ. կեսերից էներգակիրների աշխարհաքաղաքական նախագծերի իրականացման համար հարմար գտնված Վրաստանի դերը, նրա աճող հակառուսական քաղաքական գծի խորացումը ևս բարձրացնում էին վերջինիս քաղաքական կշիռը և կարևորությունը Թուրքիայի համար: Բացի դրանից, Վրաստանի դերը թուրքական հարավկովկասյան քաղաքականության համար սկսեց մեծանալ Հայաստանի մեկուսացմանը[15] ուղղված քաղաքականության համատեքստում, երբ վրացական տարածքը սկսեց օգտագործվել որպես Ադրբեջանի և կենտրոնասիական թյուրքալեզու հանրապետությունների հետ հաղորդակցման ճանապարհ: Այս առումով վրացական համայնքի ներկայացուցիչների աշխուժացումը, իրենց կապերի հաստատումը Վրաստանի կառավարական և ոչ պաշտոնական օղակների հետ պատահական չեր: Ավելին, հաշվի առնելով Վրաստանի հանդեպ աճող հետաքրքրությունը՝ խնդիր էր առաջացել նաև թեկուզ ինչ-որ չափով օժանդակել վրացական սփյուռքի գործունեությանը, կամ, առնվազն, մինչև որոշ ժամանակ դրան չխոչընդոտել:

4. Բացի դրանից, պետք էր հաշվի առնել նաև Եվրոպական շատ կառույցների ազգային փոքրամասնությունների և նրանց իրավունքների ու ազատությունների առնչությամբ ցուցաբերած վերաբերմունքը, ինչը կարող էր արտահայտվել ոչ միայն քրդական խնդրի հանդեպ աճող հետաքրքրությամբ: Այս առումով, թուրքաբնակ վրացիների նկատմամբ դրսևորվող Թուրքիայի ժամանակակից քաղաքականությունը կրում է ապահովագրական բնույթ, առավել ևս, որ դրա արդյունքում դեռ վտանգված չեն թուրքական կենսական շահերը:

Վերոշարադրյալ փաստերի հիման վրա (որքանով էլ նրանք կցկտուր և ժամանակակից աղբյուրների առումով դժվարամատչելի բնույթ չունենային) կարելի է փաստել, որ թուրքական վրացական համայքի «աշխուժացումը» ամենևին էլ չի կրել պատահական բնույթ.

Եվ այսպես, պարզ է դառնում, թե ինչու Թուրքիայում բնակվող վրացիների «հանկարծակի» ինքնազարթոնքը և ինքնաճանաչման գործընթացը նոր թափ ստացավ հենց 1990-ական թթ., և շարունակաբար զարգանում է մինչ օրս:

Անշուշտ, Թուրքիայում՝ վրացական սփյուռքի դերի, կազմակերպչական ունակությունների և կարողությունների վերաբերյալ, լուրջ և բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջվում: Այս զեկույցում միայն փորձ արվեց ընդհանուր կերպով ուրվագծել նրա քաղաքական դերի ակտիվացման միտումները, ու այդ փաստի հետ կապված որոշ գործոնները:

VLADIMIR IVANOV
(IPR)

ON THE PROBLEM OF ACTIVATION OF THE SOCIAL – POLITICAL LIFE OF GEORGIAN DIASPORA IN TURKEY. GENERAL CONSIDERATIONS

The given article covers a range of facts which favour the process of political activeness and the self-identification of the Georgian community in Turkey. An attention should be paid on the fact that this activation can't be considered as an accidental and along with the actions for objective facts it was as well, to a considerable degree, conditional on the interests of Turkish government. Yet it is necessary to admit that in comparison with north North-Caucasian, the ethno-political potential of the Diaspora of the Georgian in Turkey still remains insignificant.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջին խոշոր ալիքը տեղի ունեցավ 1828-1829թթ.՝ ռուս-թուրքական պատերազմից հետո, երկրորդը՝ 1877-1878թթ., (և որը վրացական պատմագրության մեջ ստացավ *muhajiroba* անվանումը), իսկ վերջինը՝ արդեն 20-րդ դարում, երբ Թուրքիան 1921թ. հոկտեմբերի 13 Կարսի պայմանագրի կետերի համաձայն, ԽՍՀՄ-ին հանձնեց պատմական Աջարիայի զգալի մասը: (Ավելի մանրամասն դրա մասին տես օրինակ՝ Вачнадзе М., Гурули М., Бахтадзе М., История Грузии с древнейших времен до наших дней. http://www.krotov.info/lib_sec/04_g/ruz/ia_kr.htm.): Ի դեպ, պետք է նշել, որ այս արտագաղթերի ալիքների ժամանակ գաղթողների զգալի մասը կազմում էր պատմական Աջարիայի և Գուրիայի՝ օսմանական տիրապետության տարիների

ընթացքում մահմեդականացված բնակչությունը: Այդ արտագաղթերի հետևանքով Թուրքիայի տարածքում հայտնված վրացիները իրենք իրենց սկսեցին անվանել «չվենեբուրի», ինչն բւսռացի թարգմանությամբ նշանակում է «մերոնք»: Այլ գործոնների հետ մեկտեղ դրանով հստակ ֆիքսվեց նրանց սահմանազատումը մյուս վրացական սուբէթնոսներից: Չանդրադառնալով Թուրքիայում բնակվող վրացիների էթնոգենեզի բարդ խնդրին, նշենք միայն, որ առկա տվյալները նրանց քանակի վերաբերյալ կրում են խիստ հակասական բնույթ. Այսպես, օրինակ. թուրքական մամուլի մեջ թափանցած Թուրքիայի ԱԱԽ-ի պատվերով 2000թ. անցկացված գւսղտնի մարդահամարի տվյալների համաձայն, այդ երկրում վրացական ծագում ունեցողների թիվը կազմում է մոտավորապես 1 մլն.: (Այս մասին տես՝ MGK Talimatıyla çıkarılan Etnik Harita. http://www.medya72.com/haber.php?habcr_id=1803): Մինչդեռ, Շվեդական միջազգային հարաբերությունների ինստիտուտի, գրեթե նույն ժամանակ կատարած հետազոտության արդյունքների համաձայն, նրանց ընդհանուր քանակը հասնում է ընդամենը 90 հազարի, որից 80 հազարը դավանանքով մահմեդական են, իսկ 10 հազարը՝ ուղղափառ քրիստոնյա: Տես՝ Karimova Nigar, Deverell Edward, Minorities in Turkey.//The Swedish Institute of International Affairs. Ocassional Paper, 19, Stokholm, 2001, p. 14-15: Այդպիսի հսկայական տարբերության բացատրություններից մեկը կարող է լինել նաև այն, որ անցկացված հետազոտությունների ընթացքում կիրարվել են տարբեր մեթոդաբանություններ: Հնարավոր է, որ ԱԱԽ-ի դեպքում հաշվի առնվեց թուրքաբնակ վրացիների ընդհանուր թիվը, մինչդեռ շվեդական հետազոտության հիմքում ընկած էր Թուրքիայում բնակվող վրացիների ազգային ինքնագիտակցության մակարդակը: Բացի դրանից, հարկավոր է նշել, որ շվեդական հետազոտությունում չեն ընգրկվել կաթոլիկ վրացիներ: Այսօրվա դրությամբ, վրացական ծագում ունեցողները, Գ. Սանիքիձեի և Է. Ուոքերի հաղորդած տվյալների համաձայն, բնակվում են Թուրքիայի 15 նահանգների (Արավին, Կարս, Ռիզե, Սամսուն, Սինոպ և այլն) 242 գյուղերում, որոնցից 158, բնակեցված են բացառապես միայն վրացիներով: Տես՝ Sanikidze G., Edward W. Walker., Islam and Islamic practices in Georgia, Univesity of California, Berkeley, Institute of Slavic, East European and Eurasian Studies, 2004 p. 9: Բացի դրանից, վրացական ծագում ունեցող բնակչությունը առկա է նաև Սարմարա ծովի մերձափնյա շրջաններում: Տես՝ MGK Talimatıyla çıkarılan Etnik Harita. http://www.medya72.com/haber.php?haber_id–1803:

2. Այս մասին ավելի մանրամասն տես՝ Ulas Basar Gezgin., "That Was When I realized I was Georgian!": Republican and Post-Republican Responses to New Georgian Nationalisms. http://www.ulas.teori.org; Magnarella, Paul J. (1976) The Assimilation of Georgians in Turkey: A Case Study. *MuslimWorld* 66 (1).

3. Այսպես, օրինակ, 1983թ. վրացական ծագում ունեցող հայտնի գործարար Իսմեթ Աջարի կողմից հիմնադրվեց Աջարների կազմարեպությունների միություն (Acarlar Sirketler Toplugu), որի մեջ ընդգրկվեցին 10 կազմակերպություն: Հիմնական զբաղմունքը՝ շինարարություն, զբոսաշրջության կազմակերպում և այլն: http://www. acarlar.org.tr.

4. Ulas Basar Gezgin., "That Was When I realized I was Georgian!": Republican and Post-Republican Responses to New Georgian Nationalisms. http://www.ulas.teori.org.

5. http://www.turkgurcuvakfi.org/english/tarihce.asp
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում: Անհրաժեշտ է նշել, որ մինչ այդ, Թուրքիայում բնակվող մահմեդական վրացիները երբեք չէին ընդգրկվում կաթոլիկ վրացիների հետ մեկ կազմակերպության կազմում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Այսպես, օրինակ, 2006թ. հունիսի 1-3 Ստամբուլում անցկացվեցին վրացական մշակույթին նվիրված միջոցառումներ, որոնց գլխավոր կազմակերպիչների շարքում ևս եղել են այդ հիմնադրամի ներկայացուցիչները: 2007թ. մայիսի 25-27 Թբիլիսիում տեղի ունեցավ բավականին պատկառելի Վրացական սփյուռքի խնդիրներին նվիրված ժողով (Ֆորում), որի մասնակից դարձան 40 երկրներից ժամանած վրացական սփյուռքին ներկայացնող մոտավորապես 140 անդամ: Թուրքիայից ևս ժամանել էր մի պատվիրակություն, որի կազմում ընդգրկված էր նաև Թուրքիայի նախկին պետնախարար Ռ. Շահինը: 2008թ. մայիսի 27-28 Թբիլիսիի պետհամալսարանում «Անվտանգությունը Հարավային Կովկասում՝ Եվրոպայից Թուրքիա» թեմային նվիրված գիտաժողովում ևս ներկա էին Թուրքիայի վրացական համայնքի ներկայացուցիչները: Այս մասին տես՝ http://www.turkgurcuvakfi.org/english/tarihce.asp.
11. Rıfat YÖRÜK. Türkiye'deki Gürcü ve Çerkesler ikiye bölündü. http://www.habervaktim.com. http://www.paukaf.com/viewtopic.php?f=107&t=8827&start=0&st=0&sk=t&sd=a&sid=64b1c5a9d72be6458534b12c18d1930c; ինչպես նաև՝ Ethnic Georgians of Turkey Protest The Russian Occupation. http://bianet.org/english/world/109006-ethnic-georgians-of-turkey-protest-the-russian-occupation
12. Гагошидзе Юлон, Грузинская диаспора доказала, что она политическая сила, с которой нужно считаться. http://www.streampress.com. 23.12.2008.
13. Ընդհանուր առմամբ, արդեն 2000-ական թթ. սկզբին Թուրքիայում գործում էր այնտեղ 1990-ական թթ. աշխատանքի մեկնած վրացիների կողմից հիմնադրած մոտավորապես 14 կազմակերպություն, որոնք սերտ կապեր էին հաստատել գործող տեղացի մահմեդականացված վրացիների կազմակերպությունների հետ: Տես՝ Taymaz E. (ed.), Kuzey Kafkas Dernekleri, in Turkiye'de Sivil Toplum ve Millyetcilik, ed. Istanbul 2002, s. 451–460.
14. Чириква В., Абхазская диаспора во внутренней и внешней политике Абхазии. http://www.apsny.ru/apsnynews/apsnynews.php?mode=more&more=7523. Սակայն հարկավոր է նշել, որ չնայած վրացական համայնքի կողմից վերջերս ցուցաբերած ակտիվությանը, նրա քաղաքական կշիռը անհամեմատելի է հյուսիս-կովկասյան կազմակերպությունների քաղաքական ներուժի հետ:
15. Բացի դրանից, թուրք-վրացական կապերի ընդլայնման համատեքստում անհրաժեշտ է առանձնացնել ևս մեկ հանգամանք: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանի հայկական պատմա-մշակութային հուշարձանների հանդեպ վրացական կողմի հավակնությունները միանգամայն ձեռնտու են թուրքական կառավարությանը:

ԽԱՆՁԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ
(ԱԻ)

ԷԹՆՈԳԵՆԵԶԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Էթնոսի բազմազան սահմանումների հիմքում ընկած է մեկ դրույթ. էթնոսը մարդկանց ամբողջություն է, որի անդամները ունեն ընդհանուր որոշ հատկանիշներ՝ բնակության տարածք, լեզու, նյութական մշակույթ և այլն, բայց, որն ամենակարևորն է, նրանք ունեն էթնիկ ինքնագիտակցություն: Ընդ որում, էթնիկ ինքնագիտակցությունը դա էթնիկ հանրության գոյության արդյունքն է, նրա արտաքին արտահայտումը, իսկ տարածքի, լեզվի, և տնտեսական կապերի ընդհանրությունը՝ էթնիկ հանրության կազմավորման, ձևավորման կամ գոյության պայմաններն են[1]:

Էթնոսները տարաբաժանվում են արխո, պալեո և նեոգենետիկ էթնոսների[2], որոնցից առաջին խումբը առաջացել է դեռևս նախնադարյան համակարգի, ըստ որոշ ուսումնասիրողների, արդեն մեզոլիթյան դարաշրջանում: Այս առաջնային էթնիկ հանրույթների համար հիմք են հանդիսացել քարեդարյան մարդյանց արեալային խմբերը, կենսաբանական լեզվով ասած՝ պոպուլյացիաները[3], որոնք, զարգանալով, փոխակերպվել են ցեղերի և ազգակից մետացեղային հանրույթների:

Երկրորդային կամ պալեոգենետիկ և նեոգենետիկ էթնոսերն առաջացել են արդեն գոյություն ունեցող առաջնային արխեոգենետիկ հանրույթների հիման վրա կամ նրանց՝ էթնոգենետիկական գործընթացին մասնակցելու պայմաններում[4]:

Ավելացնենք, որ վերոհիշյալ առաջնային կամ արխեոգենետիկ էթնոսներն ունեն զարգացման երկու հնարավոր տարբերակ, որոնք կախված են նրանց տարածաշրջանային պայմաններից: Թե սոցիալական, և թե տեխնոլոգիական զարգացման տեսանկյունից շահեկան դիրքում են գտնվում այն հանրույթները, որոնք տեղակայված են այսպես կոչված պատմական գլխավոր մայրուղիների վրա: Որպես

կանոն. պատմության ընթացքում զարգացման արդյունավետ մակարդակ ցուցաբերող և ոչ մի խումբ. եթե ոչ ռեգիոնալ. ապա լոկալ բացարձակ մեկուսացման մեջ երբևէ չի գտնվել[5]: Փոխներթափանցումը (դիֆուզիա). միգրացիաները և փոխառումները հանդիսացել են այն ակտիվ ուժը. որը որակապես նոր համակարգեր է ստեղծել: Իսկ ցանկացած բնույթի մեկուսացումն անխուսափելիորեն հանգեցրել է մշակութային և սոցիալական վայրընթաց զարգացման (ռեգրես). ընդ որում. որքան փոքր է եղել տվյալ խումբը. այնքան այդ ռեգրեսն արագ է ընթացել[6]: Հետևաբար. ցանկացած երկրորդային էթնիկ հանրույթ. եթե այն կարողացել է ստեղծել կենսունակ և արգասաբեր էթնոմշակութային համակարգ. ապրիորի չէր կարող զարգանալ մեկուսացած:

Այս էթնիկ հանրույթների հետագա զարգացումը, նրա տարաբնույթ կապերը հարևանների կամ եկվորների հետ. էթնոգենետիկ գործընթացների պատկերավոր լեզվով ասած՝ խմորումը սովորաբար դուրս է մնում գիտության տեսադաշտից՝ տվյալների բացակայության կամ սակավության պատճառով: Այն իրողությունը, որն արձանագրում է պատմությունը. սովորաբար արդեն տարբեր բաղադրիչներ իր մեջ ներառած և որոշ չափով կարծրացած համակարգն է: Այդ բաղադրիչների վերախմբավորումը և վերաիմաստավորումը (նկատի ունենք տարաբնույթ միգրացիաները և հարևան պոպուլյացիաների հետ միքսացիան, վերնաշերտ (սուպերստատ) և ենթաշերտ (սուբստրատ) բնակչության բարդ սինթեզը) կարող է ներառել էթնիկ համարյա թե բոլոր ցուցիչները՝ լեզուն, նյութական մշակույթը, տարածքային վտփոխությունները: Ընդ որում, այս գործընթացի ժամանակ այն պայմանավորող գործոնների բազմության մեջ առանձնանում է մեկ (կամ մի քանի գործոն), որը դառնում է նոր ձևավորվող համակարգի առանցքը, այլ բառերով ասած, վերածվում է համակարգաստեղծ գործոնի[7]: Առավել հաճախ այդ դերը ստանձնում է լեզուն, և լեզվական ընդհանրության և էթնոսի ձևավորման գործընթացներն ընթանում են միաժամանակ: Սակայն դա կարող է նաև լինել տարածաշրջանում բնակվող և տարբեր լեզվախմբերի պատկանող տարածքային համայնքների ընդհանուր որևէ քաղաքական կամ տնտեսական շահը կամ նպատակը. որի շուրջ համախմբված համայնքները այս կամ այն պատճառով կրնտրեն առկա լեզուներից մեկը որպես *լինգվա ֆրանկա*, ընդ որում պարտադիր չէ. որ այդ լեզվի կրողները մեծամասնություն

կազմեն: Օրինակ. հողագործ նստակյաց բնակչության պարագայում այդ դերը սովորաբար ստանձնում են քոչվորական անասնապահ ցեղախմբերը:

Պատմական այս գործընթացը նման է պարույրի. որոշ դեպքում այն կարող է չընդհատվել, և որևէ տարածաշրջանում ձևավորված էթնոհամակարգը կարող է շարունակական ձևով իր մեջ նոր բաղադրիչներ ներգրավել, յուրացնել, և ժամանակի ընթացքում իր մեջ ամփոփել վաղնջագույն շրջանին պատկանող շերտեր՝ այլ կերպ դրանք իմաստավորելով և մեկնաբանելով: Այս գործընթացի արդյունքում ձևավորվում է առավել բարդ, բազմաշերտ և հարուստ էթնոհամակարգ: Որպես օրինակ, կարող ենք նշել բազմաթիվ հին ազգերի՝ հայեր, հույներ, պարսիկներ, իտալացիներ, հնդիկներ և այլն*: Սակայն այդ պարույրը կարող է և ընդհատվել, տվյալ տարածաշրջանը էթնոմշակութային այլ համակարգի կողմից յուրացվելու և բնիկներին ծայրամաս տեղաշարժելու կամ ընդհանրապես դուրս մղելու պարագայում (ԱՄՆ-ի և Կանադայի տեղաբնիկները), կամ էլ բնական որևէ աղետի, կլիմայական փոփոխության և այլնի պարագայում (մինոսյան դարաշրջանի ավարտին Կրետե կղզին): Այստեղ կարող ենք խոսել արդեն բնաշխարհի յուրացման մասին, տարածաշրջանային ձևավորած չափորոշիչների և նրանց հետևանքով որոշ նմանություն ունեցող մոդելների ի հայտ գալու մասին: Սակայն առավել հաճախ թե՛ փոփոխված բնակլիմայական պայմանների, թե՛ ռազմավարական մայրուղիների փոփոխման պատճառով նույն վայրում առաջանում է որակապես նոր, հնից մեծապես կտրված, և դրանով իսկ առավել երիտասարդ, բայց և առավել աղքատ քաղաքակրթական համակարգ: Այն կարող է իր մեջ ներառել և բնիկների գենոֆոնդը, որը սակայն այս համատեքստում լիովին զրկվում իր էներգետիկ դաշտից, և ընդամենը «շինանյութ» հանդիսանում:

---

* Ամենավառ օրինակը միջագետքյան մոդելն է՝ առնվազն 3 տարաբնույթ, բայց պատմության դիտակետից մեկ ամբողջության մեջ հանդես եկող շերտերով.

- Անհայտ ծագման բնակչություն, արդեն ծանոթ մետաղագործությանն ու հողագործությանը
- Շումերախոս տարրի ներթափանցում, առկա տեխնոլոգիական ձեռքբերումների յուրացում, զարգացած տնտեսության, գրի, մշակույթի ստեղծում
- Աքքադախոս տարրի թափանցում, ձևավորված շումերական էթնո-մշակութային համակարգի յուրացում և դրա տարածում տրեալի սահմաններից դուրս

Այս իրողությունները հաշվի առնելով, կարո՞ղ ենք արդյոք էթնիկ հանրույթի որևէ ցուցիչ համարել հիմնարար և բացարձակ: Ըստ երևույթին՝ ոչ:

Լեզուն, ինչպես նշեցինք, ամենակարևոր ցուցիչներից մեկը լինելով հանդերձ, իր մեջ չի կարող արտացոլել պատմական իրողությունն իր ամբողջության մեջ, առավել ևս, չի կարող արծանագրել եկվոր և բնիկ տարրերի ճիշտ հարաբերակցությունը:

Հնագիտական պեղումները, որքան էլ որ լայնածավալ և ընդգրկուն լինեն, այդուհանդերձ չեն կարող ներկայացնել ամբողջական իրավիճակը. հնագիտական շերտը միշտ չէ, որ կարող է փաստել եկվոր տարրի առկայությունը, առավել ևս, եթե այդ եկվորը թափանցել է խաղաղ ճանապարհով և փոքր խմբերով: Կարող ենք արձանագրել նոր ոճ, նոր տեխնոլոգիա, հնագիտական մշակույթի կոնկրետ տարածվածություն, սակայն այս պարագայում նույնպես անհնար է հստակ տարանջատել համայնքի ներքին զարգացումները և աշխարհագրորեն բացատրելի սփռվածությունը նոր էթնիկ միավորի հանդես գալուց, եթե միայն վերջինիս հանդես գալը չի ուղեկցվել ավերածություններով և կոտորածներով: Առավել ևս դժվար է պնդել, որ միևնույն նյութական մշակույթ ունեցող թե՛ հարևան և թե՛ միմյանցից հեռու գտնվող համայնքները իրենց մեկ ընդհանրության մաս են համարել[8]:

ԴՆԹ հետազոտությունները և ներկայիս բնակչության և հնագիտական պեղումների ընթացքում ի հայտ եկած մարդաբանական նյութի համադրությունն, ըստ էության, կարող են սպառիչ և համակողմանի, և երբեմն անսպասելի պատասխան տալ, ինչպես, օրինակ, բուլղարների պարագայում: ԴՆԹ հետազոտությունները բուլղարների մոտ ապացուցեցին, որ տեղական սուբստրատը մարդաբանական առումով գրեթե անփոփոխ է մնացել, և ոչ սլավոնական ներթափանցումը, ոչ էլ առավել ևս եկվոր թյուրքական բուլղար ցեղը մարդաբանական որևէ զգալի հետք չեն թողել[9]: Նույն պատկերն ի հայտ եկավ ալանների հետնորդներ համարվող իրանախոս օսերի պարագայում. 1970-ական թվականներին անցկացված հետազոտությունները ի հայտ բերեցին առկա զգալի տեղական սուբստրատը թե մարդաբանական (կովկասիոնիկ) առումով, թե՛ նյութական մշակույթի և լեզվի մեջ[10]:

Միևնույն ժամանակ, մարդաբանական հետազոտությունների բացարձակեցումը կարող է սխալ գնահատականի հանգեցնել: Հեռու չգնալու համար վերցնենք թուրքերին: 500 տարվա նպատակամղված գործողությունների հետևանքով նրանք յուրացրին Փոքր Ասիայի համարյա թե ողջ գենոֆոնդը՝ իր հայկական, հունական, ասորական և այլ բաղադրիչներով, բայց, ըստ էության, նրանք չեն հանդիսանում և չեն կարող հանդիսանալ փոքրասիական քաղաքակրթությունների ժառանգորդը՝ քաղաքակրթական ընդհատված պարույրի պատճառով:

Վերոհիշյալի լույսի տակ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հայոց էթնոգենեզի խնդրին:

Փնտրելով կոնկրետ էթնիկ տաբրր և բացարձակեցնելով այն, մենք մեխանիկորեն մեր կազմից դուրս ենք բերում այն առավել հարուստ բազմազանությունն ու բազմաճյուղ ժառանգությունը, որն ունենք, և որը չէր կարող ձևավորվել մեկ էթնիկ տարրի գերակայությամբ: Առանձին էթնիկ տարրեր, առաջանալով Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում, և ընդ որում տարբեր արմատներից սերելով՝ թե հնդևրոպական և թե՛ ոչ հնդևրոպական (օրինակ՝ խուռիական), ի վերջո տարբեր համակարգաստեղծ գործոնների շնորհիվ հանրագումարվել են մեկ էթնոսի՝ հայերիս մեջ: Որպես այդպիսի էթնոհամակարգ, մենք մեր գենոֆոնդով, լեզվով, նյութական մշակույթով եզակի էթնոս ենք, և մեր էթնո-համակարգն իր մեջ պահպանել է վաղնջագույն ժամանակներին վերաբերող շերտեր, սակայն դրանից բնավ չի բխում, որ տվյալ էթնոհամակարգը արդեն այդ շրջանում գոյություն է ունեցել:

Ինչևիցէ, այս հարցերն առավել մանրամասն և համակողմանի քննարկման կարիք ունեն: Մենք ընդամենը փորձեցինք ներկայացնել մեթոդաբանական այն առանձնահատկությունները, որոնց անհրաժեշտ է հետևել էթնոգենետիկ գործընթացների ուսումնասիրության պարագայում:

MARIAM KHANZADYAN

(IOS)

ON SOME ASPECTS OF ETHNOGENEZIS

Any ethnos, including Armenian, is a complicated synthesis of substrate and superstrate components, formation of which may be dated back to the prehistoric and also to later periods. From this point of view there is no reason to artificially narrow

the ethnic structure, attempting to research its genesis based only on a single language, or on a single anthropological type or based on a single cultural system. Far more important is to analyze the mechanisms of emergence of this ethnos based on the emergency circumstances listed above, i. e. discover the systemizing factors that form any given ethnos.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Бромлей Ю. В., Очерки теории этноса, М., 1983, с. 58, 173-200; Арутюнов С. А., Чебоксаров Н. Н., Передача информации как механизм существования этносоциальных и биологических групп человечества; "Расы и народы", N 2, М., 1972, с. 11; Алексеев В. П., О самом раннем этапе расообразования и этногенеза, Этнос в доклассовом и раннеклассовом обществе, М., 1982, с. 37.
2. Бромлей Ю. В., Նշվ. աշխ., էջ 76:
3. Козлов В. И., Чебоксаров Н. Н., Расы и этносы в сб. Расы и общество, М., 1982, с. 95.
4. Бромлей Ю. В., Նշվ. աշխ., էջ 284-285:
5. Первобытная периферия классовых обществ, М., 1978, с. 6; Տես նաև՝ Дьяконов И. М., Типы этнических передвижений в ранней древности..., Древний Восток 4, Ер., 1983.
6. Նույն տեղում, էջ 7:
7. Бромлей Ю. В., Նշվ. աշխ., էջ 27:
8. Артамонов М. И., Этнос и археология, Теоретические основы археологии, Л., с. 6; Տես նաև՝ Քոսյան Ա., Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 112-117, 185-186:
9. Алексеев А. П., Бромлей Ю. В., К изучению роли переселений народов в формировании новых этнических общностей, Советская археология, 2, 1968, с. 37.
10. Նույն տեղում, էջ 39:

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
(ԱԻ)
ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ԸՍՏ «ԱՆԱԲԱՍԻՍ»-Ի

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի մասին կարևորագույն աղբյուրը Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունն է: Դատելով Քսենոփոնի տեղեկություններից, հույները պետք է անցած լինեին Կորդուքի՝ կարդուխների երկրի արևմտյան մասով, իսկ արևելյան մասի վերաբերյալ տեղեկություններ չկան: Քսենոփոնը հայտնում է, որ երբ կայդուխները պայման են կնքում դաշտային երկրի սատրապի հետ, որը IX սատրապությունն է, ապա հաղորդակցվում են թե՛ իրենք նրանց հետ, թե՛ նրանք իրենց հետ[1]: Չնայած հայերի և կարդուխների թշնամական հարաբերություններին, վերջիններս նույնպես հայկական ցեղ էին[2]: Հնարավոր է, որ արդեն Ք.ա. V դարի վերջին ռազմատենչ ու անկախ կարդուխները դուրս էին եկել նաև Տիգրիսի աջափնյակը, ինչը վկայված է Ք.ա. I դարի դրությամբ[3]:

Համաձայն Քսենոփոնի, կարդուխների և արմենների սահմանը Կենտրիտես գետն էր՝ ներկայիս Բոհտան-սուն: Եվ, իրոք, գետի հակառակ ափին նրանց սպասում էին Օրոնտասի և Արտուխասի արմենները և մարդերն ու խալդայները վարձկան, որոնք փորձում են արգելել հելլեններին մտնել Հայաստան: Մարդերի էթնոնիմը պահպանվել է պատմական Հայաստանի աշխարհագրական անուններում: Անշուշտ, դժվար է ասել, թե Քսենոփոնի մարդերը տվյալ ժամանակաշրջանում գտնվում էին Մարդաղիում, Մարդաստանում կամ այլուր: Բայց և այնպես, տվյալ տեղեկության մեջ Արտուխասի հիշատակումը մարդերին կապում է ավելի շուտ արևելյան Հայաստանի հետ: Համենայն դեպս, կարևոր է ընդգծել հաջորդ նախադասությունը. «Ասում էին, թե խալդայներն ազատ են և խիզախ...»: Հետևաբար, մարդերը, ինչպես փասիանները, տաոխները, հեսպերիտները, մտել են Հայաստանի մեջ, իսկ խալդայների ազատ լինելը հաստատվում է Քսենոփոնի այլ տեղեկություններով ևս:

Հետաքրքիր են հույների գետանցման մասին տեղեկությունները: Հույները գետը ձախ կողմում ունենալով, շարժվում են դեպի գետանցը, և մինչ Խեյրիսոփոսն ու իր զորամասը մտան գետը «Քսենոփոնը վերջապահ զորամասից ամենաթեթևներին վերցնելով իր հետ, ամբողջ թափով ետ վազեց նորից դեպի այն ճանապարհը, որը տանում էր վեր՝ դեպի հայկական լեռները... Թշնամիները... վախեցան շրջապատվելուց և արագ կերպով վազեցին դեպի գետից վեր տանող ճանապարհը, և հասնելով այնտեղ, բարձրացան լեռը»: Մինչև գետանցումը Քսենոփոնը նշում է, որ «տեսանելի միակ մի ճանապարհ կար, որը վեր էր տանում և կարծես ձեռակերտ լիներ»: Հավանաբար, պատմիչը նկատի ուներ հենց այս ճանապարհը, երբ գրում էր, որ վերջապահ զորամասի հետ «ամբողջ թափով ետ վազեց նորից դեպի այն ճանապարհը, որը տանում էր վեր դեպի հայկական լեռները» և թշնամիներն էլ՝ վախենալով շրջապատվելուց, վազեցին դեպի գետից վեր տանող ճանապարհը, և հասնելով այնտեղ, բարձրացան լեռը: Կարելի է եզրակացնել, որ Քսենոփոնը շարժվել է գետանցման վայրից դեպի հարավ և, եթե տվյալ ճանապարհն արդեն հիշատակված ձեռակերտ ուղին էր, ապա հայկական սարերը նույնանում են Հայկական Տավրոսի հետ:

Հելլեններն անցնում են Կենտրիտեսը Բաղեշ գետի հետ միախառնվելու շրջանից քիչ հարավ և շարժվում Բաղեշ գետի հոսանքն ի վեր, որտեղ «կարդուխների դեմ կռիվների պատճառով գետի մոտ գյուղեր չկային»: Տվյալ դեպքում խոսքը կարող է վերաբերել միայն Բաղեշ գետին, որն ավելի մոտ էր կարդուխներին և որը շատ անգամ էին անցել կարդուխները: Մտածել, որ գետը կարող էր լինել Սալնո ջուրը կամ առավել ևս Քաղիրթը, չի բխում ոչ մի փաստացի հիմքից, քանի որ Քսենոփոնն, անկասկած, կնշեր այս գետերի մասին: Նաև անհնար է, որպեսզի Քսենոփոնը չնշեր բնակավայրերի մասին, եթե հելլենները շարժվեին Բաղեշից արևմուտք, այն դեպքում, երբ հեղինակը հայտնում է, որ գետի մոտ գյուղեր չկային: Եվ, որ ամենակարևորն է, պատմիչը նշում է Տիգրիսի ակունքներն անցնելու մասին: Սակայն Արմենիայում նրանք Տիգրիսը չեն շրջանցել և Բաղեշի ակունքներն էլ նույնացրել են Տիգրիսի ակունքին:

Անցնելով «Տիգրիսի ակունքը», հույները շարժվում են մինչև Տելեբոաս գետը՝ արևմտյան Արմենիա, որի հյուպարքոսն էր Տիրիբազոսը: Տելեբոասի նույնացումը Մեղ կամ Մեղրագետի հետ

կասկածելի է, քանի որ Քսենոփոնը «Տիգրիսի ակունքներից» մինչև Տելեբոաս գետը հաշվում է տասնհինգ փարսախ (շուրջ 90 կմ), որը շատ ավելին է, քան Բաղեշի ակունքներից մինչև Մեղ գետը: Ընդ որում, եթե Տելեբոասը նույնանար Մեղ գետին, ապա հույները կմոտենային վերջինիս ակունքների շրջանից, որը Քսենոփոնի տեղեկությունից չի երևում: Մեր համոզմամբ, Տելեբոասը նույնանում է Լիզ կամ Կորի ծոր (Բալանրդ, այժմ՝ Քյոռսու) գետերից մեկի հետ:

Ելնելով արևմտյան Հայաստանի մասին Քսենոփոնի տեղեկությունից, կարելի է ենթադրել նաև արևելյան Հայաստանի գոյությունը, որի հյուսիսարևմուտքը թերևս Օրոնտասի հետ հիշատակված Արտուխասն էր: Քսենոփոնի տեղեկությունները հաստատում են միասնական երկրի գոյության մասին, որտեղ, հավանաբար, շարունակում էր պահպանվել թագավորական հին դինաստիան, որի ներկայացուցիչները երբեմն նաև սատրապներ էին: Այդպիսին էր նաև Օրոնտասը՝ պարսից արքայադստեր ամուսինը և Հայաստանի տիրակալը, որին Քսենոփոնը սատրապ չի համարում և գրում է, որ Հայաստանին իշխում էր Օրոնտասը: Սա հավանաբար, ցույց է տալիս, որ Օրոնտասը և՛ թագավոր էր, և՛ սատրապ: Արդ, որոնք էի՞ն արևմտյան Հայաստանի սահմանները: Բաղեշի հովտից մինչև Տելեբոաս գետը (Լիզ կամ Կորի ծոր) Քսենոփոնի մոտ միայն Հայաստան է: Տելեբոաս գետի մոտ արդեն նշվում է արևմտյան Հայաստանի մասին: Ելնելով այն տեղեկություններից, որ Տիրիբազոսը հույներին հետապնդում է մինչև Եփրատի (=Արածանի) վերին հոսանքի շրջանը, ապա Արածանիի վերնագավառը նույնպես մտել է արևմտյան Հայաստան վարչական միավորի մեջ: «Անաբասիս»-ի վերջում նշվում է, որ Տիրիբազոսը փասիանների, հեսպերիտների տիրակալն էր: Փասիանները տեղադրվում են Բասենում, իսկ եեսպերիաները՝ Սպերի շրջանում: Տիրիբազոսի ենթակայության տակ գտնվել են նաև տաոխները, քանի որ փասիանների երկրից՝ Բասենից, դուրս գալուց հետո, հույները մտան տաոխների երկիրը՝ Տայք: Համաձայն Քսենոփոնի, Տիրիբազոսն ուներ և՛ իր զորքը, և՛ վարձկան խալյուբներ ու տաոխներ: «Վարձկաններ» բառը վերաբերում է միայն խալյուբներին, քանի որ տաոխները մտնում էին Հայաստանի մեջ: Այսպիսով, «Անաբասիս»-ի տեղեկություններից երևում է, որ արևմտյան Հայաստան հյուսարքիան ընդգրկում էր Արածանիի վերնագավառի որոշ հատվածը, միջին և ստորին

հոսանքների տարածքները. Բասեանը. Տայքը. Սպերը: Անշուշտ. այն ունեցել է սվևլի մեծ սահմաններ. հատկապես արևմտյան ուղղությամբ. սակայն Քսենոփոնը այդ մասին լռում է: Արևելյան Հայաստանն էլ. որի սահմանների մասին տեղեկություններ չկան. պետք է տարածվեր Արածանիի վերնագավառից. Տայքից և Բասեանից արևելք:

Հույները Տելեբոասի շրջանից անցնում են տասնհինգ փարսախ և հասնում մի ապարանքի, որտեղից հույներն ամայի տարածություններով ընթանում են ևս տասնհինգ փարսախ. հասնում Եփրատի (=Արածանի) ակունքների մոտակայքը և, մինչև պորտը թրջվելով. գետանցում կատարում: Այնուհետև. խոր ձյան և դաշտի միջով հույներն անցնում են տասներեք փարսախ և էլի ինչ որոշ տարածություն և իջևանում հայկական գյուղերում: Հետաքրքիր է հետևյալ տեղեկությունը. «...զինվորներից ոմանք ետ էին մնում. և տեսնելով ինչ-որ սև տեղ, որն առաջացել էր ձյան վերանալու պատճառով, նրանք ենթադրեցին, թե ձյունը հալվել է. և իրոք այն հալվել էր մոտիկ անտառածորում գտնվող աղբյուրի հետևանքով, որը գոլորշի էր արձակում»: Աղբյուրը մասնագիտական գրականության մեջ նույնացվել է Վարշակի ջերմուկներին: Նշանակում է, հույներն անցել են աշխարհացույցյան Ծաղկոտն գավառի տարածքով[4] և, հավանաբար, ապաստանում են աշխարհացույցյան Բագրևանդի գյուղերում, որտեղ էլ Խեյրիսոփոսի և Քսենոփոնի՝ թե այդ ի՞նչ երկիր է հարցին, գեղջավագը պատասխանում է, թե Արմենիան է և հարևան երկիրը խալյուբների երկիրն է: Փաստորեն, փասիանները և տաոխները գյուղապետի համար հայեր էին և միայն խալյուբներն էին այլազգիներ[5]:

Բագրևանդից հույները շարժվում են գեղջավագի ուղեկցությամբ, որը մոտ տասնհինգ փարսախ շեղում է նրանց ճանապարհը, հավանաբար, դեպի արևելք: Գեղջավագի փախուստից հետո հույներն «այնուհետև առաջ գնացին յոթ կայան՝ օրական հինգ փարսախ, Փասիս գետի մոտ... Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ և լեռնանցքով դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալյուբները, տաոխները և փասիանները»: «Փասիս գետի մոտ» արտահայտության փոխարեն ճիշտ կլինի «Փասիս գետի երկայնքով» թարգմանությունը, քանի որ հասնելով գետին. հույները պետք է շարժվեին հոսանքին հակառակ ուղղությամբ և ակունքներից ոչ հեռու անցնեին գետը: Ճիշտ է. Քսենոփոնը չի նշում Փասիսի ակունքներն անցնելու մասին. սակայն

Փասիս-Երասխի պես մեծ գետը նրանք պետք է անցնեին ակունքների շրջանում, ինչպես անցել էին Տիգրիսը (իմա՝ Բաղեշը). Եփրատը (իմա՝ Արածանին): Հույները, հավանաբար, Երասխն անցել են պատմական Վաղարշավանի շրջանում, որտեղ ուշ ժամանակներում հայտնի էր Հովվի (Չոբանքյորփյուի) կամուրջը Մուրց գետի Արաքսի մեջ թափվելու տեղում: Թերևս այն ժամանակներում էլ լիներ փայտե կամուրջ: Լեռնանցքով դաշտ իջնելիս հույների դեմ ելնում են խալյուբները, տաոխները և փասիանները, որոնք թվարկված են հարավից հյուսիս: Քանի որ հույները Երասխը անվանում են Փասիս աջ ափից, ուրեմն փասիանները բնակվել են նաև գետի աջափնյակում, ինչպես աշխարհացույցյան Բասեան գավառը տարածվում էր Երասխից և հարավ, և հյուսիս: Փասիանները տարածվել են գետի աջ ափին և զբաղեցրել են ինչպես բուն Բասեանը, այնպես էլ Անփայտ Բասեանը՝ Վանանդը: Ներկայիս Փոթի քաղաքի շրջակայքում փասիանների երբեմնի գոյությունը ցույց է տալիս, որ փասիանները Հայաստան էին եկել Կովկասից և սկզբնապես հաստատվել Անփայտ Բասեանում և աստիճանաբար տարածվել դեպի հարավ Բասեան: Փասիանների երկրից հույները անցնում են տաոխների երկիրը: Ամենաերկար ճանապարհը Հայաստանում հույների համար տաոխների միջով անցնող հատվածն էր (շուրջ 200 կմ), որը պայմանավորված էր երկրի դժվարանցանելի բնական պայմաններով:

Տաոխների և փասիանների սահմանը ձգվել է Մեծրաց լեռներից հյուսիս, Կարմիր-Փորակ լեռներից արևմուտք: Տաոխների երկիրը հետագա Տայքն է՝ նախկին Դայաենի-Դիաուխին, որն ընդգրկել է ներկայիս Էրզրում քաղաքի շրջանը և Եփրատի վերնագավառը և, հնարավոր է, Աբունի-Հավնունիքը[6]: Ելնելով այն իրողությունից, որ Հերոդոտոսը Եփրատի ակունքները տեղադրում է Հայաստանում (I, 180), ուրեմն Դիաուխիի տարածքը համարվում է Հայաստան, իսկ Քսենոփոնի մոտ էլ փասիանների և տաոխների երկրները Հայաստան են: Հավանաբար, Բասեանում և Անփայտ Բասեանում փասիանների հաստատվելուց հետո տաոխները հետ էին քաշվել հյուսիսային ուղղությամբ և Դիաուխիի ու Տայքի միջև լրիվ նույնացում չի կարող լինել. օրինակ, Եփրատի վերնագավառը ավելի ուշ գտնվում էր աշխարհացույցյան Բարձր Հայքի կազմում: Տաոխների երկրից հույները մտնում են խալյուբների երկիրը և դուրս գալիս Հայաստանից:

Սակայն բնական պայմանները թույլ չեն տալիս հույներին խալյուբների երկրով Կղարջքով, դուրս գալ Սև ծով և նրանք հարկադրված խալյուբների երկրից անցնում են Հարպասոս-Ճորոխ գետը. և մտնում սկյութենների երկիրը և նրանց երկրով ընթանում քսան փարսախ՝ հարթավայր տեղերով դեպի գյուղերը: Ըստ Քսենոփոնի՝ «այստեղից նրանք անցան չորս կայան՝ քսան փարսախ, դեպի մեծ, բարգավաճ և մարդաշատ մի քաղաք, որը կոչվում էր Գյումնիաս»: Կղարջքից անցնելով Ճորոխը, հույներն իրենց ճանապարհը շարունակել էին Ճորոխի ձախ ափով: Հույները նախ մտել էին «սս» սկյութների (Պլինոս Ավագի սակասանները, VI. 11, 29) երկիրը՝ Ասեաց վոր գավառը[7], որից հետո շարունակել էին ճանապարհն արդեն Քսենոփոնի հիշատակած թշնամի սկյութենների երկրով: Քսենոփոնը նշում է, որ փասիանների և հեսպերիտների տիրակալը Տիրիբազոսն էր: Հեսպերիաները, որոնք իրենց անունը թողել են Սպեր գավառանվան մեջ (Ստրաբոնի Խսպիրադիսը, XI. 14. 9), ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրներին[8]: Սկյութեններ-խալդայներ անվանումը[9] հավաքական հասկացություն է, որի մեջ մտնում էին ասերն ու հեսպերիտները (իմա՝ ասպեյրները): Հույները՝ անցնելով Ճորոխը, կրկին մտել են Հայաստան և այդ մասին չեն իմացել: Գյումնիասը, որը նույնացվել է Բաբերդին, թերևս, համապատասխանում է Ճորոխի ձախ ափին գտնվող Արմանային, իսկ այն վայրը, որտեղ երեք օր հանգստացել էին հույները՝ Ապարանքի շրջանին[10]: Եթե Գյումնիասը նույնանար Բաբերդին, ապա Քսենոփոնը պետք է խոսեր այդ շրջանից Ճորոխ գետը հաղթահարելու մասին, որը շատ հարմար էր գետանցման համար: Բայց փաստորեն նման հիշատակություն չկա և այս անգամ հույներն անցել էին գետը Կղարջքից և դրանով խախտել էին ակունքների շրջանում գետերն անցնելու «ավանդույթը»: Կարևոր է նկատի ունենալ, որ հույները, եթե Կղարջքից ճանապարհը շարունակեին Ճորոխի աջ ափով, ապա նորից կմտնեին տաոխների երկիրը, ինչի մասին հիշատակություն չկա: Չնայած հեսպերիաները հիշատակվում են որպես Տիրիբազոսին ենթակա ցեղ, այդուհանդերձ հույներն անմիջականորեն չեն անցել Սպերի տարածքով և, ըստ երևույթին, նկատի է առնված հեսպերիտ-ասպեյրների այն հատվածը, որը գտնվել է Ճորոխի ձախափնյակում և ընդհանուր անունով կոչվել է սկյութեններ: Սկյութենների երկրից հույները մտնում են մակրոնների երկիրը և դուրս գալիս Հայաստանից:

Այսպիսով, «Անաբասիս»-ի վկայությունների քննությունը ցույց է տալիս, որ Սատրապական Հայաստանը կամ XIII սատրապությունը Քսենոփոնի ժամանակ շարունակում էր մնալ Աքեմենյան Պարսկաստանի խոշոր և բարգավաճ նահանգներից մեկը, որի բնակչությունը հիմնականում կազմում էին հայկական ցեղերը:

HOVHANNES KHORIKYAN
(IOS)
ON SOME PROBLEMS OF THE HISTORICAL GEOGRAPHY OF SATRAPIC ARMENIA ACCORDING TO ANABASIS

The analysis of Anabasis informations shows that Satrapic Armenia or the 13th Satrapy in Xenophon's time was one of the largest and richest parts of the Achaemenian Empire and was mainly inhabited by the Armenian tribes. According to Xenophon the 13th Satrapy under the reign of the Satrap was divided into two subdistricts: Western Armenia and maybe Eastern Armenia, which were ruled by subgovernors.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 81: Այս և հաջորդիվ մեջբերումները, որոնք առանձին հղումներով չեն տրվի մեր կողմից, ներկայացվում են ըստ սույն հրատարակության:
2. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001, էջ 273-274.
3. Նույն տեղում, էջ 274-275:
4. Վարշակի ջերմուկները գտնվել են, ըստ Ղազար Փարպեցու, Ծաղկեոտն (իմա՝ Ծաղկոտն) գավառում, որտեղ հանգստանում էր հայոց ապստամբ զորաբանակը (տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիրը Տեր-Մկրտչյան Գ. և Մալխասյան Ստ., Եր., 1982, էջ 320): Վարշակի ջերմուկների մոտ է գտնվել, հավանաբար, Փավստոս Բուզանդի հիշատակած Շահապիվանը՝ Արշակունիների բուն բանակատեղին, և մուրտաստանի աղբյուրները (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987, էջ 188): Թերևս այս մրտենիների անտառը Քսենոփոնի նշած անտառածործն է:
5. Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 96:
6. Арутюнян Н., Топонимика Урарту, Ер., 1985, с. 70-71.
7. Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 98-99:

8. Սասպերների մասին տես Խորիկյան Հ., Հերոդոտյան սասպերների տեղորոշման հարցի շուրջ. Հանրապետական գիտական նստաշրջան. Նյութերի ժողովածու. Գյումրի. 2008, էջ 138-142:

9. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Եր., 2006, էջ 117-120:

10. Հարությունյան Բ., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների. քարտեզ. Եր., 2001:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
(ԵՊՀ)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Հայաստանի նորանկախ հանրապետության առջև ծառացած բարդ խնդիրներից էր հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայ գաղթականության և որբ երեխաների խնամատարությունը:

Ցեղասպանության և համաշխարհային պատերազմի հետևանքով իրենց հայրենի օջախները լքած արևմտահայ գաղթականության և որբ մնացած երեխաների քարավանները տարածվել էին մինչև Հյուսիսային Կովկաս, Վրաստան, Բաքու, Հյուսիսային Միջագետք, Իրան և այլ երկրներ:

Որոշ տվյալներով միայն որբ երեխաների թիվը 1920 թվականին կազմում էր շուրջ 200.000, որից Թուրքիայում՝ 70.000, Հայաստանում՝ 50.000, Արաբական երկրներում՝ 25.000, այլ երկրներում՝5.000: Շուրջ 50.000 երեխա դեռևս մնում էր թուրքական հարեմներում և անապատներում, և նրանց հայտնաբերել չհաջողվեց[1]: Այդ երեխաների զգալի մասը մնացել էր թուրք-մահմեդական գերության մեջ՝ ենթակա ուծացման և ոչնչացման: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, չնայած թուրքերի հարուցած բազմաթիվ արգելքներին[2], ամբողջ Թուրքիայի տարածքում զանազան կազմակերպությունների և անհատների կողմից ձեռնարկվեց դժվարին, բայց շատ կարևոր գործ՝ որբահավաքը: Որբահավաքի նպատակն էր հայտնաբերել և ազատել այն հայ երեխաներին, որոնք թուրքերի կողմից բաժանված էին օսմանյան որբանոցների և մասնավոր անձերի միջև և բռնի իսլամացվելով, մեծացել էին իբրև թուրքեր և մահմեդականներ[3]: Այս աշխատանքների կազմակերպմանը մասնակցեցին Ազգային խնամատարությունը[4], Հայոց Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ), Ամերկոմը՝ (Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեն), բազմաթիվ հայ և օտար գործիչներ[5]: Արևելահայ

բարեգործական կազմակերպությունները ևս գործուն մասնակցություն ունեցան ազգանվեր այս գործին: Այդ կազմակերպություններից աչքի ընկան հատկապես Մոսկվայի հայկական կոմիտեն (Մհկ) և Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (Կհբը). անմասն չէր կարող մնալ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Միջագետքի և հատկապես Բակուբայի հայ գաղթականներին օգնելու և մահմեդականների մոտ գտնվող գերիներին փրկագնելու համար Հայաստանի կառավարությունը 5.000.000 վարկ է բացում[6]:

Հայոց պետականության վերականգնումից հետո ակնկալվում էր, որ Հայաստանի հանրապետությունը տեր կկանգնի աշխարհով մեկ սփռված հայ որբ մանուկներին և կապահովի նրանց ներգաղթը հայրենի երկիր:

Որբ երեխաների խնամքը հատկապես Թուրքիայում և Արաբական երկրներում հիմնականում իրականացնում էին Պոլսի Ազգային խնամատարությունը՝ 40.000, ՀԲԸՄ-ն՝ 15.000. Ամերկոմը՝ 60.000:

Դեռևս 1919թ. օգոստոսին Փարիզից հանրապետության խնամատարության նախարարությանն ուղղված նամակում Եգիպտոսի որբախնամ ընկերության նախագահ Զապել Եսայանը, համառոտ նկարագրելով ընկերության գործունեությունը, իր ցանկությունն էր հայտնում կապ հաստատել Հայաստանի կառավարության հետ: Նախագահն այն կարծիքն ուներ, որ թեև հնարավոր չէ խնամատարության բոլոր գործերը կենտրոնացնել, սակայն անհրաժեշտ է գոնե բարոյական և նյութական կապ հաստատել այն կազմակերպությունների և հաստատությունների միջև, որոնք նույն նպատակն ունեն՝ հայ որբ երեխաների խնամատարությունը:

Այդ մարմինների աշխատանքները համակարգելու, ներգաղթի, որբերի խնամակալության և տարագիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու գերապատիվ իրավունքը, Զ. Եսայանի կարծիքով. վերապահվում էր Հայաստանի Հարապետության կառավարությանը: Ի պատասխան Զ. Եսայանի նամակին, Հայաստանի վարչապետ Հ. Օհանջանյանը կարգադրում է Խնամատարության նախարարությանը՝ «ամեն կերպ քաջալերել և նույնիսկ դրամով օգնել այդ կազմակերպությանը[7]»:

Մեկ այլ որոշմամբ, Կիլիկիա ուղարկված պատվիրակ Արմեն Սասունուն հանձնարարվում է հոգ տանել Կիլիկիայում որբանոց բացելու մասին: 1919թ. հոկտեմբերին Խնամատարության և

Աշխատանքի նախարարության ընդունած որոշման մեջ ուղղակիորեն նշվում է. «Պետք է աշխատենք ռեալ մի բան անել Կիլիկիայում. որպեսզի այնտեղի հայությունն իրեն կապված զգա Հայաստանի կառավարության հետ. թեկուզ դա լինի որբանոց»[8]:

Պարզ է, որ Հայաստանի իշխանությունները ցանկություն ունեին անմիջական կապ հաստատել դրսաշխարհի գաղթականության և որբախնամ կազմակերպությունների հետ: Նրանք գիտակցում էին. որ Հայաստանը պետք է լինի աշխարհասփյուռ հայերի և որբ երեխաների վերջին հանգրվանը և ժամանակի ընթացքում հարկավոր կլինի կազմակերպել նրանց ներգաղթը. Սակայն հայտնի պատճառներով ցանկությունները դեռևս հեռու էին իրականություն դառնալուց: Որբ երեխաների առաջին հայրենադարձությունը սկսվեց միայն 1923թ-ից, երբ Երուսաղեմի «Վասպուրական» որբանոցի շուրջ 250 սաներ տեղափոխվեցին Խորհրդային Հայաստան:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունն այնպիսին էր, որ իր գոյությունը շարունակելու և բազմաթիվ ներքին խնդիրներ լուծելու համար հանրապետությունն ինքը կարիք ուներ նյութական և բարոյական աջակցության: Հայտնի է, որ հայ տարագիրների և որբերի պահպանության և խնամատարության գործում անգերազանցելի ավանդ ունեցող ՀԲԸՄ-ն, որը շուրջ 15.000 որբ երեխաների խնամք էր իրականացնում Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում և Եգիպտոսում բացված բազմաթիվ որբանոցներում, Անդրանիկ զորավարի գլխավորությամբ «Ազգային փրկություն» անունով ծավալուն հանգանակություն է կազմակերպում և 532.000 դոլլարից 150.000-ը փոխադրում Հայաստանի Հանրապետություն /մնացածը հատկացվում է Թուրքիայի և Կիլիկիայի վերապրած հայությանը/[9]:

Նման պայմաններում ավելի իրատեսական էր Հայաստանի կառավարության օգնությունը գոնե Կովկասի հայ գաղթականությանը:

Հայ և օտար կազմակերպությունների և անհատ բարեգործների կողմից արդեն 1915-1918թթ. բազմաթիվ որբանոցներ էին բացվել Թիֆլիսի, Բաքվի, Ելիզավետպոլի նահանգներում, Սուխումիում, Բաթումի մարզում: Սակայն 1918թ. թուրքական արշավանքը իր հետ բերեց ոչ միայն տասնյակ հազարավոր նոր գաղթականություն և որբ երեխաներ, այլև մեծացրեց նրանց տարածման աշխարհագրությունը: Շուրջ 650.000 հայ գաղթականներ և 50.000-ից ավելի որբ երեխաներ

ցրվելով տարածվեցին մինչև Եկատերինոդար, Ռոստով և ավելի հեռու, իսկ մեկ այլ հատված էլ ապաստանեց Սալմաստում՝ չորս կողմից կտրված հայությունից և ենթարկված ամեն պատահականության:

1918թ. թուրքական արշավանքի հետևանքով Բաթումը, Արդահանը, Կարսը, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան, Ալեքսանդրապոլը, Թալինը և Սուրմալուն զավթվել էին թուրքական զորքերի կողմից, ինչը վտանգում էր այնտեղի հայ բնակչության դրությունը:

Անդրկովկասյան հանրապետության վլուզումից հետո անկախ հռչակված Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների տարածքում ևս հայտնվեցին հայկական տարածքներ, որտեղի հայ բնակչության ճակատագիրը նույնպես վտանգված էր: Վրաստան էր հայտարարված նաև Բորչալուն, Ղազախը, Լոռին և Փամբակը: Ադրբեջանի հանրապետության ստեղծումով վտանգվեց նաև Բաքվի հայության գոյությունը, իսկ Գանձակի, Ղարաբաղի, Շամախի,Նախիջևանի և Գողթնի հայությունը կտրվեց Հայաստանի Հանրապետությունից:

Իր գոյությունը վտանգված հայությունը փրկություն էր ակնկալում: Այս բոլոր խնդիրների լուծումը բաժին ընկավ Հայաստանի առաջին հանրապետությանը:

Կառավարական հատուկ որոշումներով իր ստեղծման առաջին ամիսներից հանրապետությունը իր սուղ միջոցներից որոշ գումարներ սկսեց հատկացնել այդ նպատակների համար[10]: 1918թ. հոկտեմբերի 26-ին 500.000 ռուբլու վարկ տրամադրվեց Բաքվի հայ աղետյալներին, նոյեմբերի 4-ին 5.000.000 ռուբլու վարկ հատկացվեց Վրաստանի հայոց ազգային խորհրդին, իսկ դեկտեմբերի 3-ին 300.000 ռ. վարկ բացվեց Իրանի հայ փախստականների օգնության համար:

Համադանում, եկեղեցու՝ բակում 1918թ. կառավարության հատկացրած միջոցներով կազմակերպվում է որբանոց շուրջ 700 որբ երեխաների համար, որոնց թիվը մեկ շաբաթվա ընթացքում իջնում է 309-ի՝ մահացությունների հետևանքով: 1918թ. սեպտեմբերին 500 որբերի համար որբանոց է բացվում Շիվաքեն գյուղում[11]:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Վրաստանի հանրապետության տարածքում գտնվող հայ գաղթականության և որբ երեխաների խնամքն ընկավ Վրաստանի հայոց ազգային խորհրդի վրա: Սահմանային վեճերի հետևանքով մինչև 1919թ. մարտ ամիսը

Հայաստանի հանրապետությունը չուներ իր դիվանագիտական ներկայացուցչությունը և չէր կարող պետական մակարդակով իրականացնել հայ գաղթականության. այդ թվում որբ երեխաների խնամատարությունը: Միայն 1919թ մարտին հաջողվեց կարգավորել հայ-վրացական հարաբերությունները:

1919թ. մարտի 8-ի հայտարարությամբ Վրաստանի կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Մարտի սկզբին բացվեց հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Մ. Թումանյանի պաշտոնակատարությամբ. որին հետո փոխարինեց Լ. Եվանգուլյանը:

Հյաստանից դուրս գտնվող գաղթականներին և որբ երեխաներին օգնելու համար 1919թ. մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության Խնամատարության նախարարության ներկայացուցիչ նշանակվեց Դ. Դավիթխանյանը՝ նրան էր հանձնարարված նաև Հյուսիսային Կովկասում գտնվող հայ գաղթականների խնամատարական գործի ընդհանուր վերահսկողությունը[12]: Դեռևս 1919թ. մարտի 10-ի նիստում Հայաստանի նախարարների խորհուրդը ընդունել էր որոշում, ըստ որի՝ «Վրաստանում և Ադրբեջանում գտնված գաղթականների և որբերի խնամատարությունը պիտի հոգա Հայաստանի կառավարությունը՝ հանձինս խնամատարության նախարարության»: Այդ նպատակով Երևան են հրավիրվում Վրացահայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ՝ Անուշավան Ստամբուլցյանն ու Դավիթ Դավիթխանյանը, որոնք կառավարությանն են ներկայացնում հայ գաղթականների և որբերի խնամքի և նրանց Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ ծախսերի հաշիվները[13]:

Այսպես, միայն 1919թ. մարտից Հայաստանի Հարապետության կառավարությանը հաջողվեց պետական մակարդակով իրականացնել Վրաստանի հարապետության տարածքում հայտնված գաղթականության, այդ թվում որբ երեխաների խնամատարությունը: 1919թ. ապրիլի 25-ի Դավիթխանյանի ՀՀ Խնամատարության նախարարությանն ուղղված զեկույցում Վրաստանի որբանոցներում հայ երեխաների թիվը կազմում էր ընդամենը 2525 երեխա[14]:

Հայաստանը հազիվ էր կարողանում հոգ տանել իր տարածքում գտնվող հայ գաղթականների և որբանոցների կարիքները, իսկ նրա սահմաններից դուրս այդ աշխատանքները կրկնակի անգամ դժվար էին:

Գաղթականներին և որբ երեխաներին պահելու համար կառավարությունը հսկայական ծախսեր էր կատարում և կանգնած էր տնտեսական կրախի առջև:

Երկիրը ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու համար կառավարությունը ստիպված էր միջոցներ ձեռք առնել և առաջին հերթին՝ կրճատել հանրապետությունից դուրս կատարվող ծախսերը: Ի կենսագործումն այդ որոշման. հրահանգվեց Վրաստանի գաղթականությանը և որբախնամ մարմիններին. տեղափոխվել Հայաստան[15]:

Շատ ավելի դժվար էր Ադրբեջանի հանրապետությունում գտնվող որբ երեխաների խնամատարությունը: Չունենալով իր պաշտոնական ներկայացուցիչը Ադրբեջանում, Հայաստանի կառավարությունը իր բոլոր հարցերը լուծում էր Վրաստանի իր ներկայացուցչի միջոցով, իսկ հայ-վրացական կոնֆլիկտից հետո զրկվեց նաև այդ հնարավորությունից:

1919թ. մարտի կեսերից Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև ստեղծվում են դիվանագիտական հարաբերություններ: Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Տ. Բեգզադյանը[16]:

1919թ. Ադրբեջանում հայ որբ երեխաները, որոնց թիվը հասնում էր 1892-ի, տեղակայված էին Բաքվում՝ 900 որբ, Վարդաշեն գյուղում՝ 200, Ջաղեթում՝ 100, Նիժ գյուղում՝ 150, Նուխի քաղաքում՝ 400, Գանձակում՝ 142 երեխա:

Բոլոր որբ երեխաների խնամքի համար նախատեսված գումարների մի մասը մինչև մայիս հատկացրել էր Հայաստանի կառավարությունը, մյուս մասը՝ ծախսվել է տեղական միջոցներից /տուրքերից, հանգանակություններից և այլն/[17]:

Մայիսից այստեղի որբ երեխաների խնամքն իր վրա է վերցնում Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն և արդեն 1919թ. նոյեմբերին, Հայաստանի Խնամատարության նախարարության միջոցներով պահվող որբանոցներում երեխաների թիվը կազմում էր ընդամենը՝ 870 [18]:

1920թ. ապրիլի 1-ից Բաքվի այս որբանոցները ևս անցնում են Ամերկոմի հովանավորության տակ: Պետք է նշել. սակայն, որ Ամերկոմի

հովանավորությունը Ադրբեջանի որբ երեխաների նկատմամբ սահմանափակվում էր միայն դրամական օժանդակությամբ, որը տրամադրվում էր տեղական մարմիններից, կամ որբախնամ գործն իրականացնող պատասխանատուներից:

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացավ: Այս ժամանակի հայկական որբանոցների մասին տեղեկություններ չկան: Հնարավոր է, որ նրանց մի մասը իր հայրենակիցների հետ գաղթել է Հայաստան, մյուսները մնացել են տեղում և ցրվել զանազան վայրերում:

1920թ. հունիսից վավերաթղթերում տեղեկություններ չկան նաև Գանձակի որբանոցների մասին: Ենթադրվում է, որ դրանք նույնպես ցրվել են:

MARIAM KIRAKOSYAN

(YSU)

THE CARE OF THE REPUBLIC OF ARMENIA FOR ORPHANS IN GEORGIA AND AZERBAIJAN

One of the numerous problems in Republic of Armenia was the problem of guardianship over the orphans staying outride its border in Georgia and Azerbaijan.

In such situation it had become possible to guard the orphans in Georgia and Azerbaijan.

But hostile relations between Armenia and those republics mode this process difficult.

The only way of solving this problem was to return the children back to their country – to Armenia. And it was done.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), Բեյրութ, 1965, էջ 952:
2. Երզնկայից հայ բժիշկ Պողոսյանը Արևմտահայ խորհրդին նամակով տեղեկացնում է, որ թուրքերը դադարեցրել են հայ մանուկների հանձնումը և նույնիսկ արգելքներ են ստեղծում այդ գործով զբաղվող Մոսկվայի հայկական կոմիտեի համար: (Հայրենիք, 1918թ փետրվարի 28):
3. Այդպիսի որբանոցներ էին բացվել Էնկյուրիում, Կեսարիայում, Դամասկոսում, Անթուրայում, Բեյրութում և այլուր: Հայ երեխաների թուրքացման ծրագիրը մեծ խանդավառությամբ էր ընդունվել և իրականացվում թուրք մտավորականության կողմից (Խալիտե Էտիպ, Նիկեսր Հանըմ և ուրիշներ) և նպատակ ուներ՝ 1.

«Թուրքերում ունեցած մարդկային կորուստը լեցնելու եւ թուրք ցեղին բերելու այնքան բարձր հատկութիւններով օժտուած ցեղի մը, հայ ցեղին պատվաստը»: Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Եր., 1990, էջ 179:

4. 1918թ. Պոլսի Զավեն պատրիարքը վերադառնալով տարագրությունից. Պոլսում հիմնում է «Ազգային խնամատարություն» կազմակերպությունը՝ վերապրող հայության եոգսերր հոգալու նպատակով: Խնամատարության կենտրոնական վարչությունը ստեղծելով իր մասնաճյուղերը գավառներում՝ այստեղի շուրջ 70.000 որբ երեխաների և 800.000 տարագիրների կարիքները հոգալու նպատակ ուներ: Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, գիրք առաջին, Լոս Անջելես. 2002, էջ 25:

5. Հայ Կարմիր խաչ և Անգլիական Գաղթականական հիմնադրամը շուրջ 300.000 անգլիական ստերլինգ գումար է ուղարկում Թիֆլիսի «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանին, իբրև փրկագին՝ հայ որբ երեխաներին գերությունից ազատելու նպատակով:

6. ՀԱԱ, Ֆ. 198, ց. 1, գ. 79, թ. 2-3:

7. ՀԱԱ, ֆ. 205,ց. 1, գ.704, թ. 95-102:

8. Նույն տեղում, թ. 110:

9. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվ, ֆոնդ Ազատյան Լ., ծրար 20:

10. Վրացյան Ս., Հայաստանի Հարապետություն, Եր., 1993, էջ 202:

11. «Աշխատավոր», 16 մարտի, 1919թ.:

12. ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:

13. ՀԱԱ, Ֆ. 205, ց. 1, գ. 704, թ. 1:

14. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 528, թ. 89-91:

15. «Հառաջ», 29 դեկտեմբերի, 1919թ.:

16. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 266:

17. "Вперед", 1919թ., մարտի 26:

18. ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 750, թ. 126-129:

ՀԱՅՐ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ՀՄՃ)
ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԼՈՒՌ ՎԿԱՆ՝ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑԻՆ

«Բա՞ղդ թէ արկած պէտք է համարել
այսպիսի արտակարգ երկրի մը
ժողովուրդի մը մէջ Հայութեան
հաստուածի մը հաստատումը…»:
Տեր Թորգոմ Պատ. Գուշակեան

Հնդկահայության հարյուրամյակների պատմության լուռ վկան՝ Ս. Նազարեթ եկեղեցին, գտնվում է Հնդկաստանի Արևմտյան Բենգալիա նահանգի մայրաքաղաք Կալկաթայում: Հայերը Բենգալիա նահանգում՝ իբրև վաճառականներ, հայտնի էին Կալկաթայի հիմնադրումից ավելի քան մեկ դար առաջ (որպես հիմնադրման թիվ ընդունված է 1757թ.)[1], այսինքն ավելի վաղ, քան անգլիացիների այնտեղ հայտնվելը: 1695թ. Չինսուրայում կառուցվեց առաջին հնդկահայ եկեղեցին, որն գործող եկեղեցի է նաև այսօր:

Այսպիսով, այն թյուր կարծիքը, թե հնդկահայ գաղութը ձևավորվել է Նոր Ջուղայի հիմնադրումից հետո, իբրև Ջուղայի հայ գաղութի վերաձևում՝ անհիմն է: Այլ բան է, որ մնայուն գաղութ ի հայտ եկավ 17-րդ դարի սկզբներին, երբ որոշ թվով առևտրականներ բնակություն հաստատեցին Ս. Նազարեթ եկեղեցու մոտակա շրջաններում՝ Հուգլի գետից ոչ շատ հեռու[2]:

Հայտնի է, որ 1651թ. անգլիացիները դիմեցին Շահ Շիհուն Կայսրին՝ Բենգալիայում գործելու արտոնություն ստանալու համար, նրանց առաջնորդում էր հայ վաճառական Աղա Սարհատը: Ըստ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի՝ այդ դեսպանության հաջողության

շնորհիվ անգլիացիներր հաստատվեցին այն տարածքում, ուր ավելի ուշ հիմնադրվեց Կալկաթան[1]:

Հետագա պատմական իրադարձությունները ցույց տվեցին, որ անգլիացիների և հնդիկների միջև բախումները լինելու էին ոչ մեկ անգամ, սակայն ակնհայտ է մեկ փաստ, որ հայ և հնդիկ ժողովուրդները երբևէ որևէ հակադրություն չեն ունեցել միմյանց հետ, իսկ ավելի ուշ համատեղ պայքարել են նաև Բրիտանական գաղութատիրության դեմ, սակայն մյուս կողմից պետք է նշել, որ հայերն իրենց ներդրումն ունեցան Հնդկաստանում անգլիացիների հաջողությունների մեջ, որն, ըստ երևույթին, անխուսափելի էր: Հնդկահայ վաճառականները իբրև միջնորդ՝ 18-րդ դ. անգլոհնդկական պայքարի նշանավոր Բլասեի ճակատամարտից հետո՝ ավերումների և կորուստների դիմաց ստացան փոխհատուցում՝ 70.000 անգլիական ոսկուն համարժեք գումար, իսկ վերջիններս ընդունելով՝ այն նվիրեցին անգլիական «Արևելահնդկական ընկերությանը» (հավանական է, որ նման քայլը ենթադրում էր արտոնություններ հայ առևտրականների համար):

Ավելի ուշ՝ «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթը, անդրադառնալով անգլոհնդկական հարաբերություններին, նշում է. «Իրաւ է թէ Անգլիա հարստացած է մեծապէս շնորհիւ Հնդկաստանի, բայց երկրին մէջ ներքին պատերազմները բառնալով՝ կարգ կանոն դրած ու միլիոններ հնձող սովերը վերջացուցած է գրեթէ, նոյնպէս այրի կիներուն ողջակիզումը»[4]:

Այսպիսով, 18-րդ դարի առաջին կեսին, երբ Բանդել, Չինսուրա և Չանդերնագոր քաղաքները կորցրել էին իրենց նշանակությունը իբրև առևտրային կենտրոններ, հայ վաճառականները շտապեցին Կալկաթա:

Տեղի գաղութը, որպես ազգային կազմակերպություն, իր կանոնավոր ձևը ստացավ 1724թ., երբ Աղա Նազարեթի առատաձեռնությամբ կառուցվեց Ս. Հովհաննես Կարապետ քարաշեն եկեղեցին, մի վայրում, որտեղ ավելի քան 80 տարի առաջ հայկական գերեզմանատուն էր: Դեռևս 1707թ-ին նշված տեղում կառուցվել էր փոքրիկ փայտաշեն եկեղեցի՝ Ս. Հովհաննես անվամբ, ըստ Մեսրոպ Հակոբ Սեթի, այդ եկեղեցին կառուցվել է հայ վաճառականների կողմից[5], սակայն Թ. Գուշակյանի կարծիքով՝ այն կառուցել են Անգլիական ընկերությունները՝ ըստ պայմանավորվածության[6]:

Արամայիս Միրզայանը իր աշխատության մեջ նշում է. «վստահելի աղբյուրները ասում են, որ մատուռի տարածքը գնել է Քենանենց Փանոսը և մինչ եկեղեցու կառուցումը՝ 1724թ., այն ծառայել է որպես գերեզմանատուն: Մինչ այդ հայերի աղոթատեղին գտնվում էր գերեզմանատան հարևանությամբ»[7]:

Նորակառույց քարաշեն եկեղեցու ճարտարապետը Ջուղայեցի Լևոն Պետրոսյան է: Այս կառույցը հայտնի է իբրև Կալկաթայի առաջին քրիստոնեական եկեղեցի[8]:

Աղա Նազարեթի կառուցած եկեղեցին զանազանելու համար մոտակա Չինսուրա քաղաքի եկեղեցուց, որը նույնպես կրում էր Ս. Հովհաննես Կարապետ անվանումը, նորակառույցը կոչվեց Նազարեթի եկեղեցի, իսկ հետագայում՝ Ս. Նազարեթ: Արդարացիորեն, այս հանգամանքը Թ. Գուշակեանը համարում է «տարօրինակ քրիստոնեացություն»[9]:

1734թ. Մանվել Հազարմալյանը իր հոր՝ Չեքը (Աստվածատուր) Հազարմալյանի թողած հիմնադրամով կառուցում է եկեղեցու զանգակատունը և գմբեթը[10], իսկ 1763թ-ին Աղա Հարություն Պետրոսյանի միջոցներով կառուցվում են եկեղեցու երկու խորանները[11]: 1790թ. Խաչիկ Առաքելը վերանորոգում է եկեղեցու ներքնամասը, ավելացնում զանգակատան ժամացույցը, կառուցում երիցատուն և պարսպապատում ողջ տարածքը[12]:

Ս. Նազարեթ եկեղեցին հանրահայտ է իր ժամացույցով ու քառյակ զոռ զանգակներով, որոնց բամբ ձայնը այսօր էլ թնդեցնում է շրջակա թաղերն ամբողջությամբ՝ ազդարարելով ղրացիներին, որ հայերն աղոթքի են բռնված:

Ավելի ուշ՝ 1906 թ-ին, Արթուր Գրիգորի Աբգարը բարձրացնում է երիցատունը ևս մեկ հարկով[13]:

Ս. Նազարեթ եկեղեցին դարեր շարունակ ոչ միայն եղել է հնդկահայության հոգևոր կենտրոն, այլ աջակից է դարձել համայնքի պահպանման և գոյատևմանը: Եկեղեցին իր ֆինանսական միջոցները կուտակել է ի շնորհիվ բազմաթիվ հայորդիների բարեգործության: Հայ գաղութը և եկեղեցական վարչության անդամները բարեգործների հանդեպ իրենց երախտագիտությունը հայտնել են՝ եկեղեցու պատերին ամրացնելով մարմարե, պղնձե և բրոնզե սալիկներ, որոնք հիշատակում են նրանց գործերի մասին: Նշանավոր բարեգործներից էին՝

Արքությունների. Արգարների. Գայստունների. Ավեստումների ընտանիքները. Արաքուն Կայուսը. Հռիփսիմե Լիմբռուզենը. Սարգիս Տեր-Հովհաննեսը. Օուեն Հովհաննեսը. Հովհաննես Բոյսոգոմովը. Գևորգ Հովսեփը. Էլիասը. Ստեփան Բ. Բագրամը (Բաղրամյան). Խաչիկ Պողիկ Չեքրը. ով համարվում է Կալկաթայի հնդկահայ գաղութի բարեգործներից մեծագույնը. Դավթյան դպրոցի հիմնադիր Դավիթ Ավետիք Դավթյանը. Հովհաննես Հայկի Միքայելը և հիշատակության առժանի այլ հայրենանվերներ[14]: Խնամքով պահպանվում է նաև վերոնշյալ բարեգործների կողմից եկեղեցուն նվիրած ոսկյա, արծաթյա և այլ թանկարժեք իրերի անվանացանկը, որը կազմվել է 1924թ-ին: Այս փաստաթուղթը կարևոր է եկեղեցու ունեցվածքը պահպանելու և հաշվառելու առումով[15]:

Արևմտյան Բենգալիայի հայ եկեղեցիների հետագա պահպանման և բարգավաճման համար կարևոր էր 1888թ. Կալկաթայի հայ համայնքի կողմից հաստատված «Կալկաթայի և Չինսուրայի հայ եկեղեցիների կանոնադրությունը», որի մեջ նշվում է, որ հայ եկեղեցին և համայնքը ենթակա են Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցական իրավասությանը[16], սակայն կանոնադրությունը կիրառելու համար դեռևս ժամանակ էր անհրաժեշտ:

Եկեղեցիների պատկանելության հարցը քննարկման լայն առարկա դարձավ 20-րդ դարավերջին: 1997-1998թթ. Կալկաթայի Բարձրագույն դատարանի կողմից վերահաստատվեց 1888թ. որոշումը: 1998թ. եկեղեցական վարչության ատենապետ Սոնյա Ջոնը նամակ է հղում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին, որտեղ նշվում է, որ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարումը հանձնվում է Էջմիածնին և խնդրում հինգ օրվա ընթացքում՝ մինչև փետրվարի 18-ը, Հնդկաստան ուղարկել հոգևորական, իսկ լիազորագրի առկայության դեպքում պատրաստակամություն հայտնում պաշտպանելու հայ եկեղեցու շահերը[17]:

Ավելի ուշ՝ 1998թ. օգոստոսի 11-ին, հրավիրվում է եկեղեցու վարչության ժողով՝ վարչության վեց անդամների, երկու հրավիրված հույրերի և իրավաբանի մասնակցությամբ, այդ թվում Սոնյա Ջոնը, Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և պրն. Հերոս Ավետումը: Այստեղ որոշվում է եկեղեցին և ճեմարանը հանձնել Էջմիածնի վերահսկողությանը:

Իրավական առումով, ճեմարանի հարցը լուծում է ստանում Կալկաթայի Բարձրագույն դատարանի 1999թ. փետրվարի 15-ի որոշումով. «Նորին Սրբությանն իրավունք է տրվում ղեկավարելու և կառավարելու դպրոցի գործերն այնպես, ինչպես կցանկանա»[18] (Ընդգ.-Հայր Խ. Հովհաննիսյան):

Ավելի ուշ՝ 2000թ. մայիսի 22-ի նամակով տիկին Ս. Ջոնր Վեհափառ Հայրապետին տեղեկացնում է. որ եկեղեցու վարչության ժողովի ժամանակ (ժողովի թվականր հայտնի չէ) եկեղեցու կանոնադրությունր փոխելու որոշում է կայացվել, որով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը պետք է փոխանցվի Կալկաթայում և արվարձաններում գտնվող եկեղեցիներն ու կալվածքները[19] (Ընդգ.-Հայր Խ. Հովհաննիսյան):

Նույն թվականի մայիսի 24-ին հետևում է պատասխան նամակը Մայր Աթոռից, որով հույս է հայտնվում, որ այդ փոփոխությունները կնպաստեն Հայոց Մարդասիրական ճեմարանի և Կալկաթայի հայ համայնքի բարքօրությանը[20]:

Ի ուրախություն հնդկահայերի, քաղաքի հնագույն քրիստոնեական եկեղեցին՝ Ս. Նազարեթը, գործող եկեղեցի է, ուր այսօր էլ շարունակվում է մատուցվել Հայոց պատարագը:

Եկեղեցու տարածքում է գտնվում նաև քաղաքի և ընդհանրապես Արևմտյան Բենգալիայի հնագույն գերեզմանատունը, որտեղ իրենց հանգիստն են գտել մի շարք անվանի հայ հոգևոր, քաղաքական և հասարակական գործիչներ[21], սակայն ժամանակը և երկրի խոնավ կլիման ոչնչացրել են գերեզմանների մի մասն, այստեղ անմասն չի մնացել նաև մարդկային գործոնը:

2003թ. նոյեմբերին, եկեղեցական վարչության նախկին ատենապետ Ս. Ջոնն իր անձնական մեքենայի համար ճանապարհ բացելու պատրվակով քանդել է տվել Ս. Նազարեթ եկեղեցու այսօրվա մուտքի մոտ գտնվող շուրջ 30 պատմական գերեզման, այս վայրագությունը տեղի մամուլը համարեց «բարբարոսություն»[22]:

Ոչնչացված գերեզմանաքարերի վերաբերյալ չի կազմվել ոչ մի արձանագրություն, ուստի հայտնի չէ, թե ու՞մ գերեզմաններն են քանդվել, նման անտարբերությունը պայմանավորված է Կալկաթայի օրեցօր նվազող հայ համայնքի հետ: Այսօր, քաղաքում և նրա շրջակայքում ապրում է 120-150 հայ, որոնք փորձում են պահպանել

ազգային նկարագիրը, սակայն, ցավոք սրտի, օրեցօր շատանում են խառը ամուսնությունները:

Այսպիսով, հայկական գաղութը կարելի է համարել «մարող», թերևս Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանն է ինչ որ չափ վառ պահում համայնքի ոգին, այդ նույն կրթօջախի սաների մասնակցությամբ է, որ Ս. Նազարեթում և շրջանի մյուս հայկական եկեղեցիներում ամեն կիրակի պատարագ է մատուցվում:

1963թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ը կատարում է Հովվապետական իր առաջին այցելությունը Հնդկաստան: Հետագայում՝ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, Մայր Աթոռը գործերու ավելի լայն հնարավորություններ ստացավ, որը կարևոր է փոքրաթիվ համայնքի պահպանման և հոգսերով ապրելու համար:

2007թ. փետրվարին, Հովվապետական իր առաջին այցելությունը Հնդկաստան կատարեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ը, որին հաջորդեց երկրորդ այցելությունը 2008թ. նոյեմբերին: Այս հանգամանքը փաստում է, որ հնդկահայությունը, Ս. Նազարեթի մայր եկեղեցին, ինչպես նաև ճեմարանը գտնվում են Հայոց Հայրապետի ամենօրյա հոգատարության և օրհնության ներքո:

Ս. Նազարեթը նաև Հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնական հովանավորն ու աջակիցն է:

Հանապազօրյա աղոթքով ու ժրաջան աշխատանքով ամեն ինչ պետք է արվի, որպեսզի Նազարեթի զանգերի ղողանջը երբեք չդադարի հայորդիներին աստծո տուն աղոթքի հրավիրել՝ ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի պատիվ հայ ժողովրդի:

FATHER KHOREN HOVHANNISYAN

(ACPA)

THE CHURCH OF HOLY NAZARETH: A SILENT WITNESS TO THE HISTORICAL LEGACY OF THE ARMENIAN COMMUNITY IN INDIA

The author of the article wants to reflect on the story of the formation of the Armenian community in Kolkata and the first Christian church of the city, The Armenian Holy Church of Nazareth. The chronological order begins from the later half of the 17^{th} century and continues to this date.

The Armenian Holy Church of Nazareth and its benefactors have contributed pricelessly in the survival and preservation of the Armenians in India. Even today The Armenian Holy Church of Nazareth continues its mission of looking after the small community and keeping them in good stead in the ideals of the Bible and Mother See of Holy Etchmiadzin.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գուշակեան Թ. Պատրիարք., Հնդկահայք, Երուսաղեմ, 1941, էջ 79:
2. Հանանեան Ջ. Գ., Հայոց Մարդասիրական ճեմարան, Թեհրան, 1971, էջ 9:
3. Գուշակեան Թ. Պատրիարք, նշվ. աշխ., էջ 87:
4. «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1932, Յունուար 23:
5. Seth M. J., Armenian in India, Calcutta, 1983, p. 429.
6. Գուշակեան Թ. Պատրիարք, նշվ. աշխ., էջ 88:
7. Mirzaian A., A short record of Armenian churchcs in India and Far East, Calcutta, 1958, p. 31.
8. Հանանեան Ջ. Գ., նշվ. աշխ., էջ 11:
9. Թ. Պար. Գուշակեան, նշվ աշխ.. էջ 88:
10. Seth M. J., նշվ. աշխ., էջ 430:
11. Գուշակեան Թ. Պատրիարք, նշվ. աշխ., էջ 90:
12. Armenian Holy Charch of Nazareth, Two hundred and fiftieth anniversary, On Sunday, 24th November, 1957, p. 2.
13. Seth M. J., նշվ. աշխ., էջ 447:
14. Mirzaian A., նշվ. աշխ., էջ 31:
15. David D. A., John M., Properties of the Armenian churches, Calcutta, 1924, p. 3-17, ՀՄԾ-ի արխիվ:
16. Suit No 413 of 1888, In the court at Calcutta.
17. Փսաթ. 102/99/44, 16th February 1999, ՀՄԾ-ի արխիվ:
18. In the High Court at Calcutta Ordinary Original Civil Jurisdiction, G. A. No. 3826 of 1998, 15th February, 1999, ՀՄԾ-ի արխիվ:
19. Ս. Ջոնի նամակը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ին, 2000թ., մայիսի 22, Մայր Աթոռի արխիվ:
20. Փսսւթ. No 1157, May 24, 2000, Մայր Աթոռի արխիվ:
21. Այստեղ է ամփոփված նաև հայտնի հասարակական-քաղաքական գործիչ՝ Հովսեփ Էմինի դին:
22. Բաղումյան Տիգրան սարկավագ, Արևմտյան Բենգալիայում թաղված հայ հոգևորականները, Երևան-Կալկաթա. 2007, էջ 18:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ
(ԱԻ)
ՉԺՀ-ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Չինաստանի միջուկային համագործակցությունն Իրանի հետ սկիզբ է առել 1980-ականների կեսերին, ավելի կոնկրետ՝ 1985թ. հունիսին. գիտատեխնիկական համագործակցության շուրջ պայմանագրի ստորագրմամբ[1], որի գաղտնի՝ միջուկային համագործակցության մասով Պեկինը պարտավորվում էր օժանդակել 1984թ. Սպահանում հիմնված Իրանի գլխավոր հետազոտական գործարանի կառուցման աշխատանքներին և Իրանին սուրկրիտիկական միջուկային երկու ռեակտոր տրամադրել[2]: 1989թ. սեպտեմբերին ՉԺՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրվեց ատոմի խաղաղ օգտագործման ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագիր[3]:

1980-90-ականներին Իրանի և ՉԺՀ-ի միջուկային համագործակցության խորացմանը նպաստեց ԱՄՆ-ի ուժգին ճնշման տակ Իրանում միջուկային գործարանի կառուցման շուրջ մի շարք պայմանագրերից Թեհրանի գլխավոր մատակարարների՝ Արգենտինայի, Հնդկաստանի և այլ երկրների հրաժարումը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզումն ու Սառը պատերազմի ավարտը, երբ ԱՄՆ-ն իր գլոբալ ռազմավարության առանցք դարձրեց ԱՄՆ-ին հակազդելու ունակ ուժի կենտրոնների՝ «պոտենցիալ թշնամիների» ձևավորման կանխարգելումը[4]: Նման ուժի կենտրոններ էին դիտվում իսլամական ու սինական երկրները, որոնց թվում՝ ԻԻՀ-ը և ՉԺՀ-ը[5], որոնք արդեն իսկ 1991թ. հուլիսին Իրանում արտահայտվեցին ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետության ու կարգերի հաստատման դեմ[6]՝ պայմանագիր ստորագրելով Իրանի միջուկային ռեակտորի տեխնիկական վերազինման նպատակով չինացի վարձագետների տրամադրման ու Սպահանի միջուկային գործարանի համար (20-30 մվտ հզորությամբ) հետազոտական ռեակտոր վաճառելու վերաբերյալ[7]:

Փաստենք, որ նախքան 1991թ., Պեկինը հերքում էր համաձայնագրի առկայությունը. սակայն 1991թ. նոյեմբերին ՉԺՀ-ի արտգործնախարարը պաշտոնապես ընդունեց 1989թ. և 1991թ. Իրանի և ՉԺՀ-ի միջև միջուկային պայմանագրերի կնքման փաստը: Չինական կողմը հավաստեց, որ առաջարկվող 20 մվտ հզորությամբ հետազոտական ռեակտորը չափազանց փոքր է տարածման վտանգ ներկայացնելու առումով և Իրանին տրամադրված միավորները նախատեսված են Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալության՝ ԱԷՄԳ (IAEA) հսկողության տակ խաղաղ նպատակներով օգտագործման համար[x]:

1991թ. աշնանը ՉԺՀ նախագահ Յան Շանկունի Պակիստան և Իրան կատարած այցերը գնահատվեցին միջազգային զարգացումներում, հատկապես դրանցում ԱՄՆ-ի առաջատար դերի ստանձնման նկատմամբ Իրանի, ՉԺՀ-ի և Պակիստանի քաղաքականությունների վերանայման հնարավորություն, որոնց միջև համագործակցությունն ու հարաբերությունների ընդլայնումը պետք է հանգեցներ տարածաշրջանային անվտանգության նոր համակարգի ստեղծմանը: Արդեն իսկ 1992թ. սեպտեմբերին ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանի՝ ՉԺՀ կատարած այցի ընթացքում երկու կողմերի միջև միջուկային ոլորտում համագործակցության շուրջ պայմանագիր ստորագրվեց[9]:

1992թ. փետրվարի և 1993թ. նոյեմբերի ոչ պաշտոնական ստուգայցերից հետո ԱԷՄԳ-ի պաշտոնյաները հայտարարեցին, որ Իրանի միջուկային գործունեությունը հետապնդում է խաղաղ նպատակներ[10]: Մինչդեռ ԱՄՆ-ը՝ «համոզված լինելով» միջուկային զենքի ստեղծման Իրանի գաղտնի մտադրության մեջ, ճնշում գործադրեց ՉԺՀ-ի վրա, որն էլ 1992թ. հոկտեմբերին պաշտոնապես հրաժարվեց Իրանի հետ գործարքից՝ բացատրելով այն *տեխնիկական պատճառներով*: Սակայն դրանով փոքրամասշտաբ միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների նախագծերի ուղղությամբ չին-իրանական համագործակցությունը չդադարեց, որի մասին են վկայում կողմերի միջև 1993-95թթ. միջուկային ոլորտում ստորագրված մի շարք պայմանագրերը[11]:

Այնուհանդերձ, 1996թ. մայիսին ԱՄՆ-ի շարունակվող ճնշման տակ ՉԺՀ-ը ստիպված եղավ հրաժարվել միջուկային տեխնոլոգիաների

տրամադրման կամ երաշխավորված միջուկային ծրագրերի սատարումից[12]: 1997թ. հոկտեմբերին Պեկինը Վաշինգտոնին հավաստիացրեց համագործակցության երկու ոլորտով սահմանափակվելու և Իրանի միջուկային ծրագրերին ցուցաբերվող հետագա աջակցությունից հրաժարվելու մասին[13]: 1998թ. ԿՀՎ-ն Կոնգրեսին ներկայացվող իր զեկույցում հաստատեց, որ 1997թ. ՉԺՀ-ն դադարեցրել է ԻԻՀ-ի հետ միջուկային ոլորտում համագործակցությունը[14]:

Սակայն չին-իրանական միջուկային համագործակցության վերսկսմանը նպաստեց 2001թ. սեպտեմբերի 11-ի միջադեպը[15]: 2002թ. ապրիլին ՉԺՀ-ի նախագահ Ձիան Ձեմինի թեհրանյան այցի ընթացքում վերականգնվեց 1999թ. ԱՄՆ-ի ճնշման տակ Թեհրանի և Պեկինի միջև միջուկային ոլորտում սառեցված համագործակցությունը[16]՝ հակառակ վերջիններիս կողմից «զանգվածային ոչնչացման զենքի արտադրության ոլորտում համագործակցության փաստի» հերքումներին[17]:

Չին-իրանական միջուկային համագործակցության խորացմանը նպաստեցին նաև Աֆղանստանի հակաահաբեկչական գործողության և իրաքյան ներխուժման արդյունքում ՄԱ-ում ու Կենտրոնական Ասիայում արևմտյան ռազմահանգրվանների տեղակայումն ու ամերիկյան ուժերով իրենց երկրների «շրջապատումը»[18], միջուկային տարածման խնդրի հետ կապված ԱՄՆ-ի միակողմանի կամ երկակի ստանդարտների քաղաքականությունը[19], Հնդկաստանի ու Պակիստանի՝ դե-ֆակտո միջուկային տերություններ դառնալու փաստը, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից Միջին և Մերձավոր Արևելքի (ՄԱ) երկրների «ժողովրդավարացման» մտադրությունները: Իրանն իր անվտանգության հիմնական երաշխիք դիտելով սեփական «միջուկային զենքի ստեղծումը», հայացքը կրկին ուղղեց դեպի Պեկին: Անշուշտ, Իրանում իրաքյան կամ աֆղանական իրադարձությունների կրկնության ու ՄԱ-ի ողջ նավթն ԱՄՆ-ի հսկողության տակ հայտնվելու հեռանկարը չէր բխում նաև Պեկինի շահերից[20]:

Եվ երբ 2004թ. ԱՄՆ-ը, Թեհրանին մեղադրելով Չտարածման Պայմանագրի պայմաններին հետամուտ չլինելու մեջ, Իրանի գործը՝ «դոսյեն», առաջարկեց հանձնել ՄԱԿ-ի ԱԽ-ի քննարկմանը, ՉԺՀ-ն կասեցրեց այդ գործընթացը՝ պաշտպանելով ճգնաժամն ԱԷՄԳ-ի

շրջանակներում և երկխոսության միջոցով խաղաղ կարգավորելու շուրջ ԵՄ-ի գրաված դիրքորոշումը[21]: Պեկինը ողջունեց նաև ուրանի հարստացման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ ԱԷՄԳ-ի հավանությամբ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի՝ «եվրաեռյակի» հետ (նոյեմբերին) Իրանի համաձայնագրի ստորագրման փաստը՝ իր պատրաստակամությունն արտահայտելով ԱԷՄԳ-ի շրջանակներում խնդրի կարգավորման ուղղությամբ կառուցողական դեր ստանձնելու հարցում[22]:

2006թ. հունվարի կեսին «եվրաեռյակը» միացավ Իրանի գործը ՄԱԿ-ի ԱԽ-ի քննարկմանը հանձնելու նպատակով Ռուսաստանի և ՉԺՀ-ի աջակցության ձեռք բերման ուղղությամբ ԱՄՆ-ի դիվանագիտական ջանքերին[23]: Պեկինը, ընդունելով հանդերձ Իրանի միջուկային ծրագրի դադարեցման նպատակով որոշ միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը, բացառեց ՄԱԿ-ի ԱԽ-ի շրջանակներում հիմնախնդրի քննարկման հնարավորությունը, որի դեպքում հազիվ թե պաշտպաներ Իրանի դեմ որևէ պատժամիջոցի կիրառմանը[24]: Իսկ երբ 2006թ. փետրվարին ԱԷՄԳ-ի կառավարիչների խորհուրդը քվեարկեց Իրանի գործը ՄԱԿ-ի ԱԽ-ին հանձնելու օգտին, Պեկինը միացավ ԱԷՄԳ-ի խորհրդի մարտի 6-ի հանդիպման ընթացքում Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման խնդիրը ՄԱԿ-ի ԱԽ-ին չհանձնելու կամ խնդրի քննարկումը հետաձգելու ուղղությամբ Մոսկվայի դիվանագիտական ջանքերին[25]:

Այնուհանդերձ, 2006թ. հուլիսին ՄԱԿ-ի ԱԽ-ին ի վերջո հաջողվեց ՉԺՀ-ից, Ռուսաստանից և Ֆրանսիայից կորզել 1696-րդ բանաձևի ընդունման հավանությունը, որով նախատեսվում էր նախքան օգոստոսի 31-ը, Իրանի ուրանի հարստացման գործունեությունը չդադարեցնելու դեպքում, վերջինիս նկատմամբ ՄԱԿ-ի Խարտիայի 41-րդ հոդվածով նախատեսվող պատժամիջոցներ կիրառել[26]: Հաշվի առնելով այն փաստը, որ Իրանը չէր պատրաստվում ենթարկվել ՄԱԿ-ի ԱԽ-ի պահանջներին, Պեկինն ու Մոսկվան պատժամիջոցների պարտադրման շուրջ օգոստոսի 31-ին հաջորդած ԱԽ-ի քննարկումների ընթացքում փորձեցին դրանք նվազագույնի հասցնել, հատկապես պատժամիջոցների կիրառումն Իրանում ՉԺՀ-ի և Ռուսաստանի տնտեսական շահերին վտանգ ներկայացնելու դեպքում: ՉԺՀ-ը կիսում էր Ռուսաստանի և Եվրոպայի կարծիքն առ այն, որ Իրանի նկատմամբ

ճնշումները կարող են վերջինիս ստիպել հրաժարվել Չտարածման Պայմանագրից կամ ԱՄՆ-ի կողմից միակողմանի ռազմական գործողությունների հանգեցնել[27]:

Պեկինում քաջ գիտակցում են, որ Իրանի նկատմամբ միջազգային ճնշումը լայն իմաստով պայմանավորված է ոչ թե Թեհրանի միջուկային ծրագրերի կամ տարածաշրջանային ահաբեկչական խմբերի հովանավորման, այլ ԱՄՆ-ի և նրա որոշ դաշնակիցների, հատկապես Իսրայելի համար անհանդուրժելի իրանական քաղաքական վարչախմբի բնույթով[28]: Իր հերթին Թեհրանի քաղաքական և տնտեսական գլխավոր գործընկերը, մասնավորապես «եվրասեռյակը» հաճախ միջանկյալ դիրքորոշում է գրավում վերոնշյալ երկրների և ԱՄՆ-ի միջև[29]:

Չինացի որոշ վերլուծաբաններ գտնում են, որ Վաշինգտոնն անկողմնակալ չէ միջուկային տարածման խնդիրների հարցում, երբ Իսրայելին թույլ է տալիս միջուկային զենք ունենալ, մինչդեռ ՄԱ-ի մյուս երկրների կողմից միջուկային զենքի արտադրությունը խստորեն արգելում է: Կամ, երբ ԱՄՆ-ը 2005թ. հուլիսին Քաղաքացիական միջուկային էներգիայի համագործակցության վերաբերյալ պայմանագիր է կնքում Չտարածման Պայմանագիրը *չստորագրող կողմ համարվող* Հնդկաստանի հետ, մինչդեռ Չտարածման Պայմանագիրը *ստորագրող կողմ համարվող* Իրանին արգելում է օգտվել միջուկային տեխնելոգիաների խաղաղ օգտագործման իրավունքից[30]:

Գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում դինամիկ աճ արձանագրող ՉԺՀ տնտեսությունը շահագրգռված է ինչպես Իրանից ածխաջրածնային պաշարների ներկրման, այնպես էլ նրա տարանցիկ հնարավորությունների օգտագործման (որոնք կարող են ծառայել ոչ միայն իբրև տարածաշրջանի տնտեսության զարգացման գրավական, այլ ԱՄՆ-ի միակողմանիությանը հակազդող գործոն) և Իրանը չինական ապրանքների արտահանման շուկա դարձնելու մեջ[31]:

Այս առումով ուշագրավ է 2000թ. Հնդկաստանի, Իրանի և Ռուսաստանի միջև «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը, որի կենսունակությունն ապահովող գործոն կարող էր դառնալ նախագծին ՉԺՀ-ի մասնակցությունը[32]: Վերջինիս համալիր օգտագործումը կարող էր մեծացնել ԵՄ-ի կողմից Եվրոպա-Կովկաս-Ասիա «ՏՐԱՍԵԿԱ» միջազգային տրանսպորտային միջանցքի

արդյունավետությունը: Վերոնշյալ միջանցքների հատման կետն Իրանն է. որի տրանսպորտային հնարավորությունները՝ երկաթուղային և ավտոմայրուղային ցանցը. Շանհայի Համագործակցության Կազմակերպության (ՇՀԿ) երկրների մեծ մասին ելք է ապահովում Իրանի և Պարսից ծոցի մյուս երկրների նավթային հիմնական տերմինալների նկատմամբ[33]: Պեկինը մտադիր էր նաև մասնակցել իրանական «Նեկկա նախագծին». որով նախատեսվող նավթամուղը պետք է Թեհրանը կապեր Կասպից ծովին և մեծ քանակությամբ ղազախական նավթ արտամղեր ՉԺՀ[34]:

Թե Իրանի միջուկային գործունեության ուղղվածությունը, և թե նրա տնտեսական, ռազմաքաղաքական դերը ՄԱ-ում և նրա սահմաններից դուրս պայմանավորված է ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի և ՉԺՀ-ի միջև առկա ռազմավարական մրցակցությամբ, հատկապես այդ երկրների կողմից Իրանի նավթագազային պաշարների յուրացման գործում ձեռք բերվող գերակայությամբ: Այդ մրցապայքարում հաղթող դուրս գալու և գերակայության հասնելու նպատակով Պեկինն անշուշտ կաջակցի Թեհրանին:

AGHAVNI HARUTYUNYAN

(IOS)

ON THE NUCLEAR COOPERATION BETWEEN CHINA-IRAN

Sino-Iranian nuclear cooperation dates back to the mid-1980s (in 1985), when Iran and China signed a major bilateral agreement on scientific and technical cooperation, that included a secret side agreement on nuclear cooperation. Evidence of nuclear cooperation between China and Iran began to emerge soon thereafter, with the delivery of a small calutron in 1987 and the training of Iranian nuclear technicians in China as of 1989 under a secret nuclear cooperation agreement. assisted in the construction of Iran's primary research facility, located at Isfahan, and also agreed to supply Iran with subcritical nuclear reactors - all under International Atomic Energy Agency (IAEA) safeguards.

Chinese nuclear assistance to Iran accelerated in 1991. after the USSR collapse and when Iran's major nuclear suppliers of that time were preparing to cancel a series of contracts to build nuclear facilities in Iran as a result of intense U.S. pressure. Since the mid-1990s. China has suspended its pending nuclear deals with Iran. In the late

1990's the U.S. objected to China's assistance in the construction of Iranian uranium enrichment and conversion facilities.

Since mid-2002. the central issue has been not the extent of the material assistance that China have provided to the Iranian nuclear program in the past but the political support that Beijing has extended, or might provide. to Tehran in the face of growing pressure primarily by the U.S. and its European allies. On September 2004. like EU countries. China called for a peaceful resolution. rather than a military one. to resolve the Iran nuclear issue within the IAEA's framework through dialogue. China is opposed to referring the issue to the UN Security Council. China joined Russia on February 2006 in diplomatic efforts to ease a crisis over Iran's nuclear work before a U.N. atomic meeting and avert any sanctions.

Chinese officials have made explicit their opposition to Iran's acquiring nuclear weapons and have reportedly called upon Tehran to honor its treaty commitments and to cooperate fully with the IAEA. At the same time, they have strongly endorsed Tehran's position that. as an NPT signatory. Iran is entitled to access to nuclear technology and to nuclear energy for peaceful purposes. To the energy incentives, China's leaders fundamentally believe that conflicts should be resolved through a political and consultative manner, considering the legitimate interests of all eoncerned parties. Although Tehran is an energy source that Beijing cannot refuse and the protection of China's energy relationship with Iran is of vital importance, China must balance this relationship with its relations with the United States, its larger economic partner.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *China Backs off from Iran. The Iran Brief. Policy, Trade & Strategic Affairs. Issue No. 40. 11.10.1997. http://www.iran.org/tib/public/4001.htm; John Calabrese. China and Iran: Partners Perfectly Mismatched. Middle East Institute. Manuscript. 18.08.2006. p. 5.*
2. Bates Gill, Chinese Arms Export Tọ Iran, Middle East Review of International Affaires, Journal, Vol. 2, No. 2, May 1998;
   http://www biu.ac.il/Besa/meria/joumal/1998/issue2/jv2n2a7.html; China's Nuclear Exports and Assistance to Iran, Monterey Institute of International Studies, 09.23.2003. http://www.nti.org/db/China/niranpos.htm.
3. http://www.iimes.ru/rus/stat/2003/20-11-03.htm. Պայմանագիրն Իրանի խորհրդարանը վավերացրեց միայն 1993թ.:
4. Liu Qing, The Nonproliferation Regime: Challenges and Prospects, China International Studies, Summer 2007, Beijing, p.127.
5. *Хантингтон С., Столкновение цивилизаций, М., 2003, с. 284.*
6. FBIS-NES-91-131, 9.07.1999, p. 66.

7. Mohamed Bin Huwaidin. Mohamed Mousa Mohamed Ali Binhuwaidin. China's Relations with Arabia and the Gulf. 1949-1999. Published by Routledge. 2002, p. 168.
8. China's Nuclear Exports and Assistance to Iran. Նշվ. աշխ., էջ 2:
9. FBIS-NES-91-214, 5.11.1991. p. 80
10. John Calabrese, Iran's Nuclear Program and the IAEA Compromise. A Bridge to a Better Bargain? The Middle East Institute, 15.12.2003. http://www.parstimes.com/news/archive/2003/iran_nuclear_compromise.html
11. China's Nuclear Exports and Assistance to Iran, Նշվ. աշխ., էջ 1:
12. China Backs off from Iran, Նշվ. աշխ., էջ 1:
13. Ji Hye Shin and John J. Tkacik. Jr, China and the Middle East: A New Patron of Regional Instability. The Heritage Foundation Leadership For America. 26.09.2006. Shirly Kan. China and Proliferation of Weapons of Mass Destruction and Missiles: Policy Issues. Congressional Research Service Report for Congress. 22.07.2003, p. 7
14. China's Nuclear Exports and Assistance to Iran, Նշվ. աշխ., էջ 2:
15. Liu Qing, Նշվ. աշխ., էջ 127:
16. Задонский С.М., Современное состояние ирано-китайских отношений, Сборник "Ближний Восток и современность", М., 2003, с. 245.
17. Хуман Пеймани, Расширение двусторонних отношений между Китаем и Ираном приносит этим странам экономические и геополитические выгоды, EURASIANET, 23.2.2009. http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav053003ru.shtml; John Pomfret, U.S. May Certify China on Curbing Nuclear Exports, The Washington Post, 18.09.1997, p. A28.
18. http://www.dumacm.ru/print.php?st_id=230.
19. Liu Qing, Նշվ. աշխ., էջ 128-129:
20. http://www.dumacm.ru/print.php?st_id=230.
21. Alissa Rubin and John Daniszewski, U.N Panel Puts Iran on Notice, Los Angeles Times, 5.02.2006, p. 1; Beijing Review, 21.10.2004; Sharif Shuja, Նշվ. աշխ., էջ 9:
22. Xia Liping, International Terrorism and Anti-Terror War: Chinese Perspective. International Review, SIIS, Spring 2005, Vol. 38, p. 68; Beijing Review, 30.12.2004
23. Financial Times, 17.01.2006.
24. Neil Buckley, Richard McGregor, Russia and China Caught on the Iranian Issue, The Financial Times, 16.1.2006; http://www.inosmi.ru/translation/224844.html.
25. Alissa Rubin and John Daniszewski, Նշվ. աշխ., էջ 1; China Joins Russia in Iran Diplomacy, China Daily, 24.02.2006
26. Совет Безопасности. Организация Объединенных Наций, S/RES/1696 (2006), Резолюция 1696 (2006), принятая Советом Безопасности на его 5500-м заседании 31 июля 2006г. http://www.un.org/russian/documen/scresol/res2006/res1696.htm.
27. Ji Hye Shin and John J. Tkacik, Jr, Նշվ. աշխ., էջ 1:
28. Сажиев А. Л., Ядерная программа Ирана: история и основные этапы развития. АНАЛИТИКА, Иран, 28.05.2007.
29. Большакова П. С., Отношение Ирана с Европой как фактор укрепления региональных позиций, Роль и место Ирана в регионе, Коллективная монография, М., 2007, с. 64.
30. Liu Qing. Նշվ. աշխ., էջ 128-129:

31. ՉԺՀ Իրանի հետ ծրագրում է կառուցել մի շարք խողովակաշարեր, որոնց միջոցով հնարավոր կդառնա Պարսից ծոցի արաբական երկրների ածխաջրածնային պաշարներն արտահանել ՉԺՀ:

32. Полишук А. Н., Российско-иранское сотрудничество по реализации Международного транспортного коридора (МТК) "Сенер-Юг". Роль и место Ирана в регионе. Коллектинная монография. М., 2007. с. 161.

33. Мамедона Н. М., Иран и ШОС (Шанхайская Организация Сотрудничестна). Роль и место Ирана в регионе, Коллектинная монография. М., 2007, с. 70.

34. Sharif Shuja, նշվ. աշխ., էջ 10:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ
(ԱԻ)

ՃԱՊՈՆԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1973/74թթ. նավթային ճգնաժամը ստիպեց Ճապոնիային վերանայել իր դիրքորոշումը Մերձավոր Արևելքի (ՄԱ) երկրների նկատմամբ և քայլեր ձեռնարկել դրանց հետագա խորացման համար: Այդ ուղղությամբ Ճապոնիայի վարած ճկուն և կշռադատված քաղաքականության շնորհիվ նրան հաջողվեց ճգնաժամի ընթացքում հարթեցնել իր հարաբերությունները նավթարդյունաբերող արաբական երկրների հետ և պահպանել իր բարիդրացիական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ[1]:

Սակայն 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո տարածաշրջանում իրավիճակը կտրուկ փոխվեց: Դա պայմանավորված էր առաջին հերթին իրանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացմամբ, որն առաջին հերթին ազդեց Իրանի նավթային քաղաքականության վրա: Իրանի նավթից մեծ կախում ունեին ԱՄՆ-ի դաշնակից պետությունները, այդ թվում՝ Ճապոնիան: Էներգետիկ խնդիրների կարգավորման և տարածաշրջանում ստեղծված լարվածության թուլացման նպատակով էլ 1979թ. հուլիսին հրավիրվեց Տոկիոյի գագաթնաժողովը[2]: Սկզբնական շրջանում Ճապոնիայի քաղաքականությունը՝ ի դեմս վարչապետ Մասայոսի Օհիրոյի, ավելի հակված էր Միացյալ Նահանգների նկատմամբ դաշնակցական պարտքի կատարման ուղղությանը, որը վառ արտահայտվեց վերոնշյալ գագաթնաժողովի ժամանակ՝ Եգիպտոսին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պատրաստակամության վերաբերյալ հայտարարությամբ: Դրանով իսկ Ճապոնիան իր դեմ տրամադրեց մի շարք արաբական պետությունների, ինչպես նաև Իրանին, որոնք չէին ընդունում Անվար Սադաթի վարչակազմը[3]: Հետագայում Ճապոնիան սատարեց նաև ՄԱ-ում ԱՄՆ-ի

կողմից զինված ուժեր տեղակայելու նախաձեռնությունը[4], սակայն դեմ արտահայտվեց Սպիտակ տան կողմից նավթարդյունահանող երկրների նկատմամբ պատժամիջոցների կիրառմանը: Խնդիրն այն էր, որ Իրանը և Իրաքը Նավթ Արդյունահանող Երկրների Կազմակերպության (ՆԱԵԿ) 1979թ. հունիսի 26-27-ի գագաթնաժողովի ժամանակ հայտարարել էին նավթի գների բարձրացման (1 բարելի դիմաց 23.5 ԱՄՆ դոլար) վերաբերյալ: Մինչդեռ «ծագող արևի» երկիրը, սեփական բնական պաշարների բացակայության և դրանց ծեռքբերման նպատակով ֆինանսական միջոցների առջև չընկրկելու պայմաններում, շահագրգռված էր Իրանի հետ իր հարաբերությունների պահպանման և անխափան նավթառաքման հարցում[5]:

Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության խիստ կախվածությունը Վաշինգտոնի դիրքորոշումից նպաստեց Իրանի և Ճապոնիայի միջև հարաբերությունների լարվածությանը, որն արտահայտվեց Ճապոնիայից Իրան ներկրվող ապրանքների քանակի եռակի նվազեցմամբ[6]: Տարածաշրջանում իրավիճակն ավելի վատթարացավ Կարտերի դոկտրինայի ընդունման և Իրանի դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցների կիրառման հարցում իր դաշնակիցների միանալուն ուղղված Վաշինգտոնի կոչերի արդյունքում[7]:

Այսպիսով, ստեղծված լարված քաղաքական և տնտեսական իրավիճակում Ճապոնիան կանգնեց լուրջ երկընտրանքի առջև՝ կա՛մ պետք է խզեր իր հարաբերությունները Իրանի հետ՝ ելնելով Միացյալ Նահանգների հետ իր դաշնակցային հարաբերություններից, կա՛մ պետք է ուղիներ փնտրեր՝ ստեղծված իրադրությունում իր շահերի պաշտպանության նպատակով:

Ճապոնիան Իրանի դեմ պատժամիջոցներին միանալուն ուղղված ամերիկյան կողմի հորդորները անպատասխան էր թողնում՝ հապաղելով պարզորոշ իր դիրքորոշումն արտահայտել իրանա-ամերիկյան հարաբերությունների շուրջ: Տոկիոյի հմուտ խուսավարումը տարածաշրջանում ստեղծված իրավիճակից օգտվելու նպատակով ժամանակի շահում էր հետապնդում, որն անշուշտ իր առաջին պտուղը տվեց: Ամերիկյան դեսպանատան աշխատակիցներին պատանդ վերցնելու պատճառով ԱՄՆ-ի կողմից Իրանի նավթի գնումից հրաժարումը[8] նպաստեց Իրանում նավթի ավելցուկի առաջացմանը, որն էլ վերջինս վարծեց իրացնել ազատ շուկայի միջոցով: Ճապոնիան ծեռք

բերեց վաճառքի հանված նավթի կեսը՝ ավելի քան 3 մլն տոննա նավթ՝ 1 բարելի դիմաց վճարելով 40 ԱՄՆ դոլար: Դեռ ավելին, ձեռք բերված նավթի զգալի մասը՝ 27.7 հազար տոննա, Տոկիոն՝ ճապոնական "Շել" բաժնետիրական ընկերության միջնորդությամբ, որը միջազգային նավթային քարտելի մի մասն էր կազմում, վերավաճառեց արևմտաեվրոպական երկրների[9]: Ճապոնիայի քայլերը բնականաբար չէին կարող դրական արձագանք գտնել ԱՄՆ-ի կողմից: Խնդրի քննարկման նպատակով 1979թ. դեկտեմբերի 15-ին Ճապոնիայում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Մենսֆիլդը հանդիպում ունեցավ վարչապետ Մ. Օհիրոյի հետ: Իրանա-ամերիկյան հակասությունների առնչությամբ Վաշինգտոնը ճապոնական կառավարության նախագահի անունից երաշխավորվեց այսուհետ նմանատիպ գործարքներից ձեռնպահ մնալու ուղղությամբ[10]: Ի հեճուկս ԱՄՆ-ին տրված երաշխիքների՝ Տոկիոն այնուամենայնիվ շարունակում էր խուսավարել Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից կիրառվող պատժամիջոցներին միանալուց: Ճապոնական կառավարության խուսավարման քաղաքականության արդյունքում ճապոնական տասներկու նավթային կազմակերպություններին 1980թ. հունվարին հաջողվեց համաձայնագիր կնքել Իրանի Ազգային նավթային կորպորացիայի հետ: Համաձայնագրով նախատեսվում էր Ճապոնիա ներկրել 500 հազար բարել նավթ[11], որի դիմաց ճապոնական կողմը պարտավորվում էր գնված նավթը չվաճառել Իրանի նկատմամբ թշնամաբար տրամադրված հինգ պետությունների՝ ԱՄՆ-ին, Հարավաֆրիկյան Հանրապետությանը, Իսրայելին, Եգիպտոսին և Ֆիլիպիններին: Ավելին, Ճապոնիայի իշխող վերնախավը պատրաստակամություն էր հայտնում շարունակել Բենդեր-Խոմեյնու նավթահամալիրի[12] կառուցումը: Տոկիոն իր որոշումը հիմնավորում էր այնքանով, որքանով շինարարական աշխատանքները սկսվել էին նախքան Իրանում ամերիկացի աշխատակիցների պատանդ վերցնելը և իրանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը: Աշխատանքների շարունակման ուղղությամբ 1980թ. խորհրդարանում հայտարարությամբ հանդես էր եկել անգամ Ճապոնիայի վարչապետ Մ. Օհիրան[13]:

Բոլոր դեպքերում, իրանական հարցի շուրջ ԱՄՆ-ի քաղաքականության ոսլեծրից Ճապոնիայի շեղվելու փորձերը հանգեցրեցին ճապոնա-ամերիկյան հարաբերությունների սրմանը: Դեռ

ավելին. Ճապոնիայի «ինքնուրույն» գործելակերպը մերձավորարևելյան տարածաշրջանում Կարտերի վարչակազմը՝ ի դեմս Մ. Մենսֆիլդի, որակեց որպես դաշնակցային պարտքի ուրացում: Վաշինգտոնը Ճապոնիային պահանջեց միանալ Իրանի դեմ կիրառվող տնտեսական պատժամիջոցներին և հրաժարվել իրանական նավթի գնումից: Տեղի տալով Վաշինգտոնի կիրառած ճնշումներին՝ ճապոնական կառավարությունը 1980թ. ապրիլի 14-ին որոշում ընդունեց հետագայում նավթի ներկրումն Իրանից չավելացնելու. այսինքն՝ 1979թ. մակարդակը պահպանելու և այդ երկրին նոր փոխառությունների տրամադրումից խուսափելու ուղղությամբ: Ճապոնիայի դիրքորոշման փոփոխությունը չէր կարող անպատասխան մնալ Իրանի կողմից, որը 1980թ. ապրիլի երկրորդ կեսին 2,5 դոլարով բարձրացրեց Ճապոնիա արտահանվող նավթի գինը, ինչը 9 դոլարով թանկ էր Սաուդյան Արաբիայից արտահանվող նավթի գնից: Ճապոնական տասներկու և եվրոպական երկու նավթարդյունահանող կազմակերպություններ հրաժարվեցին նոր սահմանված գնով իրանական նավթի գնումից[14]: Ապրիլի 21-ին Իրանը որոշեց ամբողջովին ընդհատել նավթի արտահանումը Ճապոնիա[15]: Նման իրավիճակում խուսավարման քաղաքականության շարունակումն անհեթեթ գնահատվեց ճապոնական կառավարության կողմից, ուստի 1981թ. մայիսի 18-ին Բրյուսելում՝ Եվրոպայի Տնտեսական Միության (ԵՏՄ) արտաքին գործերի նախարարների խորհրդակցության ժամանակ, Տոկիոն ևս միացավ հակաիրանական տնտեսական պատժամիջոցին: Ավելին, մայիսի 23-ին Տոկիոն որոշում ընդունեց հուլիսի 2-ից, առանց արտաքին առևտրի և արդյունաբերության նախարարության հատուկ թույլտվության, արգելք դնել Իրան արտահանվող տարանցիկ բեռների[16] վրա՝ այդպիսով վերջնականապես խզելով առևտրատնտեսական հարաբերությունները Թեհրանի հետ[17]:

Առաջին հայացքից շատ տարօրինակ է թվում, որ Ճապոնիան այդչափ հեշտությամբ հրաժարվեց իրանական նավթից, որն ապահովում էր իր նավթային կարիքների 17%-ը[15], ինչն անշուշտ մեծ ցուցանիշ է: Խնդիրն այն է, որ Տոկիոյի կառավարությունը դեռևս 1973/74թթ. նավթային առաջին ճգնաժամից հետո մշակել էր էներգետիկ քաղաքականություն[18] հետևյալ ուղղություններով՝ էներգետիկ աղբյուրների տարորոշում, նավթային պահուստարանների ստեղծում և

նավթառաքման այլընտրանքային աղբյուրների ապահովում[19]: Ճապոնիայի կառավարությունը 1966-1974թթ. ընթացքում ստեղծեց 45 ճապոնական նավթարդյունաբերող կազմակերպություններ, որոնք իրենց հետազոտական աշխատանքները ծավալեցին Աֆրիկայում (Նիգերիա, Զաիր, Մադագասկար), Հյուսիսային Ամերիկայում (Ալյասկա, Կանադա, Մեքսիկա[20]), Հարավային Ամերիկայում (Պերու, Հոնդուրաս և Կոլումբիա), Հարավ-Արևելյան Ասիայում (հատկապես՝ Ինդոնեզիայում[21]), Չինաստանում[22] և ԽՍՀՄ-ում[23]: Հաշվի առնելով Իրանի տնտեսության կախվածության հսնգամանքը նավթի արտահանումից, պաշտոնական Տոկիոն *կարճատև* պայմանագրեր կնքեց մի շարք նավթարդյունաբերող պետությունների՝ Վենեսուելայի, Ինդոնեզիայի, Քուվեյթի և Կատարի հետ: Պայմանագիր կնքվեց նաև Սաուդյան Արաբիայի հետ՝ վերջինիցս ներկրվող նավթի քանակն ավելացնելու նպատակով[24]:

Փաստորեն, մերձավորարևելյան նավթից կախվածության թուլացման նպատակով *էներգետիկ աղբյուրների տարբերաշման* քաղաքականությանն ուղղված քայլերը Տոկիոյին հնարավորություն ընձեռեցին խուսափել նավթային երկրորդ ճգնաժամի աղետալի վնասներից:

Տոկիոյի էներգետիկ քաղաքականության *երկրորդ կարևորագույն ուղղությունը* նավթային պահուստների ստեղծումն էր, որի վերաբերյալ 1975թ. ընդունված օրենքի համաձայն[25] հնարավոր տնտեսական ճգնաժամերից խուսափելու համար Ճապոնիան տարեկան 10 օրվա նավթային պաշար պետք է կուտակեր[26]: 1980թ. դրությամբ Ճապոնիան արդեն ուներ 105 օրվա նավթային պաշար[27], որից յոթնօրյա պաշարը պատկանում էր կառավարական նավթային կազմակերպություններին: Եվ հենց նավթային պաշարների պահեստավորման քաղաքականության շնորհիվ էր, որ իրանական նավթի ընդհատումը չազդեց Ճապոնիայի տնտեսության վրա:

Էներգետիկ քաղաքականության *երրորդ ուղղությունը* նավթից կախվածությունը թուլացնող վառելիքի այլընտրանքային միջոցների զարգացումն էր[28]: Վերոնշյալ ուղղության զարգացման ջատագովն էր Ճապոնիայի արտաքին առևտրի և արդյունաբերության վտխնախարար՝ Նաոխիրո Ամայը, որի կարծիքով օգտագործվող նավթի ծավալները *քարածուխով*[29] և *ատոմային էներգիայով*

փոխարինելու դեպքում տարեկան 15 մլն տոննայով կկրճատվեր օգտագործվող նավթի քանակը[30]:

Այսպիսով, Ճապոնիան, հաշվի առնելով 1973/74թթ. ճգնաժամի դառը փորձը, կարողացավ համապատասխան քայլեր ձեռնարկել՝ Իրանից ներկրվող նավթի ծավալների կրճատման կամ ընդհատման հետևանքով երկրի տնտեսությանը հարուցող մեծ վնասներից խուսափելու և խոշոր ցնցումներից զերծ պահելու ուղղությամբ:

YEVA HARUTYUNYAN

(IOS)

JAPANESE - IRANIAN RELATIONS DURING THE SECOND OIL CRISIS

After the first "oil shock", Japan increased its involvement in the world politics. This was largely prompted by Tokyo's vigorous attempts to diversify its energy fuel trade partners and to gain a hold over the Middle and Near East which have primary importance for Japan as importers of minerals.

But after the Islamic Revolution in Iran, relations between USA and Iran were deteriorated. These events sharply changed the situation in the Middle East. The USA imposed political, economical and military sanctions against Iran and claimed its allies to join them.

Under these circumstances, Japan stood between alternative: either Japan had to keep its relations with USA, or found ways to protect its economical interests in Iran as Japanese economy depended on oil export, especially, 17 % of which was exported from Iran.

That's why Japanese ruling circles didn't hesitate to express its own official position on American-Iranian relations trying to gain time and make use of this situation. Due to Japanese flexible policy, Tokyo joined Iranian sanctions only in 1981.

It should be mentioned that Iranian embargo didn't have great influence on Japanese economy due to Japanese energy program, which Tokyo adopted after the first "oil shock". This energy program consists of the following directions: safely oil support, making oil reserves and developing alternative sources.

Eventually, Japan, due to the efforts which have been based on previous experiences of 1973-1974 fuel and energy crisis, could do some steps for the avoidance of economical shock in their country.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս մասին մանրամասն տե՛ս Հարությունյան Ե., Ճապոնիայի քաղաքականությունը մերձավորարևելյան որոշ երկրների նկատմամբ 1973թ նավթային ճգնաժամի ընթացքում. Մերձավոր Արևելք. հոդվածների ժողովածու. V, Եր., 2008, էջ 87:
2. О Токийском совещании «Семерки». ТАСС. БПИ N 139, 19.07.1979, с 13.
3. Հովհաննիսյան Ն. Հ., Իրան, Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Եր., 2004, էջ 51:
4. ԱՄՆ ՄԱ-ն հայտարարեց իր "կենսական շահերի" տարածաշրջան և կայունության հաստատելու նպատակով ՆԱՏՕ-ի շրջանակներում շարժական հարվածային ուժեր տեղակայեց: Օդային հարվածի գլխավոր նպատակը լինելու էր 77 ռեակտիվ կործանիչ "F-14" տիպի ինքնաթիռների և "Ֆենիքս" (Fcnix) տեսակի հրթիռների ոչնչացումը, որոնք Միացյալ Նահանգները վաճառել էին Իրանին դեռևս շահի գահակալության տարիներին: Ավելին, Սպիտակ տունը, ելնելով Միացյալ Նահանգների "անվտանգության նկատառումներից", Սաուդյան Արաբիայի, Օմանի, Հյուսիսային Եմենի, Սոմալիի, Քենիայի, Իսրայելի ու Եգիպտոսի համար ռազմական օգնության ծրագրեր էր նախատեսում: Այս մասին տե՛ս Հարությունյան Ա. Ա., ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի ե ճգնաժամի ընթացքում (1975-1991թթ.), Եր., 2008, էջ 96; Бьюкен Д., США изучает варианты новой роли в Персидском заливе, ТАСС. БПИ N 136, 16.07.1979, с. 40. Ավելին, Վաշինգտոնը հայտարարել էր, որ ամերիկյան նավատորմը հարկ եղած ժամանակ կշրջափակի Հորմուզի նեղուցը, որի միջոցով Իրանի նավթն արտահանվում էր այլ երկրներ: Այս մասին տե՛ս Журнал «Тайм» о конфликте между США и Ираном, ТАСС. БПИ N 234, 3.12.1979, с. 10.
5. Ճապոնիայի նավթային պահանջարկի 99%-ն ապահովվում է առաքման միջոցով, որի անխափան իրականացման համար վերջինս դիմեց «պաշարների դիվանագիտություն» քաղաքականությանը, որը երկարաժամկետ նավթային պաշարների անխափան առաքման նպատակ էր հետապնդում: Այս մասին տե՛ս Стрельцов Ю. Д., Азиатские аспекты государственной политики Японии в сфере энергоснабжения, Глобальные вызовы-японский ответ, М., 2008, с. 204.
6. Рождественская Д. С., Внешнеполитические связи Исламской республики Иран с развитыми капиталистическими странами, Иран: История и современность, Сб. Статей, М., 1983, с. 174.
7. Հատկանշական է այն փաստը, որ սկզբնական շրջանում ԱՄՆ-ի դաշնակիցների մեծ մասը չեզոք դիրք էին զբաղեցնում և չէին ցանկանում միանալ պատժամիջոցներին: Դաշնակիցների նմանօրինակ մոտեցման վերաբերյալ Ջ. Կարտերի օգնականներից մեկն ասել էր, որ նախագահը հիասթափված է, բայց զարմացած չէ այն բանից, որ ԱՄՆ-ի դաշնակիցները չեն ցանկանում միանալ Իրանի դեմ իրականացվող պատժամիջոցներին: Դաշնակիցների նմանօրինակ դիրքորոշումը պայմանավորված էր նրանով, որ արաբական աշխարհի պահպանողական որոշ իշխանություններ, չնայած նրան, որ չէին ընդունում Իրանի կողմից ԱՄՆ-ի նկատմամբ իրականացվող գործողությունները (հատկապես՝ ամերիկյան դեսպանատան աշխատակիցների պատանդ վերցնելը), սակայն լռում էին այդ մասին՝ վախենալով վատթարացնել իրենց հարաբերությունները Իրանի

հետ, իսկ մյուս պետություններն էլ (մասնավորապես՝ Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը) մտավախություն ունեին, որ Միացյալ Նահանգների գործողությունները խրախուսելու դեպքում, վերջիններս իրենց նավերը կուղարկեն Պարսից ծոց, ինչն ավելի կսրի հակաամերիկյան տրամադրությունները իրենց երկրի ներսում և կնպաստի իսլամական հեղափոխության տարածմանը: Այս մասին տե՛ս Cleveland William L., A History of The Modern Middle East. Boulder: Westview Press, 1994, p. 115; Журнал «Тайм» о конфликте между США и Ираном, ТАСС. БПИ N 234, 3.12.1979, с. 9.

8. Մինչ այդ ԱՄՆ Իրանից գնում էր 1 օրում 900 հազար բարել նավթ, որը կազմում էր ԱՄՆ առաքվող նավթի 9%-ը: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Ն. Հ., նշվ. աշխ., էջ 49:

9. Դա Ճապոնիայի պատմության ընթացքում առաջին դեպքն էր, երբ ճապոնական կազմակերպությունը միջնորդ էր հանդիսանում նավթ վաճառելու հարցում: Այս մասին տե՛ս Богатуров А. Д., Японская дипломатия в борьве за источники энергетического сырья (1970-1980гг.), М., 1988, с. 124.

10. Նույն տեղում, էջ 125:

11. Рождественская Д. С., նշվ. աշխ., էջ 182:

12. Նախքան Իրանի Իսլամական հեղափոխությունը, վերոնշյալ նավթահամալիրն անվանվում էին Բենդեր-Շապուրեյի:

13. Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 126:

14. Ընդհանուր առմամբ այս կազմակերպությունները իրար հետ միասին 1 օրվա ընթացքում գնում էին 750-800 հազար բարել նավթ: Այս մասին տե՛ս Рождественская Д. С., նշվ. աշխ., էջ 178:

15. Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 127:

16. Վերոնշյալ որոշումը չէր տարածվում դեղորայքների և մթերքների վրա:

17. Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ128:

18. Ульяничев С. С., Энергетика Японии: экономические проблемы развития, М., 1981, с. 110; Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 122: Տարբեր տվյալներ գոյություն ունեն 1979թ. դրությամբ Իրանից Տոկիո առաքվող նավթի քանակի վերաբերյալ, որոնք տատանվում են 11-17%-ի սահմաններում:

19. Ульяничев С. С., նշվ. աշխ., էջ 110:

20. Նույն տեղում, էջ 103:

21. Նախատեսվում էր Մեքսիկայից Ճապոնիա ներկրել 20.000-30.000 բարել 1 օրում, որի դիմաց Ճապոնիան պարտավորվել էր 1 մլրդ 285 մլն ԱՄՆ դոլարի վարկ տրամադրել Մեքսիկային: Այս մասին տե՛ս Кучко В., Энергетические провлемы Японии, ТАСС. БПИ N 129, 05.07.1979, с. 31.

22. Ճապոնիան Ինդոնեզիայից 1978թ. ներկրել էր իր նավթային պահանջարկի 12%-ը, որի դիմաց տրամադրել էր վերջինիս 160 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ ճապոնական կազմակերպությունների կողմից նավթի հետազոտական աշխատանքների իրականացման համար: Այս մասին տե՛ս Кучко В., Энергетические провлемы Японии, ТАСС. БПИ N 129, 05.07.1979, с. 32.

23. Տոկիոն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Պեկինի հետ միայն այն բանից հետո, երբ ԱՄՆ 1970-ականների սկզբին սկսեց մերձենալ Չինաստանի հետ: Տոկիոյի և Պեկինի պաշտոնական հարաբերությունների սկիզբը հանդիսացավ

1978թ. օգոստոսի 12-ին կնքած խաղաղության և բարեկամության պայմանագիրը: Այս մասին տես Алиев Р. Ш.-А., Внешняя политика Японии в 70-х- начале 80-х годов, М., 1986, с. 237

24. Кучко В., Энергетические проблемы Японии, ТАСС. БПИ N 129, 05.07.1979, с. 31.

25. Ըստ այդ պայմանագրի՝ Սաուդյան Արաբիայից Ճապոնիս պետք է առաքվեր մեկ օրում 600 հազար բարել նավթի փոխարեն 1 մլն 400 հազար բարել նավթ: Այս մասին տես Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 129; Ульяничев С. С., նշվ. աշխ., էջ 114

26. 石油の ひちくの かくほ などに かんする ほりつ. 27.12.1975. (Օրենք նավթային պահուստի ապահովման վերաբերյալ, 27.12.1975): Այս մասին տե՛ս http://www.law.e-gov.go.jp/cgi-bin/idxsearch.cgi

27. Այսօր Տոկիոն իր վերգետնյա և ստորգետնյա պահեստներում ունի մոտ 600 մլն բարել նավթ, որը համարժեք է 172 օր սպառմանը: Այս քաղաքականությունն ուղղված էր թուլացնելու կախվածությունը համաշխարհային նավթային շուկայի գնային տատանումներից: Այս մասին տե՛ս Носова И. А., Энергетическая дипломатия Японии, Ежегодник, Япония 2004-2005, М., 2005, с. 88.

28. Ըստ որոշ աղբյուրների՝ 1980թ. դրությամբ Ճապոնիան ուներ 95 օրվա նավթային պաշար: Այս մասին տե՛ս Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 129:

29. Кучко В., Энергетические проблемы Японии, ТАСС. БПИ N 129, 05.07.1979, с. 34.

30. Քարածուխը Ճապոնիս էր առաքվում մեծամասամբ ԱՄՆ-ից՝ համաձայն վերջինիս հետ 1969թ. կնքած պայմանագրի: Ըստ այդ պայմանագրի՝ ԱՄՆ պարտավորվում էր 13 տարվա ընթացքում Ավստրալիայից Ճապոնիա ներմուծել 85 մլն. տոնն քարածուխ: Սկսած 1980թ.-ից՝ Ճապոնիան քարածուխ էր առաքում նաև Չինաստանից՝ վերջինիս տրամադրելով 200 մլն ԱՄՆ դոլարի փոխառություն՝ Շանսի և Հեբեյի քարածխի հանքավայրերում հետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Այս մասին տե՛ս Ульяничев С. С., նշվ. աշխ., էջ 116; Богатуров А. Д., նշվ. աշխ., էջ 172:

31. 1979թ. ճապոնական կառավարությունը 12 մլրդ դոլար էր հատկացրել ատոմային էներգիայի զարգացման նպատակով: Հատկանշական է այն փաստը, որ 1978/79թթ. դրությամբ երկրում արդեն գործում էին 19 ատոմաէլեկտրակայաններ (ԱԷԿ), որոնց ընդհանուր հզորությունը 12,6 մլն կՎտ էր: Տոկիոն պլանավորում էր մինչև 1985թ. ավելացնել ԱԷԿ-ների քանակը 5,4%-ով: Այս մասին տե՛ս Ульяничев С. С., նշվ. աշխ., էջ 111; Западная печать ов энергетическом кризисе, ТАСС. БПИ N 160, 17.08.1979, с. 16.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
(ԱԻ)

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱԼԵՎԻՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Թուրքիան, ինչպես Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրները, ունի թե էթնիկ և թե կրոնական խայտաբղետ բնակչություն, որը պահպանել է իր կրոնական և էթնիկ առանձնահատկությունները հատկապես ոչ մեծ քաղաքներում և գյուղական վայրերում: Թուրքիայի բնակչությունը կազմում է մոտ 71 մլն., որի 80%-ը թուրքեր են, մոտ 19%-ը՝ քրդեր: Երկրում բնակվում են նաև արաբներ, հայեր, հույներ, լազեր, վրացիներ, բուլղարներ, հրեաներ[1]: Կրոնական մեծամասնություն են կազմում իսլամի սուննի ճյուղի հետևորդները: Նրանցից հետո թվաքանակով երկրորդ մեծ կրոնական համայնքը Թուրքիայում ալևիներն են, ովքեր կազմում են բնակչության մոտ 15-20 տոկոսը՝ մոտ 12-15 միլիոն մարդ, ըստ "Minority Rights Group International" միջազգային կազմակերպության 2004թ. հրապարակած զեկույցի, իսկ Ամերիկայի պետդեպարտամենտի 2006թ. հրապարակած տվյալների համաձայն՝ ալևիների թիվը Թուրքիայում հասնում է մինչև 20 միլիոնի: Ալևիական համայնքը մեծամասնորեն կազմված է թուրքերից, իսկ մոտ մեկ հինգերորդը կազմում են քրդերը[2]:

Սկսած 1925թ. Մուստաֆա Քեմալի հրամանով փակվեցին ալևիական բոլոր միաբանությունները, դադարեց նրանց գործունեությունը: Այս իրավիճակը տևեց մինչև 1990-ական թթ., երբ ալևիները՝ որպես առանձին կրոնական համայնք, սկսեցին քիչ թե շատ ակտիվորեն հանդես գալ նախագահ Թուրգութ Օզալի կողմից իրականացվող բարեփոխումների քաղաքականության արդյունքում, ինչին հետագայում նպաստեց նաև Թուրքիայի Եվրոմիութեանը ճանապարհը բռնելու գործընթացը: Համեմատաբար ազատություն տրվեց մամուլին, ալևի մտավորականները և համայնքի ղեկավարները սկսեցին զբաղվել ալևիների ինքնության պարզաբանմանը և ծագմանը վերաբերվող խնդիրներով, ավանդույթները,

պատմությունը լուսաբանելով: 1990-1995 թթ. ընթացքում այևիների մասին մի շարք գրքեր տպագրվեցին. չնայած պետք է նշել, որ այս հրատարակված աշխատությունների մի մասը հիմնականում առաջ էին քաշում պետությանը հարմար տեսակետներ. Ամբողջ երկրի տարածքով մեկ բացվեցին ալևիական միություններ, փորձեր արվեցին ստեղծել հասարակական գործունեություն ծավալող կազմակերպություններ և միություններ, որոնցից են՝ «Ալևի-Բեքթաշիների ֆեդերացիան», «Ալևի-Բեքթաշիների կրթության և մշակույթի վաքֆը», «Ջեմ վաքֆը», «Հաջի Բեքթաշ Վելի մշակութային միությունը», «Փիր Սուլթան Աբդալ մշակութային միությունը», «Շահքուլու Սուլթան Դերգահը» և այլն[3]: Սակայն, առկա ճնշումների պատճառով այս կազմակերպությունները առ այսօր այդպես էլ չկարողացան ակտիվ գործունեություն ծավալել:

Ըստ մեր՝ ալևիական տեղեկատվական աղբյուրներում տեղ գտած հրապարակումների և մամուլում տպագրված նյութերի կատարած ուսումնասիրության՝ սկսած 1990-ական թվականների վերջերից ալևիներն արդեն ունեն հստակ ձևավորված պահանջներ, որոնք կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- Իրավահավասարությունը, այսինքն՝ հարգելով ալևիների կրոնական պատկանելությունը՝ նրանց ճանաչել որպես Թուրքիայի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ՝ վերջ դնելով նրանց նկատմամբ մերժողական վերաբերմունքին: Ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ այսպիսի վերաբերմունքն ամրագրվել է 1923թ. կնքված Լոզանի պայմանագրով, ըստ որի Թուրքիան, բացի թուրք ազգից, չի ճանաչում իր տարածքում բնակվող որևէ այլ ազգային տարր, իսկ որպես կրոնական փոքրամասնություն՝ ճանաչում է միայն հայերին, հույներին և հրեաներին[4]:
- Դպրոցներում կրոնի պարտադիր դասերը դարձնել ընտրությամբ կամ դասերի ժամանակ ուսուցանել ալևիականություն, քանի որ դասավանդվում է միայն սուննիզմ և այդ դասերի ընթացքում շատ հաճախ աշակերտներին ստիպում են նամազ անել, ինչը հիմնականում անընդունելի է ալևիների համար: Հայտնի են դեպքեր, երբ նամազ չանելու համար դպրոցականները ենթարկվել են ծեծի[5]:

- Ալևիներին առնել կրոնի հարցերով նախարարության հովանավորության տակ. հոգալ նաև նրանց խնդիրները. քանի որ հիմնականում այս նախարարության գործունեությունը նպատակաուղղված է Թուրքիայում սուննիզմի տարածմանը և ամրապնդմանը բնակչության շրջանում:
- Ալևիական աղոթատեղիները. որոնք ալևիներն անվանում են ջեմէվիներ. ճանաչել որպես օրինական հոգևոր հաստատություններ. որտեղ նրանք կկարողանան կատարել իրենց ծեսերը. և վերցնել դրանք պետական խնամակալության տակ, քանի որ ալևիները ևս. Թուրքիայի մյուս բոլոր քաղաքացիների նման. պետությանը վճարում են հարկեր. որոնք, սակայն, նպաստում են մզկիթներ կառուցելուն և սուննիզմի տարածմանը:
- Ճանաչել ալևիական միությունները և կազմակերպությունները: Այս պահանջի իրագործումն ալևիներին հարկավոր է հատկապես երկրի քաղաքական կյանքում իրենց մասնակցությունն ունենալու համար:
- Թանգարանի վերածել Սվազում գտնվող «Մադըմաք» հյուրանոցը:

Վերջին կետին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հանգամանորեն. քանի որ Սվազում 1978թ. և 1993թ., և Ստամբուլում 1995թ. տեղի ունեցած արյունալի իրադարձությունները խորը հետք թողեցին ալևիների շրջանում և խորացրեցին նրանց և պետության միջև անջրպետը՝ ալևիների համար պարզ դարձնելով, որ իրենք թուրքական իշխանությունների համար դիտվում են որպես «օտար տարր» երկրի ներսում:

1978թ. սեպտեմբերի 4-ին սկսած ալևի-սուննիական բախումների համար սկիզբ է հանդիսացել Սվազի Չուքուրթարլա կոչվող թաղամասում տեղի ունեցած մի պայթյուն: Այդ պայթյունը սուննիները վերագրում են ալևիներին. և այդ մասին հայտարարելով, մեքենաներով շրջում քաղաքում: Տեղի են ունենում արյունալի բախումներ ալևիների և սուննիների միջև: Իբրև թե դեպքերը հետաքննելու և մեղավորներին բացահայտելու նպատակով՝ Թուրքիայի իրավապահ մարմինների կողմից կատարվում են բազմաթիվ բնակարանների անտեղի խուզարկություններ: Սակայն, իրական մեղավորները մնում են անպատիժ":

Չնայած ալևիների և սուննիների միջև լարված հարաբերություններին՝ լուրջ բախումներ, այնուամենայնիվ, մինչև 1990-ական թվականները տեղի չեն ունենում:

1993թ. հուլիսին Ֆիր Սուլթան Աբդալին նվիրված տոնակատարության շրջանակներում նույնանուն միությունը Սվազի «Մադըմաք» կոչվող հյուրանոցում կազմակերպում է մշակութային փառատոն, որին բռնությամբ միջամտում է ցուցարար աջակողմյանների մի մեծ խումբ՝ հարձակվելով և տապալելով Ֆիր Սուլթան Աբդալի արձանը: Սվազի քաղաքապետը, ով իսլամիստական ուղղվածության՝ Բարօրության կուսակցության անդամ էր, ելույթ է ունենում իբրև թե կրքերը հանդարտեցնելու նպատակով, փոխարենը ավելի է քաջալերում ցուցարարներին, ովքեր շրջափակում են հյուրանոցը և հրկիզում: Հրդեհը պատճառ է հանդիսանում երեսունյոթ մարդու մահվան[7]:

1993թ. Սվազի դեպքերին հաջորդում են Ստամբուլի Գազիի թաղամասում տեղի ունեցած իրադարձությունները, երբ 1995թ. մարտի 12-ին անհայտ զինված անձը մեքենայից կրակ է բացում հինգ թեյարանների վրա՝ սպանելով մեկ և վիրավորելով բազմաթիվ մարդկանց: Գազիի թաղամասի բնակիչները դուրս են գալիս փողոց, շարժվում դեպի ոստիկանական տեղամաս, կառուցում բարիկադներ և սկսում քարեր նետել ոստիկանների վրա՝ համոզված լինելով, որ ոստիկանությունը ներգրավված է ահաբեկչության մեջ: Մի քանի օր տևած խռովությունների ընթացքում ոստիկանությունն ամբոխը ցրելու ընդունված միջոցները կիրառելու փոխարեն պարբերաբար կրակում է ցուցարարների վրա, որի արդյունքում սպանվում է տասնհինգ մարդ:

Վերջին տասնամյակների ընթացքում թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունը ալևիների նկատմամբ և հատկապես վերոնշյալ բախումները էլ ավելի արմատականացրեցին ալևիների պայքարն իրենց իրավունքների համար, և ահա երկարատև լարված լռությունից հետո 2008թ. նոյեմբերի 10-ին Անկարայում, Թուրքիայի պատմության նորագույն շրջանում առաջին անգամ, ալևիները կազմակերպեցին մի հանրահավաք, որին մասնակցում էր երկրում բնակվող ալևիական համայնքի մոտ հիսուն հազար ներկայացուցիչ, ովքեր հանրահավաքի միջոցով իրենց պահանջները իշխանություններին ներկայացնելու նպատակով մայրաքաղաք էին

ժամանել երկրի տարբեր շրջաններից: Հանրահավաքը պաշտոնապես կազմակերպված էր «Ալևի-բեքթաշիների ֆեդերացիայի» կողմից[8]:

Հանրահավաքի մասնակիցները ներկայացրեցին իրենց վերոնշյալ խնդիրները հիմնականում շեշտադրելով երկրում ալևիական համայնքի գոյության և նրա ներկայացուցիչների իրավունքները ճանաչելու պահանջները: Հատկանշական է, որ մասնակիցները անընդհատ բղավում էին «Թուրքիան աշխարհիկ է, աշխարհիկ էլ կմնա» խոսքերը[9]:

Անհրաժեշտ է նշել, որ այս հանրահավաքը ոչ բոլոր ալևիների կողմից ընդունվեց խանդավառությամբ: Օրինակ՝ ալևիական հասարակական կազմակերպություններից մեկի՝ «Ջեմ Վաքֆ»-ի ղեկավար Իզզեթթին Դողանը այս առիթով հայտարարեց. «Մենք չենք աջակցում այն ալևիներին, ովքեր կազմակերպել են հանրահավաքը, քանի որ նրանք փորձում են ալևիականությունը ներկայացնել որպես իսլամից առանձին դավանանք: Նրանք չեն ընդունում Ալլահին, Մարգարեին և Ղուրանը որպես իրենց Աստված, Մարգարե և Գիրք»[10]:

Ալևիների անցկացրած հանրահավաքը թուրքական իշխանական օղակներում ևս արժանացավ տարաբնույթ վերաբերմունքի: Պետնախարար Սաիդ Յազըջըօղլուն մասնավորապես նշեց. «Ալևիների պահանջը, այն է՝ դադարեցնել կրոնի հարցերով նախարարության գործունեությունը, ծայրահեղություն է»[11]: Իսկ կրթության նախարարը ողջունեց ալևիների քննադատությունը դպրոցական դասագրքերում ալևիականության մասին տեղեկություններ զետեղելու վերաբերյալ[12]:

Վարչապետի նախկին խորհրդական, Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության ներկայացուցիչ՝ Ռեհա Չամուրօղլուն ասաց, թե հանրահավաքը կազմակերպված էր ոչ թե ալևիների պահանջները ներկայացնելու, այլ ԱԶԿ-ական (Արդարություն և զարգացում կուսակցություն) կառավարության հեղինակությանը հարվածելու նպատակով[13]: Իսկ ավելի ուշ նա ավելացրեց, թե առաջին գործը հավանաբար կլինի ալևիական աղոթատեղիները օրինականացնելը, սակայն այդ հանգամանքի հետ կապված կան որոշ հակասություններ սահմանադրության հետ և ամեն դեպքում դրանք դժվար կլինեն լուծել[14]:

Ալևի համայնքի առջև ծառացած խնդիրները բազմաթիվ են և դրանց վաղ թե ուշ պետք է թուրքական իշխանությունների կողմից որևէ կերպ լուծում տրվի, քանի որ հնարավոր չէ անընդհատ անտեսել բնակչության

գրեթե քսան տոկոսը կազմող մոտ տասնհինգ միլիոն քաղաքացիների պահանջները անտեսելով. թե նրանք բոլորը սուննիներ են և հեռու պահել նրանց երկրի քաղաքական. հասարակական կյանքից"

Ուստի. անկախ այն հանգամանքից. թե ինչպես ընդունվեց ալևիների բազմահազարանոց հանրահավաքը ԱԶԿ-ական կառավարության կողմից, մի բան հստակ է. ալևիները վերջապես դուրս եկան «ստվերի» տակից և բացահայտ կերպով ներկայացրեցին իրենց պահանջները:

Սակայն. եթե անգամ սայլը տեղից շարժվի և կառավարությունը սկսի իրագործել բարեփոխումներ՝ կապված ալևիների պահանջների հետ. գոյություն ունի ևս մեկ կարևոր խանգարող հանգամանք. ալևիական համայնքում գոյություն ունեն բավականին լուրջ տարածայնություններ: Դրանք պատճառ են հանդիսանում, որպեսզի ալևիները միմյանց մեղադրեն ԱՋԿ-ական լինելու և իշխանությունների հետ համագործակցելու մեջ, ինչը խանգարում է ալևիներին ավելի արդյունավետ կերպով պայքարել իրենց առջև դրված նպատակների իրագործման համար: Այս պարագայում ավելի հրատապ է դառնում միջհամայնքային խնդիրների լուծումը:

VARDAN HARUTYUNYAN

(IOS)

ON THE PROBLEM OF ALEVIS IN TURKEY

Alevis organized demonstration for the first time during the modern history of Turkey in Ankara in November 2008. They demanded from the state to recognize alevis as a religious group. quit obligatory classes of Islam in the schools and also teach Alevism, quit the activity of the Ministry of Religion, recognize jemevis as a place of alevi rituals, allow activity of alevi unions and organizations, make a museum the hotel "Madimak" in Sivas.

Many people died during clashes between alevis and sunnis in 1978, 1993 and 1995 in Sivas and Istanbul. These events worsened relations between them and the state does not do anything to change the situation.

The demands announced during the demonstration made positive and negative reactions among the politicians.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/tu.html
2. Minorities in Turkey. Minority Rights. Group International. July 2004. http://www.minorityrights.org/: Country Reports on Human Rights Practices 2005. http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2005/61680.htm
3. http://www.alevibektasi.org/
4. http://www.state.gov/g/drl/rls/irf/2006/71413.htm
5. BBC News. March 3.
6. www.pirsultan.net. Sivas olayları 1978.
7. Bruinessen V. M., Kurds. Turks and the Alevi revival in Turkey. http://www.let.uu.nl/martin.vanbruinessen/personal/publications/Alevi_revival.htm.
8. Aksiyon. Kasım 17.
9. Radikal. Kasım 11.
10. Zaman. Kasım 11.
11. CNNTurk. Kasım 9.
12. CNNTurk. Kasım 11.
13. Yeni Şafak, Kasım 12.
14. CNNTurk, Kasım 14.
15. Minorities in Turkey, Submission to the European Union and the Government of Turkey. Minority Rights Group International. July 2004. p. 7.

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ
(ՔՀԻ)

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Չնայած, որ ռազմատեխնիկական բնագավառում Թուրքիայի համագործակցության շրջանակը հիմնականում եղել են ԱՄՆ ու ՆԱՏՕ-ի անդամ երկրները, ինչպես նաև Իսրայելը, վերջին տարիներին նկատվում են ռազմատեխնիկական ու ռազմական արդյունաբերության ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնման միտումներ: Ռուս-թուրքական առևտրատնտեսական ու քաղաքական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ակտիվացել է նաև ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությունը: Թուրքական ռազմական շրջանակները վերջին շրջանում հետաքրքրություն են դրսևորում ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցության, ռուսական նորագույն ռազմական տեխնոլոգիաների ու սպառազինության նկատմամբ: Դա բխում է նաև վերջին շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ «ռուսական ուղղության» ակտիվացման տրամաբանությունից: Կարելի է ասել, Ռուսաստանը Թուրքիայի համար դիտվում է «այլընտրանքային գործընկեր» կամ դաշնակից՝ աշխարհաքաղաքական զարգացումներին համապատասխան փորձելով հավասարակշռել Արևմուտքի և ավելի շուտ ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները:

Թուրքիայի համար Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը, կարելի է ասել, եղել է յուրահատուկ հաղթաթուղթ, որն օգտագործվել է ԱՄՆ-ին կամ էլ ՆԱՏՕ-ի անդամ երկրներին թուրքական քաղաքականության այլընտրանքային տարբերակներն ի ցույց դնելու նպատակով և գտնվել է պարզ շահարկման տիրույթում: Ֆրանսիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը հերքելու համար պատիժ սահմանող օրինագծի ի հայտ գալուն պես Թուրքիան հայտարարեց, որ որևէ քայլի դեպքում

կողայարեցնի այդ երկրի հետ իր բոլոր ռազմատեխնիկական նախագծերը.

Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ երկրներից առաջինն էր, որ Ռուսաստանի հետ հաստատեց համագործակցություն ռազմատեխնիկական ոլորտում: Դեռևս 1990-ական թթ. սկզբներին Թուրքիան Ռուսաստանից գնել է շուրջ 110 մլն դոլար ընդհանուր արժողության սպառազինություն, այդ թվում 70 միավոր BTR-80 հետևակի մարտական մեքենա, հարվածային-բազմաֆունկցիոնալ Mi-8, Mi-17 ուղղաթիռներ, թեթև սպառազինություն և այլն[1]:

Ներկայումս Թուրքիայի և Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունն իրականացվում է ռազմաարդյունաբերական բնագավառում ռազմատեխնիկական հարցերով համագործակցության միջկառավարական մի շարք համաձայնագրերի շրջանակներում: Այդ փաստաթղթերը կարգավորում են ռազմական արտադրանքի մշակման, արտադրման և մատակարարման հետ կապված երկկողմ շփումները: Դեռևս 1994թ. ապրիլին Ռուսաստանի ու Թուրքիայի միջև ստորագրվեց «Ռազմատեխնիկական ու ռազմական արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագիրը, որը փաստորեն այդ երկրների միջև ռազմական ոլորտի առաջին պայմանագիրն էր: Չնայած դրանով նախատեսվում էր իրականացնել թուրքական բանակի մի շարք զինատեսակների արդիականացում, սակայն այն գործնական ոլորտում յիարժեք չգործեց[2]:

Ռազմատեխնիկական համագործակցության զարգացման համար անհրաժեշտ իրավապայմանագրային բազայի հաստատման առումով կարևոր քայլ էր 2004թ. դեկտեմբերին Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի Թուրքիա կատարած առաջին պաշտոնական այցի ընթացքում 2 կարևոր փաստաթղթերի՝ «Ռազմատեխնիկական ոլորտում մտավոր սեփականության փախադարձ պահպանման» ու «Ռազմատեխնիկական ոլորտում գաղտնի տեղեկատվության փախադարձ պահպանման» մասին միջկառավարական համաձայնագրերի ստորագրումը, որոնք կոչված էին ամրապնդելու ռազմատեխնիկական ոլորտում համատեղ արտադրության և մատակարարման համար իրավապայմանագրային հիմքը: Ռազմատեխնիկական համագործակցությունն ավելի կայուն և

երկարաժամկետ դարձնելու նպատակով 2001թ. մայիսին ստեղծվեց Ռազմատեխնիկական հարցերով ռուս-թուրքական խառը հանձնաժողով, իսկ 2002թ. սեպտեմբերին և 2003թ. նոյեմբերին համապատասխանաբար Անկարայում և Մոսկվայում անցկացվեցին հանձնաժողովի նիստերը[3]:

2002թ. հունվարին ՌԴ զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈՒ) գլխավոր շտաբի պետ Ա. Կվաշինի Թուրքիա կատարած այցի ընթացքում ստորագրվեցին «Ռազմական ոլորտում համագործակցության շրջանակային փաստաթուղթ» և «Զինվորական անձնակազմի ուսուցման ոլորտում համագործակցության մասին» ռուս-թուրքական պայմանագիրը: Նույն թվականին Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Հուսեյն Քիվրիքօղլուն փոխադարձ այց կատարեց Մոսկվա[4]:

2006թ. հունիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց սկսել հակաօդային պաշտպանության (այսուհետ՝ ՀՕՊ) արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը, ինչը ենթադրում է մեծ հեռահարության համալիրների ձեռքբերում[5]: Հայտամրցույթին մասնակցում էին ամերիկյան (Patriot), ռուսական (С-300ПМУ2 Фаворит) և ամերիկա-իսրայելական համատեղ արտադրության (Arrow-2) ՀՕՊ համալիրները: Թուրքական աղբյուրների համաձայն որոշ առումներով նախապատվությունը տրվում է ռուսական համալիրներին, սակայն այդ հարցում վերջնական մոտեցում չկա: Հարկ է նշել, որ մինչև հիմա թուրքական ԶՈՒ-ում մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության ՀՕՊ համալիրներ, իսկ օդային տարածքը հսկվում է փոքր և միջին հեռահարության զենիթահրթիռային համալիրներով[6]:

Զարգացած ՀՕՊ ստեղծման ճանապարհին Թուրքիան կանգնած է երկու լուրջ ընտրության առջև՝ կամ ամերիկյան, կամ էլ ռուսական համալիրների ձեռքբերման հարցում: Մի կողմից Ռուսաստանը ցանկանում է այդ նորագույն սպառազինության միջոցով ի ցույց դնել Անկարային իր վստահելի գործընկեր լինելու հնարավորությունները, մյուս կողմից էլ Թուրքիան, ռուսական տարբերակի ընտրության ու ռուսական կողմի հետ բանակցությունների միջոցով ձգտում է թուլացնել իր կախվածությունը ԱՄՆ-ից կամ գոնե ցուցադրել իր անկախ որոշումներ կայացնելու ընդունակությունը[7]:

2008թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա. Սերդյուկովի Թուրքիա կատարած այցի ընթացքում քննարկվել են երկկողմ ռազմական համագործակցության մի շարք հարցեր, այդ թվում նաև Թուրքիայում ՀՕՊ համակարգերի ներդրման խնդիրները, որի ընթացքում Ռուսաստանի պաշտպանության նախարարը վերահաստատել է հրթիռների վաճառքի ռուսական առաջարկը[8]:

Ըստ թուրքական և ռուսական աղբյուրների՝ բանակցություններ են ընթանում Թուրքիային՝ C-400 ՀՕՊ համալիրների հնարավոր վաճառքի շուրջ, ինչը հաստատել է նաև «Рособоронэкспорт»-ի ներկայացուցիչը[9]: Ավելին վաղ, ռուսական լրատվամիջոցների տեղեկատվության համաձայն, Ստամբուլում 2009թ. ապրիլին անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի (IDEF) ժամանակ Թուրքիային C-400 համալիրների հնարավոր վաճառքի հետ կապված հարցերը քննարկվել են ռուսական ռազմական պատվիրակության ղեկավար՝ Ա. Աքսենովի և Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության քարտուղարության ղեկավար՝ Մ. Բայարի միջև[10]:

2007թ. հունվարին Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը ցամաքային ուժերի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 միավոր միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները: 2008թ. ապրիլին Թուրքիայի Ռազմական արդյունաբերության գործադիր կոմիտեն հաստատեց Ռուսաստանից 80 հակատանկային հրթիռային համալիրներ (ATBMs) գնելու ծրագիրը, չնայած որ նախագծին մասնակցում էին ամերիկյան Rayteon Tow կոնսորցիումն ու իսրայելական Rafael Spike ռազմաարդյունաբերական ընկերությունները, որոնց մերժումը կապված էր ավելի շատ այդ երկրների նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելու Թուրքիայի մարտավարական քայլի հետ: Թուրք զինվորականները նախապատվությունը տվեցին ռուսական «Рособоронэкспорт»-ին պատկանող «Корнет-Э» համակարգին: Ըստ պայմանագրի՝ Ռուսաստանը Թուրքիային է վաճառել 80 այդպիսի համակարգ և 800 հրթիռ[11]:

Թուրքիան պատրաստվում է Ռուսաստանից գնել շուրջ 1 մլրդ դոլար ընդհանուր արժողության 32 միավոր Mi-28 Havoc հարվածային ուղղաթիռ: Նման որոշում կայացվեց այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի կողմից մերժվեց Թուրքիայի Cobra և Super Cobra ուղղաթիռներ վաճառելու դիմումը[12]: Դեռևս 1997թ. պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն հայտարարել էր բանակի համար 145 ռազմական, հարվածային-հետախուզական ուղղաթիռների համատեղ արտադրության և ձեռքբերման նախագծի (ATAK) մասին, որի ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 2 մլրդ դոլար: Հայտամրցույթին մասնակցելու հայտեր էին ներկայացրել ամերիկյան Bell Textron ընկերությունն իր Super Cobra և ռուսական «Рособоронэкспорт»-ն ու «Камов» գործարանը՝ խարայելական բորտ նավիգացիոն համակարգով զինված Ka 50-2 Erdogan ուղղաթիռներով: Ի դեպ, ռուսական կողմն առաջարկել էր ավելի նպաստավոր պայմաններ՝ այլ երկրներ արտահանման նպատակով Թուրքիայում նման ուղղաթիռների արտադրություն հիմնելու համար: Չնայած առաջարկված նպաստավոր պայմանների, 2004թ. մայիսին թուրքական կողմը դադարեցրեց մրցույթն առանց հաղթող կողմին սահմանելու[13]:

2009թ. փետրվարի 13-ին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի Մոսկվա կատարած պաշտոնական այցի ընթացքում երկու երկրների միջև ստորագրվեց «ՌԴ և Թուրքիայի միջև հարաբերությունների նոր փուլի և բարեկամության ու բազմաֆունկցիոնալ գործընկերության հետագա խորացման մասին» համատեղ հռչակագիրը, որտեղ, հետագա ռազմատեխնիկական ու ռազմաարդյունաբերության ոլորտում երկկողմ փոխշահավետ համագործակցության զարգացման առումով հատուկ կարևորություն է տրվում Ռազմատեխնիկական հարցերով ռուս-թուրքական խառը հանձնաժողովի աշխատանքին և նշվում, որ դրա աշխատանքն ու բխող որոշումները կարող են հետագայում էլ ավելի նպաստել երկկողմ համագործակցության զարգացմանն այդ ոլորտում[14]:

Չնայած ռազմատեխնիկական ոլորտում երկու երկրների համագործակցության զարգացման միտումներն ակնհայտ են, այնուամենայնիվ, Թուրքիան կանգնած է լուրջ ընտրության առջև իր սեփական ՀՕՊ զարգացման առումով, քանի որ դա ավելի շատ կապված է արտաքին քաղաքական ու հատկապես

աշխարհաքաղաքական գործընթացների ու այդ երկրի արտաքին քաղաքականության ու անվտանգության հետագա ուղեգծի հետ:

LEVON HOVSEPYAN

(IPR)

ON THE TENDENCIES OF THE DEVELOPMENT OF THE RUSSIAN-TURKISH MILITARY-TECHNICAL COOPERATION

Although the U.S and NATO member-states. along with Israel. have long constituted the major partners of Turkey in the framework of military-technical cooperation, the recent years have also seen patterns of Russian-Turkish further bilateral cooperation in the sphere of military-technical and defense industry. In parallel with Turkish-Russian economic and political cooperation. new tendencies and patterns of cooperation are also traced in the military-technical sphere. The cooperation between Turkey and Russia is implemented within the framework of both inter-governmental agreements and joint commission on military technical cooperation. In recent years. Turkey demonstrates expressed interest in Russian defense industry, military equipment and modern weaponry, especially in air defense and missile systems.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Kandaurov S., Russian Arms Exports to Greece, Cyprus and Turkey, http.//mdb.cast.ru/mdb/2-2001/at/raegct/.
2. Litovkin V., The future of Russian-Turkish military-technical cooperation, RIA Novosti, 26.06.2006.
3. Задонский С. М., Состояние и перспективы военно-технического сотрудничества России и Турции, ИИИБВ, http://www.iimes.ru/rus/stat/2005/15-09-05.htm.
4. Rusya ile askeri anlaşma yapıldı, http://gbulten.ssm.gov.tr/arsiv/2002/01/15/01_2.htm.
5. Turkish Daily News, 01.04.2007.
6. http://www.ssm.gov.tr/TR/dokumantasvon/basinbulteni/Pages/20080501.aspx.
   Ներկայումս Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության Rapier և Stinger, ինչպես նաև միջին հեռահարության՝ I-Hawk արդիականացված զենիթահրթիռային համալիրները:
7. Turkey: Russia, Air Defense and Ballistic Missile Defense, May 18, 2009, httn.//www.stratfor.com/analvsis/20090518_turkey_russia_air_defense_and_ballistic_missile_defense. Փոքր և միջին հեռահարության վերոհիշյալ համալիրներից բացի թուրքական զինված ուժերում դեռևս կիրառության մեջ են ամերիկյան՝ MIM-14 Nike

Hercules համալիրները, որոնք արդեն քույլ են ժամանակակից մարտահրավերների դիմագրավման համար:
8. Turkish. Russian ministers discuss proposals on air defense system. http://www.hurrivet.com.tr/english/world/10395591.asp.
9. Russia in talks to sell Turkey air defense systems. company confirms. http://www.hurriyet.com.tr/cnglish/world/11540318.asp.
10. Turkey hopes to buy S-400 air defense systems from Russia. RIA Novosti. 27.04.2009
11. İsrail yerine Ruslardan füze alıyoruz, Hürriyet. 11.04.2008, Turk Silahlı Kuvvetlerinde Rus silahları dönemı. http://www.nethaber.com, 11.04.2008 «Корнет-Е» հրթիռները բավականին արդյունավետորեն օգտագործվել են Հեզբոլլահի կողմից՝ իսրայելական Merkava Mk4, ինչպես նաև իրաքյան բանակի կողմից՝ ամերիկյան M1 Abrams տանկերի դեմ:
12. Турция срочно закупает у России 32 вертолета Ми-28, 19.12.08, http://www.izvestia.ru/news/news194579
13. Гурьев С. А., О российско-турецком военно-техническом сотрудничестве, ИИИБВ, 27.11.2004, www.iimes.ru/rus/stat/2004/27-11-04.htm - 13k. Չնայած երկար տարիներ նախագիծը վերջնական լուծում չէր ստանում՝ 2008թ. գարնանը վերջնական որոշում կայացվեց ATAK նախագծի իրականացման վերաբերյալ: Որոշումը կայացվեց հօգուտ իտալական AgustaWcstland ընկերության, որի հետ կնքված պայմանագրով նախատեսվում է Թուրքիայում սկսել 50 միավոր T129 ռազմական ուղղաթիռների արտադրությունը, որի գործում որպես հիմնական կապալառու է ընտրվել թուրքական TUSAS ընկերությունը: Նախագծի արժեքը կազմում է 1 մլրդ եվրո: 1 milyar dolarlık helikopter üretecek Türkiye ihracat merkezine dönüşecek, Hürriyet, 07.05.2008, http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080505.aspx.
14. Совместная декларация о продвижении к новому этапу отнощении между Российской Федерацией и Турецкой Республикой и дальнейщем углублении дружбы и многопланового партнерства, 13 февраля 2009 года; http://www.kremlin.ru/text/docs/2009/02/212886.shtml.

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԻ

(ԵՊՀ)

ԿԵՆԴԱՆԱՌՏՔ ԿԱՀՈՒՅՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ (ՄԻՆՉԵՎ Ք.Ա. 6-ՐԴ ԴԱՐԸ)

Կահույքը երևան է եկել նախնադարյան համայնքների՝ նստակեցության անցնելու ժամանակաշրջանում: Հին Արևելքի հուշարձաններից հայտնաբերված կահույքի մասերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնում կահույքն ունեցել է թե՛ կենցաղային և թե՛ ծիսական նշանակություն: Դրանց մեջ ուշագրավ մի խումբ են կազմում սրբազան կենդանիների ոտքերով կահույքի մասերը, որոնց կենդանառտք լինելն իսկ ընդգծում է դրանց ծիսապաշտամունքային նշանակությունը: Այս հրապարակման նպատակն է հինարևելյան արվեստի համատեքստում դիտարկել մինչերվանդունյաց ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում կենդանառտք կահույքի կիրառման դրսևորումները:

Կենդանառտք կահույքի վաղագույն օրինակները վկայված ենք գտնում շումերական հինարևելյան արվեստում: Մեզ են հասել Ք.ա. III հազարամյակով թվագրվող մի շարք հնագիտական գտածոներ, որոնցում վկայված են սմբակառտք կահույքի մասերի (աշտանակ, գահ, աթոռակ) պատկերներ[1] (նկ. 1): Հնագույն Միջագետքում գերակշռում են սմբակառտք գահերը, ինչն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ցլի՝ գերագույն աստծո (Էնլիլի) սրբազան կենդանին լինելու հանգամանքով:

Կենդանառտք կահույքի բազմաթիվ վկայություններ ունենք նաև Եգիպտոսում, որոնք հիմնականում թվագրվում են Ք.ա. III-II հազարամյակներով[2]: Եգիպտոսում առավել տարածված էին առյուծի թաթերով զարդարված վերջույթներ կրող գահերը՝ հավանաբար ելնելով այն գաղափարից, որ առյուծը խորհրդանշում է գերագույն իշխանությունը երկրի վրա:

Կենդանատոք կահույքի պատկերներով նմուշներ են հայտնաբերվել նաև Հայկական լեռնաշխարհից: Դրանցից հնագույնը Քարաշամբի գավաթն է (Ք.ա. 22-21-րդ դդ., նկ. 2), որն աչքի է ընկնում բացառիկ հորինվածքով[3]: Գավաթի վրա ունենք կենդանատոք աթոռակի 2 պատկեր, որոնք ավարտվում են ցլի՝ բավականին հստակ ներկայացված սմբակներով և դատելով սյուժեից, ծառայում են որպես զոհասեղան, թերևս նաև խրախճանքի սեղան: Թռեղքի «Քորուխթաշ» դամբանաբլուրից պեղված գավաթի վրա ևս կարելի է տեսնել համանման սմբակատոք աթոռակի պատկեր[4]:

Սմբակատոք կահույքի պատկերներ են առկա նաև Հասանլուի հնավայրից 1958թ. հայտնաբերված և Ք.ա. 9-8-րդ դարերով թվագրվող գավաթի վրա (նկ. 3)[5], ըստ որում Քարաշամբի և Հասանլուի գավաթների սյուժեներն ընդհանուր մոտիվներ ունեն: Հասանլուի գտածոյի վրա սմբակավոր աթոռակի 2 պատկեր կա, որոնք աստվածայնության խորհրդանիշ են հանդիսանում, քանի որ մի դեպքում աթոռակը երկրպագվում է, մյուս դեպքում դրա վրա բազմել է գերագույն աստվածություններից մեկը:

Կենդանատոք կահույքի բազմաթիվ օրինակներ ունենք Վանի թագավորության (Ուրարտու) հուշարձաններից: Ռուսախինիլիից (Թոփրաք-կալե հնավայր) հայտնաբերված և վերականգնված հնագույն գահը[6] (նկ. 4, ըստ Ռ. Մերհավի՝ այն պետք է թվագրել Մենուայի ժամանակով՝ Ք.ա. 810-786թթ.[7]), որը զարդարված է գրիֆոններով, առջևում դրված առյուծատոք աթոռակ ունի:

Գեղհովտի քարայր-դամբարանից հայտնաբերված գտածոներում մեծաքանակ են կճղակավոր կենդանու (թերևս՝ ցլի) ոտքի տեսք ունեցող բրոնզե միաձույլ, սնամեջ, զանգվածեղ առարկաները[8], որոնք որպես ոտնակներ, հագցվել են փայտե կահույքի (սեղան, աթոռ, բազմոց, գահավորակ, պատգարակ, եռոտանի, աշտանակ և այլն) ոտնափայտին՝ ամրություն, գեղագիտական ուրույն տեսք և, թերևս, ծիսապաշտամունքային իմաստ հաղորդելով դրանց[9]:

Ուրարտական արվեստից մեզ են հասել առյուծի թաթեր հիշեցնող ոտնակներ և գահի առանձին մասեր, որոնք թվագրվում են Ք.ա. 8-7-րդ դարերով (նկ. 5)[10]: Ուրարտական կենդանատոք կահույքի շարքում առանձնանում են կճղակավոր եռոտանիները, հենակներն ու աշտանակները[11], որոնցից առավել հայտնի է Թոփրաք-կալեի

գտածոն[12], որի սմբակները ոճավորված առյուծների երախներից են դուրս գալիս, իսկ ոտքերի վերնամասում թևավոր գրիֆոնների քանդակներ են: Կենդանառատ գահերի և զոհասեղանների առկայությամբ աչքի ընկնող ծիսական տեսարաններով հարուստ են բրոնզե գոտիները[13] ու թիթեղները (նկ. 6)[14]:

Գահերից և զոհասեղաններից բացի հայտնաբերվել են կենդանառատ կաթսաներ[15], որոնց պատկերները հանդիպում են նաև գոտիների վրա[16]:

Առկա նյութերի համառոտ թվարկումից էլ ակնհայտ է դառնում հետաքրքիր մի իրողություն. եթե Միջագետքում գերակշռում են ցլառոտք, իսկ Եգիպտոսում՝ առյուծաթաթ կահույքի մասերը, ապա Հայկական լեռնաշխարհում, հատկապես, Վանի թագավորությունում դրանք ներկայացված են հավասարաչափ:

Այս տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Սարգոն Բ-ի պալատի ռելիեֆներում պահպանված Արդինի-Մուսասիրի տաճարի առջև նմանատիպ երկու սմբակառոտք կաթսաներ են պատկերված (նկ. 7), ցլառոտք է նաև թալանի տեսարանում տաճարից դուրս բերվող աշտանակը[17]: Հայտնի է, որ Արդինի-Մուսասիրը եղել է գերագույն աստված Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոնը, իսկ Խալդին, սովորաբար, առյուծի մեջքին կանգնած էր պատկերվում[18]: Առաջին հայացքից՝ ցլի սմբակներով ծիսական կաթսաները կարող էին առնչություն ունենալ Վանի թագավորության երկրորդ գլխավոր աստծո՝ Թեյշեբայի հետ, քանի որ վերջինիս սրբազան կենդանին ցուլն էր[19]:

Ինչո՞ւ էին Խալդի աստծո տաճարի առջև դնում ցլի սմբակներով զարդարված կաթսաներ: Կարծում ենք, որ երևույթը կարող է ունենալ հետևյալ բացատրությունը:

Խալդիի պաշտամունքը բավականին ամուր էր հաստատվել Ուրարտուում, ինչը, դատելով փաստերից, տեղի էր ունեցել՝ սկսած Իշպուինիի կառավարման շրջանից: Մինչ այդ տեղական ամուր արմատներ ուներ ամպրոպային գերագույն աստծո պաշտամունքը, ինչը խիստ բնորոշ էր հնդեվրոպական աշխարհին: Մյուս կողմից, լեռնաշխարհում և հարակից տարածքներում հին ակունքներ ուներ ամպրոպային Թեշուբ աստծո պաշտամունքը, որը տարածված էր խուռի-խեթական աշխարհում, որտեղ նա զբաղեցնում էր դիցարանի

առաջին գահը (ի տարբերություն Վանի թագավորության, որտեղ Թեյշեբան հաջորդում էր Խալդիին): Նշենք նաև, որ ուրարտական պատկերագրության մեջ Թեյշեբան երբեմն ներկայանում է որպես գլխավոր աստվածություն[20], դա վերաբերում է հատկապես պաշտամունքային բիբեղներին[21], որտեղ նա նստած է կճղակավոր կամ ցլի մեջքին դրված գահին:

Խալդիի՝ գերագույն աստված հռչակումից հետո, նրա և ամպրոպային գերագույն աստծո պաշտամունքի որոշ տարրեր պետք է միավորվեին: Թերևս, այդ տարրերից են նաև սմբակավոր սրբազան կահույքի մասերը: Նման եզրահանգման գալու մեզ մղում է կարևոր մի փաստ, որը չի կարելի շրջանցել: Ե՛վ Միջագետքում, և՛ Հայկական լեռնաշխարհում արքաները, որպես իրենց աստվածայնության նշան, կրում էին *ցլաեղջյուր* թագեր, ինչը կապվում է նշված տարածքներում ամպրոպային գերագույն աստծո պաշտամունքի հետ, որի սրբազան կենդանի-խորհրդանիշը ցուլն էր:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կենդանատոտք կահույքի նմուշները ծիսապաշտամունքային նշանակություն ունեին և նախատեսված էին, մասնավորապես, գերագույն աստվածությունների ու արքաների համար, ուստիև դրվում էին արքայական կառույցներում և պաշտամունքային շինություններում: Սմբակավոր կահույքի մասերի պատկերները Քարաշամբի, Քորուխբուշի, Հասանլուի գավաթների վրա, ամենայն հավանականությամբ, առնչվում էին հնդեվրոպական (գուցե՝ ընդհանուր առաջավորասիական) ամպրոպային գերագույն աստծո պաշտամունքի հետ, քանի որ հենց ամպրոպի աստվածության խորհրդանիշն էր ցուլը (հիշենք, որ Քարաշամբի գավաթի հորինվածքն արտացոլում էր հնդեվրոպական տարածված առասպելի սյուժեն)[22]: Ցլի սրբացման երևույթը տեղական խորն արմատներ ուներ, ինչի վկայություններն են վիշապ-կոթողների վերնամասում քանդակված ցլի պատկերները:

Վանի թագավորության ժամանակաշրջանում սմբակավոր կահույքի մասերի կողքին հայտնվում են առյուծաթաթ կահույքի մասեր, ինչը, թերևս, արտացոլումն էր Խալդիի՝ թագավորության գերագույն աստված հռչակվելու:



ANI MARGARYAN

(YSU)

THE MANIFESTATIONS OF THE USAGE OF ANIMAL-LEGGED FURNITURE IN ARMENIAN HIGHLAND (BEFORE VI C. BC)

The article covers the analyses of the earliest samples and images of animal-legged furniture in Ancient Eastern art, mainly thrones, armchairs, candelabra, crutches and so on. A lot of samples and images of animal-legged furniture are well-known in Sumer (3-rd millennium B.C., mainly hoof-legged) and Egypt (III-II millennia B.C., mainly lion-legged). There are also several images of hoof-legged furniture on the bowls of III-II millennia B.C. (from Karashamb, Korukhtash and Hasanlu). Urartian art is also rich enough with the samples and images of animal-legged furniture, especially in the ritual cult scenes of belts and decorated tinplates. In the Kingdom of Van are represented equally hoof-legged and lion-legged samples. First of them is connected with the worship of bull – the sacred animal of the God of Storm among the Indo-Europeans. The second is connected with the cult of supreme God of Khaldi whose sacred animal was a lion. In fact the animal-legged furniture used to be of a special ritual significance in the Ancient Eastern art. We can consider the evidence of that the wide spread of horned-crowns in Ancient Orient, including in the Kingdom of Van (Urartu).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Aruz J., Wallenfels R. Art of the first Cities. The Third Millennium B.C from the Mediterranean to the Indus. The Metropolitan Museum of Art. New York. 2003. p 34. 75. 97. 109. 447. fig. 17. 60a. 98. 319. Dolce R, Gli Intarsi Mesopotamici Dell' Epoca Protodinastica. II, Catalogo Tavole, Roma, 1978, Tav XXI
2. Матье М. Э., Искусство Древнего Египта, Л.-М., с. 139, рис. 63; Каценельсон И. Ц., Культура Древнего Египта, М., 1955, с. 162, рис 34.
3. Оганесян В. Э., Серебрянный кубок из Карашамба, ՊԲՀ, N 4, Եր., 1988, էջ 149;
4. Արեշյան Գ. Ե., Թոխրի Քորուխբաշ դամբանաբլուրի գավաթի պատկերային հորինվածքի մեկնաբանման փորձ, Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984-1985թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, զեկուցումների թեզիսներ, Եր., 1987, էջ 11-13:
5. Voigt M. M., Expedition, Vol. 31, N 2-3, The University of Philadelphia, 1990, p. 87
6. Louis Vanden Berghe en Leon De Meyer, Urartu een vergeten cultuur uit het bergland Armenie, Gent, 1982-1983, p. 102; Seidl U., Bronzekunst Urartus, Mainz, 2004, p. 62, 63.
7. Մռվսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Եր., 2003, էջ 65:
8. Փիլիպոսյան Ա. Ս., Մկրտչյան Ռ. Ս., Գեղհովտի վանտոսպյան (ուրարտական քարայր-դամբարանը), Եր., 2001, էջ 146, աղ. 21, 22:
9. Փիլիպոսյան Ա. Ս., Մկրտչյան Ռ. Ս., նշվ. աշխ., էջ 25:
10. Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 182:
11. Пиотровский Б. Б., Кармир Блур. Альбом, Л., 1970, ил. 72; Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 212:
12. Փիլիպոսյան Ա. Ս., Մկրտչյան Ռ. Ս., նշվ. աշխ., էջ 151, աղ. 28, նկ. 5; Пиотровский Б. Б., История и культура Урарту, Ер., 1944, с. 59, рис. 66; Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 106:
13. Seidl U., նշվ. աշխ., էջ 139, 143, 177, 220:
14. Հմայակյան Ս. Գ., Վանի թագավորության պետական կրոնը. Եր., 1990, աղ. 17, 25; Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 212:
15. Kellner Nans-Jorg, Urartu Ein wiederentdecktor Rivale Assyricns, München, 1976, Tafel 4; Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 205; Seidl U., նշվ. աշխ., էջ 127:
16. Seidl U., նշվ. աշխ., էջ 141:
17. Նույն տեղում, էջ 127; Louis Vanden Berghe en Leon De Meyer, նշվ. աշխ., էջ 31:
18. Հմայակյան Ս. Գ., նշվ. աշխ., աղ. 4, նկ. 1, աղ. 5, 6, 8, 30:
19. Նույն տեղում, աղ. 18, նկ. 3, աղ. 15, 17:
20. Նույն տեղում, էջ 42:
21. Նույն տեղում, աղ. 17, 25:
22. Оганесян В. Э., Серебрянный кубок из Карашамба, ՊԲՀ, N 4, Եր., 1988, էջ 145-161:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ
(ՀՅԺԻ)

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԱԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (1915-1925թթ.)

1915թ. մայիսից Օսմանյան կայսրությում սկսված տեղահանությունների և կոտորածների հետևանքով հայ տարագիրների մեծ մասը 1916թ. կենտրոնացած էր Հալեպ ու Դամասկոս քաղաքների և Եփրատ գետի միջև ընկած տարածքում գտնվող ճամբարներում: Դեռևս 1915թ. ապրիլի 15-ին հաստատվել և Օսմանյան կայսրության տեղական իշխանություններին էր ուղարկվել գաղտնի հեռագիր՝ արևմտահայությանը սիրիական անապատներ տեղահանելու և կոտորելու մասին[1]: Երիտթուրքական կառավարությունը համոզված էր, որ սիրիական անապատներում տեղի արաբ մուսուլմանները կշարունակեն իրենց գործը՝ վերջնականապես բնաջնջելով հայերին[2]: Սակայն արաբները չեն իրականացնում վերջինիս ծրագրերը, ավելին՝ օգնության ձեռք են մեկնում տարագիր հայերին:

Ի՞նչ բնույթ է կրել Սիրիայի արաբ ժողովրդի օգնությունը, ինչպի՞սի սոցիալ-քաղաքական պայմաններում է ընթացել հայ տարագիրների ինտեգրման գործընթացը, ինչպի՞սին են եղել հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայի համար փոփոխական այդ ժամանակահատվածում:

Սիրիայի տարբեր շրջաններում բազմաթիվ արաբ պաշտոնյաներ, քաղաքացիներ, զինվորներ օգնության ձեռք են մեկնել հայ գաղթականներին՝ շատ հաճախ վտանգելով իրենց կյանքն ու պաշտոնը: Նրանցից կարելի է հիշատակել Հալեպի նահանգապետ Ջալալ բեյին, որը մինչև 1915թ. հուլիսի վերջը իր նահանգում աքսորի հրամանը չի գործադրել՝ հայտարարելով՝ «Ես այս շրջանի կառավարիչն եմ և ոչ թե նրա դահիճը»[3]: Դեռ ավելին, վերջինս նպաստավոր պայմաններ էր ստեղծել Կիլիկիո Տան Սահակ Բ

կաթոլիկոսի ղեկավարությամբ գործող «Գաղթականների օգնության հանձնախմբի» գործունեության համար:

Հայանպաստ գործունեություն ծավալած արաբներից կարելի է հիշատակել Ռաս Ուլ-Այնի կայմակամ Յուսուֆ Զիա բեյին, օսմանյան բանակի սպա Աբդուլ Ղանի Ալ-Ջուդդիին, Եփրատի մակույկաշինության բանակային ձեռնարկության վերակացու Ջամիլ Քեննեին և ուրիշների: Հակառակ հայկական քարավանները մեկը բնաջնջելու իրեն տրված հրահանգի՝ Աբդուլ Ղանի Ալ-Ջուդդին տարագիր հայերից շատերին ուղարկել է Սալամիյե. Ջամիլ Քեննեն հայ տարագիրներին աշխատանք էր տալիս, իսկ Կարմիր խաչի նպաստներից, պարեն, դեղորայք էր հատկացնում կանանց, երեխաներին և ծերերին: Դեր Զորի կառավարիչ Ալի Սուադ բեյը չի իրականացրել Հալեպից դեպի Ռաս Ուլ-Այն գաղթականների փոխադրման հրահանգը՝ պատճառաբանելով. «Բոլորին տեղահանելու համար փոխադրության միջոցները չեն բավականացնում, և եթե Ձեր հետապնդած նպատակը նրանց սպանելն է, ես դա չեմ կարողանա անել, ոչ էլ կարող եմ անել սաղ»[4]: Սաարայի շրջանի կայմակամ Շաֆաի Աբու Ռաշիդը ևս գաղթի տարիներին հնարավոր ամեն ինչ արել է հայ գաղթականներին ի վնաս տրված հրահանգները շրջանցելու համար, ինչպես նաև ապահովել է շատ գաղթականների երկաթուղով տեղափոխումը[5]:

Սիրիայի հյուսիս-արևելյան շրջանների ցեղերի առաջնորդները, օգտագործելով իրենց հեղինակությունը, կարողացել են հայ տարագիրներին փրկել վերահաս կոտորածներից ու ապաստան տրամադրել նրանց: Այս գործընթացում առանձնահատուկ դեր ունեն Ալ-Ջարբա ցեղի առաջնորդ Դահհամ Ալ-Հադին, Ռաքքայի աշիրաթի առաջնորդ Ֆեդդի Ալ-Ֆուազը և ուրիշներ:

1918թ. սեպտեմբերի 30-ին Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալիի որդին՝ Էմիր Ֆեյսալը, ազատագրում է Դամասկոսը՝ կազմելով Սիրիայի առաջին անկախ կառավարությունը՝ Ալի Ռիզա Առ-Ռիկաբիի ղեկավարությամբ: Այդ պայմաններում նոր զարգացումներ են տեղի ունենում նաև հայ-արաբական փոխհարաբերություններում: Եթե 1915-1917թթ. սիրիացի արաբների օգնությունը հայերին հիմնականում անհատական բնույթ ուներ, ապա 1918թ. Ֆեյսալի իշխանության գալուց հետո հայերին ցուցաբերվող աջակցությունը դրվում է պաշտոնական

հիմքի վրա: Ֆեյսալի աջակիցների թվում էին հայանպաստ դիրքորոշում ունեցող մի շարք ազդեցիկ գործիչներ՝ կրթության նախարար Սատի Ալ-Հուսրին, Ֆեյսալի քարտուղար, «Ջարդերը Հայաստանում» գրքի հեղինակ, փաստաբան Ֆայեզ Ալ-Հուսեյնը, Հալեպի շրջանի կառավարիչ Շուքրի Ալ-Այուբին, Հալեպի երեսփոխան ու Առևտրական պալատի նախագահ Սելիմ Ջեմբերթը, «Ալ-Ասիմա» պաշտոնաթերթի խմբագիր Օմար Ֆախուրին, Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի խմբագիր Շուքրի Ալ-Քենյդերը, որն իր անկողմնակալ հոդվածների համար բազմիցս ենթարկվել է ճնշումների[6]:

Ֆեյսալը հայերին ցուցաբերվող աջակցությունը դարձնում է իր քաղաքականության կարևոր հիմնասյուներից մեկը և պատահական չէ, որ իր առաջին պաշտոնական հայտարարությունում կարևորում է փոքրամասնությունների իրավունքները[7]: 1918թ. հոկտեմբերին Դամասկոսում Ֆեյսալի ընդունելությանն են արժանացել Սիրիայի փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնց թվում էին նաև Երուսաղեմի թեմի եպիսկոպոս Ե. Չիլինկիրյանը ու Հալեպի ազգային առաջնորդարանի փոխանորդ Տեր Հարություն Եսայանը[8]:

Ֆեյսալը 1918թ. հոկտեմբերին իր բանակի պաշտպանությամբ բազմաթիվ հայերի անապատից տեղափոխել է Դամասկոս: Փարիզի հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Ֆեյսալին ուղղված նամակում բարձր է գնահատում վերջինիս գործունեությունը[9]: 1919թ. հունվարին էմիր Ֆեյսալը[10] Փարիզում հանդիպել է Պողոս Նուբար փաշային՝ վերջինիս հետ քննարկելով Սիրիայի հայ գաղթականության վիճակը: Վերջիններիս սոցիալական վիճակի բարելավմանն էր ուղղված նրանց ամսականներ և սնունդ տալու մասին կառավարության որոշումը[11], ինչպես նաև Ֆեյսալի՝ Հալեպի հայ վաճառականների պարտքերի հետաձգման մասին 1919թ. մարտի 26-ի որոշումը, որը վավերացվել է «Շուրայի խորհրդում»[12]:

Չնայած կառավարության՝ հայ-արաբական հարաբերությունների բարելավմանն ուղղված քաղաքականությանը՝ 1919թ. փետրվարի 28-ին Հալեպի հայերը ենթարկվում են մուսուլմանների հարձակմանը: Ըստ արաբ որոշ ականատեսների, ընդհարման պատրվակ է ծառայել շուկայում հայերի կատարած գողությունը: Պատմաբան Ալի Սուլթանը իրական պատճառ է համարում ֆրանսիական բանակում հայ կամավորների ծառայելու փաստը, որը հիմնավորում է Հալեպից Բեյրութի ֆրանսիական

կյուպատոսարան ուղարկված հեռագրով, որ ասվում էր. «Խնդրում ենք թույլ տալ հայ կամավորներին չծառայել ֆրանսիական բանակում»[13]: Սակայն. արաբների հակաֆրանսիական տրամադրությունները հազիվ թե հայկական կոտորածների պատճառ դառնային: Պատմաբան Մ. Քուրդ Ալին դեպքերի պատճառներից է համարում Հալեպում տեղակայված անգլիական զորահրամանատարության՝ հայ տարագիրներին կարևոր պաշտոններ տալու փաստը: «Հայերն ավելի ինքնավստահ դարձան: Նրանց նախկին անօգնական վիճակը փոխարինվեց ազատ և բարեկեցիկ կյանքով, մեծամտացան. ինչը չընդունվեց արաբների կողմից...»[14]: Սակայն առավել հավանական է, որ Հալեպի կոտորածը տեղական նախաձեռնություն չէր, այլ իրագործվել է արաբական իթթիհադական ուժերի կողմից[15]: Ֆեյսալը Փարիզից իր եղբորը՝ Զեյդին ուղարկված հեռագրում դատապարտում է Հալեպի դեպքերը. «Դա արվել է տգիտությամբ. թշնամությամբ և ստոր նպատակներով: Նման դեպքերն ապագայում հաջողություն չեն ունենա: Դրանք թշնամու գործակալների կողմից էին հրահրված»[16]:

Սիրիայի քաղաքական կյանքում 1920թ. տեղի են ունենում շրջադարձային փոփոխություններ. ապրիլի 25-ին Սան Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի մանդատը հանձնվում է Ֆրանսիային: 1920-1925թթ. հայ տարագիրների նկատմամբ որոշակի դժգոհություններ էր նկատվում Սիրիայի բնակչության շրջանում այն պատճառաբանությամբ, թե նրանք բեռ են դարձել իրենց երկրի համար: Չնայած «Աթ-Թակադդում» թերթն այդ կապակցությամբ գրում է. «Հայերին ուղարկված ֆինանսական օգնությունը մեր երկրում է ծախսվում՝ թեթևացնելով ֆինանսական սղությունը...Այնպես որ դժգոհության որևէ գիտակից պատճառ չենք տեսնում»[17]: Ֆրանսիական կառավարությունը փորձեր էր կատարում հայերին վերաբնակեցնել գյուղաբնակ վայրերում: Սիրիայի Դաշնակցային խորհրդի 1924թ. հունվարի նիստում քննարկման էր դրվել հայ տարագիրների հարցը և առաջարկվել էր Հալեպում, Դամասկոսում գտնվող տարագիրներին վերաբնակեցնել Ալեքսանդրետի՝ թուրքական սահմանից հեռու շրջաններում, անգամ Համայի պատգամավոր Ռաշիդ Բարազին առաջարկել է արգելել հայ տարագիրների մուտքը Սիրիա:

Մեր կողմից ներկայացված փաստերը թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ: 1915-1925թթ. արաբ ժողովրդի օգնությունը

հայ տարագիրներին զանգվածային բնույթ է կրել, ինչի վկայությունն է Սիրիայի ժամանակակից հայ համայնքը։ Միաժամանակ, նշված ժամանակահատվածում հայ և արաբ ժողովուրդների միջև առկա էր որոշակի անվստահություն, որն ուներ իր օբյեկտիվ պատճառները։ Չեղասպանության փաստն ինքնին հայերին դրդում էր զգուշավորության խալամական միջավայրում. Սիրիայի արաբներն էլ, իրենց հերթին, քաղաքական նկատառումներից ելնելով զգուշանում էին հայերի հետ սերտ հարաբերությունների հաստատումից, քանի որ վերջիններս կարող էին օգտագործվել անգլիական և ֆրանսիական իշխանությունների կողմից: Այդ մթնոլորտն իր դերն ուներ Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատումից հետո սկսված հայերի արտագաղթի գործընթացում, թեև հիմնական պատճառը երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակն էր: 1921թ. հարկադրաբար Կիլիկիան լքած և Սիրիա տարագրված հայերը վստահ չէին, որ ֆրանսիական մանդատը կարող էր երաշխավորել իրենց ֆիզիկական գոյությունը: 1918-1924թթ. Սիրիայում հայերի թիվը նվազել է շուրջ քառասուն տոկոսով՝ 150 հազարից հասնելով 90 հազարի[18]:

Այնուամենայնիվ, հայ տարագիրները կարողանում են կարճ ժամանակահատվածում ինտեգրվել Սիրիայի տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքին՝ ցուցաբերելով տարագիրների համար բացառիկ քաղաքական կազմակերպվածություն: Սիրիայում գործող հայ քաղաքական կուսակցություններն աստիճանաբար լուրջ դերակատարում են ձեռք բերում համայնքի կյանքի տարբեր ոլորտների կարգավորման գործում՝ իրենց ազդեցությամբ մոտենալով հայ եկեղեցուն[19]:

Հայ տարագիրների համար կարևոր նշանակություն ուներ 1924թ. ընդունված Սիրիայի քաղաքացիական օրենսգիրքը, որը 5 տարի անընդմեջ երկրում բնակվող անձանց քաղաքացիության իրավունք էր տրամադրում: Այսպիսով, դարասկզբին Սիրիայում հայտնված հայ տարագիրները կայտողանում են համագործակցել արաբների հետ՝ զաղթականից դառնալ երկրի քաղաքացի՝ համապատասխան պարտավորություններով ու իրավունքներով:

NARINE MARGARYAN
(AGMI)

ARMENIAN DEPORTEES IN SYRIA AND ARAB'S STANCE TOWARD THEM (1915-1925)

Large number of Armenian deportees has found themselves in Syrian Desert after the Armenian Genocide. Both Arab ordinary population and high ranked military and civilian officials supported Armenians despite the fact that in some cases such assistance put in danger their positions and even lives. Coming into power in 1918 Emir Feysal continued these efforts making them one of the pillars of his policy. Meanwhile, there were some problems in Armenian-Arab relations. Nevertheless we can emphasize that despite some hurdles Armenian deportees with Arab's assistance not only survived the Genocide but overcame the difficulties transforming themselves from deportees into citizens becoming fully integrated into Syria's political, social and economic realms.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մնացականյան Ա., Հայ ժողովրդի Մեծ Եղեռնը և ազգային վերածնունդը, «Յուշամատեան Մեծ Եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 34:
2. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո, Եր., 2004, էջ 166:
3. Նայիմ Ալ-Յաֆի, Հայերի կոտորածները և արաբական հասարակական կարծիքի դիրքորոշումը, Լաթաքիա, 1992, էջ 67 (արաբերեն):
4. Մրվան Ալ-Մուդաուար, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 408 (արաբերեն):
5. «Գեղարդ», Տարեգիրք, հ. 6, Հալեպ, 2002, էջ 59 (արաբերեն):
6. Սուրիրահայ տարեցոյց, Հալեպ, 1924-1925, էջ 118:
7. Ալի Սուլթան, Սիրիայի պատմություն (1918-1920), Դամասկոս, 1996, էջ 440:
8. Չիլինկիրյան Եղիշե եպիս., Նկարագրութիինք Երուսաղէմի-Հալիպի-Դամասկոսի գաղթականական եի վանական վանագան դիպված եի անցքերու 1914-1918, Երուսաղեմ, 1927, էջ 47:
9. Ուշագրավ է, որ այս և հաջորդ նամակները տպագրվել են սիրիական մամուլում, «Ալ-Աֆքար» 14.08.1918թ.: Տես Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930 թթ., Բեյրութ, 2004, էջ 271-272 (արաբերեն):
10. Էմիր Ֆեյսալը 1918թ. նոյեմբերի 21-ին մեկնել էր Եվրոպա, ուր մնացել է մինչև 1919թ. ապրիլի 30-ը.
11. Կառավարության սույն որոշումը տպագրվել է սիրիական կառավարության պաշտոնական պարբերաթերթ «Ալ-Ասիմայի» 1918թ. հոկտեմբերի 29-ի համարում: Տես Արիսյան Ն., նշվ. աշխ., էջ 356:

12. Խորհրդարանի սույն որոշումը տպագրվել է «Ալ-Ասիմայի» 1919թ. ապրիլի 8-ի համարում. տե՛ս Արիսյան Ն., նշվ. աշխ., էջ 356-358:
13. Ալի Սուլթան, նշվ. աշխ., էջ 114 (արաբերեն):
14. Մուհամմադ Քուրդ Ալի. Շամի ծրագրերը, հ. 3, Դամասկոս. էջ 164 (արաբերեն):
15. Նազարյան Ե., Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 6, Եր., 1974, էջ 154:
16. Ալի Սուլթան, նշվ. աշխ., էջ 114:
17. Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի ու արաբների վիճակի մասին...., էջ 187:
18. Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 282:
19. Лятлов В. И., Политический активизм армянской диаспоры в арабском мире, "Фундаментализм и национализм на Ближнем Востоке", М., 1999, с. 15.

ՄԱՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ
(ԵՊՀ)
ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԳՈՒԹ ՕԶԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանակը միշտ էլ եղել է Թուրքիայի սոցիալական. տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման վրա ազդող կարևորագույն ինստիտուտներից մեկը: Այս ավանդույթը գալիս է դեռևս Օսմանյան կայսրությունից և իր հետագա զարգացումն է ապրում Հանրապետական Թուրքիայում: Վերջին գրեթե կես դարի ընթացքում բանակը վճռական ազդեցություն է ունեցել երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա, և. ինչպես նշում է Սուրեն Բաղդասարյանը, թուրքական հասարակության կենսագործունեությունը վերջին 40 տարիների ընթացքում կարգավորվել է թուրքական ռազմական վերնախավի կողմից[1]: Պետք է նշել, որ վերջին 50 տարիների ընթացքում Հանրապետական Թուրքիայում տեղի է ունեցել 2 ռազմական հեղաշրջում (1960թ., 1980թ.) և 2 ռազմական միջամտություն (1971թ., 1997թ.), ինչը հետազոտողների մոտ առանձնակի հետաքրքրություն է առաջացնում Թուրքիայում բանակ-քաղաքացիական իշխանություններ փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցում: Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում ուսումնասիրել բանակ-քաղաքացիական իշխանություններ փոխհարաբերությունները Թուրգութ Օզալի կառավարման տարիներին:

1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի հետևանքով երկրի ղեկն անցավ բարձրագույն ռազմական ղեկավարության ձեռքը և Թուրքիայում սկսվեց «անցումային շրջանի» ժամանակաշրջանը, որը սովորաբար հաջորդում է ռազմական հեղաշրջումներին: 1980-1983թթ. «անցումային շրջանում» երկրի զինված ուժերը կատարեցին այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք նպատակ ունեին հետագայում Թուրքիայի քաղաքական կյանքը վերահսկելի դարձնել զինվորականների համար:

Մասնավորապես 1982թ. նոյեմբերի 7-ին հանրաքվեի միջոցով ընդունվեց նոր սահմանադրություն, որի միջոցով էականորեն ընդլայնվեց զինվորականների կողմից հետագայում երկրի քաղաքական կյանքի վրա ազդելու հնարավորությունները: Սա հատկապես երևում է սահմանադրության այն հոդվածներում, որոնք նախատեսում էին նախագահի լիազորությունների ընդլայնում, որը Թուրքիայում ավանդաբար ընտրվում էր երկրի զինվորական վերնախավից, ԱԱԽ-ի դերի ուժեղացում և Նախագահական խորհրդի ստեղծում[2]:

Սահմանադրական հանրաքվեի անցկացումից հետո զինվորականները հետևողականորեն սկսեցին միջոցառումներ իրականացնել քաղաքացիական կառավարմանը վերադառնալու ուղղությամբ:

Այսպիսով, կարելի է նշել, որ «անցումային շրջանում» զինվորականների իրականացրած օրենսդրական փոփոխությունները հիմնականում նպատակաուղղված էին ծնավորվող քաղաքական կուսակցությունների գործունեությունը վերահսկելի և կանխատեսելի դարձնելուն: Այդ փոփոխություններն իրականացնելուց հետո զինվորականները ձեռնամուխ եղան իշխանությունը քաղաքական կուսակցություններին փոխանցելուն: Համաձայն ընտրությունների մասին օրենքի անցումային դրույթներից մեկի, խորհրդարանական ընտրությունները նշանակվեցին 1983թ. նոյեմբերի 6-ին:

1983թ. ապրիլի 24-ին ԱԱԽ-ն վերացրեց քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը[3] և Թուրքիայում երեք տարի ընդմիջումից հետո վերսկսվեց քաղաքական կյանքը: Այսպիսով, նոր քաղաքական համակարգի շրջանակներում սկիզբ դրվեց քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացին:

Ազգային անվտանգության խորհրդի կողմից ընդամենը երեք կուսակցություններ թույլտվություն ստացան մասնակցելու խորհրդարանական ընտրություններին՝ Ժողովրդականը, Մայր հայրենիքը և Ազգայնական դեմոկրատականը: Ազգայնական դեմոկրատական կուսակցությունը (*Miliyetçi Demokrasi Partisi*) վայելում էր ԱԱԽ-ի հովանավորչությունը, և այն գլխավորում էր զորացրված գեներալ Թուրգութ Սունալփը[4]: Այս կուսակցության միջոցով զինվորական վերնախավը ցանկանում էր պահպանել իր լծակները նոր ձևավորվող քաղաքական համակարգի վրա: Սակայն 1983թ-ի

նոյեմբերի 6-ի խորհրդարանական ընտրություններում. ի զարմանս զինվորականների. հաղթանակ տարավ Մայր Հայրենիք կուսակցությունը (ՄՀԿ)[5]: ՄՀԿ-ի հաջողությունը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ այն դարձավ մինչ հեղափոխությունը գործած աջ ուղղվածության 3 կուսակցությունների (Արդարություն. Ազգային շարժում և Ազգային փրկություն) գաղափարների և անդամների ապաստանը. ինչի պատճառով էլ նրան կոչում էին «Սուրբ եղբայրության դաշինք»[6]: Ժողովրդական կուսակցությունն էլ իր հերթին կարողացավ ստանալ նախկին Ժողովրդա-հանրապետական կուսակցության ընտրազանգվածի ձայների հիմնական մասը: Այսպիսով, այն կուսակցությունը, որին զինվորականները նպատակադրված էին փոխանցել իշխանությունը, զբաղեցրեց ընդամենը երրորդ տեղը, ինչն անակնկալ էր զինվորական վերնախավի համար և որոշակի դժգոհություն առաջացրեց նրանց շրջանակներում: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ բոլորը սպասում էին բանակի արձագանքին: Սակայն բարձրաստիճան զինվորականները, տեղիք տալով երկրի խոշոր կապիտալին և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ճնշումներին, ընդունեցին ընտրությունների արդյունքները, և նախագահ Քենան Էվրենը Օզալին հանձնարարեց կառավարություն կազմել[7]:

Այսպիսով, ձևավորվեց նոր կառավարություն, որը գլխավորեց Թուրգութ Օզալը: Վերջինս նախկինում եղել էր Ս. Դեմիրելի տնտեսական խորհրդատուն, իսկ 1980-1983թթ. անցումնային շրջանում Բյուլենթ Ուլուսուի կառավարության մեջ զբաղեցրել էր պետական նախարարի, վարչապետի տեղակալի պաշտոնը[8]: Բացի այդ Թ. Օզալը նաև կարևոր մասնակցություն էր ունեցել «հունվարի 24-ի»[9] ծրագրի մշակման գործում:

1980-ական թվականների ամբողջ ընթացքում Օզալը իսլամամետ ուժերի նկատմամբ որդեգրել էր մեղմ դիրքորոշում. ինչը թերևս կաբելի է բացատրել ՄՀԿ-ի կազմում իսլամիստների զգալի քանակով: Նման հանգամանքը, բնականաբար, չէր կարող չառաջացնել զինվորականների անհանգստությունը, քանի որ 1980թ. ռազմական հեղաշրջման հիմնական պատճառներից մեկն էլ հանդիսանում էր հենց իսլամական գործոնը[10] Սակայն զինվորականներն Օզալի հանդեպ որդեգրեցին մեղմ և հանդուրժողական քաղաքականություն, ինչը

հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ Օզալը դեռ Բյուլենթ Ուլուսուի վարչապետության ժամանակաշրջանում, ի պաշտոնե սերտորեն համագործակցել էր Համաշխարհային բանկի, Միջազգային արժութային հիմնադրամի և եվրոպական ազդեցիկ ֆինանսական կառույցների հետ, և նա համարվում էր «Թուրքիայի տնտեսական դեսպանն» Արևմուտքում[11]: Ուստի, Օզալի կուսակցության նկատմամբ զինվորականների բարեհամբյուր դիրքորոշումն կարելի է դիտել որպես «ժեստ» Արևմտյան ֆինանսական շրջանակների հետ Թուրքիայի համագործակցության պատրաստակամությունը ցուցաբերելու համար: Նշենք նաև, որ զինվորականները ևս որոշակիորեն փոխել էին իրենց վերաբերմունքը կրոնի նկատմամբ: Եթե կրոնական հետադիմության (irtica) վերելքը և կրոնի անհանգստացնող քաղաքական ակտիվությունը դասվում էին երկրորդ ռազմական հեղաշրջման հիմնական պատճառների շարքին, ապա այժմ գեներալների համար հենց կրոնը դարձավ հասարակական կարգերը և արժեքները նորովի համակցելու միջոց: Թուրքիայի զինված ուժերը ձեռնարկեցին մի շարք քայլեր հասարակությունում կրոնի դերը վերանայելու, ամրապնդելու և ցանկալի շրջանակների մեջ պահելու ուղղությամբ[12]: Այդպիսի քայլ հանդիսացավ 1986թ. հունիսի 20-ին «Թյուրք-իսլամական համադրություն» կոչվող մշակութային հայեցակարգի ընդունումը, որը պետք է ներառեր օսմանյան-իսլամական և թուրքական ժառանգությունը: Վերոնշյալ հայեցակարգում ընդգծված էր, որ «Թուրքիայի մշակույթի համար աղբյուր են հանդիսանում թյուրքական/թուրքական և իսլամական մշակույթները»[13]:

Մեկ հանգամանք ևս նպաստեց զինվորականների կողմից Թուրգութ Օզալի հանդեպ մեղմ վերաբերմունքի որդեգրմանը: Թուրքական բանակը, ունենալով կարևոր նշանակություն երկրի քաղաքական կյանքում, նաև հանդիսանում է խոշոր ձեռնարկատեր: Իսմեթ Աքչայի կարծիքով Թուրքիայում բանակը վաղուց վերածվել է «սեփական շահերը հետապնդող կոլեկտիվ կապիտալիստի»[14]: Թուրքական բանակը ունի երկու լեգալ տնտեսական կառույց, որոնք շատ կարևոր դեր են խաղում երկրի առևտրային, ֆինանսական և արդյունաբերական ոլորտներում՝ իրենց կազմում ընդգրկելով երկրի խոշորագույն գործարանները ու ձեռնարկությունները: Այդ կառույցները

են Բանակին փոխօգնության կազմակերպությունը (Ordu Yardımlaşma Kurumu (OYAK) և Թուրքական զինված ուժերի զարգացման հիմնադրամը (Türk Silahlı Kuvvetlerini Geliştirme Vakfı (TSKGV)[15]: Իսկ Թուրգութ Օզալը. 1980-ականների երկրորդ կեսին և 1990-ականների սկզբին ձեռնարկել էր տնտեսական միջոցառումների մի ամբողջ համակարգ. որոնք ըստ Կիրենլի, իրապ բարեփոխական էին[16]: Այդ միջոցառումներով վերացվում էր պետության խիստ վերահսկողությունը արժեհամակարգի վրա. ազատականացվում էր ներմուծման համակարգը. օտարերկրյա կապիտալի գործունեությունը, քաջալերվում էր արտահանումը. էականորեն սահմանափակվում էր պետության միջամտությունը գնագոյացման մեջ[17]: Այս և մի շարք այլ միջոցառումներ ունեին դրական ազդեցություն նաև բանակի կապիտալի վրա, ինչը և նպաստում էր այդ մեծ վերաբերմունքի ձևավորմանը:

Պետք է նշել, որ զինվորականների որդեգրած մեղմ քաղաքականությունը վարչապետի հանդեպ, թույլ տվեց վերջինիս ձեռնարկել մի շարք քայլեր, որոնք նպատակ ունեին կրճատել զինվորականության դերը երկրի քաղաքական կյանքում: Օրինակ, Օզալը որոշեց սահմանադրության 4-րդ կետի վերացման հարցը. համաձայն որի, նախկին կուսակցությունների ղեկավարներին 10 տարի ժամկետով (1982-1992թթ.) չէր թույլատրվում զբաղվել քաղաքականությամբ, լուծել հանրաքվեի միջոցով[18]: 1987թ-ի սեպտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում սահմանադրության ժամանակավոր չորրորդ կետի վերացմանը կողմ քվեարկեց ընտրողների 50.23%-ը, իսկ դեմ՝ 49.77%-ը[19]:

Միևնույն ժամանակ Օզալը փորձեց միջամտել զինվորականների ինքնիշխանությանը վերաբերող հարցերին և հաստատել քաղաքացիական իշխանության վերահսկողությունը վերջիններիս նկատմամբ: Այսպես, 1987թ. Օզալը անտեսեց զինվորական վերնախավի կողմից Գլխավոր շտաբի պետի համար առաջադրված Նեջդեթ Օզթորունի թեկնածությունը՝ նրա փոխարեն նշանակելով Նեջիփ Թորումթային: Չբավարարվելով այսքանով՝ Օզալը շուտով հայտարարեց, որ մտադիր է Գլխավոր շտաբի պետի պաշտոնը դնել պաշտպանության նախարարի ենթակայության տակ[20]: Օզալի կողմից ձեռնարկված այս և մի շարք այլ քայլեր լարվածություն առաջացրին նրա և զինվորականների միջև: Սրա հետևանքով Գլխավոր

շտաբի պետ Նեջիփ Թորումթայը հրաժարական տվեց[21]: Սա արտասովոր երևույթ էր թուրքական իրականության համար, քանի որ մինչ այս բանակ-քաղաքացիական իշխանությունների բախման այլընտրանքում միշտ վերջիններս էին թողնում իրենց պաշտոնները՝ առաջինների կողմից ուժի կիրառման և կամ ուժի կիրառման սպառնալիքի տակ:

1989թ-ի հոկտեմբերի կեսերին Թ. Օզալն ընտրվեց Թուրքիայի Հանրապետության նախագահ: Օզալի վարած քաղաքականության հետևանքով 1990-ական թթ. սկզբին սրված ներքաղաքական գործընթացները. միջկուսակցական պայքարը. սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրները. իսլամիստական ուժերի աշխուժացումը. որը հատկապես ուժեղացավ 1990-ականների սկզբին, բանակի կողմից քաղաքական կյանքին միջամտելու յուրօջ սպառնալիքներ էին առաջացրել[22], ինչը հետագայում՝ արդեն Օզալի մահից հետո, իրագործվեց 1997թ. փետրվարի 28-ի ռազմական միջամտության տեսքով:

Այսպիսով, 1980-1983թթ. անցումնային շրջանում զինվորականների կողմից ձեռնարկված օրենսդրական փոփոխությունները վերջններիս հնարավորություն տվեցին հետագայում վերահսկողության տակ պահել Թուրքիայի հասարակական-քաղաքական դաշտը: Զինվորականները Թուրքիայի վարչապետ, իսկ այնուհետև նախագահ Թուրգութ Օզալի հանդեպ որդեգրել էին մեղմ քաղաքականություն, որի համար պատճառ էին հանդիսացել զինվորականների կողմից իսլամի դերի վերաիմաստավորումը, Օզալի վարած տնտեսական բարեփոխումների քաղաքականությունը և, ամենակարևորը, Արևմուտքին սիրաշահելու ձգտումները: Օգտվելով զինվորականների նման մեղմ վերաբերմունքից՝ Օզալը փորձեց որոշակիորեն կրճատել զինվորականության դերը երկրի քաղաքական կյանքում: Սակայն, չնայած զինվորականության դերը նվազեցնելու և վերջիններիս վրա քաղաքացիական իշխանությունների գերակայությունը հաստատելուն ուղղված Թուրգութ Օզալի եռանդուն ջանքերին, զինվորականները հիմնականում շարունակում էին մնալ երկրի «խնամակալի» դերում:

LILIT MARIKYAN
(YSU)

THE RELATIONS BETWEEN THE ARMY AND SOCIETY IN THE YEARS OF GOVERNMENT OF TURGUT OZAL

During the transition period of 1980-1983 militaries carried out the constitutional changes, which have enabled them to hold in the further under the control a social-political life of the country. Militaries carried out towards Ozal soft policy. Cases for this were reconsideration of a role of an Islam by the militaries. economic reforms provided by Ozal, and, the most important. the diligence to please the West. Having such soft attitude of militaries, Ozal has tried to reduce somehow a role of army in a political life of the country. However in spite of the fact that Turgut Ozal has made much to provide the superiority of the civil authorities over the militaries, but the lasts were continuing to remain the «trustees» of the country.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Багдасарян С., Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-ых годах, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXI, Երևան, 2002, էջ 33:
2. Այս մասին առավել մանրամասն տե՛ս Anayasa T. C., İstanbul, 1982; Bayramoğlu A., Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, Bilırkim Yavm., İstanbul, 2004, McFadden J. M., Civil-Military Relations in the Third Turkish Republic. – The Middle East Journal, Vol. 39, No. 1, Winter 1985, p. 69-85; Данилов В., Основные осовенности новой конституции Турецкой Республики (в сравнении с конституцией 1961г.), Турция, сборник статей, М., 1988, с. 23.
3. Данилов В., Турция 80-их: от военного режима до "ограниченной демократии". М., 1991. с. 81.
4. Նույն տեղում, էջ 82-83:
5. Ընտրությունների արդյունքում ձայների հարաբերակցությունը բաշխվեց հետևյալ կերպ՝ ՄՀԿ-ն ստացավ ձայների 45,15%-ը (212 պատգամավորական մանդատ), ԺԿ-ն՝ 30,45% (117 պատգամավորական մանդատ) և ԱԴԿ-ն՝ 23,27% (71 պատգամավորական մանդատ): John M. McFadden M. J., նշվ. աշխ., էջ 81-82:
6. Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Եր., 2008, էջ 72:
7. Evren K., Kenan Evren'in Anıları, Cilt-4, İstanbul. Milliyet Yayın., 1991, s. 405-455
8. Данилов В., նշվ. աշխ., էջ 59-60:
9. Այն իրենից ներկայացնում էր «տնտեսությունը կայունացնելուն ուղղված» միջոցառումների մի համակարգ, որը մշակվել և ընդունվել էր Մ. Դեմիրելի կառավարության կողմից 1980թ. և սրանով, փաստորեն, Թուրքիան պետք է

ամբողջովին համաձայնվեր արևմտյան ֆինանսական կապիտալի առաջարկությունների հետ:

10. Դումանյան Ա., Թուրքիայի 1980թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ. Մերձավոր Արևելք. h. III. Եր. 2006. էջ 52-53:
11. Տեր-Սաքևոսյան Վ.,նշվ. աշխ., էջ 73-74:
12. Նույն տեղում, էջ 78-79
13. Киреев Н., Светкость или шариат: раскол в турецком обществе на пороге XXI веке. Ближний Восток и современность, сборник статей (выпуск шестой). М., 1998, с. 85.
14. Akça I., Kolektıf bır sermayedar olarak Türk Sılahlı Kuvvetleri. Bır zümre, bir parti. Turkıyede Ordu, Istanbul 2004
15. Ավագյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ 4(50), Եր., 2006. էջ 67-68:
16. Киреев Н., История Турции XXI век, М., 2007, с. 344.
17. Նույն տեղում:
18. Karabelias G., The evolution of cıvil-military relations in post-war Turkey, 1980-95. Middle Eastern Studıes, Oct. 1999; 35, 4, Academic Research Library, p. 137.
19. Данилов В., նշվ. աշխ. էջ 151:
20. Բացառությամբ 1949-ից մինչև 1960թթ., երբ պաշտպանության նախարարությունը իրավունք ուներ կառավարել երկրի զինված ուժերը և պաշտոնների նշանակել. մնացած ժամանակներում նրան վստահված էր միայն խորհրդատվական դեր: Տես Karabelıas G., նույն տեղում, էջ 147:
21. Karabelıas G. նշվ. աշխ., էջ 137-138:
22. Տեր-Սաքևոսյան Վ., նշվ. աշխ., էջ 124-125:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԻԿ
(ԵՊՀ)

ԳԼԽԱՀԱՐԿՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Օսմանյան կայսրությունն իր կառուցվածքով և ներքին կյանքը կազմող սոցիալ-տնտեսական և քաղաքական կառույցներով դասական իսլամական պետություն էր, որն իր կազմավորման պահից ներ օսմանահպատակ ոչ մուսուլման բնակչության նկատմամբ տևականորեն գործադրել է հալածանքների և բռնաճնշումների մի ողջ համալիր:

Օսմանյան կայսրության իրականացրած դաժան հարկային քաղաքականությունը դեպի այդ նպատակը տանող ճանապարհներից մեկն էր: Օսմանյան կայսրության հարկային համակարգի ուսումնասիրությունը վեր է հանում փաստարկներ, որոնք վճռականորեն հերքում են թուրք պատմաբանների պնդումները, թե իբր օսմանյան սուլթանները հանդուրժողական քաղաքականություն են վարել հպատակ ժողովուրդների նկատմամբ, թե քրիստոնյաներն որոշակի արտոնություններ են վայելել և չեն ենթարկվել ազգային և կրոնական ճնշումների ու հալածանքների:

XVI դարում Օսմանյան կայսրությունն արդեն ուներ հստակ ձևավորված և կայուն հարկային համակարգ: Վերջինիս ձևավորմանը նպաստել են հատկապես տեղանքի պայմաններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև բնակչության շրջանում արմատացած ավանդույթները: XVI-XVII դարերում Օսմանյան կայսրության հարկային համակարգը սերտորեն առնչվում էր առկա ավատատիրական ռենտայի բոլոր ձևերի հետ:

Համաձայն օսմանյան օրենսդրության՝ բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբի՝

1. Հարկեր, որոնք հենվում էին մուսուլմանական շարիաթի վրա (rüsüm-i şeriye կամ tekâlif-i şeriye):
2. Հարկեր, որոնք հենվում էին սովորույթի վրա (rüsüm-i örfiye կամ tekâlif-i örfiye):

Օսմանյան կայսրությունում գլխահարկը՝ ջիզիեն, պետության օգտին գանձվող ամենաեկամտաբեր և ամենակարևոր հարկն էր: Ինչպես վկայում է Ինալջիքը՝ Հիջրայի 894թ. (1488 դեկտ. 5 - 1489 նոյկտ. 24) ջիզիե հարկից ստացված եկամուտը հասել է 30.71 միլիոն ակչեի: 1528թ. այս հարկից ստացվող եկամուտն աճել է՝ կազմելով կայսրության ամբողջ եկամուտների 8 %-ը[1]:

Ջիզիեն հարկվում էր կայսրության ոչ մուսուլման 14 տարին լրացած չափահաս տղամարդ հպատակներից՝ բացառությամբ տարեցների (75 տարեկան և ավելի), անդամալույծների և ստրուկների: Արգելվում էր ջիզիե գանձել զործազուրկներից և նրանցից, ովքեր տարվա կեսից ավելին հիվանդ են եղել: Այս սկզբունքը Օսմանյան կայսրությունում գործածության մեջ դրվեց 1691 թվականից[2]:

Իսլամական իրավունքի համաձայն՝ գոյություն ուներ 2 տեսակ ջիզիե.

1. Խաղաղ ճանապարհով գանձվող (aleruűs cizye), որի գանձման չափը որոշվում էր ոչ մուսուլմանների հետ կնքած պայմանագրի հիման վրա՝ հաշվի առնելով նրանց նյութական վիճակը:
2. Ամբողջությամբ իսլամական պետության կողմից գանձվող ջիզիե (maktu cizye): Եթե մուսուլմանները, իրենց ուժերով որևէ թշնամական երկիր գրավեին և ոչ մուսուլման բնակչությանն իրենց հայրենիքի «հպատակը» դարձնեին, հարկը գանձում էին ըստ պետության կողմից հաստատված չափի[3]:

Այս հարկից ստացվող եկամուտները համալրում էին կայսրության կենտրոնական գանձարանը (բացառիկ դեպքերում ջիզիե գանձվում էր նաև ավատատերերի օգտին): Սա ամենածանր հարկն էր ոչ միայն այն պատճառով, որ գոյություն չուներ գանձման հաստատուն չափ, այլ այն պատճառով, որ ջիզիեն հնարավորություն էր տալիս բացահայտ կողոպտել բնակչությանը. ջիզիե էին պահանջում ոչ միայն տեղի բնակիչներից, այլև տվյալ վայրից հեռացածների և նույնիսկ հանգուցյալների փոխարեն, եթե նրանց անունները դեռևս չէին հանվել հարկացուցակներից[4]:

Իսլամական օրենքը պահանջում էր հաշվի առնել հարկատուի նյութական վիճակը, և ըստ այդմ հարկատուները բաժանվում էին հարուստների (a'la), միջակների (evast) և աղքատների (edna): Հարուստ

էին համարվում նրանք, ովքեր տարեկան 10 հազար դիրհեմ արծաթից ավել եկամուտ ունեին, միջակ խավի ներկայացուցիչները տարեկան 200 դիրհեմից ավել էին վաստակում, և այս հարկատուները պետական գանձարան էին վճարում համապատասխանաբար 48, 24, 12 դիրհեմ արծաթով կամ 4, 2 և 1 դինար ոսկով[5]: Արգելվում էր ջիզիե գանձել գործազուրկներից և նրանցից, ովքեր տարվա կեսից ավելին հիվանդ են եղել: Այս սկզբունքն Օսմանյան կայսրությունում գործածության մեջ դրվեց 1691 թվականից[6]:

Իրականում, սակայն, այս սկզբունքը չէր կիրառվում: Սովորաբար հարկահանությունը կոպիտ կամայականությունների և չարաշահումների տեղիք է տվել: Նույնիսկ պատերազմների ընթացքում պետության կողմից ապօրինի տարին 2 անգամ գլխահարկ է գանձվել, իսկ նրանք, ովքեր ի վիճակի չեն եղել վճարել գլխահարկը, ենթարկվել են մարմնական ծանր պատիժների:

Չնայած օսմանյան կանոննամեներում, որպես օրենք, ջիզիեի գանձման չափը եղել է 25 ակչե, սակայն այն ունեցել է խիստ փոփոխական բնույթ և տարբեր ժամանակներում հասել մինչև 240 ակչեի[7]:

Ջիզիե հարկից ազատված էին նրանք, ովքեր հսկում էին կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհներն ու լեռնանցքները, ովքեր աշխատում էին պետական հանքավայրերում կամ կայսրությունում որևէ պաշտոն էին զբաղեցնում, ոչ մուսուլման հոգևորականներն ու այն ծնողները, որոնց երեխաներին ենիչերի էին տարել: Ջիզիե հարկից ազատվում էին նաև նրանք, ովքեր «ինքնակամ» իսլամ էին ընդունում: Սակայն եթե «անհավատը» իսլամ էր ընդունում տարվա ընթացքում, ապա ջիզիե հարկի ծանրության լուծն իր ուսերից չէր թոթափում և պարտավոր էր վճարել ընթացիկ տարվա հարկը, քանի որ հարկումը սովորաբար կատարվում էր տարվա սկզբին[8]:

Օսմանյան կայսրությունում ջիզիեի համակարգն իր առանձնահատկություններն ուներ: Ի տարբերություն այլ հարկերի, որոնք գանձվում էին ըստ աշխարհագիր մատյանների տվյալների, ջիզիեն ուներ իր մատյանները, որոնք ամեն տարի մի գույն ունեին, իր կնիքները, որոնք նույնպես ամենամյա էին, և բացի այդ վերոհիշյալ հարկատուների համար կիրառվում էին տարբեր կնիքներ: Ջիզիեի մատյանների վրա նշվում էր գանձման տարեթիվը, գանձումից

ստացված ընդհանուր գումարը. մատյանի տեսակը. որը պայմանավորված էր հարկատուների տեսակներով. գլխավոր գանձապահի և ջիզիեդարի՝ ջիզիե գանձողի անունները:

XIX դարում՝ Մահմուդ II-ի օրոք. ջիզիեի գանձման համակարգում որոշակի փոփոխություններ կատարվեցին: Այս փոփոխությունները պայմանավորված էին երկու հանգամանքով. առաջինն այն էր. որ հայկային քաղաքականության փոփոխությունը. մասնավորապես՝ ոչ մուսուլման հպատակներից գանձվող հարկերի թեթևացումը Մահմուդ II-ի ձեռնարկած բարեփոխումների շղթայի օղակներից էր. իսկ երկրորդը և առավել կայունը՝ եվրոպացիների ճնշումներն էին կայսրության վրա[10]:

Թեև թանզիմաթի հրովարտակում (1839թ.նոյեմբերի 3) անմիջականորեն ջիզիեին վերաբերող հոդվածներ չկային, սակայն հարկային համակարգի և զինվորական ծառայության հետ կապված հոդվածները ստեղծել էին այն մթնոլորտը, որ վերացվելու էր ջիզիեն՝ փոխարինվելով պարտադիր զինվորական ծառայությամբ:

1856թ. սուլթանական հրովարտակով վերացվեց ոչ մուսուլմանների գլխին վաղուց ի վեր պատուհաս դարձած ջիզիեն, և մուսուլմանների հետ հավասար զինվորական ծառայության անցնելու իրավունք սահմանվեց[11]: Այս հրովարտակը մեծ դժգոհություն առաջացրեց Օսմանյան կայսրության ողջ բնակչության շրջանում: Քրիստոնյա բնակչության դժգոհության պատճառն այն էր, վերջիններս իրենց զենքն ուղղելու էին քրիստոնեական պետությունների և, մասնավորապես, Ռուսաստանի դեմ, որի հետ ազատագրման հույսեր էին կապում, իսկ մուսուլմանների խուճապի պատճառը կայսրությունում իրենց գերիշխող դիրքը կորցնելու վախն էր: Այս երկկողմ դժգոհությունները ստիպեցին կայսրությանն անորոշ ժամանակով հետաձգել քրիստոնյաներից զորք հավաքագրելու խնդիրը, իսկ կայսրության գանձարանը «դատարկ» չթողնելու համար սահմանվեց նոր հարկատեսակ՝ bedel-i askeriye[12]: Ըստ էության, սա անվանապես տարբեր, սակայն բովանդակությամբ նույն ջիզիեն էր:

Ջիզիեի գանձման հանգամանքը հիմնավորվում էր նախ և առաջ իսլամական սուրբ գրքով՝ Ղուրանով (9/29). «Պայքարեք նրանց դեմ, ովքեր չեն հավատում ոչ Ալլահին, ոչ ահեղ դատաստանի օրվա գոյությանն, ոչ էլ այն արգելքներին. որոնք սահմանվել են Ալլահի և նրա

մարգարե Մուհամմեդի կողմից, և չեն ընդունում իրական ճշմարիտ կրոնը, եթե նրանք նույնիսկ գրքի մարդիկ են, քանի դեռ ինքնակամ հնազանդությամբ ջիզիե չեն վճարել և իրենց նվաստ չեն զգացել»[13]:

Որոշ թուրք պատմաբաններ ջիզիե գանձելու փաստը մեկնաբանում են ոչ թե որպես իսլամացման քաղաքականությանն օժանդակող երևույթ, այլ որպես զաքաթին փոխարինող հանգամանք[14]: Ավելին, քանի որ գրքի մարդկանց[15] արգելվում էր ծառայել բանակում, այս պարագայում, ըստ նրանց, ջիզիեն դիտվում էր որպես յուրատեսակ փոխհատուցում մուսուլմանական պետությանը՝ անհավատների հետ կնքած սոցիալական պայմանագրի շրջանակներում վերջիններիս պաշտպանությունն իրականացնելու համար:

Սակայն ջիզիե համակարգի գոյությունն «արդարացնող» այս փորձերը լիովին հերքելի են, քանի որ ջիզիեն մշտապես եղել է կայսրության ոչ մուսուլման հպատակներին ճնշելու գործիք (ինչպես և գրված է Ղուրանում): Այս փաստարկը ժխտվում է այն հիմնավորմամբ, որ «պաշտպանությունն» ավելի ճիշտ՝ «չհարձակվելու երաշխիքը», ըստ էության, «տանիքի» վարձ էր: Իսկ թե ջիզիեն փոխաբինել է զաքաթին, այս պատճառաբանությունը ևս հերքվում է, քանի որ զաքաթը զուտ մուսուլմանական պարտականություն է, և այն ուղղված էր բացառապես մուսուլման չքավորներին օգնելուն:

Օսմանյան կայսրության հարկային համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկար կյանքի մի ոլորտ, տնտեսական մի գործունեություն, մարդկային որևէ հարաբերություն, որը զերծ լիներ հարկի կամ տուրքի «բարիքից». ծնունդից մինչև մահ՝ կյանքի ամբողջ ընթացքում Օսմանյան կայսրությունում մարդը գտնվում էր իրավական, կրոնական, մարդկային, ֆիզիկական, բարոյահոգեբանական գործունեությունը կանոնավորող, կաղապարող, շղթայող օրինական և ոչ օրինական՝ ավանդույթային, հին ու նոր և նորաստեղծ վճարումների ու հատուցումների, տուրքերի և հարկերի ծանր լծի տակ: Ավելին, օսմանյան իշխանություններն օգտագործում էին ամեն մի առիթ, պատահար՝ նորանոր հարկեր «ստեղծելու», ավելին գանձելու, հին հարկային համակարգը զարգացնելու և ճյուղավորելու համար:

ANUSHIK MARTIROSYAN

(YSU)

POLL - TAX IN OTTOMAN EMPIRE

The Ottoman Empire whit its socio-economic and political structures. which made internal affairs. was classical Islamic power. Empire from the date of formation applied eternal prosecutions and oppressions over its subject and especially over not Moslems. The purpose of this policy was formation of new homogeneous power by disorganization and compulsory renunciation from their belief. Republican Turkey was also faithful to this policy. Stern tax policy. which carried out the Ottoman Empire. was one of these roads. which conduced to this purpose.

Jizya was a basic tax in the Ottoman Empire. It was the heaviest tax not only that it did not have a stable measure of taxation, but also jizya gave the chance openly to plunder taxpayers. Jizya collected not only from local residents, but also for those who did not live there anymore and for who was dead, if their names were not deleted from the lists of taxpayers.

In May 14, 1855 the collection of jizya was stopped, instead the law on obligatory military preparation for all people of Ottoman Empire was passed.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Inalcık H., Osmanlı Imparatorluğu'nun Ekonomik ve Sosyal Tarihi, c. 1 (1300-1600). Istanbul, s. 105.
2. http://ansiklopedi.bibilgi.com/tarih-deyimleri-terimleri-HII
3. Özcoşar I., Güneş H. H., Osmanlı Devleti'nde Cizye ve 19. Yüzyıla Ait Bir Cizye Defteri: Cizre Sancağı'nın Cizye Defteri (Cizye Defter Numarası: 375), Elektronik Sosyal Bilimler Dergisi www.e-sosder.com ISSN: 1304-0278 Kış-2006 C.5, S.15 (159-179), s. 161.
4. Inalcık H., նշվ. աշխ., էջ 107:
5. Necdet Sevinç, Osmanlı'nın Yükselişi ve Çöküşü, Istanbul, 1999, s. 244.
6. http://ansiklopedi.bibilgi.com/tarih-devimler-terimler-HII
7. Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Եր., 1999, էջ 93:
8. Ислам, Энциклопедический словарь, М., 1991, с. 65.
9. Özcoşar I., Güneş H. H., նշվ. աշխ., էջ 158:
10. Այս շրջանում աճում էին եվրոպացիների հետ կատարվող առևտրի ծավալները: Վերջիններս հարաբերություններ էին հաստատել կայսրության քրիստոնյա հպատակների հետ: Այս հանգամանքով է բացատրվում կայսրության վրա եվրոպացիների գործադրած ճնշումները՝ քրիստոնյա հպատակների դրությունը բարելավելու համար (Özcoşar I., Güneş H. H., նշվ. աշխ., էջ 162.):
11. Islâm Ansiklopedisi. c. 5. Istanbul, 1992. s. 301.

12 1909թ. օգոստոսի 7-ին օսմանյան խորհրդարանն օրենք ընդունեց, որով վերացվեց bedel-ı askeriye-ն: Այս օրենքի համաձայն կայսրության բոլոր սպգերը ենթակա էին զինվորական ծառայության Աստոյեան Ա., Հայերն Օսմանեան Բանակում (ԺԸ Դ-արից մինչև 1918), Հայկազեան Հայագիտական Հանդէս. Պէյրութ, 2008, էջ 116

13 http://quranexplorer.com/index/Sura-009-Al-Tawba-REPRNTANCE-DISPENSATION.aspx

14 Eyrılmaz B.. Osmanlı Devletınde Gayrimüslım Tebaanın Yönetimi, Istanbul. 1990. s 22

15. Իսլամական աշխարհում ընդունված էր ոչ մուսուլմաններին բաժանել 2 հիմնական խմբի՝ գրքի հասարակություն (ehl-ı kıtap olanlar) և գրքի հասարակություն չհանդիսացող (ehl-i kitap olmayanlar)՝ Իսլամական իրավունքի համաձայն՝ այս երկու հասարակությունները էր, որպես իսլամական պետության հպատակներ, կյանքի, գույքի, խղճի ազատության տեսանկյունից պետության հովանավորությունն էին վայելում: Սակայն այս երկու հասարակությունների միջև որոշակի տարբերություններ կային: Այսպես, ըստ իսլամական իրավունքի՝ մուսուլմանը կարող էր ամուսնանալ գրքի հասարակության ներկայացուցիչ կնոջ հետ: Գրքի հասարակությանը թույլատրված էր նաև եկեղեցի կամ սինագոգ մտնել, գինի խմել (Hamidullah M., Islama Girişi, Istanbul, 1965, s. 149):

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
(ԱԻ)

«ՆՅԱՐԴԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ» 1947 ԹՎԱԿԱՆԻՆ

1945թ. ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ծագած «նյարդերի պատերազմը» իր հանգուցալուծումը ստացել է 1947 թվականին, չնայած որ Մոսկվան Անկարայից ներկայցրած պահանջներից պաշտոնապես հրաժարվել է միայն 1953թ.:

1945թ. օրակարգում հայտնված սևծովյան նեղուցների և Կարսի ու Արդահանի Խորհրդային միությանը վերադարձնելու հարցը լուրջ ճգնաժամ է առաջացրել միջազգային ասպարեզում: Եթե սկզբնական շրջանում Մեծ տերություններին անհանգստացնում էր միայն նեղուցների հարցը և նախընտրում էին ակտիվ դեր չխաղալ հողային պահանջատիրության հարցում, ապա 1946թ. գարնանից ամեն կերպ փորձել են Անկարային պաշտպանել Մոսկվայի հաբձակումներից:

Կարելի է ենթադրել, որ 1946թ. Ու. Չերչիլը Ֆուլտոնում ունեցած ելույթը փրկեց Թուրքիային մասնատումից: Այլ կերպ ասած՝ 1946թ. Թուրքիայի համար բեկումնային տարի էր: Աստիճանաբար մեծանում էր Թուրքիայի դերը հակախորհրդային պայքարում: Ի վերջո նա դարձել է Վաշինգտոնի և Լոնդոնի հավատարիմ դաշնակիցը: 1946թ. օգոստոսի 15-ին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աչիսոնը խոսելով «Թուրքիայի և Հունաստանի նկատմամբ ԽՍՀՄ-ի քայլերի լրջության մասին», հայտարարել է, որ իր կառավարությունը վճռել է «ամեն գնով ընդդիմանալ դրանց»[1]: Արդյունքում, 1947թ. մարտի 12-ին ԱՄՆ-ի նախագահը հրապարակել է նշանավոր «Տրումենի դոկտրինան», որով երաշխավորվում էր Հունաստանի և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ օրերին Տրումենը հայտարարել է, որ Թուրքիայի ազգային ամբողջականության պահպանմամբ ապահովվում է կարգուկանոնը Միջին Արևելքում[2]:

Ամերիկյան ծրագրերը իրականացնելու համար, այդ երկրի կոնգրեսը վավերացրել է արտասահմանյան երկրներին որպես

տնտեսական և ռազմական օգնություն հատկացվելիք 400 մլն. դոլարի բյուջեն, որից 100 մլն. տրամադրվելու էր Թուրքիային: Դա հիմք է հանդիսացել թուրք ամերիկյան հետագա սերտ բարեկամության համար: 1947թ. մայիսի 2-ին Ստամբուլ է ժամանել ԱՄՆ-ի Միջերկրական նավատորմը, հունիսին Անկարա է եկել ամերիկյան զինվորականության պատվիրակությունը, իսկ հուլիսի 12-ին երկու երկրների միջև ստորագրվել է ռազմական համաձայնագիր[3]:

Այս ամենին հետևող Խորհրդային Միությունը սեպտեմբերի 15-ին ՍԱԿ-ի ամբիոնից հայտարարել է, թե ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Հունաստանին և Թուրքիային տրամադրվող նման աջակցությունը ԽՍՀՄ-ի դեմ օգտագործվելու է որպես քաղաքական զենք[4]: Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, ապա վերջիններս «Տրումենի դոկտրինայի» իրապարակումից հետո իրենց զգում էին ավելի վստահ: Թուրքիայի նախագահ Ի. Ինոնյուն Ռ-իզում ունեցած ելույթում հայտարարել է, որ «ի տարբերություն անցած տարվանից Թուրքիայի իրավիճակը ավելի ամուր է»[5]: Թուրքական մամուլն էլ պնդում էր, որ իրենք են հաղթել «նյարդերի պատերազմը»[6]: Միաժամանակ 1947թ. լույս աշխարհ եկավ ԱՄՆ-ի տնտեսական օգնությամբ Եվրոպան վերականգնելու և զարգացնելու պետական քարտուղար Ջորջ Մարշալի ծրագիրը (այստեղից էլ՝ «Մարշալի պլան» անվանումը): 1948թ. այդ ծրագիրը ևս տարածվել է Թուրքիայի վրա:

Այսպիսով, «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործման արդյունքում Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ ռազմական ու տնտեսական մեծ օգնություն: Փոխարենը ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան Թուրքիայի տարածքում հնարավորություն ստացան կառուցել իրենց ռազմական հանգրվանները: Այսպիսով, Մեծ տերությունները պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:

Սակայն միաժամանակ պետք է շեշտել նաև այն փաստը, որ վերջին տասնամյակներում մի շարք թուրք պատմաբաններ վստահեցնում են, որ ԱՄՆ-ն չի փրկել Թուրքիային ԽՍՀՄ-ի հարձակումներից: Ըստ նրանց, 1946-1947թթ. Հայկական հարցը շարունակում էր մնալ քաղաքական ասպարեզում, սակայն արդեն պարզ էր, որ այն լուծվելու է ի նպաստ Թուրքիայի: Թուրք պատմաբան Դ. Ավջըոլլուն «Ազգային ազատագրության պատմություն» աշխատության մեջ հայտնում է, թե

ԱՄՆ-ի պետքարտուղար Բյորնսը 1946թ. աշնանը. իբր. բացահայտորեն հայտարարել էր. որ ԱՄՆ-ը միայն տնտեսական օգնություն կարող է ցույց տալ Թուրքիային: Պրոֆեսոր Ահմեդ Շյուքրուն էլ 1966թ. «Ուլուս» թերթում հրատարակած «Թուրքիայի փրկիչը Ամերիկա՞ն է» հոդվածում գրել է. թե Թուրքիայի վիճակը հետպատերազմյան ժամանակաշրջանում շատ ծանր էր: «Եթե Խորհրդային Միությունը ճնշումը պատերազմի վերածեր. ապա Թուրքիան ստիպված էր միայնակ պատերազմել: Եվ քննարկելով այդ տարիների անցուդարձերը կարող ենք վստահ լինել. որ ո՛չ դաշնակից Անգլիան. և ո՛չ էլ իր փրկարարությամբ հպարտացող Միացյալ Նահանգները օգնության կհասնեին»[8]: 1947թ. նոյեմբերի 12-ի «Ուլուս» թերթում հրատարակված «Ամերիկյան արտաքին քաղաքականությունը» խորագրով հոդվածում թուրք լրագրող Նիխատ Էրիմը վերլուծելով ԱՄՆ-ի հետպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի նկատմամբ վարած վտփոխական քաղաքականությունը, հանգել էր այն եզրահանգման. որ Թուրքիայի ճակատագիրը դեռ վտանգված է. քանի որ Տրումենի վարչակազմը, ոչ թե Թուրքիայի, այլ ԱՄՆ-ի շահերն է պաշտպանում և անհրաժեշտության դեպքում իրենց կդավաճանի[9]: Այլ կերպ ասած՝ թուրքերը ամերիկյան պաշտպանությունից այնքան էլ վստահ իրենց չէին զգում, գիտակցելով, որ եթե վաղը Վաշինգտոնի շահերը մեկ այլ բան պահանջեն, ապա միջազգային քաղաքական իրավիճակը կրկին կփոխվի և հավանականությունը մեծ էր, որ ոչ ի նպաստ Թուրքիայի:

Այնուհանդերձ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջը. այն է՝ Կարսի ու Արդահանի հարցը, 1947թ. դեռ շարունակում էր մնալ օրակարգում: Այն 1947թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ում մեկ անգամ էլ անուղղակիորեն արծարծվել է: Այսպես, երբ Թուրքիայի ներկայացուցիչ Ս. Սապերը հայտնել է, թէ խորհրդային մամուլում և ռադիոյում տարվող հակաթուրքական քարոզարշավում լայն տեղ է տրվում վրացական տարածքային պահանջներին՝ չհիշատակելով հայկականը, ԽՍՀՄ-ի ներկայացուցիչ Վ. Վիշինսկին պատասխանել է, թե ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքում գտնվող Կարսի և Արդահանի շրջանների վրացական լինելու մասին Խորհրդային Վրաստանի պատմաբանների նամակին. ապա այդ գիտնականների հիմնավորումներն անվիճելի են: Նա խորհուրդ է տվել Սապերին մեկ

անգամ էլ կարդալ այդ նամակը, որում վրացի ակադեմիկոսները, ապացուցելով, որ այդ հողերը վրացական են, պահանջում են դրանք վերադարձնել իրենց[10]: Վիշինսկին հետևելով Ս. Սայերին՝ իր ելույթում ևս չի հիշատակել հայկական տարածքային պահանջները: Մինչդեռ Ի. Ստալինը կամ էլ վրացի ակադեմիկոսները, ի տարբերություն խորհրդային դիվանագետի, Կարսը չեն համարել վրացական:

Այս ելույթը հետագայում մեծ իրարանցում է առաջացրել Խորհրդային Միությունում և Սփյուռքում: Խորհրդային մամուլը առանց աղմուկի փորձել է ուղղել սխալը, մոսկովյան «Տրուդ» թերթը հոդված է հրատարակել Կարսի ու Արդահանի մասին՝ հիշեցնելով, որ Մոսկվայի Լենինի թանգարանի պատին կախված է առաջնորդի ձեռքով գծված Կովկասի քարտեզը, որում կարմիր շրջանակի մեջ են առնված հայկական երկու նահանգները՝ Կարսն ու Արդահանը[11]: Սփյուռքում Վ. Վիշինսկու այս հայտարարությունը մեծ աղմուկ է բարձրացրել: Դաշնակցական պարբերականները գրում էին, թե ԽՍՀՄ-ն արդեն թաղել է Հայկական հարցը: Դա ստիպել է խորհրդային դիվանագետին տալ որոշ պարզաբանումներ. «Ես ըսած էի, թէ վրացի գիտնականներ յայտնած են, թէ Կարսն ու Արտահանը 1500 թուականներէն ի վեր կը պատկանին Վրաստանին: Ես չըսի թէ՝ Կարսն ու Արտահանը կը պատկանին Վրաստանին, չըսի նաեւ, թէ կը պատկանին Հայաստանին: Ես ըսի, որ Խորհրդ. Միութիւնը պիտի առնէ Կարսն ու Արտահանը եւ պիտի տայ անոր, որուն կը պատկանի»[12]:

1947թ. հետո Կարսի և Արդահանի պահանջը միջազգային ասպարեզում այլևս չի շոշափվել, չնայած այս լռության 1948թ. այս խնդիրը դեռ շարունակվում էր մնալ Մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: 1948թ. ապրիլի 24-ին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դ. Քելլին արտգործնախարարություն ուղարկած նամակում անդրադարձել է ԽՍՀՄ-ի Խորհրդային Հայաստանի անունից պահանջած հողերին: Նա գրել է, որ ԽՍՀՄ-ի միակ նպատակն է իր ազդեցությունը տարածել Թուրքիայի վրա: Այդ նպատակով Մոսկվան Անկարային ներկայացրել է պահանջներ, որը վերջինս չէր կարող ընդունել: Նա ակնարկել է, թե Կարսի, Արդահանի և Արդվինի պահանջման պատմական պատճառները պաշտոնապես հերքվել են Թուրքիայի վարչապետի կողմից, մինչդեռ հարցը մինչ օրս մնում է

օրակարգում, ինչը, ըստ Քելլիի, վկայում է, որ Խորհրդային Միությանը անհրաժեշտ է միայն ստանալ Արևելյան Անատոլիայի տարածքները[13]:

Հիշեցնենք, որ դիվանագետը խոսում է վարչապետ Շ. Սարաջօղլուի 1946թ. հունվարի 6-ին մեջլիսում արած հայտարարությանը, թե ինչու են այդ տարածքները թուրքական համարվում: Նա պարզաբանել էր, թե իբր «Կարսում և Արդահանում ոչ մի հայ չի ապրում»[14]: Մինչդեռ Քելլին մոռանում է, որ Թուրքիայի վարչապետի հայտարարությունն անպատասխան չի մնացել: Մեկ ամիս անց՝ փետրվարի 6-ին, «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակվել է պրոֆ. Ծ. Խվոստովի «Պատմական իրողությունները կամքաստանեն» խորագրով աղմկահարույց նամակը, որտեղ հեղինակը հարց էր տալիս Սարաջօղլուին, թե ինչպե՞ս է եղել, որ Կարս-Արդահանում ոչ մի հայ չի ապրում, երբ 1916թ. շուրջ 100 հազար հայ էր ապրում միայն Կարսում: Նա ավելացրել է, թե՞ հնարավոր է մեկ ազգ բնաջնջել, որպեսզի տիրեն նրա հողին[15]: Պատասխանը միանշանակ էր, պատմական արդարությունը վերականգնելու փաստը ոչ ոքի չէր հետաքրքրում:

Այսպիսով, 1946թ. սկսված «սառը պատերազմը» բացասական անդրադարձ է ունեցել և ճեղուցների վերահսկման, և հայկական տարածքների վերադարձման գործում: Նախ, աշխարհում քաղաքական իրադրությունը փոխվել էր: Եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն համագործակցում էին ու ֆաշիստական բլոկի երկրների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ապա պատերազմից հետո դրությունն այլ էր, սկսվել էր «սառը պատերազմը», և նախկին դաշնակիցները հայտնվել էին տարբեր ճամբարներում: Մյուս կողմից էլ, հնարավոր է, որ ԽՍՀՄ-ում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամն ևս իր դերակատարումն է ունեցել, ինչը ստիպել է 1947թ. Մոսկվային սառեցնել «թուրքական ծրագիրը»:

Մինչդեռ լռությունը չի նպաստել խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Երկու երկրների միջև լարվածությունն էլ ավելի է խորացել, երբ 1951թ. աշնանը արևմտյան պետությունները որոշեցին Թուրքիային ընդգրկել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏO) մեջ: Թուրքիայի արտգործնախարար Ֆ. Քյոփյուլյուն 1951թ. դեկտեմբերի 19-ին մեջլիսում ունեցած իր ելույթում ԽՍՀՄ-ին մեղադրել է միջազգային լարվածության մեջ և հայտարարել, որ ՆԱՏO-ին անդամակցելով իրենք ապահովագրում են իրենց երկրի

անվտանգությունը[16]: Ինչ վերաբերում է սևծովյան նեղուցների և լայկական տարածքային խնդիրներին. ապա վերջիններս օրակարգից պաշտոնապես դուրս են եկել միայն 1953թ. մայիսին՝ Ստալինի մահից հետո. երբ Խորհրդային Միությունը պաշտոնապես հայտարարել է. որ Թուրքիայից հողային ոչ մի պահանջ չունի: Սակայն փաստը մնում է այն. որ «նյարդերի պատերազմը» հանգուցալուծումը գտել էր դեռևս 1947թ.:

CHRISTINE MELKONYAN
(IOS)
THE WAR OF NERVES IN 1947

The Second World War yet has not ended. but the Soviet Union has already undertaken serious diplomatic steps in relation to Turkey. For Turks the territorial claims. concerning Kars and Ardahan who have been annexed by Turkey 1921 became most terrible. Under the Kars contract. Moscow behaved cautiously, without expressing openly its interests, — the initiative of returning of these territories proceeded from the Armenian and the Georgian Soviet Socialist Republics. In the USA and Great Britain these actions was considered as the Soviet threat to Turkey. However by the end of 1947 this process was is stopped, and religious and national-cultural projects have been again handed over to archive.

ԾԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Acheson D., Present at the creation, my years in the state department, New York. 1949, p. 196.
2. «Արարատ», 9. IX. Բեյրութ, 1974:
3. Hostler Ch., Turkism and the Soviets, London, 1957, p. 187.
4. «Ժողովուրդ», 20. IX., Ֆրանսիա, 1947:
5. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիլայեթների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 28:
6. Նույն տեղում:
7. Avcıoğlu D., Milli Kurtuluş Tarihi, Üçüçü kitap, İstanbul, 1974, s. 1471

8. "Ulus", 15. V. Istanbul. 1966.

9. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ. Обзор турецкой прессы, 1947. Относительно Американской внешней политики, с. 18.

10. "Правда", 28. X. M., 1947.

11. "Труд", 29. IX. M., 1947.

12. Լազեան Գ. Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Կահիրե. 1957, էջ 365-366:

13. Burdett A. . Armenia, Political and Ethnic Bondaries, 1875-1948. U.K., 1998, p. 1053-1059.

14. Armenian Caims in the light of documents, Memorandum submitted to the United Nations organization meeting in London, January 10, 1946, Alexandria, 1946, p. 6.

15. New York Times", 6. II., New York, 1946.

16. Olaylarla Türk dış Politikası (1919-1973). Üçüncü baskı, Ankara, 1974, s. 426-427.

ՄՈՆԹԱՋԵՐԻ ՕՄԻԴ
(ԱԻ)
ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սասանյանների հարստության ժամանակաշրջանում քրիստոնյաների կյանքին անդրադառնալուց առաջ, անհրաժեշտ է նախ անդրադառնալ քրիստոնեության պատմությանը: Սկզբում քրիստոնյաներն ու հրեաները միմյանց շատ մոտ ու միմյանց նման էին ու նրանց միջև գրեթե տարբերություններ չկային: Նրանց քարոզած գաղափարախոսությունների, ինչպես նաև կրոնական ծեսերի միջև կարելի է բազմաթիվ ընդհանրություններ նկատել: Ըստ էության, քրիստոնյաներն այն հրեաներն էին, որոնք հավատացին Հիսուս Քրիստոսին, սակայն, ի տարբերություն վերջիններիս, հրեաները մերժեցին ու բացառեցին Քրիստոսի մարգարեությունը[1]:

Արշակունիների թագավորությունում բնակվում էին բազմաթիվ ազգեր, որոնք դավանում էին զանազան կրոններ: Քրիստոնյաները Արշակունիների օրոք գոյություն ունեին ոչ միայն Եդեսիայի շրջանում, որը քրիստոնյաների կարևոր կենտրոններից մեկն էր, այլև մ. թ. I դարի երկրորդ տասնամյակում նրանք մտան Ադիաբենեի տափաստանները[2], որը հրեաների բնակության շրջաններից էր: Քրիստոնյաների տեղաշարժը դեպի հիշյալ տափաստանները հիմնականում տեղի էր ունենում քրիստոնեության գաղափարախոսությունը քարոզելու և նրա սահմանները ընդլայնելու նպատակով: Արդեն մ. թ. երրորդ տասնամյակում, քրիստոնյա հավատացյալները կարողացան Միջագետքում և Իրանի արևելյան տարածքներում նոր հետևորդներ ձեռք բերել: Այդ թվում, անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ մ. թ. IV դարասկզբին Հայաստանը լինելով առաջինն աշխարհում, քրիստոնեությունն ընդունեց որպես երկրի պետական կրոն[3]: Մ. թ. I դարի երկրորդ տասնամյակի ընթացքում Արշակունյաց հարստության ամբողջ տարածքում արագորեն աճում ու բազմանում էին

քրիստոնյաների շարքերը. հիմնականում պարթևների միջոցով: Վերջիններս, հրեաների փրկության, ինչպես նաև նրանց մեջ քրիստոնեության տարածման նպատակով, բազմիցս կատաղի պատերազմներ էին մղել վերջիններիս թշնամիների ու հսկառակորդների դեմ: Այդ պատերազմներից էին Բակուր թագաժառանգի հարձակումները Սիրիա և Պաղեստին, որի հետևանքով նա ազատագրեց հիշյալ տարածքներում գերված ու ճնշված հրեաներին: Հրեաները ի պատիվ իրենց փրկիչ Բակուրի, նրան, հենց այդպես էլ «փրկիչ» անվանեցին[4]:

Համաձայն Պոլիենոսի՝ Հռոմում՝ հռոմեկան տիրապետության սահմաններում, ինչպես նաև նրա ազդեցության տակ գտնվող բոլոր երկրներում հետապնդվում և մահապատժի էին ենթարկվում քրիստոնեություն դավանողները[5]: Հռոմեական կայսր Տրայանոսի օրոք, քրիստոնյաները մահվան էին դատապարտվում, սակայն բոլոր նրանք, ովքեր հրաժարվում էին քրիստոնեական դավանանքից, և ընդդիմանում էին քրիստոնեությանը՝ ներման էին արժանանում[6]: Սասանյանների դինաստիայի հիմնադրմամբ և Արտաշիր I-ի տիրակալության օրոք (226-241թթ.), Սասանյանների քաղաքականության մեջ ակնառու փոփոխություններ տեղի ունեցան: Սակայն, երբ Արտաշիր արքան, իր խորհրդատու Տանսարի առաջարկով որոշեց վերանայել երկրի կրոնական կառույցն ու նպատակահարմար գտավ Իրանի կրոնական հարցերում մի շարք փոփոխություններ մտցնել, դա առաջ բերեց քրիստոնյաների անհամաձայնությունն ու հակակրանքը[7]: Արտաշիր Պապականը նաև որոշեց երկրում բնակվող բոլոր ազգերին ու տարբեր դավանանքներին հարող փոքրամասնություններին ստիպել արևի ու կրակի պաշտամունքը, այլ կերպ ասած՝ զրադաշտությունը[8]:

Շապուհ I-ի տիրապետության ժամանակաշրջանը (241-272թթ.) համարվում է Սասանյանների տիրապետության սահմաններում բնակվող քրիստոնյաների զարգացման, բարգավաճման և խաղաղ կյանքի հատվածներից մեկը: Այլ կերպ ասած, Շապուհ արքան խաղաղության, հաշտության և կրոնական ազատության կողմնակից էր, որի տիրապետության օրոք քրիստոնյաներն Իրանում մեծ տարածում գտան՝ հիմնականում բազմանալով արևելյան տարածաշրջաններում: Կառուցվեցին եկեղեցիներ, որոնցում հիմնականում հունարեն և ասորերեն լեզուներով կատարում էին քրիստոնեական

արարողություններ ու կրոնական ծիսակատարություններ, որոնք ուղեկցվում էին երգեցողությամբ[9]: Սակայն, որոշ ժամանակ անց, դյուրձյալ քրիստոնյաները հետապնդվեցին Սասանյանների խոշորագույն հոգևորական Կարտիրի կողմից[10]: Հենց նրա խորհրդով էլ Վարահրան (Վռամ) II (274-293թթ.) վավերացրեց քրիստոնյաների ոչնչացման հրամանը: Այս հրամանը պատմության փաստագրական աղբյուր հանդիսացող էջերում, համարվում է Սասանյանների կողմից քրիստոնյաների նկատմամբ կիրառված առաջին խիստ ու անողոք բռնությունը: Համաձայն պահպանված աղբյուրների՝ իրեանք նույնպես Սասանյանների օրոք զրկվել էին Արշակունիների ժամանակաշրջանում ունեցած կրոնական խաղաղ կյանքից ու բարենպաստ պայմաններից[11]:

Շապուհ I-ի ձերբակալած և Խուզիստան ուղարկած գերիների շարքում կային բազմաթիվ քրիստոնյաներ, որոնց նա թույլատրում էր առանց որևէ սահմանափակության կատարել իրենց կրոնական արարողություններն ու քրիստոնեական ծիսակատարությունները[12]: Նույն ժամանակաշրջանում, Հռոմեական կայսրության տարածքում քրիստոնեությունը դեռևս պետական կրոն չէր համարվում, քանի որ վերջինս հակադրվում էր հեթանոսական բազմաստվածությանն ու հռոմեացիների կողմից պաշտվող մարդկանց ու կուռքերին: Հռոմեացիները չէին հանդուրժում քրիստոնեությունն ու խստագույն պատիժների էին ենթարկում քրիստոնյաներին: Օրինակ, Վալերիանոս կայսեր ժամանակ, որը 261թ. դաժան պարտություն էր կրել Շապուհ I-ից, տեղի ունեցան քրիստոնյաների նկատմամբ ամենադաժան ու բարբարոսական հալածանքները: Իսկ արդեն Դիոկղետիանոսի ժամանակ, սպանում էին Մանիի ուսմունքի հետևորդներին: Սակայն, այնուամենայնիվ, քրիստոնյաների շարքերը օրըստօրե խտանում էին և քրիստոնեական համայնքը գնալով ավելի ու ավելի էր ծաղկում ու հզորանում:

Համաձայն Շապուհ II-ի (309-379թթ.) մի հրամանագրի՝ պահանջվում էր առանց քրիստոնյաներին գթալու, նրանցից ծանր հարկեր գանձել, քանի որ նրանք բնակվում էին Իրանի տարածքում, սակայն դեռ մնում էին հռոմեական կայսեր բարեկամները: «Իրանի քրիստոնյա նահատակները» գրքում մանրամասն նկարագրվել են քրիստոնյաների նկատմամբ կիրառված բարբարոսությունների ու դաժան հալածանքների նկարագրությունները: Կան փաստեր, թե

ինչպես մի շարք փախստականներ, որոնք ապաստան էին գտել Շոշ (Սուզա) քաղաքում, դաժանորեն կործանվեցին՝ Շապուհի հրամանով այնտեղ ուղարկված 300 ռազմական փղերի ոտքերի տակ: Ըստ ասորական աղբյուրների՝ քրիստոնյաների նկատմամբ վարած այս հալածանքները շարունակվել են երկու տարի[13]: Շապուհ II-ի հրամանով մահապատժի են ենթարկվում այն եկեղեցական գործիչները, ովքեր եկեղեցիներ էին կառուցել և որոշ իրանցիների դարձի էին բերել[14]:

Համաձայն պահպանված որոշ տեղեկությունների, Արտաշիր II նույնպես դավանել է քրիստոնեություն: Իսկ ավելի ուշ, Շապուհ III (382-388թթ.) խաղաղ ու բարեկամական քաղաքականություն է վարել քրիստոնյաների և Բյուզանդական կայսեր նկատմամբ[15], իսկ Հազկերտ I առավել ջերմ ու զիջող է եղել քրիստոնյաների նկատմամբ, քան նրանից առաջ գահակալած նախորդ արքաները[6]: Վարահրան (Վռամ) V-ը, Հազկերտ I-ի որդին ու գահակիցը, 422թ. բյուզանդիացիների հետ ստորագրեց բարեկամական պայմանագիր, համաձայն որի, Իրանում բնակվող քրիստոնյաներին կրոնական ազատություն է շնորհվել, և նրանց թույլատրվել է, որպեսզի ազատորեն իրականացնեն իրենց կրոնական արարողություններն ու ծիսակատարությունները: Սակայն, Սասանյան մոգպետներն ու հոգևորականները քրիստոնյա հոգևորականներին մեղադրել են իրենց տաճարների ավերման ու դրանց տեղում եկեղեցիների կառուցման մեջ, ինչի հետևանքով էլ, նրանց դաժանագին պատիժների են ենթարկել:

Իրանում բնակվող քրիստոնյաների ամենասարսափելի ու դաժան ժամանակներից են համարվում Հազկերտ II-ի (438-457թթ.) տիրապետության տարիները: Նա իր հազարապետ Միհրներսեհի խորհրդով հայ ժողովրդին ստիպում է հրաժարվել քրիստոնեությունից, և ընդունել Սասանյանների զրադաշտական կրոնը: Սույն նպատակից ելնելով, նա ավելի քան 700 մոգեր է ուղարկում Հայաստան, որպեսզի ավերեն եկեղեցիներն ու դրանց փոխարեն կրակարաններ կառուցեն: Հազկերտ I-ից հետո պարսից քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ համեմատաբար մեղմանում է: Ավելին, հայերին թույլատրվում է ազատորեն ելք ու մուտք անել իրանական արքունիք և ստանձնել կարևոր պաշտոններ: Այնուամենայնիվ, հայերը՝ որպես կրոնական փոքրամասնություններ, պարտավորվում էին ծանր հարկեր վճարել Սասանյան արքունիքին:

Խոսրով I ժամանակ նույնպես քրիստոնյաներն ունեցել են կրոնական ազատություն՝ եկեղեցիների կառուցման և կրոնական արարողություններ կատարելու հարցում[17]: Նրանք զբաղեցնում էին Սասանյանների պետության զանազան արքունական պաշտոններ: Իսկ Խոսրով I-ի որդի՝ Որմիզդ IV-ի հրամանով պարսիկները պարտավորվում էին հովանավորել քրիստոնյաներին, և օժանդակել վերջիններիս եկեղեցիների պահպանման և նորոգման հարցում:

Խոսրով II-ի տիրակալության ամբողջ ընթացքում քրիստոնյաներն ապրում էին կատարյալ խաղաղության մեջ, նրանց միակ սահմանափակումը կրոնական քարոզչության անթույլատրելիությունն էր: Խոսրով Փարվեզի տիրապետության ժամանակ և նրա իսկ հրամանով վերանորոգվում, կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ:

OMID MONTAZERI

(IOS)

ON THE SITUATION OF CHRISTIANS IN SASSANID IRAN

Before the Sassanid the Christian minority had independence and when the king Ardashir established new government the policy was changed and spirituality take a lot of power. In that period in Roman Empire was accepted Christianity and this case was important reason for annoy minorty in Iran.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Nyberg H. S.. Die Religionen des alten Iran, Leipzig. 1938. S 288.
2. Իրանի պատմական կրոնները. Սամեդևել Յուսեֆ Էդդին Նսջմ Աբատիի թարգմանությամբ, Թեհրան. 1353. էջ 114 (պարսկ.):
3. Նույն տեղում, էջ 116:
4. Պիգուլևսկայա Ն., Իրանի քաղաքները պարթևների և սասանյանների ժամանակ, Էնայաթ Օլլահ Րեզայի թարգմանությամբ, Թեհրան, 1369, էջ 176 (պարսկ.):
5. Hauschild R., Über die Frühesten Arier im Alten Orient, Berlin. 1962, S. 338.
6. Գիրշման Ռ., Իրանը սկզբից մինչև իսլամ, Մուհամմադ Մոինի թարգմանությամբ. Թեհրան, 1376, էջ 93 (պարսկ.):
7. Քեմբրիջի Իրանի պատմությունը, Հասան Անուշեի թարգմանությամբ. h. III, Թեհրան. 1380, էջ 63 (պարսկ.):
8. Փիրնիա Հ., Իրանի պատմություն, Թեհրան, 1323, էջ 107 (պարսկ.):

9. Սասանյանների թագավորությունը, Թուրաջ Դարյայի, Մորթեզա Սաքեբ Ֆարի թարգմանությամբ, Թեհրան, 1386, էջ 71(պարսկ.):
10. Սասանյանների հասարակությունը, Ահմադ Թաֆազոլի, Շիրին Մոխթարյանի թարգմանությամբ, Թեհրան, 1385, էջ 45 (պարսկ.):
11. Հինթս Ու., Կարտիրի արձանագրությունները, Էղթեքաս Փիրուզ Ռաջայի թարգմանությամբ, Թեհրան, 1371, էջ 25 (պարսկ.):
12. Բրոսիուս Մ., Պարսիկների փայլուն քաղաքակրթությունը. Սահմուդ Թոլուիի թարգմանությամբ, Թեհրան, 1387, էջ 141(պարսկ.):
13. Քրիստենսեն Ա., Իրանը Սասանյանների օրոք, Ռաշիդ Յասեմիի թարգմանությամբ. Թեհրան, 1313, էջ 168 (պարսկ.):
14. Ուենքեր Ա., Իրանն ու Հռոմը պայքարների ու հարևանության խաչմերուկում. Քեյքավուս Ջահանդարիի թարգմանությամբ. Թեհրան, 1386, էջ 196 (պարսկ.):
15. Ստեֆանով Կ., Սասանյանների տիրապետության խնդիրների շուրջ. Քազեմ Քազես զադեի թարգմանությամբ, Թեհրան, 1313, էջ 168 (պարսկ.):
16. Քրիստենսեն Ա., նշվ. աշխ., էջ 95:
17. Յեշփսան Ք., Սասանյանների պատմության հիմքերը, Քեյքավուս Ջահանդարիի թարգմանությամբ, Թեհրան, 1384, էջ 115 (պարսկ.):

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
(ԱՒ)
ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՎԱՌԻ (ԼՈՌԻ) ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑ- ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1918-1921թթ.)

1783 թվականին կնքված ռուս-վրացական Գեորգիևյան պայմանագրով հաստատվեցին Ռուսաստանի հովանու տակ անցնող Արևելա-Վրացական թագավորության սահմանները, որոնք իրենց մեջ ներառում էին պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի մի մասը կազմող Լոռվա տարածքը:

1801թ. Արևելա-Վրացական թագավորության վերացումից հետո Լոռին ևս հայտնվեց անմիջապես Ռուսաստանյան կայսրության կազմում: 1840-ական թվականներին ցարական Ռուսաստանի կողմից Անդրկովկասում կատարվող վարչատարածքային բաժանման հետևանքով Լոռին, ինչպես նաև Ջավախքը հայտնվեցին Թիֆլիսի նահանգի կազմում:

1905-1907թթ. հեղափոխությունը Ռուսաստանում խթանեց ազգային հիմնախնդիրների վերաբացմանը: Անդրկովկասում վարչատարածքային նոր վերաբաժանման խնդիրն այնքան ծանրացավ, որ արդեն 1909 և 1916թթ. ցարական իշխանությունները քննարկումներ էին կազմակերպել այդ հարցի վերաբերյալ: Առաջարկվում էր վերաձևել Անդրկովկասի նահանգները՝ ըստ ազգաբնակչության թվաքանակի: Հայ հասարակական և քաղաքական գործիչները, ցարական իշխանությունների ուշադրությունն էին հրավիրում Թիֆլիսի նահանգում գտնվող հայաբնակ տարածքների խնդրին: Մոտ 3200 քառ. կմ տարածք ունեցող Բորչալուի գավառի բնակչության մեծ մասը հայեր էին, որոնք կոմպակտ բնակվում էին նրա հարավային և արևմտյան մասերում: 1916թ. հայերի թիվն այդ

գավառում հասնում էր 63 702 բնակչի կամ գավառի ընդհանուր բնակչության 69 351 հոգուց 75 տոկոսը[1]:

1916թ. հայկական կողմն առաջարկեց ամբողջ Անդրկովկասը վերաբաժանել ըստ ազգաբնակչության համամասնական քանակի: Հաշվի առնելով, որ հայերը կազմում էին տարածաշրջանի բնակչության 29% -ը, վրացիները՝ 28, և թաթարները՝ մոտ 43, առաջարկվում էր Անդրկովկասի տարածքի 29 % -ը տալ հայերին, 30 -% -ը՝ վրացիներին և 41 % -ը՝ մահմեդականներին[2]:

Փետրվարյան Հեղափոխությունից հետո 1917թ. ամռանը Ռուսաստանյան նոր կառավարության Ներքին գործերի նախարարության հովանու ներքո Անդրկովկասի զեմստվաների նոր կառավարման դրույթներ մշակելու նպատակով խորհրդակցություն հրավիրվեց: Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնող Ա. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանցն առաջարկեցին իրականացնել էթնիկական սկզբունքով տարածաշրջանի նոր վարչատարածքային բաժանում, դուրս բերել Թիֆլիսի նահանգի կազմից Ախալքալաքի և Բորչալուի գավառները: Հանձնաժողովը որոշում է, որ «Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի և Կաղզվանի գավառներից կազմավորվում է նոր՝ Ալեքսանդրապոլի հայկական նահանգը»[3]: Որոշումն ուղարկվում է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության հաստատմանը, որից հետո՝ Անդրկովկասի հատուկ կոմիտե /ОЗАКОМ/:

ОЗАКОМ-ի կողմից երկրամասի վարչական վերաբաժանման հարցը լուծելու համար սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հրավիրվում է հատուկ հանձնաժողով: Պատրաստվեց նախագիծ, ըստ որի՝ ազգային հիմքի վրա Բորչալուի գավառի հարավային մասն առանձնացվում էր Թիֆլիսի նահանգի կազմից՝ Ախալքալաքի գավառի հետ միասին[4]:

Վրացական կողմը դեմ արտահայտվեց նախագծին՝ պնդելով, որ այն խախտում է Վրաստանի և Ռուսաստանի միջև 1783թ. կնքված պայմանագիրը: Հանձնաժողովում նաև կարծիք հնչեց, որ «տարածքների վերանայումը կարող է հայ-մուսուլմանական նոր բախումների տեղիք տալ»[5]:

Իշխանության փոփոխությունը Ռուսաստանում 1917թ. հոկտեմբերին և Սեյմի կողմից Անդրկովկասի անկախ հռչակումը ժամանակավորապես դադարեցրեց Բորչալուի գավառի ապագայի վերաբերյալ քննարկումները, իսկ Անդրֆեդերացիայի կազմալուծումից և

անկախ հանրապետությունների ձևավորումից հետո Ախալքալաքի և Լոռու պատկանելության հարցը սկսում է լրջորեն սրել երկկողմ հարաբերությունները Հայաստանի և Վրաստանի միջև:

Բորչալուի գավառը Ջաքաթալայի օկրուգի, Սղնախի և Թիֆլիսի գավառի մուսուլմանական շրջանների պատկանելության հետ միասին խնդրի առարկա է դառնում նաև Ադրբեջանի և Վրաստանի հարաբերություններում: Այս շրջանների պատկանելության հարցը լուծելու համար ադրբեջանական կառավարող շրջանակները առաջարկում էին Թիֆլիսին ստեղծել սահմանազատող հանձնաժողով:

Վրացական կողմը կտրականապես մերժում էր սահմանազատման բոլոր առաջարկները՝ պնդելով, որ «Թիֆլիսի ամբողջ նահանգն անվիճելիորեն պատկանում է Վրաստանին»[6]: Ծայրահեղ դեպքում Թիֆլիսը պատրաստ էր որոշ զիջումների գնալ միայն Ջաքաթալայի հարցում՝ բացառելով որևէ այլ սահմանազատում[7]:

1918թ. հունիսի 5-ին կառավարության նիստում ընթերցվեց «Բորչալուի գավառում իրադրության և Վրացական պետության ճշտգրիտ սահմանների հստակեցման անհրաժեշտության մասին» զեկույցը, որից հետո կառավարությունը որոշեց հանձնարարել զինվորական նախարարին զորքեր տեղակայել Բորչալուի, Սղնաղի և Թիֆլիսի գավառներում՝ «ներկայումս գոյություն ունեցող սահմանների պաշտպանության համար»[8]: Նույն օրը ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Դ. Օնիաշվիլու և Ալ. Մդիվանու մասնակցությամբ:

Վրաստանի Հանրապետության սահմանները որոշելու նպատակով հունիսի 11-ին կառավարությունը որոշեց ստեղծել նոր սահմանային հանձնաժողով՝ Իր. Ծերեթելու, Դ. Օնիաշվիլու, Պ. Ինգորոդվայի. գեներալ Օդիշելիձեի մասնակցությամբ: Արդեն նույն օրը Պ. Ինգորոդվան հանդես եկավ զեկույցով, ըստ որի ՝ «Վրաստանը պետք է գտնվի տնտեսական և ռազմավարական տեսակետներից հարմար սահմաններում[9]»: Ըստ զեկույցի՝ Վրաստանի հարավային և արևելյան սահմանները անցնելու էին Փոքր Կովկասի լեռնաշղթայով, Բորչալուի գավառի հարավային սահմանի մոտով՝ Ղարաքիլիսայից հարավ, հասնում են Սևանա լճի հյուսիսային ափ, անցնում հյուսիս՝ Աղսթաֆա գետով, հասնում Ջեգամ կայարան, ընդգրկում Ջաքաթալա օկրուգը և ավարտվում Սիլավատ լեռով:

Ադրբեջանական կողմը փորձեց հարցը լուծել Գերմանիայի միջոցով. և 1918թ. դիմեց Թիֆլիսում Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ ֆոն Կրեսին: Կառավարության նամակում նշվում է. որ «Բորչալուի մուսուլմանները տեղի հայության կողմից ենթարկվում են բռնությունների. ինչը հաճախ հովանավորվում է վրացական և գերմանական զորքերի կողմից»: Ադրբեջանի վարչապետ Խան Խոյսկին պահանջեց դադարեցնել «բռնությունները. հայության հաշվին հատուցել մուսուլմանների կրած վնասները», դադարեցնել Վրաստանի կառավարության կողմից «մուսուլմանների զինաթափումը» կամ այն կիրառել ողջ բնակչության հանդեպ[10]:

Ի պատասխան Վրաստանի արտգործնախարար Ռամիշվիլին հանդես է եկել հայտարարությամբ, որ «Բորչալուի գավառը միշտ մտել է Վրաստանի կազմի մեջ և չի եղել վեճի առարկա, թեև նրա էթնիկական կազմը միատարր չէ»: «Վրաստանն անընդունելի է համարում իր արևելյան սահմանի քննարկումը և պահանջում է այլևս չմիջամտել իր ներքին գործերին»,- նշել է նա՝ հավելելով, որ Զաքաթալայի օկրուգը, Ղարայազին և ողջ Բորչալուի գավառը կազմում են Վրաստանի անբաժան մասը և Ադրբեջանը պետք է դրա հետ հաշվի նստի[11]:

1918թ. վերջից վրաց-ադրբեջանական հարաբերությունները ավելի կայունանում են. տարածքային հարցը հարթվում է Անդրկովկասում Գերմանիայի և Թուրքիայի ազդեցության գոտիների միջև բաժանաբար գծերի հաստատմամբ, ինչի արդյունքում Զաքաթալայի օկրուգը մնում է Ադրբեջանին, իսկ Թիֆլիսի նահանգի մուսուլմանաբնակ տարածքները, այդ թվում նաև Բորչալուի գավառը՝ Վրաստանին:

Հայաստանի հետ վրացական կողմը ոչ միայն չկարողացավ հարցը լուծել քաղաքակիրթ ճանապարհով, այլ փորձ կատարեց անել դա յուրովի: Թուրքական զորքերի կողմից Թիֆլիսի հայաբնակ տարածքներից նահանջին զուգահեռ, վրացական իշխանությունները շտապում են զորքեր մտցնել այդ շրջանները: Հայաստանի և Վրաստանի միջև պատերազմ է սկսվում դեկտեմբերի սկզբներին, այն ժամանակ, երբ վրացական զորքերը փորձում են հնազանդեցնել Լոռվա հայ բնակչությանը՝ ոմբակոծելով հայկական գյուղերը[12]:

Երկու շաբաթ տևած ռազմական գործողությունների արդյունքում հայկական զորամասերին հաջողվեց գրավել Բորչալու գավառի մեծագույն մասը: Լոռվա պատկանելության հարցին միջամտեցին

դաշնակից երկրները, որոնց նախաձեռնությամբ 1919թ. հունվարի 7-ին բացվեց հայ-վրացական կոնֆերանսը: Կոնֆերանսի շրջանակներում 1919թ. հունվարի 17-ին կողմերը պայմանագիր կնքեցին, ըստ որի Լոռիում ստեղծվում է չեզոք գոտի՝ Անգլիայի վերահսկողությամբ գեներալ-նահանգապետության կարգավիճակով: 1919թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսում ստորագրվում է նաև Հայ- Վրացական «Խաղաղության պայմանագիրը»:

Քառյակ դաշինքի պարտությունն Առաջին աշխարհամարտում ստիպեց ոչ միայն Ադրբեջանին, այլ նաև Վրաստանին փոխել իրենց քաղաքականությունը տարածաշրջանում և դիմել ավելի մեղմ և զիջումային քայլերի: 1919թ փետրվարի 21-ին Վրաստանի արտգործնախարար Ե. Գեգեչկորին հայտագիր ուղղեց Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների Հանրապետության ղեկավարություններին՝ Կովկասյան հանրապետությունների խորհրդաժողով գումարելու առաջարկով: Ըստ վրացական կողմի հավաստիացման՝ այն միտված էր լինելու «լուծել հանրապետությունների միջև երկաթուղային հաղորդակցության կանոնակարգման՝ փոստ-հեռագրային կապի հաստատման համար համանման օրենսդրական ակտերի ընդունման, մաքսային, ֆինանսական և ապրանքափոխանակության հետ կապված հարցեր»[13]:

Ադրբեջանն իր հերթին առաջարկեց քննարկել նաև քաղաքական հարցեր, մասնավորապես, Կովկասյան հանրապետությունների կողմից փոխադարձ ճանաչման, ինչպես նաև համաձայնության գալու միջոցով սահմանային վեճերի կարգավորման խնդիրները: Հայաստանը հայտարարեց, որ կովկասյան հանրապետությունների անկախության ճանաչումը պետք է տեղի ունենա միայն տարածքային բոլոր վեճերը լուծելուց հետո, այն էլ ոչ թե քառակողմ, այլ երկկողմ ֆորմատով[14]:

Խորհրդաժողովը բացվեց 1919թ. ապրիլի 25-ին, իսկ մայիսի 14-ին կայացավ տարածքային վեճերի լուծման ընդհանուր սկզբունքների մշակման հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովի քննարկումների ժամանակ ադրբեջանական կողմը պնդում էր, որ տարածքային հարցերը լուծելիս առաջնայինը պետք է հաշվի առնվի տնտեսական սկզբունքները, իսկ հայկականը՝ ազգային ինքնորոշման: Վրացական կողմը դեմ էր դուրս գալիս ազգային ինքնորոշման սկզբունքով ղեկավարվելուն՝ պնդելով, որ վիճելի հարցերը պետք է լուծվեն

պետությունների պատմական-ռազմավարական սահմաններից ելնելով[15]:

Մինչդեռ 1919թ. սկզբներին, երբ գավառի պատկանելության հարցը լրջորեն քննարկվում էր երկկողմ և եռակողմ բանակցություններում, այնտեղ բնակվում էր մոտ 64 հազար հայ, 7600 մուսուլման և 1150 վրացի[16]: 1919թ. ապրիլի 22-ի դրությամբ, միայն Բորչալուի ու Փամբակի շրջանների սահմաններում ապրում էր այնտեղ 105 հազար հայ, 15 հազար մուսուլման, 420 վրացի և 13 հազար՝ այլազգի[17]:

Տարածքային խնդիրների լուծման անհրաժեշտությունը հետզհետե դառնում է երկրորդական Վրաստանի և Ադրբեջանի կողմից Անդրկովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու գաղափարի ազդեցության ներքո: Վերջիններս ցանկանում էին ստորագրել եռակողմ ռազմապաշտպանական պայմանագիր՝ Հյուսիսային Կովկասից Ադրբեջանի վրա Դենիկինի ուժերի հնարավոր հարձակման դեմ համատեղ պայքարելու համար: Հայաստանը հրաժարվում է այդ նախաձեռնությունից: Այնուամենայնիվ, 1919թ. հունիսի 16-ին վրաց-ադրբեջանական պաշտպանական դաշինքը ստորագրվում է[18]:

Բորչալու գավառի հարցը հանվում է վրաց-ադրբեջանական հարաբերությունների օրակարգից դեռ 1918թ. վերջերից, երբ Գերմանիայի և Թուրքիայի միջև տեղի է ունենում ազդեցության ոլորտների սահմանազատումը: Հայ-վրացական հարաբերություններում հարցը լուծվում է երկու երկրների խորհրդայնացումից հետո, երբ 1921թ. Ախալքալաքի գավառը տրվում է Վրաստանին, իսկ Լոռին՝ Հայաստանին:

BAGRAT MOVSESYAN
(IOS)

THE ISSUE OF BORCHALU REGION (LORI) POSSESSION IN THE CONTEXT OF ARMENIAN-GEORGIAN AND GEORGIAN-AZERBAIJANI RELATIONS (1918-1921)

Lori, as part of historical Armenia, appeared in the intricate turmoil of the Armenian-Georgian and Georgian-Azerbaijani relations, due to the policy led by the Tsarist Russia.

The issue of regional possession came to be more strained following the collapse of the Russian Empire and the formation of three independent states in the

Transcaucasia. Azerbaijan and Georgia managed to find a solution in favor of their territorial ambitions towards Armenia, though, Yerevan and Tbilisi conflict brought about military actions.

The conflict was settled only in 1921 after the establishment of the Soviet regime in Armenia and Georgia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 71-72.
2. ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, թ. 1:
3. ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, թ. 3:
4. Шахатунян А., նշվ. աշխ., էջ 136-137:
5. ՀԱԱ, ֆ223, ց. 1, գ. 61, թ. 5:
6. «Հորիզոն», # 151, Օգոստոսի 1, Թիֆլիս, 1918:
7. Авалов З., Независимость Грузии в международной политике 1918-1921 гг, Париж. 1924., с. 57.
8. Из истории армяно-грузинких отношений, Тифлис, 1919, ЦГИАГ, с. 10.
9. «Հորիզոն», # 117, Հունիսի 18, Թիֆլիս, 1918:
10. Документы и материалы по внешнеи политике Закавказья и Грузии, ЦГИАГ, с. 436-437.
11. «Հորիզոն», # 197, Սեպտեմբերի 29, Թիֆլիս, 1918:
12. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 220:
13. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 149, թ. 11:
14. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 149, թ. 15:
15. «Աշխատավոր», # 104, մայիսի 25, Թիֆլիս, 1919:
16. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 452, թ. 2:
17. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 191, թ. 15:
18. "Наше время", #112, 21 июня , Баку, 1919.

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՆՆԱ
(ԵՊՀ)

ՍԵԼԻՄ III-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՐՊԵՍ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՏԻՊ

Օսմանյան կայսրությունը թե՛ իր սոցիալական, պետական և ռազմական համակարգի բնորոշ գծերով, և թե՛ այն բնակեցնող բազմազգ ժողովուրդներով համաշխարհային պատմության մեջ մի յուրահատուկ երևույթ էր: Այս կայսրության կազմավորումն ու անկումը բազմաթիվ գիտնականների ուշադրության կենտրոնում են:

Շատ արևելագետների կողմից հատկապես մանրամասն է ուսումնասիրված 19-րդ դարի բարեփոխումների դարաշրջանը: Այս ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրությունը կարևոր է այն պատճառով, որ վերջինս բանալի է կայսրությունում տեղի ունեցած հետագա իրադարձությունները պարզաբանելու և ճիշտ գնահատելու համար:

Արդեն 18-րդ դարի կեսերից երբեմնի հզորությունը կորցնել սկսող Օսմանյան կայսրությունը կանգնել էր եվրոպական տերություններից կախվածության մեջ ընկնելու լուրջ վտանգի առջև: Ստեղծված վտանգը կանխելու համար ձեռնարկվեցին մի շարք բարեփոխումներ, որոնք հիմնականում միտում ունեին երկիրը տանել դեպի եվրոպականացում: Այդ ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկվեցին Սելիմ 3-րդի (1789-1807) և Մահմուդ 2-րդի (1808-1839) օրոք, որոնք սկիզբ դրեցին թանզիմաթյան բարեփոխումներին:

Օսմանյան կայսրությունը 18-րդ դարի վերջին ծայրաստիճան հետամնացության եզրին էր կանգնած: Սակայն այս գործընթացի սկիզբը նշմարելի է դեռ ավելի վաղ ժամանակներում: 1699թ.-ի հունվարի 26-ին կնքված Կարլովիցի պայմանագիրը (Karlofça Antlaşması) վերջ դրեց Օսմանյան կայսրության «վերելքի» ժամանակաշրջանին: Սկսվեց, ինչպես Մուրադ Աքսոյն է նշում, «կանգառի ու հետընթացի» մի շրջան[1]:

Երբ 1789թ-ին Սելիմ 3-րդը ժառանգեց օսմանյան գահը, կայսրությունը դեռ շարունակում էր պատերազմել Ռուսաստանի դեմ, իսկ այդ պատերազմում տարած ծանր պարտությունը ստիպեց սուլթանին մտածել բարեփոխումների մասին: Սելիմ 3-րդի նախագծած և մասնակիորեն իրականացրած բարեփոխումների ընդհանրությունը ստացավ "nizam-ı cedit" («նոր համակարգ»): Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում nizam-ı cedit-ը: Քանի որ Սելիմ 3-րդը երկրի քայքայման պատճառը տեսնում էր ռազմական պարտությունների մեջ, իսկ վերջիններս էլ բանակի քայքայման արդյունք էին, Սելիմը նախևառաջ երազում էր ազատվել ենիչերիներից և ստեղծել նոր բանակ, որը կհամապատասխաներ այդ ժամանակի եվրոպական բանակի չափանիշներին: Այդ իսկ պատճառով ձեռնարկված նոր միջոցների հիմնական շեշտը դրվեց ռազմական և ռազմածովային դպրոցների, զինամթերքի և զենքի պահեստների և նոր բանակի հիմնադրման վրա[2]: Ստեղծված նոր բանակը սկսեց կոչվել nizam-ı cedit: Այն անկախ էր ենիչերիներից, սակայն ձևականորեն ընդգրկված էր բոստանջիների (պալատական և քաղաքային պահակազոր) կազմի մեջ և պաշտոնապես ստացավ bostancı tüfenkçi ocağı (պալատական հետածիգների կորպուս) անվանումը: Բայց այս ամենն արված էր միայն ենիչերիներին չգրգռելու համար:[3] Փաստացի, «Նոր զորքերը» բացարձակ ինքնուրույն զորամաս էին[4]:

Զորքի նոր կորպուսի կազմավորման համար հարկավոր էին դրամական միջոցներ, ուստի Սելիմ 3-րդի բարեփոխումներն առաջին հերթին ենթադրում էին ֆինանսական բարեփոխումներ: Ստեղծվեց «Նոր համակարգի դրամարկղ»: Հրապարակվեց զորքը մատակարելու մասին օրենքը: Ձևավորվեցին ամբողջական զինվորական քաղաքներ՝ իրենց տնտեսությամբ, մզկիթներով, բաղնիքներով, կրպակներով և այլն: Նորույթների շարքին կարելի է դասել նաև ռազմաինժեներական ուսումնարանի հաստատումը Սուդլիջում: Այն սկսեց կոչվել mühendishane: Ուսումնարանը ռազմական մասնագետներ էր պատրաստում ինչպես նավատորմի, այնպես էլ ցամաքային զորքերի համար: Սուլթան Սելիմն այս ուսումնարանին մեծ ուշադրություն էր դարձնում, անձամբ քննում էր ուսանողներին: Նոր դպրոցի համար Ֆրանսիայից ուղարկվում էին բազմաթիվ գրքեր, որոնցից առավել կարևորները թարգմանվեցին թուրքերեն[5]: Սելիմ 3-րդը վերստեղծեց

թուրքական նավատորմը: Այս գործում մեծ է քափուդան-փաշա՝ Քյուչուք Հուսեյնի վաստակը: Նա Ֆրանսիայից հրավիրեց ինժեներ-կոնստրուկտոր Լեբրունին և ձեռնարկեց նավատորմի վերստեղծումը[6]:

Բացի ռազմական համակարգում իրականացրած փոփոխություններից Սելիմ 3-րդը վարչական ու կրթական համակարգում և առևտրում որոշակի նորամուծություններ կատարեց: Դրանցից էր, օրինակ. առանց վալիների միջամտության, ժողովրդի կողմից այանների ընտրությանը վերաբերող կանոնը և այլն[7]:

1805թ-ին Սելիմ 3-րդը որոշում ընդունեց «նոր համակարգը» տարածել Ռումելիայում: Բայց սա էլ հենց հանդիսացավ Սելիմի բարեփոխումների վերջի սկիզբը: 1806թ-ին, երբ «նոր համակարգը» հաստատելու նպատակով ուղարկվեցին Քադի Աբդուրրահման փաշայի գլխավորած զորքերը, Ադրիանապոլիսում ենիչերիների ապստամբությունը անմիջականորեն սպառնաց գահին: Սարսափած սուլթանը հետ կանչեց Աբդուրրահման փաշային: Ենիչերիների հանդեպ ունեցած վախը Սելիմ 3-րդին ստիպեց հրաժարվել բարեփոխման գործունեությունից[8]: Դեռ մոտ մեկ տարի «նոր համակարգը» առանց հետագա զարգացման շարունակում էր գոյատևել: 1807թ-ի մայիսին յամաքների (ենիչերիական կորպուսի օգնական զորքեր) ապստամբությունը վերջ դրեց թե՛ «նոր համակարգին», և թե՛ Սելիմ 3-րդի գահակալմանը: Ապստամբած յամաքներն ու ենիչերիները սկզբում սուլթանից պահանջեցին լուծարել «նոր համակարգը», ապա հաշվեհարդար տեսան «նոր համակարգի» առավել աչքի ընկնող գործիչների հետ, և վերջապես 1807թ-ի մայիսի 27-ին սուլթան Սելիմ 3-րդը դադարեց գահակալելուց[9]:

Սելիմ 3-րդի բարեփոխումների ձախողումը պայմանավորված էր մի շարք գործոնների առկայությամբ: Առաջին հերթին Սելիմ 3-րդը, ձգտելով կանխել կայսրության մասնատումն ու անկումը, ցանկանում էր ամուր պահել ինքնակալ իշխանությունը: Բայց սուլթանը հաշվի չէր առնում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ոչ թուրքական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարգացման գործոնը[10]: Ինչպես նշում է Վասիլևը՝ «Հենց իրենք՝ բարեփոխման կողմնակիցները, զգում էին ազգային և այլ ապստամբությունների ճնշման փորձերի անօգուտ լինելը: Իսկ հետագայում դրությունը գնալով ավելի էր բարդանում»[11]:

Բացի այդ՝ թույլ և անհուսալի էր սոցիալական այն հենարանը, որի վրա հենվում էր սուլթանը, սահմանափակ էր բարեփոխումների կողմնակիցների հատկացրած աջակցությունը:

Միակ տեղը, որտեղ բարեփոխումները հետևողական աջակցություն էին ստանում, սուլթանական պալատն էր: Այստեղ էր կենտրոնացված երկրի ղեկավարումը: Պալատի հետ էին կապված բարեփոխումների հիմնական գործիչները: Հենց այստեղ Սելիմ 3-րդը անցկացնում էր «12-ի խորհրդի» խորհրդաժողովները, որոնց մասնակցում էին հոգևորական և աշխարհիկ անձինք և որտեղ քննարկվում էին Բարձր Դռան համար պարտադիր որոշումներ: Բայց որքան էլ որ այս խորհրդի մասնակիցները համեմատաբար վստահելի լինեին, նրանց գործունեությունը բավարար չէր լիարժեք բարեփոխումներ իրականացնելու համար: «12-ի խորհրդի» համարյա բոլոր անդամները իրենց դեմ հարուցեցին ժողովրդի զայրույթը, որի պատճառ հանդիսացավ նրանց ծայրաստիճան հարստությունը այն ժամանակ, երբ ժողովուրդն անընդհատ հարստահարման էր ենթարկվում: Բացի այդ, հենց խորհրդի անդամների միջև երբեք չկար միասնականություն[12]:

Սելիմ 3-րդի կողմնակիցների պարտությունը ցույց տվեց, որ կայսրության փրկության համար միայն ռազմական բարեփոխումները բավարար չեն. հարկավոր էր նաև անցկացնել սոցիալական բարեփոխումներ, որոնք կընդգրկեին երկրի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի ավելի լայն կողմերը[13]: Երկար պալատական խարդավանքներից հետո սուլթանական գահն անցավ Մահմուդ 2-րդին, ով շատ լավ հասկանում էր, որ Սելիմի բարեփոխման ծրագիրն իրականացնելու համար հարմար առիթ է հարկավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինվորական և հոգևորական շրջանները միահամուռ կերպով դիմադրելու են յուրաքանչյուր փոփոխությանը[14]: Միայն Սելիմ 3-րդից 18 տարի անց՝ լայնածավալ հունական տարածքների՝ Օսմանյան կայսրությունից անջատվելու վտանգը և Բալկանյան թերակղզու ազգային-ազատագրական շարժումները, տերությունների միջամտությունը հայն-թուրքական հակամարտությանը և այլ Օսմանյան կայսրության համար վտանգավոր երևույթներ լռեցրեցին ռազմական բարեվախումների հակառակորդներին[15]: Մահմուդ 2-ը հնարավորություն ունեցավ իրականացնել այն, ինչը ժամանակին չհաջողվեց Սելիմ 3-րդին:

Մահմուդ 2-րդի բարեփոխումներն իրենց շարունակությունը ստացան թանզիմաթյան բարեփոխումներում և նշանակալի փուլ հանդիսացան երկրի եվրոպականացման ճանապարհին: Այսպիսով. թեև Սելիմ 3-րդի բարեփոխումներն առաջնահերթ խնդիր ունեին վերափոխել միայն բանակը. այնուամենայնիվ. հենց այդ սուլթանի օրոք սկիզբ դրվեց շուրջ մեկ դար տևած Օսմանյան կայսրության եվրոպականացմանն ուղղված բարեփոխումների մի շրջանի. որն այդպես էլ չկարողացավ փրկել Օսմանյան կայսրությունը մասնատումից ու անկումից:

ANNA NALBANDYAN
(YSU)

THE REFORMS OF SELIM III AS THE PROTOTYPE OF THE EUROPEIZATION OF THE OTTOMAN EMPIRE

The Ottoman Empire. that finally became a half colony only in the second behalf of the 19th century. began to loose its independence already from the end of the 18th century. In this period of time it was clearly seen the Empire's economic and social backwardness in comparison with European countries, decline of the military - fief system and as a result of it the law qualification of Ottoman army. The history of Ottoman Empire entered a period. which is called "Partitioning and collapse period of the Ottoman Empire"

Sultans Selim III (1789-1807) and Mahmud II (1808-1839) tried to re-establish the old power of Ottoman Empire by Westernization. The sultans planned and in some cases implemented the reform programmes, which, however, suffered a defeat because of a whole number of causes. Reform efforts were made later as well. But these and other reform efforts couldn't stop the partitioning and collapse of the Ottoman Empire.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Aksoy M.. Başörtüsü-Türban. Batılılaşma-Modernleşme. Laiklik ve Örtünme, İstanbul, Kitap Yayınevi, 2005, s. 46.
2. Berkes N., The development of secularism in Turkey, Montreal. McGill University Press, 1964. p.75

3. Եմիչերիները դարերի ընթացքում սկսեցին գնալով ավելի վտանգավոր ուժ ներկայացնել: Նրանք կազմակերպում էին պալատական հեղաշրջումներ, պաշտոնանկ էին անում իրենց անցանկալի վեզիրներին և սուլթաններին, դուրս էին նետում, իսկ երբեմն նաև արտաքին խարդավանքների կույր գործիք:
4. Миллер А. Ф., Мустафа Паша Байрактар. Л., 1947, с. 93.
5. Grand Master. Genel Kültür Ansıklopedisi. cilt 4. Mühendishane-i berrii humaayun Milliyet. 1992. s.980
6. Миллер А. Ф., նշվ. աշխ., էջ. 95:
7. Սանրամասն տես՝ Muzaffer İncekaş XVIII ve XIX Yuzyıllarda Osmanlı İmparatorluğunda ıslahat hareketleri. http://www.akademiktarih.com
8. Миллер А. Ф., Актуальные проблемы нoвой и новейшей истории. М., 1983, с. 29-33.
9. Devrimler Ansiklopedisi, Milliyet, 1991, s. 26.
10. Սերբ ժողովրդի ազգային պայքարը, Փազվանդ-օղլուի ապստամբությունը, վահաբիների շարժումը, Եգիպտոսի փաստացի անկախությունը և այլն:
11. Васильев А. С., История Востока, М., 2005, том I, с. 312-313.
12. Миллер А. Ф., Мустафа Паша Байрактар, с. 106-107.
13. Боджолян М. Т., Реформы 20-30-ых гг. 19-ого века в Османской империи, Ер., 1984, с. 8.
14. Лорд Кинрос, Расцвет и упадок Османской империи, М., 1999, с. 472.
15. Новичев А. Д., История Турции, Новое время, том II, Л., 1968, с.135. Այստեղ հարկ է նշել նաև մեկ կարևոր պատճառ ևս: Այն է՝ Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալիի բարեփոխված իպամական զորքի հաջողությունները Սորեայում:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ
(ԱԻ)

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԳՈՐԾՈՆԸ 1907Թ. ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1907թ. օգոստոսի 31-ին կնքված Իրանը, Տիբեթը և Աֆղանստանն ազդեցության ոլորտների բաժանելու մասին անգլո-ռուսական համաձայնագիրը[1] XX դարասկզբի կարևորագույն իրադարձություններից էր, որի արդյունքում էական փոփոխություններ կատարվեցին ժամանակի գերտերությունների քաղաքական հետաքրքրությունների բնագավառում ողջ Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում: Ըստ այդ համաձայնագրի Իրանը բաժանվեց ազդեցության գոտիների: Հյուսիսայինն հատվածը ճանաչվեց որպես Ռուսաստանի ազդեցության ոլորտ, իսկ հարավայինը՝ Մեծ Բրիտանիայի: Այդ երկու գոտիների միջև ընկած հատվածը հանդիսանալու էր ազատ մրցակցության դաշտ բոլոր պետությունների համար[2]:

XIX դարավերջին և XX դարի սկզբին Արևելքում անգլո-ռուսական հակասությունների գլխավոր կծիկը նրանց պայքարն էր «ազդեցության գոտիների» համար: Դեռևս XIXդ. 80-90թթ. բրիտանական դիվանագետների կողմից մի շարք փորձեր ձեռնարկվեցին համաձայնության գալ Ռուսաստանի հետ Միջին Արևելքում իրենց ազդեցության ոլորտների շուրջ[3]:

Ընդհուպ մինչև 1905թ. ռուսական կառավարող շրջանները գտնում էին, որ Իրանում ռուսական ազդեցությունը չափազանց ուժեղ է թե տնտեսական, և թե ռազմաքաղաքական առումներով, ինչն էլ Ռուսաստանի համար իր գլխավոր մրցակից՝ Մեծ Բրիտանիայի հետ համաձայնագրի կնքումը դարձնում էր ոչ շահավետ: Ռուսաստանում 1905թ. բռնկված հեղափոխությունը վերջինիս համար ստեղծեց որոշակի ֆինանսական դժվարություններ, իսկ ռուս-ճապոնական պատերազմում

կրած ծանր պարտությունը նրան զրկեց Արևելքում ռազմաքաղաքական լուրջ գործոն լինելու հնարավորությունից[4]: Բրիտանական դիվանագիտության տեսանկյունից այդ իրադարձությունները կարող էին ստիպել Ռուսաստանին մի շարք զիջումների գնալ վերը նշված համաձայնագրի հարցում, և հնարավորություն կընձեռեին, ի դեմս Ռուսաստանի, ձեռք բերել ուժեղ դաշնակից անգլո-ֆրանսիական միության կազմում Կայսերական Գերմանիայի օրեցօր հզորացող ազդեցության դեմ[5]:

Կշռադատելով ստեղծված իրավիճակը՝ 1906թ. Ցարական Ռուսաստանն իր հերթին վերանայեց երկրի արտաքին քաղաքական ուղեգիծը՝ իր ռազմաքաղաքական առաջնահերթությունների օրակարգ մտցնելով Պարսից ծոցի, ինչպես նաև Բոսֆոր, Դարդանելի նեղուցների խնդիրը: Դրանք հարցեր էին, որոնք պատմական զարգացման բավական տևական ժամանակահատվածում մշտապես բախվում էին Մեծ Բրիտանիայի անզիջում հակազդեցությանը: Հենց անգլո-ռուսական համաձայնագրի համատեքստում էլ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հնարավոր էր համարում այդ խնդիրների նպաստավոր լուծումը[6]:

Հեռավոր Արևելքում Ցարական Ռուսաստանի ծավալապաշտական նկրտումները էլ ավելի սրեցին հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ: Արդյունքում՝ 1902թ. վերջինս դարձավ Ճապոնիայի դաշնակիցը հեռավորարևելյան հարցերում՝ հրահրելով Ճապոնիային պատերազմի Ռուսաստանի դեմ: Կասկածից վեր է, որ Ռուսաստանում հեղափոխության հետևանքով ստեղծված իրավիճակի պայմաններում անհնար էր դսրձել նախկին ծավալներով Իրանում ֆինանսական միջոցների ներդրումը:

Արդեն 1904թ. ռուսական իշխող շրջանները ստիպված էին վերանայելու իրենց վարած քաղաքականությունն Իրանում: Նույն թվականի հունիսի 7-ին արտգործնախարար Լամզդորֆի նախագահությամբ կայացավ հատուկ խորհրդակցություն՝ Իրանում Ռուսաստանի վարած ֆինանսատնտեսական քաղաքականության հարցի շուրջ: Խորհրդակցության արդյունքում որոշվեց, որ Ռուսաստանն այսուհետև պետք է.

1. Հնարավորինս խուսափի պարսկական իշխանություններին ֆինանսական օժանդակություն ցուցբերելուց:

2. Իրանին վարկեր տրամադրի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ ելնելով քաղաքական և տնտեսական հատուկ հետաքրքրություններից, ընդ որում յուրջ երաշխիքների առկայության պարագայում:
3. Իրանում ձեռք չբերել նոր մենաշնորհներ, եթե դրանք չեն արդյարացնելու իրենց շահութաբերությունը:
4. Կատարելագործել և զարգացնել Իրանում արդեն գոյություն ունեցող ռուսական բանկային, ճանապարհաշինական, տրանսպորտային և այլ կառույցներն ու ձեռնարկությունները:
5. Հակազդել Իրանում երկաթուղային շինարարության ծավալմանը:
6. Մասնակցություն ունենալ հեռագրային ցանցի ընդլայնման աշխատանքներին[7]:

Սակայն վերը նշվածն ամենևին էլ չի նշանակում, որ Ռուսաստանն արդեն պատրաստ էր գնալ խոշոր զիջումների Իրանում հօգուտ Մեծ Բրիտանիայի (հատկապես Պարսից ծոցի նկատմամբ ունեցած իր հեռանկարներում): Չնայած այդ երկու տերությունների միջև շարունակվող սուր մրցակցությանը, նրանց միջև կար պայմանավորվածություն Իրանի տարծքային ամբողջականությունը պահպանելու վերաբերյալ: Միանգամայն ակներև է նաև այն, որ Հեռավոր Արևելքում Ռուսաստանի պարտությունն ամենևին էլ չէր կարող նրան ստիպել հրաժարվել իր վարած քաղաքականությունից և ավանդական խնդիրներից Իրանում:

Իրանում բռնկված սահմանադրական հեղափոխությունը և գերմանական վտանգը հանդիսացան այն կարևորագույն գործոնները, ոլոնք ստիպեցին Ռուսաստանին հրաժարվել Իրանն ամբողջությամբ իր տիրապետության տակ վերցնելու մտքից: Պատահական չէ, որ անգլո-ռուսական բանակցությունները Իրանը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ սկսվեցին 1906թ. սեպտեմբերին, հենց այն ժամանակ, երբ Թավրիզում ազատագրական պայքարի արդյունքում ստեղծվել էին հեղափոխական էնջումեններ, իսկ Թեհրանում շահը հարկադրված էր թույլատրել մեջլիսի ընտրություններ[8]: Բանակցային գործընթացի առաջնային հարցերից էր հանդիսանում նաև Իրանին համատեղ անգլո-ռուսական փոխառություն տրամադրելու խնդիրը՝ գերմանական հնարավոր փոխառությունը կանխելու նպատակով[9]: Համաձայնագրի կնքումը բրիտանական կողմի համար ուներ

հիմնականում ռազմավարական նշանակություն, և կարևոր էր հակագերմանական ռազմական դաշինք կազմելու առումով:

Իրադարձությունների զարգացման ընդհանրական հանգամանքները ստիպեցին Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին հակասությունների ծանրության կենտրոնը տեղափոխել Հեռավոր Արևելքից Միջին Արևելք: Հարկ էր կարգավորել Ասիայում ունեցած տարաձայնությունները, որտեղ ուժեղացած գերմանական սնտեսական և քաղաքական ազդեցությունը պահանջում էր վերջիններից ուժերի գերլարում նոր մրցակցին հակազդելու համար. Համաձայնագիրը կհստակեցներ հյուսիսային Իրանում արդեն բավական ծանրակշիռ ռուսական ազդեցության սահմանները, ինչպես նաև կսահմանափակեր ռուսական ձգտումը դեպի Պարսից ծոց, հետևաբար նաև Հնդկական օվկիանոս[10]: Թեև Գերմանիայի մասնաբաժինը պարսկական արտահանման մեջ կազմում էր 5% ռուսական 50%-ի և անգլիական 25%-ի դիմաց: Ռուսական առևտրա-արդյունաբերական շրջաններին չափազանց անհանգստացնում էր այն հանգամանքը, որ գերմանական ներմուծումն Իրան հասցրել էր կարճ ժամանակահատվածում երեք անգամ գերազանցել ռուսականը: Ռուսաստանի համար ստեղծվում էր իրական վտանգ՝ կորցնելու իր արդյունաբերական ապրանքների ամենախոշոր շուկաներից մեկը[11]: Առավել անհանգստացնում էին գերմանական երկաթուղային ծրագրերը Մերձավոր և Միջին Արևելքում: Բաղդադի երկաթուղին և դրա ճյուղավորումները դեպի Տրապիզոն և Թեհրան կզրկեին Ռուսաստանին Արևմտյան Եվրոպայից միջինարևելյան շուկաներ ապրանքներ մատակարարելու իր առավելությունից: Բացի այդ, ռուս-գերմանական հակասությունները սրվում էին Թուրքիայում Գերմանիայի մեծացող ազդեցության պատճառով: Նեղուցներում ամրապնդելով իր դիրքերը Գերմանիան սպառնում էր փակել Ռուսաստանի համար այդ չափազանց կարևոր առևտրային և ռազմավարական ճանապարհը[12]:

Անգլո-ռուսական համաձայնագրի հարցը քննելիս հարկ է անդրադառնալ նաև Ռուսաստանի միջազգային դիրքի շեշտակի անկման գործոնքացին, որն արագացավ ռուս-ճապոնական պատերազմում նրա կրած պարտությունից հետո: Այդ աղետի հետևանքով նա այլևս ի վիճակի չէր արժանի մրցակցություն ցույց տալ ժամանակի հզորագույն տերություններին՝ Անգլիային, Գերմանիային և

ԱՄՆ-ին համակերպվելով ստեղծված իրավիճակին: Այդ համակերպման անխուսափելի հետևանք կհանդիսանար արտաքին քաղաքանության մեջ նրա վերջնական կողմնորոշումը դեպի Մեծ Բրիտանիա կամ Գերմանիա: Ստեղծված իրադրության պայմաններում չափազանց կարևոր գործոն էր նաև Ռուսաստանի ֆինանսական կախվածությունն իր դաշնակից Ֆրանսիայից, որի հետ նա ուղղակի չէր կարող հաշվի չնստել: Առավել ևս, որ Փարիզը գնալով ավելի էր մերձեցնում իր հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ[13]:

Չնայած Ռուսաստանի ներքին քաղաքական խմբավորումների միջև առկա հակադիր կարծիքներին մինչև անգլո-ռուսական համաձայնագրի կնքումը, և մասամբ էլ հետագայում ցարական կառավարող շրջանները առավել հարմար էին համարում երկրի արտաքին քաղաքականությունը վարել լավագույնս խուսանավելով Անգլիայի և Գերմանիայի միջև՝ միաժամանակ պահպանելով դաշինքը Ֆրանսիայի հետ[14]:

Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում գործող քաղաքական խմբավորումները եռանդուն կերպով հանդես էին գալիս համաձայնագրի դեմ: Իշխանության եկած բրիտանական լիբերալ կառավարության նպատակաուղղված մոտեցումը այդ հարցին բնավ չէր նշանակում, որ երկրի քաղաքական բոլոր խմբավորումները միանշանակ դրական մոտեցում էին որդեգրել տվյալ հարցի նկատմամբ: Քաղաքական-գաղափարական առումով համաձայնագրին դեմ էին լիբերալների կուսակցության ձախ թևը, իսկ ստրատեգիական և ֆինանսատնտեսական առումով՝ բրիտանական իշխանությունների «Հնդկական» թևը[15]:

Հնդկական խմբավորման հակամարտությունները համաձայնագրի վերաբերյալ շատ ավելի դժվար հաղթահարելի էին: Ինչպես հայտնի է, այս խմբավորման ամենահայտնի հակառուսական տրամադրություններ ունեցող առաջնորդներից էր լորդ Ջ. Քերզոնը: Վերջինս և իր խմբավորումը փորձում էին երկրի արտգործնախարարությունից անկախ արտաքին քաղաքականություն իրականացնել Միջին Արևելքի երկրների նկատմամբ, ինչն էլ լուրջ դժգոհություններ էր առաջացնում բրիտանական կառավարությունում[16]: Իր քաղաքական գործունեության ողջ ընթացքում լորդ Քերզոնը Իրանի հարցը դիտում էր գլխավորապես Հնդկաստանի սահմանների

պաշտպանության հայեցակետից: Մասնավորապես Իրանն ազդեցության ոլորտների բաժանելու համաձայնագիրը Ռուսաստանին Պարսից ծոց թույլնելու պայմանով, առաջ բերեց բրիտանական գաղութատիրական այս շրջանների մոտ լուրջ հակազդեցություն: Պարսից ծոց Ռուսաստանի հնարավոր ներթափանցումը, ներառելով հարավային Իրանի սրնէ տարածք որպես ռուսական ազդեցության գոտի, անխուսափելիորեն հանդիպում էր հնդկական խմբավորման հակազդեցությանը: Բրիտանական իշխանությունների շահերը Ծոցում հանձինս լորդ Քերզոնի. ոչ մի կերպ չէին կարող ընկալել ռուսական նավերի և հյուպատոսությունների առկայությունը այդ շրջաննում: Այսինքն յուրաքանչյուր այլ երկրի ռազմաքաղաքական (ռազմածովային բազայի ստեղծում) և տնտեսական շահեր վնաս էին հասցնում Հնդկաստանին, ապա նաև Մեծ Բրիտանիային: Պարզ էր դառնում, որ առանց իրանական հարցի լուծման համաձայնագիրի կնքումն անհնարին կլիներ[17]:

Արդեն 1899թ. գարնանից ռուսական ակտիվությունը Պարսից ծոցում բավական նկատելի էր: Բրիտանացիներին խիստ անհանգստացնում էր այն հանգամանքը, որ ռուսական կողմը լուրջ քայլեր էր ձեռնարկում Ծոցում նավահանգիստ ունենալու համար: Ռուսաստանը սեփական ներկայութունը Ծոցում ամրակայելու միջոցներից էր համարում առևտուրը, նավագնացությունը և նոր հյուպատոսությունների բացումը: Ինչպես փաստում է Ֆ. Քազեմ-Զադեն, Պարսից ծոց պարբերաբար ուղարկվում էին ռուսական տարբեր առաքելություններ՝ տեղի նավահանգիստների առևտրային շրջանառությունն ուսումնասիրելու նպատակով: Ծոցը հարմար շուկա էր ռուսական շաքարի, կերոսինի, բամբակի, բրդյա գործվածքների, ցորենի սպիրտի և այլնի համար[18]:

Ռուսաստանում համաձայնագրի դեմ հանդես էին գալիս հատկապես երկրի գերմանամետ խմբավորումները և գլխավոր շտաբը: Ռուսաստանի կառավարող զինվորական դասը՝ գեներալ Պալիցինի գլխավորությամբ, դեմ էին Իրանի հարավ-արևելյան մասում գտնվող Սիսթան (Սեյիսթան) նահանգի՝ անգլիական ազդեցության գոտի ճանաչելու իրողությանը, որտեղ արդեն իսկ բավականին ամրակայված էր ռուսական ազդեցությունը: Չափազանց ուժեղ էր նաև Ռուսաստանում գերմանամետ պահպանողական-միապետական

խմբավորման ճնշումները[19]: Երկրում ստեղծված ներքաղաքական լարվածության հետ մեկտեղ գերմանական խիստ դիրքորոշումը անգլո-ռուսական մերձեցման նկատմամբ ռուսական դիվանագիտական շրջաններին հուշում էին, որ Միջին Արևելքի և Պարսից ծոցի հարցերի լուծումը առանց գերմանական մասնակցության, կարող է հանգեցնել լուրջ առճակատման վերջինիս հետ: Սրան ցարիզմն այս ժամանակահատվածում գոնե պատրաստ չէր, անգամ 1907թ. ռուսական կառավարությունը խուսափելով Գերմանիայի հետ ընդհարումից՝ չցանկացավ համաձայնագրի մեջ ներառել Բաղդադի երկաթուղու հետ կապված խնդիրները: Ինչպես նշում է Գ. Լ. Բոնդարևսկին, դիվանագիտական նամակագրության և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա «Արդեն 1906թ. Ռուսաստանին պարզ դարձավ այն հանգամանքը, որ առանց Գերմանիայի հետ փոխհամաձայնության գալու հնարավոր չէ լուծել ոչ Բաղդադի երկաթուղու, ոչ էլ մերձավորարևելյան հարցերը: Սա էր այն հիմնական խնդիրը, որի պատճառով անգլո-ռուսական համաձայնագիրը չտարածվեց Մերձավոր Արևելքի վրա»[20]:

Ռուսական իշխանությունները համաձայնագրին հակագերմանական նշանակություն սկսեցին տալ ավելի ուշ, որը կապված էր անգլո-ֆրանսիական բանկերի կախվածությունից, սեփական երկրի ռազմական ուժերի վերականգնման և կառավարող դիրքերի ամրակայման, ինչպես նաև ռուս-ավստրիական, ռուս-գերմանական հակասությունների սրման հետ[21]:

Ինչ վերաբերվում է Չեզոք գոտու գաղափարին, ապա այն առաջին անգամ հայտնվեց 1906թ. սեպտեմբերին՝ Իրանն ազդեցության ոլորտների բաժանելու բրիտանական արտգործնախարար Գրեյի ու փոխարտգործնախարար Հարդինգի հայտնի բանաձևի տեքստում, որտեղ ասվում է. «Եթե մենք /Մեծ Բրիտանիան-Ն. Ն./ անգլիական ազդեցության գոտի համարենք Բիրջան-Բենդեր-Աբբաս եռանկյունին, ապա չենք կարող Ռուսաստանին՝ որպես իր ազդեցության գոտի հանձնել Իրանի մնացյալ տարածքը: Պետք է լինի ևս մեկ ոլորտ, որը բաց կլինի երկրների առևտրային գործունեության համար»[22]: Չեզոք գոտու առկայությունը կկանխեր Ռուսաստանի անմիջական հարևանությունը բրիտանական ազդեցության շրջաններում: Ուստի չեզոք գոտու գաղափարն առաջացավ ոչ միայն որպես փոխզիջում՝

բրիտանական գաղութային և ռուսական ռազմաքաղաքական շահերի միջև. այլ նաև որպես բույր և հակասական պայքարի արդյունք այդ երկու երկրների քաղաքական կուսակցությունների և խմբավորումների. ինչպես նաև կառավարող շրջանների միջև:

Ազդեցության գոտիների խնդիրը չափազանց կարևոր էր և' պարսկական հարցի լուծման. և' ընդհանրապես այդ երկու երկրների միջև համաձայնագրի կնքման հարցում: Ռուսաստանում գերմանամետ խմբավորման ակտիվ գործունեությունն ունեցավ իր կարևոր դերակատարումը այս հարցում: Իսկ բրիտանական կողմն էլ իր հերթին հասկացնել էր տալիս. որ Սիսթանը «բրիտանական արգելանոց» չդարձնելու դեպքում հնդկական խմբավորման կողմնակիցները և բրիտանական զինվորական շրջանները ուղղակի թույլ չեն տա վերոհիշյալ համաձայնագրի կնքումը:

Միանգամայն պարզ էր դառնում, որ հարկ էր շրջանցել երկու խոչընդոտ Ռուսաստանում՝ զինվորական խմբավորման և աջակողմյան ուժերի հակազդեցությունը, որոնք բնավ չէին ցանկանում հրաժարվել հարավային Իրանից և հատկապես Սիսթանից, և միաժամանակ դեմ էին Գերմանիայի հետ հարաբերությունների սրմանը[23]: Անգլիական դիվանագիտական շրջանները քաջ գիտակցում էին, որ ռուսական զինվորական խմբավորումը հաստատակամ է ինչպես Սիսթանի. որն ուներ ռազմավարական նշանակություն, այնպես էլ Պարսից ծոցի այլ ուժային և տնտեսական շրջաններում ամուր դիրքեր ձեռք բերելու հարցում: Ուստի Անգլիայի համար մեծ ձեռքբերում կլիներ Ռուսաստանի ազդեցության ոլորտ ճանաչել այն շրջանները, որտեղ վերջինս արդեն իսկ բավականաչափ ամրացրել էր իր դիրքերը (Իրանի հյուսիսային շրջանները Ն. Ն.)՝ չառաջարկելով վերջինիս ոչ մի շահավետ տարբերակ Տիբեթում և Աֆղանստանում[24]:

Ինչ վերաբերվում է իրանական դիրքորոշմանը տվյալ հարցում, հարկ ենք համարում նշել, որ ոչ մի պաշտոնական հայտարարություն իրանական կառավարությանը չի արվել այս համաձայնագրի կնքման բանակցային գործընթացի վերաբերյալ, որն ընթանում էր խիստ գաղտնի պայմաններում: Պայմանագրի պատրաստման մասին իրանցիներին հայտնի դարձավ թերթերից. իսկ երեք շաբաթ անց այն կնքվեց[25]:

NAZELY NAVASARDYAN
(IOS)

THE FACTOR OF THE PERSIAN GULF IN THE CONTEXT OF ANGLO-RUSSIAN AGREEMENT OF 1907

The English-Russian agreement of 31[st] August, 1907 was one of the most important events of the beginning of 20[th] century. It made great changes in political and strategic interests of super states in the Middle and Near Eastern region.

Until 1905 the Russian authorities were sure that the military. political as well as economic influence of Russia is very strong in Iran that's why they regarded the agreement with Great Britain not profitable for Russia. The revolution raised in Russia in 1905 made precise financial difficulties for Russia and its beating in the Russian-Japanese war has deprived of Russian possibility to have a dominate position in the Middle East. British diplomacy was sure that the following reasons could force Russia to do several concessions in the context of English-Russian agreement as well as would give a chance to receive a strong ally such as Russia in Britain-French allience against the amplified penetration of Germany in the Middle and Near East.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր ուսումնասիրությունը սահմանափակվում է միայն Իրանն ազդեցության գոտիների բաժանելու հարցի քննությամբ:
2. Համաձայնագրի ամբողջ տեքստը տե՛ս՝ Сборник договоров России с другими государствами 1856-1917, Госполитиздат, 1952, с. 387-389; .К истории англо-русского соглашения 1907, "Красный Архив", 1953, т. 2-3, с. 19; 1907 Agreement concerning Persia, The Anglo-Russian Entente From World War I Document Archive Great Britain, Parliamentary Papers. Vol. CXXV, Cmd. 3750, London, 1908.
3. Жигалина О. И., Великобритания на Среднем Востоке, М., Наука, 1990, с. 145.
4. Բայբուրդյան Վ., Իրանի Պատմություն, Եր., 2006, էջ 496; Neilson K., Britain and Last Tsar British Polisy and Russia, 1894-1917, Clerendon Press Oxford, 1995, p. 267..
5. Avery P., Modern Iran, London, 1965, p. 134.
6. Покровский М. Н., Империалистическая война, Соцэкгиз, М., 1934, с. 402–404.
7. Англо-русское соперничество в Персии в 1890-1906. Журнал Особого совещания по вопросу о финансово-экономической политике России в Персии 7 июня 1904г., "Красный архив", т. 1(56), 1933, с. 49-59.
8. The Suplementary Fundamental Laws of October 7, 1907. A Brief Narrative of Recent Events in Persia: Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", by Edward G. Browne, London. W.C, 1909, p. 15-22.
9. Neilson K . Նշվ. աշխ., էջ 271-272: Crisp O., "The Russian Liberals and the 1906 Anglo-French Loan to Russia", SEER 39 (1961), p. 497-511.

10 Lenczowski G.. Russia and the Western Iran 1918-1948. A Study in Big-Power Rivalry. Grenwood Press. Publishers New York, 1968, p. 5

11 Бестужев И. В.. Борьба России по вопросам внешней политики 1906-1910. М.. 1961, с. 40.

12 Baitcrfield P.. The Diplomacy of the Bagdad Railway 1890-1914. Göttingen. 1932. p.17-19; Նավասարդյան Ն., Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), ՀՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Մերձավոր Արևելք հոդվածների ժողովածու, IV, Եր., 2007, էջ 92-96:

13 1906թ. հունվար-մարտ ամիսներին Լոնդոնում անց կացված գաղտնի անգլո-ֆրանսիական շտաբային բանակցությունների արդյունքում որոշում էր կայացվել Ֆրանսիային ծովային և ցամաքային ռազմական օգնություն ցուցաբերել ֆրանս-գերմանական հնարավոր պատերազմի դեպքում: Бондеревский Г. Л.. "Россия и персидский залив", Спб. N 44, ч. 3, М., 1964, с. 123.

14 Бестужев И. В., նշվ. աշխ., էջ 51:

15 Hinsley F. H., British Foreign policy under Sir Edward Grey, Cambridge University Press, 1977, p. 135-139.

16 Жигалина О. И., նշվ. աշխ., էջ 138-141:

17 Avery P., Modern Iran, London, 1965, p. 134: Бондеревский Г.Л., նշվ. աշխ., էջ 110-118:

18 Фируз Казем-Заде, Борьба за влияние в Персии, М., 2004, с. 357-365.

19 Бондеревский Г. Л., նշվ. աշխ., էջ 132-135:

20 Նույն տեղում, էջ 135-138:

21 Бестужев И. В., նշվ. աշխ., էջ 41, 199:

22. Бондеревский Г. Л., նշվ.աշխ., էջ 118-119:

23. Նույն տեղում, էջ 135-150:

24. Hinsley F. H., նշվ. աշխ., էջ 236-237:

25. The Suplementary Fundamental Laws of October 7, 1907. A Brief Narrative of Recent Events in Persia: Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", by Edward G. Browne, London, W.C, 1909, p. 23-24.

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՆԻ
(ՀՅԹԻ)
ՔԱՓԸՔՈՒԼՈՒ ԶՈՐԱԲԱՆԱԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Օսմանյան կայսրության կազմավորմսւն և զարգացման պատմությունը սերտորեն կապված է նրա ռազմական համակարգի ձևավորման և զարգացման հետ: Դարեր շարունակ մարտունակ բանակը թուրք-օսմանների հաջող նվաճողական քաղաքականության հիմնական գործոններից մեկն էր:

Քափըքուլու[1] զորաբանակն իր կառուցվածքով. ստեղծման և ուսուցման հատուկ եղանակով Օսմանյան կայսրության կարևորագույն առանձնահատկություններից էր: Ստեղծելով այս զորաբանակը՝ թուրք առաջին սուլթաններն իրենց ապահովում էին մարտունակ զորքով, որն աստիճանաբար սկսում էր ավելի նկատելի երևույթ դառնալ Օսմանյան կայսրությունում: Սկզբում քափըքուլուների հավաքագրումը կատարվում էր ռազմագերիներից (փենջ-ի եք)[2] և դևշիրմեի (մանկահավաք. մանկաժողով) համակարգով. այսինքն կազմավորվում էր մի զորք. որը ոչ մի կապ չուներ թուրք էթնոսի և բարձր հասարակության հետ: Հավաքագրման եղանակն ինքնին քայքայում ու ձուլում էր հպատակ ժողովուրդներին: Հպատակ ժողովուրդներից էլ կազմավորված զորքը պատերազմում էր նրանց դեմ: Իսկ իշխող վերնախավի հետ կապի բացակայությունը բացառում էր սուլթանի դեմ ելույթներն ու պալատական դավադրությունները: Սակայն սուլթանական իշխանության հենարան լինելը բնորոշ է քափըքուլուներին, հատկապես ենիչերիներին, մինչև 17-18-րդ դդ.. այնուհետև նրանք աստիճանաբար դադարում են կատարել իրենց անմիջական պարտականություններն և վերջ ի վերջո դառնում են Օսմանյան կայսրության ռազմական առաջընթացը խոչընդոտող հզոր ուժերից մեկը:

Քափըքուլու զորաբանակը կազմված էր երկու հիմնական դասից՝ հեծյալ և հետևակ: Հետևակային մասի մեջ մտնում էին աջեմի, ենիչերի, ջեբեջի, թոփչու. . թոփարաբաջը, հումբարաջը և լաղըմջը զորամիավորումներն. իսկ հեծելազորային մասն էր կազմում քափըքուլու հեծելազորը[3]:

Քափիքուլու զորաբանակի ստորաբաժանումներն իրարից անկախ, սակայն միմյանց սերտորեն կապված զորամիավորումներ էին: Բոլոր ստորաբաժանումներն ունեին իրենց հատուկ նշանակությունն ու պարտականությունները:

Աջեմի (անփորձ. օտար) օջաղը: Աջեմի զորամիավորումը ստեղծվել է Մուրադ I (1362-1389թթ.) ժամանակաշրջանում Չանդարլը Քարա Հալիլի և Քոնյայի մոլլա Ռյուսթեմի առաջարկով[4]: Դևշիրմեի համակարգով հավաքագրված տղաներին կրոնափոխ անելուց հետո ընդգրկում էին աջեմի զորամիավորման մեջ, որտեղ նախնական զինվորական կրթություն ստանալուց հետո ուղարկում էին քափիքուլու զորաբանակի ստորաբաժանումներ: Առաջին օջախը մոլլա Ռյուսթեմը հիմնադրել է Գելիբոլուում, որի հրամանատարն էր ենիչերի յայաբաշիներից ընտրված Գելիբոլուի աղան[5]: Ստամբուլը գրավելուց հետո, այնտեղ ևս աջեմի զորամիավորում հիմնադրվեց:

Ստամբուլի աջեմի զորամիավորումից ընտրված խելացի, ընդունակ և բարետես երիտասարդները վերցվում էին անհատական ուսուցման և քննությամբ ընդունվում էին դպրոց: Այդպիսի դպրոցներից առաջինը, և թերևս լավագույնը Էնդերունն էր[6]: Էնդերունը պետական կադրեր պատրաստող կառույց էր, որտեղ կրթություն էին ստանում ապագա վեզիրները, բանակի ու նավատորմի հրամանատարները, վիլայեթի վալիները, բեյլերբեյները, պետության արտաքին հարաբերությունների, ֆինանսական և ուրիշ այլ հաստատությունների ղեկավարները[7]:

Աջեմի զորամիավորումը ենիչերի, ջեբեջի, թոփչու, թոփարաբաջը զորամիվորումների համար զինվոր էր պատրաստում: 18-րդ դ. սկսած ենիչերիական զորամիավորման քայքայումը աջեմիների վրա նույնպես անդրադարձել է և աստիճանաբար հանգեցրել է աջեմիների նշանակության նվազմանն ու զորամիավորման անկմանը:

Ենիչերիական (նոր զորք) օջաղը: Ենիչերիական զորամիավորումը կազմավորվել է 14-րդ դ. առաջին թուրք սուլթանների Օրհանի (1324-1362թթ.) և Մուրադ I օրոք, որպես ռոճիկ ստացող հետևակ զորք (ինչպես մյուս բոլոր քափիքուլուները): Մուրադ I ոչ միայն ստեղծել է տվյալ զորամիավորումը, այլև հատուկ նրա համար սահմանել է օրենքներ. «որպեսզի զորաբանակը լինի մարտունակ և պահպանի զինվորական կանոնադրությունն ու հավատարմությունը»[8]:

Մինչև 15-րդ դ. կեսերը ենիչերիական զորամիավորումը բաղկացած էր յայա բոլյուք (հետևակ վաշտ) կամ ջեմաաթ (աշխարհազոր) կոչվող մեկ դասից. 1451թ-ից սեքբանների (թեթևազեն ենիչերի) միացմամբ երկրորդ դասն է կազմվել, այնուհետև ստեղծվել է աղա բոլյուք (ենիչերիական վաշտի հրամանատարական կազմ) կոչվող երրորդ դասը[9]:

Մինչև 17-րդ դ. ենիչերիները հավաքագրվում էին բացառապես աջեմի օղլաններից[10], ավելի ուշ, երբ նրանց ու քափըքուլու մյուս զորամիավորումներին ամուսնանալու իրավունք տրվեց զորամիավորման շարքեր սկսեցին ընդգրկվել նրանց որդիները (քուլ օղլու): Զորամիավորման գլխավոր հրամանատարը ենիչերի աղան էր[11], որը նշանակվում էր սուլթանի կողմից: Ենիչերի աղան ենթարկվում էր անմիջականորեն սուլթանին և ինքն էր կատարում սպայական բոլոր նշանակումները ենիչերիական կորպուսում: Մարսիլլին նշում էր, որ ենիչերի աղան կարող էր բարձր սպայական կոչում (սեքբանբաշի, քեթհյուդա-բեյ) տալ ցանկացած զինվորի[12]:

Օսմանյան սուլթանների արշավանքների ժամանակ ենիչերիական զորամիավորումն, իրենից ներկայացնելով կարևոր ռազմական ուժ, հանդիսանում էր անհրաժեշտ լրացում ֆեոդալ-սիպահիների հեծելազորային խմբերին և պալատական հեծելազորին: Ենիչերիներն անփոխարինելի էին թշնամու բերդերի երկարատև պաշարումների ժամանակ՝ առանձնանալով, մինչև որոշակի ժամանակաշրջան, իրենց մարտունակությամբ և կարգապահությամբ, բարձր մարտական ոգով[13]:

18-րդ դարից սկսած ենիչերիների մարտունակությունն ընկավ և նրանց կարևորությունն աստիճանաբար նվազեց: Ենիչերիները սկսեցին պարբերաբար ընդդիմանալ սուլթանների ռազմական բարեփոխումներին: 1826թ. (ենիչերիական նոր խռովությունից հետո) հունիսի 17-ի որոշման համաձայն Մահմուդ II (1808-1839թթ.) լուծարեց ենիչերիական զորամիավորումը[14]:

Ջեբեջի (զրահագործ, զրահավոր) օջաղը: Ջեբեջի զորամիավորումը Մեհմեդ II Ֆաթիհի (1444-1481թթ. ընդհատումներով) ժամանակաշրջանում է հիմնադրվել: Զորամիավորման գլխավոր հրամանատարը ջեբեջի բաշին էր[15]: Հին թուրքերենում «ջեբե»-ին (զրահազգեստ) «զըհր» էր կոչվում: Այնուհետև «կրակե ռազմամթերք» իմաստը թուրքերենում «ջեբեհանե/ջեփեհանե» ձևով է կիրառվել[16]: Ջեբեջի զորամիավորումն ենիչերիների, ինչպես նաև այլ քափըքուլու ստորաբաժանումների համար

զենք էր պատրաստում, իսկ պատերազմներից առաջ և հետո պահպանում ու անհրաժեշտության դեպքում վերանորոգում էր այդ զենքերը:

Օսմանյան կայսրության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կետերում ջեբեհանեներ կային: Ջեբեջի զորամիավորման շարքային զինվորների սնը կամ նվազումը կապված էր ենիչերիական զորամիավորման հետ, քանի որ այս երկու զորամիավորումներն իրար հետ կապված էին ինչպես կանոնակարգով, այնպես էլ դարավոր կապերով: 1826թ. ենիչերիական զորամիավորման հետ այս զորամիավորումը նույնպես լուծարվեց:

Թոփչու (հրետանավորներ) օջաղը: Օսմանյան կայսրության հաջողությունները պայմանավորված էին հրետանու կիրառմամբ: 1389թ. Կոսովոյի կռվում օսմանյան բանակում առաջին անգամ թնդանոթ օգտագործվեց[17]: 15-րդ դ. հրետանին սկսելով իր հաղթարշավը՝ 16-րդ դ. Սուլեյման Քանունիի (1520-1566թթ.) ջանքերով իր զարգացման ամենաբարձր կետին հասավ[18]:

Թոփչու զորամիավորումը հիմնադրվել է Մուրադ I ժամանակաշրջանում ենիչերիական զորամիավորումից հետո[19]: Զորամիավորման գլխավոր հրամանատարը թոփչու բաշին էր: Արշավանքի գնալիս հրետանավորները ջեբեջիների առջևից էին գնում: Սարտի դաշտում հրետանավորները երեք խմբի էին բաժանվում: Մի խումբը ենիչերիների առջևում կանգնելով՝ թնդանոթներով նրանց պաշտպանում էր հարձակումներից, մյուս երկու խմբերը (ձիու պայտի տեսքով) երկու ծայրերում էին կանգնում[20]: Աջեմի զորամիավորումից թոփչու զորամիավորում անցնելուց հետո, զինվորներից ընտրում էին հրաձիգային մասում ծառայողներին և թնդանոթաձուլաբաններլում աշխատողներին:

Թոփարաբաջըլը կամ արաբաջը օջաղը: Թոփաբաբաջը զորամիավորումը թոփչու զորամիավորման հետ կապված, սակայն նրանից անկախ քափըքուլու զորաբանակի փոքր ստորաբաժանումներից է[21]: Սկզբնական շրջանում, երբ թնդանոթները փոքր չափերի էին, դրանք հնարավոր էր ուղտերով և ջորիներով տեղափոխել, ավելի ուշ, երբ ձուլվեցին մեծ տրամաչափի թնդանոթներ, դրանք սայլերով տեղափոխելու անհրաժեշտություն առաջացավ: Դրա հետևանքով ստեղծվեց թոփարաբաջը զորամիավորում (արաբա նշանակում է սայլ):

Որոշ պատմիչ ժամանակագիրներ (Օրուջ բեյի պատմությունը, Ալիի պատմությունը) նշում են, որ թոփարաբաջիները կիրառվել են Մեհմեդ II

որոք են[22]: Ըստ թուրք պատմաբան Օզթունայի՝ թոփարաբաջըի զորամիավորումը հիմնադրել է Բայազիդ II (1481-1512թթ.)[23]:

Հումբարաջըի օջաղը: Հումբարաջըի զորամիավորումը բաժանվում էր երկու մասի. նրանց մի մասը կապված էր ջեբեջի զորամիավորմանը, մյուսը՝ թոփչու: «Հումբարա». («Քումբարա» ժողովրդական լեզվում) նշանակում է ձեռքի ռումբ[24]: Քափըքուլու զորաբանակի համար ռումբ պատրաստող դաս էր: Օզթունան նշում է, որ նրանց զորանոցները և գործարանները Սկյուտարում (Üsküdar) էին գտնվում[25]:

Լաղըմջըի օջաղը: Օսմանյան բանակում լաղըմջը զորամիավորումը նշանակություն մեծ էր: Նրանք պատերազմների ժամանակ ամրոցները կործանելու համար թունելներ էին փորում, բեռներ էին պայթեցնում: «Լաղըմ»-ները ստորերկրյա փորված անցքերն են[26]: Զորամիավորումը երկու մասից էր կազմված. առաջինը գտնվում էր ջեբեջի բաշիի հրամանատարության տակ, երկրորդ խմբի լաղըմջիները զեամեթներ և թիմարներ ունեին[27]:

Օսմանյան կայսրությունը ռազմաավատատիրական երկիր էր: Ռազմական համակարգի ճկունությամբ էր պայմանավորված նրա նվաճողական քաղաքականության հաջողությունները: Օսմանյան բանակի կարևորագույն ստորաբաժանումներից մեկի՝ քափըքուլու զորաբանակի ստեղծման նախադրյալների ու նպատակների ուսումնասիրությունը մեզ տալիս է հսկայական նյութ կայսրության պատմության մի շարք փաստերի և երևույթների բուն էությունը համակողմանի պատկերացնելու համար:

ANI VOSKANYAN

(AGMI)

THE SUB-UNITES OF THE KAPIKULU ARMY

History of formation and development of one of the powerful states of Middle Ages, the Ottoman Empire, is closely connected with the characteristics of its military structure. This structure has been the basis of successful aggressive policy of Turk-Ottomans for years. One of the most important features of the Ottoman Empire is ***Kapıkulu*** with its unique structure, its special way of formation and education. The conscription of ***Kapıkulu*** was done by ***penc-i yek*** and ***devşirme*** system.

The staff of *Kapıkulu* army consisted of *acemi, yeniçeri, cebeci, topçu, toparabacı, humbaracı, lağımcı* bodies of troops, and cavalry part of *Kapıkulu* cavalry.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Քուլ» թարգմանաբար նշանակում է «ստրուկ»: «Քուլ» տերմինը պահպանվել էր այն ժամանակներից, երբ զինվորները հավաքագրվում էին գերիներից և համարվում էին սուլթանի ստրուկներ: Меъде-и Канун-и Йеничер-и Оджаги Тарнхи, нзд., перев., коммент. и указ. И. Петросян, М., 1987, с. 29.
2. Փենջ-ի եքը (հինգից մեկը) կամ Փենջիքը կիրառվում էր գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ, ովքեր պարտավոր էին թուրքերին հանձնել իրենցից յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին կամ վճարել համապատասխան փրկագին: Պատերազմի ժամանակ գերի ընկած զորահրամանատարներն ու զինվորներն ևս հարկվում էին: Սաքարյան Ա., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. Դևշիրմե, Եր., 2006, էջ 26-27:
3. Uzunçarşılı İ, Osmanlı Devleti Teşkilatından Kapıkulu ocakları, Ankara, 1944, s. 1-2.
4. Yurt Ansiklopedisi, İstanbul, 1984. c. 11, s. 8106.
5. AnaBritannıca, Genel Kültür Ansiklopedisi, Ankara, 1993, c. 1, s. 53.
6. Sevinç N , Osmanlının Yükselişi ve Çöküşü, İstanbul, 1999, s. 301.
7. Նույն տեղում, էջ 302:
8. Марсильли, Военное состояние Оттоманской империи, Спв., 1737, с 51.
9. Uzunçarşılı İ., Osmanlı Tarihi, Ankara, 1947, c. 1, s. 254.
10. Goodwin G., The Jahissaries, London, 1997, p. 70.
11. Koçi Bey, Risalesi, İstanbul, 1939, s. 92.
12. Марсильли, նշվ. աշխ., էջ 59:
13. Меъде-и Канун-и Йеничер-и Оджаги Тарихи, նշվ. աշխ., էջ 28:
14. Петросян Ю. А., Османская империя. Могущество и Гибель, М., 1990, с. 182.
15. Uzunçarşılı İ., Osmanlı Tarihi, Ankara, 1949, c. 2, s. 553.
16. Öztuna Y., Ösmanlı Devleti Tarihi, İstanbul, 1986, c. 2, s. 99.
17. Նույն տեղում, էջ 96:
18. Uzunçarşılı İ., Osm. Dev. Teş. Kapıkulu..., c. 2, s. 35.
19. Նույն տեղում, էջ 36; Y. Öztuna, նշվ. աշխ., էջ 96:
20. Նույն տեղում, էջ 57:
21. Öztuna Y., նշվ. աշխ., էջ 98:
22. Uzunçarşılı İ., Osm. Dev. Teş. Kapıkulu..., c. 2, s. 97.
23. Öztuna Y., նշվ. աշխ., էջ 98:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում:
26. Նույն տեղում:
27. Uzunçarşılı İ., Osm. Dev. Teş. Kapıkulu..., c. 2, s. 131.

ՉԱՎԻԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ
(ԵՊՀ)

1982 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՑՔ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Զինվորների սահմանադրություն»[1] անվանվող 1982թ. սահմանադրությունը (Ս) նոր-քաղաքացիական սահմանադրությամբ փոխելուն ուղղված իշխող՝ Արդարություն և Զարգացում կուսակցության աշխատանքները ընդդիմության կողմից չողջունվեցին, որի արդյունքում էլ դեռևս շարունակվում է մասնակի փոփոխությունների գործընթացը[2]:

Թուրք-քաղաքական համակարգի կայունության տեսանկյունից որպես հասարակական դաշինք՝ 1982թ-ի Ս-ը վերլուծենք 4 ենթաբաժիններով:

1. Ինչ պայմաններում այն ընդունվեց և պատրաստվեց: Քաղաքական բևեռացմանը և տերրորին հաջորդեց 1980թ-ի զինվորական հեղաշրջումը: Կասեցվեցին բոլոր կուսակցությունների գործունեությունները և կուսակցությունների առաջին դեմքերը աքսորվեցին: Նոր (Ս) պատրաստելու համար ձևավորվեց հիմնադիր ժողով, որի անդամները ուղղակի և անուղղակիորեն նշանակվեցին զինվորական իշխանության կողմից[3]: Անկուսակցականներից ձևավորված հիմնադիր ժողովի ընդունած որոշումներին ու պատրաստված սահմանադրական նախագծին ուղղված քննադատությունները կանխելու համար կուսակցությունները փակվեցին[4]:

Պատրաստված նախագիծը զինվորական իշխանության հավանությանը արժանանալուց հետո ներկայացվեց հանրաքվեի և ընդունվեց 91,37 %-ով[5]: Ս-յան անցումային դրույթներով հեղաշրջման առաջնորդը դարձավ հանրապետության նախագահը, իսկ մյուս ուժային հրամանատարները՝ նախագահական խորհրդի անդամներ: Հեղաշրջման նախօրեին գործող բոլոր կուսակցությունների վարչական դեմքերին 5-10 տարով արգելեցին քաղաքական ակտիվ կյանք վարել[6]:

Մեր կարծիքով. այս Ս-ում ուշադրության են արժանի հետեյալ կետերը.

1980թ. կասեցվել են բոլոր քաղկուսակցությունների աշխատարնքները. իսկ 1960 թ-ի հեղաշրջմանը հաջորդեց միայն իշխող կուսակցության աշխատանքի կասեցումը: 1982թ. հիմնադիր ժողովը նվազ ներկայացուցչական էր, քան՝ 1961թ.: 1982թ. սահմանադրությամբ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ հանրապետության նախագահը ընտրվեց համաժողովրդական ընտրությամբ. որով էլ հեղաշրջման լիդերը անուղղակիորեն ի ցույց դրեց իր անվստահությունը համընդհանուր ընտրությամբ առաջիկայում ձևավորվող Ազգային Ժողովի (ԱԺ) հանդեպ: Այս Ս-ում տեղ գտած անցումային դրույթները անգամ այսօր էլ կանխում են զինվորական իշխանության օրով ընդունված օրենսդրական ակտերի սահմանադրականության վիճարկումը:

2. Կառավարման համաեռոգը: Սույն Ս-ը շարունակում է պահպանել 1961թ. Ս-կան՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա հենված պառլամենտական համակարգը: 1961-1980թթ. պետության թույլ լինելու հանգամանքը վերագրելով գործադիր իշխանությանը, ուժեղացրել է վերջինիս լիազորությունները՝ օրենսդրի և դատականի նկատմամբ: Սակայն տալիս է նոր լիազորություններ ոչ թե գործադիրի կառավարական թևին, այլ՝ հանրապետության նախագահին՝ նկատի ունենալով նրա անկողմնակալությունը[7]: Ուշադրության է արժանի նախագահի, հատկապես դատական իշխանության ոլորտի լիազորությունները: Նախագահը նշանակում է Սահմանադրական դատարանի (ՍԴ) անդամներին, Վարչական դատարանի անդամների 1/4-ին, գլխավոր դատախազին և օգնականին, Զինվորական վճռաբեկ դատարանի անդամներին, Զինվորական գերագույն դատարանի անդամներին և Դատավորներ ու դատախազների խորհրդի անդամներին (հ.104)[8]: Սույն լիազորությունները ցույց են տալիս, թե 2 տարի առաջ ինչու էր անցանկալի Ա. Գյուլի թեկնածությունը նախագահական ընտրություններում: Այս Ս-յամբ վերացվեց երկպալատանի օրենսդիր համակարգը. նպատակ հետապնդելով արագացնել օրինաստեղծ գործընթացը: Որպեսզի կառավարությունը ունենա խորհրդարանական մեծամասնության աջակցությունը, խրախուսվեցին երկկուսակցական և

«մեղմ բազմակուսակցական համակարգ» ձևավորելուն ուղղված օրենքները և նորմերը[9]:

3. Ս-ում կատարված փոփոխությունները. Ներառյալ Օսմանյան շրջանը, Թուրքիայի սահմանադրական համակարգում, ամենաշատ փոփոխության ենթարկված Ս-ն է, որ փոխվել է Ս-յան հոդվածների 1/3-ը[10]: Սակայն ՍԴ-ի կողմից անվավեր հռչակվեց գլխաշորի հարցին առնչվող 15-յա Ս-ական բարեփոխումների հոդվածները[11]:

Այսօր էլ շարունակվում են ԱԺ-ի կողմից 1987թ. սկսված Ս-ական բարեփոխումները: Մենք կվերանայենք 1995, 2001 և 2004թթ. իրականացվածները, որոնցից վերջին երկուսը ընդունվեցին ԵՄ անդամությանն ուղղված գործընթացների շրջանակներում[12]:

1995թ. փոփոխություններով վերացվում են՝ միությունների, վաքֆ հիմնադրամների, արհմիությունների առջև դրված քաղաքականությամբ զբաղվելու արգելքները, կուսակցությունների՝ կանանց և երիտասարդական թևեր ունենալու, արհմիությունների, միությունների և հիմնադրամների հետ համագործակցելու առջև արգելքները, քաղաքական կուսակցություններին և արհմիություններին թույլատրվեց արհեստակցական միություններում վարչական դեմքերին օժանդակելու կամ թեկնածուի օգտին քարոզչություն անելու իրավունքը, վերացվել են հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների համագործակցության արգելքները[13]: Ս-ական դատարանին է վերապահվում Ս-յամբ սահմանված քաղկուսակցությունների հանցակազմի առկայությունը հաստատելու և որոշում ընդունելու իրավունքը, որն էլ արագացնում է կուսակցությունների փակման պրակտիկան[14]:

2001թ. փոփոխություններով, բացառությամբ ռազմական և նման իրավիճակների, վերացվեց մահապատիժը (հ.38/7): Կոալիցիայի ազատության, հավաքներ և երթեր կազմակերպելու արգելքները կարող են արգելափակվել միայն ազգային անվտանգության, հասարակական կարգի, հասարակական առողջության/բարոյականության, այլոց ազատությունները պաշտպանելու պատճառաբանությամբ (հ.33, հ.34): Ընտրական օրենսգրքում իրականացված փովոխությունները չեն կարող կիրառվել, ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում անցկացված ընտրություններում (հ. 67/վերջին): Քաղկուսակցությունների հանցակենտրոն դառնալու հանգամանքը

հաստատելու հարցում ՍԴ-ը կարող է նկատի առնել որոշ չափորոշիչներ. կուսակցությունները կայտող են պատժվել պետական աջակցությունից զրկման միջոցով, իսկ վերջնական փակման դեպքում հարկավոր են Սահմանադրական դատարանի անդամների 3/5-ի ձայները (հ. 69): Ազգային Անվտանգության Խորհրդի (ԱԱԽ) որոշումները ընդունվում են խորհրդի կարգով, իսկ ԱԱԽ-ի կազմում ընդգրկված վարչապետի օգնականները և արդարադատության նախարարը անդամակազմում կգերակշռեն քաղաքացիական պաշտոնում զբաղվածների թիվը (հ. 118): Վերացվում է «12 սեպտեմբերյան» վարչակարգի շրջանում ընդունված օրենսդրական ակտերի սահմանադրականության վիճարկման առջև դրված արգելքը:

2004թ. Ս-ական փոփոխությունները[15]: Իսպառ վերացվում է մահապատիժը (հ. 15, 17, 38, 87): Միջազգային քրեական ատյանին անդամակցելու պատճառով հանցագործ քաղաքացին կարող է հանձնվել մի այլ երկրի: Հիմնական իրավունքներին և ազատություններին առնչվող միջազգային պայմանագրերը, որոնք ըստ պատշաճի օրինական ուժ են ստացել, կգերադասվեն տեղական օրենքի հետ հակասության դեպքում (հ. 90)[16]: Բարձրագույն ուսման խորհրդից հանվեց զինվոր անդամի անդամությունը (հ. 131): Լուծարվեցին պետանվտանգության դատարանները (հ. 143): Զինված ուժերը հաշվետու են դառնում Ազգային Ժողովի վերահսկողական գործառույթ իրականացնող հաշվիչ պալատի (Sayıştay) հանդեպ, իր օգտագործման ենթակա պետական գույքի համար (հ. 160/վերջին):

4. Նոր սահմանադրություն, թե՞ շարունակել սահմանադրական բարեփոխումները:

Կարծիք կա, որ տարբեր կուսակցությունների[17] օրակարգում 90-ական թթ. եղել են արմատական նոր Ս-յան նախագծեր, որոնց հաջորդել է հարցի լուծման մի շրջան, ուր գերակշռում է Ս-ական բարեփոխումների ճանապարհը: Այնուամենայնիվ, 2000թթ. ևս պատրաստվեցին նոր Ս-յան նախագծեր[18]: Վերջին շրջանում իշխող Ռ. Էրդողանի կառավարության կողմից պատրաստված և «Օզբուդունի նախագիծ» հիշատակվող նոր Ս-յան նախագիծը որոշ պահպանողական սահմանադրագետների կողմից գնահատվում է՝ որպես «մի կուսակցության երևակայությունում քաղաքացիական հեղաշրջման Ս-ական շրջանակ»[19] և սույն վիճակը ցույց է տալիս, որ

ինչքան դժվար է կոնսենսուսի ճանապարհով քաղաքացիական սահմանադրության ձևավորումը: Թուրքիան. ԵՄ անդամության թեկնածու լինելու պատճառով. պարտավորվում է իր Ս-ում իրականացնել փոփոխություններ իրավունքի գերակայության. ժողովրդավարության, մարդու և փոքրամասնությունների իրավունքների հարցերում[20] և դրանք լիարժեք իրականացնել հասարակական կյանքում: Թուրքիայի ՍԴ-ի նախագահի ուշադրութան է հրավիրում Եվրոպայի մարդու իրավունքների դատարանում 2008թ. դրությամբ վարույթում ընդունված 97300 հայցադիմումներից 11 100-ը վերաբերում են Թուրքիային և առաջարկում կուսակցությունների փակման հարցում կիրառել Վենետիկի հանձնաժողովի չափորոշիչները[21] ու անհատներին թույլատրել դիմել ՍԴ[22]:

Ամփոփելով վերը նշվածը կարող ենք ասել. որ 1982թ. սահմանադրությունը, որը ի սկզբանե առաջնայնություն է տալիս պետությանը, այլ ոչ թե քաղաքացուն, չի բավարարում ժամանակակից ժողովրդավարության չափանիշները: Ս-ում քեմալական գաղափարախոսության առկայության հարցը[23], ինչպես՝ որոշ սահմանադրագետներ այն ավելորդ են համարում և պնդում, որ սահմանադրությունը վերածվում է քաղաքական դաշտի «սրբազան գրքի», սա թերևս՝ ամենանուրբ. վիճելի հարցերից է: Այս և ընդհանրապես Ս-ական բարեփոխումների հարցում ողջամիտ տեսակետը պարտադիր է համարում կոնսենսուսը[24]:

PETROS CHAVIKYAN

(YSU)

THE CONSTITUTION IN 1982 AND THE STABILITY OF THE TURKISH POLITICAL SYSTEM: A GENERAL EVALUATION

The matteer of designing e new constitution. or reforming the exicting one. is again on the Turkish political agenda yet again.

This research paper is a retrospect into the 1982 Constitution of Turkey. and it outlines its 4 subdivisions. The first subdivision deals with the conditions in which the Constitution was adopted. the second division looks into governence. third subdivision examines the changes made in the constitution so far. and the fourth subdivision represents the opposing positions with respect to constitutional changes.

In our wiev. and from the perspective of political stability. this crucial matter will be resolved by way of constitutional reforms: this is because the Turkish conservatives are against the adoption of a new constitution. and especially one that is presented to the ruling Justice and Prosperity Party (AKP). The constitutional reforms will focus on the judicial power. and specifically the election prosedure for the member of the Constitutional Court. And the issue of 'cleansing' the Constitution from the Kemalist ideology should. at the very least, become a subject matter for scholarly debates.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Gönenç Levent. '2004 Anayasa Değışıklıkleri', www.yasayananayasa.ankara.edu.tr/makanayor/docs/ makale/2004_Degısiklıkligi.htm 19/09/2006:
2. 'Toptan ile görüşen Erdoğan anayasa değışıklığı için düğmeye bastı', Zaman, 22/04/2009
3. Tanör B.-Yüzbaşıoğlu N., Türk Anayasa Hukuku, Istanbul, Beta, 2005, s. 12-14.
4. No. 52, Kt. 2.6.1981 (RG.5.6.1981-17361 Tanör B.-Yüzbaşıoğlu N., Türk Anayasa Hukuku, Istanbul, Beta, 2005, s. 9.
5. Հանրաքվեն անցկացվեց 7.10.1982 թ.-ին Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 19:
6. Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 4-21:
7. Özbudun Ergun, Türk Anayasa Hukuku, Ankara, 2000, s. 61-62.
8. Yüzbaşıoğlu Necmi. Anayasa Hukukunun Temel Metinleri, Istanbul, Beta, 2005, s. 180-182
9. Özbudun Ergun, Türk Anayasa Hukuku, Ankara, 2000, s. 64
10. Gönenç Levent, նույն տեղում; (www.anayasa.gen.tr/1982av.htm 06/09/2008
11. Arslan Zühtü, 'Anayasa Mahkemesi Anayasa'yı değiştirebilir mi?', Zaman, 7 Hazıran 2008.
12. Մանրամասն տես Avrupa Birliği Sürecinde Uyum Yasaları, Ankara, Seçkin, 2004, s 139.
13. Özbudun Ergun, Türk Anayasa Hukuku, Ankara, 2000, s. 66-66.
14. Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 40:
15. Սահմանադրությունում փոփոխություն կատարող 5170 թվագիր օրենքի պատճառաբանությունում հիշատակվում է ԵՄ-ի Կոպենհագենյան չափանիշները ..Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 46:
16. Այս կետը 2001 թ. փաթեթում եղել է, բայց համապատասխան աջակցություն չի գտել Ազգային ժողովում.. Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 46-47:
17. SHP, DYP, ANAP կուսակցությունների կողմից...Tanör B.-Yüzbaşıoğlu N., նշվ. աշխ., էջ 51-52:
18. TÜSİAD. TOBB. TBB (2001-2007) կողմից պատրաստված նախագծեր. .Sağlam Fazıl, 'Anayasal Gelişim Sürecinde Dikkati Çeken Tehlikler, İ.Ü. Siyasal Bilgıler Fakültesi-Beyazıt/Istanbul. 15 Kasım 2007. '1982 ANAYASASI'NIN 25. YILI' konferansının sonuç bildırisi. s 16

19 Sağlam Fazıl, նշվ. աշխ., էջ 26:

20 Tanor B.-Yuzbaşıoğlu N., Turk Anayasa Hukuku. Istanbul. Beta. 2005. s. 52

21 Սահմանման տե՛ս www.venice.coe.int/docs/2000/CDL-INF(2000)001-e.html 2004-06-28

22 http://www.anayasa.gov.tr/general/haherdetaylar.asp?contID=678 29/04/2009

23 "Hukukçular "Kemalist Anayasa"yı tartışıyor". Yasemin Arpa. 30.07.2007. NTV-MSNBC

24 Arato Andrew. "Anayasa konsensüsle yapılmalı". Frankfurt 08.2008. Milliyet-25.08.2008. Հակադիր կարծիքը տե՛ս Özbudun Ergun. "Arato, konsensüs arayışı ve yeni anayasa". Zaman. 29/08/2008

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՍԵԴԱ
(ՀՅԹԻ)
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Ցեղասպանությունը որևէ էթնիկ. ռասայական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական բնաջնջումն է. այլև նրա մշակութային ժառանգության (հոգևոր և նյութական արժեքների ամբողջություն) ոչնչացումը, քանի որ էթնոս կամ ժողովուրդ հասկացությունն առավել ամբողջական իմաստ և նկարագիր է ստանում իր ստեղծած մշակութային արժեքներով: Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությանն ուղղված ցանկացած ոտնձգություն մարտահրավեր է նաև համամարդկային մշակութային ժառանգությանը, քանզի ցանկացած մշակույթ համաշխարհային քաղաքակրթության բաղկացուցիչ մաս է հանդիսանում: Ցանկացած խմբի գոյությունը կարող է հարցականի տակ դրվել, եթե այն զրկվում է իր մշակույթից, անգամ խմբի ֆիզիկական գոյության դեմ որևէ սպառնալիքի բացակայության պարագայում: Ինչպես իրավացիորեն նշում է անգլիացի հետազոտող Պամելա դե Կոնդապան, նյութական մշակույթի համակարգված և դիտավորյալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տվյալ էթնիկ խումբը նման մշակութային զտման մաս է կազմում[1]:

Դեռևս 1944թ. քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռաֆայել Լեմկինը, շրջանառության մեջ դնելով «ցեղասպանություն» տերմինը, իր «Առանցքի տերությունների կառավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ համադրելով հունարեն *genos* (ռասա կամ ցեղախումբ) և լատիներեն *cide* (սպանել) բառերը, կազմել է «գենոցիդ» եզրը, այն սահմանելով ոչ միայն որպես էթնիկ կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջում, այլև նրա ազգային, հոգևոր մշակույթի ոչնչացում: Մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացումը որակելով որպես հանցագործություն՝ Լեմկինը պնդում է, որ խմբի կյանքի հիմքի (գենոֆոնդ) ոչնչացման ջանքերն իրենց մեջ ներառում են քաղաքական և սոցիալական մշակույթի. լեզվի, ազգային ինքնության անկում[2]:

Հատկանշական է, որ Լեմկինը մինչ «գենոցիդ» եզրի առաջադրումը և դրա քննարկումը, հանդես եկավ նաև միջազգային օրենսդրական մի քանի նախագծերով «բարբարոսության» և «վանդալիզմի» դատապարտման համար: «Բարբարոսությունը» սահմանվում էր հետևյալ կերպ. «ազգային, կրոնական, ռասայական և սոցիալական ընդհանրության կանխամտածված ոչնչացում», իսկ վանդալիզմը՝ «ընդհանրությունների ուրույն հանճարի դրսևորում հանդիսացող մշակույթի և արվեստի աշխատանքների ոչնչացում»: Ընդ որում, Լեմկինը այնդում էր, որ թե «վանդալիզմը», և թե՛ «բարբարոսությունը» դիտարկվեն որպես միջազգային հանցագործություններ[3]:

Անվանի ցեղասպանագետ, Երուսաղեմի Հոլոքոսթի և ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չարնիի կարծիքով մշակութային ցեղասպանությունը կամ «էթնոցիդը» էթնիկական, ազգային, կրոնական կամ այլ խմբի մշակույթի կանխամտածված ոչնչացումն է և պարտադիր չէ, որ այն ներառի նաև խմբի ֆիզիկական ոչնչացումը[4]:

Հիմք ընդունելով Լեմկինի վերոհիշյալ աշխատությունը՝ ՄԱԿ-ում 1948թ. պատրաստվեց «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, որի նախնական տարբերակում ընդգրկվեցին ֆիզիկական, կենսաբանական (բիոլոգիական) և մշակութային ցեղասպանություն ձևակերպումները[5]: Նախագծում վերջինիս վերաբերող սահմանումներն էին.

ա) Խմբի երեխաների բռնի տեղափոխումն այլ խմբեր:

բ) Այն մարդկանց բռնի և սիստեմատիկ արտաքսումը, ովքեր ներկայացնում են տվյալ մշակութային խումբը:

գ) Մայրենի լեզվի օգտագործման արգելումը նույնիսկ նեղ շրջանակներում:

դ) Մայրենի լեզվով լույս տեսած գրքերի կամ կրոնական աշխատությունների սիստեմատիկ ոչնչացումը և վերահրատարակելու արգելքը:

ե) Պատմական ու կրոնական հուշարձանների սիստեմատիկ ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացումը և տարրալուծումը[6]:

Մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող վերոնշյալ սահմանումները թեպետ կոնվենցիայի վերջնական տարբերակում տեղ չգտան, սակայն ժամանակակից միջազգային իրավունքում հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ, որոնք վերաբերում են մշակութային ժառանգության պահպանմանն ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելուն[7]: Հիմնական փաստարկն այն էր, որ կոնվենցիան ուղղված է հենց մարդկային կոտորածների կանխմանն ու պատժին, հետևաբար մշակութային ցեղասպանության ներառումը կթուլացներ կոնվենցիայի ուժը որպես այդպիսին: Միակ ձևակերպումը, որ տեղ գտավ կոնվենցիայի վերջնական տարբերակում և համապատասխանում էր «մշակութային ցեղասպանություն» հատվածին, դա խմբի երեխաների՝ որպես տվյալ խմբի մշակութային ժառանգության կրողի, բռնի տեղափոխումն է այլ խմբեր[8]:

Բացարձակ ճշմարտություն է այն, որ մշակութային արժեքների ոչնչացումը երբեք չի կարելի համեմատել ֆիզիկական ոչնչացման կամ մի ամբողջ խմբի բնաջնջման հետ, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ մեկն առանց մյուսի երկար գոյատևել չեն կարող: Խմբի մշակութային ժառանգության լիակատար ոչնչացումը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համընդհանուր հիշողությունից, ինչպես և նրա կենսագործունեության բոլոր հետքերի վերացմանը: Իսկ եթե չկա հիշողություն, ապա մշակութային ցեղասպանություն իրագործողների համար տվյալ խմբի գոյության ժխտումը կամ մերժումը առավել քան դյուրին կլինի, իսկ ցեղասպանությունը կամ բնաջնջումը՝ ամբողջական:

Մեր օրերում մշակութային ժառանգության դեմ ոտնձգությունները կրում են շարունակական բնույթ՝ ուղեկցվելով նորանոր ցեղասպանական գործողություններով կամ պատերազմների ժամանակ կիրառվող հանցագործություններով: Բոսնիայում մահմեդական, ուղղափառ հոգևոր հաստատությունների և այլ մշակութային կենտրոնների դեմ իրականացված ոտնձգությունները, Բուդդայի արձանի պայթեցումը թալիբների կողմից, ինչպես նաև Նախիջևանում Հին Ջուղայի հայկական գերեզմանոցի՝ պետական մակարդակով իրագործված բարբարոսական ոչնչացումը[9] վկայում են այն մասին, որ մշակութային ցեղասպանությունները դեռ կիսառելի են և շատ հաճախ

ոչնչացվում են կոնկրետ պետության իշխանությունների կողմից: Այս կամ այն խմբի մշակութային արժեքների ոչնչացման շարունակելիությունը, անժխտելիորեն, հանդիսանում է մշակութային ցեղասպանության իրագործողների անպատժելիության արդյունք: Հայկական մշակութային ժառանգության (պաշտամունքային հուշարձաններ, գրադարաններ, դպրոցներ, դպրեվանքեր, եզակի ձեռագրերի բազմահազար հավաքածուներ և այլն) հետևողական ոչնչացումն Օսմանյան կայսրության, ապա նաև՝ Թուրքիայի Հանրապետության տարածքում, որը լիովին համապատասխանում է մշակութային ցեղասպանության բնորոշմանը և հայերի դեմ իրագործված ցեղասպանության բաղկացուցիչ մասն է կազմում, հենց այդ անպատժելիության դասական օրինակն է հանդիսանում[10]: Թուրքական կառավարությունը, թեև պաշտոնապես հավատարիմ է մնում ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերին[11], այդուհանդերձ, կանխամտածված կերպով շարունակում է իր տարածքի, դեռևս կանգուն կամ կիսավեր հայկական հուշարձանների ոչնչացումը[12]: Արկանզասի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Սեմյուել Թոթթենը, խոսելով հայերի դեմ իրագործված ցեղասպանության մասին, պնդում է, որ հայկական մշակութային հուշարձանների նկատմամբ իրագործված վանդալիզմը հանդիսանում է ցեղասպանության ակտ[13]: Հատկանշական է, որ վերջին շրջանում արդեն անհրաժեշտություն է դիտվում միջազգային նոր կոնվենցիա ընդունելու խնդիրը, որով մշակութային արժեքների ոչնչացումը պետք է դիտվի որպես մարդկության դեմ հանցագործություն[14]:

Ժամանակակից ակադեմիական գրականության մեջ «էթնոցիդ» եզրն առավել հաճախ օգտագործվում է ավելի նեղ իմաստով՝ բնորոշելով մշակութային ցեղասպանությունը: Այսպիսի իմաստով այն բնութագրվում է Սան Խոսեում 1981թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված հռչակագրում, որում մասնավորապես նշվում է. «Էթնոցիդը դա էթնիկ խմբին իր սեփական մշակույթի, լեզվի օգտագործման ու զարգացման և փոխանցման խմբային և անհատական իրավունքների մերժումն է... Մենք հայտարարում ենք, որ էթնոցիդը, այսինքն մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի խախտում է և համարժեք է ցեղասպանությանը, որը դատապարտվում է Միացյալ

ազգերի «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» 1948թ. կոնվենցիայով»[15]:

Այսպիսով, մշակութային ցեղասպանությունը, որպես կանոն, խմբի ոչնչացման ցեղասպան ծրագրի մասն է կազմում՝ ձգտելով ժխտել խմբի յուրաքանչյուր մարդկային կյանքի գոյությունը և այն ենթադրությունը, թե մշակութային ցեղասպանությունը տարբերվում է ֆիզիկական բռնության ենթադրյալ ցեղասպանությունից իրականում թյուրիմացություն է, քանզի մշակութային ցեղասպանությունը ցանկացած ցեղասպանական գործողության բաղկացուցիչ և կարևոր մասն է:

SEDA PARSAMYAN

(AGMI)

THE ANNIHILATION OF THE CULTURAL HERITAGE AS AN INTERGAL PART OF GENOCIDE

Genocide is not only the physical extermination of any religious, racial or ethnic group but also annihilation of group's cultural heritage. Culture is a one of basic characters of group and without it group has small chances to survive. Wipe out culture and it creates ideal condition for the further physical extermination.

The Mankind entered 21st century with consistent desire to prevent any acts of Genocide. Unfortunately, till now we face the acts of physical and cultural Genocides. The evident example of latter is the modern Turkish policy aimed to the complete extermination of Armenian cultural heritage in Turkey. One of the possible solutions here will be the adoption of the UN special convention against the extermination of cultural heritage.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Condappa de P., Cultural Genocide in Bosnia-Hezegovina: Destroying Heritage, Destroying Identity, տե՛ս www.metamedia.stanford.edu/projects/CulturesofContact/admin/download.html?attachid=14883-
2. Lemkin R., Axis Rule in Occupied Europe, Washington, 1944, p. 80-85, տե՛ս http://www.preventgenocide.org/lemkin/AxisRule1944-1.htm.
3. Shaw M., What is genocide?, Polity, London, 2007, p. 18.

4. Charny W. I., Classification of Genocide in Multiple Categories, "Encyclopedia of Genocide", vol. 1. Santa Barbara. California. 1999. p. 9.
5. Prott V. L., Ethnocide. Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity. Dinah L. Shelton [editor in chief], vol. I. Thomson Gale. 2005. p. 309.
6. Նույն տեղում, էջ 310:
7. The Final Act of the intergovernmental conference on the protection of cultural property in the event of armed conflict, the Hague, 1954. 2003թ. հոկտեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվեց Հայտարարություն մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացման վերաբերյալ. The General Conference of the United Nations Educational, Scientific and Cultural Organization meeting in Paris at its thirty-second session in 2003.
8. Fournet C., The Crime of Destruction and the Law of Genocide, UK., Ashgate, 2007, p. 43-46
9. Demoyan H., Azerbaijan: Vandalism as usual, Yerevan, 2006.
10. Հովհաննիսյան Ա., Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Եր., 2005.
11. Թուրքիան 1965թ. ստորագրել է դեռևս 1954թ. Հաագայի կոնվենցիան, որտեղ շեշտը դրված է անկախ ծագումից մշակույթների պահպանման կարևորության վրա, և որով Թուրքիան պարտավորվել է պատերազմի ժամանակ պահպանել մշակութային հուշարձանները, իսկ 1969թ. հունվարի 7-ին Թուրքիան ստորագրել է միջազգային մեկ այլ պայմանագիր՝ դարձյալ մշակութային հուշարձանների պահպանման մասին: Տե՛ս Kouymjian D., The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide, A Crime of Silence the Armenian Genocide, Cambridge, Mass., 1985, p. 176. Թուրքիան ստորագրել է նաև եվրոպական խորհրդի կողմից կնքված 1985թ. հոկտեմբերի 3-ին Գրենադայում ստորագրված «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիան», որը թեև Թուրքիան ստորագրեց նույն թվականին, սակայն նրա Ազգային մեծ ժողովի արտաքին գործոց հանձնաժողովի կողմից վավերացվեց միայն 1988թ. օգոստոսի 1-ին. այդ կոնվենցիայի 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն՝ կողմերը պարտավորվել են միջոցներ ձեռք առնել տվյալ ռեգիոնի հուշարձանների, կառույցների համալիրների և տեսարժան վայրերի պահպանության համար, կանխել պահպանության տակ եղած անշարժ գույքի փչացումը, քայքայումը կամ ոչնչացումը: Տե՛ս «Անի»-Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական- հասարակական եռամսյա հանդես, N 1, Եր., 1992, էջ 57-60, նույնի N 2, Եր., 1992, էջ 63:
12. Մեր օրերում հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման շարունակելիության մասին է վկայում է հետևյալ իրողությունը. Թուրքիայի պաշտպանության նախարարությունը, որ մինչ այդ անձամբ էր հսկողություն սահմանում Անիի հուշարձանների նկատմամբ, 2004թ. իր պարտավորությունները հանձնել է մշակույթի նախարարությանը՝ պայմանով, որ զինվորները պետք է փոխարինվեին հատուկ քաղաքացիական հսկիչներով: Մշակույթի նախարարությունը, սակայն, գործարք կնքելով Կարսում տեղակայված մի կազմակերպության հետ, Անիի ամբողջ հսկողությունը հանձնում է վերջինիս, որի աշխատակիցները մոտակա Օջաքլը գյուղի բնակիչներն էին, որոնք էլ օգտվելով

ընձեռնված հնարավորությունից, քանդել և փորել հն հնարավոր բոլոր տեղերը՝ գանձեր որոնելու ակնկալիքով: Տես http://www.virtualani.org/2007/index.htm

13. Condappa de P., Cultural Genocide in Bosnia- Hezegovina· Destroying Heritage, Destroying Identity.

14. Այսպիսի մի առաջարկով 2001թ. «Թայմզ» թերթում հանդես եկավ անգլիացի լրագրողը. Տես Condappa de P., Cultural Genocide in Bosnia-Hezegovina, տես նույն տեղում:

15. UNESCO and the struggle against ethnocide. Declaration of San Jose http://unesdoc.unesco.org/images/0004/000499/049951eo.pdf

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ
(ԵՊՀ)
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ
(Սրբոց Հակոբեանց միաբանություն)

Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը քրիստոնեական եկեղեցու ամենանվիրական և փառավոր անցյալ ունեցող աթոռներից մեկն է՝ իբրև սրբավայր և հոգևոր կենտրոն: Ներկայացվող զեկույցի թեմայի ընտրությունը պայմանավորված է Երուսաղեմի Հայոց պատրիարքության շուրջ ծավալվող իրադարձությունների արդիականությամբ և հանրության ուշադրությամբ:

Հայոց պատրիարքությունը դարեր շարունակ եղել է Երուսաղեմի համաքրիստոնեական սրբատեղիների պահապանը: Շուրջ երկու հազար տարի, շնորհիվ հայ միաբանների ջանքերի, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը մոտ 500-600 մլն կաթոլիկների և 200-300 մլն ուղղափառների ներկայացուցիչներին՝ Կաթոլիկ և Ուղղափառ պատրիարքություններին, հավասար դիրք է գրավում:

Երուսաղեմի սրբավայրերում իրավունքների պահպանման անհրաժեշտությունը ստիպում է առ այսօր կրոնական արարողությունները կատարել ճշգրիտ ժամին և հստակորեն որոշված վայրերում. կանոնավոր կերպով և անվրեպ, որովհետև որևէ անզգուշություն կարող է տվյալ իրավունքների կորստի պատճառ հանդիսանալ՝ հօգուտ մրցակից կողմերի:

Երուսաղեմի Հայոց պատրիարքության հիմնադրման վերաբերյալ կա մի քանի վարկած, որոնցից մեկի համաձայն՝ Քրիստոսի համբարձումից հետո առաքյալները հավաքվել են Երուսաղեմում և որպես առաջին եպիսկոպոս ընտրել ու օծել են Հակոբոս Տեսռնեղբայր առաքյալին: Նա իր աթոռը հաստատել է Սիոն լեռան վրա՝ իր բնակավայրում, ուր այժմ կանգնած է Հայոց Սրբոց Հակոբեանց տաճարը[1]: Նմանապես հաստատվում է, որ այս տաճարի մեջ է պահվում Հովհաննես Ավետարանիչի եղբոր որդու՝ գլխատված Հակոբի (Հիսուսի տասներկու

առաքյալներից է) գրուխը[2]: Այս ավանդությունները ներկայացվում են իբրև վկայություններ ու փաստեր՝ շեշտելու համար Երուսաղեմի Հայոց պատրիարքության պատմական կապերը երկու առաքյալների հետ:

Ըստ Գրիգոր Տաթևացու և Հովհաննես վարդապետի աշխատությունների՝ Գրիգոր Լուսավորիչը ուխտագնացություն է կատարել Երուսաղեմ, սակայն, իրեն արժանի չհամարելով անմիջապես մտնել Քրիստոսի գերեզման, յոթ տարի աղոթքներով ապրել է մերձակա քարանձավներում: Այս, նա մտել է Քրիստոսի գերեզմանը և Տիրոջից խնդրել, որ վառվի լույսը՝ ի նշան իր Համբարձման: Հրաշքով վառվել են ջահերը: Այս հրաշքը Գրիգորին «Լուսավորիչ» է դարձրել ոչ միայն հայերի, այլև՝ բոլոր քրիստոնյաների համար:

Հայաստանի նախարարական տները և եպիսկոպոսական աթոռները հայ ուխտավորներին օթևանով ապահովելու համար Երուսաղեմում կառուցել են բազմաթիվ վանքեր, որոնց թիվն, ըստ պատմիչ Անաստաս վարդապետի, VII դարում հասնում էր 70-ի[3]:

Քրիստոսի խաչելությունից մինչև Քաղկեդոնի ժողովը (451թ.) Երուսաղեմում կար մեկ համաքրիստոնեական պատրիարքական աթոռ, որտեղ նստում էին հայ, հույն, ասորի պատրիարքներ և հովվում էին Պաղեստինի քրիստոնյաներին: Ամեն ազգ ուներ իր սեփական վանքերն ու սրբատեղիները, որոնք ենթակա էին Հակոբ Տեառնեղբոր աթոռակալներին:

Քաղկեդոնի ժողովի ժամանակ Ընդհանրական եկեղեցին ընդունել է բանաձև Քրիստոսի երկբնակության՝ մարդկային և աստվածային տարանջատված բնության վերաբերյալ, ըստ որի Քրիստոս և՛ մարդ էր, և՛ Աստված: Հայերը, հավատարիմ մնալով առաջին երեք Տիեզերաժողովներին (Նիկեա՝ 325թ., Կ. Պոլիս՝ 381թ., Եփեսոս՝ 431թ.), մերժել են Քաղկեդոնի երկբնակությունը՝ ընդունելով Քրիստոսի մարդկային և աստվածային էությունները մեկ համագոյության մեջ: Այդ ժամանակվանից սկսվել է Քրիստոսի եկեղեցու երկփեղկումը: Երուսաղեմի միասնական Աթոռը բաժանվել է երկուսի. հունաց պատրիարքության, որն իր իշխանությունը տարածել է երկաբնակ քրիստոնյաների վրա, և հայոց պատրիարքության, որն իր հովանավորության տակ է առել Քրիստոսի միաբնակ էությունն ընդունող մյուս համայնքները՝ մասնավորաբար ասորիներին, ղպտիներին և եթովպացիներին:

Նշված ժամանակահատվածում էլ ծեսավորվել է հայ-հունական հակամարտությունը՝ Երուսաղեմում գերակայություն հաստատելու համար: Երուսաղեմը, որը Սուրբ քաղաք է հանդիսանում երեք կրոնների՝ քրիստոնեության, հուդայականության և իսլամի համար, բազմիցս նվաճումների է ենթարկվել, որի արդյունքում փոխվել են քաղաքի իշխանությունները: Հայկական և հունական համայնքները փորձել են ստանալ իշխանությունների հովանավորությունը և իրենց իրավունքները վավերացնող փաստաթղթեր:

Հայ-հունական վեճերի հիմնական պատճառներն էին. պայքարը Երուսաղեմի սրբավայրերում գերակայության համար և հայերին համադավան հաբեշների, ղպտիների, ասորիների ենթակայության հարցը: Ելնելով այն հանգամանքից, որ ինչպես հայերը, այնպես էլ թվարկված համայնքները միաբնակ էին, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը միանգամայն իրավասու էր իր հովանավորության ներքո առնելու նրանց՝ հողերով և հարստություններով հանդերձ: Հունաց պատրիարքությունը, որը շահագրգռված էր իրեն ենթարկելու վերջիններիս և վերահսկելու նրանց ունեցվածքը, ամեն կերպ ջանում էր ապացուցել իր իրավասությունն այդ խնդրում: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ-հունական վեճերի առանցքը առավելապես կրում էր նյութական, այլ ոչ՝ դավանաբանական բնույթ:

Զեքի ադ-Դին արաբ պատմիչի հաղորդած տվյալների համաձայն՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Աբրահամը, 626թ. գնացել է Մեքքա, որտեղ Մուհամմադ մարգարեն նրան իր ափով կնքած հավատարմագիր (չարթյր) է շնորհել՝ Երուսաղեմի Հայոց եկեղեցու անձեռնմխելիության մասին[4]: Այն Հայոց պատրիարքության կարգավիճակը որոշող պաշտոնական փաստաթղթերից առաջին էր: Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին տրված արաբական արտոնագրերը կրում են «*Ալի-Մանշուր*» ընդհանուր անունը, որը թարգմանաբար նշանակում է հրովարտակ: Մուհամմադի կողմից տրված փաստաթղթի բնագիրը չի պահպանվել, որը, թերևս, կարող էր կասկածի տակ դնել այդ արտոնագրի գոյության հարցը, եթե Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահպանված չլինեին դրա պատճենը, որտեղ կան 30 հոգու, այդ թվում՝ նաև Օմար խալիֆի ստորագրությունները:

Երուսաղեմի հայոց պատրիարքության կարգավիճակը հաստատող փաստաթղթերից երկրորդը տրվել է Օմար խալիֆի (634-644թթ.) կողմից

636թ.: Ըստ պատմագրության, երբ Օմարը գրավել է Երուսաղեմը, նրան ցույց են տվել Մուհամմադ մարգարեի հավատարմագիրը, որի շնորհման ժամանակ ինքը ևս ներկա է եղել: Օմարը Երուսաղեմի Հայոց պատրիարք Գրիգոր Ուրֆայեցուն շնորհել է նոր հավատարմագիր, որը հաստատում էր մարգարեի շնորհները:

969թ. Եգիպտոսի Ֆաթիմյանները գրավել են Երուսաղեմը: X-XI դարերի ընթացքում Ֆաթիմյան խալիֆների և սելջուկ ամիրաների պայքարի հետևանքով Երուսաղեմը, հատկապես՝ համաքրիստոնեական սրբավայրերը, դարձել են կռվադաշտ և 10-12 անգամ ձեռքից ձեռք են անցել: Այս ժամանակահատվածում Հռոմի Պապ Ուրբանոս II-ի օրհնությամբ և հովանավորությամբ՝ Քրիստոսի Սուրբ Գերեզմանը և այլ սրբավայրերը իսլամի տիրապետությունից ազատելու նպատակով, կազմակերպվել է խաչակրաց առաջին արշավանքը (1095-1099թթ.): Խաչակիրների տիրապետության շրջանում՝ Երուսաղեմի Լատինական թագավորության հաստատմամբ (1099-1187թթ.), հայ-հունական հակամարտությանը ավելացել է երրորդ կողմը՝ կաթոլիկները, որի արդյունքում, նրանք սրբավայրերում գերակայության (praedominium) են հասել՝ ի վնաս միացյալ քրիստոնյա եկեղեցիների, մանավանդ՝ հույն ուղղափառների[5]: 1172թ. տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ պաշտամունք էին մատուցում Սուրբ Հարության տաճարում՝ թեև լեզվով և եկեղեցական արարողությունների տարբեր ձևերով:

1187թ. Եգիպտոսի Այուբյան դինաստիայի հիմնադիր Սալահ ադ-Դին սուլթանը (1171-1193թթ.) գրավել է Երուսաղեմը: Ժամանակի հայոց պատրիարք Աբրահամ Երուսաղեմացին մի քանի բարձրաստիճան հոգևորականների հետ այցելել է Սալահ ադ-Դինին և հայտնել իր ժողովրդի հավատարմությունը: Պատրիարքը ներկայացրել է Մուհամմադ մարգարեի, Օմար խալիֆի հրովարտակ-հավատարմագրերը և իր հոտի համար սուլթանից խնդրել է սույն առանձնաշնորհների վերահաստատումն ու պաշտպանությունը: Խալիֆը նոր հրովարտակ է հրապարակել, որով, հաստատելով նախորդների շնորհած արտոնությունները, հրամայել է, որ ոչ միայն իր հաջորդները, այլև բոլոր մուսուլմանները ընդհանրապես, հավատարմորեն կատարեն հրովարտակի պայմանները: Այս պատմական վավերաթուղթը հիմք է ծառայում Երուսաղեմի Հայոց պատրիարքության իրավունքներին և սեփականություններին:

1300թ. Կիլիկիայի Հեթում II թագավորը և թաթար-մոնղոլական Մահմուդ Ղազան խանը (1295-1304թթ.) իրենց բանակներով գրավել են Երուսաղեմը Հայոց արքային՝ իբրև հաղթության բաժին. տրվել է Երուսաղեմը իր շրջակայքով: Ահա այսպես XIV դարի վերջում հայկական դրոշը ծածանվել է Սիոն լեռան վրա: Սակայն 1303թ. Եգիպտոսի Հուսամ ալ-Դին սուլթանը կրկին գրավել է Երուսաղեմը՝ վերջ տալով հայկական կարճատև տիրապետությանը:

1517թ. Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը (1512-1520թթ.) գրավել է Երուսաղեմը և. ի հաստատումն իր բարձր հովանավորության. հրապարակել է հրովարտակ[6] (*«Ֆերման»*), որտեղ հաստատել է Մուհամմադի. Օմարի. Ալիի և Սալահ ալ-Դինի կողմից հայերին տրված առանձնաշնորհները՝ Սուրբ Հակոբեանց Աթոռի ստացվածքներն ու անշարժ գույքը. և հայոց պատրիարքի իրավասությունները:

Օսմանյան տիրապետության չորս դարերի ընթացքում Երուսաղեմի քրիստոնյա համայնքների կյանքում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ: Հայերն օգտագործել են իրենց կապերը թուրքական իշխանությունների հետ և ամրապնդել համայնքի կարգավիճակը: Հենց այդ ժամանակից վերջնականապես ձևավորվել է Երուսաղեմի Հայկական թաղամասը:

Սելիմ Ահեղին հաջորդող սուլթան Սուլեյման I (1520-1566թթ.) թագավորական ստորագրությամբ հրովարտակ է հրապարակել, որը հաստատում էր հայերի իրավունքները: 1657թ. Երուսաղեմում հույն հոգևորականները, կաշառելով փոխարքային և ավագանուն, նրանցից ձեռք են բերել սուլթանական հրովարտակ, որով հայկական վանքերը ճանաչվել են որպես հույների սեփականություն: Սակայն սուլթանական մեկ այլ հրովարտակով այդ հողերը վերադարձվել են օրինական տիրոջը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքությանը:

1658թ., հույները զրպարտել են հայերին՝ որպես «Ապստամբներ թագավորական հրամանների», կաշառել վեզիրին և նրա միջոցով սուլթանից ստացել նոր հրովարտակ, ըստ որի հայոց Սուրբ Հակոբեանց տաճարը՝ իր կալվածքներով հանդերձ, տրվել է նրանց: Որոշ ժամանակ անց հայերը սիրաշահել են մեծ վեզիրին, որն էլ սուլթանին է հասցրել նրանց խնդրանքը՝ իրենց սեփականություն հանդիսացող Սուրբ Հակոբեանց տաճարը վերադարձնելու վերաբերյալ: 1659թ. Երուսաղեմի հայ միաբանները ստացել են սուլթան Մեհմեդ IV-ի (1648-1687թթ.)

համապատասխան հրովարտակը *(ֆերման)*: Եղիազար պատրիարքը, վերադառնալով Երուսաղեմ, վերստացել է վանքը տասնութամյա գերությունից հետո:

1735թ. Երուսաղեմի հույն Մելետիոս պատրիարքը մեկնել է Կ. Պոլիս ու, կաշառելով սուլթան Մահմուդ I-ի (1730-1754թթ.) պալատականներից մի քանիսին, կարողացել է ձեռք բերել մի հրաման, ըստ որի նրան իրավունք և լիազորություն էր տրվում՝ տիրանալու Սուրբ Հակոբեանց տաճարին և հայկական այլ սրբավայրերին: Հրովարտակի մեջ ասվում էր. «Բոլոր եկեղեցիները, այդ թվում և Երուսաղեմի սրբատեղիները, ենթակա են հույների պատրիարքին, վրացիները, հաբեշները, ֆրանկները, ղպտիները, ասորիները, հայերը, հակոբիկները, նեստորականները, մարոնիտները և մնացած տեղերի համայնքերը ենթակա են հույների պատրիարքին»:

Սակայն Մելետիոսից հետո Գրիգոր պատրիարքը ևս գնացել է Կ. Պոլիս, որտեղի Հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտի (1715-1741թթ.) հետ համատեղ իսլամական բարձրաստիճան հոգևորականի սեղանավոր Հարություն ամիրա Մուրադյանի միջոցով կարողացել են սուլթանին ներկայացրել հայերի խնդիրը: Սուլթանը, ծանոթանալով արխիվում պահվող հայոց վավերագրերի բովանդակությանը, անմիջապես իր ձեռքով մակագրել է հայոց հրովարտակ կալվածագրերը հետևյալ բառերով. *«Ես ևս Հայոց ազգին տվի վերստին»*[7]:

1801-1802թթ. Կ. Պոլսի Կալլինիկ Տիեզերական պատրիարքը (1801-1809թթ.), օգտագործելով իր դիրքն ու «նվերներ» ընծայելու քաղաքականությունը, կարողացել է սուլթան Սելիմ III-ից (1789-1807թթ.) ձեռք բերել մի հրովարտակ, որը ժառանգազուրկ էր անում Սրբոց Հակոբեանց միաբանությունը՝ մի շարք հայկական սրբավայրեր հունական սեփականություն հռչակելով: Հույները Երուսաղեմի դատական ատյանների մեջ արձանագրել են տալիս սուլթան Սելիմ III-ից ստացված՝ իրենց նոր հրովարտակը: Նրանք թուրք բարեկամների միջոցով սուլթանական արխիվներից նաև վերացրել են հայանպաստ բոլոր արձանագրությունների ստմարները: Այս իրադարձություններից անմիջապես հետո Կ. Պոլսում ծավալվել է հայ-հունական վեճ՝ Սուրբ Հակոբեանց և այլ սրբավայրերի հարցի շուրջ: Տեղի հայ համայնքի միջոցով այն հասել է սուլթան Մահմուդ II-ին (1808-1839թթ.): Սուլթանի 1809թ. հրամանի համաձայն՝ Շեյխ ուլ-Իսլամի նախագահությամբ.

մասնավոր Ատյանը ձեռնամուխ է եղել հայ-հունական վեճի քննությանը: Այն իր առաջին նիստը գումարել է 1809թ. օգոստոսի 2-ին, որի ընթացքում քննել է հայերի և հույների վեճի պատճառներն ու նրանց ունեցած հրովարտակ-իրավաթղթերը: Հայերն Ատյանին են ներկայացրել իրենց ինը հրովարտակները: 1809թ. մինչև 1811թ. մայիսը Ատյանը գումարել է 12 նիստ, որից հետո քննարկումների արդյունքը ներկայացրել է սուլթանին: Սուլթան Մահմուդ II 1812թ. դեկտեմբերի 13-ի թվակիր հրովարտակով (երկու օրինակով՝ մեկը հայերի, իսկ մյուսը՝ հույների համար) վավերացրել է իր նախորդների տված շնորհները և դրանց հիման վրա կատարել է իր շնորհաբաշխումը՝ հրամայելով «պատժել ոտնձգություն կատարողներին...»[8]:

Երուսաղեմի սրբավայրերի իրավակից երեք հաստատությունների՝ հայերի, կաթոլիկների և հույների միջպատրիարքական վեճերն առիթներ են ստեղծել օտար միջամտությունների համար: Վեճերը, ինչպես նաև արտաքին միջամտությունները ծանծրացրել և մտահոգել են սուլթաններին: Սուլթան Աբդուլ Մեջիդ I (1839-1861թթ.), նման իրավիճակին վերջ տալու համար, կանչել է հայ, հույն և կաթոլիկ պատրիարքներին և 1841թ. նրանց հայտնել է Օսմանյան կայսրության նպատակներն իր հպատակների վերաբերյալ: Այն էր. կրոնների և ծեսերի կատարյալ ազատություն շնորհել բոլորին: Սուլթանը 1853թ. մայիսի 25-ի թվակիր հրովարտակով, որը պաշտոնապես սահմանվել է որպես status quo, հայտարարել է.

«...Կայսերական կառավարությունս հոժարություն ցույց տվեց, որ տերությանս ամեն կարգի հպատակները կատարյալ պաշտպանություն գտնեն և առանց բացառության...հանգստություն վայելեն իրենց կրոնական պաշտամունքներում և հոգևոր գործերի մեջ...: Տերությանս հպատակ հայ եկեղեցականներին տրված բոլոր ստացվածություններն ու շնորհները հաստատելով՝ ես հրամայում եմ, որ դրանք հարգվեն ամբողջությամբ...հակառակ գործողները պետք է պատժվեն և հանդիպեն կայսերական բարկությանս...»[9]:

Աբդուլ Մեջիդի I-ի հրովարտակը հայերի իրավունքներն ու կարգավիճակը սահմանող՝ մեզ հասած հրովարտակներից վերջինն է: 1852թ. ձևավորված և հետագայում վերահաստատված կարգավիճակը *(Status quo)* պատմական այն զարգացումների արդյունքն է, որի սկզբնավորումը կարելի է գտնել քրիստոնեության առաջին դարերում,

երբ հաստատվել են իրավունքների ու առանձնաշնորհների բարդ ցանցը: Օսմանյան կառավարությունը կարողացել է պահել *Status quo*-ն և 1852թ-ից սկսած գրեթե ոչ մի նշանակալի փոփոխություն չի մտցվել երեք գլխավոր կողմերի առանձնաշնորհների մեջ: Ստատուս քվոն իր ուժը չի կորցրել նաև XX դարի աշխարհաքաղաքական նոր ցնցումների ժամանակ:

1947թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ը բանաձև է ընդունել (թիվ 181), որի համաձայն Պաղեստինը բաժանվել է արաբական և հրեական տարածքների: Հրեաների համար ՄԱԿ-ի բանաձևը դաղակազմիկ նշանակություն է ունեցել: 1948թ. մայիսի 14-ին Թել-Ավիվում՝ Դավիթ Բեն-Գուրիոնի գլխավորությամբ ստորագրվել է «Իսրայելի անկախության մասին» հռչակագիրը, որը հիմք է հանդիսացել Իսրայելի հրեական պետության կազմավորման համար: «Ստատուս քվո»-ով հաստատված իրավունքները հիմք են ծառայել Երուսաղեմի Հայոց պատրիարքության կարգավիճակի պահպանման համար նաև Իսրայել պետության օրոք:

VLADIMIR POGHOSYAN

(YSU)

THE ARMENIAN PATRIARCHY OF JERUSALEM

(The Saint Jakobs' Congregation)

The Armenian Patriarchy of Jerusalem is one of the Christian Church Sees with the most sacramental and glorious past. The selection of this subject is due to the public awareness and events taking place in Jerusalem between the Armenian and Greek Patriarchies.

We have had access to seven edicts that confirm the status of the Armenian Patriarchy of Jerusalem, each of which is presented in the article. The first of the edicts was given by the Prophet Muhammad in 626 and the last one was given in 1852 by Sultan Abdul Mejid I. The latter is a document that determines the status of Armenian, Greek and Catholic religious communities of Jerusalem and is known in historical terms as "status-quo".

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աթաջանյան Է., Սաղոյան Գ., «Երուսաղեմի Հայոց սրբավայրերը». Մոսկվա, 2003. էջ17.
2. Կեռքչյան Վ., «Հայ Երուսաղէմը դարերուն մէջէն», Երուսաղեմ, 1965, էջ 13-14:
3. Աղսվնունի Մ. «Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ». Երուսաղեմ, 1931. ԺԴ. -ԺԵ. էջ 14-15:
4. Հովհաննեսյանց Ա.. «Պատմություն Երուսաղեմի», Երուսաղեմ. 1999, էջ 109:
5. Մխիթարյան Ս.. «Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գանձերը», Երուսաղեմ, 1969, էջ18:
6. Կեռքչյան Վ., նշվ. աշխ., էջ 72:
7. Սավալանյանց Տ.. «Պատմութիւն Երուսաղէմի», հ. II. Երուսաղեմ. 1931, էջ 723:
8. Նույն տեղում. էջ 880:
9. Նույն տեղում, էջ 1217:

ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱԻՐԱ
(ԵՊՀ)

«ԽԱԼԻՖԱ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Իսլամի պատմության ուսումնասիրության կարևոր և անկյունաքարային խնդիրներից է Ումմայի մուսուլմանական համայնքի ղեկավարմանն առնչվող խնդիրների հետազոտությունը: Այս հարցերի լուսաբանմանն է նվիրված սույն հոդվածը:

Իսլամի ծագումը պայմանավորեց հասարակության կազմակերպման տոհմա-ցեղային սկզբունքից անցումը դեպի հասարակության կազմակերպման նոր ձև, որը բնորոշվեց «ումմա» եզրով: Այս նոր ձևը հիմնված էր մարդկանց՝ մեկ ընդհանուր կրոն իսլամին պատկանելու սկզբունքի վրա, որը իրենից ներկայացնում էր համայնքի կազմակերպման աստվածապետական ձև[1]: Աստվածապետությունը կառավարման այն համակարգն է, երբ առաջնորդի ձեռքին է կենտրոնացած լինում ոչ միայն աշխարհիկ, այլ նաև հոգևոր իշխանությունը:

Ումմայի առաջին ղեկավարը՝ «Ալլահի առաքյալ» Մուհամմադ մարգարեն էր, որն իր կենդանության օրոք նշել էր, որ նա է Ալլահի վերջին առաքյալը (մարգարեների կնիքը): Այս հանգամանքն էր այն պատճառը, որ անհնար դարձրեց մարգարեի մահից հետո (632թ.) նրան լիակատար ձևով փոխարինելը, քանի որ նրա հաջորդը արդեն չէր կարող մարգարե լինել: Այս առումով էլ ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը իր «Խալիֆա և սուլթան» հոդվածում նշում է, որ աստվածապետությունը իսլամական աշխարհում վերացել է Մուհամմադ մարգարեի հետ միասին[2]: Իսկ արդեն Օմայան շրջանում աստվածապետությունը կար միայն որպես գաղափար, իրականում խալիֆայությունը աշխարհիկ բնույթ ուներ[3]: Մարգարեի մահը շրջադարձային էր ողջ Ումմայի համար: Ո՞վ պետք է լինի Ումմայի նոր ղեկավարը: Այս հարցի պատասխանը տալը հեշտ չէ: Ինչո՞ւ: Որովհետև ի տարբերություն այլ դեպքերի, երբ ձևավորված պետությունում ծագում է մի կրոն, որը հարմարեցվում,

ծառայեցվում է պետության շահերին. այս դեպքում նոր կրոնը պայմանավորեց պետության առաջացում: Ուստի այստեղից էլ ենթադրվում է, որ պետական կառուցվածքը պետք է համարվեր կրոնին: Իսկ ինչպես վերը նշվեց նոր մարգարեի հայտնվելը բացառված էր, ուստի Ումմայի ղեկավարումը պետք է հանգրվաներ աշխարհիկ ձեռքերում: Այս աշխարհիկ ղեկավարության ստեղծումը դարձավ անհրաժեշտ հատկապես ծայր առած «ետ դեպի հեթանոսություն» շարժման պարագայում: Ձևավորվեց «խալիֆա» ինստիտուտը, որի մարմնավորողը կոչվեց «Ալլահի մարգարեի փոխանորդ (خليفة رسول الله)»: Տիտղոսի առաջին կրողը եղավ Աբու Բաքրը (632-634թթ.): Խալիֆաթու Ռասուլ Ալլահը փոխարինում էր մարգարեին ոչ թե որպես մարգարե, այլ կատարում էր նրա գործառույթը, այսինքն մարգարեի փոխարեն իրականացնում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունը: Սակայն սրանով այս խնդիրը ամբողջական լուծում չստացավ: Ինչո՞ւ: Քանզի Աբու Բաքրից հետո եկողը այդպես պետք է կոչվեր խալիֆայի խալիֆա[4], և այս շարքը մշտապես երկարելու էր: Այս պարագայում ձևավորվում է «ամիր ալ-մու՚մինին (أمير المؤمنين)» տիտղոսը: Ամենայն հավանականության այս տիտղոսի առաջացումը առնչություն ունի Օմար I ժամանակաշրջանում իրականացվող լայնածավալ նվաճումների հետ, որոնց արդյունքում խալիֆայությունը կորցնում էր իր միատարրությունը: Խալիֆայության կազմի մեջ էին ընդգրկվում զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող երկրներ, որոնք նման չէին Արաբական խալիֆայությանը ո՛չ բնակչության, ո՛չ կրոնի տեսանկյունից: Այս խայտաբղետ միջավայրում «ամիր ալ-մու՚մինին» կոչումը հանդիսանում էր այն գործիքը, որով ընդգծվում էր նրա ղեկավար լինելու հանգամանքը և հրահանգներ արձակելու իրավունքն իր նման հավատացյալների (մու՚մինների) հանդեպ[5]: Այս ինստիտուտի առաջացումը պատասխան էր նոր ձևավորվող պետություն-խալիֆայության կառավարման անհրաժեշտությանը: Բացի այդ, այս պարագայում կախումը մարգարեից և նրա փոխանորդից նվազում էր:

Հետագայում խալիֆաների կենցաղի փոփոխությունները, կառավարման համակարգի ամրապնդումը հանգեցրեցին «խալիֆա» տիտղոսի ընկալման փոփոխությանը: Այս փոփոխությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

Սկզբում՝



Այս փոփոխությունը էապես բարձրացրեց խալիֆայի հեղինակությունը: Խալիֆան, դառնալով «Ալլահի փոխանորդ», շրջանցեց Ալլահի առաքյալին՝ իշխանության ընդլայնման լավ հնարավորություն ստանալով: Նա այլևս մի երկրորդական անձ չէր, ով պետք է փորձեր փոխարինել մարգարեին: Դառնալով Ալլահի փոխանորդ՝ նա, փաստորեն, դառնում էր բացարձակ ճշմարտություն, ազնվություն, օրինականություն: Նրա որոշումների, մտահղացումների աղբյուրը Ալլահն էր, ուստի ո՛չ մի խոսք, ո՛չ մի որոշում մյուսների կողմից չէր կարող կասկածի տակ դրվել, քանի որ այս դեպքում փաստորեն կասկածի տակ էր դրվում Ալլահի ճշմարտությունը: Այս տեսարանը մենք տեսնում ենք նաև կառավարման եգիպտական համակարգում, որտեղ փարավոնը նույն դերն է կատարում ինչ խալիֆան, միայն թե խալիֆայի իշխանությունը ժառանգական չէր: Սակայն Օմայան շրջանում այն ևս դարձավ ժառանգական[6]: Այս վճռորոշ փոփոխությունը դարձավ մի շարք վեճերի, երբեմն էլ արյունահեղությունների պատճառ[7]: Առ այսօր էլ այս տարակարծությունը պահպանվել է իսլամական աշխարհում:

Շիական ուղղությունը չի ընդունում Օմայան և Աբբասյան խալիֆաների օրինականությունը, համարում է, որ նրանք գավթել են իշխանությունը, մինչդեռ իրական գահակիրներ պետք է լինեին Ալիի ժառանգները[8]:

Ի տարբերություն շիաների՝ սուննիները ընդունում են չորս Բարեպաշտ (Ռաշիդուն) խալիֆաների (Աբու Բաքր (632-634թթ.), Օմար (634-644թթ.), Օսման (644-656թթ.), Ալի (656-661թթ.), ինչպես նաև Օմայանների (661-750թթ.) և Աբբասյանների (750-1258թթ.) օրինականությունը:

Հարցի այլ մոտեցում ունեն խարիջիները. այս մոտեցման համաձայն «խալիֆան» ընտրովի ղեկավար է՝ մուսուլմանական համայնքի կամքով սահմանափակված: Սակայն պետք է նշել, որ այս բոլոր վեճերն ու հակասությունները կապված էին խալիֆայի անձի, այլ ոչ թե ինստիտուտի հետ[9]: Այսինքն խալիֆայի ինստիտուտը անհրաժեշտ էր, քանի որ նրա միջոցով էր իրականացվում օրինական որոշումների կայացումը, Իսլամը սխալներից պաշտպանելը և այլ կարևոր հարցեր: Սակայն այն, թե ով է մարմնավորելու խալիֆային, մնում էր չլուծված, և դրա լուծման՝ իրենց համար տարբերակներն էին առաջարկում տարբեր քաղաքական միավորումները:

Աբբասյան խալիֆայության վերջին օրերին պատկերը սկսում է փոխվել: Ձևավորվում է մեկ այլ ինստիտուտ, դա սուլթանն էր: Այն՝ որպես գլխավոր իշխանություն, ձևավորվեց այն պահին երբ խալիֆայությունը պարզապես խարխափում էր մթության մեջ: «Սուլթան(سلطان)» բառն իսկ տեղեկություն է տալիս ժամանակի իրողությունների մասին: Թարգմանաբար այն նշանակում է իշխանություն: Եթե խալիֆան փոխանորդ էր, ով ծառայում էր ժողովրդի շահերին, նրա գոյությունը անհրաժեշտ էր, ապա սուլթանն մի իշխանությունն պարտադրվում էր և որին պետք է ենթարկվեին: Սուլթանի գոյության պարագայում խալիֆան միայն ձևականորեն կոչ չգնաց նրան: Քանի որ խալիֆայի միանգամից վերացումը կարող էր ժողովրդական հուզումների պատճառ դառնար: Ուստի այն մնաց, բայց սահմանափակվեց միայն հոգևոր իշխանությամբ[10]: «Խալիֆա» ինստիտուտը դարձավ երկրորդական և ենթարկվեց «սուլթան» ինստիտուտին: Տեղի ունեցավ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատում: Եվ չնայած խալիֆան կորցրեց իր իշխանությունը, ժողովրդի գիտակցության մեջ այն շարունակում էր մնալ բացարձակ:

Այսպիսով՝ «խալիֆա» ինստիտուտը, ձևավորվելով Իսլամի ծագումից ընդհուսմենը մի քանի տարի անց, դարեր շարունակ դարձավ այն գլխավոր հատկանիշներից մեկը, որոնցով առանձնանում էր Արաբական խալիֆայությունը մյուս կայսրություններից:

NAIRA SAHAKYAN
(YSU)

SOME QUESTIONS CONCERNING THE "KHALIFAH„ INSTITUTE

The chief aim of this article is to give an account of the development of the title "*khalifah*„ . to outline its typological traits. to examine its historical content.

The institution of the "khalifah„ formed afther Muhammad's death (632). When Muhammad was alive. he was called ***Rasul Allah*** (The Messenger of Allah). After Muhammad's death the head of the Umma (The Muslim community) became Abu-Bakr. Abu-Bakr was called ***khalifah Rasul Allah*** (the successor of the Massenger of Allah). But the second caliph 'Umar (634-644) used the title ***khalifa khalifa*** (the caliph of the caliph) ***Rasul Allah***. 'Umar used another title ***amir al-mu'minin*** (commander of the believers).

In the times of the Umayyad caliphate the title "khalifah„ became hereditary and for a long time had been used by the 'Abbasid, the Fatimid and the other dinasties.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Беляев Е. А., Арабы, ислам и Арабский халифат в раннем средневековье, М., 1965, с. 111.
2. Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского Халифата, ст. Халиф и султан, М., 1966, с. 18.
3. Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XV, Л., 1966, с. 149.
4. Бартольд В. В., նշվ.աշխ., էջ 19, ծղ. 9:
5. Քոչարյան Հ., Ամիր-ալ-Մու'մինին ինստիտուտին վերաբերող որոշ հարցեր, Արևելագիտության հարցեր, h. VI, Եր. 2006, էջ 242-147:
6. Беляев Е. А., նշվ.աշխ., էջ 175:
7. Նույն տեղում, էջ 177:
8. Hitti P., History of the arabs, London,1951, p. 178-183.
9. Грюневаум Г. Э., Классический ислам, М., 1986, с. 86-89.
10. Donohue J. J., The Buwayhid dinasty in Iraq 334H./945 to 403H./1012, Leiden-Boston, 2003, p.17.

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ
(ԱԻ)

ՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ
(1946-1970ԹԹ.)

1946թ. ապրիլի 17-ին Սիրիայի տարածքից դուրս բերվեցին օտարերկրյա զորքերը: Սիրիայի ազգային-ազատագրական պայքարը ֆրանսիական մանդատի վերացման և նրա անկախ ու ինքնիշխան պետության ստեղծման համար հաղթանակով պսակվեց[1]: 1945թ. օգոստոսի 1-ին զինվորա-ոստիկանական ուժերը. որոնք անվանվում էին Troupes Speciales (հատուկ զորքեր). հանձնվել էին Սիրիայի կառավարությանը և հետագայում այդ ուժերը դարձան նրա ազգային բանակը[2]:

Սիրիայի բանակի ստեղծման և նրա հետագա զարգացումների մեջ մեծ դեր են խաղացել մի շարք հայորդի զինվորականներ. որոնք բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել և իրենց գործունեությամբ նպաստել են Սիրիայի ազգային բանակի զարգացմանն ու նրա դիրքերի ամրապնդմանը երկրի ներքաղաքական կյանքում:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ ավանդ է ունեցել գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը: Նա ծնվել է 1910թ. Այնթապում. նախնական ուսումը ստացել է ծննդավայրի Աղենական. այնուհետև՝ Հալեպի Ազգային Հայկազյան վարժարանում[3]: Զորավարի զինվորական գործունեությունը ընդգրկում է մի փոքրկալի ժամանակաշրջան. որն սկսվում է 1932թ. և ավարտվում 1958թ-ին[4]: 1934թ. նա ավարտում է Դամսկաի զինվորական վարժարանի հրետանու բաժինը: Մասնագիտությունը կատարելագործելու նպատակով 1938-1939թթ. նա մեկնում է Ֆրանսիա և 1945թ. բարձրագույն զինվորական կրթությունն ստանում Փարիզի Զինվորական Բարձրագույն Ակադեմիայում[5]: Այնտեղ նրան առաջարկվում է զինվորական աստիճանի անմիջական բարձրացումով

մնալ ֆրանսիական բանակում, սակայն նա հրաժարվում է և իր պարտքը համարում վերադառնալ Սիրիա և մասնակցել սիրիական ազգային բանակի կազմավորման գործին: Ըստ Արամ Կարամանուկյանի սփյուռքում ապրող հայը պետք է իր ներդրումն ունենա տվյալ երկրի քաղաքական կյանքում գտնելով, որ գաղթօջախներում ազգապահպանման հարցը կուսակցական հարցը չէ, այլ՝ համազգային խնդիր է, որով պետք է զբաղվեն կրթական, գեղարվեստական, բարեգործական և այլ կազմակերպությունները: Զորավարը որևէ կուսակցության անդամ չէր, սակայն ուներ հայ կուսակցական ազգականներ ու ընկերներ: Նույն կարծիքին էր նրա հայրը՝ Հակոբ Կարամանուկյանը, ինչպես նաև նրա երկու եղբայրներ՝ Լևոն և Նուբար Կարամանուկյանները[6]: Նա 1949-1957թթ. զբաղեցրել է Սիրիայի հրետանու գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Զորավարը մասնակցել է 1948թ. արաբա-իսրայելյան պատերազմին: Ռազմական առաջնակարգ կարևորություն ներկայացնող Գոլանի բարձունքներն ամրացված էին զորավարի հաստատած թնդանոթային մարտկոցների խիտ շարքերով, և թշնամու համար թվում էր անանցանելի[7]: Իսրայելական բանակի հրամանատարությունը մեծ պարգևատրում էր խոստացել նրան, ով կսպանի կամ գերի կվերցնի Արամ Կարամանուկյանին վնասելով նրա հրետանային համակարգը[8]:

1956թ. նա ստացավ ստորաբաժանման զորավարի գեներալ-լեյտենանտի (لواء) աստիճան: Այնուհետեւ 1957թ. զինվորական կցորդ նշանակվեց Վաշինգտոնում՝ Սիրիայի դեսպանատանը, իսկ 1961թ. ընտրվեց Սիրիայի ազգային ժողովի պատգամավոր և միաժամանակ սահմանադիր ժողովի անդամ[9]:

1964թ. գեներալ Կարամանուկյանը սկսեց հաճախել Բեյրութի ֆրանսիական Համալսարանի իրավագիտական ֆակուլտետի դասընթացներին, որն ավարտեց 1968թ-ին՝ ստանալով իրավագիտության վկայական: Ապա իր իրավագիտական ուսումը շարունակեց Սորբոնի համալսարանում և պաշտպանելով «Օտարները և զինվորական ծառայությունը» գիտական ուսումնասիրությունը 1972թ. ստացավ իրավագիտության դոկտորի գիտական աստիճան: Իր ուսումնասիրության մեջ նա մի գլուխ հատկացրեց հայկական լեգեոնին[10]: Իր կատարած զինվորական ծառայությունների համար

գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, ինչպես նաև ֆրանսիական կառավարության կողմից առաջին կարգի պատվո շքանշանով[11]:

Հաշվի առնելով զորավարի մատուցած ծառայությունները Սիրիային և ազգօգուտ անդրադարձը սիրիահայ գաղութին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն առաջինը նրան պարգևատրեց Ներսես Շնորհալի շքանշանով, իսկ 1985թ. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսը նրան պարգևատրեց Կիլիկո Մեծ Խաչի Ասպետի շքանշանով: Սիրիայի բանակի գեներալ, սփյուռքահայ գործիչ Արամ Կարամանուկյանն իր վաստակած բոլոր շքանշանները հանձնեց Հայաստանի պատմության թանգարանին: Զորավարի գործը բարձր են գնահատել նաև Հայաստանում: 1998թ. Արարատի մարզի Նոր Այնթապի թիվ 1 միջնակարգ դպրոցը հիմնովին վերանորոգվեց և անվանվեց Արամ և Հասմիկ Կարամանուկյանների պատվին:

Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ դեր է խաղացել նաև գեներալ մայոր Հրանտ բեյ[12] ([illegible]) Մալոյանը[13]: Սփյուռքահայության պարծանքը հանդիսացող այս պատվական հայորդին ծնվել է 1986թ. Մուշում: 1905-1907թթ. սկզբնական ուսումն ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Սուրբ Ղազարի վանքում[14]: 1913-1914թթ. ընդունվել է Պոլսի իրավագիտական համալսարանը: 1914թ. Հրանտ Մալոյանը զորակոչվեց բանակ և որպես սպա՝ 1916թ. տեղակալի պաշտոնով ծառայեց թուրքական 53-րդ ստորաբաժնում: Առաջին համաշխարհային պատերազմի զինադադարի նախօրյակին՝ թուրքական բանակի նահանջելու ժամանակ, գերի ընկավ Դարաայի արաբական գնդերի կողմից[15]: Ազատվելով գերությունից՝ նա մտավ Բեյրութի նորակազմ հայկական լեգեոն և, աչքի ընկնելով որպես ուշիմ և մի քանի լեզուների տիրապետող երիտասարդ, Կիլիկիայի զինվորական կառավարիչը նրան ժանդարմերիայի օգնական նշանակեց[16]: Հրանտ Մալոյանը մասնակցեց Կիլիկիայի ինքնապաշտպանության մարտերին և դրանից հետո նա տեղափոխվեց Դամասկոսի առաջին բրիգադի, այնուհետև Հալեպի երկրորդ բրիգադի հրամանատարություններ և միաժամանակ համատեղությամբ փոխարինեց Հալեպի ոստիկանության հրամանատարության ներքո գտնվող ժանդարմերիայի փոխգնդապետ Հասան Բահրային[17]: Սիրիայի ազատագրական պայքարի ժամանակ Դամասկոսի

ֆրանսիացի զինվորական կառավարիչ գեներալ Օլիվյե Ռոժեն նրան առաջարկում է հայ երիտասարդների վճարովի գումարտակ կազմել ֆրանսիական բանակին օգնելու համար[18]: Հրանտ Մալոյանը մերժում է գեներալի հիշյալ առաջարկը: Հայ զորավարի այդ դիրքորոշումը բարձր գնահատվեց սիրիացի ազգայնականների կողմից: Սիրիայի անկախացումից հետո նրան հանձնվեց երկրի ներքին ապահովություն ստանձնելով ոստիկանական զորքերի ընդհանուր հրամանատարի պաշտոնը: Գեներալ-մայոր (عميد) Հրանտ Մալոյանը պարգևատրվել է սիրիական, լիբանանյան, եգիպտական, ֆրանսիական մի շարք շքանշաններով[19]: Մեծանուն զորավարը մահացավ 1978թ. հուլիսի 24-ին[20]:

Սիրիական բանակում իր ուրույն տեղն ուներ նաև զորավար Ալբեր Քիլեջյանը, որը ծնվել է 1921թ. Համայում[21]: Իր նախնական ուսումը նա ստացել է Հոմսի զինվորական ակադեմիայում, այնուհետև մասնակցել է արաբա-իսրայելյան պատերազմին: 1957թ. Քիլեջյանը մասնակցել է Կաhիրեի բարձրաստիճան սպաների դասընթացներին: Դրանից հետո նա նշանակվել է ենթասպաների դպրոցի և պահեստային սպաների վարժարանի հրամանատար: 1959թ. ավարտել է իր զինվորական ծառայությունը գեներալ-լեյտենանտի աստիճանով և պարգևատրվել է մի շարք շքանշաններով:

Հայազգի մյուս բարձրաստիճան սպաներից արժանի է հիշատակել գնդապետ Ժոզեֆ Բայրամյանին, որը ծնվել է 1915թ. Հալեպում[22]: 1941թ. նա ավարտել է Հոմսի զինվորական ակադեմիայի հրետանային բաժինը, ապա՝ Ժոզեֆ Բայրամյանը նշանակվել է հրետանու ստորաբաժանման հրամանատար և 1958թ. ստացել գնդապետի (عقيد) կոչում՝ պարգևատրվելով մի շարք շքանշաններով:

Սիրիական բանակում իրենց կարևոր տեղն ու դերն են ունեցել նաև հայազգի սպաներ՝ փոխգնդապետ (مقدّم) Հինդոյան Գրիգորը, Անտուան Գուշակչին, Հիքմեթ Գուշակչին, Դարադուրյան Լևոնը, Կուդշինյան Սմբատը, Սալաթյան Աֆբամը, Սարաֆ Արշակը, Թարաջյան Նաղիմը, Բազյան փաշա Վազգենը, Երանոսյան Լևոնը, Վարդանյան Գրիգորը,[23] Արպանյան Ավետիսը եւ այլոք:

Այսպիսով, հայ զինվորականները, ապրելով և իրենց գործունեությունը ծավալելով Սիրիայում, իրենց տաղանդի, ռազմական հնարամտությունների և կարողությունների շնորհիվ արժանացել են

զինվորական բարձր աստիճանների: Նրանք ազնվաբար ծառայել են սիրիական բանակում որպես երախտագիտություն այն երկրին ու ժողովրդին որոնք գրկաբաց ընդունել ու ապաստան են տվել ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերին· Հայ զինվորականները ծառայել են ի պաշտպանություն երկրի ազգային անկախության նրա խաղաղության ու անվտանգության համար և միասնական ճակատով հանդես գալով՝ նպաստել են հայ-արաբական. հայ-սիրիական դարավոր բարեկամության ամրապնդմանը:

HAYK SAMSONYAN
(IOS)

THE ARMENIAN MILITARY OFFICERS IN THE SYRIAN ARMY (1946-1970)

In 1946. Syria gained its independence and the French troops withdrew. In development of the history of Syrian National Army participated a number of Armenian famous officers, such as Aram Karamanoukian. Hrant Maloyan. Alber Kilejyan. Joseph Bairamyan etc.Generals Aram Karamanoukian and Hrant Maloyan were the Armenian officers who took part in the organization of the newly created Syrian army. In 1949. General Aram Karamanoukian was named commander in chief of the Syrian Army's artillery. a position which he held until 1958. Some of the Armenian officers participated in the Palestinian war of 1948. They became prominent military officers owing to their top professionalism. strict discipline and expertise in the field of army. Armenian military officers have been awarded various medals of Honor. not only by the Syrian but also the governments of Lebanon, Egypt and France.

As far as the Arab people were concerned. Armenian officers symbolized the further strengthening of ties between the Syrian and Armenian peoples.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում. Եր.. 1975. էջ 311:
2. Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, Journal Meria Volume 5. No. 1 march 2001. p. 3.
3. Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ա տարի. Հալէպ. 1975. էջ 405:

4. Գարամանուկեան Յ., Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, ԱՄՆ, Ֆորթ Լի. Նիի ճըրգի, 1998, էջ ԺԲ:

5. Գեղարդ Սուրիահայ տարեգիրք., նշվ. աշխ., էջ 405:

6. Գարամանուկեան Յ., նշվ. աշխ., էջ 13-14:

7. Էսլիդուսբեան Մ., Գաղթականներ խորհրդարան, Հալէպ, 1998, էջ 159

8. كشيشيان أ، إسهامات المواطنين الارمن في الحياة العامة للبلاد السورية منذ أقدم العصور وحتى يومنا، حلب، ٢٠٠٧، ص ٤٠

9. عزازيان هـ، نبذة تاريخية موجزة عن الجاليات الارمنيه في البلاد العربية (سوريه، لبنان، مصر، فلسطين، الاردن...)، اللاذقية ١٩٩٣، ص ٢٦

10. Գեղարդ Սուրիահայ տարեգիրք. Հալէպ, 1996, էջ 555:

11. عزازيان هـ، ص ٢٦

12. Սիրիայում բեյ տիտղոսը գործածական էր մինչև 1963թ. մարտի 8-ը՝ Բաաս կուսակցության իշխանության գալը: Դա ռազմական և վարչական կոչում էր, անհրաժեշտ էր հատուկ վկայական, որը Հրանտ բեյ Սալոյանն ուներ:

13. Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, 2008, New York, p. 136.

14. Atamian P., Histoire de la communaute Armenienne catholique de Damas, Beyrouth, 1964, p. 155.

15. «Մասիս», թիվ 39, Բեյրութ, 2008, էջ 27:

16. Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Հալէպ, 1975, էջ 406:

17. كشيشيان أ، ص ٤٠

18. «Մասիս», նշվ. աշխ., էջ 27:

19. Atamian P., նշվ. աշխ., էջ 156-157:

20. Տարեկան տեղեկագիր Դամասկոսի հայ կաթողիկէ բարեսիրական միութեան. 2006, էջ 59:

21. عزازيان هـ، ص ٢٦

22. كشيشيان أ، ص ٤١

23. Van Dusen, M., Intra-and Inter-Generational conflict in the syrian army, Johns Hopkins University, 1971, p. 378-413.

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԻԼԻԹ
(ԵՊՀ)
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՀԱԿԱԳՈՒՆԴԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (750-842ԹԹ.)

750թ. տապալվեց Օմայան հարստությունը և հաստատվեց Աբբասյանների տիրապետությունը Արաբական խալիֆայությունում: Աբբասյանները տիրեցին խալիֆայական գահին շնորհիվ խորասանցիների, որոնք կրեցին իշխանափոխության հիմնական ծանրությունը: 747թ. հունիսի 9-ին Խորասանում բարձրացվեց Աբբասյանների սև դրոշը և, մեկը մյուսի ետևից հաղթանակներ տանելով, 750թ. ապրիլի 26-ին վերջիններս մտան Դամասկոս: Աբբասյան խալիֆայության (750-1258թթ.) հինգ դարերից միայն առաջինի ընթացքում խալիֆայությունը զարգացում ապրեց, որից հետո սկսվեց խալիֆայության անկման շրջանը: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ, այդ թվում նաև կայսերական պահակագունդը (հարաս) թյուրքական տարրով համալրելը: Խալիֆայության կայացման և ամրապնդման սկզբնական շրջանում հարասում եղել են հիմնականում պարսիկներ, որոնք հետագա զարգացումների հետևանքով փոխարինվել են թյուրքերով:

Կայսերական պահակագունդը այն ինստիտուտն էր, որն ապահովում էր խալիֆայի անվտանգությունը, հետևաբար, այն պետք է կազմավորված լիներ հավատարիմ հպատակներից: Այդպիսինները առաջին Աբբասյանների համար խորասանցիներն էին:

Գալով իշխանության՝ Աբբասյաններն առաջինը հարասում կատարեցին էթնիկ փոփոխություններ՝ այն համալրելով պարսկական տարրով: Վերակազմեցին բանակը, որի կորիզը պարսիկներից կազմված կանոնավոր զորքն էր: Պարսիկների՝ խալիֆայության համար հենարան լինելը հատկապես կարևորում էր խալիֆա Աբու Ջաֆարը (754-775թթ.), որը նրանց դիմում էր. «Ո՜վ խորասանցիներ, դուք մեր կուսակցությունն եք, մեր զինակիցները, մեր պետության որդիները...»[1]:

Ըստ անգլիացի հետազոտող Ա. Նաթթինգի՝ նա առաջին և, թերևս, միակ Աբբասյան խալիֆան էր, ով գիտակցեց այն հանգամանքը որ Խորասանին տիրողը տիրում է ամբողջ խալիֆայությանը[2]:

Աբբասյանները, ընդհանուր առմամբ, կողմնորոշված էին դեպի պարսկական քաղաքակրթությունը. երկրի կառավարման մեջ մեծ տեղ տվեցին պարսիկ մավալիներին[3]: Արքունիքում տիրապետող դարձան պարսկական սովորույթները, նիստուկացը, հագուստը և այլն[4]:

Ժամանակի ընթացքում պարսկական ավագանու դերն արքունիքում և խալիֆայության պարսկական նահանգներում սպառնալի չափերի հասավ, ինչը ստիպեց խալիֆա Հարուն Առ-Ռաշիդին (786-809թթ.) ասպարեզից հեռացնել պարսկական ավագանու առաջնորդ, Աբբասյաններին մեծ ծառայություններ մատուցած Բարմաքի ընտանիքին: Այս կապակցությամբ արևելագետ Ա. Կրիմսկին գրում է. «Բարմեքիների դավադիր սպանությունը, որոնք կարողանում էին համախմբել պարսկական և արաբական տարրը, հանգեցրեց երկու ժողովուրդների պառակտմանը»[5]:

Խալիֆա Հարուն ալ-Ռաշիդի հաջորդների օրոք սրվում են ներարքունական հակասությունները. ազդեցության համար մրցում էին պարսկական և արաբական ավագանիները: Դրությունն արքունիքից դուրս նույնպես մխիթարական չէր. ապստամբությունները, որոնք միշտ ուղեկցել են Աբբասյաններին, ավելի մասսայական և տևական դարձան: Խալիֆայի իշխանության գրավական հանդիսացող միասնական բանակը սկսեց կտորակվել, տեղական կառավարիչ-փոխարքաների մոտ ուժեղացան անջատողական ձգտումները, կայսրության հսկայական տարածքը բնակեցնող տարբեր ժողովուրդներ գտնվում էին տնտեսապես անմխիթար վիճակում, որն ավելի էր ծանրանում օրեցօր աճող հարկերից, հարկահանության դաժան մեթոդներից, կրոնական ճնշումներից: Սաստկացած դժգոհությունը մերթընդմերթ վեր էր ածվում հզոր շարժումների և իրական սպառնալիքի տակ դնում խալիֆայության գոյությունը:

Այսպիսով, մի կողմից խալիֆան կորցրել էր քաղաքական և ռազմական իրական իշխանությունը, մի կողմից՝ հզորացել էին տեղական փոխարքաները, մյուս կողմից սաստկանում էին ժողովրդական հուզումները: Ստեղծվել էր մի վիճակ, երբ Աբբասյաններն այլևս չէին կարող հենվել ո՛չ Խորասանի, ո՛չ էլ

խորասանցիների վրա, այսինքն զրկվել էին իրենց զինակիցներից, և տեղի էր ունեցել պառակտում Հաշիմյան տան և խորասանցիների միջև, հանգամանք, որը ժամանակին մտահոգում էր խալիֆա Ալ-Մանսուրին[6]: Այսպիսի անկայուն ժամանակաշրջանում էր, որ խալիֆայության գահին նստեց Հարուն առ-Ռաշիդի երրորդ որդին՝ Ալ-Մութասիմը (833-842թթ.)՝ ծնված թրքուհի մորից (Մաարիդա)[7]: Ալ-Մութասիմն իր գահն ամրապնդելու համար առաջ քաշեց մի նոր էթնիկ տարր. մայրական կողմից ազգակից թյուրքերին: Նա պահակազորում պարսիկներին փոխարինեց թյուրքերով:

«Մէօթեսիմ գիտէր եւ լաւ կ'ըմբռնէր, - գրում է Գ. Ասթարճյանը. - Ապպասեաններուն շիի ժողովուրդին եւ Իրաքի բնիկ արաբ բնակչութեան համակրանքն ու սէրը կորսնցուցած ըլլալը. արաբին վստահութիւն չէր մնացած, դուրսէն պահակներ պետք էր բերել եւ Թուրքիստանէն բերուած չորս հազար զօրքերով պահակագունդ մը կազմել ստիպուեցավ»[8]:

Թյուրքերը սահմանակցում էին Արաբական խալիֆայությանը հյուսիս արևելքից, Մավարաննահրին[9] հարող տարածքում, որտեղ հաստատվել էին դեռևս 6-րդ դարում ստեղծված Թյուրքական խաքանության ժամանակ՝ տեղափոխվելով իրենց պատմական հայրենիքից՝ Կենտրոնական Ասիայից: Արաբների և թյուրքերի միջև շփումները ակտիվացան, երբ 8-րդ դարի սկզբներին արաբները մուտք գործեցին Խորեզմ և հետզհետե գրավեցին Մավարաննահրը:

Խալիֆայության հյուսիս-արևելքում նրանք անցան պաշտպանական քաղաքականության. քոչվորներից սահմանները պաշտպանելու համար կառուցեցին բարձր պատնեշներ: Այս հատվածում գրեթե միշտ մարտեր էին մղվում: Այդ անընդհատ մղվող սահմանային մարտերում գերեվարված թյուրքերին այնուհետև, որպես ռազմավար, ստրկացրել են և ՝վաճառել Միջին Ասիայի և Իրանի ստրկավաճառանոցներում, որտեղից նրանք թափանցել են Խալիֆայության տարածք: Աբբասյան հարստության սկզբնական շրջանում Խորասանի և Արևելքի կառավարիչները՝ որպես հարկ, Բաղդադ էին ուղարկում միմիայն թյուրք ռազմագերիներ և ստրուկներ: 10-րդ դարի աշխարհագիր Ալ-Մուկադդասին այս առիթով նշում է, որ Խորասանի տարեկան հարկը կազմում էր տասներկու հազար թյուրք ստրուկ[10]: Թյուրքերն աչքի էին ընկնում իրենց վայրի քաջությամբ ու

ռազմամոլությամբ. և որպես խիզախ մարտիկներ նրանք սկսում են աստիճանաբար թափանցել խալիֆայի թիկնազոր:

Արդեն խալիֆա Ալ-Մամունի (813-833թթ.) օրոք նրանցից մի քանիսն աչքի էին ընկնում (Աշնաս. Ուջեյֆ. Ֆարաջ)[11]: Թյուրք զինվորականներ Աֆշինը, Մեծ Բուղան. Իթախը և Բաշիրը[12] զգալի տեղ էին զբաղեցնում շուրջ 20 տարի տևած իրանցի Բաբեկի գլխավորած շարժման դեմ պատերազմող արաբական բանակի հրամանատարական կազմում:

Մութասիմ խալիֆայի միջոցով թյուրքերը խալիֆայությունում ծեռք բերեցին նոր դերակատարում: Նրա վրա մեծ էր մոր ազդեցությունը. իր կյանքի ընթացքում խալիֆան գերադասել է խոսել մոր լեզվով, յուրացրել նրա ցեղի սովորույթները[13]: Այդ ազդեցության հաջորդ քայլը եղավ այն, որ նա իր թիկնազորը կազմավորեց թյուրքերով, որոնց թիվը թիկնազորում հասնում էր 4000-ի:

Սակայն շուտով Բաղդադում հաստատված թյուրքերը Խաղաղության քաղաքը[14] վերածեցին անկարգությունների քաղաքի: Թյուրքերը, հասկանալով, որ ունեն արտոնյալ դիրք, սկսեցին իրենց սանձարձակ պահել: Ինչպես նշում է 10-րդ դարի պարսիկ պատմիչ Ատ-Տաբարին. «Խելագարի պես սլանում էին Բաղդադի փողոցներով՝ սմբակների տակ տրորելով անցորդներին, բռնաբարում էին երիտասարդներին»[15]:

Մութասիմը տեղյակ էր թյուրքերի նկատմամբ բաղդադցիների դժգոհությանը: Զգուշանալով դրանից՝ նա որոշեց փոխել իր նստավայրը: Ուղարկեց իր վեզիր Ահմադ իբն Խալիդին Սամարայի[16] ուղղությամբ և պատվիրեց այնտեղ տարածք գնել, որտեղ պիտի կառուցեր իր նոր քաղաքը[17]: Արաբ պատմիչ Իբն Ալ-Ասիրը (12-13-րդ դդ.) այս առիթով գրում է. «... պատճառն այն էր, որ խալիֆան (Ալ-Մութասիմը - Լ. Ս.) մեծացրել էր թյուրքերի թիվը, որոնք անտաշ օտարներ էին, սմբակակոխ էին անում Բաղդադի փողոցներում կին, տղամարդ, ահել և ջահել: Խալիֆան վախեցավ, որ բաղդադցիները կարող են ըմբոստանալ, և կառուցեց Սամարան և իր թյուրքերով տեղափոխվեց այնտեղ»[18]:

Սամարա աստրական անունը Ալ-Մութասիմը փոխեց արաբերեն «Սուրրա ման ռա՝ա» (ուրախացավ, ով տեսավ) անվամբ: Ժամանակակիցները սրամտում էին, թե քաղաքի նոր անունն իրականում նշանակում է՝ «Նա, ով տեսավ այդ քաղաքը թյուրքերով

բնակեցրած. ուրախացավ, որ Բաղդադը փրկվել է նրանցից (թյուրքերից - Լ. Ս.)»[19]:

Փաստորեն. խալիֆա Ալ-Մութասիմն իր թյուրք պահակազնդի և մայրաքաղաք Բաղդադի բնակչության միջև ստեղծված խնդիրը լուծելու փոխարեն պահակազնդի հետ տեղափոխվեց նոր մայրաքաղաք: Սամարան Ալ-Մութասիմի համար դարձավ մի բերդամրոց, որտեղ ամրացավ իր պահակազորի հետ:

Սամարան խալիֆայության մայրաքաղաք շարունակել է մնալ ավելի քան կես դար (836-892թթ.), Ալ-Մութասիմից հետո աստիճանաբար խալիֆաներն այստեղ դարձան «իրենց պահակազունդին գերին ու կալանավորը»[20]:

Այսպիսով, եթե առաջին խալիֆաները հենվում էին պարսկական ավագանու, բանակում պարսկական զորքի վրա. ապա Ալ-Մութասիմի հենարանը թյուրքերից կազմված թիկնազորն էր:

Խալիֆայության համար պարսիկների ունեցած դերը դրական էր. նրանք հին քաղաքակրթության կրողներ էին և իրենց գիտելիքներն ու փորձը ի սպաս դրեցին Աբբասյան պետականության և արաբաիսլամական մշակույթի ծաղկման գործին: Եվ, աստիճանաբար Բարմեքիները կդառնային խալիֆայության ժառանգորդները:

Թյուրքերը, ի տարբերություն պարսիկների, քաղաքակրթություն չունեցող քոչվորներ էին: Նրանք խալիֆայի ձեռքում կույր գործիք էին՝ ճնշելու այս կամ այն ապստամբությունը: Այս գործը նրանք կատարում էին դյուրությամբ, քանի որ նոր վայրում արմատներ չունեին և նրանց խոչընդոտող ոչ մի հանգամանք չկար:

Սակայն թյուրքերը միայն սկզբնական վուլում արդարացրին իրենց՝ իբրև խալիֆայի պահապաններ: Կարճ ժամանակ անց նրանք գիտակցեցին, որ Խալիֆայությունում տիրող անկայուն իրավիճակը կարող են օգտագործել ի շահ սեփական դիրքերի ամրապնդման: Այդ պահից սկսած խալիֆաները կորցրեցին իրենց նախկին կարևորությունը պահակազորի համար: Թյուրք հրամանատարները սկսեցին միջամտել պետական գործերին, գահընկեց անել իրենց համար անցանկալի խալիֆաներին և գահ բարձրացնել իրենց ձեռնտու թեկնածուներին: Թյուրքերը չէին մտածում սեփական իշխանությունը հաստատելու և ամրապնդելու մասին, քանի որ չունեին պետականության փորձ, այլ գոհանում էին նյութական միջոցների և ազդեցության ձեռքբերմամբ:

Խալիֆան ապրում էր այնքան, քանի դեռ կատարում էր իր թյուրք բանտապետերի կամքը[21]:

Թյուրքական տարրի ամրապնդումը արքունի պահապան գնդում (հարասում), ըստ էության, նպաստեց կայսրության անկմանը

LILIT SARGSYAN

(YSU)

THE IMPERATORIAL GUARDS AND THEIR ROLE IN THE DECLINE OF THE ABBASID CALIPHATE (750-842)

After comming to the throne the Abbasids (750-1254) set up their court in accordance with the Sasanids as they were fascinated by the structure of their realm. They made changes everywhere as well as in the caliphal guard. Before it had been consisted of mainly Arabs. now they were replaced by Khorasanies, as the Abbasids were due to them for their victory over the Omayyads (661-750) and trusted only them.The Persian culture won the day. The Persians went so far that the caliph Harun ar-Rashid (786-809) saw menace in them and got rid of the leader of the Persian party Yahya Barmaki. The next developments in the caliphate shaked the caliph's authority. To fortify his condition the third son of Harun born from a Turkish slave al-Mu'tasim (833-842) changed the guardsmen. He filled it up with Turkish recruits from Transoxiana and Fergana. Being the favourites of the caliph and mere savages the Turks showed a haughty behaviour in Baghdad which rised the natives' anger. To avoid the uprising of Baghdadies al-Mu'tasim was forsed to change his seat from Baghdad to Samarra.The replacement of Khorasani soldiers by Turks was justified with the fact that there was no more confidence in Persians as well as in Arabs. and the Turks weren't rooted there and could suppress any rebellion with ease. At first they justified the hopes that were laid on them. but soon they understood the real situation in the caliphate and that the caliphs were thoroughly dependent upon them. From that moment on the caliphs became mere puppets in the hands of their guard. So the caliph put the bomb under the throne with his hand and finely destroyed the caliphal authority. The caliphate began to disintegrate quikly. By the 10-th century The Abbasids had only Arab Irak and The West Iran. where in 945 The Buids put an end to The Abbasids' political authority.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Tahari. Tarikh ar-rusul va al-muluk. vol viii. 430/3, s. 92.
2. Nutting A., The Arabs, New York, 1965. p 105
3. Օմայանների ժամանակ այլադավաններն իսլամ ընդունելով չէին դիտարկվում իբրև ումմայի իրավահավասար անդամ, այլ դառնում էին այս կամ այն ցեղի «համախորդ»՝ արաբերեն մաուլա, հոգնակին՝ մավալի:
4. Muir W., The Caliphate, It's rise. decline and fall. Edinburgh, 1924. p. 465.
5. Крымский А., История арабов. М., 1903, с. 91.
6. Tabari, 453/3, էջ 111-112:
7. Tabari, 785/3, էջ 360:
8. Ասթուրճեան Գ., Ընդարձակ, ընդհանուր արաբական պատմութիւն, Բեյրութ, 1961, էջ 279:
9. Ամու Դարյայից այն կողմ ընկած աշխարհագրական տարածքն ընդգրկում էր Ամու Դարյայի և Սիր Դարյայի միջագետքը:
10. Փյունիկ, Եր., 03/31/1991, էջ 5, 14:
11. Tabari, vol. viii, 975/3-1134/3, էջ 527-646:
12. Tabari, vol. viiii, 1167/3-1230/3, էջ 8-54:
13. Nutting A., Նշվ. աշխ., էջ 103; Muir W., Նշվ. աշխ., էջ 464:
14. Երբ խալիֆա Ալ-Մանսուրը, հավանելով Տիգրիս գետի ափին գտնվող Բաղդադ գյուղի տեղանքը, 762թ. կառուցեց իր նոր նստավայրը և այն անվանեց Դար Աս-Սալամ, այսինքն՝ Խաղաղության քաղաք:
15. Tabari, vol. viiii, 1181/3, էջ 18:
16. Սամարան ասորական ծագման բնակավայր էր, գտնվում էր Բաղդադից 15 կմ հեռավորության վրա, Տիգրիսի Կատուլ կոչվող վտակի վրա և գոյություն է ունեցել նախքան արաբական նվաճումները: Տե՛ս Strange G., The Lands of The Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 53; Al-Masudi, 2802, էջ 351:
17. Tabari, 1180/3, էջ 17:
18. Ibn al-Asir, Al-kamil fi at-tarikh, vol. iiii, էջ 236:
19. Hitti P., History of the Arabs, London, 1946, p. 466.
20. Ասթարճեան Գ., Նշվ.աշխ., էջ 279:
21. Muir W., Նշվ. աշխ., էջ 138:

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
(ԱԻ)
ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ (813-869թթ.)

9-րդ դարի սկզբից մինչև երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում թյուրքական գվարդիայի ունեցած ռազմաքաղաքական իշխանությունն Աբբասյան խալիֆայությունում արաբական պատմության այդ շրջանի ուսումնասիրության ինքնատիպ թեմաներից մեկն է:

Արաբական աղբյուրների հաղորդմամբ թյուրքերի և արաբների վտխշփումների հիմքը դրվեց Օմայան խալիֆայության ժամանակներից, երբ արաբները սկսեցին վարել իրենց արևելյան նվաճողական քաղաքականությունը: Նրանք Օմայան խալիֆա Վալիդ I-ի (705-715թթ.) օրոք հետզհետե սկսեցին իրենց ենթարկել Մավարաննահրը[1], որի կազմում էին Թուխարստանը՝ Բալխ մայրաքաղաքով[2], Խորեզմը[3], Սողդը (Սողդիանա)[4] իր Սամարղանդ և Բուխարա քաղաքներով[5]: Այնուհետև, 713-715թթ. արաբները նվաճեցին Ֆերգանան[6], իսկ արդեն Աբբասյան խալիֆայության կողմից 751թ. գրավվեց Շաշը (Տաշքենդը)[7]: Վերոնշյալ երկրամասերն արաբական ներխուժումների ընթացքում արդեն յուրացրել էին թյուրքական վաչկատուն ցեղերը: Այսինքն արաբական զավթումներն իրականացվում էին թյուրքաբնակ շրջաններում, որոնք գրավելով արաբներն իրենց հետ խալիֆայություն էին տանում թյուրքական ծագում ունեցող բազմաքանակ գերիների: Հատկանշական է այն փաստը, որ Աբբասյան խալիֆայության վաղ շրջանում Խորասանի և Արևելքի կառավարիչները որպես հարկ Բաղդադ էին ուղարկում միայն թյուրք ստրուկներ (դիրհամ, մավալի): Այսպես, 10-րդ դարի արաբ աշխարհագրագետ Ալ-Մուկադդասին նշում է, որ Խորասանի տարեկան հարկն Աբբասյան տիրապետության ժամանակ կազմում էր 12 հազար

թյուրք ստրուկ[4]: Միջին Ասիայի տարբեր շրջաններից թյուրք ստրուկները ներկրվում, իսկ նվաճումների արդյունքում ձեռք բերված գերիները տեղափոխվում և բնակեցվում էին խալիֆայությունում:

Սակայն պետք է նշել, որ թյուրքական ծագում ունեցող ստրուկներ խալիֆայություն էին բերվում նաև այլ շրջաններից: Թյուրք ստրուկներ ներկրելու ամենակայուն աղբյուրներից էր նաև խազարների երկիրը[9], որտեղից, ինչպես նշում է 9-րդ դարի արաբ աշխարհագրագետ Ալ-Ջահիզը, «բերվում էին ստրուկներ, ստրկուհիներ»[10]: Աբբասյան խալիֆայությունում սկսում են լայնորեն օգտագործել թյուրքական տարրի ռազմական ներուժը[11]: Թյուրքական գվարդիաների ձևավորումն արդեն սկսվում է Աբբասյան խալիֆա Ալ-Մամունի իշխանության տարիներին (813-833թթ.): Դա է վկայում այն փաստը, որ խալիֆա Ալ-Մամունը հրամայեց իր զինվորական հրամանատարներից՝ Աբու Իսհակ Ալ-Մութասիմին, որը նաև իր եղբայրն էր և ապագա խալիֆան, ձեռք բերել թյուրքերի[12], որոնք ռազմական գործում արհեստավարժ կլինեին: Այն, որ թյուրքական զինվորական տարրն առաջին անգամ արդեն կազմակերպված օգտագործվել է Ալ-Մամուն խալիֆայի կողմից, նշում է նաև 14-րդ դարի արաբ պատմիչ Ալ-Մակրիզին: Նա, կապված թյուրքական զինվորական տարրի կիրառման հետ, նշում է՝ «նրա եղբայր Աբու Իսհակ Ալ-Մութասիմը հետևեց իր եղբոր՝ Ալ-Մամունի օրինակին»[13]: Մեր կարծիքով, Մամուն խալիֆան ձեռնարկեց թյուրքական զինվորական գվարդիայի ստեղծումը, որպեսզի ավելի արդյունավետ կարողանար ճնշել հակաաբբասյան ապստամբությունները խալիֆայության տարածքում: Այդպիսի ելույթներ էին բռնկվել Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում և այլուր: Այս բոլոր ապստամբությունները մեկը մյուսի հետևից ճնշվեցին խալիֆայության կողմից:

Խալիֆա Ալ-Մամունին հաջորդեց նրա եղբայրը՝ Աբու Իսհակ Ալ-Մութասիմը (833-842թթ.), որի կառավարման 9 տարիները կարևոր նշանակություն ունեցան խալիֆայությունում թյուրքական տարրի հաստատման գործում՝ սկզբում Բաղդադում, այնուհետև՝ 835-836թթ. նոր կառուցված մայրաքաղաք Սամարայում[14]: Այս նոր մայրաքաղաքը, արաբական աղբյուրների հաղորդմամբ, կառուցվեց թյուրքական զինվորական տարրի և Բաղդադի բնակչության միջև հաճախակի բռնկվող հակամարտություններին վերջ տալու նպատակով: Բաղդադից

Սամարրա տեղափոխվեց թյուրքական բնակչությունը, ինչպես նաև թյուրքական զինվորական տարրը, որի ուժերով էլ հենց կառուցվեց այն[15]:

Հակաաբբասյան ապստամբությունների շարքում ամենաերկարատևը դեռևս 816թ. Ատրպատականում բռնկված Խուռռամյան Բաբեկի ապստամբությունն էր, որը, սակայն, ճնշեց 837թ. նույնեն խալիֆա Ալ-Մութասիմը: Բաբեկի նկատմամբ հաղթանակ տարավ թյուրքական ծագմամբ զորահրամանատար Հայդար իբն Կաուս Աֆշին Ալ-Ուսրուշանին[16]: Խալիֆայական զորքերը գրավեցին Խուռռամյան շարժման ոստանը՝ Բադդայն ամրոցը[17], որից հետո շարժման ղեկավար Բաբեկը, ինչպես նշվում է 9-րդ դարի պատմիչ Դինավարիի երկում[18] «փախավ Հայաստան, անցնելով Արաքս գետը, և ուղղվեց դեպի Ռում: Երբ նա անցավ Արաքս գետը, նրա մոտ եկավ նահանգի կառավարիչ Սահլ իբն Սունբատը», որը հայկական աղբյուրներում կոչվում է Սմբատի որդի Սահլ[19]: Վերջինս ձերբակալեց Բաբեկին և ուղարկեց Ատրպատականում գտնվող թյուրք զորահրամանատար Աֆշինին, իսկ Աֆշինը Բաբեկին ուղարկեց խալիֆայական արքունիք, որտեղ նա տանջամահ արվեց և սպանվեց: Աֆշինի հաղթանակն այնքան էր ոգևորել Ալ-Մութասիմ խալիֆային, որ թյուրք զորահրամանատարը խալիֆայի կողմից ոսկե թագով պարգևատրվեց: Թյուրք զորավարը Բաբեկի ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո ուղղվեց դեպի Ռումի երկիրը (Բյուզանդիա)՝ օգնություն ցույց տալու Ալ-Մութասիմ խալիֆային, որը պատրաստվում էր գրավել Ռումի երկրի մեծագույն քաղաքներից Ամորիոնը[20]: Ինչպես նշում է 9-րդ դարի արաբ պատմիչ Ալ-Յակուբին. «Ալ-Մութասիմ խալիֆան Ռումի բռնապետի (իմա Թեոփիլոս - Գ.Վ.) դեմ մեծ զորքով ուղարկեց Աֆշինին, որը հանդիպեց բռնապետին, հաղթեց, փախուստի մատնեց և նրա ռազմիկներին մեծ ջարդ տվեց»[21]:

Յակուբիի վկայությունից երևում է, որ թյուրք հրամանատարի դերն Ամորիոնի նվաճման գործում մեծ է եղել: Պետք է նշել նաև, որ Ամորիոնի ռազմարշավին մասնակցում էին թյուրքական ծագմամբ ևս երեք զորահրամանատարներ՝ Աշնաս Աթ-Թուրքին, Իյթախ Աթ-Թուրքին և Բուղա Ալ-Քաբիրը[22], որոնք իրենց թյուրքական զորախմբերով առաջնորդել են գրեթե ողջ խալիֆայական զորքը:

Աշնաս Աթ-Թուրքին դեռևս 828-829թթ. խալիֆա Ալ-Մամունի կողմից նշանակվել էր Եգիպտոսի կառավարիչ: Այս երկրամասն իր աշխարհագրական դիրքով ռազմավարական նշանակություն ուներ. և նրա կառավարչի պաշտոնը վստահվել էր թյուրք զորահրամանատարի: 834-835թթ. խալիֆա Ալ-Մութասիմը Աշնասին կրկին նշանակեց Եգիպտոսի կառավարիչ, որն այդ պաշտոնը վարեց շուրջ 11 տարի[23]: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ թյուրք զորահրամանատարներն հիմնականում գլխավորում էին խալիֆայական բանակի թյուրքական զորախմբերը[24], ապա կարելի է պնդել, որ շուրջ 15 տարի Աշնաս Աթ-Թուրքին կարողացել է կառավարել Եգիպտոսը հենց թյուրքական զինուժի անմիջական ներկայությամբ: Մեր կարծիքով, սա կարևոր նշանակություն ունեցավ Եգիպտոսում թյուրքական տարրի հետագա հաստատման համար: 10-րդ դարի արաբ պատմիչ Մասուդիի վկայությամբ նա իր թյուրքական զորաբանակով մասնակցել է նոր մայրաքաղաք Սամարայի կառուցմանը[25]: Նա Սամարայում ունեցել է իր սեփական պալատը, բացի այդ, նաև իկաա իրավունքով[26] նրան են պատկանել քաղաքամերձ հսկայական հողատարածքներ: Վերոբերյալից հետևում է, որ բացի արտաքին քաղաքական բնագավառից, Աշնասը խալիֆայությունում նաև ներքաղաքական կարևոր դերակատար էր:

Հաջորդ կարևոր դերակատարներից է խազարական ծագմամբ ստրուկ՝ վերոնշյալ Իյթախ Աթ-Թուրքին, որին Աշնասի մահից հետո խալիֆա Ալ-Վասիկը (842-847թթ.) հանձնարարեց Եգիպտոսի կառավարումը: Այս հասարակ ստրուկն այնպես էր կարողացել իրեն դրսևորել, որ խալիֆա Ալ-Մութասիմի, հետո նաև Ալ-Վասիկի օրոք խալիֆայությունում զբաղեցրել է Սամարայի անվտանգության համակարգի ղեկավարի պաշտոնը: Հետո վերջինիս է վստահվել Ալ-Մութավաքիլ խալիֆայի (847-861թթ.) հաջիբի (սենեկապետ) և թագավորական գվարդիայի հրամանատարի պաշտոնները[27]: Ակնհայտ է, որ այս գործիչը մեծ ռազմաքաղաքական իշխանություն է ունեցել Աբբասյան խալիֆայությունում, քանի որ, հաջիբի քաղաքական պաշտոնը զբաղեցնելով, նա անընդհատ խալիֆայի կողքին էր, մասնակից էր նրա պաշտոնական ընդունելություններին ու աստիճանաբար մեծ ազդեցություն էր ձեռք բերում արքունիքում: Իսկ թագավորական գվարդիայի հրամանատարի դերը անշուշտ Իյթախին

օժտել էր անսահմանափակ ռազմական իշխանությամբ: Սակայն սա վախեցնում էր Ալ-Մութավաքիլ խալիֆային, որի հրամանով և Իյթախը 849թ. ձերբակալվեց և սպանվեց:

Աբբասյան խալիֆայությունում ռազմական խոշոր գործիչ էր նաև Բուղա Ալ-Քաբիրը, որը որպես զինվորական կերպար առաջին անգամ հիշատակվում է դեռևս 835թ., երբ խալիֆա Ալ-Մութասիմը նրան օգնության ուղարկեց Խուռռամյան Բաբեկի դեմ արշաված Աֆշինին: Բուղային էր վստահվել նաև Աֆշինի զինվորների վարձատրության ամբողջ գումարը[28]: Բուղան նույնպես կարողացավ աչքի ընկնել իր զինվորական կարողություններով և հետզհետե ձեռք բերել ռազմական մեծ իշխանություն, որը, մեր կարծիքով, հետագայում արդեն բացահայտորեն վերածվեց քաղաքական իշխանության: Սա է վկայում այն փաստը, որ Բուղա Ալ-Քաբիրը Ալ-Մութավաքիլ խալիֆայի կողմից նշանակվեց Սիրիայի կառավարիչ[29]: Ալ-Մութավաքիլ խալիֆան սպանվեց թյուրքերի ձեռքով. և նրա մահից հետո մինչև 869թ. իրար հաջորդեցին երեք խալիֆաներ՝ Ալ-Մունթասիրը, Ալ-Մուսթաինը (862-866թթ.) և Ալ-Մութազը (866-869թթ.), որոնք բոլորն էլ թյուրքական դրածոներ էին և զոհ գնացին հենց թյուրքական գվարդիայի դավադրություններին:

Փաստորեն 9-րդ դարի կեսերին Աբբասյան խալիֆայությունում թյուրքական զինվորական գվարդիան ձեռք էր բերել ռազմական և քաղաքական բավականաչափ իշխանություն, որ կարող էր գահընկեց անել և ըստ իր հայեցողության նոր խալիֆաներ նշանակել: Մեր կարծիքով թյուրքական գվարդիայի ունեցած քաղաքական իշխանությունը հիմք դարձավ Աբբասյան խալիֆայության տարբեր շրջաններում արդեն թյուրքական ինքնիշխան միավորումների ձևավորման համար:

GRIGOR VARDANYAN

(IOS)

THE MILITARY-POLITICAL POWER OF THE TURCIC GUARDS IN THE ABBASID CALIPHATE (813-869)

At the begining of the 9-th century the Turkish military Guards was formed in the Abbasid Caliphate. There was an internal and external necessity for it during that

period. Arabic sources record Turkish army commanders namely Haydar ibn Kabus, Iytakh at-Turki, Ashnas at-Turki, Bugha al-Qabir, who served under Abbasid al-Mamun, al-Mutasim, al-Watiq, al-Mutawaqil caliphs.The mentioned army commanders held different military-political posts in Abbasid caliphate and had such great authority, that could avail themselves to overthrow the caliphs and appoint the new ones.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Abul Kasim ibn Haukal al-Nasibi, Kitab Surat al-ard., edit. M. J De Goeje, Bibliotheca Geographorum Arabicorum (այսուհետև՝ BGA), vol. II, Lugd. Bat, 1967, p. 365-398:
2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, h. I, Եր., 2003, էջ 108-110:
3. Abul Kasim ibn Haukal al-Nasibi, նշվ. աշխ., էջ 289:
4. Նույն տեղում, էջ 290:
5. Փոլադյան Ա., Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X-XI դդ.), Եր., 1999, էջ 187:
6. Abu Ishak al-Farisi al–Istakhri, Kitab Masaliq al-Mamaliq, edit. M. J. De Goeje, BGA, vol. I, Lugd. Bat, 1967, p. 289-348:
7. Hitti Ph., History of Syria, London, 1951, p. 461:
8. Al Mukaddasi, Ahsan al-taqasim fi marifat al-aqalim, edit. M. J. De Goeje, BGA, vol. III, Lugd. Bat, 1967, p. 339-341:
9. Bosworth C. E., Barbarian Incursions: The Coming of the Turks into the Islamic World, London, 1973, p. 5:
10. Տեր-Ղևոնդյան Ա., «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր,: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 427:
11. Абу ал-Ала Ибн Хассул, Книга о превосходстве тюрков над другими воинами, пер. Ф. М. Асадова, Баку,1993, http://www.vostlit.info/Texts/rus2/Ibn_Hassul/frametext.htm:
12. Gordon S. M., The breaking of a thousand swords: A history of the Turkish military of Samarra (200-275 A.H./ 815-889 C.E.), State University of New York Press, 2001, p 26.
13. Abul Abbas al-Makrizi, Katab al mavaiz va al itibar bi ziqr al khitat va al asar, աղբյուր՝ Gordon S. M., The Breaking of a Thousand Swords: A History of the Turkish Military of Samarra, (200-275 A.H./ 815-889 C.E.)., State University of New York Press, 2001, p. 26.
14. Ивн ал-Факих, Ахвар ал-Булдан (известия о странах), Введение, пер. с аравского, изд. текста и коммен. А. С. Жамкочяна, Ер., 1979, с. 43-54.
15. مسعودي، مروج الذهب و معادن الجوهر، ١- ٥، بيروت ، ١٩٧٤، الجزء الرابع ، ص 345-365
16. Ibn Khordadbeh, Kitab al-Masaliq wa'l-Mamaliq, edit. M. J. De Goeje, BGA, VI, Lugd. Bat.. 1967, p. 40.
17. مسعودی, նշվ. աշխ., էջ 353:
18. Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 218:

19. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն տանն Արծրունյաց, Եր., 1985, էջ 296-298:
20. Kennedy H., The Amies of the Caliphs, Military and Society in the Early Islamic State, London, 2001, p. 132.
21. Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., էջ 389:
22. مسعودي, նշվ. աշխ., էջ 358:
23. Gordon S. M. The Breaking of a Thousand Swords: A History of the Turkish Community of Samarra (218-264 A.H./ 833-877 C.E.), Columbia University, 1993, p. 154.
24. Kennedy H., The Armies of the Caliphs, Military and Society in the Early Islamic World, London and New York, 2001, pp. 126-127.
25. مسعودي, նշվ. աշխ., էջ 352:
26. Փոլադյան Ա., նշվ. աշխ., էջ 190: Իկտան հողային սեփականություն ունենալու իրավունքի ձև էր Աբբասյան խալիֆայությունում:
27. Gordon S. M., նշվ. աշխ., էջ 183:
28. Նույն տեղում, էջ 193:
29. مسعودي, նշվ. աշխ الجزء الخامس, էջ 32-33:

ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
(ԱԻ)

ՔԵՄԱԼԻԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՓՈՒԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թուրքիայի Հանրապետության պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի շուրջ քաղաքական ու գիտական հետաքրքրությունը շարունակում է ակտիվ մնալ, թեև անցած ութ տասնամյակների ընթացքում թուրքական, խորհրդային և արևմտյան թուրքագիտական դպրոցների կողմից այդ ուղղությամբ մշակվել են մի քանի հանրահայտ մոտեցումներ: Առավել ուշագրավ են քեմալիզմի գաղափարախոսության տեսության, սկզբունքների ու քաղաքական կիրառելիությանը նվիրված կապի վերհանումը և դրան նվիրված քննական ուսումնասիրությունները: Հստակ է, որ քեմալիզմը տարբեր ժամանակահատվածներում, տարբեր գործիչների կողմից ենթարկվել է զանազան մեկնաբանությունների՝ կախված տվյալ քաղաքական իրադրության առանձնահատկություններից: Քեմալիզմի ուսումնասիրության մեթոդաբանական շրջանակները հստակեցնելու և հետագա նախաձեռնություններում փուլային տարբերակումն ավելի դյուրին դարձնելու նպատակով նպատակահարմար է կատարել ներքոբերյալ փուլային բաժանումը և ներկայացնել թե ինչ սկզբունքներով է կատարվել այն: Այն նպատակ ունի ապացուցելու այն փաստարկումը, որ քեմալիզմը հանրապետական շրջանի տասնամյակների ընթացքում անցել է մի քանի փուլեր և համապարփակ գաղափարախոսական սկզբունքներ ընդգրկող քաղաքական գաղափարախոսությունից այն փոխակերպվել է ու հաստատաութենական կերպափոխումների արդյունքում այն վերածվել է տարբերակված մոտեցում ունեցող պատմական սոցիալ-քաղաքական դրույթի:

1920-1930-ական թթ. նախ սահմանվեց այն գաղափաքաղաքական միջավայրը, սյուում պետք է ծնավորվեին քեմալիզմի հիմնական սկզբունքները և դրանք ներբերվեին իրավաքաղաքական ու

օրենսդրական հիմքերն արտացոլող հիմնական փաստաթղթերում. Նախ 1927թ., ապա 1931թ. Հանրապետական-ժողովրդական կուսակցության ծրագրային դրույթներում ու գաղափարախոսության մեջ հստակեցվեցին ու բյուրեղացվեցին ոչ միայն քեմալիզմի 6 հանրահայտ սկզբունքները[1] և դրանց օժանդակող դրույթները (ինքնիշխանություն, անկախություն, արևմտականացում, արդիականացում), այլ նաև այն պաշտոնապես ստացավ քեմալիզմ անվանումը (1935թ.), իսկ 1937թ. դարձավ սահմանադրության երկրորդ հոդվածը: 1930-ական թթ. հրատարակվեցին քեմալիզմին նվիրված հիմնական մշակումները, որոնք արտացոլում և իրենց վրա էին կրում այդ տասնամյակին բնորոշ խիստ գաղափարականացված խորհրդային (կոմունիզմ), իտալական (ֆաշիզմ) ու գերմանական (նացիզմ) իրողությունները: 1930-ական թթ. պայմանականորեն ընդունված է անվանել որպես «բարձրագույն քեմալիզմի» ժամանակաշրջան: Այսպիսով, 1920-1930-ական թթ. կարելի է անվանել քեմալիզմի հիմնադրույթների հստակեցման ու բյուրեղացման տարիներ:

1938թ. Մուստաֆա Քեմալի մահից հետո նախագահ ընտրվեց Քեմալի հավատարիմ զինակից Իսմեթ Ինոնյուն, որն ուներ առավել աջ կողմնորոշման քաղաքական հայացքներ ու երկրի ապագայի վերաբերյալ ուղղորդվում էր սեփական պատկերացումներով, որոնք միշտ չէ, որ համընկնում էին Ք. Աթաթյուրքի հետ: Ի. Ինոնյուի նախագահության տարիներին տրված գնահատականներում թեև հիմնականում ընդգծվում էր այն տեսակետը, որ նա հավատարիմ մնաց Ք. Աթաթյուրքի սկզբունքներին, սակայն, իրականում, այդ գնահատականները թերագնահատում են Ինոնյուի քաղաքական ղեկավարության առանձնահատկությունները և երկրի առջև ծառացած լրջագույն խնդիրները լուծելու նրա մեթոդները: Ինոնյուն կառավարեց մինչև 1950թ., երբ բազմակուսակցական համակարգի արդյունքում իշխանության եկավ Դեմոկրատական կուսակցությունը: Ինոնյուի քաղաքական ղեկավարման ինքնատիպության, կառավարման մեթոդների հստակ տարբերակման պատճառով որոշ վերլուծաբաններ առանձնացնում են Ինոնյուիզմ տերմինը[2]: 1919/1923թթ. մինչև 1938թ. տևած առաջին պայմանական փուլին հաջորդեց՝ երկրորդ լրջանը 1938-1950թթ.: Այս փուլի բնութագրական հատվածներից մեկը Ինոնյուի՝ որպես երկրի ու կուսակցության ղեկավարի կողմից սեփական

ծեռագիրը թույնելու մղումն էր, բազմակուսակցական համակարգի հաստատումը և քեմալիզմի ռազմաբյուրոկրատական տարատեսակի հաստատման լուրջ հիմքերի ստեղծումը: Զինված ուժերի ղեկավարությունը և երկրի բյուրոկրատական ապարատը Քեմալ Աթաթյուրքի մահից հետո հավատարիմ մնացին երկրի հիմնադրի սկզբունքներին, իսկ Ինոնյուի կողմից պետության ավելի մեծ դերակատարման հետ միասին երկրի ռազմական ու բյուրոկրատական վերնախավի ղեկավարությունը որոշեց հավատարիմ մնալ այդ ամենին:

1950թ. խորհրդարանական ընտրություններում Դեմոկրատական կուսակցության հաղթանակով ավարտեց ԺՀԿ-ի 27-ամյա իշխանությունը: Դեմոկրատական կուսակցությանը հաջողվեց մինչև 1960թ. որոշակիորեն կերպափոխել քեմալիզմի ընկալումը իշխանական վերնախավի ու հասարակության համար: Ուղղափառ քեմալիզմից բացի լուրջ հիմքեր դրվեցին քեմալիզմի կանոնակարգման ու դրա ազատական մեկնաբանությունների համար: 1951թ. հուլիսին ընդունված Աթաթյուրքի հիշատակի պաշտպանության մասին օրենքի ընդունումը՝, 1953թ. Անկարայում Աթաթյուրքի Անըթքաբըր կոչվող դամբարանի բացումը, ուր վերաթաղվեց Աթաթյուրքի դին, 1950-ական թթ. առաջին կեսին իրավաօրենսդրական համակարգի որոշակի ազատականացմանը զուգահեռ ընթացավ նաև իսլամականության որոշակի վերելք: Այդ գործընթացների արդյունքում հասարակության մոտ սկսվեց պարտադրված կւսրծրատիպերի զգուշավոր վերանայման գործընթաց, սակայն այդ խորքային գործընթացը դադարեց 1960թ. ռազմական հեղաշրջմամբ, որով և ավարտվեց 1950թ. սկսված գործընթացը:

1960թ. ռազմական առաջին միջամտությամբ տեղի ունեցավ քեմալիզմի բազմակիության հաստատում, որը շարունակվեց մինչև 1980թ., երբ տեղի ունեցավ ռազմական երրորդ հեղաշրջումը: 1961թ. համեմատաբար ազատական սահմանադրության շնորհիվ դրվեցին անհրաժեշտ հիմքերը, որպեսզի հաջորդ 20 տարիների ընթացքում երկրում շարունակվեին նախորդ տասնամյակի ընթացքում քեմալիզմի տարատեսակ մեկնաբանությունները: Առաջ եկան բազմաթիվ «քեմալիզմներ», որոնցից առավել ուշագրավ էին աջ քեմալիզմը և ձախ քեմալիզմը[4]: Այդ գործընթացին նպաստեցին մի քանի գործոններ. Բյուլենթ Էջևիթի շնորհիվ տեղի ունեցավ ԺՀԿ-ի գաղափարախոսական վերակողմնորոշում և ձախ կենտրոնի գաղափարական, սոցիալական

հավասարության շեշտադրումները դարձան ՀԺԿ-ի նոր կողմնորոշիչը, որն էլ որոշակիորեն կողմնորոշեց հասարակությանը, ավելին, 1960-1970-ական թթ. ակտիվացան նաև սոցիալիստական ու կոմունիստական շարժումները, ընդհատակում՝ սկսեցին գործել ԽՍՀՄ-ից ուղղորդվող կազմակերպություններ, որոնք էլ գաղափարապես սնեցին ձախ քեմալիզմը: Այդ գործընթացին զուգահեռ ակտիվացան նաև Ինոնյուի կողմից սահմանակարգված ռազմաբյուրոկրատական խավը, որի մեկնաբանությունները քեմալիզմի տեղի ու դերի վերաբերյալ դարձան աջ քեմալիզմի հիմքը: 1960-1970-ական թթ. զարգացումների մյուս կարևոր արգասիքը աջ ու ձախ քեմալիզմների հիման վրա նոր ինքնանույնականացման սկզբնավորումն էր, առաջ եկան քեմալիստներ և աթաթյուրքիստներ, հետևաբար նաև քեմալիզմի կողքին առաջ եկավ աթաթյուրքիզմ տերմինը: 1970-ական թթ. սկսված այդ տարանջատման գործընթացը կանգ առավ 1980թ. թվականի ռազմական հեղաշրջմամբ, որով և ավարտվեց քեմալիզմի զարգացման հերթական փուլը:

1980թ. իր ընդգրկմամբ ամենաարմատական ռազմական հեղաշրջմամբ սկսվեց քեմալիզմի գաղափարախոսության նոր ժամանակաշրջանը: Ցանկանալով վերահսկել երկրի հասարակության ու քաղաքական դաշտի ծայրահեղական դրսևորումները՝ ռազմական վերնախավը արմատապես վերանայեց քեմալիզմի դրույթները և այն նորովի մատուցվեց կրթական հաստատություններում, ԶԼՄ-ում: Քեմալիզմի նորովի մատուցման հետ զուգահեռ մատուցվեց նաև «թյուրք-իսլամական համադրություն» գերնախագիծը: Թվում էր՝ ռազմաբյուրոկրատական վերնախավի կողմից նորովի պարտադրված դերաբաժանումը պետք է անվերապահորեն ընդունվեր երկրի ղեկավարության կողմից, սակայն, 1980-ականների երկրորդ կեսին և 1990-ականների ամբողջ ընթացքում՝ երկրում ակտիվացած իսլամական կազմակերպությունների, գիտական շրջանակների և հանրային կարծիքը ձևավորողների կողմից սկսվեց պաշտոնական տեսակետների նորովի վերաձևակերպման գործընթաց: Վերսկսվեցին քննարկումներ քեմալիզմի և աթաթյուրքիզմի շուրջ, աթաթյուրքիզմը (atatürkcülük) տերմինը դարձավ առավելապես պետական համակարգում, կրթական հաստատություններում ու դասագրքերում օգտագործվող տերմին, փոխարենը առավել ձախակողմյան հայացքների տեր հասարակական ու քաղաքական գործիչները, մտավորականները, գիտնականները

շայտունակեցին օգտագործել քեմալիզմ տերմինը: Այլ խոսքերով տեղի ունեցավ քեմալիզմի ժառանգության քաղաքական, սոցիալական ու տերմինաբանական նույնականացման խորքային նոր գործընթաց: Ավելին, 1990-ական թթ. և մեր օրերում քեմալիստների և աթաթյուրքիստների տարբերակված մոտեցումն արտահայտվում է նաև Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի անվանակոչման պարագայում: Ուշագրավ կերպով քեմալիստները նրա մասին խոսելիս խուսափում են Աթաթյուրքի ազգանունը նշելուց, սահմանափակվելով Մուստաֆա Քեմալ հատվածով, փոխարենը աթաթյուրքիզմի կողմնակիցները գերազանցապես օգտագործում են Աթաթյուրք բառը:

Ինչպես և նախորդ տասնամյակների ընթացքում, 1990-ական թթ. ևս աթաթյուրքիզմը շարունակում էր ընկալվել անհանդուրժողականության ու գաղափարական դոգմատիզմի հոմանիշ: 1990-ական թթ. տեղի ունեցավ նաև պետության դերի արմատական վերանայման խորքային գործընթաց. պետության ամենակարող գործառնությունը սասանվեց մի քանի իրադարձությունների պատճառով: 1996թ. նոյեմբերին Սուսուրլուքի ավտովթարի հետևանքով հաստատվեց պետության ու անօրինական մաֆիական կառույցների համագործակցության մասին մտահոգությունը, 1997թ. փետրվարին Թուրքիայի ԶՈՒ-ի ղեկավարության կողմից հեռացվեց, ապա փակվեց ընտրությունների արդյունքում հաղթանակած Բարօրություն կուսակցությունը, երկրի հեղինակությանը հասցված մեկ այլ հարված էր 1999թ. օգոստոսյան Իզմիթում տեղի ունեցավ երկրաշարժի հետևանքների վերացման գործում պետության դանդաղ, անհետևողական ու չհամակարգված վերացումը, մյուս հանգամանքը՝ 2001թ. պետության վերնախավի անհետևողական քաղաքականության արդյունքում սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները զգացվում էին մինչև 2005թ., և վերջին հանգամանքը «Էրգենեքոն» գաղտնի կառույցի հայտաբերումներն էր ու սկսված դատավարությունը, որը լրջորեն ազդեց ռազմաքաղաքական վերնախավի հետ զուգահեռվող քեմալականների հեղինակության վրա:

Այսպիսով, 1980-ական թթ. սկսված քեմալիզմի հերթական առավել արմատական փուլը կարճ տևեց: Անշուշտ կարելի է քննարկել դրա ավարտաժամկետի հարցը, սակայն, ստավել հավանական կարելի է համարել այն տեսակետը, որ 1997թ. «թավշյա հեղաշրջմամբ» սկսվեց և 2002թ. նոյեմբերյան ընտրություններում ներկայումս իշխող Արդարություն

և զարգացում կուսակցության հաղթանակով ավարտվեց մի գործընթաց, որով քեմալիզմը դարձավ Թուրքիայի քաղաքական դաշտում գործող գաղափարախոսություններից մեկը: Այն զրկվեց մենաշնորհային իր դերակատարումից և «քաղաքում միակ խաղի կանոն» թելադրողի առավելությունից: Ավելին, Արդարություն և զարգացում կուսակցության կողմից կառուցվածքային, օրենսդրական ու հաստատութենական բարեփոխումների դժվար գործընթացի իրականացումը, կարծրատիպերի վերացման ուղղությամբ տարվող աշխատանքներն սահմանափակել են քեմալիզմի երբեմնի գործառնականությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Անկախացումից ի վեր Թուրքիայի Հանրապետության պաշտոնական գաղափարախոսությունն անցավ մի քանի փուլերով. տարբեր ուղղություններ ու տեսակետներ ընդգրկող կուսակցական գաղափարախոսական դրույթներից վերածվեց պաշտոնական գաղափարախոսության, ներառվեց պաշտոնական սահմանադրության մեջ ու դարձավ երկրի գաղափարական ուղղորդման հիմնական կողմնորոշիչը: 1920-1930-ական թթ. նախնական հիմնադրման փուլին հաջորդեց 1938-1950թթ., երբ նախագահ Ինոնյուի կողմից առավել բյուրեղացվեց քեմալիզմի դրույթները և հստակեցվեցին այն քաղաքական ու բյուրոկրատական շրջանակները, որոնք պետք է պատասխանատվություն կրեին քեմալիզմի անխախտ ու անվերապահ կիրառման համար: Հաջորդ փուլն սկսվեց 1950թ. և շարունակվեց մինչև 1960թ., այս տասնամյակի ընթացքում դրվեց քեմալիզմի ազատականացման հիմքերը, սակայն, այդ գործընթացն ավարտվեց 1960թ. ռազմական հեղաշրջմամբ: 1960թ. սկսվեց և մինչև 1980թ. շարունակվեց քեմալիզմի զգուշավոր ազատականացման գործընթացը, առաջ եկան քեմալիզմի տարատեսակ մեկնաբանությունները, որոնցից հարկավոր է առանձնացնել աջ և ձախ քեմալիզմների տեսությունները, ինչպես նաև դրա հետևանքով՝ քեմալիզմի և աթաթյուրքիզմի տարբերակման առանձնացումը: 1980թ. սկսվեց քեմալիզմի հերթական շրջանը, որը թեև սկսվեց 1930-ական թվականներին հարիր ոճով ու շեշտադրումներով, սակայն որոշ ժամանակ անց քեմալիզմը նախ

պետական-պաշտոնական փաստաթղթերում սկսվեց կոչվել աթաթյուրքիզմ և սկսվեց քեմալիզմի գաղափարական հիմնադրույթների համակարգային սասանման գործընթաց: Մերօրյա Թուրքիայում, ինչպես և 20-րդ դարի ամբողջ ընթացքում ընթանում են խորքային, հաստատութենական վերափոխումների, ու արժեհամակարգային փոփոխությունների ու վկնտրսաւքների գործընթաց և քեմալիզմի/աթաթյուրքիզմի վերագնահատումը դարձել դրա միջոցներից մեկը:

VAHRAM TER-MATEVOSYAN

(IOS)

THE PROBLEMS OF METHODOLOGICAL AND PERIODICAL DIFFERENTIATION OF THE RESEARCH ON KEMALISM

The ideological construction of the Turkish statehood has long been a debatable subject among scholars. No less intensive were the discussions on the dates of inception of the Kemalist discourse and its evolution. The paper aims to touch upon the question of periodization of Kemalist discouse by arguing that since the 1920s Kemalism has gone through extensive transformation from a solid state ideology in the 1930s up to a loose ideological construction in the 1990s and the beginning of the 21st century. That process was a result of mainly political, social and structural transformations in Turkey. The paper brings up several stages of evolution and defines the methods of periodization.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանրապետականություն, . աշխարհիկություն, ազգայնականություն, ժողովրդականություն, էտատիզմ և հեղափոխականություն:
2. Roucek J., Governments and politics abroad, New York, 1947, Funk & Wagnalls Company, p. 524-525:
3. "T.C. Resmi gazette". 28.VII.1951. http://www.mevzuat.adalet.gov.tr/html/956.html
4. Ter-Matevosyan V., "The Kemalist discourse in Turkey between 1960 and 1980: Challenging the Republican Ideology?". Turkic and Ottoman Studies, v. 4, 2006, p. 85-102.

ՔԱՐՏԱՇՅԱՆ ԱՆԱՀԻՏ
(ԵՊՀ)

ԴԵՐՍԻՄԸ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ

Քեմալական Թուրքիան հանրապետություն հռչակվելուց հետո անգամ հավատարիմ մնաց Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների նկատմամբ հետևողականորեն իրականացրած ձուլման և ոչնչացման քաղաքականությանը: Արդյունքն եղավ այն, որ Թուրքիայում ծայր առան մի շարք ապստամբություններ: 1936թ. ապստամբության կրակն ընդգրկեց նաև Դերսիմը:

Դերսիմը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, երկար տարիներ եղել է կիսաանկախ վիճակում և դրանով իսկ մշտապես լարվածության մեջ պահել թուրքական կառավարությանը: Երբ թուրքական կառավարությունը Դերսիմում ևս փորձեց իրագործել իր ուծացման քաղաքականությունը, հանդիպեց համառ դիմադրության: Դերսիմը մշտապես եղել է ընդվզումների օջախ և կարևոր օղակ է եղել նոր ընդվզումների և խռովությունների շղթայում:

Դերսիմի նահանգն ընկած է Բարձր Հայքի արևմտյան մասում՝ Էրզրումի, Խարբերդի և Տիգրանակերտի միջև: Այն արևելքից սահմանակից է Էրզրումին և Մուշին, արևմուտքից՝ Արևմտյան Եփրատին (Քարա Սու), հյուսիսում՝ Երզնկային և Քեմախին, իսկ հարավում՝ Խարբերդին և Արածանի գետին: Դերսիմի հարավային մասը (Չարսանջակ) դաշտային է, իսկ հյուսիսայինը՝ լեռնային[1]:

Մինչև XIX դարի 70-ական թթ. Դերսիմը վարչական առումով եղել է նահանգ, որտեղ գոյություն են ունեցել քրդական մանր իշխանություններ (հյուքյումեթություն): 1878թ. սուլթանի հրամանագրով այն միացվել է Խարբերդի նահանգին՝ որպես գավառ: Նույն հրամանագրով Դերսիմը բաժանված էր հետևյալ գավառակների՝ Չարսանջակ, Մծկերտ, Քըզըլքիլիսե, Չմշկածագ, Փախ, Օվաջըղ, Խուզիչան: Ըստ վիճակագրական աղբյուրների՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին բնակչության թիվը հասել է

200 հազարի, որի 45 %-ը կազմել են հայեր[2], իսկ մնացածը՝ քրդեր և զազաներ[3], որոնք հայերի հետ ապրում էին հաշտ ու խաղաղ[4]:

Քեմալական Թուրքիայի՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ հետևողականորեն իրականացրած ուծացման քաղաքականության պատասխանն էր նաև 1920-1930-ական թթ. տեղի ունեցած քրդական մի շարք զանգվածային ապստամբությունները: Քեմալական կառավարությունը, ճնշելով 1925թ. շեյխ Սայիդի և 1927-31թթ. Արարատի քրդական ապստամբությունները, 1937թ. սկսեց գործողություններ ծավալել ընդվզումների երրորդ օջախի՝ Դերսիմի դեմ:

Դերսիմը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և իր բնակիչների ըմբոստ ոգու, երկար դարեր գտնվել է կիսանկախ վիճակում: Եվ թուրք կառավարողների ամեն մի բռնարարք, և ոտնձգություն, դեռևս XVIII դարից սկսած, առաջ է բերել դերսիմցիների զինյալ ընդվզում և հակահարված[5]:

Օսմանցին Դերսիմի մասին միայն պատերազմի ժամանակ էր հիշում և ֆեոդալների միջոցով հարկ և զինվոր էր հավաքում: Գլխավոր վալի Քեմալ Բարդաքն ասում է. «Կառավարությունը 400 տարուց ի վեր Դերսիմ մուտք չի գործել: Յուրաքանչյուր դերսիմցի ստիպված է եղել դիմել զենքի՝ կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու համար»[6]:

XX դարի սկզբին Դերսիմում ծայր են առնում մի շարք ընդվզումներ: 1920թ. նոյեմբերին Հոզաթում (Դերսիմի կենտրոն) կայացավ Դերսիմի և Չմշկածագի քուրդ ղեկավարների ժողով, որտեղ որոշվեց համախմբել ուժերը՝ ազգային իրավունքներ ձեռք բերելու համար: 1920թ. նոյեմբերի 15-ին ժողովի մասնակիցները Անկարայի կառավարությանը նոտա են հղում, որով պահանջում են Էլյազիգի, Մալաթիայի, Սվասի և Երզնկայի բանտերից ազատ արձակել բոլոր քուրդ բանտարկյալներին, թուրք պաշտոնյաներին ետ կանչել այն շրջաններից, որտեղ քրդերը մեծամասնություն են կազմում, անմիջապես Քոչգիրիի շրջանից հանել թուրքական զորքերին:

Ի պատասխան այս նոտայի՝ Անկարայի կառավարությունն Էլյազիգից պատվիրակություն է ուղարկում Դերսիմ, վերջինս, քրդերի պահանջներն արդար համարելով, խորհուրդ է տալիս չընդվզել: Կառավարությունը հայտարարեց նաև, որ Թուրքիայի ազգային մեծ ժողովում Դերսիմի պատգամավոր են նշանակվել Մաչո աղան, Դիափ աղան, Քանգո օղլու Ահմեդ Ռեմիզը և հազարապետ Հ. Հայրին[7]:

Փաստորեն, այս քայլին դիմելով՝ Անկարայի կառավարությունը փորձում էր կասեցնել Դեսիմի ընդվզումը, իսկ այս պատգամավորները

Անկարայի ձեռքում գործիք դարձան: Այնուամենայնիվ, Դերսիմում շարժումը չդադարեց. և մտահոգվելով Դերսիմի դրությամբ՝ կառավարությունն անհրաժեշտ համարեց զորքերի մի մասը հունական ռազմաճակատից հանել և ուղղել քրդերի դեմ: Բացի այդ Էլյազիգում և Էրզնկայում զգալի ուժ կենտրոնացրեց՝ նպատակ ունենալով խոչընդոտել շարժման տարածմանը դեպի հյուսիս և արևելք:

1921թ. գարնանը կառավարությանը հաջողվեց. խռովարարների մեջ տարաձայնություններ առաջացնելով. մասնատել վերջիններիս ուժերը և ճնշել ապստամբությունը: Չնայած որ թուրքական կառավարությանը հաջողվեց ճնշել առաջին խռովությունը Քոչքիրի-Դերսիմ շրջանում, սակայն չկարողացավ ամբողջովին իրեն ենթարկել Դերսիմի ցեղերին:

1930-ական թթ. սկզբներին թուրքական իշխանությունները որոշեցին վերջնականապես հպատակեցնել դերսիմցիներին: Դրա համար կառավարությունը Դերսիմում տնտեսական կյանքի զարգացմանը նպաստելու քողի տակ ձեռնարկեց մի շարք սահմանափակումներ՝ դերսիմցիներին զրկելով ինքնուրույնությունից և նրանց օգտագործելով՝ որպես իրենց տարածքում ընթացող շինարարական աշխատանքների էժան բանվորական ուժ: Առավել ծանրակշիռն, անշուշտ, քեմալականների՝ դերսիմցիներին ուծացնելու քաղաքականությունն էր: Այն իրագործելու համար դերսիմցիները պետք է տեղահանվեին և վերաբնակեցվեին Փոքր Ասիայի արևմտյան տարբեր շրջաններում: Այս ծրագիրը Դերսիմում կամ, ինչպես քեմալականներն էին վերանվանել, Թունջելիում մեծ հուզումների տեղիք տվեց[*]:

Դերսիմում իրադրությունը բարդանում է հատկապես սկսած 1936 թվականից: 1930-ական թթ. կեսին թուրքական կառավարությունը որոշում է վերջնականապես հնազանդեցնել Դերսիմի կիսանկախ ցեղերին: Իշխանությունները Դերսիմի «ինքնավարությանը» վերջ տալու համար սկսեցին ձեռնարկել ոստիկանական-վարչական միջոցառումներ՝ «գաղափարական հենքի վրա»: Դերսիմում տարրական դպրոցներում դասավանդումը կատարվում էր թուրքերենով, որպեսզի զազաները, որոնք «մոռացել էին իրենց նախնիների լեզուն», այս կերպ «հաղորդակից դառնային» թուրքական մշակույթին: Խստիվ արգելվում էր ազգային հագուստ կրել և երգել ազգային երգեր: Կառավարությունը փորձում էր նաև դերսիմցիներին հարկատու դարձնել: Վերջիններս, որոնք մինչ այդ հարկ չէին վճարում, իրենց դժգոհությունն արտահայտեցին: Քանի որ

հարկերի վճարումը և հողերի բռնագրավումը մեծ դժգոհություն առաջացրեց. կառավարությունը, Էլյազիգի փողոցներում մի խումբ դերսիմցիների կախաղան բարձրացնելով, փորձեց սարսափի մթնոլորտ ստեղծել: Այս ամենը դերսիմցիների բացահայտ դիմադրության առիթ հանդիսացավ: Շուտով ողջ Դերսիմը հայտնվեց ապստամբության կրակի մեջ: 1936թ. Քեմալ Աթաթուրքի առաջարկությամբ Դերսիմի հարցը մտցվում է ԹԱՄԺ-ի օրակարգ՝ փակ նիստով[9]:

1937թ. հունիսի 18-ին վարչապետ Ի. Ինոնյուն Նախարարների խորհրդի ժողովում, որին մասնակցել է նաև Գլխավոր շտաբի պետ Ֆևզի Չաքմաքը, պարզաբանեց դերսիմցիների համար նախատեսված բարեփոխումների ծրագրի էությունը: Ծրագրով նախատեսվում էր Դերսիմում կառուցել ճանապարհներ, կամուրջ, դպրոց և զորանոց, կարգավորել զինվորական և հարկային գործերը, արմատախիլ անել շեյխությունները և աղայությունները, Դերսիմն ավազակային որջի վերածողներին աքսորել արևմտյան շրջաններ, որտեղ պետք է դառնային «պատվավոր և կրթված» քաղաքացիներ: Առանց Նախարարների խորհրդի թույլտվության ոչ ոք չէր կարող բնակվել Դերսիմում[10]:

Դերսիմի ցեղերի առաջնորդ Սեիդ Ռիզան կարողանում է համախմբել աշիրեթների մի մասի ուժերը և միասնական ճակատ ստեղծել թուրքական բանակի դեմ՝ թեև դեռևս պահպանվել էին միջցեղային հնարմատ թշնամանքն ու երկպառակությունը[11]:

Տեղական իշխանությունը, տեսնելով, որ դերսիմցիները որոշակի միասնություն են ձեռք բերում, ապստամբության շրջան է ուղարկում տեղեկատվական գրասենյակի պետ, շտաբի սպաներից Շեֆքեթ փաշային՝ այնտեղ քայքայիչ աշխատանքներ կատարելու նպատակով: Թուրքական իշխանությունները խորամանկորեն օգտագործում են Դերսիմի ցեղերի միջև եղած սուր հակասությունները՝ բորբոքելով հին կենցաղային վեճերը, իսկ ոստիկանական գործակալներն ընտրում են Դերսիմի վերնախավից առանձին բեկերի ու աղաների, նրանց դարձնում գործիք և իրականացնում ջլատման քաղաքականություն: Հարկ է նշել, որ Դերսիմի անկման գլխավոր պատճառներից մեկը ցեղերի անմիաբանությունն էր:

1937թ. ամռանը Դերսիմում ռազմական գործողությունները նոր թափ ստացան: 1937թ. հուլիսի 1-ին թուրքական կանոնավոր բանակն

երկրորդ անգամ արշավում է Դերսիմ: Շուտով թուրքական կողմը դիվանագիտական մի նոր խաղ է սկսում՝ հրավիրելով Սեիդ Ռիզային բանակցությունների: 1937թ. սեպտեմբերի 5-ին Սեիդ Ռիզան Երզնկայում դավադրաբար ձերբակալվում է իր հետ ժամանած 11 ցեղապետերի հետ միասին: Նրանք դատապարտվում են մահապատժի[12]: 1938թ. կեսերին Դերսիմը դեռ շարունակում էր դիմադրել թուրքական հարձակումներին: Նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին երկար ինքնապաշտպանությունից հետո Դերսիմը վերջնականապես պարտվեց:

Այսպիսով. ուսումնասիրելով 1936-1938թթ. Դերսիմի ապստամբության պատճառները՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

1936-1938թթ. Դերսիմի ապստամբությունը միայն որոշ վերապահումով կարելի է համարել ազգային-ազատագրական: Իրականում այն գոյության համար մղվող պայքար էր: Կարելի է նշել մի շարք պատճառներ, որոնց արդյունքում ապստամբությունը չվերաճեց ազգային-ազատագրական պայքարի.

1. Ապստամբության ղեկավարները Թուրքիայի ներսում առանձին ինքնուրույն միավոր ստեղծելու որևէ ծրագիր չունեին:
2. Դեռևս աշիրեթները դուրս չէին եկել ցեղային մակարդակից, և ցեղապետերը տուրք էին տալիս անձնական շահերին:
3. Թուրքական կողմը թվային առավելություն ուներ և, բացի այդ, լավ սպառազինված էր:
4. Եվ վերջապես, գործեց թուրքական նենգաղավ մեքենան՝ ապստամբության ղեկավարների միջև սերմանելով երկպառակություն:

Դերսիմի անկումը մի քանի տասնամյակով կասեցրեց քրդական շարժումները Թուրքիայի ներսում:

ANAHIT KARTASHYAN

(YSU)

DERSIM AND KEMALIST TURKEY

With regard to national minorities the Kemalists are the direct descedents of the Ottoman Empire. The policy of reactionary circles regarding the assimilation of ethnic minorities found its absolyte expression after the Lausanne conference.In a

consequnence of this policy in Turkey mass revolts have begun. In 1936-1938 Dersim has risen also. Dersim due to the geographical location many years was to the floor independent and the same constantly for the Turkish republic was head pain. When the Turkish government began to carry out it an assimilate policy in Dersim, met strong resistance. Dersim always was a hearth revolt and always was a major link in a chain of revolt.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երևանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 76:
2. Գ. Երեանյանը, իր աշխատության մեջ գրում է, որ հնում Դերսիմը եղել է հայաբնակ, իսկ XVII-XVIII դարերից այստեղ բնակություն են հաստատել զազաները, քրդերն ու թուրքերը (Երևանեան Գ., նշվ. աշխ., էջ 76):
3. Համաձայն քրդագիտության մեջ եղած տեսակետների՝ ա) քրդերը և զազաները նույնացվում են բ) զազաները համարվում են ազգային ինքնուրույն միավոր: Խորհրդային և արևմտյան մի շարք գիտնականներ (Վ. Նիկիտին, Մ. Հասրաթյան, Մ. Լազարև և այլոք) զազաներին ազգային ինքնուրույն միավոր չեն համարում, սակայն զազաների կրոնը, լեզուն և կենցաղը հակառակն են ապացուցում: Պրոֆեսոր Գ. Ասատրյանը գրում է. «Զազաները քրդերից տարբերվում են կրոնով (ի տարբերություն քրդերի, որոնք շաֆիի ուղղության սունի մահմեդական են, զազաները դավանում են ծայրահեղ շիականության մի ուղղություն, որը զգալի չափով կրել է տեղական և քրիստոնեական հավատների դրոշմը) և լեզվով, չնայած որ և՛ քրդերենը, և՛ զազաերենը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի հյուսիսարևմտյան ենթաճյուղին» (Ասատրյան Գ., Զազաների ավանդական աշխարհայացքը, Իրան-նամէ, Եր., 16-17 (1995-1996), էջ 38):
4. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 21, Եր., 1988, տե՛ս Դերսիմ, էջ 93:
5. Սահակյան Լ., Դերսիմը 1930-ական թթ., Փյունիկ հմ. 16, Եր., 1991, էջ 11:
6. Akar H., Dersim-Civarik Iki Uçlu Yaşam, Istanbul, 1998, s. 113.
7. Inal I. H., Osmanlı Tarihi, Istanbul, 2007, s. 528-529.
8. Dersimi N., Kürdistan Tarihinde Dersim, Halep, 1952, s. 242.
9. Гасратян М. А., Курды Турции в новейшее время, Ер. 1990, с. 186-187.
10. http://hyetert.com/yazi3.asp?s=1&Id=437&DilId=1
11. Սահակյան Լ., նշվ. աշխ., էջ 7:
12. Лазарев М. С., Мгои Ш. Х., История Курдистана, М., 1999, с. 291.

ՔՈՉԱՐՅԱՆ ՀԱՅԿ
(ԵՊՀ)

ՀԱՅԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 7-8 ԴԴ. ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«հայտնի է, որ նրանք (հայերը - Հ.Ք.)
զիմմի էին և այլ պայմանագիր ունեն»
Իբն Հաուկալ, X դար

Սույն հետազոտությունը նվիրված է վաղ միջնադարում 7-րդ դարի երկրորդ կեսից մինչև 8-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում հայ-արաբական փոխառնչությունների նոր կազմավորվող համակարգի ուսումնասիրությանը:

7-րդ դարում ծագեց և ձևավորվեց իսլամը, որը Մուհամմադ մարգարեի և նրա հաջորդների (խալիֆաների) գործունեության արդյունքում տարածվեց և ընդունվեց բազում ժողովուրդների ու ցեղերի կողմից՝ ընդգրկելով հսկայական տարածքներ: Վերոհիշյալ ժամանակահատվածում լայնածավալ Արաբական խալիֆայության մի մասն էր կազմում նաև Հայկական բարձրավանդակը, որի որոշ երկրամասեր պարբերաբար հայտվում էին Խալիֆայության սահմաններում, ինչպես նաև ձեռք էին բերում ինքնուրույնություն:

Կարևորագույն նորություն էր այն, որ իսլամը՝ հանձինս իր մարգարե Մուհամմադի, առաջարկեց հասարակության կազմակերպման, Արաբիայի համար նախատիպը չունեցող, մի նոր մեխանիզմ, որը ստացավ ումմա անվանումը: Այսինքն՝ գոյություն ունեցող ցեղային, տոհմային (արյունակցական) կազմակերպման մոդելին հակադրեց միաստվածության (թաուհիդ) առանցքի շուրջ կառուցվող նոր համակարգ, ուր աշխարհը բաժանվում էր դար ալ-իսլամի և դաբ ալ-հարբի՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների:

Այս տեսանկյունից հետաքրքիր փորձ է հայ-արաբական (իսլամական) փոխառնչությունները. քանի որ Հայաստանի յուրօրինակ հասարակական կառուցվածքը (երբ երկրի ղեկավարումը գտնվում էր նախարարական տների և նրանց տնօրինության տակ գտնվող զգալի քանակ կազմող այրուձիների ձեռքում և կային շինականներ. այսինքն հասարակ ժողովուրդ) իր արտացոլումը գտավ նաև այդ հարաբերությունների վրա: Իսլամը մշակել է պայմանագրերի (ահդ, սուլհ. ակդ. աման) համակարգ. որոնք կնքվելով մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև. հնարավորություն էին տալիս վերջիններիս հանդես գալ հովանավորյալների (ահլ ազ–զիմմա) կարգավիճակում դառնալով ումմայի անդամ և օգտվել դրանից բխող պարտականություններից և պատասխանատվություններից: Զիմմիները վճարում էին գլխահարկ (ջիզիա) և հողահարկ (խարաջ)՝ վախարենը ստանալով անձի և ունեցվածքի անձեռնմխելիություն և սեփական հավատին մնալու հնարավորություն:

Արաբական առաջին արշավանքը Հայկական բարձրավանդակ տեղի ունեցավ մոտավորապես հիջրայի 19թ.–ին (640թ.), որը սկսվեց Դիարբեքիրի (Ամիդ) գրավումով: Հայերը և արաբական զորքը առաջին անգամ չէին հանդիպում: 637թ. Քադիսիայի ճակատամարտում հայերը ունեին երկու զորաբաժին, մեկը Դավիթ Մամիկոնյանի որդի՝ Մուշեղի, իսկը մյուսը՝ Սյունաց Գրիգոր Իշխանի հրամանատարության տակ, որոնք մարտնչում էին արաբների դեմ՝ պարսկական զորքի կազմում[1]: Հայտնի է նաև, որ հայկական զորաջոկատները կռվում էին նաև բյուզանդական զորքերի շարքում և ներկա են եղել 636թ. Յարմուքի ճակատամարտում[2]:

Երկրորդ արշավանքը դեպի Հայոց աշխարհ սկսվեց Պարսկաստանի կողմից՝ մոտավորապես 642-643թթ., երբ արաբական հաղթական ջոկատները տարածվեցին մինչև Կասպից ծով: Երրորդ արշավանքը տեղի ունեցավ Եզր կաթողիկոսի օրոք: Այս անգամ էլ արաբները եկան Տարոնի կողմից, տարածվեցին Վանա լճի արևմտյան և արևելյան ափերով և, Բերկրի ձորով դուրս գալով Կոգովիտ, մտան Արարատյան դաշտավայր և ուղղակի շարժվեցին մայրաքաղաք Դվինի ուղղությամբ[3]: Դվինը գրավվեց. կողոպտվեց և սարսափելի ավերումների

տեսարան դարձավ[4]: Դրանից հետո որոշ ժամանակով դադարեցին արաբական արշավանքները հայոց աշխարհի վրա: Ըստ էության, այս արշավանքները կրում էին հետախուզական բնույթ և նպատակներն էր ասպատակություններն ու ավարի ձեռք բերումը:

7-րդ դարի առաջին կեսերում զուգահեռաբար լուրջ գործընթացներ էին ընթանում հայոց աշխարհում: Իր կազմակերպչական և առաջնորդի ունակնեյավ փայլեց Ռշտունիների տոհմից Թեոդորոսը, որը ստանձնեց սպարապետությունը: Նրա գլխավորությամբ առաջին հաջողությունները արձանագրվեցին 651թ., երբ արաբները նորից մտան Հայկական բարձրավանդակ: Սակայն երկու տարի անց՝ մոտավորապես 653-654թթ., արաբները վերադարձան և սա արդեն այն փոքրաթիվ զորաջոկատները չէին, որոնք ասպատակում էին (դազու) Խալիֆության սահմանների հարևանությամբ գտնվող տարածքները, այլ կազմակերպված, պատրաստված և զգալի քանակ ունեցող բանակ էր, որը եկել էր ընդարձակելու (ֆուտուհ) Խալիֆայության սահմանները:

Արաբական արշավանքի գլուխ կանգնած էր Հաբիբ իբն Մասլամա (617-662/671թթ.) անունով զորավարը, որին վիճարկված էր նվաճել հայոց աշխարհը և ողջ Այսրկովկասը: Սկզբնական շրջանում հպատակեցրեց Քալիքալան (Կարին), ապա ուղղվեց դեպի Խլաթ, որի հայ կառավարիչը նրան ներկայացավ, տանելով մի մուսուլմանի տված թուղթ, որով նրան ապահովություն էր (աման) շնորհված գլխահարկ տալու պայմանով[5]: Նմանատիպ պատկեր է նկատվում Հաբիբ իբն Մասլամայի արշավանքի ողջ ընթացքում. հայ կառավարիչները ներկայանում են նրան ամանով կամ անձնատուր լինելով՝ նրանից են աման ստանում[6]: 652-654թթ. արաբական զորքը Մասլամայի ղեկավարությամբ հասնում է Դվին (Դաբիլ) և պաշարում այն: Նրա զորքը զինված էր բաբաներով (քարանետ մեքենաներ), որոնք ճակատագրական դեր ունեցան Դվինի անձնատուր լինելու հարցում:

9-րդ դարի արաբ պատմիչ ալ-Բալազուրիի վկայությամբ՝ Հաբիբ իբն Մասլաման Դվինը նվաճելուց հետո նրա բնակչությանը շնորհեց աման, որի բովանդակությունը հետևյալն էր.

«Հանուն Աստուծո գթածին և ողորմածին. այս է գիրն. որ Հաբիբ որդի Մասլամայի շնորհեց Դաբիլի

քրիստոնյաներին, մոգերին (զրադաշտներին-Հ.Ք.) և հրեաներին, թե ներկաներին, և թե բացականերին: Ձեր անձերի, ինչքի, եկեղեցիների, տաճարների և ձեր քաղաքի պարիսպների ապահովությունը ձեզ շնորհեցի, և դուք ապահովված եք, և մենք այս դաշնագրությունը հաստատ պիտի պահենք, այնքան ժամանակ, որքան դուք հավատարիմ կմնաք և կվճարեք գլխահարկը և հողահարկը:

Աստված վկա է և իր վկայությունը բավական է:

Հաբիբ Մասլամայի որդին իր ձեռքով կնքեց այս դաշնագիրը»[7]:

Պայմանագրից երևում է, որ նվաճվածների համար նշանակվում է գլխահարկ (ջիզիա), սակայն 8-րդ դարի հայ մատենագիր Ղևոնդի վկայությամբ այս շրջանում և մինչև Աբբասյանների հաստատումը (750թ.) Հայաստանում ջիզիան գանձվում էր ոչ թե շնչից, այլ ընտանիքից (ծխից)[8]: Այս իրավիճակը կարելի է բնութագրել որպես նոր հարկային համակարգի չձևավորվածություն՝ ուղղորդված տեղային յուրահատուկ կիրառմամբ, քանի որ Արաբիայից դուրս ընդլայնվող խալիֆայության համակարգում Հայկական բարձրավանդակը ներգրաված առաջին տարածքներից էր: Ըստ Տաբարիի՝ Հաբիբ իբն Մասլաման աման է տալիս նաև Թիֆլիսի (ներկայիս Թբիլիսին) բնակչությանը՝ նրանց համար սահմանելով մեկ դինար ջիզիա ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար[9]:

Հայ-արաբական հարաբերություններում եղել են դեպքեր, երբ ստեղծված քաղաքական իրավիճակից ելնելով հայերն իրենք են հանդես եկել պայմանագրի կնքման նախաձեռնությամբ: Ասվածի ապացույցն է Սահակ կաթողիկոսի նամակը 693-709թթ. Արմինիայի փոխարքա Մուհամմադ իբն Մրվանին: Երբ նախարարական տները տեղեկանում են, որ Մուհամմադ իբն Մրվանը զորք է հավաքում Հայաստան արշավելու համար, նրանք Սահակ կաթողիկոսին լիազորեցին վերջինիս հետ բանակցելու, սակայն կաթողիկոսը ճանապարհին մահացավ՝ նամակ գրելով Մուհամմադ իբն Մրվանին,

որը, ըստ էության, աման էր, ինչն էլ նա ընդունեց[10]: Ամանի ընդունումը նշանակում էր զիմմիի կարգավիճակի տրամադրում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իսլամական իրավագիտական համակարգը գտնվում էր կայացման փուլում և չնայած այդ ամենին արդեն ձևավորվել էր սկզբունքը, համաձայն որի զիմմիները (ահլ ազ զիմմա) իրավունք չունեին ծառայել խալիֆայի բանակում կամ էլ ունենալ զինված ռազմական միավորումներ:

Այս առումով հետաքրքիր է Հայաստանի և Խալիֆայության միջև կնքված ևս մեկ պայմանագիրը: Այդ պայմանագրի բովանդակությունը ըստ Սեբեոսի հետևյալն էր.

«Իմ (արաբ զորավարի– Հ.Ք.) և ձեր (հայերի – Հ.Ք.) միջև այս հաշտության ուխտը թող լինի քանի տարի և դուք կամենաք: Մի երեք տարի ձեզնից հարկ չեմ առնի: Ապա կտաք երդմամբ, որչափ և դուք կամենաք: Ձեր աշխարհում 15 հազար հեծյալ պահեցեք և (ձեր) աշխարհից պարենավորեցեք, ես (դա) արքունի հարկ կհամարեմ: Հեծելազորին Ասորիք չեմ ուղարկի, բայց ուրիշ որտեղ կհրամայեմ, գործին պատրաստ պիտի լինեն: Ամիրաներ չեմ ուղարկի բերդերը ոչ էլ մեծաքիվ կամ նույն իսկ մեկ տաճիկ (մուսուլման – Հ.Ք.) հեծյալ զորական: Թշնամի չի մտնի Հայաստան, իսկ եթե հոռոմը գա ձեզ վրա, ձեզ օգնական զորքեր կուղարկեմ, որչափ դուք կամենք: Երդվում եմ մեծ Աստծով, որ չեմ ստում»[11]:

Այս փաստաթղթի բովանդակությունից երևում է, որ գործ ունենք աման տեսակի պայմանգրի հետ, սակայն տարակուսանք է առաջացնում հեծելազորի պահպանելու արաբների պատրաստակամությունը և հարկերի գանձման անորոշ ձևակերպումները:

Ա. Տեր-Ղևոնդյանը, ով մեծ ներդրում ունի արաբերեն աղբյուրների, հատկապես Հայաստանին վերաբերող հատվածների ուսումնասիրության գործում, հետազոտելով Հայաստանին առնչվող արաբերեն աղբյուրագիտական նյութը, գտնում է, որ 7-9-րդ դարերում Հայաստանը չդադարեց վարչական ուրույն միավոր լինելուց և

կառավարվում էր հայ կառավարիչների կողմից, որոնք կոչվում էին «Հայոց իշխան»[12]: Խալիֆայության. ըստ էության. Հայաստանի նման կառավարումը Հայոց իշխանի գլխավորությամբ և նախարարական տների միջոցով. ակնհայտ շահեկան էր (բացառությամբ ապստամբական ժամանակահատվածները). քանի որ Հայաստանը հիմնական մասով ապահովում էր իր սահմանները (դրանով իսկ Խալիֆայությանը) իր միջոցներով: Խալիֆայության կողմից հայկական հեծելազորին տարեկան 100 հազար արծաթի փոքրաթիվ լինելը ինքնին խոսում էր դրա ձևական բնույթի մասին[13]:

Կարելի է ենթադրել, որ իրավիճակը ճիշտ գնահատվեց Խալիֆայության կողմից և քանի որ Հայաստանում առկա նախարարաիշխանական կառավարման համակարգը բավականին կայացած էր. փորձ արվեց պահպանել status quo տեղավորելով այն իրենց համար հասկանալի համակարգի մեջ՝ ամանի տեսքով: Ավելին. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին հրավիրվեց Դամասկոս և նրա կառավարիչ Մուավիայից ստացավ «ոսկեղեն հագուստ» և «ոսկեթել դրոշ»[14], ինչը հիշեցնում է անկախ միապետության բոլոր արտաքին ձևերը:

Ղևոնդը հիշատակում է մի դրվագ. որը Հայոց իշխանը և հայ նախարարները զիմմիներին ոչ բնորոշ արտոնյալ կարգավիճակում էին: Մասնավորապես, Ղևոնդի մոտ կարդում ենք. որ Արմինիայի արդեն հիշատակված կառավարիչ Մրվան իբն Մուհամմադը հայ նախարարների Հայոց իշխան Աշոտ Բագրատունու գլխավորությամբ, արշավանք են կազմակերպում դեպի Հոնաց երկիր, ուր շատ հաջողություններ են ունենում և հարուստ ավարով վերադառնում են: Ավարը, ըստ ընդունված կարգի. բաժանելով իր զորքին, նախապես մեկ հինգերորդը ուղարկելով խալիֆին, Մրվան իբն Մունամմադը բաժին է հանում հայոց իշխանին և նախարարներին[15]:

Զիմմիի կարգավիճակին առնչվող մյուս հարցը հարկային քաղաքականությունն է, որը խալիֆայությունը վարում էր հայերի և Արմինիա վոխարքայության հանդեպ ընդհանրապես:

Նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս. որ 7-րդ դարի երկրորդ կեսից մինչև 8-րդ դարի առաջին կես ընկած ժամանակահատվածում խալիֆայության հարկային քաղաքականությունը տարբերվում էր մյուս

տարածքներում եղած իրավիճակից: Վերևում արդեն խոսվեց գլխահարկի (ջիզիայի) իբրև ծխահարկի այլ ընկալման մասին:

Ստեփանոս Ասողիկը նշում է, որ Մուավիայի օրոք (661-680թթ.) Հայաստանը տարեկան 500 դահեկան էր վճարում[16]: Այս թիվը իրականում ծիծաղելի փոքր է, ինչն վկայում է դրա ձևական բնույթի մասին: Համեմատության համար նշենք, որ ավելի ուշ շրջանում Արմինիա ոստիկանությունը Հայաստանը Վրաց և Աղվանից երկրների հետ տարեկան վճարում էր տասներեք միլիոն դիրհեմ: Հարկի մեջ մտնում էին նաև գորգեր, զարդեր, համեմունքներ, ձկնեղեն և այլն[17]: Այս տվյալները ինքնին խոսում են, որ վաղ շրջանում Հայաստանից գանձվող հարկի ձևական բնույթը վկայում է Հայաստանի ինքնուրույնության մասին:

Ամփոփելով կարելի է նշել, որ

- Դաշնագրերը հայերի և արաբների միջև կնքվում էին երկու կողմերի նախաձեռնությամբ:
- Պայմանագրերով նախատեսված հարկերը ձևական բնույթ էին կրում և Ջիզիան հիմնականում շնչից գանձվելու փոխարեն գանձվում էր ծխից:
- Ըստ իսլամական իրավունքի՝ հայերը զիմմիներ էին: Այդուհանդերձ, իշխանական տոհմերը իրավունք ունեին պահպանել իրենց այրուձիները: Ավելին, նրանք մասնակցում էին խալիֆայության ռազմական գործողություններին և մասնաբաժին էին ստանում ավարից: Խալիֆայության համակարգում «Հայոց իշխանի» ինստիտուտի պահպանումը բացառիկ է խալիֆայության պատմության մեջ:

Հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ հայերը եղել են ումմայի լիիրավ անդամներ, ինչն ապահովվել է տարբեր պայմանագրերով (հիմնականում աման և սուլհ) նրանց հովանավորյալ (զիմմիի) կարգավիճակը, չնայած որ նրանց գործունեությունը դե ֆակտո հակասում էր իսլամում զիմմիների համար ամրագրված ավանդական պատկերացումներին:

HAYK KOCHARYAN
(YSU)

THE STATUS OF ARMENIANS IN THE CONTEXT OF ARAB ARMENIAN RELATIONS IN THE SEVENTH AND EIGHTH CENTURIES

This study is devoted to exploration of first Arab-Armenian contacts and the newly-fledging system of relationships brought about as a result of these contacts in the early Middle Ages. i.e. in the period between the second half of VII and first half of VIII century.

Islam came into being and took its shape in VII century; as a result of activities of Prophet Mohammed and his followers (Caliphs), the religion was spread and adopted among numerous peoples and tribes extending over huge territories. In the period mentioned above, the Armenian highland was one part of the vast Arab Caliphate, while some of the Armenian Principalities periodically were either successful in gaining independence from the Caliphate or brought back into its confines.

One of the most important novelties of the time was the introduction by Islam and its Prophet Mohammed of a new mechanism of organization of society called Ummah, which was an unprecedented phenomenon for Arabia. In other words, the existing model of tribal and kinship organization was contradicted by a new system constructed around the axes of monotheism (Tauhid) according to which the world, instead of former "Banu of these" and "Banu of those" division, now consists of Dar Al-Islam and Dar Al-Harb, Muslims and non-Muslims.

From this point of view, the Arab (Muslim)-Armenian relations personify an interesting experience since the unique societal structure of Armenia (the country was ruled by Principalities and the cavalry of a significant number possessed by them; there were also peasants, namely, rank-and-file people) found its reflection in these relations as well.

Islam worked out a system of agreements and contracts (Ahd, Sulh. Akd, Aman) which once being signed between Muslims and non-Muslims would give the latter the opportunity to act in the status of the protected (Ahl al-Dhimma) as one part of the Ummah, in the meantime benefiting from and obeying the obligations and responsibilities specified by the status.

Armenians and Arabs (Muslims) signed such contracts still during their first contacts. Different sources. mainly Armenian though, mention that the Armenian Patriarch of Jerusalem received the first contract of this kind personally from Prophet Mohammed (this information has not been corroborated by other reliable sources yet). However. Armenian and Arabic written sources contain other references to such

contracts: more specifically, after having invaded Armenia in 654, Habib Ibn Maslama signed contracts with land owners including the population of the town of Dvin (Dabil): another example is Catholicos Sahak's letter to the Viceroy of Arminia Muhammad Ibn Mrvan (693-709).

The study of the contracts shows that the agreement between Armenians and Arabs could be reached at the initiative of both sides. These contracts with the main part of their content, which was stipulating the freedom of Christians to practice their religion as well as immunity of their property, wealth, and lives, are identical with the contracts signed in other parts of the Caliphate. Differences refer to the issues of definition of the size of the land tax (Kharaj) and poll tax (Djizya). According to Armenian chronicler Ghevond, before the period of the Abbasids rule in Armenia, Djizya was levied as a household instead of a poll tax which is a unique phenomenon. Another important circumstance was that on the one hand Armenians were in the status of Dhimmis, on the other hand, however, the Armenian principality families were benefiting from the right of keeping their cavalries. Moreover, they were participating in the military operations of the Caliphate and had their share of booty as was the case with Ashot Bagratuni mentioned by chronicler Ghevond.

This situation can be described as a local reflection of the "elite (Khassa) and rank-and-file people (Ama)" relations existing within the broader societal system of the Caliphate; this is to say, the Armenian principality families could be perceived as Khassa, while the system of obligations and responsibilities applicable to Dhimmis was mandatory for the Ama, namely, peasants, merchants and others. Therefore, an inference could be made that during the Arab rule the Armenian population succeeded as much as possible in adjusting itself to the new realities it had to face.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեբեոս, Պատմություն, աշխարհաբար թարգմ., առաջաբան և ծանոթագրությունները Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Եր., 2005, էջ 203:
2. Большаков О., История Халифата: эпоха великих завоеваний (633-656), т. 2, М., 1993, с. 56.
3. Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1976, էջ 305:
4. Ղևոնդ, Պատմություն, աշխարհաբար թարգմ., առաջաբան և ծանոթագրությունները Ա. Տեր–Ղևոնդյանի, Եր., 1982, էջ 23-23:
5. Լեո, նշվ. աշխ., հ. 2, էջ 309:
6. Հայերի և արաբների (մուսուլմանների) միջև նման պայմանագրեր կնքվել են դեռ առաջին շփումների ժամանակ: Տարբերի աղբյուրներում, հիմնականում հայկական, նշվում է, որ առաջին նմանատիպ պայմանագիրը Երուսաղեմի Հայոց պատրիարքը ստացել անձամբ Մուհամմադ մարգարեից: Այս հարցի վերաբերյալ տե՛ս

Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Եր., ինչպես նաև Մկրտումյան Գ., Մուհամմադ մարգարեին վերագրվող արտոնագրերի հարցի շուրջ. Արևելագիտության հարցեր. հ. 4. Եր., 2001:

7 Տեր-Ղևոնդյան Ա., Հայ նախարարների հողատիրական իրավունքները VII-IX դարերում ըստ Խալիֆայության պայմանագրերի. Հոդվածների ժողովածու. Եր., 2003. էջ 295; Լեո, նշվ. աշխ.. հ. 2. էջ 309-310:

8. Ղևոնդ, Հայոց իշխանները արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Հոդվածների ժողովածու, Եր., 2003. էջ 105:

9. Tarikh al-umam wa al-mamluk li abu jafar muhamad bn jarir at-Tabari. bairut. 1967/1387, h. 4, էջ 162.

10. Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 35-36:

11. Սեբեոս, նշվ. աշխ., էջ 263:

12. Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ. , էջ 92-105:

13. Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 95 և հղում 98, էջ 157:

14. Սեբեոս, նշվ. աշխ., էջ 275: Ա. Տեր–Ղևոնդյանը նշում է, որ Խալիֆայից է ստացել, ինչը այդքան էլ միանշանակ չի երևում աղբյուրի տեքստից: Տե՛ս Տեր–Ղևոնդյան Ա., Հայոց իշխան տիտղոսի ծագումը և հայոց տերությունը VII դարում, Հոդվածների ժողովածու. Եր., 2003, էջ 194:

15. Ղևոնդ, նշվ. աշխ., էջ 96:

16. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, թարգ., առաջաբան և ծանոթ. Վ. Հ. Վարդանյանի, Եր., 2000, էջ 172:

17. Այս տվյալները հիշատակված են Իբն Խալդունի Մուկկադիմայում, որից օգտվել է Հ. Նալբանդյանը: Տե՛ս Նալբանդյան Հ., Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների» , № 2, Եր., 1954, էջ 73-84:

ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԻԼՎԱ
(ԵՊՀ)

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՌՈՒՄԻԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ («ՄԱՏՅԱՆ», «ՄԱՍՆԱՎԻ[1]»)

Գաղտնիք չէ. որ դարեր ի վեր, Նարեկացու «Մատյանը» հայ ժողովրդի կողմից դիտվել և պաշտվել է որպես Սուրբ Գիրք: Ավելին, ժողովրդի համար այնքան սիրելի ու հրաշքներ գործող «Նարեկը» երբեմն նույնիսկ Աստվածաշնչին է փոխարինել: Գաղտնիք չէ նաև այն, որ Նարեկացու «Մատյանը» կրել է «աղոթքների գիրք», «աղոթքների մատյան» անվանումները, և նրանում աստվածաշնչյան թեմաներ, մոտիվներ ու ոճական ձևեր հայտնաբերելը ամենևին էլ ջանքեր չի պահանջում: Անդրադառնալով Ռումիի «Մասնավիին»՝ պետք է նշել, որ այն «բոլոր ժամանակների խոշորագույն հոգևոր ստեղծագործությունն է»[2]: Իր իսկ՝ հեղինակի բնորոշմամբ այն «Աստվածային Մասնավի գիրքն»[3] է:

مثنوی ما دکان وحدت است   غیر واحد هرچه بینی آن بت است[4]

Մեր Մասնավին միաստվածության շտեմարան է,
Բացի Աստծուց ինչ-որ տեսնես այնտեղ, դա անիրական է:

Այս կապակցությամբ, ամենից ուշագրավ գնահատականը տալիս է 15-րդ դարի բանաստեղծ Աբդ-օլ-Ռահման Ջամին.

مثنوی مولوی معنوی   هست قرآن به زبان پهلوی[5]

Մոլավիի[6] հոգևոր Մասնավին,
Հենց Ղուրանն է պարսից լեզվով:

Երկու պոեմներն էլ հագեցած են սուրբգրային աղբյուրների թեմաներով և պատկերներով, սակայն նրանցից յուրաքանչյուրը դա կատարել է յուրովի ու ինքնատիպ: «Մասնավիում» տեղ են գտել Ղուրանի և իսլամական սրբերի ու իմամների խոսքերը, հադիսներն ու մանրապատումները, ինչպես նաև Մարգարեների ու երկնային սրբերի

խոսքերն ու նրանց մասին հայտնի ավանդապատումները, որոնց Ռումին նոր շունչ ու ոգի է հաղորդել։ Միևնույն ժամանակ «Մասնավի»-ի սովորական ընթերցողն առաջին հայացքից կարող է ենթադրել, որ նման մի ստեղծագործություն, որը ծայրից ծայր լի է զանազան պատմվածքներով ու առակներով, չի կարող հոգևոր ու աստվածային լինել։ Սակայն Ղուրանին ու «Մասնավիին» ծանոթ ընթերցողն, անշուշտ, կռահում է երկու գրքերի միջև եղած աղերսները, որոնք «Մասնավիում» հաճախ հանդես են եկել ոչ թե ուղղակի մեջբերված, այլ վերապատմված առակների ու պատմվածքների տեսքով։

Ինչ վերաբերում է Նարեկացու «Մատյանին», ապա պետք է նշել, որ ի տարբերություն Ռումիի «Մասնավիի», այստեղ առավել ակնհայտ են սուրբգրային թեմաներն ու անժխտելի են սաղմոսների հետ ունեցած աղերսները։ Ինչպես Ժ. Քալանթարյանն է նշում, «Թե՛ սաղմոսների, թե՛ Մատյանի հիմքում ընկած է խոստովանության ու աղոթքի ճանապարհով Աստծո ողորմածությանն արժանանալու գաղափարը։ Մեղքի խոստովանություն, զղջում ու ապաշխարանք, իրենց երկուսի համար էլ, դա հիմնական խնդիր է։ Անշուշտ, սաղմոսները տարաբնույթ են՝ գոհաբանական, փառաբանական, բայց և՝ ապաշխարանքի, զղջումի։ Մատյանը հիմնականում առնչվում է վերջին բնույթի սաղմոսների հետ»[7]։ Երկու հեղինակներն էլ ձգտում են կատարելագործման և «համաշնչապես» Աստծուն միանալու երջանկությանը, որը նրանց պոեզիայում ստանում է գեղարվեստական լուծում։ Այս առանձնահատկությունն է, որ բազում հավատացյալների դարեր շարունակ ստիպել է աստվածային զորություն տեսնել նշված երկու գործերում։

Անդրադառնալով քննարկվող պոեմների ոճական ու բանաստեղծական առանձնահատկություններին, ընդհանրացնելով «Մասնավիում» և «Մատյանում» առկա ղուրանյան և աստվածաշնչյան արձագանքները՝ մենք պայմանականորեն ընդհանրությունները դասակարգել ենք երկու խմբերի՝

1. Սուրբգրային խոսքի ուղղակի մեջբերում։

Նշված պոեմները հագեցած են սուրբգրային ուղղակի հիշատակումներով։ Հայտնի է, որ հայ միջնադարյան մատենագիրները հիմնականում խուսափել են Ղուրանին առնչվող թեմաները քննարկելիս ուղղակի մեջբերում կատարել, որպեսզի այն «չամրագրվի» ժողովրդի

գիտակցության մեջ. Իսկ այս դեպքում ամեն մեկը՝ և՛ Նարեկացին և՛ Ռումին, իրենց կրոնների ջատագովն են և շռայլորեն տարածում են իրենց Սուրբ գրքի գաղափարները: Բազմաթիվ խոհափիլիսոփայական, աստվածաբանական և նույնիսկ հոգեբանական մտքեր արտահայտելիս նրանց օգնել են Սուրբ գրքերի խորիմաստ աֆորիզմները, որոնք մեջբերված են առանց սեփական միջամտության:

Օրինակ՝ Նարեկացու «Մատյանում» կարդում ենք հետևյալը.

Քանզի զիա՞րդ արդեւք զշուք երջանկին
Ինձ դատապարտելոյս ճմանեցուցից՝ ասել ընդ նմին.
Թէ՝ Ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ[8]:

Դժվար չէ նկատել՝ վերջին տողում նշված «Ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ» արտահայտությունը ուղղակիորեն մեջ է բերվել Դավթի սաղմոսների գրքից, որտեղ նշված է. «Ծուռ սիրտ ունեցողն ինձ չմոտեցավ, անզգամն ինձնից խոտորվեց, բայց ես հոգ չարեցի»[9]:

Մի այլ տեղ Նարեկացին գրում է.

Յորժամ սիրույն աստուծոյ ի բոլոր սրտէ
Զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի,
Թէ՝ Մեղաք մեք ընդ հարս մեր, անօրինեցաք եւ յանցեաք,-
Եւ որ ի վախճանն յանգի սաղմոս՝
Իրաւամբք առ իս, քան առ Իսրայէլ[10]:

Այս օրինակը նույնպես Դավթի «Սաղմոսների» հետևյալ մտքի արձագանքն է՝ «Մենք մեր հայրերի հետ մեղանչեցինք, անօրենություն և հանցանք գործեցինք»[11]:

Ռումի՝

صورت از بی صورتی آمد برون باز شد که إنا إلیه راجعون
12

پس ترا هر لحظه مرگ و رجعتیست مصطفی فرمود: دنیا ساعتیست
13

Ձևը անձևությունից դուրս եկավ,
Բացահայտվեց այն, որ «դեպի Նա ենք վերադառնալու»[14]
Ուրեմն քեզ ամեն վայրկյան մահն ու վերածնունդն են սպասում,
Մարգարեն ասել է. «կյանքը մի ժամ է»:

Այս չորս տողերից յուրաքանչյուրը պարունակում է ղուրանյան որևէ արտահայտություն: Առաջինը՝ «անձև աշխարհ» պատկերը. հուշում է աշխարհի արարման ընթացքը: Ըստ Աստվածաշնչի և ըստ Ղուրանի՝ «Աստված աշխարհը ստեղծեց ոչնչից». գաղափար, որը մերձեցնում է Աստվածաշունչը և Ղուրանը: Երկրորդ մեսրան (տողը) "انا إليهِ راجعُون" «դեպի Աստված վերադառնալու» գաղափարն է. որը բառացիորեն մեջ է բերվել Ղուրանի Ալ-Բաղարա սուրայի 156-րդ այաթից: Սա և նրան հաջորդող մտքերը արտահայտում են մարդու «վերածննդի» գաղափարը: «Վերածնության» սուրբգրային միտքը բազմիցս կրկնվում է Ռումիի պոեզիայում: Իսկ քառյակի վերջին՝ ավարտական խոսքը ողջ բանաստեղծության թանձրույթն է՝ «կյանքը մի ժամ է», հիշատակում է Մարգարեի հայտնի հադիսի ընդամենը մի մասը, որի ամբողջական տեքստը հետևյալն է. "الدنيا ساعه فاجعلها طاعه", «Հովտային այս կյանքը մի ժամ է միայն, ուրեմն շտապի՛ր ապաշխարել»[15]: Ռումին ցանկացել է Մարգարեի խոսքերով հորդորել նրանց, որ այս կարճատև կյանքում պետք է ապաշխարեն: Սա բազմաբովանդակ ու դիպուկ քառատող է, որտեղ սեղմ ձևով արտահայտվել են կրոնա-փիլիսոփայական գաղափարներ: Այս ամենն անցնում է Ռումիի միստիկական էության միջով և մեզ է ներկայանում գեղարվեստական պատկերներով և այլաբանությամբ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ և՛ Նարեկացու, և՛ Ռումիի պոեզիայում սուրբգրային նյութը նրանց գրչի ներքո հանգավորվել և միահյուսվել է ողջ ստեղծագործության ոճական ու բանաստեղծական կառույցին:

2. Սուրբգրային խոսքի պատկերային համակարգի ազդեցությունը

Նարեկացու ստեղծագործության ոգին Աստվածաշունչն է՝ բիբլիական շունչը: «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստծոյ» արտահայտությամբ սկսվում է պոեմի ամեն մի գլուխը և անմիջապես աչքի է զարնում սաղմոսների ոճը՝ այն ոգեշունչ ու ջերմեռանդ խոսքերը, որոնք պետք է հասնեն Աստծուն, արձագանք գտնեն երկնային ոլորտներում: Նարեկացու ողջ գիտակցությունը ձևավորված է Սուրբ Գրքի հիման վրա, որը և ստեղծում է նրա պատկերային համակարգը: Հոգևոր գրականության պատմության մեջ այն կատարելատիպ է և դարեր շարունակ չափանիշ է եղել «հետնարեկյան սերունդների» համար:

Օրինակ՝ Քանզի եւ ի դէմս Հոգւոյն Սբբոյ այս են աղաչանք,

Նախընծայ սկզբան պատարագին.
Յորում գառնդ երկնաւոր զենանի. զայս աղաւթեցի[16]:

Այստեղ նշված «Յորում գառնդ երկնաւոր զենանի. զայս սղաւթեցի» արտահայտությունը Նոր կտակարանի «Հովհաննեսի Հայտնության» 49-50-րդ տողերի արձագանքն է, որտեղ ասվում է. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան: Այս է երկնքից իջած հացը, որպեսզի, ով որ սրանից ուտի չմեռնի»[17]:

Մի այլ օրինակ՝ «Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանին՝ կենաց կանոնին ասել Աղոնայի տէր, եւ զհրամայեալ պատուէրդ ոչ առնել: Որ ինձէն իսկ զիս՝ զոսկեղէն տախտակս խաւսուն. նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ աստուծոյ, եղծի, որ եւ խորտակեյն է իրաւացի, եւ ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ»[18]:

Այստեղ քողարկված է կտակաբանային թեման: Երրորդ տողում՝ «ասեմ «Աղոնայի Տեր, բայց չկատարեմ պատվիրանը քո» արտահայտությունը Նոր Կտակարանի Ղուկաս ավետարանչի խոսքերն են. «Ինչո՞ւ ինձ «Տե՛ր, Տե՛ր» եք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չեք անում»[19]:

Իսկ բանաստեղծության վերջին տողերում նշված «Քո մատով գրված ու սուրբ պատգամիդ նվիրված ոսկյա տախտակս խոսուն» արտահայտությունը արտացոլում է Հին Կտակարանը, որտեղ ասվում է. «Երբ Աստված Սինա լերան վրա ավարտեց իր խոսքը, Մովսեսին տվեց վկայության երկու տախտակները՝ Աստծու մատով գրված քարե տախտակները»[20]: Հետաքրքիր է, որ Մուհամմադ Մարգարեն «կրկնել» է այդ թեման՝ ներկայացնելով Թուր լեռան վրա Մովսեսի և Աստծու հանդիպումը:

Նշենք այն, որ Աստվածաշունչն ու սաղմոսները, Ղուրանն ու հադիսները ունեն իրենց հատուկ մեկնությունները՝ (հուն. exegesis), սակայն այդ ամենն այսօր դուրս է մեր առջև դրված խնդրի սահմաններից:

Ռումիի մանրապատումները միայն առաջին հայացքից են աշխարհիկ: Իրականում «Մասնավին» մի մոնումենտալ այլաբանություն է, որը Ռումիի միստիկական գաղափարների արտահայտությունն է: ԵՎ՝ Նարեկացին, և՝ Ռումին ձգտում են Աստծուն: Հաճախ, երբ հեղինակն իր խոսքը Աստծուն է ուղղում, Նրա հետ երկխոսության մեջ է մտնում, սակայն

աներկբայորեն մնում է հոգևոր սահմանների մեջ: Շատ հաճախ էլ ընդհանրացնելով դուրանյան որևէ մի միտք, նույն պատկերավորությամբ, սակայն սեփական խոսքով այն փոխանցում է ընթերցողին:

آدم خاکی ز حق آموخت علم   تا به هفتم آسمان افروخت علم[21]

Հողածին մարդն Աստծուց սովորեց գիտությունը,
Որը յոթերորդ երկնքում էլ լույս տվեց:

Այս տողերը մեզ հիշեցնում են Ղուրանի Ալ-Ալաղ սուրահում ասված հետևյալ տողերը. «Ընթերցի՛ր, քանզի քո արարիչը, ողորմած է: Նա, ով փետրագրչով ուսուցանեց: Նա սովորեցրեց մարդուն այն, ինչ չգիտեր»[22]: Ինչպես նկատում ենք, հեղինակը վերցրել է Ղուրանում արծարծված այն միտքը, համաձայն որի Աստված ի սկզբանե մարդուն հորդորել է սովորել ու գիտելիքներ ձեռք բերել: Իսկ բանաստեղծության հաջորդ տողում նշված «յոթերորդ երկնքի» պատկերացումը իսլամական դիցաբանության արտահայտությունն է: Համաձայն Ղուրանի «Աստված երկրի վրա գոյություն ունեցող ամեն բան բարիքներից ստեղծեց ձեզ համար, այնուհետև երկնքին անդրադարձավ և այն որպես յոթ երկինքներ կարգավորեց, և Նա ամենայն ինչից տեղյակ է»[23]: Դարձյալ ղուրանյան խոսքերն ու գաղափարները Ռումիի գրչի ու նրա բանաստեղծական ձիրքի միջոցով ձևափոխվել ու պոետիկական տեսք են ստացել: Այսպիսով, սուրբ գրքերի մոտիվները կազմում են Նարեկացու և Ռումիի գաղափարական հիմքը և ձևավորվում են նրանց ստեղծագործության պոետիկական:

SILVA ALLAHVERDIAN
(YSU)

ON THE PROBLEM OF REFLECTIONS OF HOLY SCRIPTURES IN THE POETRY OF MOLANA'S ("MASNAVI MANAVI") AND OF GRIGOR OF NAREK ("BOOK OF LAMENTATIONS")

Observing on the two poets works, "Masnavai Manavi" of Molana and "Book of lamentations" of Naregatsi, we went into their deep thoughts and ideologies, and found many interesting and hidden points in their conclusions and the world of their greatest thoughts. Both of them tried to reach the same aim in the different ways. Their both

poetry is deeply mystical and based on Bible and Quran and is penetrated with images. themes and realities of sacred history, distinguished with intimate, personal character. The goal of both is the same, although the religions are different. The similarities of the points of their views are clear, but among the similarities they have also differences. Here by we try to concentrate on one of the most important and the most interesting similarities that is the influence of Holly Books, Quran and Bible on their famous works "Masnavni" and "Book of Lamentations". We have mentioned this influences in two ways: 1- direct use of the words of Bible and Quran, and 2- hidden use, in the shape of metaphors. We explain each part by using famous examples of two works.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժանրային ձև, որը հանգավորվում է aa, bb, cc,…: «Մասնավի Մաանավի» առեղծվածների գաղտնազերծում:
2. Ռումիի թուրքերեն անվանումն է, որը նշանակում է Տեր:
3. Զարինքուբ Ա., Սերենեյ, Թեհրան, 1383, էջ 12:
4. Ջալալ Էդդին Մուհամադ Բալխի Ռումի, Մասնավիե Մանավի, Թեհրան, 1990, երրորդ գիրք, էջ 19:
5. Ռումի, նշվ. աշխ., առաջին գիրք, 778:
6. Աբդ-օլ-Ռահման Ջամի, Շարհե ահվալ վա ասրար, Թեհրան,1320, էջ 87:
7. Քալանթարյան Ժ., Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի և սաղմոսների առնչությունները», Ս. Էջմիածին, 1997, էջ 26:
8. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Եր., 1983, Բան ԿԱ-ա:
9. Աստուածաշունչ, Մատեան հին եւ նոր կտակարանների, արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Ս. Էջմիածին, 1994, Սղ. 100.4:
10. Նարեկացի, նույն տեղում:
11. Աստուածաշունչ, Սղ. 105.6:
12. Ղուրան, Էդվարդ Հախվերդյանի թարգմանությամբ, Եր., 2006, 20, 156:
13. Ռումի, նշվ. աշխ., առաջին գիրք, 1140-1142:
14. Ղուրան, նույն տեղում:
15. Ֆորուզան Ֆար, Բադի օլ Զաման, Ահադիսե Մասնավի, Թեհրան, 1344, էջ 31:
16. Նարեկացի, Մատյան ողբերգության, Բան ԼԳ-ե:
17. Աստուածաշունչ, Նոր Կտակարան, Հե 6.49-50:
18. Նարեկացի, Մատյան ողբերգության, Բան ԼԴ-ժ:
19. Աստուածաշունչ, Նոր կտակարան, Ղկ 6.46:
20. Աստուածաշունչ, Հին կտակարան, Ելք 31-18:
21. Ռումի, Մասնավիե Մանավի, առաջին գիրք, 1021:
22. Ղուրան, 96, 4, 5:
23. Ղուրան, 1, 29:

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
(ԵԳՀ)

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ, ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արաբական առաջին քերականական աշխատության՝ *al-Kitāb-ի (VII դար)* շրջանակներում հեղինակի կողմից իրականացված լեզվաբանական նկարագրությունների և վերլուծությունների հիմքը գործոնների տեսությունն է, որի կիրառումն *al-Kitāb*-ում համակարգված բնույթ չէր կրում: Մի քանի դար անց՝ XI դ., գործոնների տեսությունն առավել համակարգված ձևով մշակվեց ալ-Ջուրջանիի կողմից, որն իր ամբողջական տեսքով ներկայացված է *Al-ʻawāmil al-miʼa fi-n-naḥw* աշխատության մեջ: Այստեղ հեղինակը ներկայացնում է քերականական գործոնների իր կողմից առաջարկվող դասակարգումը, որպես *an-naḥw-ի ուսումնասիրության հիմնական սկզբունք: Այսպիսով, գործոնների տեսությունը արաբերեն նախադասությունը կազմող բառային միավորների թեքական գործածությունների մեկնաբանության հիմնական աղբյուրն է. որի գործառությունը արաբական լեզվաբանական ավանդույթում պայմանավորված է հունական տրամաբանական համակարգերի և քերականական դպրոցների թողած զգալի ազդեցությամբ*: Արդյունքում *գործոնների տեսության* վրա հիմնված արաբական քերականական *an-naḥw* բաժինը լեզվում առկա քերականական դրույթները վերլուծում է փիլիսոփայական դետերմինիզմի հիմքը կազմող պատճառականության դիրքերից՝ ամեն մի կոնկրետ քերականական դրույթ մեկնաբանելով համաձայն՝ *յուրաքանչյուր երևույթ հետևանք է կոնկրետ պատճառի* սկզբունքի: Յուրաքանչյուր գործոն և ներգործված անդամ արաբ քերականները ներկայացնում են երկու զույգ տերմիններով՝ *al-ʻāmil* [*ներգործող միավոր*] - *al-maʻmūl* [*ներգործված միավոր*] և *al-ʻilla* [*պատճառ*] – *al-maʻlūl* [*հետևանք*]՝ գնահատելով առաջին զույգն իբրև քերականական կատեգորիա. իսկ երկրորդը՝ փիլիսոփայական կամ տրամաբանական.

"*Al-ʿāmil maʿa l-maʿamūl ka-l-ʿilla al-ʿaqliyya maʿa l-maʿalūl*" [Ներգործող և ներգործվող միավորները *միմյանց հետ գտնվում են այնպիսի հարաբերությունների մեջ, որոնք առկա են տրամաբանական պատճառի ու հետևանքի միջև*]: Վերոնշյալով է պայմանավորված գործոնների տեսության ուսումնասիրության հանդեպ մշտապես գոյություն ունեցող հետաքրքրությունն ու անհրաժեշտությունը:

Այն հանգամանքը, որ արաբական լեզվաբանական ավանդույթն իր ուսումնասիրություններում լայնորեն կիրառում է փիլիսոփայական գործոնը ամենևին էլ չի նշանակում, որ նշյալ ավանդույթի շրջանակներում այն միակն է: Դեռ ավելին, ժամանակագրական առումով առաջինն է համարվում այսպես կոչված *ʿāmil lugawi* [*լեզվական գործոն*]: Ձայնավոր հնչյունները նշանակող նշանների՝ *al-harkāt*, տառերի՝ *al-hurūf*, բառերի՝ *al-kalimāt* միջև եղած փոխհարաբերություններով պայմանավորված լեզվական տարբեր մակարդակների պատկանող միավորների կրած փոփոխությունները արաբական լեզվաբանական ավանդույթում հայտնի է *ʿāmil lugawi* լեզվական գործոն եզրով: Սույն տեսությունը ժամանակագրական առումով լինելով առաջինը՝ սկզբնապես կիրառվել է Խալիլի *Kitāb al-ʿayn* աշխատության մեջ, որը շուտով իր տեղը զիջեց հելլենիստական ժառանգությունից վերցված *փիլիսոփայական գործոնին*: Այն առավել կենսական է հնչյունաբանական ուսումնասիրությունների շրջանակներում: Իսկ շարահյուսական ուսումնասիրություններում արաբական լեզվաբանական ավանդույթն այն իբրև ուսումնասիրության հիմնական մեթոդական տեսական հիմք չի ընդունում:

Արաբական լեզվաբանական ավանդույթում առավել քիչ գործածություն, սակայն ոչ պակաս հետաքրքրական է *աստվածային գործոնը*՝ *ʿāmil tauqīfī* կամ *ʿāmil ẓāhirī*.

Աստվածային գործոնների տեսության հիմնադիրն է համարվում Իբն Մադա ալ-Կուրտուբին, ում "*Ar-rad ʿalā an-nuhhāt*" [Պատասխան քերականներին] աշխատությունը մի ծավալուն փորձ է հիմնավորելու այն հիպոթեզը, որ իրական կյանքից բացի լեզվում ևս, յուրաքանչյուր գործոն ունի աստվածային ծագում և բացատրելի է միայն Աստծո գոյությամբ և արարչագործությամբ. "*Fa-ʾidā kānati-l-luġa min ʿind al-lah fa-hiya min xalqihi, wa huwa qādir ʿalā ʾan yaǧʿalahā mundu-l-bidāya kāmila, min ḥayṯ bināʾihā, wa ʾiʿrābihā... fa-kull mā lahā min xaṣāʾiṣ*

wa 'ahwāl 'innamā huwa min i'li-l-lahi wa mašī'atihi"[3] *[եթե լեզուն Աստծուց է. ապա այն Նրա արարումներից է. և Նա ի զորու է այն ի սկզբանե ամբողջական արարել հաշվի առնելով [լեզվական միավորների] թերման համակարգը. Նրա բոլոր առանձնահատկությունները և քերականական վերջավորությունները պայմանավորված են Նրա կամքով և ներազդեցությամբ*]:

Իբն Կույտուբին մինևնույն երևույթը բացատրում է հետևյալ կերպ. "*Limāḏā rufi'a al-fā'il? Kaḏa naṭaqat bihi al-'Arab wa-qad tabata dalika bi-l-istiqrā' min kalām al - mutawātir*"[4] [*Ինչու՞ է գործողության կատարողի շարահյուսական դիրքն իրացվում raf' [բառափոխական] ձևով: Այդպես են խոսել Արաբները [բեդվինները]. ինչը հաստատվում է վստահելի խոսքի ուսումնասիրությամբ*]: Անդրադառնալով նույն խնդրին. Իբն Ջիննին նշում է. "*...Al-'amal min an-naṣb wa-r-raf' wa-l-ǧārr wa-l-ǧazm innamā li-l-mutakallim nafsihi wa-lā šay' ġayruhu*"[5] *[An-naṣb, ar-raf' և al-ǧārr բառափոխական ձևերի գործածողը խոսողն ինքն է և ոչինչ բացի իրենից]*. Ժամանակակից տարբեր արաբ քերականներ փորձում են հիմնավորել. որ սխալ է Իբն Ջիննիի կողմից գործոնի նմանատիպ մեկնաբանությունը նույնացնել աստվածային գործոնի հետ՝ ապացուցելով. որ խոսքը փիլիսոփայական գործոնի մասին է: Մեր համոզմամբ. այն ևս աստվածային գործոնի մասնակի հաստատում է. քանի որ համաձայն գործոնների այս տեսության, խոսողի գործոն լինելու փաստն արդեն իսկ պայմանավորված է Աստծո գոյությամբ և կամքով, իսկ ամեն ինչի սկիզբն ու պատճառն Աստված է: Լեզվի քերականական ուսումնասիրման այս մեթոդն արաբներն անվանել են ***al-manhaǧ at-tauqīfī*** կամ էլ ***al-manhaǧ aẓ-ẓāhirī***.

Կարծում ենք. որ աստվածային գործոնների տեսությունը կարող է բավական արդյունավետորեն օգտագործվել լեզվաբանական ուսումնասիրություններում, քանի որ վերջինս ներկայացնում է լեզվի քերականական վերլուծության ոչ միայն աստվածային տեսանկյունը, այլ նաև հոգեբանականը. որը լեզվաբանների կողմից մինչ օրս անտեսված է որպես այդպիսին: Դիցուք՝ ամեն մի փոփոխության նախապատճառ ընդունելով "Աստծո ներազդեցության և կամքի" սկզբունքը. այս տեսության համատեքստում իրենց ակտուալությունը կորցնում են այնպիսի հիմնարար հասկացություններ. ինչպիսիք են *'āmil* [*falsafī*]. *taqdīr* և *ta'wīl* [մեկնաբանում] հասկացությունները. որոնց

ներմուծումը ռասամնասիրության ոլորտ պայմանավորված է անմիջականորեն փիլիսոփայական պատճառ-գործոնի առկայությամբ: Արդյունքում. եթե taqdīr հասկացությունը փիլիսոփայական գործոնի տեսության դիրքերից մեկնաբանվում է իբրև այլված կառավարույթի մտքային վերականգնում շնորհիվ կառավարող միավորի կառավարման և իմաստային առանձնահատկությունների. ապա աստվածային գործոնի տեսության համատեքստում *taqdīr* հասկացությունը կոմպենսացվում է հետևյալ դրույթով. “լեզուն մտքերի թարգմանիչն է. և նախադասության մասերի (հատվածների) շարադասությունը համապատասխանում է համապատասխան մտքի պատկերին. և երբ նախադասության մեջ սլվում է դրա մասերից որևէ մեկը. ապա իմաստը վերականգնվում է ոչ թե ըստ ենթադրության՝ *taqdīr*-ի. այլ մտապատկերում պահպանված իր զույգի[6]”:

Գնահատելով *taqdīr*-ի վերաբերյալ ներկայացրած մոտեցումները. կարծում ենք լեզվաբանորեն առավել ընդունելի կարող է համարվել վերը ներկայացված մոտեցումներից երկրորդը. քանի որ միշտ չէ. որ հնարավոր է վերականգնել խոսքից այս կամ այն պատճառով սղված միավորը՝ հիմք ընդունելով կառավարողի դրսևորած քերականական առանձնահատկությունները, մինչդեռ համատեքստի առկայության դեպքում այն առավել դյուրին է և հավանական ճշմարիտ:

Ամփոփելով՝ կցանկանայինք նշել. որ չնայած այն հանգամանքին, որ քերականական կառավարման վերոնշյալ տեսությունները արաբական լեզվաբանական ավանդույթում ներկայացված են բացարձակապես առանձնաբար, նույնիսկ հակադրաբար, դրանք միմյանց հետ կապված են մի շատ օրգանական կապով. և այդ կապը փիլիսոփայական *պատճառականությունն* է՝ հակադրվելով միմյանց պատճառի՝ իրենց սեփական ընկալմամբ: Արդյունքում ստացվում է, որ ինչպես *աստվածային*, այնպես էլ *լեզվական* գործոնները փիլիսոփայական գործոնի մասնակի դրսևորումներ են, քանի որ թե աստվածային. թե լեզվական. և թե փիլիսոփայական գործոնների քերականական տեսություններում իբրև հիմնային կատեգորիա հանդես է գալիս *պատճառը*. որը մի դեպքում ներկայացված է աստվածայինով. մյուս դեպքում լեզվական ձևերով. իսկ հաջորդում՝ նույն փիլիսոփայական պատճառի տեսքով: Պատճառի նշյալ իրացումներով էլ պայմանավորված են այս երեք տեսությունների տարբերությունները:

Փաստորեն ստացվում է, որ նշյալ երեք տեսությունները համալրում են մեկ ամբողջական գործոնների քերականական տեսությունը, որում հետազոտվող ենթատեսությունները ներկայացնում են լեզվի ուսումնասիրության համապատասխանաբար տրամաբանական, լեզվաբանական և հոգեբանական շերտերը և կոչված են լրացնելու միմյանց:

HRAYR AGHABABYAN
(YGU)

THE LOGICAL, LINGUAL AND PSYCHOLOGICAL LAYERS IN THE SYSTEM OF GRAMMATICAL GOVERNMENT

Arabic grammatical tradition uses several theories to explain the grammatical features of the Arabic language. The theory of philosophical factors is the most used one by Arab grammarians. But there two more theories, that of lingual factors and deific factors. The theory of lingual factors uses the relationships between phonemes and grammatical patterns to explain the grammatical changes in Arabic. The theory of deific factors is very interesting. It explains all the grammatical features by the reason of God's existence and his will. Actually all these theories present different layers of linguistic researches such as logical, lingual and psychological which are based mainly on the theory of grammatical government and differ from each other basically in choosing the reason of the grammatical influences, therefore forming a big mega-theory of grammatical government.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. as-Suyūṭī, Al-ašbāh wa-n-naẓā'ir, Haydar 'Abād, dūna tārīh, էջ 256:
2. Ներգործող և ներգործվող միավորների մասին տե՛ս Манукян М., Частречная иерархия лексических единиц в АЛТ в свете семантико-функциональго анализа и теории управления. Արևելագիտության հարցեր, VI, 380, Եր., 2006, էջ 205:
3. Mahdī al –Maḫzūmī, Madrasatu- l-kūfa wa manhağuhā fī dirāsati-l-luġa wa-n-naḥw, Bayrūt, 1986, էջ 266:
4. Ibn Maḍā' al-Qurṭubī, Ar -rad 'alā n-nuḥhāt, al-Qāhira, 1947, էջ151:
5. Abī Fatḥ 'Uṯmān Ibn Ğinnī, al-Ḫaṣā'is, 1, al-Qāhira, 1913, էջ 110:
6. Ibn Maḍā' al-Qurṭubī, նշվ. աշխ., էջ 56:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄՄԱ
(ՌՀ(Մ)Հ)

ԹԵՔՎՈՂ / ՄՈՒ'ՐԱԲ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի'րաբ-ն իրացվում է ուղղական, հայցական, սեռական հոլովներով դրվող անվանումծների և ուղղական, հայցական, ջազմ հոլովներով դրվող բայաձևերի միջոցով: Հիշյալ լեզվական միավորները թեքվող /մու'րաբ են և ըստ նախադասության մեջ բառի դիրքի՝ լինում են մարֆու', մանսուբ, մաջրուր և մաջզում[1]: Մու'րաբ միավորներն ուղղական հոլովով դրվող անվանածներն են, ներկա ժամանակի չհայցականացված և չջազմավորված բայերը, հայցական հոլովով դրվող անվանածները, ներկա ժամանակի հայցականացված բայաձևերը, սեռական խղովով դրվող անվանածները և ներկա ժամանակի՝ ջազմ հոլովով դրվող բայերը[2]:

Արաբերենի լեզվաբանական ավանդույթում ի'րաբ-ի իրացումն ապահովող լեզվական միավորների հիմնական մասը թեքվում է *ցուցիչների*, մնացած մասը՝ *հարֆ-երի* միջոցով[3]: *Ցուցիչների*[4] միջոցով թեքվող մու'րաբ միավորները եզակի թվով անվանածներն են, ներքին կազմավորման հոգնակի անվանածները, արտաքին կազմավորման իգական հոգնակի անունները, ներկա ժամանակի՝ կցումից զերծ վերջավորությամբ բայաձևերը: Վերոնշյալ մու'րաբ միավորների հիմնական մասի ուղղականի ցուցիչը դամմա-ն է (կարճ *ու* ձայնավորի համարժեքը) «հայցականինը՝ ֆաթհա-ն (կարճ *ա* ձայնավորի համարժեքը), սեռականինը՝ քասրա-ն (կարճ *ի* ձայնավորի համարժեքը), ջազմ-ինը՝ սուքուն-ը (ձայնավորեցման դադարեցում): Ասվածից բացառվում են հետևյալ լեզվական միավորները.

1. ձևաբանորեն արգելափակված եզակի (օրինակ՝ 'ajmalu) և ներքին կազմավորման հոգնակի անունները (օրինակ՝ madaarisu), ոլոնք անորոշ վիճակում ուղղական հոլովում վերջավորվում են դամմա ցուցիչով, դրանք անորոշ վիճակում սեռականի են վերածվում քասրա-ին փոխարինող ֆաթհա-ով, իսկ որոշյալում սեռականի են վերածվում

քասրա-ով ստանալով եռահոլովություն (ինչ վերաբերում է խատուկ անուններին. ապա դրանք սովորաբար որոշիչ հող[5] չեն ստանում պահպանելով երկհոլովությունը[6]):

2. ներկա ժամանակի ձայնավորով վերջավորվող բայաձևերը դրանց ջազմ-ը իրացվում է սղմամբ/հազֆ-ով սուքուն-ի փոխարեն (օրինակ lam ansa):

3. արտաքին կազմավորման իգական հոգնակի անունները[7] (օրինակ mudarrisaatun). որոնք հայցականի են վերածվում ֆաթհա-ին փոխարինող քասրա-ով:

Արտաքին կազմավորման իգական հոգնակի անունների ի'րաբ-ով է իրացվում հետևյալ յոթ տեսակի անվանածների ի'րաբ-ը.

1. իգական անձնանունների հոգնակին (օրինակ՝ Zaynabaatun)

2. նկարագրական կառույցում նկարագրվողի դիրքում հանդես եկող անշունչ հոգնակի անվան որոշիչը /սիֆա-ն (օրինակ՝ qutubun jadiidaatun)

3. անշունչ փաղաքշական անունների հոգնակին (օրինակ՝ durayhimaatun)

4. 'ibnun անվան իգական սեռի ձևի ('ibnatun) հոգնակին (banaatun) «ðuu անվան իգական սեռի ձևի (ðaatun) հոգնակին (ðawaatun) և 'uwuluu հոգնակի անվան իգական սեռի ձևը ('wulaatun)»

5. թա' մարբուտա-ով վերջավորվող այտշ անունների հոգնակին (օրինակ՝ tilmiiðaatun)

6. իգականի ալիֆ մակսուրա-ով կամ մամդուդա-ով վերջավորվող անունների հոգնակին (օրինակ՝ hublaatun)

7. հնգատառ անունների հոգնակին (օրինակ՝ 'istablaatun. իսկ որոշ անունների հոգնակին էլ նշված կերպով կազմվում է միայն բարեհնչության նկատառումներով. օրինակ `ummahaatun):

Վերոհիշյալ հոգնակիի ի'րաբ-ի նմանությամբ է իրացվում նաև ուղղական հոլովում մեկ քասրա-ով վերջավորվող որոշ անձնանունների ի'րաբ-ը[8]:

Ցուցիչների փոխարեն *հարֆ-երով* թեքվող մու'րաբ միավորներ են երկակի թվով անվանածները[9] և դրանց նմանվող անունները. արտաքին կազմավորման արական հոգնակի և դրանց նմանվալ անվանածները. Հինգ անունները. Հինգ բայաձևերը:

Երկակի թվով անունների ուղղականը կազմվում է ալիֆ-ով (երկար *ա* ձայնավորի համարժեքը), հայցականը և սեռականը ֆաթհա-ով նախորդված սուքուն ցուցիչ կրող յա-ով (*յ* կիսաձայնի համարժեքը) (օրինակ bay taani-baytayni): Երկակիին նմանվող անուններն են.

1. qilaa. qiltaa[10] «'itnaani. 'itnataani. tintaani»

2. ինչպես և այսպես կոչված. երկակի թվով անձնանունները (օրինակ Zaydaani):

Արտաքին կազմության արական հոգնակի անունների[11] ուղղականը կազմվում է դամմա-ին փոխարինող ուաու հարֆով (երկար *ու* ձայնավորի համարժեքը), հայցականը և սեռականը՝ յա-ով (երկար *ի* ձայնավորի համարժեքը), որը փոխարինում է և' քասրա-ին, և' ֆաթհա-ին (օրինակ faadiluuna-faadiliina): Վերոնշյալ անվանաձևերում ֆաթհա ցուցիչ կրող նուն-ը (*ն* ձայնորդի համարժեքը), որը հաջորդում է ուաու-ին կամ յա-ին, փաստորեն փոխարինում է եզակի անվան մեջ առկա թանուին-ին[12]. Արտաքին կազմության արական հոգնակի կարող են լինել միայն.

1. արական անձնանունները, որոնց եզակին եռահոլով է և զերծ է իգականի թա-ից (*թ* բաղաձայնի համարժեքը) (օրինակ Haamidun-Haamiduuna)

2. արական շնչավոր ածականները, որոնց եզակին սովորաբար զերծ է լինում իգականի թա-ից և ընդհանուր է թե արական, թե՛ իգական սեռերի համար, կամ այն ածականները, որոնք դրված են գերադրական աստիճանով[13] (օրինակ՝ qaatibun-qaatibuuna, aqbaru-aqbaruuna):

Արականի կանոնավոր հոգնակիի ի՛րաբ-ով է իրացվում դրանց նմանվող հետևյալ 4 տեսակի անունների ի՛րաբ-ը.

1. հավաքական անունների հետևյալ հոգնակիները՝ ˈuwuluu «εaalamuuna» 20-90 թվականները

2. ներքին կազմավորման հետևյալ հոգնակիները՝ banuuna, harruuna «ˈaraduuna», «sinuuna»

3. որոշ անունների հոգնակիները, որոնք ո'չ արական շնչավոր անուն են, ո'չ ածական, օրինակ՝ «waabilun»

4. եզակի թվում արտաքին կազմավորման հոգնակիի նմանությամբ կազմված որոշ անուններ, օրինակ՝ εilliyyuuna:

Հինգ անունների[14] ուղղականը կազմվում է դամմա-ին փոխարինող ուաու հարֆ-ով, հայցականը՝ ֆաթհա-ին փոխարինող ալիֆ-ով,

սեռականը քասրա-ին փոխարինող յա-ով: Սրանց ի'րաբ-ը իրացվում է հետևյալ 4 պայմանների դեպքում.

1. պետք է դրվեն եզակի թվով (օրինակ ՝abun). երկակիի վերածվելու դեպքում կթեքվեն երկակիի ի'րաբ-ով (օրինակ ՝abawaani). արտաքին կազմության հոգնակի սեռական նմանությամբ կազմվելու դեպքում (օրինակ ՝abuuna) կթեքվեն վերջիններիս ի'րաբ-ով. իսկ ներքին կազմավորման հոգնակի անունների նմանությամբ հոգնակիացվելու դեպքում (օրինակ ՝ixwatun) կթեքվեն ի'րաբ-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով.

2. չպետք է լինեն փաղաքշական անուններ (օրինակ՝ ՝ubayyun). այս դեպքում ևս կթեքվեն անունների իարաբ-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով

3. պետք է լինեն մուդաֆ (օրինակ՝ ՝abuu Muhammadin). եթե դադարեն գտնվել գենետիվ կառույցի առաջին դիրքում (օրինակ՝ 'ibnu.l. ՝axi), ապա նրանց ի'րաբ-ը կիրացվի երեք հիմնական ցուցիչների միջոցով.

4. պետք է դրանց՝ որպես գենետիվ կառույցի առաջին դիրքում գտնվող անդամի /մուդաֆ-ի բաղադրիչը/ մուդաֆ իլեյհի-ն չլինի խոսողի յա (ի) կցական դերանունը (օրինակ hamii). այլապես ի'րաբ-ը կիրացվի խոսողի յա-ին նախորդող ենթադրյալ ցուցիչների միջոցով:

Հավելենք. որ Հինգ անուններից երեքի՝ ՝abun, ՝axun, hamun, ի'րաբ-ը երեք տեսակի է.

1. ուաու. ալիֆ. յա հարֆ-երով իրացվող ի'րաբ.

2. միայն ալիֆ-ով իրացվող ի'րաբ /ուղղական. հայցական. սեռական հոլովներում/.

3. անունների ի'րաբ-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով իրացվող ի'րաբ:

Եթե fuu[15] անունը վերափոխվում է famun-ի. ապա նրա ի'րաբը նույնպես իրացվում է երեք հիմնական ցուցիչների միջոցով. իսկ ծuu անվան ի'րաբ-ը չի իրացվում Հինգ անունների ի'րաբ-ով. եթե այն չի նշանակում տեր կամ ունեցող /saahibun/. իսկ եթե այն հաջորդող բաղադրիչի հետ կազմում է բաղադրյալ հատուկ անուն. ապա մաբնի /չթեքվող է (օրինակ՝ ծuu kaam):

Հինգ բայաձևերից յուրաքանչյուրը[16] ներկա ժամանակի այն բայն է. որին կցված է երկակիի ալիֆ-ը. հոգնակիի ուաու-ն կամ խոսակցի յա-ն

(օրինակ՝ tadrusiina, tadrusaani, yadrusaani, tadrusuuna, yadrusuuna): Վերոհիշյալ բայաձևերի ուղղականը կազմվում է դամմա-ին փոխարինող կայուն նուն-ով, հայցականը և ջազմ-ը՝ նուն-ի սղմամբ:

Այսպես, դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում ի՛րաբ-ի իրացումն ապահովող մու՛րաբ լեզվական միավորները 8 տեսակի են և թեքվում են *ցուցիչների* (4 տեսակի մու՛րաբ միավորներ) և *հարֆ-երի* (ևս 4 տեսակ) միջոցով:

EMMA KHACHATRYAN

(RA(S)U)

KINDS OF INFLECTING / MU'RAB LANGUAGE UNITS

"I'rab" forms from names in nominative, genitive and accusative cases and from verbs in nominative, genitive and "jasm" cases.

The above mentioned units are called "mu'rabs". They are those kinds of deflecting language units whose letter sound signs change depfending on the place of the word in the sentence.

In the linguistic tradition of classic arabic language "mu'rabs" are declined in two ways:

1.by *signs* /4 kinds/,

2. by *"harfs"* /4 kinds/.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաչատրյան Է., Ի՛րաբի շրջանակները դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում. Մերձավոր Արևելք. հոդվածների ժողովածու. IV, Եր., 2007, էջ 132-134:
2. Խաչատրյան Է., Ի՛րաբի տեսակները և ցուցիչները. Մերձավոր Արևելք. հոդվածների ժողովածու. V, Եր., 2008. էջ 186-191:
3. Հարֆ արաբերենում նշանակում է մասնիկ, բաղադրիչ: Արաբերենում բառի կառուցվածքային բաղադրիչները ոչ թե առանձին հնչույթներն են, այլ բաղաձայն ու ձայնավոր հնչույթների նվազագույն գործառական զուգակցությունները՝ հարֆ-երը: Գաբուչյան Հ. Մ., Կարաբեկյան Ս. Բ., Գրական արաբերենի գործառական քերականություն, Եր., 2003, էջ 8:
4. Նասրա Սաիդ. Թայսիր ալ-ի՛րաբ. Հալեպ. 1965. էջ 55-59 (արաբերեն):
5. Մուհամմադ Ալ-Անտաքի. Ալ-մինհաջ ֆի ալ-կառաւիդ ուա ալ-ի՛րաբ. Բեյրութ. 1975. էջ 184-185 (արաբերեն):

6 Շատ հատուկ անուններ, իրենց խորքում ունենալով որոշյալություն, հանդես են գալիս թանուին-ով, երբեմն էլ հատուկ անունների մի խումբ պահպանում է թանուին-ը որոշյալ վիճակի արտահայտման ժամանակ: Սանրամասն տե՛ս Գրանդե Բ. Մ. Արաբական քանասիրություն. Մոսկվա. 1990. (ռուսերեն):

7 Արտաքին կազմավորման իգական հոգնակին կազմվում է բառավերջում ալիֆ և թա հար:ի-երի ավելացմամբ: Եթե հիշյալ անվանաձևերում թա-ն արմատական տառ է (օրինակ banaatun) ապա հայցականը կազմվում է ֆաթհա-ով (այս դեպքում հոգնակին համարվում է ներքին կազմավորման հոգնակի): Տե՛ս Մուհամմադ Նուր Ալ-Դին Ալ-Տաուաշի. Քիթաբ ան-նահու ուա աս-սարֆ ուա ալ-իմլա. Դամասկոս. 2001. էջ 46 (արաբերեն):

8 Օրինակ Baraqaati. կախված այն բանից, թե ուղղական հոլովում հանդես է գալիս մեկ քասրա-ով, թանուին դամմա-ով, ըե մեկ դամմա-ով, ունենում է երեք տեսակի ի՛րաբ. ա. ուղղական, հայցական, սեռական հոլովներում քասրա-ն անփոփոխ է, բ. ուղղական, հայցական, սեռական հոլովները կազմվում են եռահոլով անունների ի՛րաբ-ի երեք հիմնական ցուցիչների միջոցով, գ. ուղղական, հայցական, սեռական հոլովները կազմվում են ձևաբանորեն արգելափակված անունների ի՛րաբ-ով: Տե՛ս Ալ-Սայյիդ Աիմադ Ալ-Հաշիմի. Ալ-կաուաիդ ալ- ասասիյյա լիլլուղաթի ւսլ-արաբիյա. Բեյրութ. հիջրայի 1354. էջ 54 (արաբերեն):

9. Երկակիի ուղղականը կազմվում է բառավերջում ալիֆ-ի և նուն-ի ավելացմամբ, հայցականը և սեռականը՝ յա-ի և նուն-ի: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ. Ալ-լուղաթու ալ-արաբիյա. 1-ին մաս. Հալեպ. 1986. էջ 15 (արաբերեն):

10 Kilaa և kiltaa անունները նմանվում են երկակիին միայն այն դեպքում, երբ ավելացվելով կցական դերանվանը՝ հանդես են գալիս գենետիվ կառույցի 1-ին դիրքում որպես մուդաֆ: Ալ-Սայյիդ Աիմադ Ալ- Հաշիմի. նշվ. աշխ.. էջ 57:

11. Սրանց ուղղականը կազմվում է բառավերջում ուաու-ի և նուն-ի ավելացմամբ, հայցականը՝ յա-ի և նուն-ի: Տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ. նշվ. աշխ., էջ 15-17:

12. Ըստ Ալ-Սայյիդ Աիմադ Ալ Հաշիմիի՝ նուն-ը, որը երկակի անուններում հաջորդում է ալիֆ-ին և յա-ին, փաստորեն փոխարինում է եզակի անվան մեջ առկա թանուին-ին (անորոշության նշան). դրա լավագույն ապացույցը գենետիվ կառույցի /իդաֆայի 1-ին դիրքում գտնվող մուդաֆ-ի թանուին-ի սղումն է: Համաձայնենք այդ պնդմանը, քանզի մուդաֆ-ը թեև ՝al որոշիչ հոդ չի ունենում, բայց որոշյալություն է պարունակում: Դիցուք, երկակիի նուն-ը (ինչպես և արտաքին կազմավորման արական հոգնակիի նուն-ը) և եզակիի թանուին-ը ունեն նույն գործառույթը, սակայն չկա բավարար բացատրություն այն հանգամանքի առիթով, թե մուդաֆ-ի դիրքում չգտնվող որոշյալ առմսն երկակի և արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում ինչո՞ւ է նուն-ը պահպանվում և՛ ալիֆ-ից, և՛ յա-ից հետո (այսինքն, օրինակ, որոշիչ-որոշյալ կապակցության կազմում, որպես մուդաֆ իլեյհի կամ առանձին հանդես գալու պարագայում և այլն):

13. Հիշյալ պայմանից բացառվող անունների մասին տե՛ս Ալ-Սայյիդ Աիմադ Ալ-Հաշիմի. նշվ. աշխ.. էջ 61:

14 Ալ-Սալլիդ Ահմադ Ալ-Հաշիմին Հինգ անունները ներկայացնում է որպես Վեց անուններ: Վեցերորդը հասոտ բառն է, որը նշանակում է իր սրա ի՛րաքն իրացվում է ուստ ալիֆ լա հարֆ-երի միջոցով, որոնք ավելանում են բառավերջի նուն-ին: Տե՛ս Ալ-Սայյիդ Ահմադ Ալ-Հաշիմի, նշվ. աշխ., էջ 63:

15. Fus և famun անունները հոմանիշներ են, նշանակում են բերան: Ենթադրվում է, որ famun-ը կազմվել է fus-ին միմ հարֆ (մ ձայնորդի համարժեքը) ավելացնելու միջոցով: Աբդ Ալլահ Ալ-Ֆատանի, Ուդ իլա ան-նիհա ալ-յուղաուիյա, Կաhիրե 2004, էջ 70 (արաբերեն):

16. Աբու Բեքր Ալս Աբդ Ալ- Ալիմ, Դուրուս ֆի ալ-ի՛րաբ, Կաhիրե 2002, էջ 56 (արաբերեն):

ՀՄԱՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ

(ԱԻ)

ԽԵԹԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խեթա-հայկական փոխառնչությունները կարելի է բաժանել երեք բնագավառի՝ լեզվաբանություն, կրոն և առասպելաբանություն, քաղաքական պատմություն, եթե ընդունում ենք Հայաստա և հայ էթնոսի նույնացման հնարավորությունը: Այս հոդվածում մենք ընդհանրական կերպով կներկայացնենք խեթա-լուվիական լեզուների հետ հայերենի փոխառնչությունների հարցը:

Հայերենը հնդեվրոպական լեզու է, այսուհանդերձ, բնիկ հնդեվրոպական շերտը կազմում է նրա բառարմատների 10-15%: Ըստ Հր. Աճառյանի «Հայոց լեզվի արմատական բառարանի»՝ հայոց լեզվում առկա են 11 000 արմատներ, որոնցից ավելի քան 2200 բառեր չեն կիրառվում և ամրագրված չեն: Նրանք հայտնաբերվել են որոշ միջնադարյան ձեռագիր-բառարաններում (մասնավորապես Երեմիա Մեղրեցու մոտ), իսկ մնացած 8800 արմատներից ավելի քան 4000-ն ունեն անհայտ ծագում, որոնցից շուրջ 940-ը հնդեվրոպական են[1]: Ինչպես տեսնում ենք, հայերենի չստուգաբանված, անհայտ ծագման բառերը հասնում են շուրջ 3000-ի: Այս անհայտ բառաշերտում առանձնանում են հայերենի բուն օրինաչափությունից շեղվող հնդեվրոպական զուգահեռներ, որոնք կարող են արդյունք լինել հնդեվրոպական մի անծանոթ լեզվի կամ հայերենին մերձավոր հայտնի հնդեվրոպական լեզվի կամ էլ հայերենի հնագույն բարբառների օրինաչափությունների արտացոլումներ[2]: Կարծում ենք, որ վերոնշյալ բառապաշարի հենց այս շերտում պետք է փնտրել խեթա-լուվիական լեզուներից հայերենին անցած փոխառությունները:

Հարկ է նշել, որ Խեթական տերությունը, որն ընդգրկում էր Փոքր Ասիան, Սիրիայի մի մասը և Հյուսիսային Միջագետքը, ոչ էթնիկ, ոչ լեզվական առումով, ոչ էլ իր առասպելաբանական ավանդույթներով միատարր չէր: Այս առումով ևս հայ- խեթական լեզվական փոխառնչությունների հարցը դրաշակիորեն բարդանում է:

Խեթական հնագույն տեքստը համարվում է Անիտտաս արքայի արձանագրությունը: Այն թվագրվում է Ք.ա. XVIII դարով, սակայն, պահպանվել է Նոր թագավորության շրջանից մեզ հասած պատճենի տեսքով: Խեթական տեքստերի հիմնական մասը պահպանվել է Նոր թագավորության շրջանից՝ Ք.ա. XIV-XIII դդ.: Նշենք, որ Նոր խեթական ժամանակաշրջանի տեքստերում պահպանվել են նաև հնագույն տեքստերի կրկնօրինակներ: Խեթերենը սեպագիր շրջանից վկայված միակ հնդեվրոպական լեզուն չէր: Նրան զուգահեռ, Փոքր Ասիայի տարածքից՝ խեթական հնագույն մայրաքաղաք Խաթթուսասի (Անկարայից 150 կմ հեռավորությամբ ժամանակակից Բողազքյոյ) արխիվից հայտնաբերվեցին խեթերենին մոտ և ազգակից լուվիերեն ու պալայերեն լեզուները, որոնք վերաբերում են Նոր թագավորության շրջանին (Ք.ա. XIV-XIII դդ.)[3]:

Խեթա-հայկական հնարավոր մշակութային փոխառնչությունների հարցը դեռևս անցյալ դարի 20-ականներից գրավել և գրավում է հայ և օտարազգի ուսումնասիրողների ուշադրությունը: Այդ ասպարեզում առաջիններից էր Ն. Մարտիրոսյանը, ով անդրադարձել է այս լեզուների հնարավոր կապերին, նաև առաջինն է, որ խեթական տեքստերն ուսումնասիրելիս հանդիպել է Հայասա տեղանվանը և փաստագրել «հայ» էթնոնիմի հետ նրա կապը[4]: Անգնահատելի է այս բնագավառում Գ. Ղափանցյանի վաստակը: Այս հարցով զբաղվել են նաև Հր. Աճառյանը, Ի. Դյակոնովը, Տ. Ծուլտհայսը, Ջ. Բոնֆանտեն, Գ. Ջոլտան, Ա. Կամմենհուբերը, Գ. Ջահուկյանը, Վ. Իվանովը, Ն. Մկրտչյանը, Ջ. Գրեպինը, Ա. Քոսյանը, Ա. Պետրոսյանը: Մենք ևս փորձել ենք բացահայտել որոշ զուգահեռներ:

Այս հարցը շատ խնդրահարույց է և կապված է գիտության մեջ այսօր տարակարծությունների տեղիք տվող մի շարք այլ հարցերի հետ, հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության վայրը, խեթերի Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանի որոշումը (եթե նրանք իրոք այլ վայրից են տեղափոխվել այստեղ), հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանի ու բնօրրանի խնդիրները, հայ ինքնանվան և Հայասա սլետության հետ այս էթնոնիմի նույնացման խնդիրը և այլն: Մի շարք զուտ լեզվաբանական խնդիրներ էլ են առաջ գալիս այս երկու լեզուների համադրումից, որոնց, սակայն, մենք չենք անդրադառնա այս հոդվածում: Նշենք միայն, որ հայերենը հնդեվրոպական

լեզվաընտանիքում առանձին ճյուղ է կազմում և նկատված է. Այս մերձավորությունը իրանական լեզուներին և հունարենին[5]: Իսկ խեթա-լուվիական լեզուները լիդիերենի, լիկիերենի և կարիերենի հետ կազմում են անատոլիական ճյուղը, որոնք ակնհայտորեն ազգակից են մյուս հնդեվրոպական լեզուներին, բայց նաև բավականին տարբերվում են նրանցից: Պարզ է, որ հայերենն ու խեթերենը մաս են կազմում մեկ լեզվաընտանիքի, սակայն հեռու են կանգնած միմյանցից: Այնուհանդերձ, փաստն այն է, որ հայերենի բառապաշարում առկա են շուրջ մի քանի տասնյակ խեթական փոխառություններ, որոնք ստիպում են մտածել, թե երբ և որտեղ կարող էին դրանք տեղի ունենալ:

Եթե ի մի բերվեն հայ-խեթական փոխառնչությունների հետ կապված տարբեր տեսակետները, ապա դրանք ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու խմբի. 1. Հայ և խեթ ժողովուրդների փոխհարաբերությունները կարող էին ձևավորվել խեթական պետության գոյության ընթացքում (XVIII-XIII դդ): 2. Հայ-խեթական փոխառնչությունները ձևավորվել են ավելի ուշ շրջանում, միջնորդված կերպով. Խեթական տերության կործանումից հետո՝ խեթա-լուվիական ժողովուրդների միջոցով (XII-VIII դդ): Այս վերջին տեսակետին է հակված, օրինակ, Ի. Դյակոնովը, որը հայերենի վրա խեթա-լուվիական լեզուների ազդեցության հիմնական աղբյուրը համարում է հիերոգլիֆիկ լուվիերենը[6]: Հիերոգլիֆիկ լուվիերենը Փոքր Ասիայում և Սիրիայում հայտնաբերված լեզու է, որ թվագրվում է Ք.ա. I հազարամյակով և գոյատևել է մինչև Ք.ա. VIII դ.: Սակայն Գ. Ջահուկյանը գտնում է, որ խեթա-լուվիական լեզուներից հայերենի կատարած փոխառությունները հիերոգլիֆիկ լուվիերենի համապատասխան բառերի հետ հատուկ մերձավորություն չեն ցուցաբերում, բայց ակնհայտ է, որ հայերը բավական երկար ժամանակ շփման մեջ պետք է լինեին այդ լեզուները կրող ժողովուրդների հետ[8]:

Խեթա-հայկական փոխառնչությունների հարցը կապված է նաև Հայասա պետության[9] էթնիկ պատկանելության, լեզվի և դիցարանի կառուցվածքի խնդրի հետ: Հայտնի է, որ մի շարք գիտնականներ (Ն. Մարտիրոսյան, Է. Ֆոռեր, Գ. Ղափանցյան, Ս. Երեմյան, Գ. Ջահուկյան, Բ. Պիոտրովսկի, Վ. Իվանով և այլոք) հայոց ազգածագման հայասական տեսակետի կողմնակիցներն են: Կան գիտնականներ, որոնք չեն ընդունում այս տեսակետը, օրինակ՝ Ի. Դյակոնովը, Ջ.

Գրեպինը: Սակայն վերջինս, ի տարբերություն Ի. Դյակոնովի, նշում է, որ հայերենում անատոլիական ծագում ունեցող փոխառությունները իրենց հետ, ճիշտ է, խնդիրներ են առաջացնում, սակայն, փաստն այն է, որ զուգահեռների այս ստվար զանգվածը, որ առկա է հայերենի և խեթերենի միջև, թե իմաստաբանական, թե հնչյունաբանական նմանությունների պատճառով անհնար է անտեսել: Ինչ վերաբերում է հայերենում առկա հիերոգլիֆիկ լուվիերենի շերտին, ապա նա դա համարում է դժվար լուծելի խնդիր, քանզի վերջիններս փոքրաթիվ են (9 զուգահեռ) ու, չնայած այս բառերը մեզ են հասել լուվիերենից, այնուհանդերձ, մենք չենք կարող պնդել, որ դրանք խեթերենում առկա չեն եղել[11]:

Այստեղ պետք է հավելել, որ մեզ հասած լուվիերեն տեքստերն ու բառապաշարը առավել սակավ են, քան խեթականը, և այս դեպքում առաջ է գալիս համամասնության խնդիր: Փաստորեն, ինչպես նշվեց արդեն, հայերենը և խեթերենը լեզվաբանական առումով մոտ լեզուներ չեն, սակայն հայերենում առկա են խեթերենից արված մի քանի տասնյակ փոխառություններ, մի շարք ուսումնասիրողների կողմից դիտարկված են նաև առասպելաբանական ուշագրավ ընդհանրություններ: Այս ամենը կարող է վկայել հայերեն և խեթա-լուվիական լեզուները կրող ժողովուրդների միջև երկարատև շփումների և փոխառնչությունների մասին, սակայն, քանի որ այս հարցը դեռևս բազում տարակարծությունների տեղիք է տալիս, մենք զերծ կմնանք վերջնական տեսակետ արտահայտելուց: Բայց կուզենայինք նշել, որ խեթա-լուվիական լեզուների ազդեցությունը հայերենի վրա կարող է լինել ենթաշերտային, որի ժամանակաշրջանը առ այժմ կոնկրետացնել հնարավոր չէ: Բնականաբար, Խեթական տերության կործանումից հետո այդ ժողովրդի մի որոշակի զանգված ձուլվել է հայ ժողովրդի մեջ, սակայն չի կարելի բացառել նաև ավելի վաղ շփումների հնարավորությունը: Ի դեպ, այս առումով ուշագրավ է, որ Գ. Ջահուկյանը, օրինակ, հայերենից խեթերենին անցած փոխառությունների շարք է ներկայացնում[12], իսկ Ջ. Գրեպինը համարում է, որ «գինի» բառը հայերենից է անցել հունարենին և խեթերենին[13]: Սրանք տեսակետներ են, որոնք, սակայն, առավել փաստարկման կարիք ունեն:

Խեթա-հայկական փոխառությունները կարելի է բաժանել մի քանի իմաստային խմբերի՝ կենդանական և բուսական աշխարհ, արհեստագործական և երաժշտական տերմիններ, բռնություն արտահայտող բայեր, ազգակցային կապ ցույց տվող բառեր, խմիչքների և ուտեստների անվանումներ և այլն: Մենք որոշ իմաստային խմբերից կներկայացնենք մի քանի օրինակներ ընդհանուր պատկերացում տալու համար.

հայ. փետուր - խեթ. pattar «թև»[14]: հայ. տառեղն (արագիլ) - խեթ. tarla (թռչնի տեսակ)[15]: հայ. լախուր (մի տեսակ բույս) - խեթ. ^{GIŠ}lahhur (տերևաշատ բույս)[16]; հայ. զուռնա - հիեր. լուվիերեն šurna (երաժշտական գործիք)[17]; հայ. բրուտ -խեթ. purut (կավ), խեցեգործ, կավագործ, բրտեղեն, խեցեղեն[18]: հայ. ջնար – խեթ. zinar (Իշտարին նվիրված երաժշտական գործիք)[19]; հայ. մառան – խեթ. marnuwa (խմիչքի տեսակ)[20]; հայ. հատ (կտրել, կտրատել կտորների)- խեթ. hattai (հատել, կտրել, ծակել)[21]; հայ. վարպետ - հիեր. լուվիերեն warpi (հմտություն, գիտելիք)[22]; հայ. նետ – խեթ. nata (եղեգնափող, նետ, սլաք, ջուր խմելու ծողիկ)[23]: հայ. իշխան – խեթ. išhaï (զսպել, սանձել, կապել, տեր)[24]:

HASMIK HMAYAKYAN

(IOS)

HITTITE-ARMENIAN LINGUITIC PARALLELS

The issue of Hittite-Armenian linguistic parallels has been attracting the Armenian and foreign scholars since 1920s until now. The author of the article briefly presents various problems and approaches related to this issue. The borrowings from Hittite to Armenian count to several tens that can be divided into a number of meaning groups such as animals and plants, crafts and musical terms, terms expressing violence, drinks and dishes etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 600-602:
2. Ջահուկյան Գ., Հայերենի անհայտ ծագման բառարմատները, ՊԲՀ, Եր., 1990, (2), էջ 62-77:

3. Иванов В. В., Хеттский язык, М., 1963, с. 9.

4. Ցավոք, նրա դիտարկումները լայն շրջանառություն չեն ստացել. հաճախ, ինչպես ինքն է նշում. յուրացվել կամ կիրառվել են առանց հեղինակին հղելու (ՊԲՀ, Եր. 1972, էջ 164-165 նաև էջ 165 տողատակ 7:

5. Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы. т. 2, Тбилиси, 1984, с. 898-900

6. Дьяконов И. М., Хетты, фригийцы и армяне, Переднеазиатский сборник. М-Л., 1961, с. 360

7. Иванов В. В., Хеттский язык, М., 1963, с. 9.

8. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 312:

9. Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում, ըստ մի շարք ուսումնասիրությունների, Բարձր Հայքում Ք.ա XIV դ. ձևավորված պետություն:

10. Հայասան սահմանակից է եղել Խեթական պետությանը և դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական կապեր է ունեցել վերջինիս հետ: Տե՛ս Մարտիրոսյան Ն., Խարբերդի շրջանները՝ հայոց հնագույն օրրանը, Նյու Յորք, 1957, էջ 87-133-66 («Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը») գրքում, ինչպես նաև՝ Капанцян Гр., Хайаса – колыбель армян, Историко-лингвистические работы, т. I, Ер., 1956, с. 5-266: Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, Ер., 1971: Քոսյան Ա., Հայասան և Ազզին. Շնորհ ի վերուստ, Առասպել, ծես և պատմություն, Հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, Եր., 2008, էջ 263-291:

11. Greppin J., The Anatolian Substrata in Armenian – An Interim Report, Annual of Armenian Linguistics, vol. 3, Cleveland, 1982, p. 65-72.

12. Джаукян Г. Б., О контактах армянского и хетто-лувийских языков, Мировая культура, традиции и современность, М., 1991, с. 140-141.

13. Greppin J., Did the Good Wines Come from Armenia?. Aramazd, v. III, Issue 1, Yerevan, 2008, p. 47-52.

14. Մարտիրոսյան Ն., Հայերէնի հարաբերութիւնը հեթիդերենի հետ, «Հանդէս ամսօրյա», թիվ 9-10, Վնն., 1924, էջ 458: Նրանից անկախ նկատել է Հր. Աճառյանը, տե՛ս ՀԱԲ, IV, էջ 498:

15. Greppin J. A., A Note on Hittite TARLA, Revue Hittite et asianique, tome XXXIII, 1975, p. 55-57.

16. Greppin J., Annual of Armenian Linguistics, vol. 3, Cleveland, 1982, p. 70

17. Greppin J., A Note on Armenian Zuma. Folia Orientalia, Tome, XXVII, 1990, p. 185-188.

18. Մկրտչյան Ն., Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ, ՊԲՀ, Եր., 1969 (1), էջ 241-244:

19. Սարտիրոսյան Ն., Հայերէնի յարաբերութիւնը հեթիդերէնի հետ, «Հանդէս ամսօրյա», Վնն., 1924, թիւ 9-10, էջ 458: Նույնի՝ Նպաստ մը հեթ և հայ բառաքննության, ՊԲՀ, 1972թ, (2), էջ 186: Ն. Մկրտչյան, Խեթա-հայկական մի քանի բառային ընդհանրություններ, ՊԲՀ, Եր., 1969, (1). էջ 240:

20. Հմայակյան Հ., Խեթերեն marnuwa բառը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր., 2007, էջ 45-52:

21. Մարտիրոսյան Ն., «Հանդես ամսօրյա», Վնն., 1929, էջ 537. Капанцян Г., Историко-лингвистические работы, Ер., 1956, с. 375-376.

22. Kossian A., An Anatolian-Armenian Parallel. Annual of Armenian Linguistics. Vol. 15. Cleveland, 1994, p. 63-65

23. Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեթ և հայ բառաքննության. ՊԲՀ, Եր., 1972, (2), էջ 181; Puhvel J., Reed and Arrow in Anatolia and beyond, Aramazd. Vol. II. Yerevan. 2007, p. 85-87

24. Մարտիրոսյան Ն., Հայերէնի յարաբերութիւնը հեթիդերէնի հետ, «Հանդես ամսօրյա», Վնն., 1924, թիւ 9-10, էջ 458-9; Պետրոսյան Ա., Գրախոսություն Greater Anatolia and Indo-Hittite Language Family (Journal of Indo-European Studies, Monograph Series, No. 38, Washington DC, 2001). Լրաբեր, Եր., 2003, N 2, էջ 208, 210։

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԵ
(ԵՊՀ)

ԹԱՔՈՒՑՎԱԾ ԱՆՈՒՆԸ (ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ) ՈՐՊԵՍ *'IḌMĀR*-Ի՝ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՔՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՊՔ

Ժամանակակից տարբեր լեզուներում դերանուն հասկացությունը նկարագրող եզրերը ձևավորվել են առավելապես անտիկ շրջանի հունարեն ant-onymia կամ լատիներեն pronomen քերականական եզրերից, որոնք նկարագրում են «անուն խոսքի մասին պատկանող միավորներ փոխարինող բառերը»[1]: Որոշ լեզուներում հանդիպում են դերանունների այլ առանձնահատկությունները վերհանող եզրեր: Այսպես, հնդկական լեզվաբանության մեջ դերանուն հասկացությանը սպասարկում է sarva-namān եզրը, որը թարգմանաբար նշանակում է «արտահայտություն ցանկացած հասկացության համար»[2]: Թե՛ առաջին, և թե՛ երկրորդ եզրային սահմանումները պետք է համարել շատ հատկանշական, քանի որ դրանք երկուսն էլ մատնանշում են դերանվանական միավորների հիմնական առանձնահատկությունները: Լեզվաբանների մի մասը դերանունների գլխավոր առանձնահատկությունն են համարում այն հանգամանքը, որ այս լեզվական միավորները ոչ թե անվանում են բուն հասկացությունները, այլ միայն մատնանշում դրանք, մինչդեռ մյուսները կարևորում են դերանունների՝ ինքնուրույն խոսքի մաս կազմող միավորներ փոխարինելու գործառույթը:

Արաբական լեզվաբանական ավանդույթը (այսուհետ՝ ԱԼԱ) դերանունները չի զատում անուն խոսքի մասը կազմող այլ միավորներից: Այն բառային միավորները, որոնք ընդհանուր լեզվաբանության մեջ առանձնանում են որպես դերանուններ, ԱԼԱ-ի կողմից դիտարկվում են իբրև անվանական միավորների տարատեսակներ և դրանք առանձին դասի մեջ միավորող

ընդհանրացնող որևէ եզր չի առաջարկվում: ԱԼԱ-ում շրջանառվող *ism mudmar* (թաքուցված անուն) կամ *damīr* (թաքուցված միտք) եզրերը նկարագրում են այն բառային միավորները, որոնք ընդհանուր լեզվաբանության մեջ առանձնանում են որպես անհատականացման միջոց ծառայող դերանվանական միավորների առավել համապարփակ դաս՝ անձնական դերանունները: Վերջիններս հատուկ անունների հետ մեկտեղ իրականացնում են անհատականացման գործառույթը, սակայն ի տարբերություն հատուկ անունների, թաքուցված անուններն անհատականացման համար համատեքստից քաղված հենքային լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեն:

Անձնական դերանունների տեսությունը ԱԼԱ-ում *'iḍmār*-ի՝ արտահայտման մակարդակի միավորների «թաքուցման» հայեցակարգի մի մասն է և հիմնվում է *'iẓhār* (հայտնաբերում, բացահայտում. ցուցադրում) և *'iḍmār* (քողարկում. մտապահում) հասկացությունների հակադրման վրա, որոնք պայմանավորված են առարկաների և երևույթների մասին էքսպրեսիվ կամ սուպրեսիվ[3] միջոցներով տեղեկությունների հաղորդմամբ: Առաջին՝ էքսպրեսիվ (*'iẓhār*) միջոցի առանձնահատկությունն այն է, որ որևէ տեսակի տեղեկություն հաղորդելու համար օգտագործվում են որոշակի լեզվական միավորներ՝ նախադասություններ ու շարույթներ, որոնք ձևավորվում են խոսքը կազմող *արտահայտման* մակարդակի նվազագույն միավորներից, ինչը հնարավորություն է ընձեռում խոսողին՝ հայտնելու *բովանդակության* կամ *իմաստի* (*ma'na*) մակարդակի միավորների որոշակի հաջորդականություն: Երկրորդ՝ սուպրեսիվ (*'iḍmār*) միջոցը նկարագրում է այն իրավիճակը, երբ *բովանդակության* կամ *իմաստի* մակարդակի որևէ միավոր արտահայտվում է իր համար չնախատեսված *արտահայտման* մակարդակի միավորով, որի արդյունքում նախադասության այս կամ այն կառուցվածքային բաղադրիչի առկայությունը պայմանավորում է մյուսների առկայությունը ևս: Մյուս կողմից տեղեկության օբյեկտները ևս միակազմ չեն. *իմաստի* մակարդակի մի շարք բաղադրիչներ նույնպես կարող են պայմանավորել մյուսների առկայությունը: Եվ, վերջապես, չի կարելի անտեսել համատեքստի վճռական դերը, որը կոնկրետացնում և պարզաբանում է *իմաստի* մակարդակի այն

միավորներ, որոնք չեն ներկայացվել *արտահայտման* մակարդակի համապատասխան միավորներով: Այլ կերպ ասած ԱԼԱ-ում *iḍmār* և ընդհանուր լեզվաբանության *էլիպսիս* հասկացությունները բովանդակային տեսանկյունից բավական մոտ են միմյանց, որոնք ընդհանուր առմամբ կարող են բնորոշվել *իբրև ասույթի բաղադրիչի սղում, որը կարելի է հեշտությամբ վերականգնել համատեքստից կամ իրավիճակից*[4], քանի որ այս կամ այն բառային միավորի թաքցումը *iḍmār*-ը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ լսողը կարող է վերականգնել սղված միավորի իմաստը համատեքստից[5] խոսքի շղթայի համապատասխան հատվածում: Այն արաբ քերականների կողմից ներկայացվում է իբրև բառային միավորների որոշակի համադրում, որոնք միմյանց հետ կապված են որպես կառավարման շղթայի կառավարող և կառավարվող օղակներ: Կառավարող միավորի թաքցման պարագայում նախադասության կառավարվող անդամի թեքական վերջավորության մեջ միշտ կարելի է գտնել թաքցված կառավարող միավորի ձևական հետքը: Մինչդեռ կառավարվող միավորի թաքցումը որևէ կերպ չի անդրադառնում կառավարող անդամի ձևաբանական նկարագրի վրա, որը դարձնում է թաքցումը լսողի համար աննկատ: Հենց այս պատճառով էլ անհրաժեշտ է դառնում խոսքի շղթայում կառավարվող անդամի թաքցումը մատնանշող հատուկ ձևական նշան-ի (*ʿalāma*) կիրառումը, ինչպիսին է *ism muḍmar* թաքցված անունը, որը մեկնաբանվում է որպես տարբեր համատեքստերի թաքցված անուններին համապատասխանող նշան[6]: Այն ինքնուրույնաբար՝ *munfaṣil* կամ որևէ անվանական կամ բայական միավորին կից՝ *muttasil* մատնանշում է խոսողի կողմից ձևաբանորեն չարտահայտված անվանական միավորների որոշակի քանակ՝ հաղորդելով քերականական դեմքի, թվի, սեռի նշանակությունները[7], ինչպես նաև *raf*, *naṣb* և *jarr* բառափոխական ձևերից որևէ մեկը[8]:

«Թաքցված անունների» պարտադիր պայմաններից է իրենցով փոխարինվող միավորների բառային նշանակության համատեքստային կամ իրավիճակային վերականգնումը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, անձնական դերանունները կարող են հանդես գալ որպես անհատականացման միջոց՝ հենվելով համատեքստի կամ հաղորդակցական իրավիճակի պարունակած լրացուցիչ տեղեկատվության վրա: Անվանման մակարդակում իրավիճակը կսեռդ է.

պարզաբանել առաջին (al-mutakallim *խոսող*) կամ երկրորդ (al-muxāṭab *խոսակցից* կամ նա, ում դիմում է /խոսողը/) դեմքերի դերանուններին: Երբ խոսողն անվանում է ինքն իրեն «ես», «ես»-ի կողմից հաղորդվող տեղեկությունը հասկանալի է դառնում բոլորին, մինչդեռ խոսողի կոնկրետ անվան հիշատակումը կարող է անհասկանալի հաղորդում լինել լսողի համար[9]. Անկախ այն հանգամանքից, թե ինչին կամ ում է ուղղված «ես»-ի կողմից հաղորդվող տեղեկությունը, «ես»-ը միշտ կարող է անվանել այդ իրական կամ մտացածին խոսակցին «դու», չկարևորելով խոսողի ծանոթ լինելու հանգամանքը խոսակցին: Նախնադարյան մարդը աշխարհի մասին իր պրիմիտիվ պատկերացումներում առաջին հերթին հակադրում էր «ես»-ը «*ոչ* ես»-ին, որն էլ փաստում է անձնական դերանունների ի հայտ գալն առաջին դեմքի երկրորդին հստակ հակադրման հետևանքով, քանի որ երրորդ դեմքի ոլորտը կարող են ապահովել նաև ցուցական դերանունները[10]:

«Ես»-ը և «Դու»-ն անկախ սուբստիտուտներ են, որոնք կարիք չունեն փոխարինվող միավորի հիշատակմանը կանխավ. իրենք իրենց մասին խոսելիս միշտ ասում են «ես»՝ դրանով իսկ սահմանելով խոսակցության երկու իրավահավասար հակադիր մասնակից անձանց: Մինչդեռ երրորդ դեմքը ներկայացնողը (***al-ġā'ib*** բացակայող դեմք) ինքնին չի անվանում ոչինչ և ոչ ոքի և որոշակիանում է միայն իրավիճակի կամ համատեքստի միջոցով: Երրորդ դեմքի դերանունը կարող է իրականացնել կոնկրետ անհատականացման գործառույթ խոսակիցների «գիտելիքների ընդհանուր ֆոնդի» կամ էլ անհատականացնող համատեքստի առկայության պարագայում միայն[11]: Այս առումով անձնական դերանունները նմանվում են որոշիչ հոդին և ցուցական դերանուններին, որոնք նույնպես անհատականացնում են համատեքստի միջոցով: Հարկ է նշել, որ երրորդ դեմքի անձնական դերանվան համար անհատականացնող համատեքստ է հանդիսանում ոչ թե առանձին անունը, որին վերաբերվում է դերանունը, այլ ստորոգական կառույցի կազմում գործառող անունը, որը, սակայն, դուրս է «ես»-ի և «դու»-ի իմաստաբանական ոլորտից[12]:

Գործառական առումով արաբերենում այսպես կոչված «բացակայող» (***al-ġā'ib***) երրորդ դեմքի դերանունների ոլորտը շատ ավելի բազմապլան է քան առաջին և երկրորդ դեմքերինը, քանի որ

դրանք կարող են փոխարինել ինչպես անձանց, այնպես էլ առարկաներ և երևույթներ, մինչդեռ առաջին և երկրորդ դեմքերի դերանունները վերաբերվում են բացառապես անձանց:

Հայտնի է, որ թաքուցված անունները Ալ.Ա-ի կողմից գնահատվում են որպես որոշյալության բարձրագույն գործակից ունեցող միավորներ (*'a'rafu-l-ma'ārif al-ism al-muḍmar*), քանի որ թաքուցման են ենթարկվում այդեն իսկ հայտնի [որոշյալ] միավորը (*lā yuḍmar 'illā wa-qad 'urifa*) և այդ իսկ պատճառով որոշյալության նշանակություն ունեցող այլ միավորների նման լրացուցիչ նկարագրման կարիք չեն զգում (*lā yaftaqir 'ilā 'an yūṣaf ka-ġayrihi min al -ma'ārif*)[14]: Ի հակադրություն առաջին և երկրորդ դեմքերի՝ երրորդ դեմքը ներկայացնող թաքուցված անունները բնութագրվում են որոշյալության առավել ցածր գործակցով, որոշ դեպքերում նույնիսկ գնահատվելով որպես անորոշության նշանակություն ունեցող միավորներ: Երրորդ դեմքի ձևերը կարող են բնդունել ցանկացած սուբյեկտ: Հենց նշյալով է պայմանավորված այն հանգամանքը, որ արաբերենի երրորդ դեմքի եզակի թվի բայը ունակ է կազմել ստորոգական միջուկ տարբեր հզորության (եզակի, երկակի, հոգնակի) բազմաթիվ սուբյեկտների հետ:

Երրորդ դեմքի թաքուցված անունները միշտ չէ, որ հստակ կերպով սահմանազատվում են ցուցական կամ վերացական անուններից (*al-ism al-mubham վերացական, անորոշ անուն*), որոնք նույնականացնում են որևէ կոնկրետ առարկա հիշատակված կամ չհիշատակված որևէ տարատեսակի սահմաններում՝ սևեռելով խոսակցի ուշադրությունը դրա վրա: Սիբավեյհին իր «*al-Kitāb*» աշխատության մեջ թվարկելով ցուցական անունները հիշատակում է դրանց շարքում նաև երրորդ դեմքի անձնական դերանունները[15]: Աս-Սիրաֆին այդ համատեղ դասակարգումը մեկնաբանում է *դրանց միջև առկա նմանությամբ* (*li-qurb aš-šibh baynahumā*): Մուբարրադը նշում է, որ թաքուցված անունների բոլոր նշաններին բնորոշ է *վերացականության, անորոշության* նշանակությունը: Այսպես կոչված վերացական կամ անորոշ միավորները նա ստորաբաժանում է երկու խմբի՝ *mā yaqa' muḍmaran* «նրանք, որոնք ենթակա են թաքուցման» [*huwa wa 'axawātuhā* «*նա*-ն և իր շարքի միավորները»] և *minhu mā yaqa' gayr muḍmar* «ձևեր, որոնք չեն արտահայտվում թաքուցված անուններով» [*hadā wa 'axawātuhā* «*սա*-ն և

իր շարքի միավորները»]: Այդ կերպ ասած թաքուցման ենթակա (*huwa wa 'axawātuhā*) շարքի միափորները հանդես են գալիս խոսքի մեջ որպես թաքուցված կառավարվող անդամների կողավորված նշաններ՝ իրականացնելով մասնանշման կամ ցուցադրման գործառույթը. նրանք, ի տարբերություն բուն ցուցական միավորների (*haḏā wa 'axawātuhā*), ունեն գործառական սահմանափակում. նրանք պարտադիր կերպով պետք է փոխարինեն *հստակ արտահայտում ունեցող* *az-zāhir* կամ *ենթադրյալ* *al-muqaddar* անվանական միավորը, որի հետ մշտապես կազմում են ստորոգական կառույց: Մինչդեռ թաքուցման չենթարկվող վերացական կամ ընդհանրացնող ցուցական (*hadā wa 'axawātuhā*) շարքի միավորները համադրվում են միայն հստակ արտահայտում ունեցող անվանական միավորների հետ՝ նույնականացնելով դրանք համատեքստի միջոցով՝ կազմելով նրանց հետ ինչպես ստորոգական, այնպես էլ որոշչային բնույթի կառույցներ:

MARINE MANUKYAN

(YSU)

ISM MUDMAR "HIDDEN NAME" – THE SEMANTIC EQUIVALENT OF PERSONAL PRONOUNS AS A CASE OF OMISSION UNITS OF *FORM*

The theory of Personal Pronouns in Arabic Linguistic Tradition is a part of semiotic conception of ***'iḍmar*** which can be presented as Ellipsis. traditionally determined as omission the element of sentence, which is easily recovered from the context or situation. In order to explain ***'iḍmar*** it should be mentioned that there are two ways to transfer information: the first –expressive- using sentences and phrases. formed by joining minimal discrete language units of ***form*** to make speech. With the help of the latter the speaker expresses definite sequence of ***meaning*** units. The second –suppressive- when a unit of ***meaning*** is expressed not by a unit of ***form*** intended for it. In case of omitting unit of ***form*** could be found a formal mark ***'alāma*** which denotes its omission. This formal mark is called ***ism muḍmar concealed (hidden) noun*** or ***ḍamīr concealed thought*** which is known in Arabic studies as terminological equivalent of personal pronouns. They independently or no independently denote x quantity of omitted nouns expressing the grammatical meanings of person. number, gender and case.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Виноградов В. В. Русский язык (Грамматическое учение о слове). М.–Л.. 1947. с. 319
2. Майтинская К. Е. Местоимения в языках разных систем. М. 1969. с. 26
3. Есперсен О. Философия грамматики. М. 1958. с. 359
4. Ахманова О. С.. Словарь лингвистических терминов. М.. 1966. с. 525
5. Owens J., The Foundations of Grammar. Amsterdam / Philadelphia. 1988. p. 186
6. Фролов Д. В.. О теории личных местоимений в традиционной арабской грамматике в сб. Теория и типология местоимений. М., 1980, с. 136
7. az-Zamaxsarī. *Al-mufaṣṣal fī ʿilm al-ʿarabiyya*. Bayrūt, dūna tārīḫ, s. 127.
8. Ibn Yaʿīš an-Naḥawī. *Šarḥ al-mufaṣṣal*. III. al-Qāhira, dūna tārīx, s. 85
9. Блумфилд Л., *Язык*. М., 1968, с. 273
10. Майтинская К. Е. Նշվ. աշխ., էջ 219:
11. Вольф Е. М.. Грамматика и семантика местоимений, М., 1974, с. 24
12. Бенвеиист Э., Общая лингвистика. М., 1974, с. 262.
13. al-Anbārī, Al-'inṣāf fī masā'il al-xilāf bayna-l-baṣriyīn wa-l-kūfiyīn, II, Bayrūt, 1997, s. 707-708:
14. Sibawayhi, Al-Kitāb, II, Bayrūt, s. 77.

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ
(ԵՊՀ)

ԲԱՅԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԻԿՆԵՐՈՎ ԻՐԱՑՎԱԾ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ՁԵՎԱ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱԿՏՈՒԱԼ ԱՆԴԱՄԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ

Լեզվական համակարգի յուրաքանչյուր քերականական կարգ այս կամ այն հայեցակետից ուսումնասիրելուց առաջ հարկ է լինում դիտարկել այն՝ լեզվական այլ համակարգերում համասեռ կամ բովանդակային առումով մոտ կարգի գործողության արդյունքում ստացված տվյալներն ընդգրկելով: Փորձենք դիտարկել մասնիկներով իրացվող նախադասությունների[1] ակտուալ և ձևա–շարահյուսական անդամատման խնդիրը գրական արաբերենի բայանման մասնիկներով (hurūf musabaha lil-fi'l «բայանման մասնիկներ» կամ (ḥurūf 'an-naṣb)[2] նասբավորող մասնիկներ)[3] սկսվող նախադասությունների արաբական լեզվաբանական ավանդույթում ընդունված նկարագրման տվյալները:

Նախադասության անդամատման խնդիրը ցանկացած լեզվի շարահյուսության կենտրոնական հարցերից մեկն է: Շարահյուսական վերլուծության համար, անշուշտ, ամենակարևորը նախադասության ձևա-շարահյուսական անդամատումը և նախադասության անդամների վերհանումն է: Նախադասության ձևա-շարահյուսական անդամատման հիմքում ընկած է վերջինիս՝ անդամների բաժանումը, ընդ որում նախադասության անդամ հասկացությունը ենթադրում է հետևյալ հատկանիշների փոխկապակցվածությունը՝ ա) բառի՝ մեկ այլ բառի հետ որևէ շարահյուսական կապի մեջ գտնվելը, որն իրականացվում է ի շնորհիվ բառաձևերի, բառերի ինվերսիայի, ինտոնացիայի, սպասարկու բառերի առկայության (ընդ որում բառի գործառութային նշանակությունը կապված է միայն շարահյուսական կապից և ոչ այդ կապի արտահայտման միջոցներից), բ) շարահյուսական գործառույթը գ) ֆունկցիոնալ նշանակության առկայությունը:

Նախադասության ծև-շարահյուսական անդամատմանը համադրվում է մի այլ կարգի անդամատում, որը Վ. Մատեզիուսն անվանել է «ակտուալ»[4]: Նախադասության ակտուալ անդամատումը բացահայտում է վերջինիս՝ առարկայական կոնտեքստ մտնելու հնարավորությունը, որի հիման վրա այն առաջանում է: Ակտուալ բաժանման հիմնական տարրերից են ասույթի ելակետը կամ հիմքը՝ թեման, այսինքն այն, ինչ համարվում է հայտնի տվյալ իրավիճակում կամ հեշտությամբ կարող է հասկանալի դառնալ և ասույթի միջուկը՝ ռեման, այսինքն այն, ինչ հաղորդում է խոսողը տվյալ ելակետի՝ թեմայի մասին (Օր.՝ Ուսանողը ջանասեր է):

Ակտուալ անդամատման ժամանակ նախադասության տրոհումը հանդիսանում է միայն այն դատողության տարրերի բաժանման միջոց, որը տվյալ կոնտեքստում հանդես է գալիս համապատասխան նախադասությամբ[5]: Այդ պարագայում նախադասության անդամատումը հանդիսանում է խոսքում իրացվող ասույթի սուբյեկտիվ, և ոչ տվյալ նախադասության ծև-շարահյուսական կառուցվածքի վերհանում: Ըստ էության, ասույթի ակտուալ անդամատման հիմքում ընկած է հաղորդակցման շրջանակում խոսողի ունեցած վերաբերմունքն արտահայտածի նկատմամբ: Նախադասության անդամատման տեսանկյունից խոսողի կողմից կիրառվող լեզվական միջոցները չեն խախտում տվյալ նախադասության հատուկ ծև-շարահյուսական կառուցվածքը:

Վ. Մատեզիուսը և այլ լեզվաբաններ (Օր.՝ Հ. Գաբուչյանը), ակտուալ անդամատման միջոց են համարում որոշյալության-անորոշության ցուցիչները, հնչերանգը, սպասարկու բառերը, եղանակավորող մասնիկները և այլն:

Բանավոր խոսքում շեշտադրումը հանդիսանում է ունիվերսալ միջոց թե՛ շարահյուսական, և թե՛ ակտուալ բաժանումների համար:

Ինչ վերաբերում է մասնիկներին, ապա վերջիններս ընդհանուր լեզվաբանական տեսության մեջ համարվում են սպասարկու բառեր, որոնք տարբեր իմաստային երանգ (վերաբերական, հաստատական, զգայական) են հաղորդում նախադասության առանձին բառերի կամ բառախմբերի: Հայերենում եղանակավորող բառերի մեծ մասը սովորաբար վերաբերում է ստորոգյալին, ավելի ճիշտ ստորոգմանը

արտահայտելով խոսողի անձնական վերաբերմունքն ասվածի նկատմամբ:

Արաբական լեզվաբանական ավանդույթում մասնիկները, որոնց շարքին են դասվում խնդրո առարկա հանդիսացող բայանման գործառությամբ մասնիկները (hurūf musabaha bil-fi'l), ստորաբաժանվում են ըստ շարահյուսական ֆորմալ այս կամ այն գործառույթի կամ իմաստաբանական առանձնահատկություններից ելնելով: Շարահյուսական հիմնական գործառույթը կայանում է այս մասնիկներով ներմուծվող անվանական ստորոգական կառույցներում ենթակայի դիրքի վրա ունեցած ձևա շարահյուսական հատկանիշը. վերջիններս համարվում են անվանական կառույցը սպասարկողներ, որոնք naṣb բառափոխական նշանակություն են հաղորդում իրենցից հետո եկող անվանաձևին՝ դուրս մնալով ստորոգական միջուկի կազմից ('nna+('at-tilmīzu) mujtahidun - 'nna 'at- tilmīza (թեմա) mujtahidun (ռեմա): Բայանման մասնիկների ձևա -շարահյուսական կապն անվանական նախադասության ենթակայի՝ mubtadā'-ի հետ արտահայտվում է դիր-քային առումով, այն է՝ այդ դիրքում իրացվող համապատասխանող անդամը հաջորդում է նրանց՝ կառավարվելով այդ իսկ մասնիկների կողմից (Օր.՝ 'at-tālibu mujtahidun (Ուսանողը ջանասեր է) - 'inna 'at-tāliba mujtahidun) (*Իսկապես*, ուսանողը ջանասեր է) :

Բայանման գործառությամբ մասնիկները (musabaha bil-fi'l) ցուցաբերում են պարզագույն հիմքի հետ որոշ ֆորմալ նմանություններ, դրանք են՝ 1) hurūf az-zā'ida՝ լրացուցիչ հարֆերի առկայությունը: Այդ տեսանկյունից հետաքրքիր մոտեցում կարելի է նկատել lakinna (սակայն), li'anna (քանի որ) բայանման գործառությամբ մասնիկների նկատմամբ, որտեղ lām և kāf հարֆերը կարելի է դիտարկել որպես hurūf az-zā'ida (լրացուցիչ հարֆեր), 2) պարզագույն հիմքի նման վերջիններիս mabnī 'ala fatḥ (անփոփոխ, հաստատուն) նկարագիրը (fa'ala- (la'alla)-inna), 3) իրենից հետո կցական nūn-ի առկայություն (katabani նա գրեց ինձ, 'innani – իսկապես որ ես), 4) եռահարֆություն:

Հաղորդակցման տեսանկյունից բայանման մասնիկները ազդում են ակտուալ անդամատման արդյունքում առաջացած ասույթի թեմայի վրա՝ հաղորդելով նրան խոսողի այս կամ այն սուբյեկտիվ վերաբերմունքը՝ հաստատում, սահմանափակում, հավանականություն,

կոչ, ցանկություն, կասկած, նմանություն (inna, anna, li'anna, lakinna, layta, la'alla, ka'anna) և այլ վերաբերականներ:

Վերոնշյալ բայանման մասնիկներով իրացվող ասույթներում վերջիններս միևնույն անվանական ստորոգական միջուկի շրջանակում կարող են հանդես գալ տարբեր, երբեմն միմյանց հակասող իմաստային երանգավորում ունեցող եղանակավորիչներով՝ հաստատելով (inna), կասկածի տակ դնելով (ka'anna), սահմանափակելով (lakinna), հավանականություն (la'alla) և այլ երանգավորումներ հաղորդելով տվյալ ակտուալ անդամատման շրջանակում ձևավորված թեմա-ռեմատիկ ասույթին:

Համեմատենք. Al–baytu kabīrun Տունը մեծ է.

անվանական ստորոգական կառույց

'inna al -bayta kabīrun' Իսկապես տունը մեծ է

բայանման մասնիկով իրացված կառույց:

Այս ասույթում երևում է անհատի հաստատական սուբյեկտիվ վերաբերմունքը հաղորդվող նորության նկատմամբ, որտեղ նա հաստատում է տան մեծ լինելու հանգամանքը):

layta 'al–bayta kabīrun '

Երանի տունը մեծ լիներ:

Բայանման այս մասնիկով իրացված անվանական կառույցը ևս ունի նույն ձևա-շարահյուսական կառուցվածքը, սակայն հաղորդակցական տեսանկյունից ունի իմաստաբանական այլ բեռնվածք, կարելի է ասել նախորդին հակասող: Եթե նախորդ ասույթում խոսակիցը հաստատում է տան մեծ լինելու հանգամանքը, ապա այստեղ նա ցանկանում է, որ այն այդպիսին լինի:

Նույնը կարելի է ասել նաև մյուս եղանակավորող մասնիկների վերաբերյալ (գուցե, կարծես թե, սակայն):

Այսպիսով, ուսումնասիրելով բայանման գործառության մասնիկները երկու տարբեր՝ թեմա-ռեմատիկ ասույթի և անվանական ստորոգական կառույցի ձևա-շարահյուսական մակարդակներում, կարելի է գալ այն եզրահանգման, որ, համախմբվելով բայանման գործառության մասնիկներ անվան ներքո, վերջիններին կարելի է մոտենալ երկակի. ձևա-շարահյուսական մակարդակում նրանք համախմբվում են նույն՝ կառավարման գործառույթով՝ չտարբերվելով միմյանցից, հաղորդակցական տեսանկյունից դրանք կարելի է բաժանել

իմաստաբային տարբեր երանգավորում ունեցող եղանակավորիչների. որոնք այս կամ այն սուբյեկտիվ վերաբերմունքն են արտահայտում իրացվող թեմառեմատիկ ասույթին

MARGARITA SARGSYAN

(YSU)

THE PECULIARITIES OF ACTUAL, FORMAL AND SYNTACTIC SEGMENTATION WITH MODAL PARTICLES IN MODERN STANDART ARABIC

The modal particles in literary Arabic are inna (really. indeed). anna (that), (lianna) (because). lakinna (but), layta (if only). la'alla (may), ka'nna (like. as).

It is important to note. that all these Particles have two main aspects: the first is that they all have the same grammatical impact in nominal sentences. causing the subject of the nominal sentence to be in the accusative case (naṣb), and the second is their influence on the actual segmentation of the sentence that consists of a theme (subject) and a rheme (object).

In the Arabic linguistic tradition the normal word order in the nominal sentence is subject-predicate. The particles are placed in front of the sentence: particle + subject in the accusative case + predicate. This is their formal description. As to the change of the meaning of the sentence during the actual segmentation, we shall see in the examples given below.

Ex. **1.** *Al–baytu kabīrun -The house is big* **2.** *inna al–bayta kabīrun - The house is really big.* 3. *layta al–bayta kabīrun - If only the house were big*

As we see, in the second and the third sentences we have the same formal construction (particle + subject in accusative case + predicative), but different meanings. In the second sentence we affirm that the house is undoubtedly big, in the third one we wish it to be so.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արաբերենում խոսքի ընթացքում թեքականություն ձեռք բերելու առումով լեզվական միավորները բաժանվում են երկու մասի՝ թեքվող (mu'rab) և չթեքվող (mabnī): Թեքում ունենալու քեականական կատեգորիան անվանվում է al-i'rāb, իսկ թեքում չունենալու հատկությունը bina':
2. Անվան թեքման համակարգն արաբերենում ներկայացված է raf', jarr և naṣb բառափոխական նշանակություններով: Բառափոխական այս ձևերը որոշ

վերապահումով նմանեցնում են հայերենի հոլովներին. raՐ-ը համարելով ուղղական. jarr-ը սեռական և naṣb ը հայցական հոլովածներ:

3. Матезиус В., О так называемом актуальном членении предложения. Пражский лингвистический кружок. Сборник статей. М., 1967.
4. Солнцев В. М . Грамматическая структура и актуальное членение предложения. М.. 1984.
5. Աստրյան Մ. Ն. Ժամանակակից հայոց լեզու. Չևաբանություն. Ե . 1989:
6. المفصل في علوم العربية .ابن القاسم محمود بن عمر الزمخشري ,بيروت- لبنان, دون تاريخ

· ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԹԱ
(ԵՊՀ)
ՍՈՀՐԱԲ ՍԵՓԵՀՐԻ ՊՈԵԶԻԱՆ

Իրանի ժամանակակից պոեզիայի ակնառու ներկայացուցիչներից է Սոհրաբ Սեփեհրին (1928-1980թթ.), ով իր կենդանության օրոք արդեն ճանաչված էր և՛ որպես նկարիչ, և՛ որպես բանաստեղծ:

Սոհրաբի մեջ սերը նկարչության և պոեզիայի հանդեպ ձևավորվում էր զուգահեռաբար: Թեհրանի համալսարանի Գեղեցիկ արվեստների ֆակուլտետում սովորելու տարիներին նա հարեց ժամանակակից արվեստի ուղղությանը՝ իմպրեսիոնիզմին՝ իր նկարչության մեջ և Նոր պոեզիային՝ իր պոեզիայում: Հրապուրվելով ժամանակակից պարսից պոեզիայի հիմնադրի՝ Նիմա Յուշիջի առաջատար ջանքերով, նա շուտով հրաժարվեց հին ոճի տաղաչափությունից, որը կիրառում էր իր ծննդավայրում՝ Քաշանում:

Սեփեհրու բանաստեղծությունները չեն արտացոլում կոնկրետ որևէ ժամանակաշրջան: Սեփեհրին երբեք չներքաշվեց քաղաքականության մեջ: Այդ է պատճառը, որ նա քննադատվեց և թերագնահատվեց իր ժամանակի շատ երիտասարդ բանաստեղծների[1] կողմից, ովքեր նրան մեղադրում էին իր շրջապատում սոցիալ-քաղաքական պարագաներին շատ քիչ ուշադրություն դարձնելու համար: Իրանցի գրականագետ Ռ. Բարահենին այսպես արտահայտվեց մի հարցազրույցի ժամանակ. «Ժամանակին իմ «Ոսկին պղնձի մեջ» աշխատությունում Սոհրաբի մասին մի հոդված էի գրել: Կարծիքս այն էր, որ այնպիսի մի ժամանակաշրջանում բանաստեղծը պետք միշտ կյանքի խրամատներում ապրի: Իսկ Սեփեհրու պոեզիան այդպիսի տեղում հնարավոր չէր հաստատել: Բնական է, որ ես այսօր այդպես չեմ մտածում: Այսօր ես զգում եմ, որ բանաստեղծը չպետք է միայն ինչ-որ հատուկ ժամանակաշրջանի համար բանաստեղծություն գրի: Նա պետք է կարողանա այլ ժամանակաշրջանների համար էլ իր բանաստեղծությունը կենդանի պահել: Բանաստեղծը պետք է այնքան պաշար ունենա, որ գրի բոլոր հասարակությունների համար»[2]:

Այնուամենայնիվ, Սեփեհրու պոեզիայի ոճը հիացնում է նրա ընթերցողներին, քանի որ այն արտահայտում է անմեղություն, գեղեցկություն, ազատություն, մաքրություն, սեր և հավատ:

Սեփեհրին բանաստեղծական ասպարեզ իջավ 1950-1953թթ. Իրանում նավթի ազգայնացման շարժման տարիներին: Իրանը գտնվում էր Մոհամմադ Ռեզա Շահ Փահլավիի բռնապետության ներքո: Բրիտանական կառավարությունը ԱՄՆ-ի հետ մրցակցում էր տարածաշրջանում ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելու համար: Այդ ժամանակաշրջանի բարձրագույն կետը պետք է լիներ 1953թ. օգոստոսի 19-ի հեղաշրջումը, պլանավորված Մոհամմադ Մոսադեղին վարչապետի պաշտոնից հեռացնելու համար: Մոսադեղի կառավարության տապալումից հետո շահը վերադարձավ իշխանության: Երկրում դաժան հաշվեհարդարներ տեղի ունեցան դեմոկրատական շարժման մասնակիցների նկատմամբ[3]:

Շատ արվեստագետներ և բանաստեղծներ արտահայտեցին իրենց զգացումները Իրանի չընտրված շահի և նրա բռնատիրության հանդեպ: Այդ շրջանում պարսից պոեզիայի ամենաբնորոշ գիծը հոռետեսությունն էր[4]: Պոետները իրենց բանաստեղծություններում կիրառում էին այնպիսի խորհրդանիշներ, ինչպիսիք են՝ խավար, գիշեր, միայնակություն, ցուրտ, լռություն, բռնություն, հույսերի խորտակում, բանտարկություն և այլն:

Սեփեհրու բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Գույնի մահը» (Մարգե րանգ) վերնագրով, լույս տեսավ 1951թ.: Պոետը հաճախ է կիրառել խավար և գիշեր բառերը: Թվում է՝ ամեն ինչ կորցրել է իր գույնը խավարի ու մահի դեմ և յուրաքանչյուր գույն վերածվել է տագնապալից վշտի: Միստիկ և փիլիսոփայական գաղափարներ այս ժողովածուում դեռևս չեն զարգացվել: Հուսահատությունն ու վախը շատ հստակ են արտահայտվել ժողովածուում: Երիտասարդ բանաստեղծը ականատես լինելով աշխարհում իշխող չարին՝ առայժմ կարողանում է միայն մի անտեսանելի պատ կառուցել, որպեսզի չտեսնի նվաստը, անարգը:

«Ամուր ու հաստատուն մի պատ կառուցեցի շուրջս.
Որ ծածկի հայացքիցս այն ամենն, ինչն աչքիս նվաստ երևաց
Եվ փակի ուղին չարի հարձակումից.
Որին իմ երևակայությունն իրական գծեր էր հաղորդում.

Սակայն, երևակայությունս, պատի ետևում
Խավարի պատկերներ էր պատկերում
Եվ օխի փայլն ընդունում էր Ահրիմանի կերպարանքը...»:

Ժողովածուի միակ բանաստեղծությունը, որտեղ լույսի և պայծառության էլեմենտներ կան, «Արշալույսն» է (Սեփիդե)*, որն սկսվում է լույսով և ավարտվում լույսի մեջ:

Սեփեհրու բանաստեղծական երկրորդ ժողովածուն լույս տեսավ 1953թ. «Էրազների կյանքը» (Զենդեգիյե խաբիա) վերնագրով: Գրաքննադատ Հոջաթ Էմամին գրում է. «Էրազների կյանքը» ժողովածուն ունի «Գույնի մահի» նույն ցավագին, թախծալից մթնոլորտը, սակայն, ի տարբերություն «Գույնի մահի», այստեղ կյանքը փոխարինում է մահին, խավարի էլեմենտները դուրս են մղված լույսի, արևի և փայլասի միջոցով»': «Էրազների կյանքում» թվում է, թե պոետը կտրել է իր կապերն այս նյութական աշխարհից: Նրա միակ մտահոգությունն է իմանալ շրջապատող աշխարհի մասին, ինչպես նաև իր ներաշխարհի մասին: Նա մարդուն պատկերում է այնպես, կարծես նա ապրելիս չլինի այս նյութական աշխարհում:

Սոհրաբի սերը Հեռավոր Արևելքի փիլիսոփայական դպրոցների և արվեստի նկատմամբ մեծ էր: Այդ սերը նա զուգակցում էր նրանց փիլիսոփայությունն ու կրոնական ուսմունքները հետաքրքրությամբ ուսումնասիրելու հետ: Նրա պոեզիայի վրա իսկական ազդեցություն են թողել ճամփորդությունները դեպի Արևելք և Արևմուտք: Այն, որ երբեմն Սեփեհրին գրում է հայկու* ձևով, նրա Ճապոնիա ճամփորդության հետևանքն է, որը նա կատարեց փայտի վրա ճապոնական ոճով փորագրություն սովորելու նպատակով:

Սեփեհրին իր բանաստեղծություններում օգտագործել է խորհրդանիշներ, որոնք երկակիություն և բարդություն են հաղորդել դրանց: Սոհրաբի բանաստեղծությունների խորհրդանիշները ծագում են նրա գնոստիկական, փիլիսոփայական և սոցիալական գաղափարներից: Նա կրել է տարբեր մշակույթների՝ իսլամական Իրանի, Հին Հնդկաստանի, Չինաստանի և քրիստոնեական երկրների ազդեցությունը: Սոհրաբի խորհրդանիշները Աստծուն՝ Այլահին հասնելու իր ջանքերում տարբերվում են նրա ժամանակակից բանաստեղծների սոցիալ-քաղաքական խորհրդանիշներից:

1961թ. նա հրատարակեց իր երկու ժողովածուները «Արևի բեկորները» (Ավարե աֆթաբ) և «Վշտի Արևելքը» (Շարղե անդուհ) վերնագրերով: Այս ժամանակաշրջանում նա գրականագետների կողմից ընդունվում է որպես բանաստեղծ, ով նոր տեսանկյունից է դիտում է մարդուն, կյանքը, գոյությունը և ճշմարտությունը: Այս առիթով Քամիար Աբեդին գրում է. «1961-1980թթ. ընթացքում Սոհրաբը կարողացավ հասնել ավելի ավելի իր կարողությունների գենիթին, և նրա ստեղծագործությունները, հատկապես, նրա պոեմները մեծապես հիացնում են իրենց լայն մտահորիզոնով»[9]: Սեփեհրու երևակայության ազատ թռիչքները, թերև սուրեալիզմի արտահայտումը և առարկաների սովորական հարաբերությունների որոնումը, մաքուր բանաստեղծական ոճը միահյուսված ռոմանտիկայի հետ, Սեփեհրու պոեզիայի ակնհայտ առանձնահատկություններից են: Հենց դրանց շնորհիվ է, որ Սեփեհրին արժանացել է Հնդկաստանի 12-րդ դարի միստիկ և ռոմանտիկ բանաստեղծ Բեդել Ազիմ Աբադիի հետ համեմատվելուն[10]:

Սեփեհրու «Վշտի Արևելքը» համարվում է շրջադարձային կետ նրա պոեզիայում՝ բանաստեղծությունների ձևի և բովանդակության տեսակետից: Ժամանակակից հետազոտող և թարգմանիչ Դարիուշ Աշուրին համարում է. «Ժողովածուի բանաստեղծությունների վերնագրերը կրում են բուդդայական գրականության ազդեցությունը, առեղծվածային են և խորհրդավոր: Ընդհանրապես, այս գիրքն արտահայտում է մի տեսակ կրոնական փորձառություն: Բանաստեղծությունների այս խումբը ծագում է Սեփեհրու ներքին միստիկ փորձառությունից, շարադրված է պոետի հոգեկան վիճակին միանգամայն համահունչ»[11]:

Սեփեհրու երկար պոեմը՝ «Ջրի ոտնաձայնը» (Սեդայե փայե աբ) ընդգրկված է նրա «Ութ գիրք» վերնագրված բանաստեղծական ժողովածուի մեջ որպես նրա հինգերորդ հրատարակված գիրք (1976թ.): Բանաստեղծության լեզուն պարզ է և սահուն, առատ պատկերներով, ինչպես նաև խոհերով, որոնք ցույց են տալիս, որ իր կողմից իդեալական բնությանը հասնելու որոնումները հասել են իրենց ավարտին: «Ջրի ոտնաձայնում» մենք կարող ենք կյանքի ոտնաձայնին և պոետի հստակ մտքերին ունկնդրել, որոնք հոսում են մեղմությամբ, դանդաղորեն և միևնույն ժամանակ զուգահեռ են: «Ջրի ոտնաձայնում» ջուրը

խորհրդանշում է, հենց իրեն՝ պոետին, և գետը, փաստորեն, սյուժեներում է աշխարհի արահետը, որով մենք քայլում ենք:

Պոեմը բաժանվում է երեք մասի: Առաջինում պոետն ընդհանրապես իրեն բացահայտում է որպես մեկը, ով ապրում է ներկա ժամանակում, իսկ հետո երկրորդ մասում, նա շատ համառոտ պատմում է իր անցյալի մասին:

Երրորդ մասում նա մեզ տեղեկացնում է իր խոհերի և հավատամքների մասին, որպես ներկայում նրա վերածննդի արդյունք: Պոեմում ոչ մի խոսք չկա նրա ապագա կյանքից և ծերությունից, քանի որ նա դրանք դեռ չի ապրել: Գրականագետ դոկտոր Ս. Շամիսայի կարծիքով. «Պոեմը, փաստորեն, սկսվում է երկրորդ մասից: Առաջին մասը պարզապես սյուժետիկ է, իսկ երկրորդ մասը և՛ պոետիկ է, և՛ փիլիսոփայական: Եվ, անշուշտ, պոեմի այս մասն է, որով նա դառնում է գլուխգործոց, քանի որ լեզուն և միտքը տարօրինակ կերպով վսեմ են»[12]:

Սոհրաբը հատուկ քնքուշ զգացումներ էր տածում բնության և նրանում բնակվող էակների հանդեպ: Ֆիրուզ Սայյարը՝ «Սոհրաբ Սեփեհրու նկարներն ու գծանկարները» գրքի հեղինակն այսպես է գրում. «Նա (Սեփեհրին-Ս. Մ.) աչքերը հառում է արևին՝ ծագելիս, թռչունին՝ երբ նա հեռվում երգում է, բուլբուլին, որը փքթում է, բույսին, որն աճում է կավե ծաղկամանի մեջ, կյանքին, որը շարունակվում է հովտում ծառերի մեջ և կարմիր վարդին, որը դիտողին ներքաշում է իր դյութանքի մեջ»[13]:

Սեփեհրու բանաստեղծությունների թարգմանիչ Քարիմ Էմամին այսպես է բնորոշում նրա բանաստեղծությունները. «Նա (Սեփեհրին-Ս. Մ.) ներբողում է կյանքը և Աստծո բյուրավոր արարածներին, ամեն ինչ՝ շարժվող և անշարժ, որին նա հանդիպում է արեգակի տակ: Նա հաղորդակցվում է բնության հետ և ցանկանում, որ մենք բոլորս սիրենք այն և հարգենք դրա օրենքները... Սեփեհրին հավատում էր, որ բնությունը պարզապես չի պատկանում մարդկությանը: Նա ցանկանում էր, որ այն անաղարտ մնա, որպեսզի ամեն մարդ կարողանա դրանից մեծապես բավականություն ստանալ»[14]:

«Ջրի ոտնաձայնում» Սոհրաբը խոստովանում է.

«Ես մուսուլման եմ...»[15]:

Բայց բացատրում է իր իսլամի յուրօրինակությունը.

Իմ Քիբլան[16] ծաղիկն է.

Իմ աղոթատեղին աղբյուրն է, իսկ մոհրը[17] լույսը.
Տափաստանն իմ աղոթագիրքն է.
Ես լվացվում եմ պատուհանին ընկած ցոլքերով.
Ես նամազ եմ կարդում այն ժամին,
Երբ կեչու անտառի վերևում քամին է աղոթքի կանչում
Իմ Ղա'աբան ջրի մոտ է,
Իմ Քա'աբան ակացիայի շուքի տակ է ...»[18]:

Սեփեհրին արտահայտում է իր փիլիսոփայությունը և նոր աշխարհայացքը կյանքի մասին: Չկա ոչ մի թշնամություն այս կյանքում, ամեն ինչ հրաշալի է և ոչինչ երբեք չի կարող նշավակվել, քանի որ ամեն ինչում առեղծված կա, որն ակնկալում է բացահայտման: Համաձայն Սեփեհրու, կյանքը պարզ ու բնական դեպքերի մի հավաքածու է և մենք պետք է նայենք դրանց պարզորեն, առանց որևէ կանխակալ կարծիքի: Նա համարում է, որ մենք պետք է մաքրենք մեր աչքերը և ամեն ինչին այլ կերպ նայենք, որպեսզի ի վիճակի լինենք հայտնաբերել, որ ամեն ինչ իր ճիշտ տեղում է և ոչինչ երբեք չի կարող համարվել վատ:

«Եվ չասե՛նք, թե գիշերը վատ է
Եվ չասե՛նք, թե կայծոռիկն անտեղյակ է այգու տեսակետից...
Եվ իմանա՛նք, որ եթե չլինեին որդեր,
Կյանքում ինչ-որ բան կպակասեր...
Եվ եթե չլիներ մահ,
Մեր ձեռքերը կորոնեին ինչ-որ մի բան»[19]:

1966թ լույս տեսավ Սեփեհրու «Ճանապարհորդը» ժողովածուն: Քննադատների կարծիքով այս ստեղծագործության բանաստեղծական և մշակութային արժեքն ավելի մեծ է, քան «Ջրի ոտնաձայնինը»: «Նրանց համար, ովքեր անծանոթ են Սեփեհրու փիլիսոփայությանը, ովքեր սովոր են կարդալ-անցնել բանաստեղծություններն առանց դրանց մասին խորհրդածելու, «Ճանապարհորդը» բացառություն է, քանի որ մարդ չի կարող գտնել այն պարզ ուրվագիծը, որ կա Սեփեհրու մյուս պոեմներում»[20]:

«Ճանապարհորդում» Սեփեհրին մի իրական ճանապարհորդի նման, կատարում է իր ճամփորդությունը, ճամփորդություն՝ ժամանակի և տեղի դիստարկության մեջ, որտեղ պատմվում է մարդու

պատմությունը: Ճանապարհորդը մի կողմից թվում է հիացած, որ հայտնաբերել է կյանքի առեղծվածները և հասել է ըմբռնմանը. և մյուս կողմից. նա վշտացած է՝ տեսնելով իր փոքրությունն Արարչի վեհության և սրբազնության առջև: Այս բոլորը նրանից է, թե նա ինչպիսի սիրով և ոգևորությամբ է դիտում տիեզերքը:

«Ճանապարհորդը» խորհրդանշական ստեղծագործություն է: Այն խորհրդանշում է ճամփորդին, որը չի մնում մեկ տեղում և մեկ իջևանում, այլ թարմ ջրի նման անցնում է կյանքի գետի միջով:

MARTA SIMONYAN
(YSU)

THE POETRY OF SOHRAB SEPEHRI

Sohrab Sepehri is one of those extraordinary artists who achieved great fame among his contemporary poets and authors during his lifetime and soon won acclaim as a poet having his own special style. There is no enmity in this life, everything is fine and nothing should be ever ridiculed since there is an enigma in everything waiting to be uncovered. Sepehri has used symbols in his poems and thus has given it ambiguity and complexness. Simbols of Sohrab Poems are originated in his gnostic, philosophical and social beliefs and ideas. He has been affected by different cultures; Islamic Iran, ancient India, China and Christian lands. Sohrab is a gnostic poet and in his efforts to reach God -Allah, his symbols are different from the socio-political symbols of his contemporary poets.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեփեհրու պոեզիայի մասին մի հարցազրույցի ժամանակ իրանցի բանաստեղծ Ահմադ Շամլուն այսպես արտահայտվեց. «Անմեղ մարդը մոտերքում մեռնում է, իսկ Սեփեհրին կանգնած է ծառի մոտ և ասում է. «Ջուրը մի՝ պղտորեք»: Նրա բանաստեղծությունները արտահայտում են գեղեցկություն, բայց... միայն գեղեցկությունը բավական չէ ինձ համար...»: Այդ մասին տե՛ս www.sohrabsepehri.com/main.asp: Սոհրաբի Սեփեհրի ագ դիդեգահե դիգարան, Մուսահեբե բա Ահմադ Շամլու:
2. Նույն տեղում, Դոկտոր Ռեզա Բարահենի վա Սոհրաբ,
3. Այդ մասին մանրամասն տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2007, էջ 655-667:
4. Кляшторина В. Б., Современная персидская поэзия, Очерки, М., 1962, с. 16-17.

5. Սեփեհրի Ս., Մարգե րանգ. Դիվար, www.sohrabsepehri.com/main.asp.

6. Նույն տեղում, Սեփիդե

7. www irib ir/worldservice/englishradio/ Culture. poetry2. Htm

8. Հայկուն ճապոնական կարճ բանաստեղծության մի տեսակ է, որտեղ բնությունն է նկարագրվում, սակայն դրա տակ գաղտնի իմաստ է թաքնված, որը սլստմում է մարդու և բնության միջև եղած կապի մասին

9. www irib ir/worldservice/englishradio/ Culture. poetry2 Htm

10. Մոհամմադ Զիա'ֆար Յահուդի, Չոուն սաբույե թեշնե, Թարիխե ադաբիյաթե մո'ասիրե ֆարսի, Թեհրան, 1995, ս 136:

11. www. irib ir/worldservicc/englishradio/ Culture. poetry2. Htm

12. Շամիսա Սիրուս., Նեգահի բե Սոհրաբե Սեփեհրի, Թեհրան, 1997, ս. 21:

13. www irib.ir/worldscrvice/englishradio/ Culture. poetry2. Htm

14. www wikipedia.org/wiki/Sohrab-Sepehri-82k

15. Սեփեհրի Ս., Ջրի ոտնաձայնը, www.sohrabsepchri.com/main.asp:

16. Քիբլան դա դեպի Քա'աբայի ուղղությունն է: Մուսուլմանական կրոնական պրակտիկայում հավատացյալները աղոթքի ժամանակ պետք է իրենց դեմքն ուղղեն դեպի այդ կողմը: Մզկիթում Քիբլան որոշելու համար կատարվում է հատուկ նշան միհրաբ:

17. Մոհրը ոչ մեծ խտացրած կավի տախտակ է՝ վերցված Քերբելայի հողից, որը համարվում է շիաների սուրբ քաղաքը Ներկայիս Իրաքում: Նամազի ժամանակ շիաները մոհրը դնում են իրենց առջև գորգի վրա և, ծնկի իջած, երկրպագության ժամանակ իրենց ճակատներով դիպչում են դրան:

18. Սեփեհրի Ս., Ջրի ոտնաձայնը, www.sohrabsepchri.com/main.asp

19. Նույն տեղում:

20. Շամիսա Սիրուս, Նեգահի բե Սոհրաբե Սեփեհրի, ս. 30:

ЦАНКОВА АНТОНИЯ
(Софийский университет имени Св. Климента Охридского)

О СПОСОБАХ ВЫРАЖЕНИИ ОПРЕДЕЛЕННОСТИ-НЕОПРЕДЕЛЕННОСТИ В КИТАЙСКОМ И БОЛГАРСКОМ ЯЗЫКАХ

Как известно, категория определенности-неопределенности является универсальной категорией семантики высказывания, средства выражения этой категории присуши всем языкам, но их типология неодинакова. В артикленых языках она имеет свои грамматические показатели, а в безартикленых языках находит выражение в языковых средствах разного уровня – лексических, морфологических, синтаксических, просодических и т.д.

На изучение этого вопроса относительно к китайскому языку не уделяется специальное внимание со стороны китайской и русской лингвистических школ, вероятно ввиду отсутствия этой грамматической категории в соответствующих языках. Определенность-неопределенность имени рассматривается, например, в связи вопросами выражения числа существительных[1], видо-временного оформления глагола[2], или при описаний правил образования некоторых специфических конструкций[3].

В западной синологии[4], также как и в болгарской лингвистике[5] данное явление привлекает внимание исследователей главным овразом в связи с сопоставлением категорий собственного и исследуемого языка. В своем исследовании, С. Катьрова намечает основные средства выражения категории определенности-неопределенности в китайском языке и определяет тематику сопоставительных исследований[6].

Дальнейшее изучение функционирования данной категории в китайском языке является особенно важным ввиду влияния, которое она оказывает на языковые явления разного уровня, а также в связи с необходимостью различать все частные значения определенности-неопределенности и адекватно передавать их в переводе от и на китайский

язык. Кроме того, изучение этого вопроса позволяет провести типологические исследования в плане средств выражения одного и того же грамматического значения в разносистемных языках, таких как безартиклевый китайский и артиклевый болгарский языки.

Категория определенности-неопределенности в болгарском языке имеет ряд частных значений, которые определяются по разным семантическим признакам. Маркированное определенным артиклем имя имеет значение индивидуальной (специфической) определенности, поскольку является двусторонне идентифицированным (и со стороны адресанта, и со стороны адресата), а маркированное неопределенным артиклем имя (в болгарском языке - словом „один") - односторонне идентифицированным (только со стороны адресанта). Оно имеет значение индивидуальной (специфической) неопределенности. Существительное в артиклевой форме в нереферентном контексте, т.е. когда оно не соотносится с конкретным объектом действительности (референтом) приобретает обобщенное (генерическое) значение, т.е. обозначает „все представители данного класса объектов". Имена с нулевым артиклем в зависимости от контекста также могут быть референтны или нереферентны, в первом случае они получают значение неспецифической неопределенности, а во втором случае - нереферентной неопределенности.

Рассмотрим основные способы выражения разных значений определенности-неопределенности в китайском языке.

В плане морфологии в китайском языке имеется показатель множественности, или „коллективности" - суффикс „们", который обозначает конкретное, идентифицированное или идентифицируемое множество людей (в редких случаях и при определенных условиях, животных). Ввиду этого, существительное с суффиксом „们" выражает значение специфической определенности обозначаемого множества лиц. Нужно отметить, однако, что данное грамматическое значение может передаваться и другими средствами, оно не предполагает обязательное наличие суффикса „们", который, как считается, кроме своего основного значения передает также дополнительные модальные оттенки[10].

В редких случаях существительные, оформленные на „们" могут иметь обобщенное (генерическое) значение, напр. „小孩子们都喜欢过年...."(„Дети любят праздновать Новый год....")

Такое значение обычно могут приобретать стандартные группы людей или вообще людей в целом, напр. "孩子们"(„дети") , "大人们" („взрослые") , "人们"(„люди").

Существительное, оформленное суффиксом „们", также как и существительное с определенном артиклем в болгарском языке не употребляются в качестве именной части составного сказуемого, а также после глагола „иметь" – позиции, в которых имя всегда является неопределенным.

На лексическом уровне в китайском языке, равно как и в любом другом языке, имеется относительно стандартный набор средств, которые передают значения определенности и неопределенности. Например, неопределенные местоимения и наречия, числительное «один» в значении «некий, некоторый» подсказывают неопределенность. Показателем определенности является определение – актуализатор. Таким определением могут быть указательные местоимения, определения с притежательным значением, определения, характеризирующие предмета по месту, где он находится, по времени, к которому относится и т.д.[11]

Значение определенности-неопределенности именной группы в значительной степени выражается в актуальном членениии и синтаксической структуре фразы. Как известно, в китайском языке тема обычно является исходным пунктом высказывания и совпадает с группой подлежащего, а рема – с группой сказуемого. Прежде всего для нас важно выяснить, какое значение в плане определенности-неопределенности приобретает существительное в зависимости только от его синтаксической позиции, вез никаких дополнительных лексических и морфологических показателей. Такое значение мы будем считать типичным для данной синтаксической позиции. Во вторых, нужно установить, какие дополнительные значения возможны в данной позиции и какими дополнительными средствами они должны быть маркированы.

1. Подлежащее (первый актант) обычно занимает начальную позицию и совпадает с темой высказывания, в силе чего оно чаще всего является определенным. Это его типичное значение в референтном контексте. В нереферентном контексте имя в данной позиции приобретает генерическое значение. В некоторых случаях эти две значения трудно разграничить. Напр.: "小孩子喜欢吃冰淇淋"。"Дети любят

мороженное." В этом изолированном предложении „дети" может иметь как референтное, так и генерическое значение. Значение в конкретной речевой ситуации выводится из контекста.

Первый актант в исходной позиции может обозначать неопределенное существительное, но при этом значение специфической неопределенности должно быть маркировано, чаще всего словом "有"и/или количественным определением. В последнем случае значение определенности-неопределенности также зависит от контекста.

2. Второй актант в качестве подлежащего (в пассивных конструкциях) без дополнительных лексических показателей также является определенным.

Определенность объекта принимается как стандартное правило образования пассивной конструкции. Даже когда перед объектом имеются показатели неопределенности (числительные и пр.), значение определенности все равно присутствует именно в силе синтаксической позиции второго актанта. Напр.:

(用的还是那两个可爱的鱼杯子，可叹的是，)

今天下午一个杯子被家里人不小心打坏了。("Использовала все те же две чашки с рыбами, жалко то, что) сегодня после оведа одна чашка выла разбита мужем.

3. Объект действия (второй актант) может выть вынесен в начальную позицию (в качестве темы) и в этом случае он является тематическим подлежащим. В этой емфатической конструкции с грамматически выраженным актуальным членением, объект безусловно является определенным и другие варианты значения для него невозможны.

4. Зависимое подлежащее в послеглагольной позиции (в составе ремы) вез дополнительных показателей обычно выражает неспецифическую неопределенность, т.е. в данном случае обозначаются не конкретные предметы, вещества и т.д., а качественные характеристики всего данного класса. Сравним примеры: (4.5.А)"外面下雨。""На улице идет дождь."; (4.5.Б) "雨下了一天一夜才停。" „Дождь шел целый день и целую ночь и только потом утих."; (4.5.В) (你看，) 来了人了。"(Смотри,) пришли (какие-то) люди." ; (4.5.Г)

人来了。(你怎么还没准备好呢？) "Люди пришли (как же так ты еще не готов!)"

В четырех приведенных примерах субъект не имеет никаких лексических показателей определенности-неопределенности, но даже и вне контекста он воспринимается как неопределенном в послеглагольной позиции (пр. 4.5.А и 4.5.В) и как определенном в исходной позиции в предложении (пр. 4.5.Б и 4.5.Г). Можно предположить, что данные трансформации конструкций связаны именно с выражением значения определенности-неопределенности.

В позиции послеглагольного подлежащего могут выступать слова, обозначающие термины родства, а также часть, принадлежность или собственность лица, обозначенного существительным в исходной позиции в предложении. Напр. "挥手"(„махать рукой"),"摇头"(„качать головой") и т.д. Такие слова, хотя и являются определенными по своему значению, в позиции после глагола приобретают видовой оттенок, и на болгарский язык переводятся без определенным артиклем.

Послеглагольное подлежащее может обозначать специфическую неопределенность, но она должна быть выражена лексически, обычно количественным определением. Зависимое подлежащее в редких случаях может иметь значение определенности, в этих случаях оно указывается определением-актуализатором.

5. Конструкция с вынесенным в препозиции дополнением с предлогом "把"маркирует определенный объект. В редких случаях имя, вводимое предлогом „把" может иметь значение специфической неопределенности, но при условии, что оно указано числительным и объект не упоминался в контексте.

6. Второй актант в послеглагольной позиции без дополнительных лексических показателей, может обозначать как определенный, так и неопределенный объект. Например: 我买了水果了。"Я купила фрукты." В этом случае объект (фрукты) воспринимается как определеный если он уже упомянут в контексте. В противном случае он является неопределенным.

7. Именная часть сказуемого связочного предложения, если она не оформлена дополнительными лексическими средствами, как правило

имеет значение нереферентной неопределенности. Напр.: 他当老师了。„Он стал учителем."

В таких конструкциях возможно добавление числительного „один", но оно не придает в этом случае значение специфической неопределенности, а имеет интензифицируюшее значение. Напр.: 他是一个孩子。"Он (просто один) ребенок."

Если именная часть составного сказуемого является идентифицированной, это значение обязательно маркируется определением-актуализатором. Односторонняя / двусторонняя идентифицированность может выть маркирована указательным местоимением или определяется по контексту.

8. Именная группа после глагола "有"(„иметь") всегда является неопределенной.

Кроме высшеуказаных средств выражения определенности-неопределенности именной группы, следует учитывать еще такой универсальный фактор, как вид и семантика глагола. Связь между этими двумя явлениями изучается с разных точек зрения. Применительно к английскому языку, грамматически выраженная определенност-неопределенность имени является средством определения вида глагола, который не имеет морфологического выражения[12]. В болгарском языке ове категории имеют формальное выражение, их взаимозависимость проявляется в некоторых ограничениях, которые они налагают друг на друга. Например, глаголы типа „съесть", „дочитать", „выкупить" и т.д., действие которых имеет исчерпывающий характер по отношению к овъекту, всегда тревуют дополнение со значением определенности, которое маркируется определительным членом. Это связано с тем фактом, что определенность имени проявляется не только в его идентифщированности, но также и в его тотальности. Известный овъект всегда воспринимается в его количественной полноте, т.е. значение идентифицированности всегда предполагает значение целостности. С другой стороны, в болгарском языке определенный артикль в некоторых случаях используется только для передачи значения тотальности.

В китайском языке эта разница передается в основном лексическими средствами (словами „都" – „все", „一些" – „некоторые", "一点" –

„немного"), а при существительных со значении лиц возможно также употребление суффикса "们".

Применительно к китайском языке также существенна взаимосвязь между оформленностью глагола и определенностью-неопределенностью объекта[1]. Глаголы в результативный вид, которые указывают на результат действия, логически предполагают конкретный, (односторонне или двусторонне) идентифицированный объект. Это доказывается и тем фактом, что синтаксические конструкции, в которых объект как правило является определенным (пассивная и конструкция с вынесенным дополнением с предлогом "把"), глагол тоже должен быть оформленным и не может употребляться в неутральном виде.

В результате сопоставления способов выражения определенности-неопределенности имени в двух разносистемных языках – болгарский и китайский, можно сделать вывод о том, что в безартиклевом китайском языке существует определенный комплекс взаимодействующих средств, принадлежащих разным языковым уровням, посредством которых передаются разные значения категории определенности-неопределенности, а именно – индивидуальная определенность, генеричность, специфическая, неспецифеческая, нереферентная неопределенность. Выражение данной категории в китайском языке связано с другими языковыми явлениями – синтаксический строй предложения, вид глагола и пр., поэтому изучение данной категории особенно важно для целостного описания грамматической системы китайского языка.

ANTONIA TSANKOVA
(SU, BULGARIA)

ON THE MEANS OF EXPRESSING DEFINITENESS-INDEFINITENESS IN CHINESE AND BULGARIAN

Definiteness-indefiniteness is viewed as an universal semantic category, but the means of manifestation of definiteness-indefiniteness across languages vary in terms of typology. Contrastive study of the specific ways of functioning and means of expression of this category in two languages – Bulgarian, in which the category is formally marked by definite article, and Chinese, where it is not grammatically expressed, has lead to the following conclusions:

In Chinese, definiteness-indefiniteness of the noun phrase is expressed through a certain complex of lexical, morphological, syntactical, prosodic, etc. mutually related means, which can convey all the private meanings, inherent to the category in Bulgarian. Apart from that, in Chinese we observe a certain influence of the category on other language phenomena, such as the syntactic structure of the phrase, the category of tense and aspect, etc. Therefore, exploring the category of definiteness-indefiniteness is important for the complete description of the grammatical system of Chinese language.

ПРИМЕЧАНИЯ

1. Иоффе С. Х., Определенность и число существительного в китайском языке // Языки народов Востока, Л., 1961, с. 65-74.
2. Заньялова О. Н., Связь между оформленностью глагола и определенностью дополнения в китайском языке, в кн.: „Письменные памятники и провлемы истории и культуры народов Востока", М., 1970, с. 147-149.
3. 刘月华等，实用现代汉语语法，北京，2006 (Лю Юэхуа и др., „Практическая грамматика современного китайского языка", Пекин, 2006), с. 733-734; 757-760.
4. Li, C.N & Thompson, S. A., Mandarin Chinese: A functional Reference Grammar, Berkeley, 1981, p.126-132.
5. Катърова С., За категорията определеност/неопределеност в китайския и българския език. // Втори международен конгрес по българистика. Доклади 3. София, 1987, с. 80-87.
6. Там же.
7. Станков В. Семантични особености на категорията неопределеност на имената в българския език // Проблеми на граматичната система на българския език, София, 1995, с. 87-104
8. Коротков Н. Н., Основные особенности морфологического строя китайского языка. Москва, 1968, с. 273-277.
9. 陈光磊，关于"们"与"- s" // 语法研究与对外汉语语法教学. 太原，2002 (Чэнь Гуанлэй, О „мэнь" и „- s" // Исследования по грамматике и преподавание грамматики китайского языка как иностранного), с. 426-434
10. http://uts.ec.utexas.edu/~tls/2004tls/abstracts/iljic.pdf - The Interaction Between Number And Person In Chinese
11. Иоффе С. Х., Определенность и число существительного в китайском языке // Языки народов Востока, Л., 1961, с. 71.
12. Кабакчиев К., Видът в английския език, София, 1992, с. 41-79.
13. Заньялова О. И., Связь между оформленностью глагола и определенностью дополнения в китайском языке, в кн.: „Письменные памятники и провлемы истории и культуры народов Востока", М., 1970, с. 147-149.

ՓԱՇԱՅԱՆ ԱՆԻ

(ՌՀ(Ս)Հ)

ՌՈՒԴԱՔԻԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

10-րդ դարում ապրած և ստեղծագործած Աբու Աբդալլահ Ռուդաքին իր հանճարեղ պարզությամբ նոր խոսք ասաց պարսից պոեզիայում: Նա սոսկ արքունական երգիչ չէր, այլ կատարյալ բանաստեղծ, ով հարստացրեց և զարգացրեց արևելյան պոեզիան իր նրբաճաշակ ոճով, ասելիքի խորությամբ և պատկերների շքեղությամբ: Անշուշտ կան կենսագրական տեղեկություններ Ռուդաքիի մասին, բայց իր քնարական հերոսի շուրթերով արվեստագետը ներկայացնում է բանաստեղծի իր անցած ուղին, հոգու և մտքի տվայտանքները: Եվ դա անում է արվեստի հզոր ուժով՝ պարզ և խորիմաստ, հակիրճ, սակայն զգացմունքների առատությամբ, փիլիսոփայական խոր ընդհանրացումներով:

Ռուդաքիի արվեստը պատկերային է: Տեսողական պատկերների միջոցով է նա ներկայացնում իր կյանքը, սերը, խոհերը, մարդու և աշխարհի փոխհարաբերությունը, որտեղ լավ է ճանաչում իրեն. «Քանզի սիրտս գանձարան է, իմ երգերը՝ մաքուր ոսկի, Ու սերն ինքն է անմահական զարդարանքն իմ ամեն խոսքի, Ես ուրախ եմ ապրել կյանքում, վիշտը երբեք ինձ չի նեղել, Եվ իմ սիրտը զվարթության հրապարակ է միշտ եղել»[1]: Սակայն բանաստեղծը միշտ ուրախ չի ապրել: Ծանոթանալով Ռուդաքիի ստեղծագործություններին՝ պարզ է դառնում, որ արքունական պոետի կյանքը ուղեկցվել է բարդ տարանցումներով:

Սերը, ինչպես շատ պոետների, այնպես էլ Ռուդաքիի արվեստի հիմնաքարն է. սիրո ապրումներից են ծնվում և պատկերները, որոնց մեջ գերիշխում է շարժումը՝ գույների, բույրերի, համերի ներդաշնակ համադրմամբ:

Բանաստեղծական մտածողության հիմքը պատկերն է: Եվ որքան պատկերային է բանաստեղծությունը, այնքան բարձրարժեք է այն: Պատկերի մեջ ամփոփվում են բոլոր այն միջոցները, որոնք օգնում են պատկերի կայացմանը: Ինչպես ողջ արևելյան պոեզիայում, այնպես էլ Ռուդաքիի պատկերի հյուսվածքում սփռված համեմատություններն ինքնատիպ են, որոնք չեն կրկնվում ոչ գազելներում, ոչ ռուբայիներում, ոչ ղասիդներում և ոչ էլ բեյթերում: Ռուդաքիի պոեզիան հագեցած է հարուստ համեմատություններով: Սիրած կնոջ գեղեցկությունը համեմատում է մարգարիտի, ծովի ալիքների, զանազան բույրերի և բնության տարերքների հետ, որոնց միջոցով բանաստեղծը հասնում է հոգու տարածքներին՝ պատկերելով իր տառապանքը, կարոտը և մտորումները դրանց շուրջ.

Գեղեցկության ծով ես, հոգիս, մարջանով է շուրթդ շիկնել,
Ատամներդ ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ,
Հոնքդ նավ է, իսկ ճակատիդ այդ լուսեղեն խորշումն՝ ալիք,
Պարանոցդ՝ ջրապտույտ, և աչքերդ՝ փոթորիկներ...[2]

Բանաստեղծն իր բախտը կապում է սիրած աղջկա բախտին և վերջինիս վերաբերմունքից է կախված իր ճակատագիրը: Սիրային բանաստեղծություններում իշխում են գույներն ու բույրերը.

Երբ լվացվում ես, քո վարդագույնից շիկնում է առուն,
Երբ ծամդ ես քանդում, մուշկն է սկսում բուրմունքն իր...[3]

Ռուդաքիի պոեզիան արտակարգ գունային է: Իշխում են բոլոր գույները, կա նաև ծիածանը՝ իր ամենատարբեր թույրերով: Առանձնանում են նաև թանկարժեք իրերն ու քարերը՝ միջնադարյան մարդու ու մտածողական համակարգի բարձր արժեքները.

Ձեռքիդ գավը նորած լույսի արծաթով է ասես շաղում[4].

Կամ.

Բեր այն գինին, որ գինի չէ՝ հոսող սուտակ,
Շողքը նրա սրի շույք է արևի տակ՝:

Ռուդաքիի պատկերային համակարգում տեղ գտած մակդիրները ևս առանձնակի գրավչություն են հաղորդում բանաստեղծությանը: Ռուս

գրականագետ Լ. Տոմաշևսկին առանձնացնում է «պոետական կլիշե» արտահայտությունը՝ հատկապես նշելով նրա թարմության և հանկարծակիության կարևորությունը. «Ավանդական մաշված մակդիրները գրելաոճի թերություն են համարվում այնպես, ինչպես իրենց սովորականության մեջ թույլ են ներգործում երևակայության վրա»[6]

Ռուդաքիի գործածած մակդիրներն ասվածի ճիշտ հակառակն են: 10-րդ դարում ստեղծագործած բանաստեղծի պոեզիայում մակդիրը պատկերին նոր խոսք, ուժ և խորություն է տալիս:

Հետաքրքիր կերպավորում ունի բնության անձնավորումը: Ասվածի ապացույցն «Գարուն» ղազալն է, որտեղ անձնավորվում են գայլերը, երկինքը, ծաղիկները, կայծակը, դաշտը և հովիտը: Բայց ամենաշքեղը, անշուշտ, արեգակի անձնավորումն է.

Տես, արեգակն իր դեմքն է լույս մերթ-մերթ հանում ամպի-տակից,
Զորական է ասես գերյալ, որ փախչում է իր պահակից[7]:

Արթնացած բնությունն իր շարժման մեջ բույրերի, գույների, ձայների համակցում է: Այստեղ պատկերի ուժն իր գագաթնակետին է: Բանաստեղծը, անձնավորելով նաև ժամանակը, երիտասարդացնում է այն.

Ով կքել էր ծերության տակ պատանությամբ հպարտացավ,
Եվ աշխարհն այս հին ու ծեր՝ ջահելության հանդես դարձավ[8]:

«Հրաշք խմիչք է գինին» գազելում անձնավորված *գինին*, որ մետաֆոր է, օժտված է խելքով և իմաստությամբ, կարողանում է ճանաչել լավին, վատին, նենգ քծնողին. «Հոգով ճորտին տարբերակում վեհաշուքից, Ի հայտ բերում մարդու հոգում թաքնվածն ու գաղտագողին»[9]: Գինու ուժն ու գովքը երևում է նաև «Գինու մայրը» դասիդում: Իսկ այս քառյակում ամբողջանում է գինու մետաֆորի բովանդակությունը.

Եթե այս գինուց միայն մի կաթիլ Նեղոսը ծորի,
Կոկորդիլոսը հարբած կմնա մի հազար տարի.

Էթե եղնիկն էլ դռանից բռնայի թեկուզ մի կաթի.
Առյուծ կդառնա ու վագրի կյասխ այնտի այստանի[10]:

Ռուդաքիի պոեզիայում հիշվում է նաև ***սիրտ*** մետաֆորը: Լավագույն օրինակներնում է շրջանառվում այս մետաֆորը, որը որպես մարդուն բնութագրող կարևոր բառ հիաշրներ է գործում Ռուդաքիի ստեղծագործություններում:

Այս քառյակում արժևորվում է բանաստեղծի սրտում կատարվածը.
Երբ անունդ են տալիս մի տեղ. իմ սրտի մեջ լույս է վառվում
Բախտս իսկույն քո անունի շող ու շուքով է զարդարվում.
Բայց երբ հանկարծ խոսք են խոսում ու չեն տանում գովքդ. հոգիս.
Վիշտն է իջնում սրտիս վրա, ու մշուշն է մտքիս փարվում[11]:

Թումանյանը ևս իր ստեղծագործություններում սեր ու սիրտ է փնտրում՝ որպես գոյության խարիսխներ: Եվ ***սիրտ*** բառը կարևոր մետաֆոր է նաև Թումանյանի ստեղծագործության մեջ: Հայտնի է. որ Թումանյանի քառյակներից միայն մեկն է. որ վերնագիր ունի. և այն կոչվում է «Սիրտ»: Մեկ անգամ չէ, որ Թումանյանն իր քառյակներում անդրադառնում է սրտին.

Ով իմանա՝ ուր ընկանք
Քանի օրվա հյուր ընկանք
Սերն ու սիրտն էլ երբ չկան՝
Կրրակ ընկանք. ջուր ընկանք[12]:

Կամ

Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում,
Ցավոտ սրտով աշխարհ լցվեց մի դարում…[13]:

Ռուդաքիի մետաֆորային համակարգում կարևոր է սիրուհու մազերի՝ վարսերի. խոպոպների առանձնավորումը: Խոպոպը՝ որպես արևելյան գեղեցկության խորհրդանիշ. հուզում է պոետին.

Թե վարսդ փռես. օրվա լույսն անգամ կպառի է հանգել,
Իսկ եթե հյուսես. դարձնես բազկի ճանկեր.

Թև խոպսպյնրդ դյայսնղարս անես. կթվա մայղկանց.
Թե ալիք - ալիք Թարագի մուշկն է այդպես հորձանքել[14]:

Սայաթ-Նովայի բանաստեղծական աշխարհում նս *մազ* մետաֆորը կարևորված է: Սիրած յարը խենթացնում է բանաստեղծին իր ողջ գոյությամբ, որտեղ կարևոր են նաև սիրուհու մազերի տեսքից ստացած տպավորությունները. «Դաստամազդ նամ չի ուզի. առանց հուսիկ կու օյրրվի»[15]: Կամ. «Դաստամազդ սիմ ու շարբաթ, նամ շաղ էկած ռեհան է»[16]:

Մետաֆորի գործածությունը երևակայությամբ օժտված բանաստեղծին անսահման հնարավորություններ է տալիս արտահայտելու հոգու և մտքի թռիչքները: Հիրավի անսպասելի բացահայտումներ է անում Ռուդաքին իր բազմաթիվ մետաֆորներով:

Ռուդաքիի արվեստում նշանակալից է նաև ձայնի պոետիկան: Բնության և վայելքների ձայներին ուղեկցում է տավիղը: Այն մե՛րթ լալիս է, մե՛րթ ցեղգեղում: Բանաստեղծը տավղի հնչողությունը նմանեցնում է ողբի նման հեկեկոցի: Բայց այն շատ ավելի գեղեցիկ է հնչում կանանց կատարմամբ.

Գեղուհիներ, որոնց ճկուն մատների տակ
Տավիղների թրթռոց է, անուշ նվագ[17]:

Ռուդաքիի պատկերային համակարգը ամբողջացնում են խոհափիլիսոփայական բանաստեղծությունները: Բանաստեղծն անընդհատ խոկում է կյանքի, մահվան, սիրո և հիշողությունների մասին: Երբեմն նրա մտքերը իմաստուն աֆորիզմներ են դառնում.

Երջանիկ է, ով շատ տվել՝ շատ է առել,
Դժբախտ է նա, ով թաքցրել է ծովն իր գանձի[18]:

Կարևոր նշանակություն ունի Ռուդաքիի պոետիկայում ***ժամանակը***: «Ողբ ծերության» ղասիդում բանաստեղծը թեև ներկայում է, բայց իր մտքերով անցյալում է, որտեղ նա երջանիկ է: Վերոհիշյալ ղասիդը ավարտվում է հետևյալ տողերով, որոնք նորից ներկային են վերաբերում.

Ժամանակներն ուրիշ են արդ. ու ես ինքս էլ շատ եմ տարբեր.
Ժամն է արդեն գավազանի, գավազանս ու մախաղս բեր[19]:

Գազելներից մեկում Ռուդաքին անընդհատ եզրահանգումներ է անում կյանքի, բախտի և երջանկության մասին: Նրա պոեզիան լուսավոր ու լավատեսական է, չնայած արևելյան գրականությանը հատուկ է նաև հոռետեսությունը: Ռուդաքիի պոեզիան ևս զերծ չի մնացել տխուր ու մելամաղձոտ պատկերներից: Բանաստեղծը հաճախ ափսոսում է իր անցած կյանքը. կյանք, որ նա ապրել է արքունիքում՝ հովվոր անազատության մեջ.

Այս կյանքն, ավաղ, ամպ է, հողմ է լոկ անցողիկ.
Դու գինին բեր, ուրախ երգը թող թևածի[20]:

Թումանյանը իր քառյակներում մեկ անգամ չէ, որ անդրադարձել է կյանքի անցողիկությանը.

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվա փորձ ու գործ
Ընկվում են ամեն օր[21]:

Ներքին գաղափարական ընդհանրություն կա Ռուդաքիի «զավակներիդ այս ինչպե՞ս ես նայում» տողի և Թումանյանի «Բարձրից» բանաստեղծության միջև:

Լավատեսական ու մարդասիրական են Ռուդաքիի ստեղծագործությունները, որոնք այսօր էլ ճանաչողական, ուսուցողական և գեղագիտական մեծ արժեք են ներկայացնում:

ANI PASHAYAN
(RASU)

AN ATTEMPT OF A COMPARATIVE ANALYSIS OF SOME PECULIARITIES OF RUDAKI'S POETRY

The papers deals with study of some peculiarities of Persian prominent medieval poet Rudaki, who lived in X century. The ghasids, gazeles and ruhayat are being analyzed as realities of description system. The poetics of Rudaki is being compared with poetics of prominent Armenian writers Tumanyan and Sayat-Nova

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուդաքի (թարգմանությունը՝ Վահագն Դավթյանի, պարսկերենից տողացի թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Կոսմոյանի), Եր., 1995, էջ 31:
2. Նույն տեղում, էջ 80:
3. Ռուդաքի, նշվ. աշխ., էջ 82:
4. Նույն տեղում, էջ 86:
5. Նույն տեղում, էջ 54:
6. Томашевский Б., Краткий курс поэтики, М., 2006, с. 41.
7. Ռուդաքի, նշվ. աշխ., էջ 45:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 53:
10. Նույն տեղում, էջ 69:
11. Նույն տեղում, էջ 81:
12. Թումանյան Հ., Ընտիր երկեր, Եր., 1978, էջ 66:
13. Նույն տեղում, էջ 76:
14. Ռուդաքի, նշվ. աշխ., էջ 86:
15. Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Եր., 1959, էջ 83:
16. Նույն տեղում, էջ 34:
17. Ռուդաքի, նշվ. աշխ., էջ 52:
18. Նույն տեղում, էջ 50:
19. Նույն տեղում, էջ 35:
20. Նույն տեղում, էջ 50:
21. Թումանյան Հ., նշվ. աշխ., էջ 65: